Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84
Б-89

19 NOV 2010
20 APR 2006
84
5-89
ար

ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

ՀԱՏ. I

ԷՐԿՄԱՆ-ՇԱՏՐԻԱՆ

ՄԻ ԳԻՒՂԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԷՊ

1789-1792

Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակից

Բնագրից թարգմանեց Վ. Փափազեան.

Հրատարակութիւն
«ՄՑ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.»
Ընկերութեան

ԹԻՖԼԻԶ
Էլեկտրատպարան «ՀԵՐՄԷՍ» ընկեր.,
Մադաթեան փողոց 15.
1905

114

16.04.2013
6005

Доз. цензурою. 8 Іюля 1905 г. г. Тифлисъ.

NEW - YORK
JIAN LIBRARY
179
120
40

ՄԻ ԳԻՒՂԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԻ ԳԻՒՂԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1789—1792

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

*ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ *)*

I

Շատերն են գրել 1789 թւի ֆրանսական մեծ յեղափոխութեան մասին, սակայն նրանք բոլորն էլ գիտուն, իմաստուն մարդիկ են եղել և գործի վրայ նայել են բարձրից։ Իսկ ես, որ մի ծեր գիւղացի եմ, կը պատմեմ միայն գիւղական գործերը, որովհետև իմ կարծիքով, ամենից առաջ հարկաւոր է աչքից բաց չը թողնել մեզ՝ գիւղացիներիս վերաբերեալ խնդիրները։ Ինչ որ մարդ իր աչքով է տեսնում, նրա մասին աւելի լաւ կարող է խօսել։

Յեղափոխութիւնից առաջ Ֆալցբուրգի պարոնութեան և շրջանին էին պատկանում հինգ գիւղեր.—Վիչբերգ, Միտտէլբրօնն, Լիւցէլբուրգ, Հուլտէնհաուզէն և Հացէլբուրգ։ Սրանցից Վիչբերգը, Հացէլբուրգը, այլև Ֆալցբուրգի քաղաքացիք՝ ազատ մարդիկ էին. իսկ միւս բոլոր գիւղացիք—մարդ ու կին՝ համարւում էին ճորտեր և իրաւունք չունէին աղայի հողը թողնել—հեռանալ՝ առանց յատուկ դատարանի վճռի։

Դատաւորը դատ էր կտրում և վճիռներ կայացնում համայնական շէնքի մէջ։ Նրա՛ն էր ենթարկւում ամեն գործ անձնական կամ կալւածական։ Սուր էլ էր կրում նա և մինչև իսկ կարող էր դատապարտել յանցաւորներին կախաղանի։

Գիւղական դատարանի կամարների տակ, ուր այժմ պահա-

---

*) Etats généraux. Генеральные штаты. *Ժողովրդեան ներկայացուցիչների ժողովը, որից և սկսեց ֆրանսական մեծ յեղափոխութիւնը։*

Ծան. թարգմ.

կատուն է, յանցաւորները նախ հարցափորձի և տանջանքի էին ենթարկւում, եթէ չէին կամենում խոստովանել արածները: Ոստիկանական պաշտօնեան և դահիճը այնպէս չարչարում էին նրանց, որ թշւառների ճիչն ու ողբը լսւում էր մինչև իսկ հրապարակից: Իսկ տօնավաճառների օրերին, հնամեայ ծառերի տակ կանգնեցնում էին կախաղան և դահիճը, յանցաւորին կախելուց յետոյ, դեռ երկու ոտքերով էլ կանգնում էր նրա ուսագլխների վրայ և ցնցում:

Զափազանց յանդուգն պէտք է լինէր մարդ, որ այդպիսի ժամանակներում համարձակւէր ո և է յանցանք գործել:

Ֆայլցբուրգում մաքսատուն էլ կար: Քաղաքից դուրս գնացող ամեն ապրանք—լինէր փայտեղէն, հագնելիք, լինէր իւղ, պանիր, տաւար, խոզ կամ երկաթեղէն—տուրքի էր ենթարկւում:

Ինչպէս տեսնում էք, քաղաքի և գիւղի բնակիչները, առանց մի կլորիկ գումար վճարելու Լօրէնի դուքսերին (իշխաններին), չէին կարող ոչ ուտել, ոչ խմել և ոչ էլ հագնել:

Բացի դրանից, կար մի ուրիշ տուրք էլ, որ կոչւում էր «զարէլ»:—Ամեն հիւրանոց և գինետուն պահող, լինէր դա քաղաքում կամ շրջակայ գիւղերում, պարտաւորւած էր նորին պայծառափայլութիւն հերցոգին վճարել՝ իւրաքանչիւր ծախւած կամ հէնց պահծու ունեցած տակառի համար՝ վեց բաժակ գինի կամ գարեջուր:

Հարիւրին դեռ 5 էլ պէտք էր տալ ծախւած կամ վարձած կալւածի համար տուրք: Կար նաև հարկ՝ բազարում ծախու հանած ցորենից, գարուց, խոտից, վարսակից և այլն:

Վճարւում էր տուրք՝ տօնավաճառին առևտուրի իրաւունքն ունենալու: Տարէնը երեք տօնավաճառ կար. երեքին էլ պաշտօնեաները շրջելով գնահատում էին տեղերը և տուրք առնում յօգուտ հերցոգի:

Թւեմ դեռ կշեռքի տուրքը, տուրք՝ խոզերը անտառում, տաւարը մարգերում արածացնելու. յետոյ՝ ամեն ծուխից—այսինքն ամեն ընտանիքից առածները, հարկ՝ բրուտից, կտաւագործից, հարկ՝ եկամուտից, որ կոչւում էր տասանորդ և որի մէկ տասերորդ մասը եկեղեցունն էր: Աւելացրէք դրանց վրայ նաև «փոքրիկ տասանորդ» կոչւած ցորենով պտղին՝ յօգուտ եկեղեցու, որ, ի միջի այլոց ասեմ, հերցոգն էր խժռում, որովհետև եկեղեցուց աւելի իր անձն էր սիրում:

Իսկ եթէ կամենում էք իմանալ, թէ ինչպէ՞ս էր եղել, որ այդքան աշխատաւորներ ընկել էին նորին պայծառափայլութեան, այլև այդ բոլոր գիւղային ու շրջանային պաշտօնեաների, դատա-

ւորների ճանկը—այն ժամանակ ինձ հարկաւոր է քիչ հեռուից սկսել պատմութիւնս:

Յեղափոխութիւնից 200 տարի առաջ (1583-ից), մի ինչ որ Բաւարիայի դուքս և Վէլդէնցի կոմս տիտղոսով Գէորգ-Եօհան, գերմանական կայսրից նւէր ստացաւ մեր կողմերի ընդարձակ անտառները. սակայն ոչ մի կոպէկ էլ արդիւնք չունէր նրանցից, որովհետև ոչ անցանելի ճանապարհ կար անտառում, ոչ բնակիչ, ոչ էլ նաւարկելի գետ:

Եւ ահա թէ ինչպէ՞ս բան մտածեց այդ հերցոգը: Իսկոյն լուր հանեց ու հռչակեց ամբողջ Ալզասում, Լօրէնում թէ՝ «ով կամենում է գործել, թող գայ իմ անտառները և ես կը տամ նրան հող. եկողն էլ կապրի հանգիստ, առանց նեղութեան և տուրքերի: Ես, Եօհան Վէլդէնցի, ահա յայտնում եմ, որ, Աստւած էլ վկայ, խոստումս կը կատարեմ: Իմ Ֆայլցբուրգ քաղաքը ճիշտ ֆրանսիայի, Լօրէնի, Վէստրիխի և Ալզասի մէջ տեղից անցնող առևտրական մեծ ճանապարհի կողքին է. այնպէս որ, ամեն արհեստաւոր ու առևտրական—լինի սայլագործ, դարբին, կօշկակար կամ տակառագործ և այլն, առևտուրի լաւ շուկայ և լաւ գործ կըգտնի այնտեղ: Յանուն Աստծոյ խոստանում եմ, որ ով գայ Ֆայլցբուրգ, ազատ կը լինի ամեն նեղութիւնից. ձրի էլ փայտ ու գերան կունենայ տուն շինելու. իսկ եկեղեցի, դպրոց և այլ համայնական շէնքեր՝ կը շինեմ ես»:

Այնքա՛ն շատ խոստումներ, այնքա՛ն մեծ իրաւունքներ շռայլեց նա, որ լուրը շուտով տարածւեց ամբողջ Գերմանիայում ու ամեն կողմից եկող-եկողի էր:

Քիչ յետոյ անտառները բնակելի դարձան, մաքրւեցին, հողը մշակւել սկսեց և Գէորգ-Եօհանի կալւածների գինը բարձրացաւ: Առաջ ոչինչ եկամուտ չը բերող հողերը՝ այժմ քիչ-քիչ սկսեցին հարստացնել տիրոջը:

Երբ գործը այդպէս լաւ գնաց, դուքսը իսկոյն թէ կալւածը և թէ վրայի բնակիչներն ու անասունները միասին՝ ծախեց Լօրէնի Շարլ III դուքսին 400 հազար ֆլորինով *): Ծախեց «յանուն ճշմարտութեան, արդարութեան և Աստծոյ փառացը»:

Բնակիչները ամենքն էլ գրեթէ լիւտերականներ էին, որովհետև Գէորգ-Եօհանը յայտարարել էր, թէ Ֆայլցբուրգում ապրողները կը դաւանեն բողոքական կրօնը: Սակայն, 400 հազար ֆլորինը գրպանելուց յետոյ, ըստ երևոյթին նա իր բոլոր յայտարա-

*) Հին դրամ ֆրանսական, մօտաւորապէս 95 կոպ. արժողութեամբ:

րածները մոռացաւ. և դա սկի էլ նրա քունը չը խանգարեց։

Ինչ վերաբերում է նոր կալւածատէր դուքս Շարլ III ին, նա ոչինչ չը խոստացաւ թէև, բայց անմիջապէս Ցայլցբուրգ ուղարկեց իր մտերիմ և ամենահպատակ խորհրդական Դիտրէ Դատէլին այսպիսի հրամանով։ «Քաղցրութեամբ համոզել ամենքին՝ կաթոլիկութիւն ընդունելու. իսկ եթէ բան է, մէկն ու մէկը յամառի, երկրից դուրս վռնտել և ունեցածն էլ գրաւել»։

Մի քանիսները փոխեցին իրենց կրօնը, ուրիշներն էլ—կին, տղամարդ ու մանուկ՝ հեռացան երկրից, հազիւ մի քանի փալաս—փուլուս յաջողելով հետները տանել։

Եւ երբ այս ձևով ամեն ինչ կարգի ընկաւ, այնուհետև նոր դուքսերը հետզհետէ իրանց «սիրելի և բարի հպատակներին» ըսկսեցին բանեցնել ամրոցները շինելու կամ նորոգելու. յետոյ, դատարան, եկեղեցիներ, նոյն իսկ քահանաների համար տներ էլ նրանց շինել տւին. գանձարանն էլ, հարկատւութեան պաշտօնատունն էլ…

Այս բոլորը ձրի շինելուց յետոյ, նորին պայծառափայլութեան պաշտօնեաները նստեցին և սկսեցին իրենց քէֆի ուզածին պէս հարկեր, տուրքեր, կոռ—բէգառ և այլն, ամեն տեսակ տանջանքներ սահմանել հպատակների համար։

Թշուառ ժողովուրդը մարդավարի կերպով լծւեց, ու այն էլ ընդ միշտ լծւեց։ Գործեց հայրը, բանեց որդին և այդպէս, 1583 ից մինչև 1789 ը, ամբողջ 200 տարի սերնդից սերունդ ու անընդհատ՝ հարստահարւեց նա անխնայ, շնորհիւ այն միակ հաւատի, որ նա ընծայեց Գէորգ—Եօհանի պէս սրիկայ խաբեբային, որի նմանները սակաւ չեն աշխարհումս։

Այնուհետև դուքսերը սահմանեցին արհեստների համքարութիւնը՝ արտօնագրերով։ Համարեա մարդկանց խմբեր էին դրանք, որ բացի իրենցից, ոչ ոքի չէին թոյլ տալիս արհեստներով հաց ճարելու։ Հետևապէս, ուզածին պէս էլ կողոպտում էին ժողովրդին։

Այդ համքարութիւնների մէջ աշակերտում էին երեք, չորս և մինչև իսկ հինգ տարի։ Մտնող աշակերտը առաջ մի լաւ եղում էր վարպետին, բայց և ինքն էլ, հէնց որ սովորում էր ու վկայականը ծոցը դնում—սկսում էր նոյնն անել, ինչ որ իրեն արել էին։

Չը կարծէք թէ այդ ժամանակւայ քաղաքները նման էին այժմեան քաղաքներին։ Փողոցները նոյնն են, բայց տները ցած, աղտոտ, փոքրիկ դռներ ու լուսամուտներ։ Անցնելիս կը տեսնէիր նեղլիկ լուսամուտների կեղտոտ ապակիներից ներս՝ օրինակ, դերձակին, որ ծալապատիկ նստած՝ գետնի վրայ էր ձևում ու կա-

րում, կամ ոստայնանկը, որ մի խոր տեղ ոստայնը լարած՝ գործում էր։

Պահակ զինւորներն էլ՝ իրենց ահագին եռանկիւնի գլխարկներով, պատռտած սպիտակ բաճկոններով, ամենախղճալի տեսք ունէին։ Հազիւ օրը մի անգամ էին ճաշում խեղճերը, այն էլ դռնից—դուռ հաւաքած կերակուրներով։ Իսկ ժողովուրդը մաշւած, խղճուկ, ընկճւած։ Հագած շորերն ու կօշիկները պապերից մնացած, դեռ թոռներին էլ ժառանգութիւն էին թողնում։

Փողոցներում ոչ մի մայթ և ոչ էլ քարայատակ. գիշերով և ոչ իսկ մի հատ լապտեր. տանիքները առանց ջրյորդանի, լուսամուտների կոտրտած ապակիների տեղ՝ աղտոտ և դեղնած թղթեր…

Եւ այդ բոլոր խեղճութեան մէջ՝ մէկ էլ տեսար կամ դատաւորն էր որ մեծ սև վերարկուն հագած՝ մտնում էր դատարան, կամ ջահել սպաներ էին, որոնք կողքերի սրերը շրխկացնելով՝ անցնում էին և կամ աղտոտ մօրուքներով և կոշտ բրդէ փարաջայով վարդապետներ, որ վխտում էին վանքի շուրջը…

Այդ բոլորը այնպէս պարզ պատկերանում են աչքիս առաջ, որ կարծես երէկ տեսած լինեմ։ Դրա հետ էլ միասին խելքս մըտքումս ծագում է, թէ որքա՜ն բաղդաւոր են տանջւող թշւառները, մանաւանդ մենք—գիւղացիներս, որ արժանացանք ազատութեան օրերը տեսնելու։

Եթէ քաղաքում այդքան էր չքաւորութիւնը, ուրեմն երևակայեցէք թէ ինչ կըլինէր գիւղերում։

Սկզբներում դեռ գիւղացին քաղաքացու չափ էր վճարում տուրքերը. բայց յետոյ պիտի տեսնէիք թէ ինչ մեծ չափերի հասաւ ճնշումը։

Նախ, իւրաքանչիւր գիւղում հողերի մեծ և լաւ մասերը կամ աղայինն էին և կամ վանքերինը։ Գիւղացուն մնում էր միայն անպէտք, խոպան տեղերը։ Բացի դրանից, գիւղացին սկի իրաւունք էլ չունէր ցանելու ինչ կամենար և որտեղ կամենար։ Մարգագետինները՝ պիտի մարգագետին մնային, արտը—արտ։ Եթէ գիւղացին ուզէր արտը մարգագետնի վերածել, չէ՞ որ տէրտէրն ու վանքը կը զրկւէին պտղից. իսկ ո՞վ կըթողնէր դա։

Եթէ բան է, գիւղացին մտածէր առւոյտ (եօնջա) ցանել՝ կարող էր, միայն թէ սկի իրաւունք չունէր աղայի տաւարների դէմը կտրելու, որ չը գան ու մի լա՛ւ վայելեն։

Աղան, բացի դրանից, իր իրաւունքն էր համարում որս անելու գիւղական բոլոր հողերի վերայ. այսինքն, կարող էր ամբողջ տարին, առանց վնասները վճարել անգամ մտածելու, մի լա՛ւ

ոտնատակ տալ գիւղացու արտերը, ոչնչացնել հունձը։ Իսկ եթէ բան է, գիւղացու-իրեն խելքին գար, հէնց իր իսկ արտի մէջ, մի որս խփել—վա՜յն եկել էր նրան տարել. իսկոյն տաժանակիր աշխատանքի և ուրիշ պատիժների կ'ենթարկուէր։

Թէ աղան և թէ վանքը, ունէին ուրիշ արտօնութիւններ ևս։ Կարող էին, օրինակ, մի ժամ առաջ իրենց տաւարն տանել արօտատեղին, յետոյ թոյլ տալ գիւղացոց տաւարներին։ Իհարկէ, ի՞նչ կը մնար թշուառ արածողներին, եթէ ոչ՝ տականքը։ Ուրեմն ի՞նչ կար զարմանալու, որ ոչ մի գիւղացու տաւարը քչից-շատից գէր չէիք տեսնի։

Դեռ այդ բոլորը չէ։ Աղան ու վանքը իրաւունք ունէին աղաւնետուն պահելու։ Մէկ էլ տեսար գիւղացոց արտերը ծածկուեցին անհամար, հազարաւոր աղաւնիներով։ Գիւղացիք, էլ ի՞նչ արած, ստիպուած էին կրկնակի քանակութեամբ ցանել իրենց կտաւատը, սիսեռն ու լոբին, որ գոնէ մի քիչ արդիւնք հանէին տակիցը։

Գալով ձրի աշխատանքներին աղայի համար-կարգն այսպէս էր։ Ամեն գիւղացի 3 օր, որդիներն ու մշակներն էլ երեքական օր, իւրաքանչիւր գիւղացու տաւարն ու սայլն էլ 3 օր։ Իւրաքանչիւր ընտանիք, դրա հետ միասին, տարէնը պիտի աղային տար 15 կոտ վարսակ, տասը վառեկ և 24 ձու։

Հնձի ժամանակ, հէնց որ ամրոցի զանգակի ձայն լսեցի, գիւղացիք պարտաւոր էին հնձել աղայի ամրոցի շուրջը գտնուող մարգագետինը, չորացնել խոտն ու լաւ դիզել։ Վա՜յ էր եթէ մի քիչ ծուռ անէին. իսկոյն տուգանք։ Այստեղ աւելացնեմ, որ գիւղացիք պարտաւոր էին նաև փայտ ու քար կրել, եթէ բան է, աղան կամենար նոր շէնք շինել կամ ամրոցը նորոգել։ Աղան, ճշմարիտ է, վարձատրում էր նրանց՝ բանելու օրը, բայց այդ վարձատրութիւնն էր միայն մի շերտ հաց իւրաքանչիւրին և մի գլուխ էլ սխտոր։

Իմացա՞ք այժմ թէ ինչ բան էր ճորտութիւնը։

Դժուա՜ր թէ երբ և իցէ պրծնեմ, եթէ սկսեմ պատմել աղայական արտօնութիւնների-հացի փուռերի, ջրաղացների, գինու հնձանների մասին։ Ամբողջ գիւղը պարտաւոր էր հնձել, թխել, աղալ. անշուշտ «որոշ» վճար ստանալով։

Եւ վերջապէս դժուար է պատմել «տասանորդ» կոչուած սոսկալի պտղի մասին, որ տալիս էին գիւղացիք տէրտէրներին, տասնմէկերորդ խուրձը միշտ յանձնելով նրան,—երբ առանց այն էլ ստիպուած էին կերակրել ամեն տեսակ անհամար կրօնաւորների—էլ վարդապետ, էլ քահանայ, կարմելիտների, կապուցինների ու ա-

մեն կարգի ֆարաջաւորների…

Ասում եմ. եթէ մտածէի այդ բոլորի և այլ շատ այդ տեսակ սոսկումների մասին պատմել—երբէք չէի վերջացնի։ Կարծես աղաներն ու վանքերը խօսքը մէկ էին արել՝ երկրիս երեսից ջնջելու թշուառ գիւղացիներին. և ամեն տեսակ միջոցներ մտածել էին՝ իրենց նպատակին հասնելու համար։

Սակայն բոլորը դեռ այդ չէ։

Այն օրւանից իվեր, երբ երկիրը գտնւում էր հերցոգների ձեռքը—Նորին պայծառափայլութեան, աղաների, վանքերի, կրօնաւորների և այլ ամեն տեսակ հարստահարողների կողմից դրուած հարկերը անտանելի կերպով ճնշում էին մեզ։

Իսկ երբ վերջին հերցոգ Ստանիսլաւի մեռնելովը, մեր նահանգը միացաւ Ֆրանսիային—ճնշումը շա՜տ աւելի մեծացաւ, որովհետև նախկին տուրքերի վրայ աւելացրին նաև պետական հարկերը։

Նախ անձնական տուրքը, որ կոչւում էր տայլ (taille)։

Իւրաքանչիւր հայր պարտաւոր էր վճարել իր մէն մի որդու կամ բանողի համար տարեկան 12 սու (18 կոպէկ) հարկ։ Յետոյ, կալուածական տուրք, ապա՝ եկամուտային 20 տոկոս, որ կոչւում էր Թագաւորական քսանորդ (vingtieme du roi) և որ առնւում էր հողի զուտ արդիւնքից, այն էլ միմիայն գիւղացուց։ Ո՛չ աղաներն էին ենթարկուած այդ տուրքին և ոչ էլ հոգևորականների հողերն ու եկամուտները։ Նրանք նոյն իսկ չէին վճարում տուրք աղի կամ ծխախոտի համար, որի ծանրութիւնը ընկած էր միայն գիւղացու մէջքին։

Գոնէ, այդ բոլոր տուրքերը առնելուց յետոյ, աղաները, հոգևորականութիւնն ու պետութիւնը հոգային հաղորդակցութեան ճանապարհներ շինելու, ջրանցքներ բանալու, ճահիճներ չորացնելու. գոնէ մտածէին մէկ դպրոց, հիւանդանոց հիմնելու…

Բա՜ւ լիցի. նրանց ի՞նչ հոգն էր գիւղացին. նրանք միմիայն գրփել էին երազում և իրենց քէֆի մասին մտածում։

Եւ այդ բոլոր թշուառութիւնների մէջ, Սէվէրնում, մի ինչ որ կարդինալ Լուի դը Ռօհան—եկեղեցու այդ պետը, խայտառակ քէֆեր էր սարքում և փողոցով անցնելիս՝ ծառաներին հրամայում էր ծեծել հանդիպած գիւղացուն. միւս կողմում—Նէյվիլէր, Բուկսվիլէր, և Հուրդէնհաուզէն՝ աղաները փասեանների բներ էին շինում, ծաղկանոցներ, ջերմանոցներ ու կէս մղոն երկարութեամբ այգիներ տնկում, լցնում էին մարմարէ արձաններով, աւազաններով, որպէս զի նմանուեն Թագաւորին։

Հապա կալուածատէրե՞րը, որ ամեն տեղ ժողովրդի մէջ քաշ

էին տալիս իրենց հետ՝ մետաքս ու թաւիշ հագած անբարոյական կանանց խմբեր, մինչ բոկոտն կարմելիտներ, ֆրանցիսկեաններ ու կապուցիններ (կրօնաւորներ զանազան կարգերի) շարան-շարան մուրում էին և պնակալէզութեան ենում ամբողջ տարին։

Իսկ շրջանային, թագաւորական դատաւորներ, զանազան պաշտօնեաներ, նոտարներ ահագին խմբերով գործի էին ենում՝ միմիայն կողոպտելու, միմիայն տուգանելու համար...

Այս ամենը երբ տեսնում էր մարդ, երևակայել չէք կարող թէ ինչպէս տանջւում էր, ինչպէս ճնշւում։

Ահա ուրեմն ամենքդ այժմ կարող էք պարզ գաղափար կազմել թէ ինչ էր ժողովրդի դրութիւնը այն ժամանակ—մեծ յեղափոխութիւնից առաջ։

Ազնւականութիւնն ու հոգևորականութիւնը ամեն ինչ ունէին, իսկ ժողովուրդը—ոչինչ։

II

Փառք Աստծոյ, այժմ ամեն ինչ փոխւել է. գիւղացիք էլ օգտւում են զանազան արտօնութիւններով. ես էլ ի հարկ է, նրանց շարքում։

Մեր կողմերում օրինակ, ո՞վ չի ճանաչում այժմ Միշել քեռուն և նրա ագարակը։ Ամենքը ձեզ ցոյց կը տան նրա արօտատեղին, զւիցերական կովերն ու վեց զոյգ առողջ և հուժկու եզները։

Գանգատւելու երբէք տեղիք չունիմ. Թոռս—Ժաքը, Փարիզի բազմարւեստեան դպրոցի առաջին աշակերտն է. աղջիկ Թոռնեռիցս Քրիստինը՝ անտառապետ Մարտէնի կինն է, իսկ Ժիւլիէտը՝ երկրաչափ Ֆօրբէնի. կրտսեր Թոռս՝ Միշէլն էլ, որին, ի միջի այլոց ասեմ, ամենից աւելի եմ սիրում—ուզում է բժիշկ դառնալ։

Այս բոլորը ես յեղափոխութեանն եմ պարտական։ Ինչե՞ր չէի քաշիլ արդեօք և գուցէ մինչև կեանքիս վերջն էլ ազաների կամ վանքերի ճորտը մնացած լինէի—եթէ յեղափոխութիւնից առաջւայ մարդ լինէի։

Զափազանց, օ՜հ, շա՜տ մաղձ է կուտւած իմ մէջ բոլոր այն մարդկանց դէմ, որոնք ստիպում էին մեզ շա՜ն պէս ապրել և խլում էին մեր քրտինքի յետին կաթիլները։ Յաւիտեա՜ն չեմ մոռանալ այդ. 85 տարեկան եմ, բայց քանի ծերանում եմ, այնքան դառնութեամբ եմ յիշում անցեալ թշւառ օրերը։

Եւ դեռ կան մարդիկ, որոնք համարձակւում են պնդել՝ թէ

մեր ծերունիները լրագիրների մէջ գրում են, որ իբր թէ յեղափոխութիւնը ամեն ինչ քարուքանդ արաւ, ապականեց և որ մինչև 1789 թիւը մենք շա՜տ աւելի երջանիկ էինք ու բարօր։ Ստո՜ր մարդիկ. ամեն անգամ երբ այդպիսի լրագիր է ձեռքս ընկնում, քիչ է մնում կատաղեմ։ Դեռ լաւ է, որ այդ լրագիրները շատ չեմ կարդում։ Արդեօք ոպիսի՞ թոյն են թափում նրանք ժողովրդեան սրտի մէջ։

Եւ ահա ես վճռեցի գրել այս—գիւղացու պատմութիւնը յատկապէս նրա՛ համար, որ հակաթոյն ներկայանայ նա այդպիսի աղտոտ լրագիրներին և ցոյց տայ հասկացող մարդկանց, թէ որքա՜ն մենք տանջւում էինք յեղափոխութիւնից առաջ։

Ուրիշի՝ գուցէ, բայց ինձ երբէք չեն կարող համոզել, որ յեղափոխութիւնից առաջ թէկուզ մի հատ գիւղացի լաւ ապրելիս լինէր։ Տեսա՛յ ես այդ «լաւ ժամանակներ» կոչւող օրերը. լա՛ւ տեսայ մեր նախկին գիւղերը, տեսայ այն նիհա՛ր, մաշւած ու ոսկոռւտրած գիւղացիներին իրենց բոբիկ ոտներով, անշապիկ մերկութեամբ. տեսայ նաև նրանց ծիւրւած, հալւած կանանց, բոլորովին մերկ ու քաղցած մանուկներին...

Ամեն Աստծու տարի գրէթէ սով էր լինում և ինչպիսի՜ սով։ Ցիրաւի, ինչ կարող էր մնալ, երբ թեմում գտնւող 16 քաղաքապետութիւնները, 28 աբայարանները, 36 գործակալութիւններ, 47 վանքերն ու 19 կուսանոցները տանո՜ւմ էին ու տանում, թողնելով գիւղացուն միայն մի բուռը լոբի կամ սիսեռ։ Գետնախնձոր էլ չը կար. այն ժամանակ այդ բոյսի հետ սկի ծանօթ չէին։

Եւ ինչ կարելի էր անել նոյն իսկ, եթէ սերմացու ունենայիր, ցանէիր։ Ցանելու և ժողովելու ամենալաւ ժամանակ գիւղացոց քաշ էին տալիս աղայի կամ վանքերի համար բանելու։ Զմեռն սկսելուն պէս, այդպիսով, գիւղի երեք քառորդ մասը ստիպւած էր մուրալու ելնել՝ անօթութիւնից չը կոտորւելու համար։

Բայց ողորմելու, մուրացիկին տալու հաց էլ չէր գտնւում։ Ու ձմեռւայ վերջերում միշտ լուրեր էին հասնում թէ այս—այն կողմերում յայտնւել են գիւղացիներից կազմւած խմբեր, որոնք յարձակւում են անցորդների վրայ և կողոպտում։ Իսկոյն՝ զօրք—բան և թշւառ բռնւածներին անմիջապէս կախել...

Ախր մէկ հէնց երևակայեցէք, թէ, օրինակ, հօրս նման մի սակառաւոր, որ ո՛չ մի թիզ հող չունէր, ո՛չ կոպէկ փող, ո՛չ այծ, ո՛չ հաւ և ոչ էլ որ և է յոյս՝ ունենալու, այն էլ մեզ նման բազմամարդ ընտանիք... ինչ պիտի անէր։

Փորձեցէք պատկերացնելու ձեզ այսպիսի կեանք.—նախ՝ անվերջ անօթի օրեր, ձմեռնային գիշերներ՝ առանց կրակի և տաք

հագուստի, մշտական երկիւղ հարկահաւաքներից, ոստիկաններից, անտառապահներից ու պարտատէրից:

Եւ ի՞նչ էք կարծում, չը նայելով մեր այդ աստիճանի թըշւառ կեանքին, երկար ձմեռւանից յետոյ երբ արևն սկսում էր տաքացնել, գարնանային ջերմութիւնը գալիս էր և անտառը կանաչում—մենք, մանուկներս, մեր կիսամերկ ու բոբիկ մարմնով դուրս էինք թռնում, թաւալում էինք խրճիթի դրան առաջ, երգում էինք ու ցատկոտում:

Իսկ երբ երեկոյեան դէմ հայրս վերադառնում էր անտառից՝ բեռնաւորւած կանաչ ճիւղերով—իսկոյն ուրախ ճիչերով վազում էինք դիմացը:

Նա էլ, խե՜ղճ հայրիկս, թէև դեղնած յոգնածութիւնից, մազերը թափթփւած ու ինքը փոշոտ, սակայն հեռուից ժպտում էր մեզ, ճիւղերը ցած դնում և ամենքիս համբուրում: Աչքիս դէմն է դեռ նրա այն կապոյտ աչքերը, հաստ շրթունքներն ու մեզ տեսնելիս՝ դէմքի վրայ գծւած երջանկութիւնը:

Որքա՜ն բարի էր նա, որքա՜ն սիրում էր մեզ... Իսկ մայրս: Թշւա՜ռ կինը: Հազիւ 40 տարեկան, և արդէն պառաւի նման սպիտակել էր ու դէմքը կնճռոտել: Չը նայելով դրան, ամբողջ օրը գործում էր խեղճը. ցերեկը մշակութիւն էր անում ուրիշի հողի վրայ, գիշերը մանում էր ուրիշի կանեփն ու թելը, որ գոնէ մի կտոր հաց ձեռք բերէր կամ մի քիչ փող՝ մեզ կերակրելու, հարկի, տուրքի ու պարտքի տալու:

Մե՜ծ, շա՜տ մեծ քաջութիւն էր պէտք, որ մարդ կարողանար այդպէս անվերջ գործել ու տանջւել և յոյս չունենալ մէկ օր չէ՝ մէկ օր գոնէ լաւ կեանք ունենալու:

Վնաս չունէր եթէ միայն տուրքն ու հարկը լինէր դեռ: Թշւառ ծնողներս մի ուրիշ վէրք էլ ունէին.—գիւղացուն մաշող վէրքերից ամենասոսկալին—պարտքը:

Երբ մանուկ էի, յիշում եմ, հայրս քաղաքում կողովներ ու աւելներ ծախելուց վերադառնալիս, միշտ այսպէս էր ասում.— «Ահա աղ, լօբի ու բրինձ բերի, բայց ո՛չ մի կոպէկ չաւելացաւ Ռօբէնի համար»:

Ռօբէնը Միտտէլլրօնի ամենահարուստ վաշխառուն էր. մի հաստ, դեղնած դէմքով ու մեծ քթով մարդ, որ միշտ երկար կօշիկները հագին, մեծ գամփռն էլ ետևից ձգած՝ գիւղից-գիւղ էր գնում իր տւած փողերի տոկոսները հաւաքելու:

Ամենքին պարտք էր տալիս նա. որին վեց, ո՛րին մէկ, որին երկու ոսկի: Եւ եթէ բան է, փողը՝ ստանալու ժամանակին չը վճարւէր, խրճիթում ինչ որ գտնէր՝ կը տանէր. լինէր հաւկիթ,

իւղ, բալօղի, պանիր... մի խօսքով էլ խիլ չէր թողնիլ տան մէջ:

Ու լռում էին. աւելի լաւ էին համարում կողոպտւել այդպէս, քան գործ ունենալ դատական պաշտօնեայի հետ:

Մեզ մօտ սակայն Ռօբէնը ո՛չինչ չէր գտնում. չը կար էլ՝ որ գտնէր: Դրա փոխարէն՝ նա սովորաբար գալիս թրխկացնում էր լուսամուտը և ձայնում.

—Է՛յ, Ժա՛ն Պիէր:

Հայրս ոստնում էր տեղից և իսկոյն, գլխարկը հանած՝ դուրս թռչում:

—Ի՞նչ էք հրամայում, պ. Ռօբէն:

—Ա՛... տա՛նն ես. լա՛ւ... երկու բանւոր է հարկաւոր. կը գա՞ս:

—Կը գամ պ. Ռօբէն:

—Տե՛ս, վաղն առաւօտ ա՛նպատճառ:

—Կը գամ, պ. Ռօբէն:

Իսկ երբ վաշխառուն հեռանում էր, հայրս կտաւի նման գունատ՝ ներս էր մտնում, նստում իր անկիւնում և գլուխը կախ, շուրթերը պրկած՝ լուռ շարունակում էր գործը:

Միւս օրը խեղճ ու կրակ՝ գնում էր նա մշակութիւն անելու Ռօբէնի համար: Մայրս կտրտւում էր իրեն վշտից ու կանչւտում.

—Ախ դու երիցս անիծւած այծ, տա՛սն անգամ քո արժէքից աւելին վճարեցինք, սատկեցիր էլ ու դեռ վճարում ենք գինդ և չը պրծանք, պրծնելիք էլ չունինք... Եւ ինչո՞ւ այդ այծը, ի՞նչ փչեց խելքներիս, որ գնեցինք այդ քեաֆտառ անասունին... մեղա՜յ քեզ, մեղա՜յ...

Եւ յուսահատութիւնից ձեռքերն էր տրորում ու լաց լինում, ողբում:

Հայրս այդ միջոցին գնում էր աշխատելու՝ բրիչը ուսին: Այդպիսի օրերին նա ոչինչ տուն չէր բերում: Իր բանելովը նա վճարում էր Ռօբէնին՝ պարտքի մէկ կամ երկուամսւայ տոկոսը:

Ռօբէնը սակայն երկար հանգիստ չէր թողնում մեզ: Հազիւ քիչ ազատ շունչ էինք քաշում—տեսար նորից եկաւ ու լուսամուտը թրխկացրեց:

Ասում են հիւանդութիւններ կան, որ սիրտ են քամում, մարդու ամբողջ արիւնը ծծում—ոչնչացնում: Թշւառի համար էլ ուրիշ ի՞նչ վատ հիւանդութիւն կայ՝ քան վաշխառուների ձեռքն ընկնելը: Մարդիկ ձեզ օգնելու հովեր են առնում ու գալիս կըպչում են մակաբոյծների նման այնպէս, որ մինչև գերեզման մըտնելդ էլ պոկ չեն գալիս. իսկ գերեզմանիցդ յետոյ՝ այրիիդ կամ որդիներիդ են ծծում ու քամում:

Ինչե՛ր չը քաշեցին ծնողներս այդ Ռոբէնի ձեռքից։ Ո՛չ քնում էին, ոչ հանգստութիւն իմանում․ ցաւից ծերանում էին, հալւում։ Միակ յոյս եթէ կար, դա էլ այն էր, թէ որդիներից մէկն ու մէկը գուցէ պէտք գար զինուորութեան և կարելի լինէր ծախել նրան ու պարտքը վճարել։

Վեց էինք բոլորս․ չորս տղայ, երկու աղջիկ։ Նիկոլա, Լիզբէթ, ես, Կլօդը, Մատիւրինը և փոքրիկ Էտիէնը—այդ անբաղդ հաշմանդամը։ Գիւղացիք նրան «բադիկ» էին կոչում, որովհետև իր խեղանդամ ոտներովը ման գալիս՝ բադի նման օրօրւում էր։ Միւս ամենքս առողջ էինք։

Եւ երբ մայրս նայում էր Նիկոլային, Կլօդին կամ ինձ—ասում էր յաճախ հօրս․

—Անհոգ մնա, Ժան-Պիէր, սրանցից մէկն ու մէկը հաւանական է որ զինուորացու լինի… Օ՛, այն ժամանակ զգուշացի՛ր դու, Ռոբէն․ թող մէկ վճարե՛մ առնելիքդ, ես մարդ չեմ լինի՝ եթէ գըլուխդ չը ջախջախեմ.։։

Այդպիսի կատաղութեան հասնելու համար, իրաւ որ մարդ չափազանց դժբախտ օրերի մէջ պիտի եղած լինի։ Հայրս ոչինչ չէր ասում, իսկ մենք բնական էինք գտնում որ մեզ ծախեն։ Կարծում էինք թէ մենք էլ, տաւարների պէս, մեր ծնօղների ապրանքն ենք․ չէ՞ որ յեղափոխութիւնից առաջ հէնց այդպէս էլ էր․ գիւղացին որդուն իր ապրանքն էր համարում։

Հէնց այդ է, որ առիթ է տալիս տխմարներին ասելու, թէ առաջւայ տարիներում որդիք աւելի էին յարգում ծնօղներին։

Հայրս, բարեբախտաբար, շա՛տ բարի մարդ էր, խղճում էր մեզ և երբէք չէր կամենում օգտւել մեզնով։ Խեղճը յաճախ լաց էր լինում, երբ ձմեռը սովի ժամանակ, ստիպւում էր մեզ մուրալու ուղարկել գիւղից գիւղ, ինչպէս ամենքն անում էին։ Փոքրիկ Էտիէնին ոչ մի ժամանակ չէր էլ թողնում խրճիթից դուրս գալ ցուրտ օրերին։

Երկար չը տևեց սակայն մուրացկանութիւնս։ Երբ 8 տարեկան դարձայ, ինձ տւին կնքահօրս—Ժան Լերուի դարբնոցը աշակերտ։ Դարբին էր թէև այդ կնքահայրս, բայց գինետուն էլ էր պահում։

Դրութիւնս բարւոքւեց․ ոչ միայն կերակրում էին ինձ, այլ և տարեկան էլ մի զոյգ կօշիկ տալիս։ Շատերը երջանիկ կը համարէին իրենց, եթէ իմ տեղս ունենային։ Կարծում էք չէ՞ի հասկանում այդ։ Եւ դրա համար էլ ահա, ամեն կերպ աշխատում էի դուր․ գալ կնքահօրս, կնոջը-Կատէրինին, մինչև իսկ դարբնոցի բանւոր Վալէնտինին և Նիկոլ աղախնին։

Ինչ գործի դնէին—չէի մերժում․ էս փուքս փչել է, էս

տաւարի առաջը խոտ ձգել։ Տան կատւին իսկ բարկացնել չէի ուզում։ Ի՞նչ բան էք կարծում ամեն օր սեղան նստել ու լաւ սուպ ուտել, կիրակի օրերը իւղով տապակած կաղամբ, ուզածիս չափ էլ հաց…

III

Առաջին երկու տարին այդպէս անցաւ։ Եղբայրներս ու քոյրերս առաջւայ նման մուրում էին, իսկ ես կաշւից դուրս էի գալիս՝ որ դուր գամ կնքահօրս։

Տաս տարեկան երբ եղայ, մտածել սկսեցի թէ ի՛նչպէս անեմ, որ արհեստ սովորեմ ու ինքս ինձ հաց աշխատեմ։ Վարպետ Ժանը կարծես հասկացաւ ու աւելի շատ՝ ինձ դարբնոցումն էր բանեցնում։

Հէնց որ միտքս են գալիս այդ օրերը, իսկոյն ականջիս հընչում է կնքահօրս ձայնը․

—Կորի՛ճ կաց, Միշէլ, կորի՛ճ,..

Բարձրահասակ ու հաստլիկ մարդ էր կնքահայրս։ Մեծ խաժ աչքեր, մսոտ քիթ, ուռած թշեր․ երբ ծիծաղում էր, սենեակը թնդում էր ձայնից։ Բանն այն է, որ ամեն րոպէ կամ վիճում էր իր օգնական—վարպետ Վալէնտինի հետ և կամ հայհոյում նրան։

Այս տղան—Վալնտինը, երկար ու չոր, գլուխը փորն ընկած մի բան էր․ ոչնչից դժգոհ չէր մարդը․ ոչ աղաներից, ոչ վարդապետներից և ոչ էլ իր ստրկային դրութիւնից։

—Ախ դու տխմա՛ր, նախատում էր նրան կնքահայրս—չե՞ս հասկանում, որ եթէ մեր դրութիւնը ուրիշ կերպ լինէր, դու վաղո՜ւց ինքդ քո աղան կը լինէիր… իսկ այժմ ի՞նչ ես… մշա՛կ, բանւո՛ր… Վաղուց դու պիտի փող էլ ունեցած լինէիր, հանգիստ կեանք էլ…

—Ոչինչ, վնաս չունի․ պատասխանում էր Վալէնտինը—այսպէս էլ լաւ է։ Ինչ կուզէք ասէք, բայց ես միշտ հնազանդ կը մնամ մեր հաւատքին, ազնւականութեան և թագաւորին… Աստծոյ սահմանածներն են, ի՞նչու տրտնջալ։

Կնքահայրս ուսերն էր թոթւում և կանչում․

—Դէ՛հ, քանի որ դու այդ բոլորը բնական ես գտնում՝ ես փը՛ստ ուրեմն․ ձայնս կը կտրեմ… Հայդէ՛, շարունակենք աշխատել…

Ու շարունակում էին երկաթը ծեծել։

Վալէնտինից լաւ, ազնիւ մարդ չէի տեսել կեանքումս։ Իսկ

ինչ վերաբերում է խելքին... գլուխ խօ չէ՛ր, այլ, ճըշմարի՛տ, դատարկ տոպրակ, հաւի դատողութիւն... Ի՞նչ արած, մեղքը իրենը չէր. այդպէս էր ստեղծւած. պէտք էլ չը կար վրան բարկանալու։

Կատէրին մօրքուրը մտածում էր ինչպէս ամուսինը, իսկ Նիկօլ աղախինը՝ ինչպէս իր տիկինը... ու նրանց պանդոկում ամեն ինչ կարգին էր գնում։

Վարպետ Ժանը տարեկան բաւական փող էր ետ գցում։ Երբ մեր կողմերի հարկերն էին ժողովում, համայնքից ընտրած հաւաքողների կարգում նա էլ կար՝ ընկերակցութեամբ փայտահատ Կօշարի և երկարահասակ սայլապան Լէտիւմիէի, որոնք համարւում էին 3-400 ոսկի փողի տէր հարուստներ։

Պիտի ասեմ ձեզ, որ պանդոկն էլ բանուկ էր։ Ֆայլցբուրգ գնացող սայլի սովորական ճանապարհը անցնում էր Բարաքներով —մեր գիւղի միջով. ամեն անցնող—դարձող՝ գլուխ մէկ կը խփէր անպատճառ «Երեք աղաւնի» պանդոկին։

Ու այսպէս, պանդոկն ու դարբնոցը միմեանց օգնելով, լաւ շահում էին։ Մինչ մենք ձի էինք պայտում կամ սայլը նորոգում—սայլապանը ժամանցի համար լինի՝ պանդոկ էր մտնում, մի շիշ գինի առնում, նախաճաշում մի շերտ հացով և լուսամուտի առաջը նստած՝ դիտում մեր արածը։

Իսկ տօնավաճառի օրերը պանդոկի սրահը լիք-լեցուն էր լինում։ Մտնում էին ելնում խումբ առ խումբ, խմում, ուտում և երբեմն բաւական կոնծած դուրս գնում։

Հէնց որ կատարները տաքանում էր, էլ լռել ու քաշւել չը կար։ Ամեն կողմից բերանները բացւում էին ու տրտունջ տըրտունջի ետևից՝ իրենց վիճակի մասին։ Կանայք `մանաւանդ... Էլ ինչե՛ր ասես որ չը պատմէին. աղաների ու դատաւորների իրենց իսկական անունովը կոչել, նրանց կեղտոտ արարքները ասել... Եւ եթէ բան է, տղամարդիկ փորձում էին իրենց կանանց լեզուն քիչ զսպել—կանայք նրանց մի լաւ հայհոյում էին և դեռ իշի տիտղոսն էլ կպցնում վրաները։

Ամենից աւելի տրտնջացողները Ալզասի առևտրականներն էին, որոնք իրենց ամբողջ շահածը մաքսի ու տուրքի էին տալիս։ Պլոկւում էին խեղճ հրէաներին։

Աղմկում էին, կանչւռտում և երբ քիչ հանդարտում էին, մէկ էլ տեսար մէկն ու մէկը բարձրացաւ տեղիցն ու ասաց.

—Ճի՛շտ է, մեզ խեղդում են... խօսք չը կայ... օրէցօր հարկերը ծանրանում են... բայց ի՞նչ արած. գիւղացին միշտ գիւղացի կը մնայ, աղան-աղա։ Ա՛յդպէս է. քանի աշխարհս կայ, վերեւումը աղաներն են լինելու, ցածումը—մենք... Է՛հ, Աստծոյ ողորմութիւնը մեզ հասնի... Մօրքուր Կատերին, ո՞րքան է տալիքս... Գնանք, եղբայր, ժամանակ է շարժւելու...

Ու հեռանում էին։ Պառաւներից մէկը սկսում էր բարձրաձայն՝ ճանապարհի աղօթքը կարդալ. կանայք ձայն էին բռնում, իսկ տղամարդիկ գլուխները կա՛խ, տխո՛ւր, գնում էին նրանց ետևից։

Յաճախ էր պատահում, որ նրանց մեկնելուց յետոյ սկսում էի մտածել թէ ախր լալկանութիւնով ու տրտնջալով ի՞նչ կը լինի. լացի՞ր, ախ ու վախ քաշեցի՛ր—սիրտդ քիչ հանգստացաւ. յետո՞յ... Բանն այն է, որ մարդ լուրջ կերպով մտածի թէ ինչ անի որ ազատւի աղի տուրքից, զանազան հարկահաններից, աղաներից ու վանքերից. մի խօսքով այն ամենից, ինչ որ դարեր ամբողջ խեղդում ու ճնշում էր նրանց։ Տես որ սկի այդ մասին չէին էլ մտածում. ամեն ինչ Աստծոյ կամքին էին թողնում ու միայն լաց լինում, ողբում...

Տօնավաճառային այդ բոլոր իրարանցումը, տրտունջները, յաւիտենական անցուդարձը կառապանների, հրէաների, գիւղացիների, այլև առևտրական գործառնութիւնները վարսակի, կորեկի և ուրիշ հացահատիկների, նոյնպէս և առ ու ծախս անողների դէմքերն ու վարմունքը—այդ ամենը սովորեցրին ինձ ճանաչելու մարդիկն ու իրերը։

Եւ եթէ տարիներ յետոյ կարողացայ կարողութեան տէր դառնալ—շնորհիւ հէնց այն բանին էր, որ մանկութիւնիցս ի վեր սովորել էի ճանաչել ու գիտենալ հող, տաւար և նրանց գինը։

Ինձ նման երեխան ի հարկէ, բաժակները տալիս, միմիայն կարող էր լսել ու տեսնել ինչ որ կատարւում էր շուրջը. լսել ու սովորել։ Էլ ուրիշ ի՞նչ կարող էի անել։ Սակայն ամենից աւելի սիրում էի այն, որ վարպետ Ժանը ընթրիքից յետոյ միշտ լրագիր էր ձեռք առնում և նոր լուրեր կարդում։

Այժմ ի հարկէ ամեն գիւղական պանդոկ, թէկուզ ամենափոքրը—ունի լրագիր. հիմա ամե՛ն մարդ ձգտում է իմանալու թէ ի՞նչ է կատարւում իր շուրջը. և ի հարկէ, առնւազն շաբաթական երկու անգամ ստանում է լրագիր։ Ամեն ոք այժմ ամօթ կը համարի էշի նման մնալ տգէտ, առանց հետաքրքրւելու աշխարհումս եղածների մասին։

Բայց յեղափոխութիւնից առաջ, գիւղացին սկի կարդալ էլ չէր սիրում։ Նրա ի՞նչ գործն էր կատարւածների հետ, երբ իրաւունք չունէր բանի խառնւելու. նրանն էն էր, որ վճարէր որքան պահանջէին։ Շատերը մինչև անգամ այբն էլ չէին ճանաչում, մա-

նաւանդ որ լրագիրները շատ թանգ էին այն ժամանակ։

Ճշմարիտ է, վարպետ Ժանը բաւական հարուստ էր, բայց ոչ այնքան, որ թոյլ տար իրեն՝ լրագիր ստանալու։

Մեր բաղդից, գրածախս Շօվէլը Ալզաս, Լօրէն և Ֆայլցբուրգում պտոյտներ անելուց յետոյ՝ վերադառնում էր գիւղ և ամեն գալիս մի ամբողջ կապոց լրագիրներ էր բերում հետը։

Ահա մի տիպար ես, որի նմանը այժմ, յեղափոխութիւնից յետոյ, էլ չես հանդիպի։ Շօվէլը շրջիկ գրավաճառ էր. գիւղից-գիւղ էր տանում ծախելու օրացոյցներ, աղօթագրքեր, այբբենարան և այլն։ Նրան ամեն տեղ կարելի էր հանդիպել.—գիւղական ճանապարհներին, ագարակներում, վանքերի ու աբբայարանների շուրջը, գիւղերի շրջակայքում...

Ահագին սպիտակ զամբիւղը կաշիով քաշ ուած ուսից, նրա ծանրութեան տակ կռացած՝ Շօվէլը թէև ըստ երևոյթին միայն աղօթագրքեր էր տարածում, սակայն և անհաշիւ կերպով ցրւում էր այնպիսի արգիլուած գրքեր՝ ինչպէս էր Ժան-Ժաք Ռուսօի, Վօլտէրի, Հէլվէցիուսի և այլ հեղինակների գրածները։ Նրա կողովից էին դուրս գալիս ու տարածւում ամբողջ երկրում այդ «վտանգաւոր» մտքերով լի հատորները։

Ալզասի ու Լօրէնի մաքսանենգերից ամենաճարպիկն էր Շօվէլը, այդ փոքրիկ, նիհար ու թխադէմ ջղային մարդը՝ շրթունքները պրկած ու ճանկաձև քթով։

Թւում էր թէ պիտի տափականար զամբիւղի ծանրութեան տակ, սակայն նա փետուրի նման էր ման ածում ահագին գրքերը։

Երբ անցնում էր մարդու կողքից, իր սև փոքրիկ աչքերով լաւ զննում էր ձեզ։ Առաջին հայեացքով նա արդէն որոշում էր թէ դուք ինչ էք, պէտք ունի՞ք արդեօք գրքի, լրտես չէ՞ք... Ասենք այդպէս էլ պէտք էր, որովհետև եթէ բռնուէր, տաժանակիր աշխատութիւնից ազատուելիք չունէր։

Իր պտոյտներից վերադառնալիս, ամեն անգամ Շօվէլը գալիս էր մեզ մօտ։ Սովորաբար գիշերով էր մտնում, երբ պանդոկը դատարկ էր լինում։ Երբէք մենակ չէր. իր փոքրիկ Մարգարիտ աղջիկը հետն էր միշտ. մի աղջիկ, որ հետն էլ ճանապարհորդում էր։

Գիշերը, ուշ ժամանակ երբ ոտնաձայներ էինք լսում դրսից, իմանում էինք իսկոյն, որ Շօվէլը պիտի լինէր։

—Ահա և Շօվէլը. երևի նորութիւններ բերած կը լինի։

Նիկօլը իսկոյն վազում էր դուռը բանալու. իսկապէս Շօվէլն էր. երեխի ձեռքից բռնած՝ մտնում էր ու անցնելիս բարևում ամենքիս։

Երբ յիշում եմ այս բոլորը, 75 տարով ջահելանում եմ։ Թւում է թէ երէկ էր այդ։

Մտնում է ահա Մարգարիտի—այդ փոքրիկ սևիկի ձեռքից բռնած, կապոյտ կտաւէ շոր հագին մի աղջիկ՝ սև մազերը փռած ուսերին։ Պարզում է Նիկօլին մի կապոց լրագիր, յետոյ նստում վառարանի կողքին ու աղջկանը ծնկան վրայ առնում։

Վարպետ Ժանը ակներև կերպով գոհ նրա գալուցը՝ ասում է.

—Հը՞, Շօվէլ, ի՞նչ կայ—ի՞նչ չը կայ. ո՞նց են գործերդ։

—Է՛հ, փա՛ռք Աստծոյ, վարպետ Ժան, պատասխանում է փոքրիկ մարդը—տրտնջալու տեղիք չունիմ. գրքերի մեծ պահանջ կայ. մարդիկ սկսում են աւելի խելօքանալ և գրքերը լաւ ծախւում են։

Ու մինչ խօսում է, Մարգարիտը աչքը չէ հեռացնում նրանից։ Իսկոյն երևում է, որ փոքրիկը ամեն ինչ արդէն ըմբռնում է։

Շօվէլը ամբողջ ցեղովը կալվինական *) էր ու աքսորուած ԼաՌօշէլից։ 10—12 տարի առաջ եկել էին բնակուելու մեր գիւղում. իբր կալւինականներ՝ իրաւունք չունէին ոչ մի պաշտօն վարելու. նրանց հին խրճիթն էլ գրեթէ միշտ փակ էր մնում։ Ճանապարհորդութիւնից վերադառնալով՝ բաց էին անում, հանգստանում 5—6 օր, յետոյ նորից սակառը շալակում և ճանապարհ ընկնում։

Չը նայելով այդ ամենին, Շօվէլը շատ աւելի գիտուն էր, քան բոլոր կապուցինները **) միասին առած։

Վարպետ Ժանը սիրում էր այդ փոքրիկ մարդուն։ Նրանք հասկանում էին իրար։

Լրագիրների կապոցը բաց անելուն պէս, կնքահայրս առաջ մէկ թերթում էր, իսկ յետոյ սկսում կարդալ։ Ես էլ, շունչս բռնած, կծկւում էի իմ անկիւնում ու սպասում։

Ամեն ինչ մոռացւում էր. մտքովս էլ չէր անցնում թէ որքան երկիւղալի էր լինում ձմեռւայ ուշ գիշերով տուն վերադառնալը. մանաւանդ որ ճանապարհն ամբողջ ծածկուած էր լինում ձիւնով և գայլերի ոռնոցներ էին լսւում ամեն կողմից։

Իսկապէս հարկաւոր էր տուն գնալ ընթրիքից իսկոյն յետոյ. հայրս անշուշտ սպասում էր։ Բայց հետաքրքրութիւնս զսպել չէի կարող և ուզում էի նախ լսել լուրեր Թիւրքիայից, Ամերիկայից և ուրիշ աշխարհներից։

Դրա համար էլ հէնց մնում էի մինչև ժամը 10-ը, երբեմն աւելի ուշ։

---

*) Բողոքականութեան մի աղանդ, որ ծագում առաւ Շվէյցարիայից։
**) Կրօնաւորների մի կարգ։

Հիմա էլ կարծես աչքիս առաջն է ահա վարպետ Ժանը իր բազկաթոռում, այսպէս, ինձ նման նստած, մեծ ակնոցը քթին, բոլորովին ընկղմած ընթերցանութեան մէջ։ Երբեմն միայն մեր կողմն էր դառնում, ակնոցների տակովը նայում ու ասում.

—Ա՛, ահա և Ամերիկայից լուրեր։ Զօրապետ Վաշինգտօնը մի լաւ ջարդ է տուել անգլիացիներին... Հը՞, Շովէլ, ո՞նց է...

—Այո. խօսում էր Շովէլը—ապրե՜ն քաջերը. մարդիկ հազիւ 3-4 տարի է որ ապստամբուեցան ու չուզեցին իրենց ճնշող անգլիացիներին հարկ վճարել. և ահա, տեսէք այժմ թէ ինչպէ՜ս հասան նպատակին։

Ու Շովէլի դէմքը, այդ ասելիս ժպտում էր տարօրինակ կերպով։ Վարպետ Ժանը նորից շարունակում էր կարդալը։

Երբեմն էլ խօսակցութիւնը Ֆրէդէրիկ II ի մասին էր գալիս—պրուսիական այդ պառաւ աղուէսի, որ նորից սկսել էր իր խաղերը։

—Տեսնո՞ւմ ես այդ քաւթառ խաբեբային. մռմռում էր վարպետ Ժանը—թէ այդ Սուբիզը*) չը լինէր, քիթը այդքան վեր չէր ցցիլ... Այդ անաստծին ենք մենք պարտական Ռօսբախի խայտառակ պարտութիւնը **)։

—Այո... մռմռաց Շովէլը— պէտք է ենթադրել որ մեր ողորմած թագաւորը հէնց դրա համար էլ նրան 1500 ոսկի կենսաթոշակ է նշանակել։

—1500 ոսկի՜ այդ աւազակին... կանչեց կնքահայրս—մինչ այս կողմում, Սավէրնից Ֆալլցբուրգ գնացող մեծ ճանապարհը նորոգելու համար մի կոպէկ էլ չեն նշանակում... Հազարաւոր գիւղացիներ ստիպուած են երկարացնել, կողմնակի շաւիղներով գնալ, աւելորդ ժամեր կորցնել՝ եթէ կամենան Ալզասից Լօրէն հասնել... Էլ ի՞նչու ուրեմն զարմանանք որ հացը, գինին... ամեն ինչ թանգանում է։

—Ի՞նչ արած... քաղաքականութի՜ւն... ժպտում էր Շովէլը—մենք, իհարկէ, ոչինչ գլուխ չենք հանում այդ պօլիտիկայից... մեր ի՞նչ գործն է—կասեն—մերն էն է, որ տանջւենք ու վճարենք. իսկ թէ ինչպէ՜ս են գործածում փողերը—դա մեր գործը չէ...

---

*) և **) Շարլ դը Ռօհան Սուբիզ, Ֆրանսիական զօրքերի ընդհանուր հրամանատար. 1757 թւին Ֆրիդրիխ II պրուսիայի թագաւորը մի լաւ ջարդ տւաւ Սուբիզի հրամանատարութեամբ կռւի եկող Ֆրանսիական զօրքին։ Չը նայելով դրան, Լուի XV Ֆրանսիայի թագաւորը Սուբիզին տարեկան 1500 ոսկի կենսաթոշակ նշանակեց։ Ծան. Թարգ.

Եթէ կնքահայրս սկսում էր չափազանց տաքանալ, մօրքուր Կատերինը իսկոյն վեր էր թռչում ու ականջ դնում, թէ արդեօք բացի կողմից մեզ լսող ու լրտեսող չը կա՞ր։ Ամենքս լռում էինք անմիջապէս. զգուշութիւնը աւելորդ չէր, որովհետև ամեն տեղ լի էր լրտեսներով. ո՛, եթէ լսէին մեր խօսածները իշխանների, ազաների կամ կրօնաւորների մասին՝ վա՜յն եկել ու տարել էր մեզ...

Սովորաբար Շովէլն ու իր աղջիկը շուտ էին գնում։ Իսկ ես նստում էի այնքան, մինչև որ կնքահայրս ծալէր ու մի կողմը դնէր թերթերը։ Այն ժամանակ միայն նկատում էր, որ դեռ չեմ գնացել։

—Էհէ, Միշէլ, դու դեռ այստե՞ղ ես... ի՞նչ է, հասկանո՞ւմ ես խօսածներս՝ որ նստում ես։

Ու չը սպասելով պատասխանի՝ աւելացնում էր.

—Դէհ, վաղը լուսաբացին պիտի հնոցը վառել դարբնոցում. գործ շա՜տ կը լինի. տօնավաճառի օր է. հայդէ տուն գնա ու քնիր։

Ցանկարծ միտս էր գալիս գիւղի մէջ թափառող գայլերն ու մութ ճանապարհը, բայց ճա՞րն ինչ. վառում էի լապտերս և վախից դողն ընկած ջանս՝ դուրս գնում։ Նիկօլը դուռը բաց էր անում ու ետևիցս էլ փակում։

Մո՜ւթ, ճանապարհը խորդ ու բորդ, քամին վզզում էր. իսկ հեռւում գայլերի ոռնոցը այնպէս շատ էր, որ վախից մազերս բիզ բիզ էին լինում. այնպէս վազում էի, որ շունչս կտրւում էր։

Աջ ու ձախից փայլում էին ինչ որ ստւերներ, սառը քրտինքը վրայ էր տալիս, ժողովում էի վերջին ոյժս և հազիւ հազ ինձ քցում մեր դռանը առաջ։

Հայրս, խեղճը վաղուց սպասում էր ինձ՝ օջախի մօտ կկզած ու մերկ մարմինը ինչ որ փալասով փաթաթած։

—Ինչ ուշ ես գալիս, որդի, ասում էր նա—ամենքը քնել են. չը լինի՞ էլի լրագիր էին կարդում։

—Այո, հայր... Առ ահա, սա էլ քեզ համար է։

Ու ձեռքն էի դնում մի կտոր հաց, որ ընթրիքից յետոյ կնքահայրս էր միշտ տալիս։ Հայրս հացն առնում էր ու ասում.

—Դէհ, քնիր որդիս. ուրիշ ժամանակ այդպէս ուշ մի վերադառնալ. շրջակայքում գայլերը վխտում են։

Պառկում էի եղբայրներիս կողքին մեծ արկղի մէջ, ուր տերևներ էին փռած. ընդհանուր ծածկոցնիս էլ մի հին վերարկու էր։ Վաղուց քնել էին բոլորը. շա՜տ յոգնած էին. չէ՞ որ ամբողջ օրը թափառել ու մուրացել էին թշւառ եղբայրներս ու քոյրերս։

Երկար քնել չէր յաջողւում ինձ, լսում էի գայլերի ոռնոցը, քամու շւոցը։

Երբեմն իսկ գայլերը խրճիթի դռան առաջ էին գալիս, դուռըն էին ցնցում. վախից քիչ էր մնում լեղիս պատռէր: Հայրս այդպէս ժամանակ ելնում էր, մի բուռը յարդ վառում օջախում և այդպիսով փախցնում գազաններին:

Ինձ թւում է որ այդ ժամանակ ձմեռները թէ երկար և թէ աւելի խիստ էին լինում այժմեանից: Ձնի խորութիւնը յաճախ հասնում էր մինչև 2—3 ոտնաչափի և չէր հալւում մինչև ապրիլ ամիսը:

Պատճառը, կարծեմ, շրջակայքի խիտ անտառներն ու անհաշիւ ջրակոյտներն էին, որոնք այժմ չը կան այլևս: Հողը աղաներինն էր կամ վանքերին. սկի հոգս անո՞ւմ էին ճահիճները չորացնելու, անտառները մաքրելու: Դէ արի ու բան ցանիր, բան ստացիր այդպիսի հողերից:

Անշուշտ հէնց այդ անհագին քանակութեամբ ջուրն ու անտառներն էին, որ արգելք էին դառնում չորացման և սառնացնում էին օդը:

IV

Այդպիսի երկար ձմեռներից մէկի վերջը, Զատկից 3—4 շաբաթ անց, մեր գիւղում մի տարօրինակ բան պատահեց:

Այդ օրը ես սովորականից ուշ էի զարթնել, դրա համար էլ գրեթէ վազելով էր որ հասայ պանդոկ. վախենում էի նախատինք լսելու Նիկոլից, որովհետև այդ օր յատակները պիտի մաքրէինք միասին: Ամեն գարնան մաքրում էինք, այլ և տարին 3—4 անգամ էլ:

Գարնանային մի հիանալի առաւօտ էր:

Մօտեցած պանդոկին, նախ նկատեցի որ պատուհանները բոլորը բաց էին, իսկ յետոյ տեսայ հայր Բէնէդիկտի էշը, մէջքին թիթեղեայ անհագին ջրաման, կողքերից կախ՝ ուռենու երկու խոշոր զամբիւղներ:

Մտածեցի որ երևի հայր-սուրբը ըստ սովորականին՝ քարոզելու էր մտել պանդոկ: Չէր սիրում մարդը մի աւելորդ կոպէկ ձեռք բերելու առիթը փախցնել, մանաւանդ եթէ բազմութիւն կար մեզ մօտ:

Հայր Բենեդիկտը Ֆայլցբուրգի վանքի մուրացիկ միաբանն էր. կուչ եկած, շէկ ու կոշտ մօրուքով մի կապուցին *). քիթը

*) Կաթոլիկ կրօնաւորութեան մի կարգ:

գունդ և կապոյտ բծերով լի, ականջները տափակ, ճակատը ետփախած, աչքերն էլ նման փոքրիկ ծակերի: Բրդեայ վերարկուն այնպէս քրքրւած էր, որ թելերը կարելի էր համրել. ուսին, մինչև մէջքն իջած՝ գնում-գալիս էր վեղարաձև կնգուղը, իսկ ոտների մասները կորուած կօշիկից դուրս էին ցցւել աղտոտ ու սեւացած:

Դեռ իշի վզին կախած զանգի ձայնը չը լսած, շատ անգամ հեռուից փչող զզւելի սուպի ու գինու հոտը գուշակել էր տալիս թէ եկողն ով էր:

Վարպետ Ժանը սկի՛ չէր սիրում նրան, բայց մօրքուր Կատերինը միշտ նրա համար մի կողմ էր դնում մի մեծ ճարպի կտոր: Եւ երբ կնքահայրս տեսնէր ու բարկանար, խեղճ կինը առարկում էր թէ.

—Միւս կեանքումն էլ տեղ պէտք է ինձ թէ ոչ... ոչինչ, դու էլ յետոյ ուրախ կը լինես, որ արքայութեան մէջ կողքիս նստես:

Կնքահայրս էլ ինչ ասէր. ծիծաղում էր միայն:

Երբ պանդոկ մտայ, տեսայ որ մեծ սրահում, սեղանի շուրջը ինչ որ բազմութիւն կար խռնւած: Մեր գիւղացիք էին, յետոյ՝ Ալզասից կառապաններ, Նիկօլն էր, հօրքուր Կատերինը և հայր Բենեդիկտը: Բոլորի մէջ տեղում կանգնած կար վարպետ Ժանը և ցոյց էր տալիս տոպրակով ինչ որ գորշ, մուտ կճեպների նմանող բան ու պատմում՝ թէ ստացել է Հանօվէրից և որ եթէ հողի մէջ տնկւի—շատ համեղ արմատներ կը տայ:

—Հանօվէրցիները, աւելացնում էր նա—գործածում են այս տունկը իբր կերակուր. այնքան էլ առատ բերք է ունենում, որ տեղացիք ամբողջ տարին ապրում են նրանով:

Ըստ երևոյթին կնքահայրս ճգնում էր համոզել շրջապատողներին, որ փորձի համար վերցնեն ու տնկեն: Նրա ասածով, նոր տունկը մեր երկրի համար իսկական բարիք կը լինէր և սովը ընդմիշտ կը հեռացնէր գիւղերից:

Այս բոլորը նա ասում էր պարզ ու բարեմիտ կերպով: Կողքին կանգնել էին Շօվէլն ու իր աղջիկը և լսում:

Գիւղացիք ձեռք էին առնում նոր տունկը, զննում, հոտ քաշում, յետոյ նորից ցած դնում ու ծիծաղում:

—Ա՜յ կասես... կարծես մտածում էին նրանք—ախմախների հաւատացրու ասածներդ: Տեսնւած բա՞ն է այսպիսի բան տնկելը... գնա ուրիշին յիմարացրու...

Ետևում կանգնած գիւղացիք բոթում էին մէկ մէկու, աչքով կնքահօրս ցոյց տալիս ու փաթկացնում:

Յանկարծ հայր Բենիտիկտը աչքերը թարթեց ծաղրական կերպով, հաստ քիթը ցցեց, ետ դարձաւ ու այնպէս փռթկացրեց, որ բոլորն էլ քրքջացին։

Այստեղ արդէն վարպետ Ժանը էլ չը դիմացաւ և բարկացած կանչեց.

—Ի՞նչ էք քրքջում յիմարների պէս. ծիծաղելու ինչ կայ. չէ՞ք ամաչում. ես ձեզ լուրջ բան եմ ասում...

Բայց գիւղացիք աւելի էին ծիծաղում։ Հայր Բենիդիկտը, որ գլուխը դարձնելիս՝ նկատել էր Շօվէլին, գոչեց յանկարծ.

—Ահա՛ թէ ինչ... հիմա հասկանում եմ. այս յիմար բոյսը անշուշտ մաքսից փախցրած բան պիտի լինի։

Չէր սխալւում անշուշտ։ Զարմանալի գնդակները Շօվէլն էր բերել Պֆալցից, ուր վերջին տարիները նրանից շատ էին տնկում։ Առաջ էլ տունկի մասին նա շատ բաներ պատմել էր մեզ. և լաւ բաներ։

—Հէնց ա՛յդ է որ կայ. շարունակեց կանչել հայր-սուրբը—Հերետիկոսից բացի էլ ո՞վ կը յանդգնի այսպէս բաներ անել... Եւ դեռ ուզում էք որ ճշմարիտ հաւատացեալ մարդը յանձն առնի տնկել ու մշակե՞լ այդ բանը... Աստուած սկի էլ չի օրհնիլ այսպիսի ցանքսը։

—Իսկ որ տան ձեզ, չէ՞ք ուտիլ. կանչեց բարկութեամբ վարպետ Ժանը—թող մէկ բուսնեն...

—Բուսնեն... ասաց կրօնաւորը խղճացողի դէմք ստացած և ձեռները կուրծքին ծալելով—բուսնեն... Աւա՜ղ, հաւատացէք ինձ, բարեկամ, որ դուք աւելի խելօք կը լինէք, եթէ առաջւայ նման էլի կաղամբ ու շաղգամ ցանէք...Իսկ այս անճոռնի կճեպները, իրաւ որ, դէն ձգէք՝ թող կորչի գնայ... Վկայ է Աստուած, որ նրանից ոչինչ չի դուրս գայ... Հայր Բենիդիկտը չը լինեմ ես՝ եթէ ատամներս չը կոտրեն...

—Դո՛ւրս ածէք... ո՞վ է շատ մէկ հաւատացողը ձեզ. ասաց վարպետ Ժանը ու տոպրակը վերցնելով՝ պահարանում կողպեց։

Յետոյ, իսկոյն զսպելով իրեն, նշան արաւ կնոջը՝ կապուցինին տալու մի մեծ կտոր հաց։ Ո՞վ գիտէ, ինչե՞ր չէին կարող անել այդ մուրացկանը և նմանները. ինչ վնասնե՞ր հասցնել մարդու։ Ամեն տեղ սպրդող անհրեսներ են. մէկ էլ տեսար ա՛յն օյինը դրին գլխիդ—որ գնա ու ազատիր։

Կապուցինն ու գիւղացիները շուտով դուրս գնացին, իսկ ես վշտից քարացել էի՝ տեսնելով թէ ինչպէս ծաղրեց կնքահայրս։

Հայր Բենիդիկտը բազումն անգամ դեռ գալով ասում էր հօրքուր Կատերինին.

—Յոյս ունիմ սակայն, տիկին Կատերին, որ այդ անիծեալ հերետիկոսական բոյսը չէք տնկիլ ձեր հողերում, այլ ուրիշ բան... ապա թէ ոչ՝ ինձ պէտք պիտի լինի միշտ դատարկ ձեռքերով դուրս գնալ ձեր տնից, թէկուզ հարիւր անգամ էլ գամ... Պիտի աղօթեմ բարձրեալին, որ նա լուսաւորի ձեր միտքը, խելքի բերէ ձեզ նորից...

Դիտմամբ քթի միջից էր խօսում կապուցինը և ձայնը ձգձգում։

Իսկ ամբոխը որ փողոց էր ելել, քրքջում էր դեռ։ Վարպետ Ժանը, լուսամուտի առաջ կանգնած՝ ասում էր վշտալից.

—Ապա՛, արի ու աշխատիր այս յիմարների օգտին... Ա՛յդ էլ քեզ շնորհակալութեան փոխարէն։

—Իզո՛ւր էք բարկանում նրանց վրայ, քեռի Լէրու, խօսեց Շօվէլը—ագէտ են. մեղաւոր չեն որ ծնւել են ագէտ։ Բայց եթէ թէկուզ մի քի՛չ հող ունենայի ես, առանց երկար մտածելու կառնէի ու կը տնկէի այդ բոյսը։ Ահա այդ ժամանակ փորձով կը տեսնէին նրանք արդիւնքը և էլ չէին ծիծաղիլ... Կրկնում եմ. այդ բոյսը 5—6 անգամ աւելի շա՛տ է բերք տալիս, քան այլ բանջար ու հացահատիկ։ Արմատները՝ բռի մեծութեամբ, ինքն էլ համեղ, շա՛տ համեղ, առողջարար ու սննդարար։ Փորձել եմ անձամբ, կերել եմ. ալիւրոտ, սպիտակ ու շագանակի համն է յիշեցնում։ Իւղո՛վ էլ կարելի է տապակել. կամ հէնց ուղղակի խաշել... Մի խօսքով, ինչ տեսակ որ պատրաստես—համով կը լինի։

—Ինչ ուզում է թող լինի. բացականչեց վարպետ Ժանը—թող ծիծաղեն, մերժեն. աւելի լաւ. առաջ ուզում էի պարտէզիս քառորդ հողի վրայ տնկել, այժմ ամբողջ հողը պիտի զբաղեցնեմ այդ բոյսով։

—Եւ լա՛ւ էլ կանէք։ Այս տունկի համար ամեն հող կարելի է. թէև աւազախառն հողը աւելի լաւ է։

Ու այսպէս խօսակցելով՝ դուրս գնացին երկուսն էլ։ Յետոյ Շօվէլը տուն գնաց, իսկ վարպետ Ժանը դարբնոց մտաւ գործելու։ Ես ու Նիկօլն էլ իրար վրայ ժողւեցինք սեղաններն ու նստարանները և սկսեցինք յատակը լուանալ։

Վարպետ Ժանի և կապուցինի վէճը երբէք մոռանալ չեմ կարող. անշուշտ կըմբռնէք թէ ինչո՛ւ, եթէ ասեմ որ այդ չէկ գնդիկները, որ Շօվէլը բերել էր—գետնախնձորի աչքեր էին։ Մինչև այդ՝ ոչ ոք չէր տեսել տունկը և այդ օրւանից ահա, 80 տարի մեր ամբողջ շրջանը ազատ է մնում սովից՝ շնորհիւ գետնախնձորի։

Ամառը, երբեմն, երբ նայում եմ այժմ լուսամուտից և տեսնում Դիմերինգենի ընդարձակ հարթավայրը, որ մինչև անտառի

եզերքն իսկ բռնւած է այդ տունկի թփիկներով, երբ աշնանը դաշտերում յայտնւում են հազարաւոր տոպրակներ, և մարդ ու կին, մանուկ, ուրախ երգերով շուռ են տալիս նրանց սայլերի մէջ —համեմատում եմ այժմեան գիւղացու, նոյն իսկ ամենաչքաւորի դրութիւնը այն սոսկալի թշւառութեան հետ, որ գրաւել էր մեզ մինչև 89 թւականը, երբ դեկտեմբերը չը հասած, այն ժամանակներում, արդէն զգում էին սով...—համեմատում եմ և յիշում թէ որպէ՛ս ամենքը ծիծաղում էին խեղճ կնքահօրս վրայ։

Ա՛խ, վարպետ Ժան և Շօվէլ, երանի կարողանայի՜ք մէկ դուրս գալ ձեր գերեզմանից ու նայել այս դաշտերին. նայել թէ որքա՜ն լաւութիւն արիք դուք չքաւորներին... Ճշմարիտ, արժէր որ յարութիւն առնէիք հէնց դրա համար։ Հայր Բենեդիկտն էլ կուզէի որ տեսնէր. մէկ վեր կենար ու գար—լինի հէնց նրա համար, թէ որպիսի ծաղր ու ծանակի կենթարկւէր. ինքն ու իր էշը միասին։

Վարպետ Ժանը ըստ երևոյթին կատարելապէս համոզւած էր, որ ցանքը յաջողութիւն պիտի ունենար։ Բայց նրա նեղութիւնների վերջը դեռ չէր հասել։

Գիւղում սկսեցին այնպիսի լուրեր պտտել, որ մարդ ապշում էր մեր գիւղացոց ագիտութեան վրայ։ Ասում էին որ իբր թէ խեղճ վարպետ Ժանը գժւել է, որ շաղգամի կճեպ է ցանել իր պարտիզում և սպասում է գազար ստանալու։ Հացահատիկով առևտուր անողները և առհասարակ բոլոր պանդոկի յաճախորդները ծաղրալից դէմքով հարցնում էին նրա առողջութիւնը։

Այսպիսի ծաղրը, անշուշտ, կատաղեցնում էր կնքահօրս։ Երեկոյեանները վշտացած՝ պատմում էր բոլորը. կինն էլ երբ լսում էր—աւելի էր տխրում։

Այդ ամենը սակայն արգելք չեղան կնքահօրս։ Հերկեց պարտէզը, մի լաւ աղբեց ու ամբողջ Շօվէլի բերածը տնկեց այնտեղ։ Օգնում էր Նիկօլը, իսկ ես տոպրակներն էի տանում։

Գիւղացիք, այլ և ուրիշ անցորդներ գալիս ցանկորմից գլուխները ներս էին պարզում ու դիտում արածներս։ Ասենք ձայն չէին հանում, որովհետև լաւ գիտէին որ եթէ, բան է, մէկն ու մէկը համարձակւէր վարպետ Ժանին համբերութիւնից հանել—դնքասը կուտէր։

Եթէ այսպէս, մի առ մի պատմեմ մեր քաշածները մինչև գետնախնձորի հաւաքելը, պատմեմ գիւղացոց անմիտ ծաղրը, տգէտների ասածները—գուցէ անհաւատալի թւի։ Քանի մարդ տգէտ է լինում, այնքան աւելի է սիրում ծաղրի ենթարկել խելօքների. գետնախնձորի դէպքը լաւ առիթ էր ներկայացնում և ծաղ-

րում էին։ Հէնց որ գիւղում խօսք էր բացւում այդ տունկի վրայ, իսկոյն «գիտունիկները» քրքիչ էին բարձրացնում և ծիծաղից թուլանում։

Իսկ ես ամեն օր կռւի էի բռնւում արօտատեղիում՝ գիւղացի մանուկների հետ, հէնց այդ գետնախնձորի պատճառով։

Ինձ տեսնելուն պէս լակոտները սկսում էին կանչել.

—Հո՛յ, հո՛յ, տեսէ՛ք մէկ, Հանովերցին է գալիս, տոպրակները պարտէզ տանո՛ղն է գալիս...

Ի հարկէ բարկանում էի, մորակս քաշում ու վրայ տալիս։ Սկսւում էր ծեծ, կռիւ... Տաս հոգով վրաս էին թափւում երբեմն, մի լաւ դնքսում ինձ ու աղաղակում.

—Կորսւի՜ն թող հանօվէրեան տունկերը, կորսւի՜ն...

Դժբախտաբար միշտ մենակ էի լինում նրանց դէմ։ Նիկօլա եղբայրս անտառ էր գնում փայտ կոտրելու, իսկ Կլօդը հօրս էր օգնում—ճիւղեր մաքրում ու աւելներ կապում, թոյլտւութեամբ անտառապահի։

Այսպէս էլ միշտ մենակ, կռւում էի ծեծ, նախատինք, բայց լաց չէի լինում, այլ կատաղում էի։

Եւ չէք կարող երևակայել թէ ինչպէ՜ս ցանկանում էի, որ տունկերը շուտով աճեն։ Գոնէ թշնամուն քառացնելու, խայտառակելու համար լինէր։ Ամեն առաւօտ լուսաբացին իսկոյն վազում կախւում էի ցանկորմից ու նայում թէ ծիլեր չե՞ն երևում։ Ոչինչ չը տեսնելով, քիթս կախ անցնում էի, մտքումս մի լաւ հայհոյում հայր Բենիդեկտին, որ անիծել էր մեր տնկածները։

Մինչև 1789 թւականը գիւղացիք դեռ վատ աչքի ու անէծքի հաւատում էին։ Շնորհիւ դրանց, քա՜նի-քանիսները խարոյկի վրայ այրւեցին։ Այնպէ՜ս ատում էի այդ կապուցինին, որ եթէ այրելը ուժս պատէր, ձեռքիցս ողջ չէր պրծնելու։

Ինձ թւում էր, որ գետնախնձորի համար կռւելով մանուկների հետ՝ փառքի պիտի արժանանայի։ Ասենք մտքումս չէր էլ գալիս պարծենալու այդ կռիւներով։ Ո՛չ ոք չը գիտէր եղածը։ Միայն հայրս էր, որ երեկոյանները նկատում էր մորակների թողած հետքերը ոտքերիս վրայ, զարմանում էր ու ասում.

—Դու էլ Նիկօլայի պէս կռւում ես տղաների հետ. քեզ ես հանդարտ տղայ էի համարում։ Զգոյշ կաց, որդի՛ս, մորակով կարող են աչքիդ խփել. մտածիր մէկ թէ ի՞նչ կը լինի մեր հալը, եթէ քեզ մի փորձանք պատահի։

Ու գլուխն երերցնելով շարունակում էր գործը։

Ամառւայ լուսնկայ գիշերներին ամբողջ ընտանիքով, կանթեղի լոյսը խնայելու համար, խրճիթի դռանն էինք նստում գոր-

ծելու: Այնքան նստում էինք, մինչև որ հեռուն, շատ հեռուն, քաղաքի ժամացոյցը 10-ն էր խփում: Այն ժամանակ հայրս ելնում էր, հաւաքում ճիւղերն ու թոկը, աչքերն ուղղում աստեղալից երկնքին ու ասում.

—Մե՜ծ, հրաշալի՜ են քո գործերը, Աստուած… Թող քո ողորմութիւնը մեզ վրայ լինի…

Ոչ ոք գուցէ այնքան ոգևորութեամբ ու բարեպաշտութեամբ չէր արտասանում այդ աղօթքը, ինչպէս թշուառ հայրս: Իսկոյն երևում էր որ սրտանց էր աղօթածը և ոչ թէ այն վանականների նման, որոնք «Հայր մերը» կամ «Հաւատամքը» կարդում են, ճիշտ իմ՝ տուփից մի պտղունց քթախոտ վերցրածի պէս՝ մեքենայօրէն:

Աղօթքից յետոյ հիւղն էինք մտնում ու պառկում քնելու:

Այսպէս անցաւ Մայիսը ու Յունիսն եկաւ: Աչքիս առաջ աճում—մեծանում էին գարին, կորեկն, ու վարսակը, իսկ վարպետ Ժանի պարտիզում ծլի նմուշն անգամ չը կար:

Հայրս յաճախ խօսել էր ինձ հետ հանօվերեան այդ տունկի մասին: Ես պատմել էի ամեն ինչ և երբ պատմում էի, որ նա շատ օգտակար բոյս էր, հայրս ասում էր.

—Աստուա՜ծ տայ, որդիս. իրա՛ւ, ի՜նչ լաւ կը լինէր… Թշուառութիւնը օրէցօր աւելանում է, հարկ պիտի վճարել, իսկ տալու ոչինչ չը կայ. լաւ օրերին էլ գնում ենք աղայի համար բանելու…

Եւ մայրս աւելացնում էր.

—Այո՛, հոգու վրայ կը հասնէր այդ բանը նրանց, որոնք աշխատածը միշտ ուրիշի են տալիս: Օ՛խ, ինչպէս մեզ պէտք կը գար. սովից կազատէր մեզ. Թո՛ղ լինէր նոյն իսկ հերետիկոսական, Հանօվէրից կամ ուրիշ տեղից եկած: Էլ ոյժ, էլ հա՛լ չը մնաց վրաներս…

Եւ իրաւունք ունէր խեղճը:

Բայց դժբախտաբար վարպետ Ժանի պարտէզում ոչինչ ու ոչինչ չէր ծլում: Կնքահայրս արդէն սկսում էր հաւատալ, որ հայր Բենեդիկտը իզուր չէր ծիծաղել… Արդեօք նորից չը հերկէ՞լ հողը և գոնէ առւոյտ ցանել այնտեղ: Սիրտը սեղմւում էր. չէ՞ որ այլևս ծաղր ու ծանակից ազատւելիք ու հանգստութիւն չը պիտի ունենար: Միմիայն յաջողութիւնը կարող էր փակել ագէտների բերանը:

Լաւ էր դեռ, որ Շօվէլը այդ միջոցներում գիւղից բացակայ էր և Լօրէն էր գնացել, ապա թէ ոչ՝ մօրքուր Կատերինից մի լաւ նախատինք կստանար: Պառաւը միայն նրան էր մեղադրում:

Բայց ահա մի օր, յունիսի սկզբներին, առաւօտեան ժամը

5-ի մօտերը ես ըստ սովորականին պանդոկ էի գնում շուտ Նիկօլին զարթեցնելու, տաւարին դաշտը հանելու: Գիշերը առատ ցող էր իջել և Զորս-Բամիներ կոչւած գիւղի կողմից բացւում էր մի վա՜ռ, շա՜տ վառ արշալոյս, խոստանալով տաք օր անել: Երբ հասել էի պարտէզի մօտ՝ մտածեցի մէկ ներս նայել ու յետոյ անցնել:

Նայում եմ ու աչքերիս չեմ հաւատում: Ի՞նչ է այն: Աջ, ձախ, ամեն կողմ հողից բարձրացել են ինչ որ կանաչ տերևների գողարիկ փնջիկներ: Յօղը կակղացրել էր հողը և մեր գետնախնձորն էր, որ ծլել էր:

Ոստնեցի իսկոյն պարտէզ որ մօտից նայեմ: Այո՛, ծիլեր են, մեր կողմերում նմանը չը տեսնւած ծիլեր: Է՛լ ինձ բռնել չը կարողացայ, դուրս թռայ և ինչպէ՜ս կը վազեմ: Մի քանի ոստիւնով հասնելը, սենեակի լուսամուտը բռնցկահարելս մի րոպէի գործ եղաւ: Ինչպէ՜ս եմ բռնցքահարում. կոտրելու չափ:

Կնքահայրս ու կինը դեռ քնել էին:

—Ի՞նչ է այն, ո՞վ է. գոռաց ներսից վարպետ Ժանը:

—Բացէ՛ք, կնքահա՛յր, շուտ…

Բաց արաւ, թթւած դէմքով դուրս նայեց ու կանչեց.

—Ի՞նչ է եղել, ա՛յ տղայ, ի՞նչ կայ:

—Գետնախնձո՛րն է ծլել, կնքահա՛յր, պարտէզն ամբողջ ծածկւած է ծիլերով:

Պատրաստւել էր մի լաւ բարկանալ վրաս որ շուտ էի զարթեցրել, բայց հէնց որ լսեց ասածս, վարկենապէս լայն դէմքը փայլեց ու ժպիտով ծածկւեց:

—Ի՞նչ ես ասում, ա՛յ տղայ, ասում ես ծլե՞լ են:

—Այո՛, կնքահա՛յր, ամեն կողմից գլուխ են դուրս պարզել. ցածում, վերևում… Մի գիշերւայ մէջ բոլորը ծլել են…

—Սպասի՛ր. այդ ի՜նչ լաւ բան եղաւ… սպասի՛ր, ա՛յս րոպէիս կը գամ. գոչեց նա ցնծութեամբ ու շտապեց հագնել. մի կողմից էլ գոռում էր.

—Է՛յ, Կատերի՛ն, չե՞ս լսում, գետնախնձորները աճում են, դուրս են եկել, ծլե՛լ են…

Մօրքուր Կատերինը արագութեամբ դուրս թռաւ անկողնից: Վայրկենապէս հագնւեցին, և երեքս էլ իջանք պարտէզ: Այստեղ արդէն նրանք համոզւեցին որ ես չէի սխալւել: Ամեն կողմից տերևներ ու տերևներ… ուղղակի անսովոր տեսարան:

—Աճէ՜ց, դո՛ւրս եկաւ, Շօվէլն իրաւունք ունէր… ուրախութեամբ գոչեց վարպետ Ժանը—ցոյց կը տանք մենք այժմ այդ վարդապետին ու բոլոր միւսներին… Հ՞ը, ո՞նց է… Ա՛յ թէ յաջո-

ղութիւն... Բայց այժմ իսկ հարկաւոր է սրանց բուկը տալ. այդպէս խորհուրդ տուեց Շօվէլը. պէտք է կէտ առ կէտ պատուէրը գործադրել... խելօք մարդ է, մտածող... Մենք ի՞նչ ենք նրա մօտ... պէտք է լսել նրան...

Մօրքուր Կատերինը միմիայն համաձայնութիւն էր ցոյց տալիս:

Յետոյ մենք վերադարձանք պանդոկ, բացինք լուսամուտները, իսկ ես տաւարը դաշտն արի և ոչ ոքի էլ բան չասի նորութեան մասին: Դեռ ինքս հէնց ապշութեան մէջ էի: Բայց հովիտն իջնելուս պէս, գիւղի լակոտները էլի սկսեցին սովորական աղաղակները:

—Հօյ, հօյ, Հանուվէրցի՜ն է գալիս...

Այս անգամ չը բարկացայ. ընդհակառակն, հպարտութեամբ կանչեցի նրանց.

—Այո, ի՞նչ կայ, ես չեմ ծածկում որ օգնում էի վարպետ Ժանին՝ այն տունկը ցանելու ժամանակ:

Ու նկատելով խօսքերիս թողած ազդեցութիւնը, մօրաքրոջս պարտէզի կողմը ցոյց տւի և աւելացրի.

—Այ, աւելի լաւ է գնացէք ու մէկ նայէք, թէ ինչպէ՜ս են աճում մեր տնկածները... Այժմ կուզենաք որ ձեզ էլ տան, բայց չէք տեսնի...

Յետոյ լռութեամբ, յաղթական, նայեցի նրանց և տեսայ, որ իրար էին նայում ու մտածում թէ՝

—Ո՞վ գիտէ, գուցէ սուտ չե՛ն ասածները:

Երբ երեկոյեան ժամը 6-ին գիւղ վերադարձայ, այնտեղ դեռ ոչինչ չը գիտէին: Միայն միւս և երրորդ օրն էր, որ սկսեցին խօսել թէ վարպետ Ժանի պարտէզում ցանած «կճեպները» բուսել են և որ այդ բոյսը ակի նման չէ շաղգամի կամ ճակընդեղի, այլ մի նոր, արտասովոր բան է:

Առաւօտից մինչև երեկոյ միւս օրն այլևս ամբոխը չէր հեռանում պարտէզի մօտից: Մօտենում էին, կախւում ցանկապատից, լուռ նայում ծիլերին ու այլևս ոչ ոք չէր ծիծաղում: Կնքահայրս էլ մեզ խորհուրդ տուաւ ձայն չը հանել:

Աւելի լաւ է—ասաց նա—որ մարդիկ իրենք տեսնեն իրենց սխալն ու ամաչեն՝ քան կարկտահարենք նրանց նախատինքներով:

Ասենք, չը նայելով իր այդ պատուէրին, վարպետ Ժանը էլի համբերել չը կարողացաւ և մի քանի օր յետոյ, երբ հայր Բենեդիկտին տեսաւ, հեռուից կանչեց.

—Է՛յ, հա՛յր սուրբ, մէկ եկէք այս կողմը... եկէք նայէք թէ ինչպէ՜ս Աստուած չը լսեց ձեզ, այլ օրհնեց տունկը և նա բուսաւ:

Ապա, նայեցէք թէ ինչպէս են բուսնում:

—Է՛հ, ի՞նչ կայ որ, մօտ եկաւ վարդապետը ծիծաղելով—տեսնում եմ, տեսնում.,. Կարծում էի թէ սատանայական բան էր, բայց դուրս է գալիս Աստծոյ օրհնած տունկ... Աւելի՛ լաւ, շա՛տ աւելի լաւ. մի անգամ համը կը տեսնենք, եթէ համով է ի հարկէ:

Կապուցինները այդպէս միշտ կարողանում են ճարպիկութեամբ խօսքը շուռ տալ: Եթէ գործը լաւ գնաց—կասեն Աստծուց էր. եթէ բանը թարսւի—կասեն սատանայական գործ էր, նրա համար թարսւեց: Սկի՛ ամաչիլ չը գիտեն. յանդգնութեամբ ու վարպետութեամբ խօսքը շուռ տուին՝ ու պրծաւ գնաց:

Եւ դեռ մարդիկ կան, որ հաւատ են ընծայում այդպիսիների խօսքերին: Որքան որ մանուկը, թոյլն ու ծերը արժանի են օգնութեան, այնքա՛ն այդպիսի պնակալէզներին արժան է որ վզակոթներին տան ու վռնտեն: Ուրախ եմ որ կեանքումս նրանցից մէկն ու մէկին հացի կտոր իսկ չեմ տուել:

Յուլիս ամսին վարպետ Ժանի պարտէզը հեռուից նմանում էր մի խոշոր կանաչ փնջի, լիքը սպիտակ ծաղիկներով: Բոյսը մեծանում էր ու մեծանում—հասնում ցանկապատի ծայրին:

Այն սոսկալի շոգերին, երբ դաշտերում գրեթէ ամեն ինչ մրկւում էր արևի տակ ու կանաչի նշոյլ չէր տեսնւում—մարդու քէֆն էր գալիս, երբ նայում էր գետնախնձորի միշտ բարձրացող ու միշտ կանաչ, չայլի՜կ թուփին: Առաւօտեան մի փոքրիկ ցօղ հերիք էր նրան մշտապէս կանաչ պահելու համար:

Մեր ամբողջ մտածութիւններն այնուհետև միմիայն գետնախնձորի մասին էր: Երեկոյանները խօսքը նրա վրայ էր դառնում: Լրագիրներն անգամ մոռացել էինք. էլ Թիւրքիայի և Ամերիկայի գործերը այնքան չէին հետաքրքրում մեզ:

Սեպտեմբերի սկզբներում բոյսի ծաղիկները թափւեցին և ինքն էլ սկսեց օրէցօր թառամել—թօշնել:

—Կարծես ժամանակն է հանելու, ասում էինք մենք:

—Ո՛չ. առարկում էր կնքահայրը—Շօվէլը նախազգուշացրել է. հոկտեմբերից առաջ չը պիտի հանել:

Ու մտադրում էինք, հոկտեմբերի 1-ը գալուն պէս, նախ մի տունկ դուրս հանել և տակը փորել, տեսնելու համար, թէ եղե՞լ էին գետնախնձորները:

Վերջապէս ահա և հոկտեմբերը: Մշուշոտ եղանակ: Առաւօտեան ժամը 10-ի մօտերը վարպետ Ժանը դարբնոցից դուրս եկաւ, մտաւ խոհանոց, դռան ետևից վերցրեց բահը և պարտէզ իջաւ: Մենք էլ ետևից:

Առաջին իսկ թփի մօտ կանգնեց ու սկսեց փորել: Երբ հողը

շուռ տուաւ, մեր աչքին երեւացին արմատից կախուած վարդագոյն գետնախնձորներ: Քանդեց երկրորդ և երրորդ թուփը—նոյնն էր: Իսկ երբ 5-6 թփից հաւաքածը զամբիւղի կէսը լցրեց—ամենքս զարմացած՝ իրար նայեցինք: Մարդ իր աչքին չէր հաւատում:

Կնքահայրս լուռ՝ մի քանի քայլ հեռու գնաց, ընտրեց մի ուրիշ թուփ և էլի քանդեց: Նոյնքան էլի: Բացի դրանից՝ աւելի խոշորներ: Այստեղ արդէն նա այլեւս համբերել չը կարողացաւ և գոչեց.

—Գա՛նձ է այս, գա՜նձ… Եկող տարի անպատճառ զաւխվայրի երկու դեսեատին հողս ամբողջ գետնախնձորով եմ բռնելու. մեր ուտելու չափ վերցնելուց յետոյ՝ մնացածը լաւ կը ծախենք. ձրի չեմ տալ, ո՛չ. երես կառնեն. եթէ էժան ծախենք—չեն գնահատիլ…

Հօրքուր Կատերինը այդ միջոցին, ժողոված գետնախնձորը զամբիւղի մէջ լցրեց. կնքահայրս շալակեց և տուն մտանք:

Երբ խոհանոց եկանք, վարպետ Ժանը ուղարկեց ինձ Տօվէլին ձայն տալու: Երէկ իսկ վերադարձել էր Լօրէնից: Ապրում էր աղջկայ հետ գիւղի միւս ծայրում: Վազեցի կանչելու: Իսկոյն, ի հարկէ հասկացաւ որ վարպետ Ժանը գետնախնձորը հանած պիտի լինէր. ժպտեց ու եկաւ ինձ հետ:

Ներս մտնելուն պէս, կնքահայրս, դէմքը խորին հրճւանքով զւարթացած՝ տարաւ նրան օջախի մօտը դրած զամբիւղի կողմը և ասաց.

—Նայէ՛ք մէկ. վեց թփից միայն հաւաքեցինք այս. և դեռ կէսն էլ կաթսայի մէջ խաշւում է:

—Այո՛. խօսեց Տօվէլը, ըստ երեւոյթին բոլորովին չը զարմացած—հէնց այնպէս էլ եղաւ, ինչ որ ձեզ ասել էի.

—Մնացէ՛ք մեզ հետ ճաշելու, Տօվէլ. հրամցրեց վարպետ Ժանը—միասին տեսնենք այս գետնախնձորի համը: Եւ եթէ համեղ էլ լինի, մեր գիւղն ամբողջ հարստանալ կարող է սրանով:

—Համի մասին ապահո՛վ եղէք. պատասխանեց Տօվէլը—շահաւէտ գործ էլ է. միայն այս տարւայ բերքը հէնց կարող է ձեզ շատ ոսկիների տէր դարձնել:

—Տեսնենք, տեսնենք. բացականչեց կնքահայրս՝ ձեռներն ուրախութիւնից շփշփելով:

Մօրքուր Կատարինը սկսեց սեղան պատրաստել, ձւազեղ եփել նախ. օջախի վրայ դրւած կար արդէն մեծ կաթսայով սուպը: Նիկօլը մառան իջաւ, ճերմակ գինիով լցրեց մեծ կուժն ու դրեց սեղանի վրայ:

Կնքահայրս և Տօվէլը սրահն անցան: Երկուսն էլ լաւ հաս-

կանում էին, թէ որպիսի՜ մեծ օգուտ կարելի էր սպասել նոր տունկից. բայց մտքերում անգամ չէր անցնում որ այդ իսկ գետնախնձորը կարող լինէր բարօրութեան մէջ դնել մեր ամբողջ ազգը, վերջ տալ սովին և մարդկութեան համար շատ աւելի օգտակար լինել, քան զանազան պատմաբանների մինչև երկինք գովասանած անունները: Երկուսից ո՛չ մէկն էլ չէր մտածում այդ. մանաւանդ վարպետ Ժանը, որ գետնախնձորի բերքում՝ իր և մի քիչ էլ շրջապատողների օգուտն էր աչքի առաջ ունենում:

—Եթէ շաղգամից համեղ լինի, ասում էր նա—այլեւս ոչինչ հարկաւոր չէ մեզ:

—Հաւատացէ՛ք որ նրանից շատ աւելի համեղ է. պնդում էր Տօվէլը—սրան զանազան տեսակ էլ կարելի է պատրաստել: Ի՞նչ էք կարծում, յանձն կառնէ՞ի արդեօք մի այդպիսի ծանրութիւն քաշ տալ, բերել հեռուից, եթէ հաստատ համոզւած չը լինէի, որ նա օգտակար բան է թէ՛ ձեզ և թէ՛ ամենքին: Եթէ միայն շաղգամի պէս բան լինէր, սկի էլ խորհուրդ չէի տայ տնկելու:

—Ի հարկէ, անշո՛ւշտ… Բայց էլի… Գիտէ՞ք, մի քիչ այդ կէտում ես Թոմաս առաքեալի նման թերահաւատ եմ. մինչև չը շօշափեմ՝ չեմ հաւատալու. ասում էր վարպետ Ժանը ծիծաղելով:

—Ի՞նչ վնաս. իրաւո՛ւնք էլ ունիք… համաձայնում էր փոքրիկ կալւինիստը քմծիծաղով—այժմ իսկ պիտի շօշափէք. ինձ թւում է թէ երկար սպասելու պէտք չկա՛յ. ահա Նիկօլը ճաշն է բերում:

Եւ յիրաւի, ամենքս նստեցինք շուտով:

Այդ ժամանակներում ծառայ ու աղա—ամենքը միասին էին ճաշում. սպասաւորում էին տանտիկինն ու աղախինը, որոնք յետոյ պիտի ուտէին:

Հազիւ թէ նստել էինք—վարպետ Ժանն ու Տօվէլը սեղանի մի կողմը, պատի մօտ, ես և Մարգարիտը դիմացը—և ուզում էինք սկսել, որ յանկարծ կնքահայրս գոռաց.

—Ահա և Քրիստոֆը!

Քրիստոֆ Մատերն՝ Լիւցէլբուրգի ծխական քահանան էր: Մի երկարահասակ, շէկ ու գանգուր մազերով մարդ: Կնքահայրս տեսել էր նրան լուսամուտի առջևից անցնելիս: Նախ լսեց նրա այն մեծ ու խոշոր գամերով ցեխոտ կօշիկների ձայնը սանդուխքի վրայ, յետոյ ինքն էլ երևաց, երկար հասակը կքեց՝ դռնից մտնելու համար: Թևի տակն էր միշտ իր աղօթագիրքը, ձեռքին ունէր հաստ, խոշոր և փշոտ գաւազանը, իսկ գլխին կրում էր, ալեխառն մազերի վրայ դրած՝ ճմրթկած փափախը:

—Ա՜… գոչեց նա ներս մտնելուն պէս—էլի՞ դուք միասին էք, թշւառականներ… Երևի նստել մտածում էք թէ ինչպէ՞ս վերա-

կանգնէք նորից Նանտի հրովարտակը *), հա՞...

—Լաւ եղաւ որ եկար, Քրիստո՛ֆ. կանչեց ուրախ ձայնով վարպետ Ժանը—Ապա մէկ նստիր ու տես ինչե՜ր ունինք ուտելու... Սպասիր այս կաթսայի խուփը վերցնեմ...

—Լա՜ւ բաներ ունիք... գլուեց քահանան զւարթութեամբ, յետոյ գլխարկը կախեց մեխից, գաւազանը անկիւնին կռթնեցրեց և մօտենալով՝ աւելացրեց.

—Բայց դու իզո՜ւր ես գրգռում ախորժակս, Ժա՛ն... հասկանում եմ, ուզում ես եղել ինձ, հա՞... Սխալւում ես, եղբա՛յր, Շօվէլը քեզ բոլորովին փչացնում է և ըստ երևոյթին հարկաւոր է լինելու քիչ դատաւորին խօսել դրա մասին։

—Իսկ ո՞վ այն ժամանակ ծխատէր քահանաներին Ժան-Ժաք Րուսօի գրքերը կը բերի, հը՞... ծիծաղեց Շօվէլը։

—Լռի՛ր, չա՛րախօս... ամբողջ փիլիսոփայութիւններդ՝ Աւետարանի մի մօքին չարժեն։

—Է՛, Աւետարա՞նը... կանչեց փոքրիկ կալւինիստը—չէ՞ որ մենք—կալւինիստներս գոչում ենք ու գոռում որ ամեն ինչ աւետարանի ոգու համեմատ լինի...

—Այո՛, այո՛. ասաց Քրիստոֆ Մատէրնը—գիտեմ... իսկապէս ասած, Շօվէլ, վատ մարդիկ չէք... բայց մենք գիտենք նաև ձեր միւս, յետին մտքերն էլ...

Այստեղ նա դարձաւ ինձ ու Մարգարիտին և պատրաստելով մեր մէջ տեղը նստել՝ ասաց սիրալիր.

—Ապա՛, տղայք, ինձ էլ տեղ տւէք տեսնենք...

Տեղ տւինք՝ աջ ու ձախ քաշւելով։ Եւ մինչ նա սուպն էր ուտում, գաղտագողի զննում էի նրան, չը համարձակւելով ուղղակի նայել։ Սարսափ էր ազդում ինձ այդ մարդը՝ իր մեծ գորշ աչքերով, գռուզ մազերովն ու հսկայի ձեռքերով։

Քրիստոֆ Մատէրն սակայն պատւական մարդ էր։ Փոխանակ պտղի հասոյթովը հանգիստ նստել-ապրելու՝ ինչպէս իր միւս պաշտօնակիցներն էին անում—նա ամբողջ օրը գործում էր և ամբողջովին նւիրւած էր ուրիշներին։ Ձմեռը գիւղական դպրոցն էր կառավարում, դասեր տալիս, իսկ գարնան և ամառը, երբ դպրոցը փակ էր և տղայք տաւար արածացնելու էին գնում—առաւօտից մինչև երեկոյ քարից կամ փայտից սուրբերի արձաններ էր կեր-

*) Յայտարարւած 1598 թւին, ֆրանսիական Հանրի IV ձեռքով։ Այդ հրովարտակով թոյլատրւում էր բողոքականներին ազատ դաւանել իրենց կրօնը, ունենալ եկեղեցի, ուսումնարան և այլն։ Լուի XIV-ը ջնջեց հրովարտակը 1685 թւին և սաստիկ հալածեց բողոքականներին։ Ծ. Թ.

տում այն եկեղեցիների համար, որոնք միջոց չունէին փողով գնելու։ Բերում էին նրան մի կտոր ժայռ կամ կաղնու կոճղ և նա վերադարձնում էր կամ ս. Յովհաննէս, կամ Աստւածածին և կամ նոյն իսկ Աստւած շինած։

Վարպետ Ժանն ու Քրիստոֆը հայրենակիցներ էին, հին բարեկամներ և շատ էին սիրում իրար։

—Է՛, Քրիստո՛ֆ, ձայնեց յանկարծ կնքահայրս, երբ դատարկել էր իր ափսէն—ե՞րբ ես սկսում դպրոցդ։

—Շուտո՛վ, Ժա՛ն, շա՛տ շուտով. հաւանականօրէն եկող շաբաթ. պատասխանեց քահանան—դրա համար էլ հէնց Պֆալց եմ գնում թուղթ ու գրքեր առնելու։ Ուզում էի սեպտեմբերի 20-ից բանալ, բայց ձեռքումս գործ կար։ Աբէրվիլլերի եկեղեցու համար ս. Պետրոս էի շինում. խոստացել էի հասցնել։

—Այդպէ՞ս... ուրեմն եկող շաբա՞թ։

—Այո, եկող երկուշաբթի կսկսենք։

—Այս փոքրիկին էլ կը վերցնե՞ս դաս տալու. ցոյց տւաւ ինձ կնքահայրս—իմ սանիկն է, Ժան-Պիէր Բաստիանի որդին։ Հաւատացած եմ որ լաւ կը սովորի։

Կնքահօրս խօսքերը ուրախութիւնից կարմրցրին ինձ։ Վաղո՜ւց երազում էի դպրոց գնալու մասին։

Քրիստոֆը իմ կողմը դարձաւ։

—Ապա, փոքրի՛կ, նայիր ինձ մէկ... ասաց նա ձեռքը ուսիս դնելով։

Նայեցի շփոթւած։

—Ի՞նչ է անունդ։

—Միշէլ։

—Լաւ ուրեմն, Միշէլ, համեցէք, ա՛րի։ Դպրոցիս դռները ամենքի համար բաց են. քանի շատ աշակերտ լինի-այնքան գոհ կը լինեմ։

—Ա՛յ, երանի ամենքն էլ այդպէս դատէին. կանչեց Շօվէլը։

Իսկ վարպետ Ժանը բաժակը բարձրացնելով՝ առաջարկեց իր բարեկամ Քրիստոֆի կենացը խմել։

Ուրախութիւնս գուցէ անհասկանալի թւի այժմեան գիւղացի մանուկներին։ Այժմ շատ էլ տարօրինակ և անսովոր բան չէ, որ մանուկը դպրոց յաճախէ։ Մի առանձին նշանակութիւն էլ գուցէ չեն տալիս, որ մարդ կարող է օգտւել ազնիւ, գիտուն և լուսամիտ անձի դասերից. մի մարդ, որ շատ աւելի բարձր պաշտօնի էր արժանի, քան գիւղական համեստ վարժապետութեան։

Դժւար է այժմ ըմբռնել թէ որքա՛ն կուրախանար այդ օրերում մի գիւղացի թշւառ մանուկ, որ այդպէս յանկարծ բաղդ ու-

նեցաւ դպրոց գնալու և կարդալ-գրել սովորելու։

—Կարդալ-գրել պիտի սովորես, Միշէլ. պտտում էր գլխումս —այո, ամեն ինչ կիմանաս և թշւառ ծնողներիդ պէս ագէտ չես մնալ ամբողջ կեանքումդ։

Էլ ինչ ասել կուզի, որ ուրախութեանս չափ ու հաշիւ չը կար։ Ուզում էի իսկոյն տուն վազել, հօրս, մօրս իմաց տալ։ Մի խօսքով՝ այլ ևս հանգիստ նստել չէի կարողանում։

Նոյն օրւայ պատահարներից յիշում եմ նաև այն, որ ձաւգեղից յետոյ մօրքուր Կատէրինը սեղանի վրայ բերաւ խաշած գետնախնձորը զամբիւղով։ Սպիտակ, ճաքճքած կճեպով արմատները քիչ էր մնում քրքրւէին։

—Սա ինչ բան է, ժան, հրաշքից ես ձեռք բերել. գոչեց Քրիստոֆը՝ զամբիւղի մէջ նայելով։

Կնքահայրս ժպտուն՝ առաջարկեց ճաշակել ու բոլորս նոր տունկը այնպէս համեղ գտանք, որ միմեանց ետևից ագահակուլ էինք.

—Կեանքերումս սրանից համով բան չէինք կերել…

Իսկ քահանան երբ իմացաւ թէ այս այն տունկերն են, որոնց վրայ բոլորը ծիծաղում էին, երբ տեղեկացաւ որ $1/4$ դեսետինից կնքահայրս ամենաքիչը պիտի կարողանար 15 մեծ տոպրակ բերք ունենալ—չուզեց հաւատալ։

—Ինչե՞ր էք ասում. գոչեց նա—հրաշք էք պատմում ինձ։

Այնպէս վրայ ընկանք գետնախնձորին, որ քիչ յետոյ պէտք զգացինք կոկորդներս թրջելու։ Մօրքուր Կատէրինը իսկոյն մեր առջը դրաւ գոլով կաթ. ու երբ խմեցինք, նոր ուժով սկսեցինք ուտել։ Վերջապէս Քրիստոֆը տնքալով կանգ առաւ ու ասաց.

—Բաւական է, ժան, կը հիւանդանանք այսպէս… չափազանց արդէն համով է քո գետնախնձորը։

Բոլորս համաձայնեցինք որ տէրտէրը ճիշտ էր։

Տուն գնալուց առաջ, Քրիստոֆը խնդրեց ցոյց տալ պարտէզը և բացատրել թէ ինչպէ՞ս են գետնախնձորը տնկում։ Եւ երբ Տօվէլը հասկացրեց նրան, որ լեռնային ու աւազախառն հողում աւելի լաւ է աճում բոյսը, քան հարթավայրերում—քահանան բացագանչեց.

—Լսեցէք, Տօվէլ… Դուք զգո՞ւմ էք արդեօք թէ ինչ մեծ լաւութիւններ արիք մեր երկրին, որ բերիք այս արմատը… Իսկ դու, ժան, նոյնպէս լաւութիւն արիր, որ չը նայելով կապուցինների ու զանազան տխմարների ծաղրին՝ վճռեցիր տնկել պարտէզումդ և փորձով ապացուցանել… Այո, երկուսդ միասին շատ աւելի լաւութիւն արիք մարդկանց, քան երեք թեմերի բոլոր վար-

դապետները՝ սկսած հէնց իրենց գոյութեան օրերից… Գետնախնձորը չքաւորների հացն է լինելու…

Այս քահանան խնդրեց փոքր ինչ փոխ տալ տնկելու, որպէս զի ուրիշները տեսնեն ու սովորեն։ Պէտք էր այնպէս անել, որ 2—3 տարւայ մէջ ծուխի հողերի կէսը գետնախնձոր արտադրէր։

Ահա այսպէս էր, որ մեր կողմերում յայտնւեց գետնախնձորը։ Ես այսպէս մանրամասն պատմեցի, որովհետև մտածում եմ թէ այս ամենը կարող էր հետաքրքիր լինել գիւղացիներին։

Միւս տարին կնքահայրս զառիվայրի իր ամբողջ հողի վրայ միայն գետնախնձոր ցանեց և ստացաւ 60 տոպրակ բերք։ Այս անգամ արդէն չարամիտ ու ագէտ մարդիկ սկսեցին լուր տարածել, թէ գետնախնձոր ուտողը բորոտութիւն է ստանում։ Դա բաւական էր. ամենքը ետ կեցան և ոչ ոք գնել չուզեց։ Գնեցին մեր գիւղից միայն Լէտիւմիէն և լեռնցի երկու հողագործներ։ Բայց բարեբաղդաբար միւս տարի աշնանը, լրագիրները հաղորդեցին թէ մի ինչ որ Պարմանտիէ, գետնախնձոր է ցանել Փարիզի մօտերքում և բերքերը բաղդ է ունեցել փորձելու համար մատուցանել թագաւորին, իսկ սա գտել է շատ համով ու գոհութեամբ կերել է…

Այս անգամ արդէն ամէնքը վրայ տւին և վարպետ Ժան Լեբուն, բարկացած մարդկային տխմարութեան վրայ, իր ունեցած գետնախնձորը բաւական թանգ գնով ծախեց։

V

Այդ օրւանից ահա ես սկսեցի մարդու նման ապրել։ Ով ոչինչ չը գիտէ, կամ միջոցներ չունի և կամ չէ ուզում բան սովորել, ուսում առնել—նա մարդու նման չէ ապրում, այլ բեռնակիր անասունի, որ իր ամբողջ կեանքում կը հարստացնի աղաներին, մինչև որ ծերանայ, անկարող դառնայ ու նրան դուրս շպրտեն ինչպէս մի աւելորդ ճիւղ։

Լոյսը բացւելուն պէս՝ հայրս զարթեցնում էր ինձ։ Քոյրերս ու եղբայրներս քնած էին մնում. արագ հագնւում էի, աշխատելով չաղմկել—և պայուսակը ձեռքիս՝ տնից դուրս գնում։ Փայտէ կօշիկներ ունէի այն ժամանակ. իսկ մորթէ գլխարկը մինչև ականջներս էի խրում, մի փայտի կտոր էլ թևիս տակ առնում և քայլում դէպի դպրոց։ Այդ տարի ցրտերն ու սառնամանիքը շատ

սկսեց. այնպէս որ, քայլելիս ստիպուած էի փչելով տաքացնել սառող մատներս։

Գրեթէ ամենից առաջ էի հասնում դպրոց և դատարկ սրահը մտնում։ Քահանայի մայր—Մադըլէնը արդէն օջախի մէջ կրակ էր արել։ Փոքրիկ, կծկուած ու կնճռոտ պառաւ էր, կարմիր կտաւէ հագուստով, մազերի վրայ փոքրիկ ծոպազարդով։ Մկան պէս էլ շարժուն, առոյգ ու ճկուն էր։

Անմիջապէս վառարանն էի կոխում բերածս փայտը և նրա վրայ դնում փայտէ կօշիկներս՝ որ չորանային։

Կենդանի պատկերանում է առաջս մեր դպրոցի սրահն իր ծեփած պատերով։ Շարքով դրուած նստարաններ պատերի տակ, լուսամուտների արանքում՝ գրատախտակը, խորքումն էլ, մի փոքրիկ բարձրութեան վրայ՝ հայր Քրիստոֆի ամբիոնը, ետևի պատին փոքրիկ խաչելութիւնը։

Դասարանն աւելելը հերթով էր թէև, բայց ես չէի սպասում հերթապահի գալուն և ինքս էի աւելում։ Դպրոց էին գալիս մանուկներ մեր գիւղից, Հուլդէնհաուզէնից և մինչև իսկ Շէվրհօֆից։ Այդտեղ—դպրոցումն էր հէնց որ սկիզբը դրի իմ ծանօթութեան՝ այժմեան բոլոր հին բարեկամներիս հետ։

Ժամը 8-ը խփելուն պէս՝ մի առ մի ներս էին նետւում աշակերտներն ու դռնից իսկ կանչում.

—Բարի լոյս, պ. Քրիստոֆ... բարի լոյս...

Բայց տէր-հայրը դեռ չէր եկել։ Ոչինչ. սովորութիւն էր դարձել և մանուկները կանչում էին միշտ այդպէս։ Յետոյ, կծկւում էինք վառարանի կողքին, ծիծաղում, իրար բօթում...

Եւ ահա մէկ էլ տեսար լսեց քահանայի ծանր քայլերի ձայնը։ Իսկոյն ամեն ոք շտապում էր իր տեղը գնալու. այբբենարանը ծնկներիս՝ նստում էինք ու քթներս գրքի մէջ կոխում՝ անշարժ։ Ճշմարիտն ասել, տէրտէրը սաստիկ պատժում էր աղմկողներին ու վիճողներին։ Վա՜յ էր թէ տեսնէր, որ դասի ժամանակ մէկն ու մէկը բօթում էր ուրիշի կամ ծիծաղում։ Տեսար վերկացաւ, առանց շտապելու մօտ գնաց, բռնեց յանցաւորի օձիքիցն ու կատուի ձագի պէս դուրս նետեց սրահից։

Երբեմն էլ այնպէս խիստ, այնքան դաժան կերպով նայում էր, որ դողներս էր բռնում ու չարութիւն անելը մտքերովս չէր անցնում։

Դասարան մտնելուց առաջ, տէր-հայրը դեռ մէկ կանգնում էր դռան շէմքին ու նայում թէ կարգի՞ն էր ամեն ինչ։ Ո՛չ մի ծպտուն սենեակում. ոչ ոք չէր շարժւում. լսւում էր միայն վառարանի միջի փայտերի ճաթճթոցը... Նայում էր, նայում, յետոյ մօտ գնում ամբիոնին ու դեռ չը նստած՝ ձայնում.

—Սկսեցէք...

Եւ մենք սկսում էինք.

—«Բ—ա—բա՜»...

Հեգում էին այդպէս այնքան, մինչև որ տէր-հայրը ձեռքն էր բարձրացնում ու գոռում.

—Հերի՛ք է...

Բոլորս վարկենապէս լռում էինք։

Յետոյ նա հերթով մօտ էր կանչում.

—Ժա՛ք, Միշէլ, Նիկօլա... մօտեցէք...

Մօտենում էինք գլխարկը ձեռքներիս։

—Դէհ, ասա տեսնե՞նք, ո՞վ ստեղծեց քեզ։

—Աստուած։

—Ի՞նչու ստեղծեց։

—Որ փառաւորենք իր անունը, սիրենք ու ծառայենք նրան, ու այսպիսով յաւիտենական կեանքի արժանանանք։

Դասատուութեան այդ ձևը յաջող էր։ Երեք ամսից յետոյ արդէն, հէնց ուրիշի տուած պատասխանները լսելով, սովորեցի ամբողջ հաւատոյ սկզբունքները (կատեխիզիս)։

Այդ ձևով էլ նա սովորեցնում էր բազմապատկութեան աղիւսակը։ Իսկ ժամը 11-ին սովորաբար իջնում էր ամբիոնից և անցնում նստարանների առջևիցն ու նայում թէ ո՞վ ինչով է զբաղուած։ Եւ եթէ տեսնէր որ դու քեզ—քեզ հեգում ես, սիրալիր կերպով գգւում էր ականջդ ու ասում.

—Լա՛ւ է... դու մարդ կը դառնաս։

Երբ ինձ էր ասում այդպէս, ուրախութիւնից մթնում էին աչքերս։ Մի օր էլ մինչև անգամ ի՛նչ ասի՝ որ լաւ է։

—Կարող ես Ժան Լէրուին յայտնել, ասաց նա—որ քեզնից գոհ եմ։ Լսո՞ւմ ես, յատնիր նրան այդ իմ կողմից։

Այդ օրը ոտներս գետնին չէր կպչում. կարծում էի թէ աշխարհիս մէջ խելօքը միայն ես եմ՝ որ կամ։

Մարտի սկզբներում արդէն գիտէի կարդալն ու գրելը։ Դժբախտաբար վարպետ Ժանը ամբողջ տարին ինձ ձրիաբար կերակրել չէր կարող։ Գարնանը պէտք եղաւ դպրոցը թողնել ու տաւար արածելու գնալ։ Բայց գնալիս, միշտ գիրքս հետս էի վերցնում ու այնտեղ դաշտում, երբ այծերս ժայռերն իվեր էին մագլցում, նստում էի մի թուփի կամ ծառի հովանու տակ և սովորածներս միշտ կրկնում։

Այդպիսով աշնան վերջերին ո՛չ միայն չէի մոռացել սովորածներս, այլ աւելի լաւ գիտէի։ Ձմեռւայ սկզբին հայր Քրիստոֆն ինձ փոխեց աւելի բարձր դասարան, ուր կային Լիւցելբուրգից

հարուստների որդիներ, որոնք ամբողջ տարին սովորելու միջոցներ ունէին։

Ինչ որ դաս էին տալիս այդ ժամանակ դպրոցում—բոլորը սովորեցի ու աւարտեցի ուսումս։ Գիտէի այնքան, որքան կնքահայրս. մնացածը պէտք էր ինքնաշխատութեամբ ձեռք բերել։

Հէնց այդ ժամանակ էլ, կնքահայրս վերջնականապէս ինձ դարբնոց դրաւ։ Հօրքուր Կատէրինը և Նիկօլը այժմ ինձ վրայ յարգանքով էին նայում, որովհետև երեկոները, երբ կնքահօրս աչքերը շատ էին ցաւում—նրա փոխարէն ես էի կարդում թերթեր ու ամեն տեսակ այնպիսի գրքոյկներ, որոնց բերում էր Շօվէլը։

Ասենք թէև կարդում էի, բայց դեռ շատ բան չէի հասկանում։ Օրինակ չէի հասկանում թէ ինչ բաներ են պետական հարկեր, ինքնավարութեամբ օգտուող շրջաններ, չօգտուող գաւառներ, ընտրողական արտօնութիւն ունեցող նահանգներ...

Ամբողջ միտքս լարում էի որ հասկանամ—բայց չէր լինում։ Ի հարկէ, շատ լաւ ըմբռնում էի, եթէ հարց էր լինում տուրքերի մասին։ Բայց թէ ինչպէս էին հաւաքում—չը գիտէի։

Ինչ վերաբերում է մեր կողմերին, եթէ բան էր, կարդայի—իսկոյն հասկանում էի։ Օրինակ, եթէ խօսւում էր աղի տուրքի (gabelle) մասին, որովհետև ամեն շաբաթ քաղաք էի գնում աղ առնելու մեր տան համար։ Կարդալուս պէս՝ աչքիս առաջն էր գալիս աղի պաշտօնեան. լսում էի կարծես նրա ձայնը, որ հնչում էր իր դռնակից, ո և է թշւառի ուղղւած.

—Է՛յ, ինչո՞ւ անցեալ շաբաթ չեկար աղ առնելու... չը լինի՞ սկսել ես մաքսից փախածը գնել... Սպասի՛ր, կը հետևեմ քեզ և եթէ ձեռքս ընկնես՝ հոգիդ կը հանեմ...

Մեր գիւղացիք իրենց աղը պիտի տէրութեան ամբարից միայն գնէին և այն էլ եռապատիկ գնով ու ամեն շաբաթ, որոշ չափով ամենքին։

Եւ կամ, եթէ տասանորդի մասին էր գրւած լինում—իսկոյն պատկերանում էր առաջս տասանորդահաւաքը։ Ահա գալիս է նա ձիով հնձի ժամանակ. գալիս՝ եղաններով ու ետևիցն էլ սայլեր։ Քշում է ձին արտերի միջովն ու գոռում.

—Է՛յ դուք, շո՛ւտ, պատրաստեցէք տասը խուրձից մէկը...

Եւ թէկուզ փոթորիկ լինէր, թէկուզ անձրև, պէտք էր խուրձերը կողք-կողքի դնել, որ հարկահանն անցնէր ու ձեր աչքի առաջը՝ կորզէր ամենալաւն ու շուռ տար սայլի վրայ։

Այս մասին գրւածները ես բոլորը հասկանում էի։

Հասկանում էի նաև, եթէ խօսւում էր խմիչքի տուրքի, ծախ-

ւածներից առնւած 13% հարկի (treizième sur les ventes), ճանապարհների, վաճառանոց տարւած ապրանքների, քաղաքային բոլոր տուրքերի մասին։ Ինձ հարկ էր միմիայն մտաբերել մաքսատները, վաճառանոցները, քաղաքային տունը, մաքսախոյզների, կնքողների, չափողների, խմիչքի տուրքը դնողների, հսկողների, արաղի և գարեջրի փորձողների, պետական աճրդողների... ու հազար ու մէկ այդտեսակ պաշտօնեաների. յիշել թէ ինչպէ՛ս դրանք բոլորը վազում են աջ ու ձախ, ամեն ինչ շօշափում, զըննում, տակն ու վրայ անում, այստեղ՝ գրաւում, այնտեղ՝ կնքում, մի ուրիշ տեղ՝ հայհոյում, խլում...

Ինչ որ չէի հասկանում, Շօվէլը բացատրում էր։

—Ուզում ես իմանալ թէ ինչ է «ընտրողական իրաւունքներ վայելող գաւառներ» կոչւած բանը. ասում էր նա հնոցի կողքին հանգիստ նստելով—դժւար չէ հասկանալ, Միշէլ։ Ընտրող գաւառները նրանք են, որոնք ամենից առաջ են մտել Ֆրանսիական թագաւորութեան կազմի մէջ։ Դրանցից են օրինակ Փարիզի, Սուասօնի, Օրլէանի, մի խօսքով այն բոլոր գաւառները, որոնցում երբ և իցէ նստել են թագաւորները։ Այդպիսի շրջաններում ինքնավարութիւն գոյութիւն չունի. նրանց կառավարում են թագաւորից նշանակած պաշտօնեաներ և անում են՝ ինչ կամենան, տուրք են նշանակում, որքան ուզեն. մի խօսքով՝ երկրի բացարձակ տէրն են և ոչ ոք չի համարձակւիլ նրանց հակառակ խօսել կամ ծըպտուն հանել։ Գանգատւել էլ չեն կարող. ո՞ւմ գանգատւեն, քանի որ գանգատը հէնց այդ կառավարողներն են քննում ու դատում։

Վաղուցւայ ժամանակներում, այդ գաւառներն օգտւում էին նրանով, որ իրենք էին տուրքերը որոշում, իրենք էլ ընտրում հարկահաններին. մի խօսքով՝ ճգնում էին այնպէս բռնել իրենց, որ կարողանային դիմանալ։ Այդպիսի գաւառների հարկահանները կոչւում էին «ընտրւածներ»։ Սրանից էլ մնացել է, որ այդ շրջանները ստացել են «ընտրողական գաւառներ» անունը։ Բայց ահա արդէն 200 տարի է, որ հարկահաւաքները նշանակւում են թագաւորի պաշտօնեաների կողմից։ Բէֆները այդպէս է ուզում։

Այստեղ նա կանգ էր առնում և հարցնում.

—Հը՞, Միշէ՛լ, հասկացա՞ր այժմ։

—Այո՛, քեռի Շօվէլ։

—Իսկ ինչ վերաբերում է տեղային ինքնավարութեան, այնպէս, ինչպէս մեր Լօրէնն ու Ալզասը, այլև Բրըտայնն ու Բուրգօյնը ունեն—դա բոլորովին այլ բան է։ Այդ տեղերում պետութեան նշանակած պաշտօնեաները մեծ դեր չեն խաղում, այլ «գաւառական խորհուրդ» է գումարւում, այն էլ միմիայն ազնւականներից

ու կրօնաւորներից և այդ խորհուրդն է ահա, որ որոշում է վճարելիք տուրքերի քանակը։ Ամենից առաջ նրանք քւէարկում են այն բոլոր հարկերը, որոնք պիտի վճարուեն պետութեան։ Դա կոչւում է պետական, կամովին հարկ, Թագաւորին հասանելիք։ Իսկ յետոյ քւէարկում են այն բոլոր տուրքերը, որոնք պիտի ծախսուեն գաւառի պիտոյքների—ճանապարհների, շինութիւնների և այլն համար։

Ֆրանսիայի հպատակութիւնը ընդունելուց առաջ, մեր այդ գաւառները վերապահեցին մի քանի արտօնութիւններ... Պիտի իմանաս սակայն, որ ո՛չ թէ ազգաբնակութիւնն է, որ արտօնատէրն է, այլ միմիայն ազնուականներն ու կրօնաւորութիւնը։ Ճիշտ է, յանձնեցին պետութեան այդ հողերը, բայց և պահեցին արտօնութիւնները։ Ինչ վերաբերում է մեզ—Թշւառ գիւղացիներիս, մեզ էլ մեր «իրաւունքները» թողին. վճարելու իրաւունք... Եւ հաւատացի՛ր, ոչ ոք մեզնից չի խլիլ երբէք այդ միակ իրաւունքը... Մենք այժմ, Ֆրանսիային միանալուց յետոյ, ո՛չ միայն գաւառին պէտք եղած տուրքն ենք վճարում, այլ և պետական ընդհանուր ծախսերն ևս։ Ահա մեր առանձնաշնորհումը։ Հասկանալի՞ է, Միշէլ։

—Այո։

—Ուրեմն միտդ պահիր հա՛... չը մոռանաս։

—Բայց այդ ինչ խայտառակո՛ւթիւն է. գոչում էր կնքահայրս որ նոյնպէս լսում էր Շօվէլի բացատրութիւնը—էլ ո՞ւր մընաց իրաւունքը. ֆրանսիացինե՞ր ենք մենք, թէ՛ ոչ. միևնոյն ազգի՞ն ենք պատկանում, թէ՛ այլ։ Ինչո՞ւ ուրեմն ժողովրդի մի մասը միմիայն տուրքեր գնելով է զբաղւած և չէ վճարում ոչինչ, մինչ միւս մասը անընդհատ վճարում է և իրաւունք անգամ չունի իմանալու թէ ինչի՞ են գործածում իր տւածները...

—Իհարկէ. պաղարիւնութեամբ պատասխանում էր Շօվէլը—անարդարութիւնը հէնց այդտեղ է։ Առնենք, օրինակ, մաքսատան տուրքերը, աղաններին վճարածը և առհասարակ այն բոլոր հարկը, որոնք ամբողջովին ծանրացած են միայն չքաւորների ուսին, մինչ ազնուականները, վանքերը և նոյն իսկ քաղքենիք (բուրժուա) ոչինչ, կամ գրեթէ ոչինչ չեն վճարում։ Բայց, օգուտ չունի այս մասին երկար խօսելը, քանի որ ոչ մի նշանախեց փոխել անգամ չենք կարող։

Երբէք տաքացած չէր խօսում Շօվէլը։ Յիշում եմ թէ ինչպիսի՜ անզբղւելի հանգստութեամբ պատմում էր մեզ՝ իր պապերի կրած հալածանքը։

Նրանց վռնտել էին Լա—Րօշէլից, խլել հողերը, ունեցածն ու

տները. հալածել էին ամբողջ Ֆրանսիայում, զոռով առել որդիներին ու կաթոլիկ դարձրել, իսկ յետոյ էլ, Լիկոհէյմում, նրանց վրայ զունդեր ուղարկել, որ սրի ուժով ուրանալ տան հաւատնին։ Շօվէլի պապին դատապարտել էին թիավարութեան 13 տարով, ոտքերը ընդ միշտ շղթայած թիավարելու նստարանին։ Շատ կալւինիստներ, վերակացուների ծեծի տակ սպանել էին. իսկ անգլիական պատերազմի ժամանակ նրանց թողել էին գնդակների ու թնդանօթների հարւածների տակ՝ շղթայած նստարանների և յետոյ, շղթաների միջից հանել էին դիակի կտորներ—գլուխ, ոտք, թև...

Այս բոլոր սոսկումները պատմելիս՝ սարսափից քարանում էինք մենք. իսկ Շօվէլը անվրդով քթախոտ էր քաշում, մինչ նրա փոքրիկ աղջիկ-Մարգարիտը մահու չափ գունատ, շունչը պահած՝ աչքերը չէր հեռացնում հօր շրթունքից...

—Այո, աւելացնում էր Շօվէլը իբր վերջաբան—ահա թէ մենք—Շօվէլներս ինչե՜ր քաշեցինք այդ բուրբօնների*) ձեռքից և որքա՜ն երախտապարտ ենք ԼուիXIV ին և այն XI ին, որին «ամենասիրելի»են անւանում... Հետաքրքիր պատմութիւն է,չէ՞... Ահա ես ինքս. ի՞նչ եմ ես. մի աւելորդ մարդ, զուրկ ո և է քաղաքացիական իրաւունքից։ Մեր այժմեան ողորմած արքան իր նախորդների պէս, գահ բարձրանալիս երդւել է եպիսկոպոսների ժողովի առաջ, որ ամեն ջանք ի գործ պիտի դնի՝ բնաջինջ անելու համար մեզ—Նզոված հերետիկոսներիս։ Ձեր քահանաները մերժում են մեզ տալու ծննդական, մահւան ու ամուսնութեան վկայական. օրէնքն արգելում է մեզ ո և է պաշտօն վարել։ Մնում է անասունի պէս թափառել. ընկերութիւնից դուրս են շպրտել, մարդու նման ապրել չե՛ն թողնում։ Բայց ի՞նչ է մեր վատութիւնը, ո՞ւմն ենք արել չար բան. չէ՞ որ ամենքը, կամայ—թէ ակամայ՝ կը խոստովանեն թէ մենք մաքուր մարդիկ ենք։

—Ինչի՞ նման է դա. կանչում էր կնքահայրս—զզւելի է, խայտառակութիւն է այդ. ո՞ւր մնաց քրիստոնէական սէրը, գութը դէպի մարդիկ։

—Ոչինչ, ոչինչ. ասում էր Շօվէլը—այսօր չէ՝ վաղն անշուշտ կը գայ հաշիւ տալու օրը... Այո՛, անպատճառ կը գայ. եթէ ո՛չ այս տարի, գոնէ տասը, 100, թող լինի 1000 տարուց յետոյ—բայց կըգայ վերջապէս... և այն ժամանակ, օ՜հ, այն ժամանակ ամեն ոք կը ստանայ իր արժանի վարձատրութիւնը...

Ուրեմն ակներև էր, որ Շօվէլին երբէք չէին կարող գոհացնել տալ փոքրիկ արտօնութիւններ—օրինակ տուրքերի թեթևացումն. զիջողութիւններ, որոնք կարող էին բաւականացնել վարպետ Ժանին։

Բաւական էր նայել կալւինիստի գունատ դէմքին, փոքրիկ շարժուն աչքերին, նուրբ արծւէքթին ու ամուր սեղմած բարակ շրթունքներին—նրա ամբողջ չոր դէմքին, որ կռացած էր լինում միշտ՝ զամբիւղի ծանրութիւնից գոյացած... բաւական էր տեսնել նրա ջղուտ, երկաթէ ձուլածոյի նմանող անդամներին—որ մարդ իսկոյն մտածէր թէ՝

—Ո՛չ, այդ փոքրիկ մարդը կէս—հաշտութիւններ ընդունել չէ կարող, ո՛չ էլ մեղմացնող միջոցներ, զիջողութիւններ։ Պիտի ունենար նա կամ ամէն ինչ և կամ ոչինչ։ Ու այժմ համբերատար է երևում, հարիւր անգամ խուսափել է թիապարտութիւնից, ոչնչի առաջ չէ կանգ առել՝ իր սիրած մտքերը գրքերով տարածելու համար, անվախ, բայց խիստ զգոյշ է եղել... սակայն եթէ, օ՜հ, առիթ ներկայանար, գայլին մէկ հաշիւ պահանջելու օրերը—վա՜յն եկել էր տարել թշնամուն։

Իսկ աղջիկը։ Հօրն էր նման այժմեանից։ Այդպիսի բնաւորութիւն կոտրել կարելի էր, ճշմարիտ է, բայց երբէք ճկել ու ծռել...

Իհարկէ այն ժամանակ ես լաւ չէի կարող հասկանալ Շօվէլին—շատ փոքր էի դրա համար—բայց բնազդաբար զգում էի և շատ յարգում նրան։ Հանդիպելիս՝ իսկոյն գլխարկս էի հանում և մտածում թէ՝ չէ՞ որ այս մարդը մեր լաւն է ուզում, մեզ նման տանջւում է, վշտանում... Ուրեմն և մեզնից է...

Այդ ժամանակ լրագիրներն սկսեցին խօսել ինչ որ պետական ելումուտքի մէջ գոյացած բացի (դէֆիցիտ) մասին։ Կընքահայրս երբ կարդում էր, յաճախ գոչում էր.

—Ի՞նչ է այս, ո՞րտեղից, ի՞նչու գոյացաւ այդ բացը։ Ժողովուրդը շարունակում է վճարել անընդհատ. մի՛ կոպէկ էլ չեն թողնում հարկերից, բոլո՛րը հաւաքում են. տուրքերն էլ խո՛ մեծանում են ու մեծանում և ահա ի՞նչ... բա՛ց, դէֆիցի՜տ... Ուրեմն գողեր կան. գանձարանը կողոպտւում է։ Ինչո՞ւ թագաւորը մէկ չէ հետաքրքրւում թէ բանը ինչումն է։ Պարզ է, գողերը ժողովրդից չեն, ո՛չ. որովհետև հարկերը կեդրոնանում են գանձարան և գիւղացին էլ մի կոպէկի երեսը չի տեսնում։ Ուրե՞մն... Անշուշտ այնտեղ—թագաւորի շուրջը պիտի որոնել գողերին...

Վալէնտինը, որ լսում էր, ձեռքերը միացնում էր ու ասում.

—Օ՜հ, պարոն, պարոն, ինչե՞ր էք ասում. չէ՞ որ Նորին Մեծութիւնը թագաւորի շուրջը միմիայն իշխաններ, դուքսեր, բարոններ, այլև եպիսկոպոսներ կան. մի խօսքով՝ անուանի, ազնուական մարդիկ, որոնց համար պատիւն աւելի թանգ արժէ քան փողը...

—Ինչպէ՜ս չէ, գո՛ւրս տուր... կտրուկ պատասխանում էր

կնքահայրս—մտածիր ինչ կուզես և թող որ ես էլ ուզածս ենթադրեմ... Երբէք ինձ համոզել չես կարող, որ ամէն քայլն անելիս տուրք վճարող գիւղացին, բանւորը կամ նոյն իսկ բուրժուան՝ կարողանան այդ դէֆիցիտի պատճառը լինել... Գողանալու համար նախ պիտի հասնել գանձարանին.... Հետևաբար, եթէ այդ անուանի իշխանները չեն գողերը, ուրեմն նրանց սպասաւորներն են...

Եւ կնքահայրս իրաւացի էր։ Մինչև յեղափոխութիւնը, ժողովուրդը իրաւունք չունէր իր պատգամաւորներն ուղարկել՝ ստուգելու համար պետական ելևմտից հաշիւը։ Ամէն ինչ միմիայն բարձր ազնուականութեան և հոգևորականների ձեռքումն էր։ Հետևապէս նրանք էին դէֆիցիտի համար պատասխանատու։

Սակայն ոչ ոք դեռ չէր հաւատում դէֆիցիտին։ Ճիշտ է, նրա մասին խօսում էին, լրագիրները գրում էին ակնարկներով, այլաբանօրէն—և ահա բոլորը։

Բայց այդ իսկ միջոցին, յանկարծ, անսպասելի կերպով, թագաւորը ելևմտից նախարար նշանակեց Ժընէւացի Նեկկերին։

Կարծես մի վաճառական, որ սնանկանալու միտք չունի, Նեկկերը պաշտօնի գլուխն անցնելուն պէս՝ պետական ելևմուտքի հաշիւը շինեց ու հրատարակեց ի գիտութիւն ժողովրդեան։

Լրագիրները այդ հաշւին «Նեկկերեան հաշւետուութիւն» անունը դրին։

Առաջին անգամն էր, որ գիւղացիներին յայտարարւում էր թէ ի՛նչի վրայ են ծախսւել իրենց տւած փողերը։ Հաշի՜ւ տալ վճարողներին... ճիշտ որ վաճառականի խելք էր։ Ո՛չ հայր սուրբները և ոչ էլ Նորին ազնւութիւնները այնքան չնչին էին, որ իջնէին հաշիւ տալու ստորիճանին։ Հպարտութեա՜նը ինչ էր եղել...

Երբ յիշում եմ այդ հաշւետուութիւնը, մինչև այժմ տարօրինակ է թւում ինձ։ Երեկո՛յ չէր լինում, որ վարպետ Ժանը չը խօսէր նրա մասին։ Վաշինգտօն, Լաֆայէտ *), հնդկական ովկեանոսի կռիւը—բան՝ ամէն ինչ մոռացութեան տրւեց այլևս։ Նստում էր կնքահայրս, թերթում, թղթատում հաշիւն ու ծանր տնքալով՝ կրկնում.

—Հը՛մ—հը՜մ... Ապա՛, մէկ էլ կարդանք.—Արքայի և թագուհու տան ծախս—այսքան. Զւիցարական թիկնապահ գնդի ծախս—այսքան. հարկահանների ռոճիկ, գանձապահների, արձանագրողների—այսքան. կրօնական միաբանութիւնների, վանքերի,

*) Ամերիկայի ազատութեան համար կռւող զօրապետները։

շինութիւնների—այսքան. Թոշակների—այսքան... Եւ բոլորն էլ միլիօններով թւեր...

Կեանքումս չէի տեսել որ մարդ կարողանար վարպետ Ժանի չափ բարկանալ՝ կարդալիս:

—Ա՛յժմ հասկանալի է. գոռում էր նա—հասկանալի՛ է թէ ո՛րտեղից է թշւառութիւնը երկրում. հասկանալի է թէ ինչու՞ հազարաւոր մարդիկ կոտորւում են սովից և ցրտից և թէ ինչու՞ այնքան հողեր մնում են անմշակ, խոպան... Այժմ ամեն ինչ պարզ է, այո... Ուրեմն այդպէ՞ս, թշւառ ժողովուրդը ամեն տարի թագաւորին վճարի 50 միլիօն և դեռ այդքանը չը բաւականանայ—50 միլիօն էլ դէֆիցիտ, պարտք գոյանայ... Հը՞, ո՞նց է այս, Շովէլ...

—Ցաւալի՛ է, այո, ասում էր Շովէլը—բայց ամեն չարիք ունի և իր լաւ կողմը: Այժմ գոնէ գիտենք մենք թէ ի՛նչ է լինում մեր տւած դրամը: Առաջ զանազան ենթադրութիւններ էինք անում թէ ինչի՞ են գործածում, ծո՞վն են ձգում, ի՞նչ է: Այժմ, երբ տուրքերի և հարկերի ժամանակը գայ, վաղօրօք պիտի գիտենանք թէ ո՞ւր են գնալու նրանք:

—Օ, ինա՛րկէ, իրաւունք ունիք. ասում էր վարպետ Ժանը:—Մեծ երջանկութիւն է իմանալ օրինակ՝ որ ես մէջքս կոտրում եմ աշխատելուց, որպէս զի պ. Սուբիզի համար պալատ առնուի. ամեն բան բերնիցս կտրում եմ—որպէս զի Նորին պայծառափայլութիւն կոմս Արտուան կարողանայ 2 հարիւր հազար ոսկիանոց քէֆեր սարքել. մինչև երեկոյ պիտի տանջւեմ—քրտնեմ, որպէս զի Թագուհին առաջին պատահած մուրացիկ ազնուականին տայ իմ ամբողջ կեանքում աշխատածիս տասնապատիկը... Մարդու քէֆն է գալիս, չէ՞, հիանալի է, հը՞...

Թէև Նեկկերի հաշւետւութիւնը շատ էր պղտորում կնքահօրս արիւնը, սակայն նա մի կողմից գոհ էր, որ գոնէ հաշիւ էին տալիս: Եւ երբ քիչ հանդարտւեց—ասում էր.

—Տիւրգօից*) յետոյ այսպէս լաւ նախարար չէինք ունեցել: Նեկկերը ազնիւ մարդ է. Տիւրգօի շաւղին է հետևում: Նա էլ միշտ ձգնում էր թեթևացնելու ժողովրդի դրութիւնը, պակասացնելու տուրքերը, ոչնչացնելու համքարութիւնները և ամեն տարի, պետական եկամուտի հաշիւը դնելու ժողովրդեան առաջ: Նրան պաշտօնից զրկեցին ազնուականներն ու կրօնաւորները: Ո՞վ կարող է ասել որ Նեկկերի գլխին էլ նոյն օյինը չեն դնիլ, նոյն իսկ եթէ

*) Յայտնի քաղաքատնտեսագէտ, 1774 ի ելևմուտից նախարարը Ֆրանսիայում, Լուի XV ի օրով. 1776 ին հրաժարւած իր պաշտօնից.

թագաւորն անգամ պաշտպանի նրան: Գուցէ և, ո՛վ գիտէ, մեր այդ աւերիչները քիչ խղճմտանքի տէր են դարձել, կամ այլևս չեն համարձակւում առաջւայ նման փողը անհաշիւ կերպով շռայլել: Չը գիտեմ, կարո՞ղ են նրանք այժմ առանց ամաչելու նայել մի թշւառի երեսը, որին նրանք այնքա՛ն արհամարհում են և որն անշուշտ կարդացած կը լինի Նեկկերի հաշւետւութիւնը և գիտէ թէ պալատների ամբողջ արդուզարդը, ձիերն ու կառքերը, սպասաւորներն ու շքեղութիւնը գնւած են իր քրտինքովը, իր դառն աշխատանքովը...

Առանձնապէս վարպետ Ժանին ուրախացնում էր հաշւետւութեան մէջ՝ Նեկկերի եզրակացութիւնը: Նա ասում էր, որ ծածկելու համար եղած դէֆիցիտը, հարկաւոր է անմիջապէս հաւասար չափով հարկատւութեան և տուրքի ենթարկել բոլոր ազնուականներին, այլ և վանական կալւածների հասոյթները:

—Ահա քեզ լաւ բան... ա՛յ, այդ լաւ է. ասում էր նա—հիանա՛լի, բոլորովին ճիշտ է դատում Նեկկերը:

Մեր կողմերում արդէն ամեն տեղ խօսում էին թէ պէտք էր սպասել մեծ փոփոխութիւններ երկրի մէջ: Ամեն կողմ թափանցում էին այդ ուրախ լուրերը:

Երեք շաբաթից իվեր Շովէլն ու Մարգարիտը չէին երևում գիւղում. Նեկկերի հաշւետւութիւնն էին ծախում: Չեմ յիշում ճիշտ, բայց անշուշտ հազարաւո՛ր օրինակներ տարածեցին նրանք երկրի ամեն կողմ.

Տօնավաճառի օրերում մեզ մօտ միմիայն խօսում էին արտօնութիւնների վերացման և հարկերի հաւասար բաշխման մասին:

—Ի՞նչ էք կարծում, վարպետ Ժան. կարծես թէ մեր ողորմած աղաներն ու վարպետներն էլ վերջիվերջոյ ստիպւելու են քսակները բանալ, հը՞...

—Այո, կարծես... Դէֆիցիտ կայ, եղած տուրքերը չեն բաւականանում. ժողովուրդը ոյժ չունի... էլ ճարն ինչ. մեր հայր սուրբները ու աղաները... սոսկալի է, բայց հաւանականօրէն... Ա՜հ, որպիսի՜ դժբախտութիւն, չէ...

Ու ամենքը քրքջում էին: Միմեանց հրամցնելով քթախոտ՝ ծաղրում էին «թշւառ» վանականներին ու աղաներին:

1781 թւին էր կատարւում այդ բոլորը:

Երկար չը տևեց սակայն մեր ուրախութիւնը: Սկսեցին նոր և տխուր լուրեր հասնել մեզ: Իբր թէ կոմս դ' Արտուան, Մարի Անտուանէտ թագուհին և հէնց մինիստր Մօրէպան բարկացել են բուրժուա-նախարար Նեկկերի վրայ, որ խելքին փչել է հաշիւ տալ ժողովրդին: Օրէցօր յուզումն ու անհանգստութիւնը աւելա-

նում էր։ Ամենքը ինչ որ բանից վախենում էին, նոր-նոր բաներ էին սպասում…

1781 թւի Յունիսի 2-ին վարպետ Ժանը ինձ քաղաք ուղարկեց՝ պետական ամբարից աղ գնելու տան համար։

Մտնում եմ քաղաք և ինչ տեսնեմ։ Փողոցներում կենդանութիւն, զինւորական երաժշտութիւն։ Մարկիզ Տալարի պատշգամբի տակ, դատաւորի և հրամանատարի տների առաջ թմբկահարութիւն, զինւորներին ընծաներ են ցրւում… Կարծես տօն օր լինէր։ Ժողովուրդը սակայն՝ սկի ուրախ չէր երևում։

Աղի ամբարի առաջ էլ բազմութիւն կար և բազմութեան մէջ, եռանկիւնի գլխարկներին ծուռը դրած՝ շրջակայում էին, ծիծաղում ու հանաքներ անում մի քանի սպայիկներ։ Դռնակի առաջ կանգնած պաշտօնեան փողս հաշւեց, տոպրակը լցրեց և ես հեռացայ։

Երբ շուկայովն էի անցնում, լսեցի որ անկիւնում ժողոված ախւրավաճառներից մէկն ասում էր միւսին.

—Ամէն ինչ կորած է այլես… էլ ոչինչ սպասել չէ կարելի. Թագաւորը հրաժարեցրել է նրան…

Իսկոյն հասկացայ, որ Նեկկերի մասին էր խօսքը. երեք շաբաթից իվեր անընդհատ լուրեր էին պտտում։ Գրեթէ վաղելով էր, որ գիւղ հասայ և դարբնոց նետւեցի։ Բայց վարպետ Ժանը արդէն իմացել էր վերադարձող առևտրականներից և այդ իսկ պատմողների առաջ ցցւած այժմ, գոռում էր.

—Անկարելի բան է այդ, չեմ հաւատում… Եթէ Նեկկերը հեռանայ, էլ ո՞վ կը գցի դէֆիցիտը… Ուրիշները դարձեալ կը սկսեն հին օյինը, նորից մէջ տեղ կըգան որսեր, պարահանդէսներ, տօներ, և փողերը հողի պէս կը շպրտեն—կը շռայլեն։ Իսկ դէֆիցիտը փոխանակ նւազելու, կը մեծանայ ու կը մեծանայ… Ասում եմ ես ձեզ, ձեր ասածն ուղղակի անկարելի է…

Իսկ երբ ես պատմեցի, թէ ինչպէ՛ս քաղաքում տեսայ, որ սպաները քէֆ են անում, երաժշտութիւնը հնչում է նահանգապետի տան առաջ և այլն և այլն—կնքահայրս յօնքերը կիտեց։

—Այո, ասաց նա—ըստ երևոյթին իրաւ է, որ այդ ազնիւ մարդը թողել է պաշտօնը. իսկ ես դեռ կարծում էի թէ թագաւորը կը պաշտպանի նրան…

Գուցէ և նա ուրիշ խօսքեր էլ աւելացնէր, բայց չը գիտէինք, թէ ովքեր կային լսողների մէջ։ Ո՞վ գիտէ—լրտես, բան… Դրա համար էլ կնքահայրս կարճ կտրեց, վերցրեց կռանն ու ասաց մեզ.

—Գործի՛ սկսենք, տղա՛յք… Սուբիզի թօշակը պիտի վճարել… գործենք…

Եւ նա այնպիսի մեծ քրքիջ արձակեց, որ մօրքուր Կատարինը գլուխը դուրս հանեց պանդոկի լուսամուտից՝ տեսնելու թէ ի՛նչ էր եղել դարբնոցում։

Առևտրականները դուրս գնացին։ Ամբողջ օրւայ ընթացքում նրանցից շատերը մտան ու ելան՝ բոլորն էլ քէֆով, հարբած, սակայն այլևս ոչ ոք նոր բան չը պատմեց։ Երեկոյեան, երբ առանձին մնացինք և լուսամուտներն ու փեղկերը փակեցին, կնքահայրս համբերել չը կարողացաւ և ամբողջ մաղձը դուրս թափեց։

—Մոլորեցրին վերջապէս նրան այդ կոմս դ՛Արտուան ու մեր սիրուն թագուհին… վա՛յն եկել տարել է, եթէ մարդ պար գայ իր շռայլ կնոջ սրնգի ածելովը… Գուցէ և լաւ մարդ է մեր թագաւորը, գուցէ և սիրում է իր ժողովրդին, գուցէ և ոչնչացնի ճորտութիւնն ու անարդար գործերը, սակայն դժւար թէ ոչնչացնի այդ տօներն ու պարերը, այդ զանազան քէֆերն ու շռայլութիւնները… խնդիրը դրանց գալուն պէս՝ շռայլ կինը լսել անգամ չի ուզելու. Նրա համար ամեն ինչ թող կորչի, միայն թէ քէֆն ու պարը անպակաս լինի… ծնւած է հէնց դրա համար. նրան օդի պէս կարևոր է դարձել սիրաբանութիւններ, փունջեր ու հոտաւէտ իւղերը։

Քանի խօսում էր վարպետ Ժանը, այնքան աւելի սանձարձակ էր դառնում նրա սրտի մէջ կուտակւած բարկութիւնը։ Այնուամենայնիւ դեռ չէր համարձակւում ուղղակի ասել թէ Մարի-Անտուանէտ թագուհին մեզ բոլորիս պիտի կործանէր, դէպի անդունդը տանէր ժողովրդին։ Չէր ասում, բայց դէմքից երևում էր այդպէս մտածածը։

Ամբողջ կէս ժամ խօսեց, ու խօսեց այնպէս, որ կարծես վերջ տալու միտք չունէր։

Իսկ դրսում անձրև էր սկսել, փչում էր քամի. անտանելի եղանակ էր։ Ժամը 9-ը խփեց. Նիկօլը կրակը հանգցրեց, ես էլ ուզում էի տոպրակն ուսս առնել և տուն վազել, երբ յանկարծ երկու ուժգին հարւածներ լսւեցին փեղկերի վրայ։

Ամենքս զունատ՝ իրար նայեցինք։ Վարպետ Ժանը խօսելիս այնպէս բարձր էր աղաղակում, որ չը նայելով անձրևին ու քամուն—դրսից կարող էր լսել։ Բառի բո՛ւն նշանակութեամբ՝ շունչներս կտրւեց վախից. եթէ դռան առաջ ոստիկաններ լինէին…

Մօրքուր Կատարինն արդէն ելաւ որ լամպը խոհանոց տանի—գուցէ դրսից կարծէին թէ քնած էինք։ Բայց այդ միջոցին լսւեց փողոցից մի կոշտ ձայն.

—Բա՛ց արա, Ժան, ես եմ, Քրիստոֆը…

Ազատ շունչ առինք. վարպետ Ժանը իսկոյն բացն ելաւ, իսկ

մորքուր Կատարինը լամպը նորից տեղը դրաւ։

—Ուրեմն այդ դո՞ւ ես եղել. ասում էր վարպետ Ժանը։

—Այո՛, ես եմ, ի հարկէ ես։

—Բայց գիտե՞ս, վախեցրիր մեզ հա՛...

Քիչ յետոյ երկուսն էլ ներս եկան։ Իսկոյն նկատեցինք, որ տէր-հօր քէֆը տեղը չէր։ Որովհետև փոխանակ ըստ սովորականին՝ բարևելու հօրքուր Կատարինին և միւսներին—կանգ առաւ սենեակի մէջ տեղը և սկսեց թափ տալ անձրևից թրջւած գլխարկըն ու ասաց.

—Սէվէրնից եմ գալիս... Տեսայ հռչակաւոր կարդինալ Րոհանին... Սատեղծո՞ղ արարիչ... և դա կարդինա՞լ է, եկեղեցու պե՞տը... Ա՛հ, երբ յիշո՛ւմ եմ...

Բարկութիւնը խեղդում էր նրան։ Անձրևի ջուրը աղբիւրի պէս դէմքից հոսում էր վզի մէջ. պոկ տւաւ վզնոցն ու գրպանը կոխեց ջղայնութեամբ, յետոյ էլ սկսեց վեր ու վար ճեմել սենեակում։

Զարմացած նայում էինք։ Ըստ երևոյթին մեզ չէր նկատում անգամ և երևակայում էր թէ իրեն լսողը միմիայն վարպետ Ժանըն էր։

—Այո՛, շարունակեց նա յուզմամբ—պատիւ ունեցայ տեսնել Նորին սրբութեան, տեսնել այդ մեծ պաշտօնեային, որ պէտք է մեզ—անկիրթներիս օրինակ տայ բարքի պարզութեան և քրիստոնէական այլ առաքինութիւնների... Եւ ի՞նչ... ինքը անձամբ կառավարում է նժոյգներին և սրարշաւ քշում կառքը Սավէրնի գլխաւոր փողոցով. ու երբ փշրտում է խեղճ խանութպանների ամանները ու խեցինները ճանապարհի վրայ՝ խենթի պէս ծիծաղում է ու քրքջում... Ա՛հ, որպիսի՜ գայթակղութիւն...

—Իսկ դու գիտե՞ս արդեօք, որ Նեկկերին հրաժարեցրել են, ընդհատեց նրան վարպետ Ժանը։

—Ինչպէ՞ս չը գիտենալ. ասաց հայր Քրիստոֆը դառն ծիծաղով.—իզուր չէր, որ Նորին Սրբութեան նախագաւիթներում վխտում էին Ալզասի վանքերից վանահայրեր, կապուցիններ, բոկոտն կարմելեաններ, բարնաբեաններ *)... ու ամեն այդ կարգի մուրացիկներ ու թափառիկներ...

Ու սկսեց աւելի արագ ճեմել։ Խոշոր, գռուզ մազերով գլուխը ցնցւում էր, ման գալիս և կարծես երազի մէջ, ինքն իրեն հետ էր, որ խօսում էր։

---

*) Կաթոլիկական կրօնաւորական կարգեր։

—Այո՛, եղբա՛յր Քրիստոֆ, գոչում էր նա—ահա թէ ինչպէս են եկեղեցու պետերը... Էլի՛ գնա, նորի՛ց պաշտպանութիւն խընդրիր թշւառ ընտանիքի հօր համար... Փորձի՛ր, որ հովանաւորի նա գիւղական երէցներին... Ասա որ խուզարկու պաշտօնեաները ներս ընկան մաքսանենգ ապրանք որոնելու պատրւակով, մառաններդ ու պահարաններդ բանալիները կորզեցին ձեռքիցդ... Գնա՛, եթէ կարող ես հասկացրու նրան, որ այդպէս գիշերով մի քաղաքացու տունը մտնել բռնութեամբ և խուզարկելը՝ գծուծ, ստո՛ր բան է... Եւ ովքե՞ր, տէր Աստուած, ովքե՞ր են այդ խուզարկողները. մի խումբ այնպիսի մարդիկ, որոնք ո՛չ մի նշանով չեն զանազանւում աւազակներից... Դատի էլ դիմես— աւելի նրան կը հաւատան՝ քան քեզ... Հասկացրու եթէ ոյժ ունիս՝ որ նրա պարտքն է այդպիսի խայտառակութիւնների մասին իմաց տալ թագաւորին, ազատել բանտից մի թշւառի, որի միակ մեղքն է 4 գրւանքայ մաքսանենգ աղ ունենալը... Գնա՛, քիթդ ներս կոխիր, եղբա՛յր Քրիստոֆ... այո՛, լա՛ւ կընդունեն, հրամեցէք կասեն քեզ...

—Բայց, խէր Աստուծոյ, միջահատեց նրան վարպետ Ժանը —կը պատմե՞ս վերջապէս, թէ ինչ է պատահել։

Այստեղ հայր Քրիստոֆը պահ մի լռեց; յետոյ կանգ առաւ կնքահօրս առաջ և ասաց.

—Պատմեմ բարեկամ. ահա՛։ Գնացել էի զանգատի։ Երէկ գիշեր ժամը 11 ին աղի պաշտօնեաները խուզարկութեան են մըտնում իմ ծուխերից Յակովբ Բաումգարդէնի մօտ, յետոյ իրեն էլ ձերբակալում և տանում։ Պէտք էր մի բան անել։ Մտածեցի որ Կարդինալն ինձ կը հասկանար, կը խղճար վեց որդիների տէր թշւառին, որի միակ մեղքն այն էր, որ 4 գրւանքայ մաքսանենգ աղ էր գնել... Սկզբում դեռ երկու ժամ ստիպւեցի սպասել նրա շքեղ ամրոցի դռանը, մինչդեռ ամեն տեսակ կապուցիններ մտնում էին ներս ամենայն ազատութեամբ, իրենց տան պէս։ Եկել էին որ շնորհաւորէին Նորին Սրբութեան՝ Նեկկերի ուրախալի հրաժարեցման առթիւ... Վերջապէս ինձ ներս թողին մտնելու այդ Բաբելոնը։ Նայում եմ՝ շուրջս ոսկի, մետաքս, ակնեղէն ու նկարներ... Ինձ, այլև լեռնային գիւղերից երկու խղճուկ քահանաների ստիպեցին այնտեղ էլ, ընդունարանում սպասել. և ինչ էք կարծում, քա՞նի ժամ.—առաւօտեան 11 ից մինչև երեկոյեան 5 ը։ Սըպասաւորները ծիծաղում էին մեզ վրայ. երբեմն էլ կարմիր հագած մի շուտիկ՝ անցնելիս նայում էր ու կանչում—«տէրտէրները դեռ սպասո՞ւմ են»... Զայրանում եմ, ամբողջ համբերութիւնս օգնութեան կանչում... անպատճառ ուզում էի տեսնել Նորին Սրբութեան, հետը խօսել... Յանկարծ ծառաներից մէկը ներս է

մտնում և ինչ… յայտարարում է, որ Նորին Սրբութեան մօտ ընդունելութիւնը յետաձգւում է մինչև մի շաբաթ… Ասում է ու երեսիդ ծիծաղում… լիրբը…

Այս ասելիս, հայր Քրիստոֆը այնպէս զայրոյթ արտայայտեց, որ լուցկիի պէս՝ երկու կտոր արաւ ձեռքի հաստ գաւազանը, իսկ դէմքը կաս—կարմիր դարձաւ։

—Վա՜հ… կանչեց կնքահայրս բարկութեամբ—չը կարողացա՞ր այդ անամօթին մի լաւ ապտակ հասցնել։

—Օ՛, եթէ մենակ լինէի․ ձայնեց քահանան—ապահով կաց, ականջիցը բռնելո՛ւ պէս՝ հոգին կը հանէի… բայց երկու երէցները այնտեղ էին․․ Համբերութեամբ կուլ տւի նախատինքն ու դուրս նետւեցի…

Եւ նա նորից սկսեց ճեմել։ Խղճալու բան էր։ Հօրքուր Կատերինը հաց ու գինի բերեց և հայր Քրիստոֆը ուտելով էր միայն, որ քիչ հանգստացաւ։

Ահա այդ ժամանակ նա այնպէս խօսքեր արտասանեց, որ քանի կենդանի եմ, չեմ մոռանալու։

—Արդարութիւնն ամէն տեղ ոտնակոխ է լինում—ասաց նա—միմիայն ժողովուրդն է, որ գործում է․ իսկ միւս ամէնքը զբաղւած են խայտառակութիւններով։ Ամէն քայլափոխում ոտնատակ է տրւում ամեն ինչ․ էլ ո՛չ սրբութիւն են խնայում, ո՛չ կրօն, ոչ էլ ո՛ և է առաքինութիւն… Եւ ո՞վ է այդ անամօթներին պաշտպանողը—չքաւորը, ժողովրդեան որդին․ ո՞վ՝ կերակրողը—նոյն չքաւորի որդին․ ո՞վ է որ յարգանք է քարոզում դէպի նրանց արտօնութիւնները, կոչումը, նոյն իսկ խայտառակութիւնները—դարձեալ ես, ինձ նման ժողովրդի խղճուկ որդին… Բայց մինչև ե՞րբ ախր, մինչև ե՞րբ պիտի շարունակւի այս։ Չը գիտեմ․ գիտեմ միայն որ երկար չէ կարող տևել այդ բոլորը․ դէմ է սա բնութեան օրէնքների, դէմ Աստծոյ․ մեղք է վերջապէս յարգանք տածել դէպի այն մարդը, որ միմիայն խայտառակւելու է արժանի… Ժամանակ է վերջ տալ այս ամենին…

Նոյն երեկոյեան հայր Քրիստոֆը իր գիւղը վերադարձաւ։ Տխուր էինք մենք և երբ ես ելնում էի տուն գնալու, վարպետ Ժանը սթափւեց մտածութիւններից ու ասաց․

—Այո՛, այդ մեծամեծները միմիայն իրենց վրայ են մտածում․ երբ մեզնից օգտւելու ժամանակն է գալիս—օգտւում են և՛ քահանայից, և՛ գործաւորից և՛ գինւորից․ ստորացնում են մեզ, շան պէս վարւում մեզ հետ… Իսկ երբ այլևս պէտք չեն ունենում՝ առանց այլևայլութեան շպրտում են… Պիտի զղջան, անշուշտ պիտի զղջան արածների վրայ։ Այժմ խօ ամէնքը գիտեն դէֆիցիտի

մասին․ չէ՞ որ գործը բոլորովին ուրիշ կերպարանք կստանայ։ Գիտեն որ փողը ազգն է տալիս և ազգն էլ մի օր կարող է յոգնել վերջապէս այդ բոլոր իշխաններին ու կարդինալներին կերակրելուց…

Կատարելապէս համամիտ էի վարպետ Ժանին, Շօվէլին և երէցին։ Այնուամենայնիւ այդպիսի հայեացքների հաստատութեան օրը դեռ մօտ չէր։ Դեռ ևս մեզ վիճակւած էր շատ նեղութիւններ քաշել մինչև ազատութեան օրերը։

VI

Մինչ երկրում տեղի էին ունենում այդպիսի անցքեր—ինձ շատ սկսել էր տխրեցնել ու անհանգիստ անել ծնողներիս վիճակը։

Չքաւորութիւնը կատարելապէս մաշել էր նրանց․ թէև ծերունիները առանց կանգ առնելու աշխատում էին, բայց ամբողջ ձմեռը գրեթէ քաղցած անցկացրին։ Էտիէնն արդէն մեծացել՝ օգնում էր հօրը․ բայց Թոյլ, վատառողջ երեխայ լինելով՝ հազիւ յաջողւում էր իր ուտելու չափ հաց բերել տուն։ Կլօդը Լիկսհէյմում Տիրսէլինեան վանքի հովիւ էր․ Նիկոլան փայտահատ էր․ թէև լաւ գործող էր նա, բայց դժբաղդաբար սիրում էր կիրակի օրերը պանդոկներում քէֆեր անել․ այդ պատճառով էլ գրեթէ ոչինչ չէր բերում մօրը։ Լիզբէտան ու փոքրիկ քոյրս Մատիւրինը Տիվօլիում սպաներին ու նրանց կանանց էին սպասաւորում, այն էլ միայն կիրակի օրերը․ միւս օրերին ողորմութիւն էին խնդրում ճանապարհների վրայ։

Այդ ժամանակ ո՛չ գործարան կար և ոչ էլ գիւղերում, հիմակւան նման, գիտէին գործել գլխարկներ կամ կտաւեղէն։ Մինչև 18—20 տարեկան դառնալը, տղան ու աղջիկը ո՛չ մի կոպէկ աշխատանք չէին ունենում։

Մի կողմից էլ վատն այն էր, որ մեր պարտքը գնալով մեծանում էր և արդէն դարձել էր 9 ոսկի և 6 լիւր։ Ռօբէնը ճշտապահութեամբ երեք ամիսը մի անգամ մեր լուսամուտն էր ծեծում և հօրս տանում էր իր փոխարէն այս և այն տեղ մշակութիւն անելու։

Ամենից աւելի հէնց դա էր մեզ մաշում։ Բոլոր մնացածը, դրա հետ համեմատած՝ դատարկ բան էր։ Մտքովս անգամ չէր անցնում, որ Ռօբէնից աւելի աւերիչ բաներ կան․ այն է՝ կապալները, ամենակարևոր բաների վրայ դրւած հարկերը։ Բոլոր ուտելիքները իրենց իսկական արժէքներից տասնապատիկ աւելի

թանգ էին նստում մեզ վրայ, մինչ մեզնից միայն 20 մղոն հեռաւորութեամբ, Զւիցէրիայում, կարելի էր ոչ միայն լաւ ապրել մեր վաստակածով, այլ և փող ետ ձգել։

Ախր անաշ ու խեղճ գիւղացին ինչ հասկանար թէ ինչ է անուղղակի տուրք ասած բանը։ Եթէ ուղղակի փող առնէին տարեգլխին, թէկուզ հէնց 20 լիւր տարեկան—գլուխը քարը։ Ճիշտ է, էլի կը մռթմռթար, կը յուզւէր գիւղացին. բայց որքան կը կատաղէր աւելի, եթէ նրան հասկացնէին, որ անուղղակի կերպով ամեն օր, քիչ-քիչ՝ տասնապատիկ աւելի են վճարում։

Այժմ, ի հարկէ, տանելի են տուրքերը. գոնէ ներքին մաքսային տուրքերը վերացւել են, պաշտօնեաների թիւը երեք քառորդով պակասել են։ Իսկ այն ժամանակ—օհ, որպիսի թալան էր ու թշւառութիւն...

Սաստիկ ցանկանում էի օգնել ծնողներիս։ Երբեմն իսկ երազում էի, թէ ահա միւս տարին վարպետ Ժանը ինձ ամսական 3 լիւր ռոճիկ կը նշանակէր և կամաց կամաց կարող կը լինէի մեր այդ անիծեալ պարտքը վճարել։

Այդ միտքն ինձ աւելի ոյժ էր ներշնչում և գիշեր-ցերեկ միմիայն դրա մասին էի մտածում։

Շատ, շատ նեղութիւններ կրեցինք, բայց վերջապէս եկաւ մի օր, որ բոլորս ուրախացանք։

Զինւորագրութեան օրերը հասան և եղբայրս Նիկոլան՝ սպիտակ տոմս հանեց։ Համարների փոխարէն, այն ժամանակներում սև ու սպիտակ տոմսեր կային։ Սև տոմս հանողը պիտի գնար զինւոր։

Որպիսի՜ երջանկութիւն էր, որ Նիկոլան ազատ մնաց։ Մայրս իսկոյն վճռեց «ծախել» նրան։ Տղան հինգ ոտնաչափ հասակ ունէր. համարձակ կարող էր ձիաւոր զինւոր լինել։ Իսկ դա նշանակում է 9 էքիւից ոչ պակաս դրամ ունենալ գրպանում։

Քանի կենդանի եմ, չեմ մոռանալ մեր ընտանիքի ուրախութիւնը։ Մայրս համբուրեց Նիկոլային ու գոչեց.

—Քեզ կը ծախենք, Նիկոլա. ամուսնացած մարդիկ շատ կան զինւոր ընկած. նրանցից մէկի փոխարէնը կարող ես գնալ և դրա համար մեզ լաւ կը վճարեն։

Իրենց փոխարէն ուրիշին զինւորացու ուղարկել կարող էին միայն ամուսնացածները։ Փոխարինողը այդպիսի դէպքում, պիտի ծառայէր կրկնակի չափով—այն է 12 տարի։ Նիկոլան էլ, մայրս էլ՝ այդ շատ լաւ գիտէին։

—Ինչ կուզէք արէք, ասաց Նիկոլան—ինձ համար միևնոյն է։

Հայրս շատ կուզենար չը թողնել Նիկոլային և ուզում էր ա-

ռարկել թէ անտառում փայտ կտրելով էլ կարելի էր փող աշխատել... բայց մայրս տարաւ նրան մի կողմ ու ասաց.

—Լսիր, Ժան-Պիէր, եթէ Նիկոլային տանը թողնենք՝ կամուսնանայ. տեսնում եմ, չէ՞, որ Ժաննէտ Լօրիսի ետևիցն է ընկել. իսկ որ ամուսնացաւ՝ որդիներ ու ղալմաղալ. վայն եկել ու մեզ տարել է այնուհետև։

Հայրս արտասուքն աչքերին՝ դարձաւ Նիկոլային։

—Ուրեմն ուզում ես գնալ, հա՞, Նիկոլա, ասաց նա—քո քէֆովը։

—Ի հարկէ հայր, պատասխանեց եղբայրս—մեր պարտքը պիտի վճարե՞լ թէ ոչ. տան անդրանիկը ես եմ. դա իմ պարտաւորութիւնն է...

Խեղճ տղայ։ Մայրս գրկեց նրան ու երկար փափսում էր ականջին, որ հաւատացած էր ինքը, թէ տղան շատ է սիրում ծերունի ծնողներին և որ ահա, ձիաւոր զօրքից լինելով՝ գիւղ կը մտնէր սպիտակ նշանազգեստ հագած, օձիքը երկնագոյն, գլխարկի վրայ էլ մի խոշոր փետուր—փնջիկ...

—Լա՛ւ, լա՛ւ արդէն... ասում էր Նիկոլան։

Շատ լաւ ըմբռնում էր մօրս խորամանկութիւնը։ Գիտէր որ պառաւն աւելի տան համար էր հոգս անում։ Գիտէր, բայց չը հասկանալ էր ձևացնում։ Բացի դրանից, մի քիչ էլ սիրում էր զինւորութիւնը։

Հայրս նստեց օջախի մօտ, գլուխը ձեռքերի մէջն առաւ ու սկսեց լալ։ Ուրախութեամբ նա մեզնից ոչ ոքի չէր թողնիլ իրենից բաժանւելու. բայց մայրս նորից կռացաւ դէպի նա և մինչ փոքրիկները դրսում աղմկելով խաղում էին—ասաց.

—Յիմար մի՛ լինի, Ժան-Պիէր. 10 էքիւ կունենանք. Նիկոլան 5 ոտնաչափ ու 6 մատնաչափ երկար է. իւրաքանչիւր մատնաչափին, դու լա՛ւ գիտես, որ առանձնապէս են վճարում։ Հետևապէս մենք 12 ոսկի կունենանք։ Դրանով կարող ենք կով գնել, կաթ, իւղ, պանիր կունենանք. գուցէ և խոզ կարողանանք պահել...

Ծերունին լուռ էր և ամբողջ օրն էլ մնաց տխուր։

Միւս օրը սակայն երկուսն էլ—հայրս ու Նիկոլան գնացին քաղաք։ Վերադառնալիս հայրս, որքան և տխուր, յայտնեց որ Նիկոլան պիտի զինւոր գնար հացագործ Ժօսսի որդու փոխարէն, ծառայէր 12 տարի, իսկ մենք կը ստանայինք 12 ոսկի, ամեն տարւայ համար մէկ ոսկի հաշւով։

Ամենից առաջ հարկաւոր էր իսկոյն Ռօբէնի պարտքը վճարել։ Խեղճ ծերունին շատ կամեցաւ, որ մի երկու ոսկի իրեն—Նիկո-

լային տայինք, բայց մայրս դէմ դրաւ, տաքացաւ, գոռգոռաց որ Նիկօլային ոչինչ պէտք չէր, որ նրան կը կերակրէին, հագուստ, կօշիկ ու գուլպա կը տային. իսկ երբ մօտը փող թողնէինք, անշուշտ պիտի շռայլէր գինետներում, հարբէր և վերջն էլ պատժւէր...

Նիկօլան որ լսեց այդ, ծիծաղեց ու ասաց.

—Դէ լաւ, լաւ... մի՛ տաք, ինձ ոչինչ պէտք չէ:

Չկարծէք թէ մայրս ուրախ էր, որ Նիկօլան թողնում էր մեզ: Խեղճը հօրս չափ սիրում էր նրան. բայց աղքատութիւնը խստասիրտ է դարձնում մարդու: Մօրս մանաւանդ՝ որ ստիպւած էր մտածելու փոքրիկների—Մատիւրինի և Էտիէնի մասին: Իսկ 12 ոսկի այդ ժամանակներում, մի ամբողջ հարստութիւն էր համարւում:

Վճռեց վերջապէս մի շաբաթից յետոյ գնալ և Նիկօլային ծախելու պայմանաւորութիւնը ստորագրել քաղաքապետի մօտ:

Ես ջանասիրութեամբ գործում էի, նոր ույժ ստացած այն մտքից, որ վերջապէս պիտի կարողանայինք Ռօբէնի 9 էքիւն իրեն տալ և ընդ միշտ ազատւել այդ աւազակից:

Մի օր առաւօտ, երբ դարբնոցում մեր կռանները աշխոյժով երկաթ էին ծեծում այնպէս, որ կայծերը թռչկոտում էին աջ ու ձախ—դռան վրայ յառնեց մի ինչ որ երիտասարդ զինւորական—ենթասպայի օգնական Նորին Մեծութիւն գերմանական թագաւորի գնդի: Հպարտութեամբ ներս մտաւ նա ու կանչեց կնքահօրս.

—Բա՛րև, Ժա՛ն եղբայր, ո՞նց է քէֆդ:

Վարպետ Ժանը նախ չը ճանաչեց նրան: Զարմացած ետ նայեց ու երբ զննել էր, ասաց.

—Ա՛, այդ դու ես, այ տղայ... դեռ չե՞ն կախել քեզ:

—Հա՛, հա՛, հա... քրքջաց զինւորականը—ինչպէս երևում է դեռ նոյն ծաղրասէրն ես մնացել, Ժա՛ն... և որպիսի ծիծաղասէր... էհ, լաւ ուրեմն, մի շիշ գինով չե՞ս հիւրասիրել ազգականիդ:

—Ինչպէ՞ս չէ. փորիդ համար եմ քրտինք թափում այ... պատասխանեց վարպետ Ժանը, յետոյ մէջքը նրան դարձրեց ու կանչեց.

—Հը՞, ինչ էք կանգնել, գործի՛, տղա՛յք...

Եւ որովհետև նորից դարբնել սկսեցինք—պատւական ու հպարտ ենթասպան դուրս գնաց առանց ոչնչի, ծիծաղելով ու սուրը շրխկացնելով:

Եկողն իսկապէս վարպետ Ժանի հօրեղբօր որդին էր. անունը Ժերօմ և Զորս—քամիներ գիւղացի: Ընտանիքումն իսկ չը սիրւած մարդ էր, որովհետև զինւոր գնալուց առաջ, ամենքի գլխին օյին էր հանել: Այժմ արձակուրդի մէջ էր:

Այս բոլորը պատմում եմ ես, որովհետև այդ իսկ տղան մեր գլխին էլ մի լաւ խաղ խաղաց:

Միւս օրը երբ քաղաք էի իջել աղի, շուկայի անկիւնից դառնալու ժամանակ, լսեցի որ մէկը կանչում էր ետևից.

—Միշէլ, էյ, Միշէլ:

Դարձայ՝ տեսնեմ Նիկօլան էր, հետն էլ այն երկարահասակ անամօթը: Երկուսն էլ կանգնած էին «Արջ» անունով գինետան առաջ:

Երբ մօտ գնացի, Նիկօլան թևս մտաւ ու ասաց.

—Գնանք քեզ հետ մի բաժակ գինի խմենք:

—Փող չունիմ. ասացի:

—Երկար խօսել պէտք չէ. գոչեց ենթասպան—գնա՛նք, ես կը վճարեմ. սիրում եմ հիւրասիրել հայրենակիցներին:

Տեսայ որ պոկ գալ անհնար էր—գնացի:

Պառաւ Ուրսուլը գինի, օղի և պանիր բերեց: Շտապում էի. բացի դրանից, այդ աղտոտ որջը, որ բերնէ բերան լիքն էր զինւորներով ու զինւորացուներով, ուր գոռում էին, ծխում և անճոռնի կերպով երգում—քէֆիս չեկաւ:

Քիչ յետոյ ամենքն էլ հարբեցին. Նիկօլան նոյնպէս սկսեց երգել ու կանչել: Որջը լցւում էր ու լցւում՝ մարդու շունչը սպառելու չափ: Կամացուկ ելայ, տոպրակս վերցրի, դուրս նետւեցի այնտեղից և կանգ առի միմիայն գիւղ հասնելիս:

Նիկօլային ծախելու պայմանագրութիւնը ստորագրելու նախընթաց օրն էր այդ: Գիշերը եղբայրս տուն չեկաւ: Հայրս սաստիկ անհանգստացաւ, երբ մանաւանդ պատմեցի հանդիպումս: Մայրս սակայն ասաց.

—Է՛հ դուք էլ, ինչ կայ, թող մի քիչ քէֆ անի... չէ՞ որ գնալու է խեղճ տղան. թող օգտւի հանգամանքից, մանաւանդ երբ այդ քէֆերը ուրիշներն են վճարում:

Հայրս այլևս չը վիճեց, բայց մտածութեան մէջ ընկաւ: Քոյրերս ու եղբայրներս արդէն քնել էին. մայրս էլ քնեց և մնացինք նստած ես ու հայրս, որ լուռ՝ միշտ մտածում էր:

—Քնենք, Միշէլ, խօսեց վերջապէս ծերունին—աշխատենք քնել: Վաղն առաւօտ շուտով կերթամ քաղաք և կը տեսնեմ թէ ինչ է եղել... ա՛խ, երանի աւելի շուտ վերջացած լինէր այդ գործը... Միևնոյն է, խոստացել ենք—պիտի ստորագրել:

Բայց հազիւ թէ հանւել էինք, որ յանկարծ լսեցինք ոտնաձայներ դրսում: Հայրս իսկոյն վեր թռաւ ու ասաց.

—Ահա և Նիկօլան:

Սակայն երբ դուռը բաց արաւ, եղբօրս փոխարէն շէմքի

վրայ յայտնուեց մեր գիւղացի Ժան Ռան, որ այդ օրը քաղաքում, գինետանը նստել մեզ հետ՝ խմում էր:

Տժգոյն ինչպէս մեռեալ, Ժան Ռան մի րոպէ լուռ նայեց մեզ շւարած, յետոյ կմկմաց.

—Խնդրում եմ սակայն... չը վախենաք... ձեր գլխին մի փորձանք է եկել...

—Ի՞նչ է եղել. ասաց հայրս դողդոջուն և թուլացած:

—Ձեր Նիկօլան բանտարկուեց... քիչ էր մնում պղնձեայ թասով այն երկարահասակ Ժերոմին սպանէր... Ասացի զգոյշ կաց, Նիկօլա, ծուղակը կընկնես... Լսիր՝ ասացի, և ինձ նման արա դու էլ... երեք ամիս է այդ շահագործողների հաշւով խմում եմ, բայց դեռ խաբել չը կարողացան ինձ... Չեմ ստորագրել և պրծաւ գնաց... Թող վճարեն խմելու համար՝ ինչքան կամենան... Իսկ ես չեմ ստորագրիլ...

—Աստուած իմ, Աստուած իմ... կանչեց հայրս—ինչո՞ւ ամեն դժբաղդութիւնը հէնց մեր գլխին է թափւում...

Իսկ ես քիչ էր մնում ցած ընկնէի: Մայրս վեր թռաւ, վազվզել սկսեց. երեխաները նոյնպէս զարթնեցին:

—Ի՞նչ ստորագրեց. հարցրեց հայրս—շնորհքով պատմիր... չէ՞ որ նա ոչինչ ստորագրել չէր կարող. մենք նրան խոստացել էինք տալ Ժօսսի որդու փոխարէն...

—Էլ ի՞նչ արած. խօսեց Ժան Ռան—ո՛չ ես եմ մեղաւոր դրանում և ոչ էլ նա... Շատ խմեցինք, ահա... նրան յորդորեցին ստորագրելու. միշտ աչքով էի անում, որ զգոյշ լինի, բայց աչքերը մոլորուել էին խմելուց... ոչինչ չէր հասկանում, խելքը կորցրել էր... Թարսի պէս էլ, այդ րոպէին ես քիչ դուրս գնալ ստիպուեցի. երբ նորից ներս եկայ—ամեն ինչ վերջացել էր. տեսնեմ՝ Ժերոմը քրքջում է և ստորագրութիւնը գրպանը կոխում.. Կանչում եմ Նիկօլային սեղանակից խոհանոց.—«Ստորագրեցի՞ր, ինչ է».—«Ստորագրեցի»:

«—Յիմա՛ր, ասում եմ. քեզ այլևս 12 ոսկի չեն տալ, այլ միմիայն 100 լիվր... խաբեցին քեզ»... Նա՝ իսկոյն դէպի ներս, տեսնեմ կատաղել է, թուղթն է ետ ուզում, որ պատառի... իսկ Ժերոմը երեսն ի վեր խնդում է... Այստեղ արդէն ձեր Նիկօլան գործի սկսեց... Տո՛ւր որ կը տաս... բռնածին պէս Ժէրոմին ու շառլատաններից մէկին, շրմփկ... ես—էն պատին... Ամեն ինչ տակն ու վրայ եղաւ... էլ աթոռ, էլ սեղան... պառաւն սկսեց օգնութիւն աղաղակել... ինձ էլ այնպէս հուպ տուին սեղանով մի պատի, որ շարժուել չէի կարող... Ժերոմը սուրը քաշեց, ձեր Նիկօլան թասը վերցրեց ու ճիշտ անպիտանի գլխի մէջ տուեց... Թասը ջարդուեց,

Ժէրոմը գետին փռուեց ամբողջ հասակով և կողքէն ափսէ՞, բաժակ, թասե՞ր... Եկան գիշերապահները. հազիւ ախոռի կողմից ինձ դուրս նետեցի և փողոցում խռնուող ամբոխի մէջ լսեցի, որ Ժէրոմին կիսաշունչ վերցրել են... Ինքն է մեղաւոր, ինչո՞ւ սուր քաշեց. Նիկօլան խօ չէ՞ր կարող թողնել, որ իրեն սպանեն... Ժերոմն է մեղաւոր, այո. երդումով անգամ կը վկայեմ...

Ժան Ռայի այդ պատմութեան ընթացքում, մենք լուռ նստել էինք, կարծես կայծակից խփուածների նման: Երբ վերջացրեց—ամենքս սկսեցինք լաց լինել: Էլ ի՞նչ էր մնում մեզ անել. ամեն ինչ կորսուած էր. ո՛չ միայն մեր տունն էր քանդուել, այլ և Նիկօլան էլ բանտն էր ընկել:

Հազիւ լոյսը բացուեց, որ հայրս իսկոյն գաւազանը ձեռքն առաւ և ուզեց քաղաք գնալ: Բայց ես խնդրեցի նրան քիչ սպասել և առաջ մէկ վարպետ Ժանի հետ էլ տեսնուել: Հայրս համաձայնուեց և մենք պանդոկ գնացինք:

Վարպետ Ժանը մեծ սրահում, շապկանց էր դեռ. երբ մեզ տեսաւ, զարմացաւ: Իսկ երբ եղածը պատմեցի և օգնութիւն խնդրեցի նրանից, առաջ մէկ լաւ բարկացաւ:

—Էլ ի՞նչ կարելի է անել, գոչեց նա—ձեր Նիկօլան հարբեցո՛ղ է, իսկ միւսը—այդ հօրեղբօր որդիս՝ սրիկայի մէկը...

Հայրս այնպէս սկսեց լալ սակայն, որ կնքահայրս յանկարծ հագաւ տօնական զգեստը, գաւազանը ձեռքն առաւ ու ասաց.

—Լա՛ւ, լա՛ւ, Ժա՛ն, դադարի՛ր... Այնքան լաւ մարդ ես, որ քեզ չէ կարելի չօգնել... Գնանք քաղաք և մէկ տեսնենք, թէ ինչ կարելի է անել. թէև շատ էլ յոյս չունիմ:

Այնուհետև կնոջը յայտնեց, որ ժամը 9-ին կը վերադառնայ, դարբնոցի առջևից անցնելիս էլ պատուէրներ տուաւ Վալէնտինին և մենք լուռ, իւրաքանչիւրս մեր մտածութիւնով զբաղւած, քայլեցինք դէպի քաղաք: Վարպետ Ժանն էր միայն, որ երբեմն, ընդհատելով լռութիւնը՝ բացականչում էր.

—Էլ ի՞նչ կարելի է անել, հը՞... Ստորագրել է վկաների առաջ ու պրծաւ գնաց... Ի հարկէ, խօ խենթ չե՞ն, որ թակարդն ընկածին բաց թողնեն: Յիմար է, յիմա՛ր փայտի պէս այդ Նիկօլան: Հէնց այդպէ՛ս զինուոր է պէտք նրանց. քանի զինուորը պակաս խելք ունենայ—այնքան աւելի լաւ կը կռուի աղաների համար... Այժմ միայն ես հասկանում եմ, թէ ինչու այն սրիկան արձակուրդ է ստացել... եկել է անշուշտ մեր կողմերում այդ ձևերով զինուոր որսալու...

Քանի նա խօսում էր, այնքան մեր տխրութիւնն աւելանում

էր։ Բայց երբ քաղաք էինք մտնում, վարպետ Ժանը քիչ սիրտ առաւ ու ասաց.

—Ամենից առաջ դեռ մէկ հիւանդանոց գնանք այն անառօթին տեսնելու... վերակացուն ինձ ծանօթ է... Տեսնենք այստեղ ի՞նչ կարելի է անել...

Հիւանդանոցում նա ինքը մենակ դեռ առաջ ներս մտաւ, յետոյ, քառորդ ժամ սպասելով, մեզ էլ ներս կանչեցին։

Ժերոմին պառկեցրել էին մի ցած մահճակալի վրայ, գլուխը բոլորովին կապկպած ամեն կողմից այնպէս, որ միայն քիթն ու բեխերն էին երևում։ Հազիւ ճանաչեցինք։

Մեզ տեսնելուն պէս, նա քիչ բարձրացաւ մի թևի վրայ, նայեց լուռ ու նորից գլուխը ցած դրեց։

—Բա՛րև, Ժէրօմ. խօսեց վարպետ Ժանը—այսօր առաւօտ միայն իմացայ դժբաղդութիւնդ և շատ ցաւեցի։

Ժերոմը լուռ մնաց։

—Հէնց քե՛զ պիտի հասնէր այդպիսի դժբաղդութիւն. շարունակեց կնքահայրս—կարող էին, Աստուած մի՛ արասցէ, գլուխդ ջարդել. բայց, փառք Աստծոյ, բժիշկն ասաց ինձ քիչ առաջ, որ շուտով կառողջանաս։ Միայն զգուշացիր, որ այլ ես չը խմես...

—Լսի՛ր... միջահատեց նրան Ժերոմը յանկարծ—դուք ասելիք ունիք ինձ ուրիշ. այնպէս չէ՞...

—Այո՛, եղբայր... Ես ուրախ եմ, որ այնքան էլ վատ մարդ չես եղել, ինչպէս պատմում են... բանը նրանումն է, որ այս խեղճերը գիւղից քեզ մօտ են եկել... Նիկոլայի հայրն ու եղբայրն են...

—Ա՛... ասաց Ժերոմը քիչ գլուխը բարձրացնելով—հասկանում եմ այժմ. ուզում են, որ թուղթը վերադարձնե՛մ... Ինչպէ՞ս չէ... Աւելի լաւ է գլուխս տամ՝ քան թուղթը... Ա՜խ այն աւազակը... կուտում է հա՜, մա՞րդ է խեղդում... Թող մէկ ընկնի մեր գունդը, կը խօսեմ ես նրա հետ... Սրիկա՜ն...

—Լսի՛ր, Ժէրօմ... սկսեց կնքահայրս։

—Կորէք գնացէ՛ք... աղաղակեց Ժերոմը։

Այստեղ արդէն վարպետ Ժանը բարկացաւ ու ոտքի ելաւ։

—Ուրեմն չե՞ս ուզում թուղթը վերադարձնել, չէ՞. կանչեց նա։

—Կորէք աչքիցս... կրկնեց անպիտանը։

Մեզ մնում էր միայն դուրս գնալ։

Նոյն օրն իսկ այցելեցինք նաև Նիկոլային՝ բանտում։ Խեղճը շատ ընկճուել էր և մանաւանդ սաստիկ յուզուեց, երբ հայրս լաց եղաւ։

—Լսի՛ր, հա՛յր, ասաց նա—ճակատագիրս այդպէս էր երևի,

էլ ճա՛րն ինչ... լաւ գիտեմ, որ այլևս ոչինչ չէք ստանալ... Աստծոյ ողորմութիւնը թող հասնի մեզ...

Պարզ էր. թշուառը սաստիկ զղջացել էր, բայց արդէն ուշ էր։

Մեկնելու ժամանակ խնդրեց, որ բերենք իր մօտ քոյրերիս ու եղբայրներիս։ Մօր մասին ոչ մի բառ։

Երեք օրից յետոյ Նիկոլային տարան իր գունդը։ Հինգ թէ վեց իր նման թշուառների հետ սայլի մէջ դրին ու ձիաւորներով շրջապատուած՝ մեկնեցին։ Սայլի ետևից միայն ես էի գնում. հայրս գալ չէր կարողացել. աշխատում էր։

Ահա այդպէս էր, որ խեղճ տղան հեռացաւ իր հայրենիքից և գնաց զինուոր դառնալու։

VII

Նիկոլայի յիմարութիւնը կարող էր դեռ շատ տանջանքների պատճառ դառնալ, եթէ չը լինէր կնքահայրս։ Խղճալով մեզ, եղբօրս մեկնելու երեկոյեան, այդ ազնիւ մարդը, նկատելով որ նըստած իմ անկիւնում՝ դառնապէս լալիս եմ—ասաց.

—Դարդ մի՛ անիլ, Միշէլ. գիտեմ որ այդ վաշխառու Ռօբէնը ձեզ իր ճանկերի մէջն է առել։ Հայրդ ու մայրդ մենակ՝ դժուար թէ կարողանան նրանից ազատուել. ոչինչ չունին։ Իսկ դու, դու կը վճարես հօրդ պարտքը։ Չը նայելով որ արհեստ սովորելդ դեռ չես վերջացրել, սակայն քեզ ամսական 5 լիւր (ֆրանկ) ռոճիկ եմ նշանակում, որովհետև դու լաւ աշխատաւոր ես և քեզնից ես գոհ եմ։

Մօրքուր Կատարինի և Նիկոլայի աչքերը արցունքով լցուեցին. իսկ ես չը կարողացայ մինչև անգամ խօսել.

—Օ՛, վարպետ Ժան... դուք անում էք աւելի, քան հարազատ հայրը...

Շօվէլը, որ այդ միջոցին Մարգարիտի հետ ներս էր մըտնում, բացականչեց.

—Ա՛յ, այդ լաւ է. ես ձեզ վաղուց է որ սիրում եմ, վարպետ Ժան, իսկ այժմ յարգում էլ եմ...

Ու նա սեղմեց կնքահօրս ձեռքը, յետոյ բռնեց թևիցս ու աւելացրեց.

—Լսի՛ր, Միշէլ, հայրդ խնդրել էր մի տեղ գտնեմ քրոջդ—Լիզբէտի համար։ Կարող ես յայտնել, որ տեղը գտնուած է «Կանանչ ծառ» կոչուած գարեջրատանը—Վասսելօնում։ Կը ստանայ ճաշ, բնակարան, մի զոյգ կօշիկ և տարեկան էլ 10 ֆրանկ փող։ Եթէ

լաւ լինի, գուցէ յետոյ աւելացնենք։ Իսկ սկիզբը՝ դա լաւ ռոճիկ է։

Կարող էք այլևս երևակայել, թէ որքա՜ն ուրախացան ծերունիներս, երբ իմացան այդ ուրախ լուրերը։ Լիզբէտը ուրախութիւնից նստել չէր կարողանում. հէնց նոյն րոպէին պատրաստ էր գնալ, սակայն հարկաւոր էր դեռ այս-այն տեղից քիչ հագուստ գտնել նրա համար. խեղճը իր ցնցոտիներից բացի՝ ոչինչ չունէր։

Շօվէլը նրան տուաւ փայտեայ կօշիկներ, Նիկօլը՝ շրջազգեստ, մօրքուր Կատարինը՝ երկու շապիկ, իսկ հայրս ու մայրս՝ միմիայն բարի խորհուրդներ և օրհնութիւն՝ ճանապարհ դնելիս։

Հպարտ և ուրախ, կապոցը թևի տակ, համբուրեց մեզ Լիզբէտը և ճանապարհ ընկաւ։ Ծնողներս լաց եղան, իսկ մենք խըրճիթի դռանը կանգնած՝ ետևից նայում էինք մինչև անյետանալը

Այսպէս է ահա թշուառների դրութիւնը։ Կերակրում են, սնուցանում ձագերին և երբ սրանք թևաւորւեցին, մէկ էլ տեսար զանազան կողմեր թռան բախտ որոնելու և թողին ծերունիներին մենակ՝ իրենց խոհերի հետ։

Լաւն այն էր գոնէ, որ մեր պարտքը սկսեց օրէցօր նուազել։ Ամէն ամսի վերջին 5 ֆրանկ ռոճիկս ստանալուն պէս, հօրս հետ գնում էինք Միտտէլըրօն, Ռօբէնի մօտ և մտնում նրա ոսկով ու արծաթով լեցուն որջը։

Ծեր խաբեբան նստած էր լինում իր գամփռի հետ վանդակապատ լուսամուտով սենեակում՝ գրասեղանի առաջ, մորթէ գըլխարկը մինչ ականջները կոխած և թղթերը ճզմզելիս։

—Է՜հ, գոչում էր նա մեզ տեսնելիս — նորի՞ց եկաք. բայց ո՞վ է ձեզ ստիպողը, Աստուած իմ. դեռ եթէ կուզէք էլի— պատրաստ եմ... որքա՜ն, տա՞սը, տասնհի՞նգ լիւր... Մի՛ քաշւէք, խնդրեմ...

—Ո՛չ, ո՛չ, պ. Ռօբէն. պատասխանում էի ես - ահա ձեզ ըստ մեր մուրհակի՝ նախ տոկոսը. ահա նաև 4 լիւր և տասը սու՝ ի հաշիւ իսկական պարտքի... գրեցէք այդ գումարը մուրհակի ետևում։

Ռօբէնը տեսնում էր, որ սպրտել էին ուզում իր ձեռքից, չը կամենալով միշտ փետրահան լինել։ Նայում էր ինձ զննողաբար (երևի մտքումն ասում թէ՝ ինչ ուշիմն ես, ա՜յ տղայ)—և սկսում գրել ու միևնոյն ժամանակ՝ քթի միջից ասում.

—Ա՛խ, ա՜խ... արի ու այսուհետև օգտակար եղիր մարդկանց...

Իսկ ես այդ միջոցին անցնում էի նրա աթոռի ետևը և կըռացած նայում, թէ արդեօ՞ք ուղիղ էր գրում։ Հայրս լուռ՝ դռան շէմքին մնում էր կանգնած։

Օ՛, ես լաւ հետևում էի խաբեբայի շարժմունքին. փորձով

գիտէի, թէ ինչ է նշանակում այդպիսի աղւէսի ճանկն ընկնելը։

Երբ վերջացնում էինք, խեղճ հայրս գիւղ գնալիս միշտ ասում էր ինձ.

—Դու մեզ փրկո՜ւմ ես, Միշէլ, մեր ընտանիքի նեցուկն ես։

Եւ երբ տուն էինք մտնում, դառնում էր եղբայրներիս ու քոյրերիս և ներշնչող ձայնով խօսում.

—Ահա՛ տանտէրն այսուհետև... նա՛ է մեզ փրկում չքաւորութիւնից... Մենք ի՞նչ... մենք ոչինչ... նա ուսումնական է, մեզ նման անտաշ, տգէտ չէ... հնազանդ եղէք Միշէլին...

Մեզ պէտք եղաւ մի ամբողջ տարի, որպէս զի կարողանանք մեր պարտքը լիովին վճարել։ Ռօբէնն արդէն խաղերի վերջին շարժումներն էր գործում. թէ ինչ է՝ յաճախ ենք գրել տալիս մուրհակի ետևը, կտոր-կտոր ենք վճարում, ինքը, այդպէս չէ՞ տւել մեզ և այլն և այլն։

—Լա՛ւ ուրեմն, ասացի ես նրան մի օր էլ—կուզէք՝ կտոր կտոր տւածներս մի վերցնէք. ես էլ կըտանեմ դատաւորին պա՛հ կը տամ...

Ռօբէնն այդ լսելուն պէս՝ կակղում էր և ձայնը կտրում։

Այն օրը, երբ վերջապէս մուրհակը ետ առած տուն բերի, մայրս ուրախութիւնից չը գիտէր ինչ անել։ Ուզում էր անդադար կարդամ թէ ինչ էր գրած մէջը։

—Ուրեմն պրծանք հա՞, կանչում էր նա—պրծա՜նք բոլորովին... Եւ մի՞թէ դա երազ չէ, Միշէլ։

—Բայց ո՛չ, մայրիկ. պրծանք այժմ, հանգստացիր, ճիշտ է ասածս, այլևս ոչ մի պարտք չունինք այդ աւազակին։

—Ուրեմն այլևս պէտք չի՞ լինի, որ հայրդ ձրի բանելու գնա Ռօբէնի համար։

—Բայց ո՛չ, մայրի՛կ։

—Ապա՞, ապա՞... նորից մէկ կարդա...

Եւ մայրս, եղբայրներս ու քոյրերս կիտւում էին գլխիս, նայում թղթին, լսում բերան-բաց։ Իսկ երբ կարդում էի վերջին «վճարւած է» բառը—սկսում էին թռչկոտել, պարել ինչպէս վայրենիներ։ Եւ մայրս գոչում էր.

—Վերջապէս այդ անիծեալ այծից ազատւեցինք... Ա՛խ, որքա՜ն լաւ է այդ... հոգիներս դո՛ւրս եկաւ ձրի մշակութիւն անելուց...

Քիչ ժամանակից յետոյ, երբ մի օր Ռօբէնը մեր դռան առաջ եկած հարցնում էր թէ փողի պէտք չունէի՞նք արդեօք, մայրս կորցեց եղանը, յարձակւեց նրա վրայ կատաղութեամբ և սոսկալի ձայնով գոռաց.

—Ա՛, դու դարձեա՛լ ուզում ես մեր հոգիները հանել... Սպասիր մէկ...

Անշուշտ կսպանէր էլ նրան, եթէ Ռոբէնը չը շտապէր մինչև գիւղից դուրս մէկ փախչել։

Մինչ այս բոլոր փոփոխութիւնները կատարւում էին մեր ընտանիքում—կեանքն ընթանում էր իր շաւղով։ Երեկոյեանները լրագիրներ էինք կարդում երբեմն մենակ, երբեմն էլ Տօվէլի հետ։

Վարպետ Ժանը չէր սխալւում, երբ միշտ վա՛տ էր խօսում ազնուականների և կրօնաւորութեան մասին։ Նեկկերի հրաժարւելուց յետոյ, բոլոր այդ պարոնները դադարեցին այլևս անհանգիստ լինելուց։ Ու լրագիրների մէջ երևան եկան դարձեալ նկարագրութիւններ նրանց քէֆերի, տօնախմբութիւնների. յայտնւեցին նորանոր թոշակներ, ընծայատւութիւններ...

Իսկ մեր սիրուն թագուհին—Մարի Անտուանէտը, կոմս դ' Արտուան, պալատականներն ու դրանիկները մոռացան այլ ևս սպառնալից սնանկութիւնը։ Իսկոյն իրենց ճաշակի նախարարներ նշանակեցին այնպիսիներին, որոնք չէին խանգարում նրանց քէֆեր սարքել ու գանձը շռայլել։

Վարպետ Ժանը վարժւեց. այլևս շատ չէր տաքանում, երբ կարդում էր այդ բոլորի մասին։ Միայն տժգունում էր քիչ և ասում Տօվէլին.

—Բացատրեցէք մէկ ինձ, Տօվէլ, ինչացո՞ւ են այս բոլոր պալատական երաժշտական խումբ, եկեղեցական երաժշտական խումբ, մեծ ու փոքր ախոռատներ, որսի տուն, շների բնակարան և այլն և այլն... ինչացո՞ւ են, հը՞, ի՞նչ պէտք ունենք մենք դրանց...

Տօվէլը ժպտում էր և պատասխանում.

—Առևտրի, վաճառականութեան զարգացման համար, վարպետ Ժան։

—Վաճառականութեա՞ն...

—Բայց այո՛... Իսկական վաճառականութիւնը կայանում է հէնց նրանում, որ գիւղացիներից դուրս եկած դրամը՝ դարձեալ նրանց է վերադառնում.. .Շքեղութիւնն ու պերճութիւնը ծաղկեցնում են առևտուրը... Մեր նախարարները հարիւր հազար անգամ կրկնել են մեզ այս և մենք դեռ չենք հաւատում... Այստեղ-գիւղերում մենք գիւղացիներս գործում ենք և վճարում, իսկ այնտեղ քաղաքներում, մեծամեծներն ու պալատականները զւարճանում են ու շռայլում։ Չէ՞ որ նրանք են գործածում այդ բոլոր ծոպերն ու կտորները, թանգագին քարերն ու գործւածքները... Դու գիտե՞ս, թէ ովքեր են վաճառականութիւնը ծաղկեցնում. ասեմ քեզ. ծաղկեցնողները, նախ թագաւորի 12 անփոփոխ սպասաւորներն են, յե-

տոյ՝ միւս ծառաները, սափրիչները, բաղնիսպանները, ախոռապանները և այլն և այլն... Գիտե՞ս ինչպէս. որովհետև՝ ո՛չ լօբի են ուտում և ոչ էլ սխտոր՝ մեզ-մեզաւորներիս նման...

—Աստւա՛ծ իմ, մի՞թէ ճիշտ են դրանք... Է՛հ, աւելի լաւ է քիչ էլ ուրիշ բաների մասին կարդանք...

Բայց երբ թերթը շուռ տւաւ, հանդիպեց աւելի վատ բաների։ Այդտեղ խօսւում էր զանազան շինութիւնների, հրաւէրների, ընդունելութիւնների, մետաքսեղէնների, ոսկի հիւսկէններով զարդարած գլխարկների... մի խօսքով ամէն տեսակ պալատական շքեղութիւնների, շռայլութիւնների, հանդէսների մասին։

Իսկ Տօվէլը զարմանք ձևացնելով, բացականչում էր.

—Բայց ուրեմն այդ ինչէ՛ր էր դուրս տալիս Նեկկերը. էլ ի՞նչ փողի պակասութիւն. երբևիցէ ունեցե՞լ ենք մենք այսքան դրամ, ինչպէս այժմ... տեսնո՞ւմ ես, ուղղակի չը գիտեն անգամ թէ ինչի վրայ ծախսեն. ու շւարել են...

Եւ այդ ասելիս նա իր փոքրիկ ծաղրալից աչքերով ա՛յնպէս էր նայում մեզ, որ փոխանակ ծիծաղներս գալու՝ դառնութեամբ լցւում էինք։

Եթէ դուք յիրաւի, ընթերցող, նոյն իսկ շռայլող լինէք, էլի պիտի ասէք, որ այդպիսի ժամանակներում, երբ ժողովրդեան երեք քառորդը բառացի կերպով տանջւում էր քաղցից ու ցրտից—այդքան անմիտ ծախսեր անելը փառասիրութեան համար՝ սոսկալի էր ու զայրոյթի արժանի։

Դուրս գնալիս, Տօվէլն առ հասարակ միշտ ասում էր.

—Բա՛ն չունիս... ամէն ինչ լաւ է գնում. հարկերը, ծախսերն ու դէֆիցիտը տարէցտարի աւելանում են... երանութեան մէջ ենք ապրում... որքա՛ն աւելի պարտք ունենայ մարդ, ա՛յնքան աւելի հարուստ է կը նշանակի... Պարզ է, չէ՞...

—Այո՛, այո՛, ասում էր վարպետ Ժանը նրան ճանապարհ դնելով —պարզի՛ց էլ պարզ է...

Քա՛նի յաճախ էինք լրագիրներ կարդում, այնքա՛ն աւելի դառնանում էինք։ Պա՛րզ տեսնում էինք, որ ազնւականները անասունի տեղ են դրել մեզ, ուրիշ ոչինչ։ Բայց ճա՞րն ինչ. զօրքը, ժանդարմներն ու նորակոչները, բոլորը նրանց կողմն էին. մեզ մնում էր մտածել միայն, որ այդ պարոնները բաղդաւոր են, շա՛տ բաղդաւոր...

Թագուհու, կոմս դ'Արտուայի և միւս քէֆ անողների օրինակը վարակեց փոքր քաղաքներին էլ։ Այդ տեղերումն էլ սկսեց գիշեր ցերեկ տօն, ուրախութիւն, հանդէս... Գնդապետ ու հարիւրապետ, մինչև յետին ազնւական սպան՝ թրև էին գալիս փողոց-

ներում երգերով ու քրքիջներով, ծեծում իրենց զինուորներին, ծեծում երեկոյեան տուն վերադարձող գիւղացիներին. քաղաքացոց կանանց ու աղջիկներին, պարահանդէսի պատրւակով, քարշ տալիս—տանում և եթէ բան է, ամուսիններն ու հայրերը ընդդիմանում էին—ծեծում էին նրանց փայտերով ու վռնտում...

Մեզ-գիւղացիներիս ու բանուորներիս համար առանձին վիրաւորական էր մեզ մօտ գտնուող Տիվօլիից լսուած երաժշտութեան ձայնը, քաղաքացոց կանանց ու աղջիկների թեանցուկ անցուդարձը զինուորականների հետ...

Ու ցաւում էինք նրանց վրայ։ Ցիմար կանայք. մինչև իսկ յոյս էին տածում ազնուականներ դառնալու։

Մեր միակ յոյսը դէֆիցիտն էր մնացել։ Բոլոր քիչ խելքը գլխին մարդիկ գուշակում էին, որ պարտքը գնալով աճելու էր։

Եւ յիրաւի, նրանց ենթադրութիւնները իրականացան, երբ թագուհին ու կոմս դ'Արդուան Կալոննին նշանակեցին պետական ելեմտից նախարար։

Այս մարդը կարող էր համարձակ պարծենալ նրանով, որ իր պաշտօնավարութեան 4 տարւայ ընթացքում երկիրը կատարելապէս քարուքանդ արաւ իր զանազան փոխառութիւններով, նոր հարկերով և այլ խաբեբայ գործառնութիւններով։

Բայց մեզ խաբել չէր կարող։ Վարպետ Ժանը թերթերը բանալուն պէս՝ սկսում էր հայհոյանքը։

—Ա՛յդ աւազակը, կանչում էր նա—քիչ է մնում տրաքեմ ճշմարիտ. իւրաքանչիւր խօսքը սուտ է և խաբէութիւն. մեր փողերն ուղղակի դուրս է շպրտում. մէկին մերկացնում՝ միւսին հագցնում, աջ ու ձախ՝ պարտք անում... իսկ երբ վճարելու ժամանակը գայ, երևի Անգլիա է փախչելու և թողնելու, որ կուժը մեր գլխին էլ կոտրւի...

Այո, ամենքի համար պարզ էր, թէ այդ դրութիւնը դէպի որտեղ էր տանում մեզ։ Ամենքի համար, բացի թագաւորից, թագուհուց ու իշխաններից, որոնց արած շռայլ ծախսերն ու պարտքերը վճարում էր Կալոննը, պալատականներից և պալատի մտերիմներից, որոնց վրայ անձրևի պէս տեղացող թոշակներն ու ընծաները վճարում էր նոր նախարարը։

Հոգևորականութիւնը սակայն խորամանկ գտնուեց։ Նա իսկոյն ըմբռնեց, որ Կալոննի խաղերի վերջը վատ է լինելու։

Շօվէլը մի օր, երբ վերադարձաւ իր պտոյտներից, փայլում էր ծիծաղը դէմքին. կնքահօրս տեսնելուն պէս՝ ասաց.

—Է՛, վարպետ Ժա՛ն, այժմ լաւ, շա՛տ աւելի լաւ են գնում գործերը... Ծխական քահանաները բացի Ռուսօի «Սավօյացի երէց» գրքից՝ ուրիշ ոչինչ չեն ուզում կարդալ. վարդապետները Վօլտէր են որոնում, սկսում են քարոզել սէր դէպի ժողովուրդը, զայրոյթ են յայտնում թշւառութիւն տեսնելիս, չքաւորների համար փող են հաւաքում... Ամբողջ Ալզասն ու Լօրէնը բարեգործութեամբ է զբաղւած. այսինչ վանքում վանահայրը ճահիճներն է չորացնում՝ հողը գիւղացիներին տալու համար, այս միւսում՝ այս տարի հրաժարւել են պտղի հաւաքելուց, այն երրորդում՝ կերակուր են բաժանում չքաւորներին... Աւելի լաւ է ուշ քան երբէք, այնպէս չէ՞... Հետաքրքիրն այն է, որ ամենքը մի՛ անգամով սկսեցին խելքի գալ... Օ՛, խորամանկ են այդ կրօնաւորները, բաւական խորամանկ... Նկատել են որ նաւը ծակւել ու ջուր է քաշում, ճգնում են վաղօրօք բարեկամներ շահել, որպէս զի վտանգի միջոցին իրենք անփաս՝ ափը ելնեն...

Ու այդ ասելիս՝ թարթում էր նա իր փոքրիկ աչքերը։

Պարզապէս անհաւատալի բաներ էին թւում Շօվէլի պատմածները։

1784, 85 և 86 թւականներին Շօվէլը հետզհետէ ուրախ և կատակող էր դառնում։ Նման էր այն թռչունին, որ շատ բարձր թռնելով, կարողանում էր, շնորհիւ լաւ աչքերի, տեսնել բարձրից՝ ներքևում կատարւածները։

Փոքրիկ Մարգարիտն էլ օրէցօր սիրունանում էր։ Երբ դարբնոցի մօտով անցնում էր զամբիւղը ուսին, յաճախ դռնից ներս էր կոխում գլուխն ու իր զւարթ, սիրալիր ձայնով կանչում.

—Բարև, վարպե՛տ Ժան, բարև, Վալենտին, բարև, Միշէլ...

Ամեն անգամ ձայնը լսելիս՝ ուզում էի դուրս ոստնել։ Շատ դուր էր գալիս ինձ այդ աղջիկը։ Միշտ ուզում էի հետը խօսել, ծիծաղել։ Այնպէս էլ սև էր ու արևակէզ. ամբողջ հագուստը գրեթէ ցնցոտ, բայց աչքերը վառվռուն, ատամները սպիտակ, մազերը սև ու հրաշալի։ Տեսքն էլ այնքան ուրախ, զւարթ, որ նրան տեսնելիս՝ ինքս էլ զւարթանում էի. երբեմն երբ այդպէս անցնում էր, գործս թողած՝ աչքերովս հետևում էի նրան ու մտածում.

—Ա՜խ, եթէ կարողանայի զամբիւղը վերցնել և նրա հետ միասին գրքեր ծախելու գնալ։

Բայց վարպետ Ժանը հանում էր ինձ իմ երազներից։

—Է՛յ, Միշէլ, կանչում էր նա—ինչո՞վ ես զբաղւած, գործիդ կանգնիր, գործի՛դ...

—Ահա՛, վարպետ Ժան, իսկոյն...

Ես այդ միջոցին արդէն փոխ-վարպետ էի դարբնոցում և ամիսը 10 լիւր (ֆրանկ) էի վաստակում։ Մօրս գործը դորանով դիւրացել էր։ Լիզբէտը ոչինչ չէր ուղարկում, որովհետև, երբ գա-

րեջրատան մէջ ծառայող, պարտաւոր էր մաքուր հագնուել: Բացի դրանից, ինքն էլ սիրում էր այնպէս, շքեղ... Կլոդ եղբայրս սակայն, ծառայելով Տիրսելինեան վանքում իբր հովիւ, ստացած 4 լիւր ամսականից միշտ 3-ը տուն էր ուղարկում: Էտիէնն ու Մատիւրինը փոքրիկ կողովներ, վանդակներ էին շինում և տանում քաղաք, ծախում:

Նրանց ես սաստիկ սիրում էի, նրանք էլ ինձ: Մանաւանդ Էտիէնը: Երեկոյեանները երբ ինձ դիմաւորելու էր գալիս, ուրախ թռչկոտելով ու ծիծաղելով ձեռքս էր բռնում ու ասում.

—Մէկ նայիր, Միշէլ, տես որքան փող եմ աշխատել այսօր:

Յիրաւի երբեմն յաջող առևտուր էր անում: Հայրս էլ, քաջալերելու համար նրան, ասում էր դիտմամբ.

—Ինքս էլ չեմ կարող այդքան աշխատել... ճշմարիտ, երբէք այդպէս լաւ կողով հիւսել էլ չի յաջողել ինձ:

Քանի՛ քանի անգամ մտածեցի Էտիէնին հայր Քրիստոֆի դպրոցը ուղարկել, բայց դժբաղդաբար փոքր էր, առաւօտ-երեկոյ չէր կարող գնալ այդքան հեռու տեղ: Եւ որովհետև շատ էի ուզում որ փոքրիկը ուսանէր, երեկոյեանները, երբ դարբնոցից տուն էի գալիս, ինքս էի պարապում հետը: Այդպիսով նա ինձ մօտ սովորեց գրելն ու կարդալը:

Այժմ արդէն մեր ընտանիքից այլևս ոչ ոք մուրալու չէր գնում: Ամէն ոք կարողանում էր կերածին չափ վաստակել. ծերունի ծնողներս սկսեցին քիչ ազատ շունչ առնել:

1785 թուականն էր: Հետզհետէ յարգանքն ու պատկառանքը դէպի մեծամեծները, իշխաններն ու կրօնաւորները—նւազում էր, ընկնում բոլորովին: Փոքր ի շատէ հասկացող մարդն այլևս այդ դասակարգերի մարդկանց վրայ նայում էր արհամարհաբար: Յիշւում էր միշտ դէֆիցիտը և սկսել էր այն միտքը ընդհանրանալ, թէ ոչ Կալօնի խաղերը պիտի կարողանային պետական ելևմուտքի պակասը ծածկել և ոչ էլ պալատականների խայտառակութիւնները:

Այդպէս տևեց մինչև 1786 թուականի վերջերը:

Նոր տարուայ նախընթաց օրը մեզ մօտ եկան Շօվէլն ու իր աղջիկը ձիւնաթաթախ: Լօրէնից էին վերադառնում և անցնելիս մտել էին մեզ մօտ՝ հաղորդելու այն լուրը, թէ թագաւորը ուզում էր պետական մեծ պաշտօնեաներից մի ժողով կազմել Վէրսայլում, նրանց առաջը դնել Կալօնի հաշւետուութիւնը և յանձնարարել միջոցներ գտնելու, որ վճարուեն տէրութեան պարտքերը:

Վարպետ Ժանը ուրախութիւնից ստանեց:

—Վե՛րջապէս... գոչեց նա—մեր բարի թագաւորը վերջապէս կանչեց ժողովրդին և ուզում է հարկատուութեան հաւասարութիւն հաստատել...

Շօվէլը, որ ցամբիւղն էլ դեռ թևից չէր իջեցրել, այդ լսելով՝ նախ սառած մնաց, յետոյ գունատուեց և գոչեց բարկութեամբ.

—Իսկ ես ձեզ կասեմ, որ մեր ողորմած թագաւորը նրա համար է այդպէս խորհուրդ գումարում, որովհետև ուրիշ կերպ անել չէ կարող... Հասկանո՞ւմ էք, էլ ճար չունի, չէ կարող... պարտքն աճել դարձել է 16030 միլիօն... Մի՞թէ, իրաւ, կարծում էք թէ այդ բուրբօն *) արքայազուները, այլև ազնւականների ներկայացուցիչները, կրօնաւորներն ու բարձր պաշտօնեաները յանձն կառնեն իրենց գրպանից վճարել այդպիսի ահաւոր պարտքը... ինչպէ՞ս չէ... Ա՛յ, կը տեսնէք. նրանք պիտի փորձեն դարձեալ մերժողովրդեան ուսին շուռ տալ բոլորը... Մեր ողորմած թագուհին և Արտուայի կոմսը, որ այնքան զւարթ կեանք էին վարում ոտնակոխ անելով ժողովրդին, որ այնքան յիմարութիւններ ու խայտառակութիւններ գործեցին ի լուր աշխարհի—այժմ քաջութիւն անգամ չունեն իրենց արածները խոստովանել կամ յանձն առնել և մեծամեծների խորհուրդ են գումարում, նրանց ուսին ծանրացնելու համար դէֆիցիտը... Իսկ մե՞նք, մենք դժբաղդներս, պիտի միմիայն վճարենք առանց ո և է ձայնի, առանց ո և է փոխարինութեան... Մեզ, մի՛ վախենալ, սկի չեն էլ կանչի. մեր կարծիքը երբէք չեն հարցնի... Ու այս ամենը մի՞թէ ստոր, անազնիւ բաներ չեն...

Քանի խօսում էր Շօվէլը, այնքան աւելի բորբոքւում էր: Առաջին անգամն էր որ տեսնում էի նրան այդ աստիճանի բարկացած: Ոտները դողում էին և ձեռքերը՝ օդը ծեծում: Մարգարիտը, բոլորովին թրջւած վրայի հալող ձիւնից, սև մազերը այտերին փակած՝ կանգնել էր հօր կողքին այնպիսի դիրքով, որ կարծես ուզում էր հաստատել նրա ասածները:

Վարպետ Ժանը շատ ուզեց խօսել, առարկել, բայց Շօվէլը չէր էլ լսում նրան: Հօրքուր Կատէրինը վերջապէս համբերել չը կարողացաւ. թողեց ճախարակը, կարմրած ու զայրացած դէմքով ելաւ ու սկսեց կանչել՝ որ մեր ողորմած թագաւորը անում է այնքան, որքան հնարաւոր է, և որ ինքը—տանտիրուհին, չի թոյլ

---

*) Լուի XIV ի և յետագայ թագաւորների հին ցեղը Ֆրանսիայում, Բուրբօն դղեակի անունով. սկսում է 910 թւից և տևում մինչև Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը:

տալ իր պանդոկում անպատկառ խօսքեր ասելու Թագուհու մասին։

Վալէնտինն էլ ի հարկէ, իսկոյն հաստատեց նրա խօսքերը։

—Այո, հօրքուր Կատէրին, մէջ մտաւ նա—դուք կատարելապէս իրաւացի էք. պէտք է միշտ յարգել Աստծոյ ներկայացուցիչներին երկրիս վրայ... Դուք ըստ ամենայնի իրաւացի էք...

Եւ ոգևորութեամբ՝ երկար ձեռքերն էր թափահարում։ Տօվէլըն ու Մարգարիտը մի րոպէ մեզ նայեցին լուռ, յետոյ մէջքները դարձրին և առանց ետ նայելու՝ դուրս գնացին։ Նրանք այլևս մեզ մօտ չեկան. դարբնոցի մօտովն անցնելիս անգամ՝ գլուխները դարձնում էին, որ չը նայեն։ Ու դա սաստիկ տխրեցրեց մեզ։ Վարպետ Ժանը մինչև իսկ մի օր զայրացած՝ դարձաւ Վալէնտինին ու ասաց.

—Ահա, տեսնո՞ւմ ես... Եւ ո՞վ քեզ խնդրեց քիթդ կոխել իմ գործերի մէջ, հը՞... Մենք, միմիայն մենք ենք յանցաւորը, որ իմ ամենալաւ բարեկամն այժմ երեսիս նայել անգամ չի ուզում... Այդ մարդը ոչ միայն մօտ բարեկամ էր, այլ և ես նրան յարգում էի, որովհետև նրա ճկոյթի մէջ շատ աւելի խելք ու առողջ դատողութիւն կայ, քան քո այդ երկար մարմնումը՝ ոտքից մինչև գլուխդ... Եթէ քիթդ մէջ չը կոխէիր, էլի մի կերպ նրա սիրտը կը շահէինք... Այո, ես զգում եմ, որ նա վերջ ի վերջոյ պիտի հասկացնէր ինձ, թէ իրաւացի էին իր ասածները։

—Ինչ ինձ է վերաբերում, յամառեց Վալէնտինը—շարունակում եմ պնդել որ նա իրաւացի չէր...Ազնուականներն ու արքայազունները միշտ ժողովրդի լաւն են ցանկանում...

Այս խօսքի վրայ վարպետ Ժանը կաս-կարմիր կտրեց, բայց զսպեց իրեն, խէթ-խէթ նայեց Վալէնտինին ու մռթմռթաց.

—Է՜շ... թէ մաքուր մարդ չէիր լինել, վաղո՜ւց քեզ քացիով դուրս քցած կը լինէի այստեղից...

Մեզ համար, գնալով աւելի ծանր էր դառնում Տօվէլի հետ այլևս չը տեսնուելն ու չը խօսելը։ Վերջապէս վարպետ Ժանը չը դիմացաւ։ Մի առաւօտ, երբ Տօվէլն ու աղջիկը արագ անցնում էին դարբնոցի առաջովը, նա թողեց գործը, դուրս թռաւ, վազեց դէպի նրանց և յուզմունքից դողդոջուն ձայնով ասաց.

—Տօվէլ, ա՜յ Տօվէլ... մի՛ բարկանաք խնդրեմ... Հաշտուենք, ձեռքդ տուր... չէ՞ որ ձեզ դէմ ես ոչինչ չունիմ...

Ու բարեկամները նորից միմեանց ձեռքը սեղմեցին։ Երևում էր, որ ուրախութեամբ կը գրկէին իրար։ Մի քանի օրից յետոյ արդէն Տօվէլն ու Մարգարիտը դարձեալ եկան նստելու իրենց

տեղը-վառարանի մօտ, սակայն նախկին հարցի մասին այլևս ոչ ոք խօսք չարաւ։

Դա կատարւում էր ճիշտ այն միջոցին, երբ պետական բարձըր պաշտօնէութեան-ազնուականների և կրօնաւորութեան ժողովը իր նիստերն էր սկսում Վէրսայլում և ամենքը գիտակցում էին, թէ այդ նիստերից ոչ մի օգուտ չը պիտի ծագէր ժողովրդեան համար։

Կալօննը իր հաշւետուութեան մէջ ուղղակի յայտնեց թէ սովորական հասոյթներով այժմ այլևս պետութեան պարտքը ծածկել անհնար էր։ Իսկ երբ յայտարարեց որ պէտք էր գաւառներում ժողովներ հրաւիրել ու այդ ժողովներին առաջարկել որոշելու պարտքը գոցելուն մասնակցելու չափը, երբ յայտնեց որ անհրաժեշտ էր հարկատուութեան ենթարկել նաև ազնուականութեան ու վանական հողերը—ազնուական պարոնների և կղերականների խորհուրդը առանց բացառութեան և բացարձակապէս՝ մերժեց քւէարկել այդ հարցերը։

Տօվէլը լսելով այդ՝ ծիծաղեց։ Իսկ վարպետ Ժանը գոչեց.

—Ա՛խ դուք Հերովդէսի սերունդ...

—Էլ ի՞նչ էիք ուզում որ լինէր. առարկեց Տօվէլը. պետական այդ խորհուրդի անդամները խօ իրենք իրենց թշնամիներ չե՞ն, որ ծանրաբեռնուեն հարկերով կամ գրպանները դատարկեն... Ա՛յ, եթէ նրանց առաջարկէին ժողովրդի ուսին մի նոր հարկ աւելացնելու—նրանք այժմ ամէն ինչ վերջացրած և տասն անգամ համաձայնութեամբ՝ բացարձակ քւէ տուած կը լինէին... բայց իրենց հողերը տուրքի ենթարկել—յիմար խօ չե՞ն... Ես նրանց հասկանում եմ... Եթէ ինքդ քեզ վրայ մտածում ես, պիտի գրպանդ պինդ հուպ տաս...

Խնդիրը վերջացաւ նրանով, որ Թագաւորը հրաժարեցրեց Կալօննին և տեղը նշանակեց նախարար՝ Թուլուզի արքեպիսկոպոս պայծառափայլ Դը-Բրիէնին։ Նոր պաշտօնէի նշանակուելուն պէս, ազնուականների խորհուրդը ընդունեց Կալօննի դրած հարցերը։ Թէ ի՞նչու, ի՞նչ կատարուեց յանկարծ—այդ ամէնը ընդ միշտ մնաց անյայտութեան մէջ *)։

---

*) Իսկապէս Դը-Բրիէնին յաջողեց ազնուականների ժողովին քւէարկել տալ միմիայն գաւառական խորհուրդներ կազմելը, ցորենի առևտրի տուրքը, անձնական տուրքի ոչնչացումը, այլև շատ քիչ դրամական օգնութիւն ազնուականներից։ Դը-Բրիէնը դիմեց նոր տուրքերի—հողային հարկի և պետական դրոշմաթղթի, և այդ էր որ գրգռեց պարլամենտին իր դէմ։

Ծ. Թարգմ.

Բայց այդ վճիռներին զօրեղապէս դիմադրեց Փարիզի պարլամենտը։ Դրա անդամները՝ դատաւորներ, լուրջ, հաշւող, իրենց շրջանումն ապրող և պալատի շռայլութիւններին չը մասնակցող մարդիկ էին։ Եւ ի հարկէ զայրացան, որ նրանց գրպանիցն են ուզում հանել պալատում գործւած շռայլութիւնների ծախսերը։

Դիմադրեցին հողային տուրքին, յայտարարելով որ հարկերի որոշում կարող է անել միմիայն պատգամաւորների մի ժողով, գումարած տէրութեան բոլոր դասակարգերից—գործաւոր, գիւղացի և քաղաքացի։ Այդ տեսակ ժողովը միայն—առարկում էին նրանք—միացած ազնւականների հետ, կարող է վճռել տուրքերի խնդիրը...

Ահա այդպէս էր, որ սկսեց յեղափոխութիւնը։

Ամենքի համար պարզ դարձաւ, որ ազնւականութիւնն ու կղերականութիւնը դարերով ամբողջ խաբել էին ժողովրդին։

Կարող էք ուրեմն երևակայել թէ որքա՛ն մեծ պիտի լինէր Շօվէլի ուրախութիւնը, պարլամենտի այդ ընդիմադրութիւնից և յայտարարութիւնից յետոյ։

—Վերջապէս, բացականչեց նա—ահա այժմ ամեն ինչ կը փոխւի... մեծ դէպքերը սկսւում են. մօտ է, մօտ ժողովրդեան թշւառութեան վերջը. արդարութիւնը երևան է գալիս իր յաղթական քայլերով...

VIII

Փարիզեան պարլամենտի յայտարարութիւնը մրրկի արագութեամբ տարածւեց ու թափանցեց երկրի ամեն անկիւններում։ Գիւղերի մէջ, տօնավաճառներում, շուկաներում՝ խօսակցութեան նիւթը միմիայն ժողովրդեան ներկայացուցիչների (Etats généraux*) —Երեսփոխանական ժողովն էր։

Ճանապարհին միմեանց հանդիպող գիւղացիներ, անձնական գործերի մասին քիչ խօսակցելուց յետոյ, իսկոյն սկսում էին.

—Ասա՛, ինչ դրութեան մէջ է Երեսփոխանական ժողովը։ Ե՞րբ պիտի գումարւի ու նիստերն սկսի։

*) Հայերէն մի բառով արտայայտել դժւար է։ Etats généraux էր կոչւում մեծ յեղափոխութեան սկզբներում երեք դասակարգերի (ազնւականութեան, կղերականութեան և բուրժուազական) ներկայացուցիչներից կազմւած պետական ժողովը։ Ամենայարմար բառն է, մեր կարծիքով, Երեսփոխանական ժողով բառը։
Ծան. Թարգմ.

Յետոյ, իւրաքանչիւրն անշուշտ խօսքը շուռ էր տալիս այս և այն տուրքի, ազնւականութեան և կամ երրորդ դասակարգի *) (tiers etat) մասին։ Սկսւում էր վէճ ճանապարհի մէջ տեղում և վիճողները առաջին պատահած պանդոկն էին մտնում՝ շարունակելու։ Կանայք անգամ խառնւում էին խօսակցութեան։ Ո՛չ ոք չէր կամենում այլևս յիմար մնալ և յաւիտեան վճարել՝ առանց գիտենալու թէ ո՛ւր և ինչու համար էին ծախսւում դրամները։ Ամեն ոք հաշիւ էր պահանջում և ուզում էր որ ինքը կարողանայ որոշել իր վճարի քանակը...

Մի խօսքով՝ գիտակցութիւնը զարթնում էր ժողովրդեան մէջ։

Դժբաղդաբար տարին վատ էր, սաստիկ երաշտութեան պատճառով։ Յունիսի վերջից մինչև օգոստոսի կէսը մի կաթիլ անձրև չեկաւ. ո՛չ վարսակը աճեց, ո՛չ կորեկը և ոչ էլ առհասարակ ո և է հացահատիկ։ Խոտն անգամ խանձւեց այնպէս, որ հնձել չարժէր։ Մի խօսքով երկրին սով էր սպառնում, որովհետև գետնախնձորն անգամ փչացաւ։ Աւելացրէք դրա վրայ և այն, որ 1787 թւականի ձմեռը ամենացուրտ ձմեռն էր։

Լուրեր տարածւեց, որ զանազան անամօթներ գնել են Ֆրանսիայի ամբողջ ցորենը և մտածում են մեզ սովամահ թողնել։ Մինչև անգամ այդ ձև խայտառակութեանը անուն էլ էին դրել.—«Սովի դաշինք» (Pacte de famine)։ Իսկ այլ աւազակներ հաւաքել էին հացահատիկը և ուղարկել Անգլիա, որ սովն ընկնելիս բերեն և սկսեն իրենց ուզած գնովը ծախել։

Շօվէլը պատմում էր, որ այդ տեսակ աւազակաբարոյ շահագործական ընկերութիւն վաղուց գոյութիւն ունէր և որ ինքը—թագաւորն իսկ մասնակից էր դրան։ Այնքա՛ն հրէշային բան էր այդ, որ չէինք հաւատում։ Յետոյ միայն ես համոզւեցի, որ Շօվէլի ասածները կէտ առ կէտ ճիշտ էին։

Ֆրանսիական դժբաղդ ժողովուրդը երբէք այնքան չը տանջւեց, որքան 1788—1789-ի ձմեռը։

Եւ եթէ ես ամսական 12 լիւր ռոճիկ չունենայի ու Կլօդն էլ իր ստացածը ծնողներիս չուղարկէր—Աստւած գիտէ թէ ինչո՞վ պիտի ապրէինք։ Հազարաւոր մարդիկ մեռնում էին սովից... Էլ երևակայէք ուրեմն թէ ինչ պիտի լինէր Փարիզում, ուր ամեն ինչ դրսից էր գալիս ու այդպէս ժամանակ տասնապատիկ թանգ արժէր։

*) Բուրժուազական դասակարգ, որ այն ժամանակ համարւում էր ժողովուրդը ներկայացնող դասակարգը։
Ծ. Թ.

Այդ բոլորը սակայն ժողովրդին չէր մոռացնել տալիս Երեսփոխանական ժողովի գումարումը։ Ընդհակառակն, թշւառութիւնը զօրեղացնում էր բողոքը։ Ամենքն ակամայից մտածում էին, որ եթէ մեր դրամները չը շռայլէին, այդպիսի թշւառութեան մէջ չէինք ընկնիլ։ Թող զգուշանան այլևս, որովհետև այդպէս շարունակել չէ կարող։ Բրիէններ և Կալօններ չեն մեր ուզածը. դրանք ազնւականութեան ու կղերի նախարարներն են. մեզ պէտք են Նեկկերի, Տիւրգօի նման մարդիկ…

Եւ այդ սոսկալի սառնամանիքին, երբ գինին ու օղին անգամ սառում էին մառաններում — Շօվէլն իր աղջկայ հետ ոչ մի օր չընդհատեցին իրենց շրջակայութիւնը՝ զամբիւղներն ուսերին։ Ոտերնին մորթիով փաթաթած, երկաթէ վերջաւորութեամբ մեծ գաւազաններ ձեռքերին, առանց եղանակին—լինէր փոթորիկ կամ քամի—նայելու՝ ճանապարհ էին ընկնում։ Ու որքա՜ն անթիւ քանակութեամբ Փարիզից ստացւած գրքոյկներ էր, որ ցրւում էին նրանք։

Երբ վերադառնում էին գիւղ, մեզ էլ բերում էին այդ գրքոյկներից ու մենք նստած վառարանի շուրջը—կարդում էինք։ Պահել եմ դեռ նրանցից մի քանիսը. եթէ կարդաք, այժմ էլ կը զարմանաք թէ որքա՜ն առողջ դատողութիւն ու խելք կար թաղընւած ժողովրդի մէջ՝ յեղափոխութիւնից առաջ։

Այո՛, ինքնիրեն խաբել այլևս ոչ ոք չէր ցանկանում. չքաւորութիւնն ու ճնշումը ժողովրդի կոկորդին էր հասել։

Նոյն ձմեռը մեր ընտանիքում մի դէպք պատահեց, որ վիշտ պատճառեց ինձ և համոզեց թէ միևնոյն ընտանիքում կարող են լինել զանազան գաղափարի տէր մարդիկ։

Դեկտեմբերի կէսերին, ձիւնի ամենասաստիկ ժամանակ, նամակացրւիչի պաշտօն վարող պառաւ Գոկարը մի օր եկաւ մեր տուն և յայտնեց թէ քաղաքում, փոստային պաշտօնեայի մօտ, բաւական ժամանակւանից ի վեր ընկած կար ի միջի այլոց նաև հօրս անւամբ մի նամակ։ Եւ եթէ պառաւն ինքը չէր բերել, պատճառն այն էր, որ պէտք էր փոստին վճարել 24 սու, որ ինքը չունէր նախ և երկրորդ՝ յոյս էլ չունէր որ մեզնից կարող էր ստանալ։

Յիրաւի, շատ դժւար էր 24 սու փող հանել գրպանից մի այդպիսի նեղ ժամանակ. և ես գուցէ սկի չը վերցնէի էլ նամակը, եթէ ծնողներս չը լինէին։ Նիկօլայից եկած նամակ համարելով, խեղճ ծերունիները յայտարարեցին ինձ, որ պատրաստ են երկու շաբաթ անօթի մնալ, միայն նամակն ունենալ և իրենց որդուց լուր ստանալ։

Է՛լ ճար չը կար։ Գնացի բերի։ Յիրաւի, Նիկօլայից էր։ Երբ սկսեցի կարդալ, պէտք էր տեսնել թէ ծերունիները որքա՜ն ուրախանում էին ու զարմանում։ Ասենք մեզ էլ հետաքրքրեց նամակի բովանդակութիւնը։ Նամակը գրւած էր 1788 թւականի, դեկտեմբերի 1-ին։ Ահա նա։

«Յանուն հօր և որդոյ և հոգոյն սրբոյ։ Ժան-Պիէր Բաստիանին և նրա կին Կատէրինին, Նիկօլա Բաստիանից, որ ենթասպայ է «Գերմանական» 3 րդ ձիաւոր գնդում, Փարիզի պահպանութեան մէջ։

«Թանգագին հայրիկ, մայրիկ, եղբայրներ ու քոյրեր,

«Անշուշտ դեռ կենդանի էք և ողջ-առողջ, որովհետև չեմ կարծում մեռած լինէք այս 4 միմեանց չը տեսած տարւայ ընթացքում. ես էլ կենդանի եմ և առողջ։

Եթէ դուք, թանգագին ծնողներ, տեսնէիք այժմ ձեր որդուն՝ իր ծուռը դրած գլխարկովը երբ նա ձի է նստում, ոտներն ասպանդակում, սուրը կողքից, կամ երբ բարև է բռնում կամ թէ զւարթ՝ զբօսնում է փողոցներում իր երիտասարդ բարեկամուհու թևը մտած—անշուշտ պիտի զարմանայիք և չը պիտի հաւատայիք որ դա ձեր որդին է։ Կարող էի, եթէ կամենայի, նոյն իսկ ազնւական ձևացնել ինձ, բայց չեմ սիրում այդպիսի խաղեր…

Իսկ ձեզ ես կը պատմեմ մեզնում կատարւող դէպքերի մասին։

Գուցէ և լսած լինէք թէ ինչե՛ր են կատարւում, թէ ինչպէ՜ս են խառնաշփոթել ու յուզել այդ խող-բուրժուաները։ Եթէ իմանաք—կըմբռնէք որ ինձ դժւար չէ աչքի ընկնել և առաջ գնալ։ Ահա օրինակ, հէնց Օգոստոսի 27-ին. պահակագնդի հրամանատար Դիւբուան ուղարկեց մեզ որ ջարդենք ու ցրւենք Նոր Կամուրջի մօտ խռնւած ու աղաղակող ամբոխին։ Ամա՜ տւինք հա՜… Լաւ ջարդեցինք։ Թէ այդտեղ, թէ Դօֆինի, թէ Գրէւի հրապարակներում և թէ ամեն տեղ՝ կիտւած ժողովրդեան առաւօտից մինչև կէս գիշեր ոռնատակ տւինք, ջարդեցինք ու ծեծեցինք… Իսկ ապա եթէ տեսնէիք թէ ինչպէ՜ս միւս օրը Ս. Դօմենիկ և Միլիէ փողոցներում կոտորածներ արինք՝ անշուշտ պիտի գոչէք—«կեցցէք, քաջեր»…

Ես քայլում էի գնդի աջ թևի առջևից. և ահա, ինչ որ դիմացներս էր գալիս՝ սրով, ածելիի նման, կտրում էինք ու թափում… Շա՛տ, շատ մարդիկ սպանեցինք։ Այդ կոտորածից յետոյ, մեր փոխ-գնդապետ Րէյնախը ասաց, որ խող-բուրժուաներն այլ ևս չեն համարձակւիլ աղմկելու… Ի հարկէ, խենթ խօ չե՛ն, որ այդքան կոտորածից յետոյ, դեռ էլի օռնան…

Վաղուց գուցէ ես ենթասպայի պաշտօնին էլ հասած լինէի,

բայց գրել չը գիտեմ՝ տեղեկագիրներ կազմելու համար։ Ոչինչ, հանգիստ եղէք դուք, մեր զօրախմբի մէջ մի լաւ տղայ կայ, նա խոստացել է սովորեցնել կարդալ-գրելը։ Անշուշտ գործը յաջող կերթայ և եկող նամակն ինքս անձամբ կը գրեմ։ Իսկ առ այժմ համբուրում եմ ձեզ և ցանկանում ամէն յաջողութիւն. ստորագրութեան փոխարէն խաչ եմ դնում»։

Մինչ կարդում էի, ծնողներս անդադար ձեռքերն իրար էին կցում հիացումից։ Մանաւանդ մայրս, որ իսկոյն ձեռքիցս նամակըն առաւ և ամէն օր դրացիների մօտ գնալով՝ պարծենում էր։

—Ահա, Նիկոլայիցն է... արդէն ենթասպայ է... մարդիկ է սպանում... Օ՛, այժմ նրա հետ այլևս կատակել չէ կարելի...

Երկու-երեք օրից յետոյ միայն նամակը ետ ստացայ. և որովհետև վարպետ Ժանը միշտ հարցնում էր—ստիպուած եղայ մի երեկոյ կարդալ նրա մօտ։ Շօվէլն ու Մարգարիտն էլ կային։

Ամօթից ոչ ոքի երեսի նայել չէի կարողանում կարդալիս։ Երբ վերջացրի, վարպետ Ժանը գոչեց տաքացած.

—Որպիսի՜ դժբաղդութիւն, ունենալ այդպիսի սրիկայ որդի... Եւ այդպէսները գտնում են, որ իրենց արածները օրինաւոր են...

—Փա՜հ... արեց Շօվէլը—այնուամենայնիւ ուշադրութեան արժանի են Նիկոլայի պատմածները։ Փողոցներում եղած այդ յարձակումներն ու կոտորածները նորութիւններ են մեզ համար։ Լրագիրներն էլ, ըստ երևոյթին, ստիպուած են լռել... Ճիշտ է, ճանապարհին ականջիս դիպաւ, որ զօրքեր են ուղարկած Գրընօբլ, Բօրդօ և Թուլուզ... Լա՛ւ նշաններ են. սկսում է հոսանքը, գրաւում ամէն տեղ. նրա դէմն առնել այլևս անհնար է... Շնորհիւ հէնց այդ փողոցային ցոյցերի և կոտորածների, արդէն հրաժարեցրած է Դէ-Բրիէնը և հրաւիրել են Երեսփոխանական ժողովը... Չը պիտի յուսահատուել այդ կոտորածներից... ինչ նշանակութիւն ունի յիսուն կամ 100 գունտ զինուոր ամբողջ ազգի դիմաց... Ա՛յ, հէնց այդտեղ է հարցը։ Ժողովուրդն ամբողջ, միահամուռ պիտի ցանկանայ և պահանջի ստանալ իր ուզածը ...Երանի՜ երրորդ դասակարգը եռանդով գործէ—այն ժամանակ ամէն ինչ լաւ կերթայ... Ոչինչ, ասում եմ. փրփուրներ են այդ զօրքերը, ժողովրդի ընդհանուր շարժումը րոպէապէս կարող է ոչնչացնել, ջնջել նրանց... Սկսենք այժմ այլևս երեսփոխանների ընտրութեան մասին մտածել... Պատրա՛ստ լինինք, գալիս են մեծ օրերը...

Շօվէլն այլևս առաջւայ զգուշաւոր ու լռակեաց մարդը չէր։ Այժմ նա յոյս ունէր, սպասում էր և ոգևորուած էր։

Իսկ սովը տևեց մինչև մարտի վերջերը, սակայն արգելք չեղաւ գործաւորներին, գիւղացիներին ու քաղաքացիներին, ո-

րոնք ձեռք տուին միմեանց և սկսեցին միահամուռ ուժով գործել ազատութեան համար։

Շօվէլն իրաւացի էր. մօտենում էին մեծ օրերը։

Ամէն ոք այժմ իր մէջ ոյժ էր զգում և նոր կեանք։ Վերջին աղքատն ու բոկոտն իսկ, ցցում էր իր մինչև այդ կռացած ողնաշարը, գլուխը բարձրացնում և աւելի համարձակ նայում...

IX

Քանի քաղցն աւելանում էր, այնքան չքաւորները կարծես աւելի ու աւելի քաջութիւն էին ցոյց տալիս։ Ոսկոռ ու կաշի էին կտրել խեղճերը, ձիւնի տակից փորում-հանում էին արմատներ, ամառւանից գոմերում մնացած եղինճը (բանջար)... Մի խօսքով ինչե՜ր, ինչե՜ր ասես չէին անում, որ մի կերպ ապրեն։ Բարեբախտաբար գարունը հեռու չէր։

Ֆալցբուրգի կապուցիններն այլևս չէին համարձակւում մուրացկանութեան ելնելու, որովհետև վախենում էին.—ո՞վ գիտէ, ինչե՜ր չէին կարող պատահել. պաշտպանութիւն չը կար. Լա Ֆէրի զօրագունդը չէր ուզում նրանց թիկունք դառնալ. հին զինուորներից բաղկացած այդ գունդը զզւել էր թէ ազնուական երիտասարդներից և թէ սրի տափակ հարուածներ իջեցնելուց։

Բացի դրանից, նորանոր բաներ էին սպասւում երկրում։ Շրջանային կառավարիչներն ու գիւղապետները ստիպուած էին յայտարարել թագաւորի հրովարտակը՝ Երեսփոխանական ընդհանուր ժողովի հրաւիրման մասին։ Ամենքին այժմ յայտնի էր, որ ժողովի գումարման ու կազմութեան յայտարարութիւնը պիտի ստացւէր այս-ինչ օրը և իսկոյն կախւէր պաշտօնատներում, կըպցւէր եկեղեցիների և քաղաքային տների դռներին, քահանաները պիտի կարդային եկեղեցիներում և ամենաուշը մի շաբաթ յետոյ, մենք բոլորս—գործաւորները, բուրժուաները ու գիւղացիները՝ պիտի հաւաքւէինք քաղաքային տան մէջ՝ պատգամաւորներին տըրւելիք հրահանգները կազմելու համար։ Հրահանգների մէջ պիտի ցոյց տըւէինք մեր պէտքերը, կրած նեղութիւնները և պահանջները. յետոյ պիտի ընտրէինք պատգամաւորներին էլ, որ պահանջների ցանկը գաւառական շրջանական ժողովներին տանէին ներկայացնելու։

Մեր գիտցածը միայն այդքանն էր դեռ։ Փառք Աստուծոյ, պահանջներ էլ շատ ներկայացնելու ամէն մի թեմից։

Գիտէինք նոյնպէս, որ Վէրսայլում*) պետական խորհուրդը իր երկրորդ նիստն էր ունեցել՝ մշակելու այն կարգադրութիւնները, որոնցով պիտի ղեկավարուէին պատգամաւորական ընտրութիւնները ամեն տեղ։

Չը նայելով սովին, 1788 թւականի դեկտեմբերին և 1789 ի յունվարին ամենքի խօսակցութեան նիւթը միմիայն երրորդ դասակարգն էր։ Ամենքն այժմ գիտէին, որ «երրորդ դասակարգ» անունն էին դրել բուրժուաներին, գիւղացիներին, գործաւորներին և առ հասարակ ժողովրդի տանջւող մասին՝ միասին առած։ Գիտէին նոյնպէս, որ Երեսփոխանական ընդհանուր ժողովի գումարումը մեր երկրում նորութիւն չէր, այլ առաջ էլ եղել էր—մեր հայրերի ու պապերի ժամանակ։ Միայն թէ մեր հայրերն ու պապերը թագաւորի և եպիսկոպոսների առաջն էին դուրս գալիս ոչ միայն ծնկաչոք, այլ և դեռ վզերնին էլ չւան, ու այդպէս էր որ յանդգնում էին յանձնել նրանց իրենց խնդիրքն ու գանգատները։

Կատաղեցինք, երբ իմացանք որ պարլամէնտները**) այժմ էլ ցանկանում էին նոյն ձևով ժողովի թողնել մեր պատգամաւորներին — այսինքն «1614 թւի ձևականութիւնները պահպանելով»։

Ի հարկէ սկսեց հայհոյանք ու նախատինք պարլամենտների հասցէին։ Ամենքն ըմբռնեցին, որ այդ ազդներին Երեսփոխանական ժողովը հարկաւոր էր ոչ թէ ժողովրդին ճնշումից ու նեղութիւններից ազատելու, այլ ընդհակառակն՝ տուրքերից ու հարկերից ազատ պահելու համար իրենց իսկ հողերը։

Լրագիրները գրում էին, որ իբր թէ Ամերիկայից և Ռուսաստանից ցորեն է բերել տուած։ Սակայն թէ մեր և թէ ուրիշ գիւղերին ոչ միայն ոչինչ չէին բաժանում, այլ մինչև իսկ հարկա-

---

*) Թագաւորական պալատը՝ Փարիզի մօտ գտնւող համանուն քաղաքում։

**) Բարձրագոյն դատական ժողովներ Ֆրանսիայում՝ մինչև յեղափոխութիւնը։ Ընդամենը 17 պարլամենտ կար երկրում. ամենահինը Փարիզինն էր, որ կազմւեցաւ XIII դարում, պետական խորհրդի մի բաժանմունքից. միւսները կազմւեցան մինչև XVIII դարը։ Փարիզի պարլամենտը պարտաւոր էր արձանագրել թագաւորի բոլոր հրամանները, որոնց դէմ կարող էր նոյնպէս «առարկել». այսինքն ցոյց տալ թագաւորին՝ նրա հրամանի ապօրինութիւնը։ Երկար վէճեր տեղի ունեցան պարլամէնտի և թագաւորի միջև, մինչև որ 1790 ին լիովին ջնջւեց պարլամէնտը և լուծւեց։ Պարլամենտի անդամները անփոփոխ էին և գրեթէ ժառանգական կոչումով. երբեմն էլ անդամութիւնը առնւում էր փողով, բայց գնողը պէտք է ունենար որոշ կրթութիւն, այլ և պետական ծառայութեան ցէնզ։

Ծան. Թարգմ.

հաւաքները լցւել՝ տակն ու վրայ էին անում ամեն տուն՝ մառանից մինչև ցորենի ամբարը և յետին խիլն անգամ տանում։ Քաղաքներում ժողովուրդը ուղղակի սկսել էր ապստամբւել, դրա համար էլ միմիայն գիւղացիներին էին ճնշում։

Յիշում եմ, թէ ինչպէս փետրուարի վերջերին, սովի ամենախիստ ժամանակ, քաղաքապետը, քաղաքի մեծերն ու աւագները, մի լաւ խուզարկելուց յետոյ շրջակայքում եղած ամբարներն ու վաճառանոցները, — մտան վարպետ Ժանի պանդոկը՝ ճաշելու մի օր։

Շովէլը, որ միշտ Ալզասի և Լօրէնի շրջակայութիւնից վերադառնալիս թարմ լուրեր էր բերում—այդ օրը հէնց սրահումն էր և նստարանի վրայ էր դրել իր զամբիւղը։ Տփոթւեց երբ տեսաւ կեղծամներով, եռանկիւնի գլխարկներով, տաք շորեր, ձեռնոց, վզին շալ հագած մարդկանց. մանաւանդ երբ նկատեց ամենքի ետևումը կանգնած ոստիկանապետի երկարահասակ, չոր ու դեղնած օգնական Դէժարդէնին։ Սա ծուռ-ծուռ նայեց Շովէլին։ Հարցաքննող ոստիկանական պաշտօնեան էր և զզւելի դէմք ունէր։

Մինչ միւսները հանւում էին և խոհանոց էին մտնում կերակուրներին նայելու, Դէժարդէնը քանդեց սուրը, անկիւնը դրաւ, ծանր քայլերով մօտ գնաց Շովէլի զամբիւղին և սկսեց մի առ մի գրքերը դուրս տալ ու նայել։

Շովէլը անվրդով կանգնել էր նրա կողքին՝ ձեռքերը վերարկուի գրպանի մէջ կոխած։

Մինչ այդ՝ քաղաքի մեծամեծներն ու աւագները ճեմում էին ետ ու առաջ, խօսակցում էին, ծիծաղում և ինքնագոհ կերպով ձեռքերը շփում։

Խոհանոցի դուռը բաց էր։ Հացթուխների աւագ (համքարների գլխաւոր) փոքրիկ Մէրը կաթսաների բերանն էր բաց ու խուփ անում և հարցնում մօրքուր Կատրինից, թէ ինչ կար նրանց մէջ։ Նիկոլը սեղանն էր պատրաստում. իսկ «հասարակաց կարգ ու կանոնին հսկող» Դէժարդէնը շարունակում էր գրքերը քննել մի առ մի և միմեանց վրայ դարսել զամբիւղի կողքին։

—Այս գրքերը դու՞ ես ծախում. հարցրեց վերջապես Շովէլին, առանց իսկ դառնալու։

—Այո, պարոն, պատասխանեց Շովէլը անվրդով—գուցէ գնե՞լ կուզենայիք...

—Իսկ արդեօք գիտե՞ս որ այս բոլորը կախաղան են հասում... շարունակեց պաշտօնեան՝ դիտմամբ ձգձգելով խօսքերը։

—Կախաղա՞ն... զարմացած խօսեց Շովէլը—և ինչու... Մէկ նայեցէք թէ ինչ լաւ գրքեր են... Ահա օրինակ՝ սա. Նորին Մե-

ծութիւն Օրլէանի դքսի հեղինակած՝ «Շրջանական ժողովներին ենթարկւող հարցեր» Այս միւսն էլ «Խորհրդածութիւններ մի հայրենասիրի՝ հրաւիրւելիք Յեղափոխական ժողովի մասին» —կառապանների պահանջներն ու առաջարկները խնդիրքով՝ որ այդ բոլորը դրւին շրջանական ժողովների առաջ... Էլ ի՜նչ կայ վտանգաւոր սրանց մէջ:

—Իսկ հրամա՞ն, թագաւորից հրամա՞ն... հարցրեց պաշտօնեան չոր ձայնով:

—Հրամա՞ն... Դուք լա՛ւ գիտէք, պարո՛ն, որ պայծառափայլ Լոմէնի Դը Բրիէնի պաշտօնէութիւնից յետոյ՝ գրքերը ազատւել են հրամանների ենթարկւելուց:

Ոստիկանը միշտ գրքերն էր թղթատում, մինչ իր միւս ընկերները գալիս էին բոլորւելու նրանց շուրջը:

Բարեբաղդաբար, երբ գրեթէ բոլոր գրքերը նստարանի վրայ էին դարսւել—սրահ մտաւ մօրքուր Կատերինը և հանդիսաւորապէս սեղանի վրայ դրեց մեծ ամանով շոգարձակ սուպը: Ետեւիցն եկող Մերլ աւագը կանչեց իսկոյն.

—Համեցէք ճաշելու, պարոններ, սուպ եմ ասում ձեզ հա՛... է, բայց այդ ինչով էք զբաղւած... Աստւա՛ծ իմ, գիտէի. էլի՞ խռովարկութիւն. և մի՞թէ չը զզւեցրեց ձեզ այդ... Թողէք, թէ Աստւածներդ կը սիրէք. եկէք ճաշենք. թէ չէ՝ միեւնոյն է, ես մենակ կսկսեմ...

Եւ յիրաւի նստեց, անձեռոցիկը վզից կախեց ու սուպի բերանը բաց արաւ: Իսկոյն սենեակում տարածւեց ախորժելի հոտ: Ու երբ Նիկօլն էլ ներս բերաւ կողիկները—ամենքն իսկոյն մօտ վազեցին սեղանին:

Ոստիկանը տեսնելով որ առանց իրեն պիտի ճաշէին, դէմքը կնճռեց:

—Անշուշտ գիտես որ «խաղը յետաձգել՝ չի նշանակում ետ քաշւել»... ասաց նա, ցած ձգեց միւսների վրայ ձեռքի գիրքը և շտապեց նստելու Մերլի կողքին:

Շօվէլը շտապեց իսկոյն գրքերը տեղը դարսել, զամբիւղը թևն առաւ և դուրս գնաց՝ աչքով անելով մեզ: Ազատ շունչ առինք. ոստիկանի սպառնալիքը, չը նայելով մեզ տրւած զանազան խոստումներին, դող էր ազդել ամենքիս:

Ինչ որ էլ լինէր, Շօվէլը լա՛ւ պրծաւ: Պարոններն սկսեցին ճաշել այնպէս, ինչպէս առ հասարակ ճաշում էին ազնւականներն ու հարուստները՝ յեղափոխութիւնից առաջ: Յատկապէս քաղաքից բերել էին աւել գինի, թարմ միս և սպիտակ հաց:

Մինչ ճաշում էին, պէտք էր տեսնել թէ քանի տասնեակ

ցնցոտի մուրացիկներ խռնւած դռան ու լուսամուտների առաջ՝ աղերսալից ողորմութիւն էին խնդրում: Այնպէս խղճալի աղաչում էին, որ մարդու սիրտն էր կտրտւում. սոսկալի էին մանաւանդ կմախք դարձած ու ծխւած կանայք՝ թևերի վրայ անօթութիւնից մարած մանուկներով... Սակայն ճաշող ազանները և ո՛չ իսկ ուշադրութիւն էին դարձնում նրանց. ուտում էին, խմում, ծիծաղում էին և ափեղցփեղ դուրս տալիս...

Ժամը 3-ին ելան ու մեկնեցին. ոմանք կառք նստան՝ քաղաք գնալու, իսկ ուրիշները ձի՝ դէպի լեռները, խռովարկութիւնը շարունակելու...

Նոյն երեկոյ Շօվէլն ու Մարգարիտը մեզ մօտ եկան: Հազիւ երևացել էին դռնից, որ վարպետ Ժանը աղաղակեց.

—Ա՛յ թէ վախեցրիր մեզ հա՛, Շօվէլ. այդ ի՜նչ սոսկալի կեանք է քո կեանքը. դա էլ ապրո՞ւստ է... մէկ էլ տեսար՝ չւանը վզիդ... երկա՛ւ շաբաթ չէի կարող դիմանալ...

—Ե՛ս էլ. աւելացրեց մօրքուր Կատերինը:

Բոլորս էլ նոյն կարծիքին էինք: Ինքը Շօվէլը սակայն, ծիծաղելով նստեց ու ասաց.

—Փա՜հ... դա ի՜նչ է որ. դատա՛րկ բան, ուշադրութեան անգամ ո՛չ արժանի: Ի՞նչ կասէիք օրինակ, եթէ 10—15 տարի առաջ տեսնէիք... Ա՛յ, այն ժամանակ ուրիշ բան. ամէն տեղ հետևում էին ինձ և եթէ բռնէին Կիլի կամ Ամստերդամի հրատարակութիւններովս—անշուշտ Բարաքներից ուղղակի թիարան գնալս մէկ կը լինէր. աւելի շուտով՝ ուղիղ դէպի կախաղան, առանց թողնելու որ մի բառ իսկ ասեմ... Այո՛, վտանգաւոր ժամանակներ էին... Այժմ եթէ նո՛յն իսկ ձերբակալեն, երկար չեն պահիլ. ո՛չ ոք էլ ձեռքերս ու ոտներս չի ջարդոտիլ՝ որ ինչ է, ընկերներիս ձեռք տամ:

—Այնուամենայնիւ, Շօվէլ, ասաց վարպետ Ժանը—դրութիւնըդ լաւերից չէր... Իսկ արգելւած բաներ կայի՞ն մօտդ:

—Անշո՛ւշտ, ժպտեց Շօվէլը—ահա տեսէք... Ու սեղանի վրայ նետեց մի փաթոթ լրագիրներ— Ուզո՞ւմ էք իմանալ թէ ինչ դրութեան մէջ են գործերը՝ կարդացէք...

Փակեցինք իսկոյն դռներն ու փեղկերը և գրեթէ մինչև կէս գիշեր կարդացինք:—

Գաւառներում ամէն տեղ ազնւականութիւնն ու պառլամէնտները վճռել էին բոլոր ոյժով դէմ դնել Յեղափոխական ընդհանուր ժողովի գումարմանը: Բզանսօնում, Ֆրանշքօնթէյում՝ ժողովուրդը վռնտել էր պառլամէնտի անդամներին, որովհետև նրանք դէմ էին կանգնել թագաւորի հրամանին և յայտարարել՝ թէ ազ-

ուականների հողերը պիտի, ինչպէս միշտ եղել է, այնուհետև էլ ազատ մնային հարկերից, ինչու որ, «բնական օրէնքը այդ է». այդպէս էր եղել հազար տարուց ի վեր և այդպէս էլ պիտի մնար։

Պրօվանսում նոյնպէս ազնուականութեան մեծամասնութիւնը և պարլամէնտի անդամներից շատերը բողոքել էին հրովարտակի դէմ՝ ընդհանուր, ժողովրդի ներկայացուցիչների ժողովի մասին։ Այստեղ առաջին անգամը լինելով խօսում էր Միրաբօի համար։ Այս Միրաբօն ազնուական էր, բայց իւրայինները վռնդել էին նրան իրենց միջից և նա միացել էր երրորդ դասակարգին ու յայտարարել թէ «ազնուականութեան ու պարլամէնտի անդամների բոլոր բողոքները ոչ օգտակար էին, ոչ հիմնաւոր և ոչ էլ օրինաւոր»... Պատմում էին որ նրա պէս ճառախօս դեռ տեսնուած չէր մեր երկրում. ոչ ոք նրա նման չէր խօսում այնքան ուժգին, համոզուած ու ոգևորութեամբ։ Ազնուականները զայրացած՝ թոյլ չէին տալիս անգամ նրան իրենց նիստերին ներկայ լինելու։

Ամեն տեղ սկսել էր կռիւ։ Բրըտայնում, Ռէննում ազնուականները սպանում էին այն քաղաքացիներին, որոնք թագաւորի հրովարտակի կողմն էին... Աւելի շատ ճգում էին ոչնչացնել քաջ երիտասարդների... Ռէնի բուրժուաները միայնակ անկարող լինելով կռիւ մղելու՝ կոչ էին անում Բրըտայնի միւս քաղաքների եղբայրներին։

Դրա համար էլ Նանտի և Անժէրի երիտասարդութիւնը, որ իսկոյն և շտապով օգնութեան էր ելել—ահա թէ ինչ էր յայտարարում.—

«Ցնցուած Ռէննի մէջ տեղի ունեցող սարսափելի սպանութիւնների լուրերից, արձագանք տալով վրէժի ընդհանուր կոչին, աչքի առաջ ունենալով որ մեր վեհափառ թագաւորի հրովարտակը յօգուտ իր հաւատարիմ հպատակների—երրորդ դասակարգի ազատութեան՝ ընդդիմութեան են պատահում ազնուականների կողմից, որոնք տանջող ժողովրդեան ցաւերը բնական պարտք են նկատում—մենք վճռեցինք օգնութեան հասնելու մեր եղբայրներին, որպէս զի ահ ազդենք ազնուականութեան, ոչնչացնենք նրանց վատ ձգտումները, յոյս դրած մեր ուժի վրայ և ստրկական շղթայի վերջին օղը փշրելու մեծ մտքով ոգևորուած։ Կանխօրէն բողոքում ենք ընդդէմ ամէն ամբաստանութեան, որ կըմեղադրի մեզ որպէս խռովարարների. մեր մտածութիւնները մաքուր են և երդւում ենք, որ եթէ դժբաղդաբար ենթարկւենք անիրաւ դատաստանի, պիտի ամեն ինչ յանձն առնենք քաջաբար և յուսահատաբար պաշտպանելու համար։ Վճռուած և ստորագրած Նանտում, 1789 թիւ Յունուար 28 ին»։

Այդպէս էր յայտարարում վաճառական դասակարգի երիտասարդութիւնը իր թռուցիկ թերթերով։ Ահա և մի նմուշ թէ ինչ էին մտածում և ինչպէս գործում Անժէրի կանայքն անգամ։

«Անժէր քաղաքի երիտասարդ քաղաքացիների մայրերի, քոյրերի, կանանց ու սիրուհիների վճիռը, որ կայացաւ արտաքոյ կարգի մի յատուկ ժողովում։— Կարդալով մեր երիտասարդութեան որոշումը, մենք ևս մեր կողմից յայտարարում ենք հետևեալը։ Խռովութիւններն սկսելիս—որն անշուշտ կարող է պատահել, եթէ պետական ընդհանուր փոփոխութիւններին չը մասնակցի ամբողջ ժողովուրդը իր բոլոր դասակարգերով—մենք վճռում ենք միանալ այն ժողովրդին, որի շահերը մերն ենք նկատում։ Որովհետև կինը օժտուած չէ բռնի ույժ գործ դնելու կարողութեամբ, դրա համար էլ մեզ վրայ ենք առնում այն բոլոր պարտաւորութիւնները, որով օգտակար կարող ենք լինել երիտասարդութեան, կռւի ժամանակ. այն է՝ հոգալ պաշարեղէն, կռւի պատրաստութիւններ, պաշար... Մի խօսքով անել այն ամենը, ինչ ույժը կը պատի։ Վաղօրօք յայտարարում ենք որ վճռել ենք աւելի շուտով մեռնել, քան թողնել մեր որդիներին, այրերին, եղբայրներին ու սիրողներին առանց օգնութեան։ Վճռել ենք նրանց հետ կրել ամեն վտանգ, քան մնալ ստորացուցիչ անգործութեան մէջ»...

Կարդալով այդ տողերը, լալիս էինք հրճուանքից ու ասում.

—Ի՞նչ հրաշալի կանայք, ի՜նչ ազնիւ մարդիկ... Մենք էլ նոյնը կանենք...

Եւ իսկապէս, զգում էինք, որ անելու ույժն ունենք։

—Թող ազնուականները, եպիսկոպոսներն ու պարլամէնտի անդամները ուշք դարձնեն այդ բոլորին. ասաց Շօվէլը մատը բարձրացնելով.—Մեծ, շատ մեծ նշան է այն, որ կանայք անգամ իրաւունքների պաշտպան են հանդիսանում և վճռել են իրենց եղբայրներին ու ամուսիններին ընկերանալ կռւի մէջ... Յաճախ չեն տեղի ունեցել այդպիսի երևոյթներ. իսկ երբ եղել են—սևացել է թշնամու օրը. վաղօրօք կարելի է հաստատել, որ կը յաղթէ հակառակորդը...

X

Մի քանի օր յետոյ, երբ ձիւնն սկսել էր հալել, այսինքն 1789 թւի մարտի 20-ին, լուր տարածւեց, որ նախընթաց օրը բոլոր եկեղեցիների, վանքերի և քաղաքային տների պատերին ու

6

դաններին կպցրել են խոշոր յայտարարութիւններ՝ տակը երեք շուշաններով զարդարած մեծ կնիք *), որով հրաւիրւում էր ժողովուրդը գնալ հաւաքուելու Ցալցբուրգի քաղաքային տանը։

Ճիշտ էր լուրը։ Յայտարարութիւնները հրաւիրում էին ազնուականութեան, կղերականութեան, այլև երրորդ դասակարգին, գնալ քաղաքատուն **), գումարուելիք Երեսփոխանական ժողովի նախապատրաստութիւնների համար։

Սակայն աւելի լաւ է արտագրել այստեղ այդ յայտարարութիւնը, որպէս զի գաղափար ստացւի թէ ինչով էր զանազանւում այն ժամանակւայ ժողովրդեան ներկայացուցիչների ժողովը այժմեան եղածից։

«Երեսփոխանական ժողովի հրաւէրի համար Թագաւորի կարգադրութիւնները, հրամանագրուած 1789 թւի յունվարի 24-ին».—Թագաւորը, գումարուելիք Երեսփոխանական ժողովի համար հրաւէրներ ուղարկելով իր հպատակ գաւառների ժողովրդեան, ցանկացել է որ բոլոր իր հպատակները մասնակցեն ընտրելու այն պատգամաւորները, որոնցից պիտի բաղկանայ այս մեծ ու համդիսաւոր ժողովը։

Նորին վեհափառութիւնը ցանկացել է, որ իր թագաւորութեան բոլոր ծայրերից և հեռաւոր անծանօթ անկիւններից անգամ ապահովաբար կարողանան իրեն հասցնել ամեն ցանկութիւն ու պահանջ։

Նորին վեհափառութիւնը այդպիսով, ճշմարիտ գոհունակութեամբ համոզուել է, որ ատրիճանական ժողովների միջոցաւ պիտի կարողանայ մի տեսակ յարաբերութեան մէջ մտնել իր պետութեան բոլոր բնակիչների հետ և աւելի մօտ, ճիշտ ու շուտ իմանալ նրանց պէտքերն ու ցանկութիւնները»։

Դրանից յետոյ յայտարարութիւնը խօսում էր ազնուականութեան ու կղերականութեան մասին, նրանց հրաւիրելու, նրանց պատգամաւորների թւի... և հուսկ ուրեմն գալիս էր կանոններ սահմանելու երրորդ դասակարգի ընտրութիւնների համար։

Ահա մեզ վերաբերեալ յօդուածները։—

1) Թեմերն ու հասարակութիւնները, գիւղաքաղաքներն ու քաղաքները նոյնպէս կը հաւաքուեն քաղաքային տան մէջ՝ դատաւորի կամ ո և է այլ պետական պաշտօնէի մօտ։ Այս գումարումներին կարող են ներկայ լինել երրորդ դասակարգից բոլոր

*) Երեք շուշանով կնիքը Բուրբոնների թագաւորական տան և այն ժամանակւայ պետական զինանշանն էր։

**) Bailliage.

նրանք, որոնք ծննդով կամ գրուած Ֆրանսացիներ են, հարկատու են և 25 տարեկանից անց ու հաստատաբնակ։ Հաւաքւողները կընտրեն պատգամաւորներ, որոնք պիտի կազմեն իրենց հասարակութիւնների պահանջների ցանկը՝ միասին ժողով կազմելիս։

2) Ընտրուած պատգամաւորները գումարուելով քաղաքային տան մէջ՝ կը կազմեն երրորդ դասակարգի շրջանային ժողովը։ Այդ ժողովը կը կազմի նոյն շրջանի պէտքերի և գանգատների ցուցակ, այլև կընտրի իր միջից ներկայացուցիչն ո, որոնք շրջանական ընդհանուր ժողովին կը տանեն պահանջները։

3) Պահանջների ցանկ կազմելու համար, գիւղական հասարակութիւնների և թեմերի ընտրած պատգամաւորների թիւը կը լինի նոյն հասարակութեան մէջ գտնւող ծուխերի համեմատ։ 200 տունը և աւելին՝ կունենայ 2 պատգամաւոր. 300 ը—3 և այդպէս շարունակաբար։

4) Շրջանական բարձր ժողովներում երրորդ դասակարգի պատգամաւորները, նախապատրաստական մի ժողովով, ներկայացրած պահանջների բոլոր ցանկերը կը միացնեն և մէկի կը վերածեն. կը նշանակեն իրենցից մի քառորդը, որը և ընդհանուր շրջանների ժողովին կը տանի ցանկը։

5) Նորին վեհափառութեան հրամանն է, որ Շրջանական ընդհանուր ժողովում, բոլոր հասարակութիւններից եկած առաջարկների ցանկը ի մի վերածելուց անմիջապէս յետոյ՝ ընտրուեն նաև պատգամաւորներ երրորդ դասակարգի՝ Երեսփոխանական ժողովի գնալու համար»։

Յայտարարութեան այս յօդուածներից պարզ է անշուշտ, որ այսօրւայ նման փոխանակ անուանելու այնպիսի պատգամաւորներ, որոնք երկրի ոչ մի պահանջը չը գիտեն և Փարիզից են մեզ ուղարկւում յանձնարարականներով—շատ խելօք մտածութեամբ՝ ընտրում էին իրենց իսկ գիւղերից։ Սրանք էլ—այս գիւղի պատգամաւորները—այնուհետև ընտրում էին իրենց միջից ամենաընդունակներին ու քաջերին, որ գնան և Ազգային ընդհանուր ժողովի առաջ դնեն բնակիչների պէտքերն ու պահանջները։ Եւ ահա այդպիսով ամեն բանը լաւ էր գնում ու խելացի։

Պէտք չը կայ նկարագրելու թէ որքա՜ն ուրախ էր և գոհ ժողովուրդը, երբ իմացաւ, որ Երեսփոխանական ժողովը կայանալու է, չը նայելով որ կասկածներ միշտ կային։ Այնքա՜ն շատ խաբել էին մեզ, որ այլևս դժւարութեամբ էինք հաւատում լաւ օրերի։ Այս անգամ սակայն բանը այլևս չէր յետաձգւելու։

Նոյն օրը երեկոյան ժամը 5 ին, մեր աշխատանքը տեղի էր ունենում մեծ աշխոյժով ու զւարթութեամբ և վարպետ Ժանը եր-

կաթը շիկացնելով, անդադար դառնում էր ինձ ու ասում.

—Հ՞ը, Միշէլ, ի՞նչ կասես... պիտի Երեսփոխանական ժողով ունենանք վերջապէս...

Եւ ես ծիծաղում էի ու ասում.

—Այո, վարպետ Ժա՛ն, բանը գլուխ եկաւ...

Եւ կռանները սկսում էին կարկտահարել առանց կանգ առնելու: Սրտի ուրախութիւնը մարդուս արտասովոր ոյժ է ներշնչում:

Դրսում այնպէս ցեխ էր, որ այժմ չէ կարելի մեր երկրի ոչ մի անկիւնում նմանը տեսնել: Ձիւնը հալւում էր, ջուրը հոսում և մղպ էր որ տանում էր շուռ տալու մառանները: Կանայք ամեն րոպէ դուրս էին նետւում՝ աւելի մեծ հարւածներով եկած հեղեղը ետ շուռ տալու: Ի՞նչ մայթ, ի՞նչ փողոց. այդ ժամանակներում ո՞վ սիրտ ունէր և կամ աչք էր բաց անում չքաւորութիւնից, որ դեռ մայթերի մասին էլ մտածէր: Այնքան յոգնած ու տանջւած էին մարդիկ, որ ուրախ կը լինէին մի րոպէ հանգստանալու՝ թէկուզ հէնց ցեխի մէջ նստած:

Յանկարծ տեսնենք որ դարբնոցի առաջ երևացին Վերին, Ներքին և Անտառի Բարաքներից 5—6 ծերունի գիւղացիներ, իրենց հնամաշ արխալուխներով ու տափակ գլխարկներով: Նախ՝ Ժան Լէտիւմիէն, յետոյ Նիկօլա Կօշարը և նրանց ետևից՝ Գիօդ Հիւրէն, Գօթիէ Կուրտուա... մի խօսքով երկրի բոլոր իշխանները, որոնք կանգ առին հանդիսաւոր դէմքով և գլխարկները հանեցին այնպէս, որ կարծես եկեղեցի էին մտնում:

—Վա՛յ, այդ դո՞ւք էք, Լէտիւմիէ. կանչեց վարպետ Ժանը—դո՞ւք էլ, Հիւրէ... Ինչո՞ւ էք դռանը կանգնել:

Ու ծիծաղում էր: Սակայն գիւղացիք ծանրադէմ Լէտիւմիէն մէջքը կռացնելով դռնից դէպի ներս՝ ասաց կոկորդաձայն.

—Վարպետ Ժան Լէրու, չը նեղանաք, բան ունենք ձեզ յայտնելու:

—Ի՞նձ:

—Այո՛, հէնց ձեզ... ընտրութիւնների վերաբերեալ...

—Վա՜յ... լա՛ւ... մտէք, էլ ո՞ւր էք ցեխի մէջ ցցւել այդտեղ:

Գիւղացիները միմեանց ետևից ներս մտան: Փոքրիկ դարբնոցը հազիւ տեղ տւաւ ամենքիս: Բոլորը լուռ՝ կանգ առին. ըստ երևոյթին մտածում էին. կարծես ճառ էին ուզում խօսել, երբ վարպետ Ժանը ասաց.

—Ապա, տեսնենք, ի՞նչ ունիք խնդրելու... Մի՛ քաշւէք. եթէ ձեռքիցս գայ... դուք ինձ լաւ էք ճանաչում...

—Ահա թէ բանն ինչումն է. ասաց փայտահատ Կօշարը—

դուք գիտէք արդէն, որ քաղաքում երեք Բարաքները միասին պիտի ձայն տան:

—Այո՛... յետո՞յ:

—Յետոյ որ երեք Բարաքները 200 տուն են միասին. ուրեմն մենք երկու պատգամաւորի իրաւունքն ունինք:

—Ի հարկէ... յետո՞յ.

—Յետոյ այն, որ առաջին պատգամաւորը դուք կը լինէք. սրան էլ խօսք չէ կարող լինել... Միայն թէ երկրորդն է, որ չենք գտնում...

—Ինչպէ՞ս, գոչեց վարպետ Ժանը՝ ներքնապէս հպարտացած —ուզում էք ինձ պատգամաւո՞ր ընտրել...

—Այո, բայց երկրո՞րդը...

Վարպետ Ժանը լիովին գոհ, ասաց յանկարծ, կռանը ցած դնելով.

—Լսեցէք, այստեղ կրակի կողքին կանգնել խաշւում ենք—աւելի լաւ է պանդոկ գնանք, դատարկենք մի լաւ կուժ գինի և տեսնենք ինչ կը մտածենք:

Բնականաբար ամենքը համաձայնեցին: Ուզում էի դարբնոցում մնալ, սակայն վարպետ Ժանը փողոցի մէջ տեղից կանչեց:

—Է՛յ, Միշէլ, դո՞ւ ինչու չես գալիս. այսպիսի օր ամենքը միասին պիտի խորհրդակցեն:

Բոլորս միասին մեծ սրահը մտանք և տեղաւորւեցինք սեղանի առաջ, լուսամուտների մօտ: Վարպետ Ժանը գինի, բաժակներ, մի ամբողջ հաց և դանակներ բերել տւաւ, բաժակներն իրար զարկին և յետոյ, որովհետև մօրքուր Կատրինը զարմացած նայում էր չը հասկանալով այդ բոլորի միտքը և Լէտիւմիէն էլ բերանն էր սրբում որ բացատրի նրան եղելութիւնը—

Վարպետ Ժանը բացականչեց.

—Այդպէս ուրեմն, ինձ ուզում էք պատգամաւո՞ր ընտրել... ինչո՞ւ չէ, ուրախ եմ... պարծանք է ինձ համար դա... ամեն ոք պարտաւոր է ծառայել հայրենիքին... Միայն թէ, նախազգուշացնում եմ ձեզ, որ եթէ երկրորդ պատգամաւորը Շօվէլը չը լինի՝ ես կը հրաժարւեմ:

—Շօվէ՛լը... կալւինի՛ստը... բացականչեց Լէտիւմիէն գլուխը շուռ տալով ու աչքերը չռած:

Միւսներն էլ զարհուրած՝ միմեանց նայեցին ու աղաղակեցին.

—Կալւինի՛ստը... մեր պատգամաւո՛րը... նա՜...

—Լսեցէք. ասաց վարպետ Ժանը—կարծեմ ո՛չ կրօնական ժողովի պատրաստութիւն ենք տեսնում և ո՛չ էլ կրօնական խնդիր-

ների կամ ծէսերի մասին դատելու... Մեր հարցերը տեղական— սեփական գործերն են և գլխաւորապէս խօսելու է թէ ինչպէս ազատ մնանք ուղղակի կամ անուղղակի զանազան հարկերից, ճորտային ծառայութիւնից, անձնական տուրքերից և այլն... Ենթադրենք թէ խելօք մարդ եմ ես—գոնէ ինձ այդպէս է թւում—բայց այդքանը բաւական չէ շահելու մի այդպիսի մեծ գործ: Կարդալ ու գրել գիտեմ, գիտեմ նոյնպէս թէ մեր ծրտեղն է ցաւում, լուծը ինչպէս է ճնշում... Իսկ եթէ գործը շահելու համար միայն գոռալու պէտք լինէր, գիտէք որ շատ լաւ կը գոռամ... բայց բանն այդ չէ: Այնտեղ մենք դէմ առ դէմ կը գանք նրբամիտ մարդկանց —դատախազներ, աւագներ, դատաւորներ, որոնք ամենքն էլ լաւ գիտեն իրենց գործն ու մեզ այնպէս կը խեղդեն զանազան պատրւակների, օրէնքների խառնակի մէջ, այնքան մէջ տեղ կը բերեն հին կարգ ու կանոններ, դարևոր սովորութիւններ ո՛ր... Եւ եթէ մենք չը կարողացանք պատասխանել—մեզ նորից կը սանձեն, կը լծեն ու այս անգամ արդէն ընդ միշտ... Հասկանո՞ւմ էք այժմ...

Լէտիւմիէն բերանը մինչև ականջները լայն բաց արած՝ լըսում էր:

—Այո... բայց Տօվէ՞լը... Տօվէ՞լը... ասաց նա:

—Թողէք վերջացնեմ. ընդհատեց նրան վարպետ Ժանը—Ես ինքս ի հարկէ, ուրախութեամբ կը լինեմ ձեր պատգամաւորը. և եթէ մեզնից մէկը լաւ խօսի մեր փոխարէն, մեր կողմից—նրան էլ նեցուկ կը դառնամ... բայց որ ես ինքս պատասխաններ տամ... Ո՛չ. դրա համար ո՛չ բաւականաչափ կրթութիւն ունիմ, ո՛չ էլ գիտութիւն... Եւ ասում եմ ձեզահա, որ մեր կողմերում, Տօվէլի նման երկրի շահերն ու պահանջները պաշտպանող, մեր օգտին խօսող՝ չէք գտնիլ... Մարդը ամեն ինչ գիտէ—օրէնք, սովորութիւն, կարգադրութիւններ... Այդ փոքրիկ կալւինիստը, հասկանո՞ւմ էք, 25 տարուց ի վեր ինչ գիրք որ ծախել է—բոլորն էլ կարդացել է: Ճանապարհին տեսնողը գուցէ մտածել է թէ նա աջ ու ձախ՝ դաշտերն ու ծառերը, ցանկերն ու կամուրջներն է զըննում... Ո՛չ ասում եմ ձեզ.ման գալիս կամ իր գրքերից մէկն է կարդում և կամ զանազան առարկութիւններ, ապացոյցներ ու եզրակացութիւններ է որոճում... Այո... Դրա համար էլ, եթէ յիմար չէք և կամ չէք ուզում միշտ ճորտ, այլև հարկերի տակ ճնշւած մնալ—ընտրէք ամենից առաջ Տօվէլին և ես թիկունք կը դառնամ նրան... Իսկ բան է, եթէ նրան չընտրէք, աւելի լաւ է ինձ էլ չը խնդրէք. կը մերժեմ...

Վարպետ Ժանը խօսում էր անսեթևեթ ոճով. գիւղացիները ծոծրակնին էին քորում:

—Բայց, ասաց փայտահատ Կօշարը — կուզենա՞ն ընդունել նրան:

—Յայտարարութիւնը կրօնների մէջ խտրութիւն չի դնում —ասաց վարպետ Ժանը—ամենքը կանչւած են, միայն թէ լինեն ֆրանսացիներ, 25 տարեկան և հարկատու: Տօվէլը մեզ չափ և գուցէ մեզնից աւելի էլ է վճարում: Անցեալ տարի էլ մեր բարի Թագաւորը չէ՞ր, որ հրամայեց ֆրանսիական քաղաքացի համարել լիւտերականներին, կալւինիստներին և նոյն իսկ հրէաներին... Պէտք է գիտենայիք այդ: Ընտրենք Տօվէլին և մնացածը ոչինչ... Երաշխաւորում եմ, որ մեզ աւելի պատիւ կը բերի նա, քան յիսուն վարդապետ՝ միասին առած. այլև քաջաբար կը պաշտպանի մեր շահերը: Կը տեսնէք, Բարաքների փառքն է լինելու... Է՛յ, Կատէրին, մի կուժ էլ գինի տուր...

Գիւղացիները դեռ վճռել չէին կարողանում: Վարպետ Ժանը բաժակները լցրեց և ասաց.

—Ահա իմ վերջին խօսքը. եթէ Տօվէլին չէք ընտրիլ՝ ես մերժում եմ. եթէ ընտրէք— կընդունեմ... Մեր բարի Թագաւորի կենացը:

Կարծես կակղած բոլորը, կրկնեցին.

—Մեր բարի Թագաւորի կենացը:

Եւ երբ խմել էին, Լէտիւմիէն ծանրակշիռ՝ ասաց.

—Կանանց դժւար է համոզել... բայց, քանի որ այդ պէտք է, ահա ձեռքս, վարպետ Ժերոււ. ես համաձայն եմ:

—Եւ ահա իմն էլ. արաւ մի ուրիշը կռանալով:

Այսպէս ամենքն էլ ձեռքերնին տւին, յետոյ երբ կուժը դատարկել էին, ելան և տուն վերադարձան:—Գիւղի մեծերն էին. ապահով էինք որ միւս գիւղացիներին էլ կը համոզէին:

—Ուրեմն վճռւած է. ուրախ ձայնով կանչեց վարպետ Ժանը դռան մօտից:

—Վճռւած է... ասացին գիւղացիները:

Ու վերադարձանք դարբնոց՝ մտախոհ:

Ժողովը նշանակւած էր յետագայ կիւրակի: Տօվէլն իր աղջկայ հետ երկու շաբաթից ի վեր բացակայ էին գիւղից: Ո՛չ մի ժամանակ այդքան շատ գրքեր չէին ծախել նրանք: Վարպետ Ժանը յոյս ունէր Տօվէլին հանդիպել ժողովի օրը, քաղաքատան մէջ:

XI

Յետագայ կիրակի, առաւօտեան ժամը 6—7 ի միջօցները հօրս հետ գիւղամէջ իջանք: Արևը պայծառ լուսաւորում էր: Գիւ-

դի յարդեայ տանիքներն ու սևացած ծխնելոյզները ոսկիի նման փայլում էին, ինչպէս և ճանապարհի երկարութեամբ գտնւող ջրակոյտերը։

Ամէն կողմից գիւղում լսւում էր թմբուկի ու սրնգի ձայն. գիւղացիք խմբովին դուրս էին եկել քաղաք գնալու։

Հայրս արդէն ծեր, արևակէզ ու նիհար, սպիտակ մօրուքով, կուրծքն ու վիզը մերկ—քայլում էր կողքիցս մտախոհ և շուրջը նայելով։ Կարծես միշտ վտանգի էր սպասում։

—Միշէլ, կրկնում էր խեղճ մարդը—գիտե՞ս, պիտի զգոյշ լինել... աւելի լաւ է ոչինչ չը խօսենք... վերջը վատ կը լինի...

Ամբողջ գիւղը ոտքի վրայ էր։ Երբ պանդոկին մօտեցանք, տեսանք որ մեծ սրահում, բաց լուսամուտի առաջ նստել էին վարպետ Ժանն ու Վալէնտինը և ճանապարհ ընկնելուց առաջ՝ քիչ փորները պնդացնելով էին զբաղւած։ Երկուսն էլ նոր շորերն էին հագել։

—Ահա և մերոնք... գոչեց վարպետ Ժանը տեսնելով մեզ։

Ներս մտանք։

—Ապա՛, Բաստիէն, մեր բարի Թագաւորի կենացը մէկ կոնծէք. գոչեց վարպետ Ժանը և բաժակները լցրեց։

—Այո՛, այո՛, Ժա՛ն. պատասխանեց հայրս արտասուքն աչքերին—մեր բարի Թագաւորի կենացը... Երկա՜ր կեանք մեր Թագաւորին...

Այն ժամանակ դեռ հաւատում էին, թէ ամեն բան Թագաւորն էր անողը. սովոր էին կարծելու, թէ մի նախախնամութիւն էր նա, որ ամեն րոպէ մտածում էր իր ժողովրդի մասին։ Հայրս էլ դրա համար շատ սիրում էր Թագաւորին։

Հազիւ թէ խմել էինք, որ սրահ մտան գիւղի մեծամեծները, որոնք անցեալ օրը եկել էին։ Պապիկ Լէտիւմիէն էլ հետերն էր։ Ալևոր, շա՜տ ալևոր էր այդ պապիկը. այնպէս վատ էր տեսնում, որ հարկաւոր էր առաջնորդել նրան ձեռքիցը բռնած, որ չընկնի։ Բայց այդքան ծերացած անգամ, չէր համբերել և ուզում էր մասնակցել ընտրութիւններին։

Եւ մինչ գինի էին բերում, լցնում թասերը, ամեն ոք խօսում էր, աղաղակում.

—Վերջապէս... բանը գլուխ եկաւ... Այժմ կը տեսնեն Բարաքցիներին... ապահով եղէք, բոլորը միաձայն կը քւէարկեն...

Միմեանց ձեռք էին սեղմում, ծիծաղում էին, բաժակներն իրար զարնում։ Իսկ պապիկ Լէտիւմիէն ասում էր.

—Ա՜հ, որքա՜ն երկար է կեանքը, որքա՜ն երկար... բայց միևնոյն է. երբ մարդ արժանի է լինում հասնելու այսպիսի օրւան,

այլևս մոռանում է բոլոր իր կրած տանջանքները...

—Իրաւունք ունիս, պապի՛կ. կանչեց վարպետ Ժանը—մարդ այլևս մոռանում է անձրևը, կարկուտն ու ձիւնը՝ երբ հնձի ժամանակն է գալիս... Հասկերը հասուն են ահա... բաւական թանգ արժեցին, ճիշտ է, բայց կսկսենք հնձել, կալսել ու հաւաքել ցորենը և, եթէ Աստւած կամենայ, ո՛չ միայն մենք հաց կունենանք, այլ մեր որդիքն էլ... Կեցցէ բարի Թագաւորը...

Ու բոլորը միասին բացականչեցին.

—Կեցցէ ողորմած Թագաւորը...

Նորից բաժակները միմեանց զարկին, համբուրւեցին, յետոյ թև թևի մտած ճանապարհ ընկան։ Ամէնքից յետոյ քայլում էինք ես և հայրս։

Բարաքցիները վաղուց արդէն հաւաքւել աղբիւրի մօտ, մեզ էին սպասում։ Իսկոյն միացան թմբկահարութեամբ և երաժշտութիւնով։ Տեսնւած չէր երբէք այդպիսի թափօր։ Ամէն կողմից լսւում էին երգի, երաժշտութեան ձայներ և գիւղերի զանգերը մեծաձայն հնչում էին. մարդկային խմբեր բոլոր ճանապարհներով պարում էին, գլխարկնին դէպի օդը նետում և աղաղակում.

—Կեցցէ բարի Թագաւոր, կեցցէ ժողովրդեան հայրը...

Լեռան ծայրերից սկսած մինչև դաշտի խորքը զանգ էր, որ հնչում էր անվերջ ու անընդհատ։ Որքան մօտենում էինք քաղաքին, այնքան աւելի էր մեծանում աղմուկը։ Եկեղեցիների, զօրանոցների, հիւանդանոցների և տների վրայ—ամեն կողմից ծածանւում էին սպիտակ մետաքսէ դրօշներ՝ վրան շուշաններ գործած... Մի խօսքով երբէք այդպէս մեծ, հանդիսաւոր բան չեմ տեսել կեանքումս։

Քաղաքին բոլորովին մօտ, երկու ճանապարհների միմեանց կտրելու կէտին, հանդիպեց հայր Քրիստոֆը իր ծխականների գլուխն անցած։ Մեզ տեսնելուն պէս, բոլորը կանգ առին, յետոյ երկու կողմից էլ գլխարկնին հանեցին ու միաձայն կանչեցին.

—Կեցցէ մեր ողորմած Թագաւորը...

Քահանան և վարպետ Ժանը համբուրւեցին. յետոյ, երկու գիւղի բնակիչները միացած, երգելով, թմբկահարութեամբ ու երաժշտութեամբ մտան քաղաք, ուր փողոցներն ամբողջ լիքն էին ամբոխով։ Աչքիս առջևն է կարծես Լա-Ֆէրեան վաշտի պահակը իր սպիտակ նշանազգեստով, մեծ եռանկիւնի գլխարկով ու ծանր հրացանը ուսի վրայ. մեզ նշան արաւ կանգնելու, որովհետև կամուրջը լցւել էր սայլերով ու կառքերով։ Ծերունիներ էին լցւել մէջը և քաղաքատուն էին գնում ձայն տալու. մեռնելուց առաջ և շատերը նրանցից՝ երեխաների պէս արտասւում էին։

Պարզ էր, որ գիտակցութիւնը զարթնել էր մինչև յետին գիւղացու մէջ—փոքրից մեծ։ Ամենքը ձգտում էին իրենց իրաւունքներն ունենալ։

Կամրջի մօտ 20 րոպէ սպասեցինք. շատ էր բազմութիւնը։

Պէտք էր տեսնել մէկ, թէ ինչ էր կատարւում քաղաքի մէջ։ Փողոցները լեփ-լեցուն, լուսամուտներում՝ անհամար դրօշներ և ամեն կողմից աղաղակ, ուրախ բացականչութիւն...

Պատարագն սկսել էր Ս. Հոգի եկեղեցում, բայց մտնել անհնար էր. լաֆէրեան պահակներն իզուր ձայնում էին—«զգո՛յշ... զգո՛յշ»... Նրանց սեղմում էին և ստիպում հրացանը ցած դրած՝ անկիւններում կանգնած մնալու։

Բարեբաղդաբար վարպետ Ժանը յիշեց, որ այդտեղից հեռու չէր իր բարեկամ Ժաք Ըրնօդօի պանդոկը։ Առանց մեզ բան ասելու՝ նշան արաւ որ իրեն հետևենք և ինձ, Վալենտինին, հօրս ու հայր Քրիստոֆին քաշ տւաւ մինչև «Սպիտակ ձի» պանդոկը։ Ստիպւած էինք սակայն խոհանոցի կողմից ներս մտնելու, որովհետև մեծ սրահում ասեղ գցելու տեղ չէր մնացել։ Լուսամուտներն ու դռները ամբողջովին բացել էին. շնչելու օդ չը կար ներսում։

Մօրքուր Ըրնօդօն դիմաւորեց մեզ ժպիտով և տարաւ առաջին յարկում դեռ դատարկ մնացած մի սենեակ ու բերեց գարեջուր, գինի—ինչ որ կամեցանք։

Մեր գիւղացիք ցածում մնացած՝ որոնում էին մեզ, կարծելով թէ կորսւել էինք ամբոխի մէջ։ Կանչել չէինք կարող մեզ մօտ. տեղ չը կար։

Մինչև ժամը 1-ը նստեցինք այդտեղ և երբ գիւղերի կէսիցն աւելին տւել էին իրենց ձայները, Բարաքցիներն էլ հաւաքւում էին որ ներս մտնեն—իջանք ու կարճ ճանապարհով հասանք քաղաքատուն։ Կարծեցին մեր գիւղացիք թէ վաղուց այնտեղ էինք և սկսեցին կանչել.

—Ահա մերոնք... այստեղ են...

Հասարակական այդ հին շէնքը իր բարձր աշտարակով ու ժամացոյցի վերը բացւած լուսամուտներով, իր կամարաձև խոշոր դռնովը, ուր գնում էին լցւելու գիւղերը միմեանց ետևից—թընդում էր վերևից ներքև՝ թմբուկի նման։ Հեռուից կարծես մրջնանոց լինէր։

Բարաքցիները Լիւցէլբուրգցիներից առաջ պիտի մտնէին։ Սրանք կամարի տակ մտնող սանդուխքի գլխին կանգնել էին։ Վարպետ Ժանը, Վալենտինը, հայրս և ես՝ գնում էինք ամենից առաջ, բայց ստիպւած եղանք սպասելու սանդուխքի վրայ, որովհետև Վիլշբերգցիները դեռ չէին պրծել։ Սրտերնիս ուժգնութեամբ

բաբախում էր. մեր ետևից, վերից ու ցածից՝ կամարների տակ մէկ-մէկ լսւում էին բացականչութիւններ—«Կեցցէ թագաւորը» և յետոյ տիրում խորին լռութիւն։

Այդպիսի խոր լռութեան մի րոպէին էր, որ յանկարծ ականջիս հասաւ հրապարակից եկող ամենքիս ծանօթ մի հնչուն ձայն։

Մարգարիտ Շօվէլի ձայնն էր, որ կանչում էր.

—Գնեցէք գրքեր... «Ի՞նչ է երրորդ դասակարգ», հեղինակութիւն աբբայ Սիէզի, գնեցէք... «Շրջանային ժողովներ»՝ դուքս Օրլէանի... գնեցէք...

—Լսո՞ւմ էք. դարձայ վարպետ Ժանին — փոքրիկ Մարգարիտն է։

—Այո՛, այո՛, վաղուց է որ լսում եմ... ի՜նչ պատւական մարդիկ են այդ Շօվէլները... կարող են պարծենալ, որ լաւութիւն են անում ժողովրդեան... Գնա մէկ իմաց տուր Մարգարիտին, որ հօրը այստեղ ուղարկի։ Հեռու չի լինիլ Շօվէլը. գոհ կը լինի եթէ լսի իր անունը յիշատակելիս...

Մտայ խելոյն ամբոխի մէջ. սրան հրեցի, նրան՝ խնդրեցի և յաջողւեցի դուրս գնալ շէնքից. իսկոյն նկատեցի Մարգարիտին, որ հրապարակի մի նստարանի վրայ դրած իր զամբիւղը, գիրք էր ծախում։ Պէտք էր տեսնել թէ ինչպէ՛ս այդ սատանայ աղջիկը կանգնեցնում էր անցնող գիւղացիներին, ուղղակի փէշերից քաշում և ֆրանսերէն կամ գերմաներէն լեզւով՝ առաջարկում գիրք գնել։ Առաջին անգամն էր, որ ուշադրութիւնս գրաւեց նրա սև աչքերի փայլն ու կենդանի արտայայտութիւնը։ Գրաւեց մի այնպիսի րոպէում, երբ դրա վրայ չէի էլ մտածում։

Մօտեցայ նստարանին և երբ ուզում էի խօսեցնել, Մարգարիտն իսկոյն բռնեց վերարկուիցս ու կանչեց.

—Պարո՛ն, պարո՛ն, գնեցէք «Ի՞նչ է երրորդ դասակարգը»... վեց լիարդ միայն...

—Ինձ երևի չը ճանաչեցիր, Մարգարիտ, ասացի ես։

—Վա՜յ, Միշէլն է... ասաց նա փէշս թողնելով ու ծիծաղելով։

Քրտինքը սրբեց, յետոյ երկար մազերը ցնցելով՝ ետ ձգեց ու ինձ նայեց։ Երկուսս էլ զարմացած էինք իրար տեսնելով։

—Ինչպէ՞ս գործում ես, Մարգարիտ, այդ ի՞նչ է դրութիւնդ...

—Ա՛հ, այսօր մեծ օր է, պէտք է գիրք ծախել... Տես մէկ ինչ օրի եմ... ասաց նա շրթերն ու ոտները ցոյց տալով—երէկւանից ի վեր շրջում ենք. Լիւնէվիլից եկանք 600 օրինակ «Երրորդ դասակարգ» գրքոյկներով և ահա ծախում ենք ու ծախում... Նայիր, հազիւ 120 կամ 150 հատ մնացած լինի...

Ու խօսելիս՝ դէմքը փայլում էր հպարտութեամբ։ Փոքրիկ ձեռքը ձեռքիս մէջ՝ հարցրի.

—Իսկ ո՞ւր է հայրդ։

—Չը գիտեմ... Քաղաքումը շրջում է, պանդոկներն է մըտնում... Օ՛, ոչ մէկը չի մնալ. հաւատացած եմ որ իր մօտ եղածները բոլորն էլ ծախած կը լինի։

Յետոյ յանկարծ ձեռքը ետ քաշելով ասաց.

—Դէհ, գնա այժմ, ահա Բարաքցիները ներս են մտնում։

—Բայց ես դեռ 25 չը կամ, Մարգարիտ, ձայն տալու իրաւունք չունիմ։

—Միենոյն է... ժամանակ ենք կորցնում շատախօսելով։

Եւ իսկոյն շարունակեց ծախել.

—Պարոններ, գնեցէք, «Երրորդ դասակա՛րգ»...

Զարմանքով լի՝ հեռացայ։ Միշտ հօր կողքին էի տեսել Մարգարիտին, և ահա այժմ բոլորովին ուրիշ կերպ էր երևում աչքիս. քաջութիւնը ինձ հիացնում էր և մտածում էի.

—Քեզնից աւելի լաւ գիտէ գործել, Միշէլ...

Նոյն իսկ ամբոխի մէջ, վարպետ Ժանին հասնելիս անգամ, դեռ նոյն բանն էի մտածում, միտքս Մարգարիտի կողմն էր։

—Հ՞ը, ի՞նչ եղաւ. հարցրեց կնքահայրս։

—Մարգարիտը մենակ է. հայրը գրքեր է ծախում քաղաքում։

Այդ իսկ միջոցին, հերթը մեզ հասաւ և մտանք Նըրբանցքը, որ տանում էր ոստիկանական մեծ սրահը։ Բարաքցիները սկսում էին ձայն տալ. և որովհետև կատարւում էր այդ բարձրաձայն— սրահ մտնելուց առաջ իսկ լսում էինք քւէները.

—Վարպետ Ժան Լէրու... Մաթիւրէն Շօվէլ... Վարպետ Ժան Լէրու... Մաթիւրէն Շօվէլ...

Վարպետ Ժանը կաս-կարմիր կտրած հրճւանքից՝ ասաց ինձ.

—Ո՜րքան ցաւալի է, որ Շօվէլն այստեղ չէ... ա՜յ թէ կուրախանար։

Բայց այդ իսկ միջոցին գլուխս դարձնելիս, դէմ առ դէմ եկայ Շօվէլի զարմացած դէմքին։

—Ձեր արա՞ծն է այս, ասաց նա վարպետ Ժանին։

—Այո. պատասխանեց կնքահայրս զւարթութեամբ։

—Չեմ զարմանում ձեզնից. խօսեց Շօվէլը՝ ամուր սեղմելով նրա ձեռքը—ձեզ վաղո՜ւց գիտեմ... Ինձ ապշեցնում է և սաստիկ ուրախացնում այն փաստը, որ կաթոլիկները իրենց պատգամաւոր ընտրում են մի կալւինիստի։ Դա նշանակում է, որ ժողովուրդն սկսում է հին նախապաշարմունքները թօթւել իր վրայից... Անշուշտ պիտի յաղթանակը տանի... այո...

Դանդաղ առաջ էինք գնում և սրահը մտնում։ Մի բոպէ ևս՝ և մեր աչքին ներկայացաւ ոստիկանապետը իր սև վերարկուով, բարձր գլխարկով ու սրով։ Քաղաքային աւագները, ոստիկանական ուրիշ ծառայողներ սև հագած, վզերնին սև շալ՝ նստել էին մի աստիճան ցած։ Ետևում, պատին կախւած էր մեծ խաչելութիւնը։

Ժան Լէրուի և Մաթիւրէն Շօվէլի անուններն անվերջ ու միակերպ այնքան կրկնւեցին, որ կարծես ժամացոյցի ճոճանակի ձայն լինէր։ Առաջինն՝ ով գոչեց «Նիկօլա Լէտիւմիէի և Շօվէլի» անունները—վարպետ Ժանն էր։—«Ժան Լէրու և Լէտիւմիէ»—ձայնեց իր կողմից Շօվէլը։ Ոստիկանապետը, որ ժպտել էր վարպետ Ժանին, լուրջ և սառը դէմք ստացաւ՝ Շօվէլին նայելիս։ Շատ լաւ ճանաչում էր նրան. իսկ օգնական Դէժարդէնը մինչև իսկ կռացաւ և մի բան փսփսաց մեծաւորի ականջին։

Մինչ այդ՝ ես մի կողմ քաշւեցի և սպասեցի։ Երբ վարպետ Ժանն ու Շօվէլը վերջացրին, մեծ դժւարութիւններով հազիւ ճեղքեցինք ամբոխն ու դուրս գնացինք։ Հրապարակ հասնել անհնար եղաւ. ստիպւեցինք կողմնակի փողոց մտնել, որովհետև այդ միջոցին Միտռէլըրօնցիներն էին խռնւում ամեն կողմից։

Վաճառանոցում Շօվէլը մնաս բարև ասաց մեզ։

—Երեկոյան գիւղումը կը տեսնւենք. աւելացրեց նա ու գընաց, որ մօտի մնացած գրքերն էլ ծախի։

Վարպետ Ժանի հետ մենակ գիւղ վերադարձանք։ Հօրս ու Վալէնտինին կորցրել էինք ամբոխի մէջ։

Երկուսս էլ լուռ ու մտախոհ՝ քայլում էինք։ Ժողովուրդը յոգնել էր, բայց և շատերը ուրախ-զւարթ, լաւ հարբել էին և այժմ երգելով ու պարելով էր որ տուն էին վերադառնում։

Նոյն երեկոյ, ինչպէս միշտ, ընթրիքից յետոյ մեզ մօտ եկան Շօվէլն ու աղջիկը։ Շօվէլի գրպանն էլի լիքն էր թղթերով։ Առաւօտեան, քաղաքատան մէջ ոստիկանապետի և նրա օգնականի արտասանած ճառերի ու ընտրութիւնների արձանագրութիւններն էին։ Այդ ճառերը սաստիկ ուռուցիկ և ոգևորւած բաներ էին և երբ վարպետ Ժանը զարմանք յայտնեց թէ ինչո՞ւ մարդիկ խօսքի մէջ այդքան լաւ, գործքով բոլորովին հակառակ վարմունք են ցոյց տալիս—Շօվէլը ժպտեց ու ասաց.

—Ապագայում այլ կը լինի. խօսքն ու գործը նոյն պիտի դառնան... Այդ պարոնները տեսան, որ այժմ ոյժը ժողովրդեան կողմն է, սկսում են սողալ նրա առաջ... Բայց ժողովուրդը պիտի հասկանայ, ըմբռնի իր ոյժը և ըստ այնմ գործադրի. այդպիսով ամեն բան լաւ կերթայ...

XII

Ապրիլին, մեր պատգամաւորները, որոնց յանձնարարուած էր արձանագրելու գիւղացոց պէտքերն ու ցաւերը—իրենց շրջանական ժողովներն սկսեցին Լիկսհէյմում։ Այնտեղ նրանք տեղաւորուել էին պանդոկների մէջ և վարպետ Ժանն ու Շովէլը երկուշաբթի գնալով՝ հազիւ շաբաթ օրերն էին վերադառնում։ Այդ տևեց ամբողջ 20 օր։

Կարող էք ուրեմն երևակայել, թէ որպիսի կենդանութիւն էր տիրում մեր կողմերում։ Անընդհատ խօսում ու վիճում էին անձնական, աղի, զինուորական և այլ տուրքերի վերացման, ձայն տալու իրաւունքի և հազարաւոր այլ այնպիսի խնդիրների վրայ, որոնց մասին առաջ երբէք էլ չէին յանդգնում մտածել։

Մեր պանդոկումն էին խռնւում Ալզասցիներ, Լօրէնցիներ. խմում էին, բռունցքերով սեղաններին խփում, տաքանում էին ու չարանում... Մարդ նրանց նայելիս՝ կարծում էր թէ ահա պիտի բզկտեն միմեանց. սակայն եթէ մէկ մէկ հարցնէիր թէ ուզածներն ինչ էր—բանից դուրս կը գար, որ ամենքն էլ նոյնն էին ցանկանում, ինչ որ ժողովուրդը։ Այլապէս, գիտէք էլի, եթէ զանազան բաներ լինէր առաջադրածները, անշուշտ տուր ու դմփոց դուրս կը գար։

Վալէնտինն ու ես էինք մնացել դարբնոցում և առաջւայ նըման գործում էինք. սայլեր նորոգում, ձիեր պայտում... Երբեմն էլ թունդ վէճի բռնւում, որովհետև այդ տխմար մարդը միշտ պնդում էր թէ ամեն ինչ տակն ու վրայ կը լինի՝ եթէ նորից ազնուերն ու կրօնաւորութիւնը գործի գլուխ չանցնեն։

Վիրաւորել չէի կամենում. լաւ մարդ էր։ Խեղճը սակայն ամենից աւելի անտառումն ունեցած իր խրճիթի մասին էր խօսում։

—Այնտեղ, անտառապահ Կլօդ Կուդրէի թոյլտուութեամբ, որսում էր նա կապուտիկներ (թռչուն) և թփիկների մէջ որոգայթներ դնում. երբեմն էլ, իբր նշան երախտագիտութեան, անտառապահին ընծայ էր տանում մի զոյգ երգիչ կեռնեխ (թռչուն) կամ այլ բան։

Այդ բոլորը նրան այնքան գրաւում ու զբաղեցնում էր, որ մինչ ուրիշները սրտատրոփ հետևում էին մեծ փոփոխութիւններին—նա շարունակում էր հետաքրքրուել միմիայն դիւթող սրնգներով ու թռչնորս ցանցերով։

Սակայն շատ էլ մէկ սիրտ չունէի նրան լսելու։ Մտածում էի շրջանական ժողովների և մանաւանդ զինուորակոչութեան ոչն-

չացման մասին, որովհետև սեպտեմբերին վիճակ հանելուս ժամանակն էր և բնականաբար, ամենից աւելի այդ հարցն էր ինձ զբաղեցնում։

Ահա այդ միջոցին էր, որ տեղի ունեցաւ կեանքումս կարևոր դեր խաղացող մի դէպք։

Երեկոյեանները, վերջերս, երբ խրճիթ էի վերադառնում, միշտ նրա առաջը, մօրս հետ նստած մանելիս տեսնում էի Լէտիւմիէի կնոջն ու աղջկան։ Իրենց տան պէս գնում էին գալիս, նըստում մինչև գիշերւայ ժամը 10-ը։ Լէտիւմիէները հարուստ էին և շատ հողեր ունէին։ Անէտը, շէկ, սպիտակ ու սիրուն աղջիկ էր։ Յաճախ տեսնում էի նրան ցերեկները՝ դարբնոցի առջևից անցնելիս, դոյլը ձեռքին։ Միշտ ինձ էր նայում ու ժպտում։

Այդ բոլորը սակայն ոչ մի կասկած չէր ազդում. ես էլ նըշանակութիւն չէի տալիս։ Եւ եթէ երեկոյեանները մօրը նստած՝ հետը ուրախ կատակներ էի անում, խօսակցում ու սիրալիր խօսքեր իսկ ասում—անում էի ինչպէս ջահէլ։ Ո՞վ չի սիրուն աղջկայ հետ կատակներ արել կամ զւարճացել, լինի քաղաքավարութեան համար, լինի հէնց այնպէս...

Բայց ահա մի օր մայրս յանկարծ ասաց ինձ.

—Լսիր, Միշէլ, լաւ կանես եթէ կիրակի օրերը դու էլ պարելու գնաս «Արագիլ» պանդոկը. պարահանդէս կայ այնտեղ. հագիր նոր շորերդ ու գնա։

Զարմացած հարցրի թէ ինչ կար։ Մայրս հօրս նայեց, ծիծաղեց ու ասաց.

—Քեզ ասում եմ՝ գնա... Ինքդ կը տեսնես։

Հայրս լուռ ու մտախոհ՝ գործը շարունակեց, յետոյ մէկէն ասաց.

—Լէտիւմիէները հարուստ են... լաւ կանես եթէ աղջկայ հետ պարես... մեր կարծիքով նա քեզ յարմար հարսնացու է։

Շփոթուեցի։ Ո՛չ թէ աղջիկը չէի հաւանում, այլ երբէք չէի մտածել ամուսնութեան մասին։ Ասենք, չը նայելով դրան, հետաքրքրութիւնից ասեմ, թէ յիմարութիւնից, գուցէ հէնց հօրս բաւականութիւն պատճառելու համար, ասացի.

—Կերթամ... սակայն ախր դեռ շատ փոքր եմ. մէկ էլ որ վիճակ չեմ հանել զինուորութեան։

—Ոչինչ. քեզ համար միևնոյն չէ՞, ասաց մայրս—գնա էլի... գնա՛ քաղաքավարութեան համար իսկ լինի՝ կուրախացնես նրանց...

Միւս կիրակի, առաւօտեան պատարագից յետոյ՝ գնացի։ «Արագիլ» պանդոկը Լիւցէլբուրգումն էր, գիւղի կամուրջի կողքին։ Պարում էին շէնքի ետևի պարտէզում, լերան տակ, ծառերի սաւ-

րի մէջ։ Բաւական բազմութիւն էր հաւաքւում, որովհետև հայր Քրիստոֆը միւս երէցների նման խիստ չէր և ձևանում էր թէ չէր տեսնում, չէր լսում—մինչև իսկ սնդահար Ժան-Բայի նւագը։ Պարերի միջոցին թեթև սպիտակ գինի էին խմում և կարկանդակ ուտում։—Ահա ամբողջ քէֆը։

Հագիւ բացը մտայ, որ տիկին Լէտիւմիէն տեսաւ ինձ ու կանչեց․

—Ա՛յստեղ, Միշէլ, մեզ մօտ եկ։

Սիրուն Անէտն էլ կար։ Ինձ տեսնելիս՝ ամբողջովին կարմրեց։ Բռնեցի ձեռքիցն ու խնդրեցի Վալսի։

—Օ՛, պարոն Միշէլ... Օ՛, պ․ Միշէլ... թոթովեց նա, ամաչելով երեսիս նայեց և սկսեց պարել։

Մէկը միւսի ետևից թէ որքա՜ն վալսեր պարեցի նրա հետ—հաշիւն իսկ կորցրի։ Զգում էի թէ շրջապատողները ինչպէս նայում էին մեզ, փսփսում ու ժպտում։

Մօրքուր Լէտիւմիէն երանութեան մէջ էր․ Անէտը կաս-կարմիր կտրած, աչքերը խոնարհած՝ թոյլ էր տւել իրեն տանել, պտտեցնել և պարում էր անխոնջ։ Ի հարկէ և խօսակցում էինք—երբեմն պօլիտիկայի վրայ, երբեմն էլ կատակում, խմում, կարկանդակը կիսում իրար հետ...

—Որքա՜ն գոհ կը լինի մայրս, եթէ պատմեմ նրան․ մտածում էի ես...

Բայց երեկոյեան ժամը 6-ին արդէն այդ զւարճութիւնը ձանձրացրեց ինձ։ Դրա համար էլ, առանց երկար մտածելու, փողոց ելայ և ուղղակի դէպի տուն ուղղւեցի ամենակարճ ճանապարհով—ժայռերի և մայրի պուրակի միջով։

Երբ ժայռերի վրայից իջել հարթավայրը՝ ելնում էի մեծ ճանապարհի վրայ—ինձնից 2—300 քայլ առաջ տեսայ մի աղջիկ, որ ամբողջովին փոշոտ, մեծ զամբիւղի տակ կքած՝ գնում էր։

—Չը լինի՞ Մարգարիտն է․ մտածեցի ես—հա՛, ի հարկէ նա է։

Ու քայլերս մեծացրի․ վազեցի։

—Է՛յ, Մարգարիտ, այդ դո՞ւ ես։

Կանգ առաւ ու դարձաւ։ Թուխ դէմքի վրայով հոսում էր քրտինքը․ մազերն անկարգ՝ ընկել էին այտերի և կախւում վառվռան, ցւարթ աչքերի վրայ։

—Ա՛, այդ դո՞ւ ես, Միշէլ․ ասաց նա ժպտելով—ա՜յ լաւ հանդիպում։

Նայում եմ․ ահագին զամբիւղը գրեթէ ճզմել էր ուզում նրա մարմինը․ զարմանում եմ ու շփոթւում։ Վատ դրութեան մէջ էի զգում ինձ։

—Յոգնած ես, ասաց նա—ի՞նչ է եղել․ հեռուի՞ց ես գալիս․

—Ո՛չ, Լիւցէլբուրգից... պարելուց։

—Ա՛, պարելո՞ւց... խօսեց նա քայլելով նորից—ես Դաբօից եմ գալիս․ ամբողջ գիւղերը ման եկայ և շա՜տ «Երրորդ դասակարգ» ծախեցի... ճիշտ ժամանակին հասայ․ գիւղական համայնքների պատգամաւորները Դաբօ էին հաւաքւել... Երեք օր առաջ էլ Լիկսհէյմում էի—Լօրէնում...

—Բայց դու երկա՞թ ես, ի՞նչ է․ գոչեցի ես։

—Է՛հ, բան ասացիր դու էլ... Ասենք քիչ յոգնել եմ, բայց չարժէ ուշադրութիւն դարձնել... բանն այն է, որ մեր իսկ գործելու յարմար օրերն են և ահա գործում ենք։

Ու ծիծաղեց, սակայն իսկոյն երևում էր, որ սաստիկ յոգնել էր։ Եւ յիրաւի, երբ մօտեցանք Ֆիւրստների հին պարտէզի ցած պատին, զամբիւղը կռթնեցրեց նրան, ինքն էլ կքեց—նստաւ ու ասաց․

—Քիչ նստենք խօսենք այստեղ, Միշէլ․ քիչ էլ կը հանգստանանք...

Վերցրի զամբիւղը, դրի պատի վրայ ու ասացի․

—Լա՛ւ, հանգստանանք... իրա՛ւ, այդ որքա՜ն ծանր է ձեր գործը, Մարգարիտ․ մերինից ծանր ու դժւար է։

—Այո, բայց գործն էլ առաջ է գնում․ ասաց նա նոյն ձայնով ու նոյն ակնարկով, ինչպէս իւր հայրը։—Կարող ենք ասել որ քայլում ենք... Մեր հին իրաւունքներն արդէն վերստացանք։ Մնում է այժմ ուրիշներ էլ ստանալ... Պէտք է բոլորը, բոլորը ստանալ․ պէտք է ամեն ինչ հաւասար լինի... որ հարկերը միևնոյնը լինի ամենքի համար... որ ամեն մարդ կարողանայ առաջ գնալ ըստ իր քաջութեան և ջանասիրութեան... Իսկ ամեն բանից աւելի՝ ազատութիւն, բացարձակ ազատութիւն է հարկաւոր մեզ, այո՛...

Ինձ էր նայում։ Հիացած՝ մտածում էի․

—Ի՞նչ ենք մենք այս մարդկանց մօտ, ի՞նչ ենք արել մենք ժողովրդեան համար, ի՞նչ նեղութիւն ենք կրել ազգի համար...

Իսկ նա նոյն ոգևորութեամբ՝ շարունակեց․

—Այդպէս, Միշէլ... Այժմ մեր պահանջները ցուցակագրեցին, վերջացրին․ կը տպեն և մենք հազարներով կը ծախենք... Քանի որ հայրս զբաղւած է, ես մենակ կը ման գամ․ ուրիշ կերպ չէ կարելի․ այս արհեստն է մեզ ապրեցնողը։ Երկուսիս փոխարէն ես պիտի գործեմ, քանի որ հայրս ամենքի համար է գործում։ Անցեալ օրը 12 լիւր տարայ նրան․ մի շաբաթ բաւական է․ 15 լիւր էի աշխատել․ երէկւանից էլ 4-ը աշխատեցի, ուրեմն դեռ 7

լիր ունիմ... վաղը չէ միւս օրը կերթամ նրան տեսնելու... լաւ է գնում գործերը... Եւ երբ Երեսփոխանական Ժողովի նիստերն սկսեն, այն ժամանակ երրորդ դասակարգի արտասանած ճառերը կը ծախենք... Ոչինչ աչքաթող չենք անիլ, ոչ. պէտք է առաջ մղել գործը. պէտք է ամենքն իմանան եղածը. ժողովուրդը զարգանայ, լուսաւորուի... Հասկանո՞ւմ ես սասծներս:

—Այո, այո, Մարգարիտ. ասացի նրան:—Հօրդ նման ես խօսում ճիշտ և քեզ լսելով՝ յուզւելուց լացս է գալիս:

Նստել էր պատի վրայ՝ իր զամբիւղի կողքին: Արևը մայր էր մտնում. երկինքը, խորքում—Միտռէլըրօնի կողմը, ոսկեգոյն էր դարձել՝ պատած կարմիր շերտերով. և լուսինը դժգոյն ու կապոյտ, անամպ, սահում էր ձախից դէպի Լիւցէլըուրգի աւերակների վերը:

Նայում էի Մարգարիտին, որ այժմ լուռ էր և ինձ նման դիտում էր բնութիւնը: Արմունկը զամբիւղի վրայ, նկատեց իրեն նայելս և ասաց.

—Կարծեմ լաւ փոշիոտւել եմ, չէ՞:

Առանց պատասխանելու, հարցրի.

—Այժմ քանի՞ տարեկան կը լինես, Մարգարիտ:

—Զատկի յետագայ կիրակի, այսինքն երկու շաբաթից յետոյ, ճիշտ 16 տարեկան կը դառնամ: Իսկ դո՞ւ:

—Ե՞ս... 18-ը անց եմ:

—Այո, արդէն տղամարդ ես երևում. ասաց նա, ցած ոստնեց պատի վրայից և զամբիւղի կաշին ուսն անցկացրեց:

—Ապա՜, աւելացրեց նա—մէկ օգնի՛ր, Միշէլ... լա՛ւ, եղաւ...

Զամբիւղը բարձրացնելիս, տեսայ թէ որքան ծանր էր:

—Ինչպէ՞ս ես կարողանում քաշ տալ այսպիսի ծանրութիւն... Տուր աւելի լաւ է ես տանեմ. ասացի ես:

Կքւած բեռան տակ, կողքից ինձ նայեց, ժպտեց ու ասաց.

—Փա՜հ... մարդ երբ գործում է իր խրատներ ձեռք ձգելու նպատակով—ամեն ինչ թեթև է թւում... Եւ մենք ձեռք կը բերենք, անշուշտ...

Այլ ես պատասխանել չը համարձակւեցի... Սիրտս սեղմւում էր... Հիացել էի Շովէլի և իր աղջկայ վրայ. որքա՜ն բարձր էին թւում ինձ նրանք երկուսն էլ:

Մարգարիտը այլևս յոգնած չէր թւում և շարունակելով քայլել, ասաց.

—Այո, Միշէլ... այնտեղ Լիքսհէյմում կրօնաւորներն ու ազնւականները լա՛ւ դիմադրեցին, բայց կերան լաւ... Այդ բոլորը արձանագրւեց և անմոռանալի կը մնայ. Թագաւորը կիմանայ անցած

դարձածը. ազգն էլ կիմանայ. տեսնենք Երեսփոխանական Ժողովը ի՞նչ կանի... Հայրս ասում է, որ ամեն ինչ լաւ կը լինի. հաւատում եմ ասածին... Կը տեսնենք. մենք մեր պատգամաւորներին թիկունք կը դառնանք, կը պաշտպանենք միշտ. կարող են նրանք ապահով լինել այդ կողմից...

Եւ այսպէս խօսելով՝ հասանք գիւղ: Առաջնորդեցի Մարգարիտին մինչև իրենց դուռը: Գիշեր էր արդէն: Մեծ բանալին հանեց, ներս մտաւ ու ասաց.

—Դէհ, բարի գիշեր, Միշէլ:

Երբ տուն վերադարձայ, հայրս ու մայրս սպասում էին ինձ և խեկոյն երեսիս նայեցին:

—Ապա՜... հարցրեց մայրս:

—Պարեցինք:

—Իսկ յետո՞յ:

—Յետոյ ես վերադարձայ:

—Մենա՞կ:

—Այո:

—Նրանց չը սպասեցի՞ր:

—Ո՛չ:

—Ու ոչինչ է՞լ չասացիր նրանց:

—Ի՞նչ էիք ուզում որ ասէի:

Մայրս սաստիկ բարկացաւ և սկսեց աղաղակել.

—Ի՞նչ յիմարն ես եղել. և աղջիկը աւելի յիմար՝ որ քեզ հաւանել է... Այդ ի՞նչ դրութեան մէջ ձգեցիր մեզ:

Ու բարկութիւնից կապտել էր: Անվրդով՝ նայում էի նրան, մինչ հայրս միջամտեց ու ասաց.

—Ի՞նչ ես գոռգոռում, թո՛ղ Միշէլին հանգիստ:

Բայց մայրս էլ ոչինչ չէր լսում. և շարունակեց:

—Տեսե՞լ էք այսպիսի յիմար... Իսկ ես վեց ամբողջ ամիս է որ այդ երկարահասակ անբան Լէտիւմիէներին մեր կողմն եմ քաշում, թէ ինչ է՝ որդուս համար հարուստ կին գտնեմ... դիմանում եմ այդ պառաւ յիմարի խօսակցութեանը, որ միմիայն քաթանի, հողերի ու կովերի մասին է. ամեն ինչ տանում եմ, համբերում և երբ ամեն ինչ կարգի է ընկնում, երբ բանը պիտի կապւէր—այս տխմարը մերժում է... Ինչո՞ւ, անասուն, ի՞նչ մեծ մարդ ես եղել դու. ի՞նչ է, պիտի աղաչե՞ն քեզ... Աստուած իմ, ինչպիսի՜ դժբաղդութիւն է ընտանիքի մէջ այսպիսի յիմարներ ունենալ...

Ուզեցի պատասխանել, բայց նա էլի շարունակեց.

—Ասացէք խնդրեմ... ազան մերժում է... Գնա և այսուհետև ունեցիր Նիկոլաներ ու Միշէլներ—սրիկաներ, որոնք քթերից

բռնում են... Ի՞նչ կայ գիւղում չւան կտրած աղջիկներ... Անշուշտ եմ որ այս տխմարն էլ բռնւած է մի կարթով...

Ու աւելը ձեռքին՝ գնում-գալիս էր խրճիթում, բարկացած հայհացքներ նետելով վրաս։ Այլ ևս լսել չը կարողացայ. ելայ ու բարձրացայ վերնատունս՝ քնելու։ Յուսահատւում էի գրեթէ։ Մայրս սակայն դեռ շարունակեց վարից.

—Ա՛, փախնո՞ւմ ես... պարզ է, չէ՞, անպիտան տղայ... չես համարձակւում երեսիս նայել, հա՞...

Ամօթից խեղդւում էի։ Նետեցի ինձ իմ արկղաձև մահճակալի խոտի վրայ, երեսս ձեռքերովս ծածկեցի ու մտածում էի.

—Աստւա՜ծ իմ, ի՞նչ է սա... ի՞նչու...

Ու լսում էի դեռ մօրս ձայնը աւելի ուժգին.

—Ա՛խ դու անպիտան... ա՛խ դու սրիկա՜յ...

Հայրս փորձեց հանգստացնել նրան, բայց մայրս չէր լսում և երկար դեռ կանչում էր ու նախատում։ Մինչև ժամը 1-ը լաց եղայ ու այլևս քնել չէի կարող. սիրտս ճնշւում էր. քիչ էր մնում ելնէի ու փախնէի տնից։

—Ի՞նչ է այս. մտածում էի—ամբողջ 10 տարի դու աշխատում ես... միւսները գնում են, դու մնում ես, վճարում պարտք, տալիս տուրքը, վերջին դրամդ գործ ես դնում՝ ծերուկներին ապրեցնելու համար և որովհետև ամուսնանալ չես ուզում այդ աղջկայ վրայ, այն էլ միայն նրա ունեցածին տէր լինելու համար—դու այլևս անպէտք, անպիտան ու սրիկայ ես համարւում...

Զայրոյթը համակում էր ինձ։ Կողքիս, փոքրիկ Էտիէնը մուշ մուշ քնում էր, իսկ ես աչք փակել չէի կարողանում։ Մտածում էի, մտածում և քրտինքն ինձ կոխում էր, խեղդւում էի, օդի պահանջ զգում...

Ժամը 4-ի մօտերը վեր թռայ—այլևս պառկելու հնարք չը կար—և ցած իջայ։ Հայրս էլ քնած չէր։

—Այդ դո՞ւ ես. Միշէլ, հարցրեց նա—արդէն գնո՞ւմ ես։

—Այո՛, հա՛յր, գնում եմ։

Կը ցանկայի հետը խօսել—ճանաչածս մարդկանցից ամենաբարի, ամենալաւ մարդն էր—բայց ի՞նչ ասել նրան։ Մայրս էլ քնած չէր. մթան մէջ աչքերը փայլում էին։ Ոչինչ չասաց և ես դուրս գնացի։

Դրսում մշուշը բարձրանում էր ձորից։ Գնացի դէպի նախիրները տանելու արահետը, ժայռերի տակ։ Սառնորակ խոնաւութիւնը քիչ հանգստացրեց ինձ։ Քայլում էի առանց որոշ նպատակի, մտախոհ, միշտ նոյն մտածութիւնով համակւած։ Սիրտս դրդում էր ինձ թողնել գիւղը, հեռանալ ուրիշ տեղ, ուր գար-

բնոցում պաշտօն որոնել... Բայց երբ մտաբերում էի, որ Մաթիւրինը ու փոքրիկ Էտիէնը կը մնան անօգնական, սիրտս կտոր-կտոր էր լինում։ Գիտէի որ մայրս չը պիտի երբէք մոռանար Լէտիւմիէի դաշտերն ու կալւածները և պիտի անընդհատ ուտէր, տանջէր ինձ...

Յիշում եմ այնուհետև, որ ժամը 5-ից յետոյ, առաւօտեան ցողի մէջ ծագեց մի հիանալի գարնանային արև։ Թարմութիւնը փոխել էր տրամադրութիւնս. սկսեցի այլ կերպ մտածել։

—Ո՛չ, Միշէլ, պիտի մնաս—ասացի ինքս իրենս—պիտի դիմանաս ամեն բանի. դու չը պէտք է թողնես հօրդ, ոչ. ոչ էլ եղբօրդ Էտիէնին, փոքրիկ քրոջդ... Քո պարտաւորութիւնն է նրանց սնուցանել... Թող մայրդ աղաղակի, կանչի ուզածին չափ... դու պիտի մնաս...

Այդպէս մտածելով, բարձրացայ դէպի գիւղ՝ անցնելով ագարակների և այգիների միջով։ Ծգնում էի նոր վճռիս մէջ աւելի հաստատւել։

Արևը բարձրանում էր, թռչուններն սկսել էին ճռւողել, շուրջս ամբողջ ողողւում էր ճառագայթների լոյսով և ցողի կաթիլները դողդոջում էին տերևների ծայրերին։ Տեսնում էի արդէն դէպի վեր բարձրացող դարբնոցի սպիտակ ծուխը։ Վալէնտինն ուրեմն զարթնել էր և կրակը վառել։

Շտապեցի քայլերս և երբ գիւղն էի հասնում, արահետը եզերող ցանկորմի միւս կողմից յանկարծ բահելու ձայն հասաւ ականջիս։ Նայեցի. Մարգարիտն էր. տան ետևի պարտիզում հողն էր փորում՝ գետնախնձոր տնկելու համար։ Յիշելով նրա երեկւայ յոգնածութիւնը՝ զարմացայ։ Կանգ առայ և երկար նայեցի. որքան նայում էի—այնքան հիանում էի վրան։

Հագել էր կարճ շրջազգեստ և կոպիտ գիւղական կօշիկ։ Ըստ երևոյթին, կատարելապէս գրաււած էր իր գործով և շուրջը ոչինչ չէր տեսնում։ Այդտեղ, առաջին անգամը լինելով, ուշադրութիւն դարձրի նրա գեր ու թուխ այտերին, սիրուն ցած ճակատին, որ ստւերւած էր հրաշալի սև մազերով, որոնք իջնում էին մինչև յօնքերը, իսկ քունքերի վրայ ոլորւում էին ինչպէս աղւամազ։ Այնքա՜ն նման էր հօրը. ձեռքերն ու սրունքները չոր, ինքն էլ ամրակազմ ու ոսկրոտ։ Գործելիս՝ շրթունքները պրկում էր և ոտնով այնպէս ամուր յենւում բահի վրայ, որ արմատները ճաթճաթում էին հողի մէջ։ Արևը, որ թափանցում էր ծաղկած խնձորենու ճիւղերից, ողողում էր նրան, տերևների շարժուն ստւերների հետ խառն։ Հողը ծխում էր, փայլում. զգալի էր որ օրը տաք էր լինելու։

Երկար նայելուց յետոյ Մարգարիտին, յիշեցի մօրս խօսքերը.—«Նա ուրիշի է սիրում»... Ու մտածում էի—«յիրաւի, ուրիշին եմ սիրում»... Սա ոչ դաշտեր ունի, ոչ մարգագետին և ոչ էլ կովեր, սակայն ունի քաջութիւն... սա կը լինի ահա իմ կինը... Ամենից առաջ հարկաւոր էր շահել նրան, շահել իմ ջանասիրութեամբ, իմ գործքովը...

Եւ այդ րոպէից, երբէք մտադրութիւնս չը փոխեց: Յարգում էի Մարգարիտին առաջուանից աւելի. մի րոպէ իսկ մտքով չանցաւ, որ նա կարող էր ուրիշի կինը լինել:

Այդպէս վճռած՝ դպրոցը գնացի: Ժամանակ էր գործի սկսելու: Զւարթութեամբ մտայ. Վալէնտինն արդէն շապկանց, թևերը սոթտած՝ ինձ էր սպասում:

—Ի՞նչ հրաշալի եղանակ, Միշէլ, կանչեց նա ինձ, տեսնելով գալս—ա՛հ, եթէ կիրակի լինէր, մի լաւ պտոյտ կանէինք անտառում:

—Այո, պատասխանեցի ծիծաղելով ու բաճկոնս հանեցի—սակայն այսօր երկուշաբթի է... Ապա՛, ի՞նչ ունինք շինելու:

—Ծերունի Բանջաուն երէկ երեկոյ 24 տապար է բերել նորոգելու, իսկ յետոյ՝ Քրիստոֆ Բէմի սայլին հարկաւոր է մի ոտնատեղի շինել:

—Լաւ ուրեմն, սկսենք...

Երբէք այդքան չէի բանել: Երկաթն արդէն շիկացել էր կրակում. Վալէնտինը առաւ ունելին ու փոքրիկ մուրճը, իսկ ես կռանը վերցրի... ու սկսեցինք:

Այսպէս գործում էինք մենք մինչև ժամը 7-ը, երբ յանկարծ տեսանք Մարգարիտին, որ զամբիւղն ուսին դուրս էր եկել՝ գիրք ծախելու: Վալէնտինը ինքը խօսեց աղջկայ մասին և յայտարարեց, որ նրա արածը հերոսական բան էր: Ո՛չ մի կասկած չունէր զգացմունքներիս մասին, ուստի և ես կշիռ էի տալիս նրա ասածներին:

—Նայի՛ր, Միշէլ, ասաց նա ցոյց տալով Մարգարիտին, երբ նա դէպի Վերին Բարաք էր գնում—նայիր մէկ, հազիւ 16 տարեկան մի երեխայ և քաշ է տալիս տանում այդքան մեծ ծանրութիւն. Նայելն անգամ սոսկալի է: Ո՛չ անձրև է նայում, ոչ ձիւն և ոչ էլ հեղեղն է նրան կասեցնում. ապշեցուցի՜չ քաջութիւն է... Դրանից դժւար գործ հազիւ թէ լինի... Եթէ հերետիկոս չը լինէր՝ կասէի որ մարտիրոս է ուղղակի... Սակայն ինքը սատանան է բնակւում այդ Շօվէլների մէջ և դրդում ծախելու այդ զզւելի փոքրիկ գրքերը, ոչնչացնելու համար մեր սուրբ կրօնը և Աստծոյ

դրած կարգ ու կանոնը այս երկրում... փոխանակ վարձատրութեան՝ դրանց արածը կախաղանի է արժանի...

—Օ՛, Վալէնտին, գոչեցի ես—կախաղա՜ն մինչև իսկ...

—Այո՛, կախաղան. պնդեց նա բարձրացնելով իր երկար բազուկները—նոյն իսկ խարոյկի արժանի՝ եթէ ճիշտը կամենաս... Արժէ՞ խնայել, քանի որ նրանք բոլոր իրենց ազնւութեամբ հանդերձ՝ մեր դէմ են գործում: Աղուէսի են նմանում. քանի նրբամտութիւն են ցոյց տալիս, այնքան պիտի զգոյշ լինել նրանցից. եթէ ոչխարի նման յիմար լինէին—վտանգաւոր չէին լինի. կարելի էր լաւ կթել ու փարախի մէջ հանգարտ պահել... բայց այդ կալւինիստները ժանտախտ են, ժանտա՜խտ...

—Սակայն նրանք էլ մեզ նման Աստծոյ ստեղծածներն են, Վալէնտին:

—Աստծոյ ստեղծածնե՜ր... գոչեց Վալէնտինը—եթէ Աստծոյ ստեղծածներ լինէին՝ քահանաները կը մերժէի՞ն տալ նրանց ծըննդական, թաղման կամ ամուսնութեան վկայական. կը թաղէի՞ն նրանց անասունի պէս՝ դաշտում, գերեզմանատնից դուրս. կարգելէի՞ն նրանց պաշտօններ ունենալ՝ ինչպէս ինքը Շօվէլն էլ էր ասում. արդեօք ամենքը կը նախատէի՞ն նրանց... Ո՛չ, Միշէլ. դըժւար է ինձ խոստովանել, բայց այդ մարդիկ ամեն ուրիշ խնդիրներում թէև ազնիւ են, սակայն վարպետ Ժանը մեղաւոր է, սխալւում է, որ թողնում է այդ մարդկանց իր տունը ոտ կոխել: Այդ Շօվէլի վերջը շատ վատ պիտի լինի—կը տեսնես... Մեր գիւղացիք էլ էշեր են, որ նրան պատգամաւոր ընտրեցին... Ա՛յ կը տեսնես, յիշի՛ր խօսքերս. հէնց որ տիրի նախկին կարգ ու կանոնը, ամենից առաջ այդ Շօվէլին ու իր աղջկան քաշ կը տան, գուցէ նաև վարպետ Ժանին և մեզ բոլորիս, որպէս զի քաւենք մեր մեղքերը մի քանի տարի բանդ նստելով... Ես արժանի չեմ լինիլ դրան, բայց գլուխս պիտի խոնարհեցնեմ Թագաւորի արդարադատութեան առաջ... Արդարութիւնը՝ արդարութիւն... յանցաւոր ենք մենք, պարզ է այս... մեղաւոր ենք և արժանի պատժի...

Եւ այս ասելով, նա ծռում էր մէջքը, ձեռքերը միացնում որպէս նշան համակերպութեան ու աչքերը փակում մտախոհ դէմքով: Իսկ ես մտածում էի.

—Աստւած իմ, կարելի՞ է արդեօք լինել այսքա՛ն յիմար... ինչ որ ասում է, սկզբից մինչև վերջ անմտութիւն է...

Այնուամենայնիւ, տեսնում էի որ եթէ ամուսնութեան խընդրէի Մարգարիտին, ամենքը դէմ պիտի լինէին. գիւղացիք ընդունակ կը լինէին ինձ քարկոծելու անգամ: Բայց միևնոյն էր, ոչնչի առաջ վճռել էի կանգ չառնել:

Երեկոյեան ըստ սովորականին տուն գնացի արդէն առանց վախենալու և որոշեցի լռել ու չը պատասխանել մօրս ոչ մի բառով, եթէ նա դարձեալ սկսէր իր նախատինքները։

Երբ մօտենում էի, հայրս դիմացս ելաւ։ Գունատ էր և վախեցած՝ շուրջն էր նայում։ Նշաններով ջանաց հասկացնել, որ անցնեմ դէպի դատարկ փողոցներ։ Երևի ասելիք ունէր։ Հետևեցի նրան և խեղճ ծերունին, երբ հասել էինք մի խուլ անկիւն, դողդոջուն ձայնով ասաց.

—Լսի՛ր, Միշէլ. մայրդ երէկ երեկոյ շա՜տ գոռաց վրադ... Ա՛խ, սոսկալի էր... Ի՞նչ պիտի անես այժմ, զաւակս... երևի մտածել ես հեռանալ տնից, թողնել մեզ, չէ՞...

Ու անհանգստութեամբ նայեց ինձ գունատ ու շփոթւած։

Շտապեցի հանգստացնել նրան։

—Ո՛չ, հայրի՛կ, ինչու. մի՞թէ կարող եմ թողնել ձեզ, փոքրիկ Մաթիւրինին, Էտիէնին... Այդ անկարելի է։

Մէկէն հօրս դէմքը զւարթացաւ։

—Ա՛յ, այդ լաւ է. ասաց նա—զգում էի որ չես թողնի մեզ, Միշէլ... ուրախ եմ որ հետդ խօսեցի... Մայրդ անխելք է, միշտ չափազանց տաքանում է. ես ինքս պակաս նեղութիւն չեմ քաշել նրա ձեռքից... Այսպէս ուրեմն, դու չե՜ս հեռանալ մեզանից։

Եւ ձեռքս բռնել՝ չէր թողնում։ Սրտիս խորքից յուզւած՝ կրկնեցի.

—Իհարկէ ոչ, հա՛յր, կը մնամ անշուշտ. իսկ եթէ մայրս գոռգոռայ—ոչինչ, մայրս է. կը լռեմ, ձայն չեմ հանիլ։

Խեղճը բոլորովին հանգստացաւ։

—Հիանալի է... բայց ահա թէ ինչ, զաւակս. դու մի քիչ այստեղ սպասիր, ես մենակ տուն գնամ. միասին թող չը տեսնի մեզ մայրդ. լաւ չէ. ձեռքիցը չեմ պրծնիլ...

—Իհարկէ, հա՛յր, դուք գնացէք։

Արագ դուրս ելաւ փողոցից։ Մի քանի րոպէից յետոյ ես էլ գնացի։ Երբ տունը մտայ — մայրս լուռ մանում էր՝ նստած օջախի մօտ. կարծում էր թէ պիտի խօսէի, յայտնէի հեռանալուս մասին։ Բոցավառ աչքով հետևում էր ինձ և ըստ երևոյթին պատրաստւում էր անէծքներ սկսելու։ Փոքրիկ Մատիւրինը, Էտիէնը կողքին նստած՝ կողով էին հիւսում, իսկ հայրս փայտ էր կտրում՝ գաղտագողի ինձ զննելով։ Իբր թէ ոչինչ չէր եղել—մտայ և բոլորովին հանգիստ ձայնով ասացի.

—Բարի երեկոյ, հա՛յր, բարի երեկո՛յ, մայր... Այսօր սաստիկ յոգնել եմ, գործ շատ կար... Գնամ քնեմ։

Ու ելայ տեղս։ Ոչ ոք ձայն չը հանեց։ Պառկեցի և գոհ իմ այդպիսի վարմունքից, այդ գիշեր շատ հանգիստ քնեցի։

XIII

Միւս առաւօտ շուտով երբ բանելու գնացի, ոչ միայն պանդոկը լիքն էր ամբոխով, այլև ճանապարհի անցուդարձն էլ անսովոր կերպով մեծացել էր։ Սայլեր մէջը լիքը մարդիկ, հետևակների խմբեր գալիս էին ու գալիս։

Ասում էին, որ մեր պահանջների ցուցակն արդէն կազմւած վերջացել էր և որ շուտով պիտի տանէին Մէց, ուր պիտի հաւաքւէին միւս շրջաններից և ընդհանուր, նահանգական պահանջների ու պէտքերի ցուցակը պիտի կազմւէր բոլորից։

Ընտրութեան օրերին, մեր շրջանից շատ պատգամաւորներ իրենց հետ Լիկսհէյմ էին տարել կանանց ու երեխայոց։ Այժմ ահա, նիստերը վերջացած՝ ցրւում էին գոհ, շա՜տ գոհ, որ նորից վերադառնում են իրենց գիւղերը։

Ու գնալիս՝ կանչում էին.

—Վերջացաւ... Այս երեկոյ միւսներն էլ կը գան... Ամեն բան կարգի դրւեց...

Վալէնտինն ու ես ուրախանում էինք, որ վարպետ Ժանն էլ շուտով պիտի գար։ Երբ մարդ 10 տարի շարունակ միասին է լինում, դժւար է երեք շաբաթ մենակ մնալ և այլևս չը տեսնել այն խոշոր ու բարեմիտ դէմքը, որ երբեմնակի կանչում է.

—Հէյ, տղա՛յք, սկսե՛նք...

Եւ կամ.

—Կանգնի՛ր... Շունչ առնենք քիչ։

Բաճկոններս հանած, դռանը կանգ առինք և խօսակցելով դիտում էինք եկողներին։ Նիկօլն ու մօրքուր Կատերինը աթոռներ էին բերում, որ օգնեն կանանց սայլիցն իջնելու։ Ու տեղի էին ունենում բարևներ. հին ծանօթներ էին, սակայն բարեմաղթութիւններն ու բարևները արտասովոր ձևեր էին ստացել, որովհետև եկող կանայք, իրենց ամուսինների պատգամաւոր ընտրւելուց յետոյ, ինչ որ աւելի հանդիսաւոր ձևեր էին ընդունել ու միմեանց «տիկին» էին կոչում։

Վալէնտինը այդ բոլորը տեսնելով՝ ծիծաղից թուլանում էր։

—Նայի՛ր մէկ, Միշէլ. ասում էր նա—ահա կոմսուհի խոշորժաքը... դա էլ անշուշտ դքսուհի Ժարնիքն է... Նայի՛ր է՜... սովորենք գոնէ նուրբ շարժւածքներ գործադրել այսուհետև...

Բաւական սրամիտ դիտողութիւններ էր անում անպիտանը. բայց վերջ ի վերջոյ կատաղում էր տեսնելով, որ «ռամիկ» մար-

դիկ համարձակւում են ազնուականների հովեր ընդունել, նրանց նման բարևել...

—Սազում է մյ... գոչում էր նա—այնպէս՝ ինչպէս լաւ թամբը էշին... օ, անասուննե՛ր... Եւ երբ մարդ մտածում է, թէ այս ցնցոտիները համարձակւում են նորին վեհափառութեան թագաւորի դէմ ապստամբել, համարձակւում են թագուհու, բարձր իշխանութեան դէմ անհնազանդութեան ոտնձգութիւններ անե՛լ, իրաւունքնե՛ր պահանջել... Ե՛ս, ես ձեզ ցոյց կը տամ թէ ինչ բան է իրաւունքը... մէկ ձեռքս ընկնէի՜ք, տես ինչպէս արածելու քշէի բոլորիդ ու թէ որ դժգոհ լինէիք, կրկնապատկէի Զւիցէրական գունդը *) ու մի լաւ ջարդէի ձեզ...

Ու այսպէս ինքն իրեն փնթփնթում էր, հայհոյում՝ փուքսը փչելիս, կամ երկաթը ունելիով կրակի մէջ դնելիս։ Թողնում էի որ անէր. զւարճութիւն էր պատճառում նրա բարկութիւնը։

Վերջապէս գործի սկսեցինք ու մեր մուրճերը մինչև ժամը 3-ը անընդհատ կռանեցին՝ կայծեր ցայտեցնելով ամեն ուղղութեամբ։ Այլ ևս ոչնչի վրայ չէինք մտածում, երբ յանկարծ ինչ որ ստւեր երևաց դռան առաջ։ Դարձայ. Մարգարիտն էր։ Մի բան ունէր գոգնոցումը և երբ ներս եկաւ, ասաց.

—Ձեզ գործ եմ բերել... Իմ բահն է. կոտրւեց... կարո՞ղ էք նորոգել մինչև երեկոյ կամ գոնէ մինչև վաղն առաւօտ։

Վալէնտինը վերցրեց ծայրը ծռւած բահը, որի կոթն էլ կոտրւել էր։ Կանխօրէն ուրախացայ և Մարգարիտի ինձ ուղղած ժպիտին այնպէս հայեացքով պատասխանեցի, որ կարծես ուզում էի ասել թէ.

—Ապահով կաց... այնպէս լաւ շինեմ բահդ, որ քէֆդ գայ. կը տեսնես գործս...

Մինչ այդ՝ Վալէնտինը շուռ ու մուռ տւաւ բահը և ասաց.

—Ո՛չ, վաղն առաւօտ չի հասնի. վաղը երեկոյ՝ գուցէ։

—Փա՜հ... գոչեցի ես—ի՞նչ բան է այդ որ. ճիշտ է, ձեռքերնիս շատ գործ կայ, բայց Մարգարիտի բահը ամենից առաջ կը շինենք... Թո՛ղ ինձ այդ, Վալէնտին, ես ինքս կը շինեմ։

—Վերցրո՛ւր, շատ ուրախ եմ. ասաց նա—բայց կարծածիցդ աւելի ժամանակ պիտի կորցնես վրան, մինչդեռ այն կողմը շատ գործեր կայ անելու։

Մարգարիտը ծիծաղում էր.

*) Առանձին պահակ գունդ, կազմած զւիցէրացիներից, նման Ռուսաստանի կօզակներին իրենց վարմունքով ու վայրենութեամբ։ Յեղափոխութիւնը լիովին ու անհետ ոչնչացրեց նրանց։ Ծ. Թ.

—Ուրեմն կարո՞ղ եմ ապահով լինել, Միշէլ, ասաց նա։

—Այո՛, այո՛, Մարգարիտ, այս երեկոյ կստանաս բահդ։

Եւ երբ գնաց, իսկոյն փոքրիկ սալը դրի, բահը կրակի մէջ մղեցի և փուքսին մօտեցայ։ Վալէնտինը կարծես զարմացած՝ ինձ էր նայում. իմ եռանդը նրան շւարեցրել էր։ Ոչինչ չէր ասում թէև, սակայն զգում էի, որ ականջներս այրւում էին և արիւնը խփում էր թշերիս։ Որպէս զի ծածկեմ այդ, սկսեցի երգել դարբնի երգը.

Յառաջ, դարբի՛ն,
Մօտ գնա կրակին...

Վալէնտինը իսկոյն մոռացաւ ամեն ինչ և իր խոշոր, քթային բամբովը, խօսքերը—ինչպէս հնուց ի վեր անում էին—քաշքշելով՝ ընկերակցեց ինձ։ Մուրճերը յաջորդում էին միմեանց և ըստ երգի եղանակին՝ կոփում երկաթը աշխուժով։ Միտքս Մարգարիտի կողմը, չեմ կարծում որ այդքան լաւ բանած լինէի երբէք։ Կռանը ոստոստում էր ձեռքումս, երկաթը խմորի նման բացւում էր հարւածների տակ։

Առաջ դարբնեցի բահը շիկացրած, յետոյ՝ սառած ծեծեցի և ջանացի տալ նրան սիրուն քառակուսի ձև, թեթևակի երկարացրած այնպէս, որ վերջ ի վերջոյ ստացւեց մի թեթև ու սիրուն բան։ Լսում էի թէ ինչպէս Վալէնտինը մրմռում էր.

—Այո... ամեն մարդ մի ընդունակութիւն ունի. վարպետ Ժանի նման պայտ շինող չը կայ. իմը՝ լաւ հեցանն է (անւի շրջանակ) և միջնանիւ (անւի միջին մասը), իսկ այս տղան՝ յայտնի կը լինի իր շինած բահերովը... Աստծոյ բան է, շնորհք է, ո՞վ ինչ ունի ասելու...

Գնում-գալիս էր, պտտւում շուրջս և երբեմն հարցնում.

—Ուզում ես, քեզ օգնեմ։

—Ո՛չ, ո՛չ. ասում էի ես հպարտ և ուրախ՝ որ գործս այդպէս լաւ առաջ էր գնում... Ու շարունակում էի երգը.—

Յառա՜ջ, դարբի՛ն,
Մօտ գնա կրակին...

Ժամ 5-ի մօտերը բահը պատրաստ էր։ Փայլում էր արծաթէ պնակի նման և զանգի պէս հնչում։ Վալէնտինը ձեռն առաւ, կշռեց երկար, յետոյ ինձ նայեց ու ասաց.

—Ծեր վարպետ Րէբշտօկը, որ իր բահերն ու թիակները ծախելու է ուղարկում նոյն իսկ Զւիցերիա—այդ նշանաւոր վարպետն իսկ իր խոշոր «Ր» տառը չէր վարանիլ դրոշմելու այս բահի վրայ և յայտարարելու որ իր շինածն է։ Այո՛, Միշէլ, Ծօ-

վէլները կարող են պարծենալ, որ այսպէս լաւ բահ ունեցան և որ նա իրենցից աւելի կայրի... Այո՛, սա քո գլուխ—գործոցն է...

Կարող էք երևակայել ուրեմն, թէ որքան գոհ մնացի այդ գովեստից, որովհետև Վալէնտինը գործը լաւ էր հասկանում։ Բայց նրա խօսքերը ոչինչ էին՝ համեմատելով այն հաճոյքի հետ, որ պիտի զգայի, բահը անձամբ Մարգարիտին տանելիս։ Հարկաւոր էր սակայն բահին կոթ էլ շինել տալ։ Վազեցի իսկոյն մեր դրացի վարպետ ատաղձագործ Րիգօյի մօտ։

Ակնոցները քթին ցցած, ծերունի վարպետը շինեց ուզածս կոթը—լաւ նստող, կլոր, թեթև ու ամուր։ Վճարեցի իսկոյն, յետոյ վերադարձայ գարբնոց և սպասեցի օրւայ վերջանալուն։

Ժամը 7-ին ձեռքերս, երեսս ու վիզս լւացի դարբնոցի առաջ գտնւող աղբիւրի ջրովը և պատահմամբ վեր նայելով՝ տեսայ Մարգարիտին, որ նստել էր իրենց տան առջևի փոքրիկ նստարանի վրայ ու գետնախնձոր էր մաքրում։ Իսկոյն հեռւից շարժեցի բահը և մօտ վազելով՝ ձայնեցի ուրախ.

—Ահա բահդ, Մարգարիտ... ապա՛, տեսնենք կը հաւանե՞ս։

Ձեռքն առաւ ու հիացմունքով զննեց։ Հազիւ շնչում էի։

—Ա՛հ, ասաց նա նայելով ինձ—Վալէնտի՞նը շինեց։

—Դու կարծում ես ինքս շինել չե՞մ կարող. ասացի կարմրած։

—Օ՛ ոչ... բայց այնպէս լաւ շինւած է... Գիտե՞ս, Միշէլ, լա՛ւ գործաւոր ես եղել։

Ու ժպտում էր ինձ։ Լցւած ուրախութեամբ՝ հրճւում էի, երբ յանկարծ Մարգարիտը գոչեց.

—Բայց Միշէլ, չէ՞ որ թանգ կը լինի նստած... Ապա՛, ո՞րքան պիտի վճարեմ։

Կարծես ամպերից գլորւեցի ցած և գրեթէ բարկութեամբ էր, որ պատասխանեցի.

—Ուզում ես վիրաւորե՞լ ինձ, Մարգարիտ... Քեզ համար գործեցի, ուրախ... ուզում էի քեզ ընծայ բերել, հրճւում էի քեզ մի բաւականութիւն պատճառելով և յանկարծ հարցնում ես թէ ի՞նչ արժէ...

Տեսնելով վշտալից դէմքս, ասաց.

—Բայց այդպէս բան չի՛ կարելի, Միշէլ. ամեն աշխատութիւն վարձատրութեան է արժանի... Եւ վերջապէս վարպետ Ժանի ածուխը արժէք ունի, իսկ դու էլ նրա բանւորն ես...

Իրաւունք ունէր—վիճել չէի կարող, բայց դա չարգելեց ինձ տարակելու.

—Ո՛չ, ո՛չ,... այդ չէ...

Բարկանում էի, շփոթւում, երբ յանկարծ զգացի որ թևս բռնում են։ Շօվէլն էր։

—Ի՞նչ է եղել, որ այդպէս վիճում էք, Միշէլ։

Լիքսհէյմից էր գալիս. զւարթութեամբ ինձ էր նայում. իսկ ես պապանձւել էի և սաստիկ վրդովւել։

—Ա՛յ, հայրի՛կ, ասաց Մարգարիտը—բահս նորոգել է և չի ուզում ո՛չ մի վճար ընդունել։

—Ա՛հ, խօսեց Շօվէլը—և ինչու։

Բարեբախտաբար յանկարծ գլխումս ծագեց մի յաջող միտք և ես շտապեցի պատասխանել.

—Օ՛, պարո՛ն Շօվէլ, մի ստիպէք ինձ ձեզնից փող վերցնելու։ Դուք հարիւր անգամ գրքեր չէ՞ք տւել ինձ կարդալու. դուք չէի՞ք, որ քրոջս համար գործ գտաք. այժմ էլ, մի՞թէ դուք չէք որ մեր իրաւունքների համար այնքա՛ն աշխատում էք... Երբ ձեզ համար գործում եմ, յանուն բարեկամութեան և երախտագիտութեան է. անպիտա՛ն կանւանէի ինձ, եթէ մտածէի ասել թէ «աշխատանքս այսքան արժէ»... Ո՛չ, չեմ կարող... սովորութիւն չունիմ այդպէս վարւելու...

Մինչ ես խօսում էի, Շօվէլը իր փոքրիկ աչքերի թափանցիկ հայեացքով զննում էր ինձ խորապէս։

—Այդ բոլորը լաւ... ասաց նա—բայց ես չեմ գործում նրա համար, որ փոխարէնը ստիպեմ ուրիշի՝ ինձ համար ձրի բանելու... Եւ եթէ այդպէս վարւէի, ինքս էլ ինձ անպիտան կանւանէի... Հասկանալի՞ է, Միշէլ...

Բոլորովին կորցրի ինձ և ոչինչ չը գտնելով ասելու, սկսեցի լալ։

—Ա՜հ, պարո՛ն Շօվէլ, որքա՛ն ցաւեցնում էք ինձ։

Անշուշտ սրտաշարժւած՝ պատասխանեց.

—Ո՛չ, Միշէլ. միտք չունիմ քեզ ցաւեցնելու. գիտեմ, որ ազնիւ և լաւ տղայ ես. և որպէս զի ապացուցանեմ քեզ այդ, ընդունում եմ ընծադ։ Այդպէս չէ՞, երկուսս էլ ընդունում ենք այդ ընծան։

—Օ՛, այո՛. պատասխանեց աղջիկը—եթէ դա բաւականութիւն կը պատճառի Միշէլին, մերժել չենք կարող։

Դրանից յետոյ Շօվէլը զննեց շինածս բահը, գովեց, ինձ անւանեց լաւ աշխատաւոր և աւելացրեց որ յոյս ունէր տեսնել ապագայում վարպետ և դարբնոցի տէր։ Լաւ տրամադրութիւնս նորից եկաւ. և երբ ձեռքս սեղմելով տուն մտաւ ու Մարգարիտն էլ իբր միաս բարև կանչեց «բարի գիշեր, Միշէլ, և շնորհակալութիւն»—մոռացայ նեղացած լինելս։

Շատ ուրախ էի, որ իսկ ժամանակին խօսք էի գտել Շօվէլին պատասխանելու. որովհետև նրա թափանցող նայւածքը շփոթեցրել էր ինձ՝ խօսածս ժամանակ։ Եթէ տարակուսանքներս

այնքան յաջող չը լինէին, հետեւեամբ կարող էր վատ բաներ կասկածել։ Մտքումս դրի այնուհետեւ զգոյշ լինել և կարողացածիս չափ ծածկել Մարգարիտի վերաբերմամբ կազմած ծրագիրներըս, մինչև որ հասնէր դէմ առ դէմ խօսելու օրը։

Այս բոլորը մտածում էի պանդոկ վերադառնալիս։

Երբ սրահ մտայ, վարպետ Ժանն արդէն եկել էր։ Նոր էր ներս մտել և պահարանի մէջ էր կախում վերարկուն.

—Նիկօ՛լ, ա՛ Նիկօլ, կանչում էր նա—տո՛ւր շալիկս ու գըլխարկս.. Ո՛ւֆ, երբ հագնում եմ այդ հին շորս ու փայտէ կօշիկս, աւելի հանգիստ եմ զգում ինձ... Ա՛, բարև, Միշէլ. ահա և ես տուն եկայ... մուրճերը կսկսեն նորից թռչկոտել, հը՞... երևի շատ գործ հաւաքուած կը լինի։

—Ո՛չ շատ, վարպետ Ժան. ինչ որ կար՝ բոլորը նորոգեցինք. Դագսբերից պատուիրած գամերը երէկ երեկոյ ուղարկեցինք արդէն։

—Իրա՛ւ... ի՛նչ լաւ է այդ. շատ լաւ է եղել...

Մօրքուր Կատերինն այդ միջոցին ներս վազեց և ուրախ հարցրեց.

—Վերջացրե՞ր արդէն, Ժա՛ն. բոլորո՞վին վերջացրիր. այլ ես չե՞ս վերադառնալու այնտեղ։

—Ո՛չ, Կատերին, չեմ գնալ, փառք Աստծոյ.... Զզւեցրեց վերջապէս այդ բոլորը... Այժմ արդէն ամեն ինչ կարգին է. վաղը չէ միւս օրը մեր պահանջների ցանկը կը տանեն... Լաւ գործեցինք հա՛. եթէ Տօվէլը չը լինէր, Աստուած գիտէ, մինչև այժմ ոչինչ արած չէինք լինի... Ի՜նչ մարդ է... Փառք ու պատիւ մեր գիւղին, որ ընտրեց այդպիսի պատգամաւոր։ Բոլոր միւս հասարակութիւնների պատգամաւորները միաձայն նրան ընտրեցին մեր գանգատներն ու պահանջները Մէց տանելու և այնտեղ փաստաբանելու, եթէ դէմ խօսողներ լինին։ Մեր գիւղը սկի այդպէս պատիւ չէր տեսել. այժմ Տօվէլին ամենքը ճանաչում են. բոլորը գիտեն թէ նա ո՞ր գիւղացի է. գիտեն որ նրան ընտրողը մենք ենք և որ, նշանակում է մենք խելօք մարդիկ ենք, չը վախեցանք կալւինիզմից և կարողացանք մարդու մէջ եղած մեծ ձիրքը նկատել։

Այս ասելով, վարպետ Ժանը հագաւ իր հին բաճկոնն ու փայտէ կօշիկները։

—Այո՛... շարունակեց նա ուտելով—Շրջանական ժողովի մէջ եղած հարիւր պատգամաւորներից՝ երրորդ դասակարգը 15 հոգի ընտրեց ներկայացնելու մեր պահանջները. Նրանցից չորրորդը Տօվէլն է... Այդպէս... Անշուշտ պիտի տօնել այս յաջողութիւնը, չէ՞... Մի լա՛ւ խնջոյք սարքենք ի պատիւ մեր պատգամաւոր Տօ-

վէլի... Արդէն վաղօրօք սարքել եմ ես։ Լէտիւմիէին և Կօշարին ասել եմ. հանդիպեցի քաղաքում և հրաւիրելով՝ առաջարկեցի որ միւսներին էլ ասեն... Մառանից պէտք է մի տակառ հին գինի հանել. խոհանոցումն էլ շատ գործ կը լինի... Թող Նիկօլն այս երեկոյ շուկայ գնայ և վեց գրւանքայ լաւ կովի միս առնի, 3 գըրւանքայ կողիկ և երկու գրւանքայ ազդր... լա՛ւերը... Թող ասի որ Ժան Լերուի համար է... Միսը պիտի սխտորով մի լաւ համեմել... Պատրաստիր նոյնպէս կաղամբով երշիկ. վերևից էլ ամենամեծ ապուխտը հանիր և թող սալաթ, պանիր ու կաղին շատ լինի... Ամենքին պիտի գոհացնել. ամբողջ շրջանը թող իմանայ, որ մեր մի գիւղացին Շրջանական ընդհանուր ժողովի չորրորդ պատգամաւոր է ընտրուած Մէցում... Եւ որպիսի՜ պատգամաւոր... Մենակ նա շատ աւելի մեծ գործ տեսաւ ժողովրդի իրաւունքները վերահաստատելու համար՝ քան միւս ամենքը... Բայց թողնենք այս առ այժմ... Տօվէլը ամենքից կատաղիների, հին դատախազների, ամենախորամանկ փաստաբանների, ամենաճարպիկ հարուստների բերանները ծեփեց, այո՛... ծեփեց...

Ըստ երևոյթին վարպետ Ժանը ճանապարհին մի տեղ կոնծել էր չափից աւելի, դրա համար էլ խօսում էր այդքան, ձեռքերով օդը ծեծում և կարմիր թշերը ուռեցնում, ինչպէս անում էր ամեն անգամ, լաւ ճաշելուց յետոյ։

Նիկօլը ընթրիքի համար սեղան պատրաստելու եկաւ և ընդհատեց նրա խօսակցութիւնը։ Ամենքը սեղան նստեցին՝ խորհելով լսածների մասին։

Երբ պատրաստւում էի տուն գնալ, վարպետ Ժանը դարձաւ ինձ.

—Հօրդ յայտնի՛ր, ասաց նա, որ իր հին ընկեր Ժան-Լերուն հրաւիրում է նրան իր մօտ ճաշի... Չէ՞ որ մենք նրա հետ լաւ ընկերներ ենք եղել, միասին ենք ծառայել 57 թւին... Չը մոռանա՛ս, ասա՛, որ վաղը ճիշտ 12-ին գայ. լսո՞ւմ ես, Միշէլ։

Ու ձեռքս բռնած՝ ճմում էր։

—Կասեմ, վարպե՛տ Ժան. անշուշտ կասեմ... մեծ պատիւ էք անում։

—Շատ մի՛ խօսիլ, կանչեց նա—երբ մարդ հրաւիրում է ձեզ նման լաւ մարդկանց, պատիւ և բաւականութիւն տալիս է իրեն... Ցտեսութիւն առ այժմ, անուշ քուն քեզ...

Դուրս ելայ։ Երբէք անձամբ չէի լսել, որ կնքահայրս այդքան լաւ խօսէր հօրս մասին։

XIV

Երբ տուն մտայ, իսկոյն ծնողներիս յայտնեցի, որ մենք երկուսս—հայրս և ես, միւս օրը ճաշի էինք հրաւիրւած վարպետ Ժանի մօտ, մեր գիւղի իշխանների և հարուստների հետ։

Հասկացան թէ ինչ պատիւ էր ցոյց տրւում մեզ, հօրս աչքերը մինչև իսկ յուզմունքից լցւեցին։ Երկար նա պատմել սկսեց թէ ինչպէս երկուսը—վարպետ Ժանի հետ միասին, վիճակ էին հանել 57 թւին, թև-թևի ման էին գալիս եռանկիւնի գլխարկներով. յետոյ յիշեց իմ մկրտութեան մասին՝ թէ ինչպէս հին ընկերը համաձայնել էր կնքահայրս լինել։ Ամենափոքր մանրամասնութեամբ յիշատակեց այդ բոլորը։ Իսկ յետոյ ասաց.

—Այո՛, լաւ ժամանակներ էին, շա՛տ լաւ ժամանակներ...

Մայրս էլ գոհ էր երևում. բայց որովհետև դեռ բարկացած էր ինձ վրայ—չարտայայտեց ուրախութիւնը և շարունակեց լուռ՝ մանել։ Սակայն միւս առաւօտ երբ զարթնեցինք, սեղանի վրայ էին դրւած մաքուր շապիկներ ու մեր տօնական հագուստը։ Լուսաբացին լւացել էր, չորացրել ու արդուկել։ Իսկ երբ կէսօրւայ մօտ ես ու հայրս դուրս ելանք գնալու, նա էլ դռան առաջ ելաւ ճանապարհ դնելու և շէնքի վրայ կանգ առած՝ կանչեց դրացիներին.

—Ճաշի են գնում մերոնք Ժան Լերուի մօտ. այնտեղ հրաւիրւած են մեր գիւղի բոլոր իշխանները...

Իսկ խեղճ ծերունի հայրս կռթնած թևիս՝ ժպտելով ասում էր.

—Այսօր քեզ հետ նորից զարդարւել ենք ընտրութեան օրերի նման... առ այժմ ոչ մի վատ բան չի եղել և լաւ է այսպէս էլ գնայ, Միշէլ... միայն թէ, խնդրում եմ, զգոյշ կենանք, մեծ խընճոյքների ժամանակ աւելորդ բաներ շատ է խօսւում առհասարակ...

—Լա՛ւ, հայրի՛կ, հանգիստ եղէք, ես ոչինչ չեմ խօսելու։

Խեղճ ծերունին դողում էր, տարիներով թուփ առ թուփ հալածւող նապաստակի նման։ Եւ որքա՜ն շատ էին այն ժամանակ հօրս նման՝ ճնշումից գալարւած մարդիկ... Այո՛, բոլոր մեր ծերունի գիւղացիք, որ մեծացել էին աղաների ու վանքերի ծանր, շա՛տ ծանր լուծերի տակ—սովորել էին մտածել թէ իրենց համար ո՛չ արդարութիւն կարող է լինել, ո՛չ էլ ճշմարտութիւն։

Նոր գործի առաջին քայլը միշտ երիտասարդութիւնը պիտի անի, ընկերակցութեամբ Շօվէլի նման յամառ ծերունիների, որոնց վրայ ժամանակ չէ ազդում և որոնք երբէք կասելու, ետ գնալու սովոր չեն։ Եթէ 89 թւականի յեղափոխութիւնը գիւղացիներին

միայն մնար և բուրժուազիան չը սկսէր—գուցէ և անյաջող լինէր և մենք մինչև այժմ էլ 88 թւականի դրութեան մէջ մնացած լինէինք։ Ի՞նչ արած. երկարատև տանջանքները սպանում են մարդու մէջ ամեն համարձակութիւն։ Խիզախ բնաւորութիւնը բաղդաւորութեան մէջ է ստացւում և բացի դրանից, մենք տգէտ, անկի՛րթ էինք բոլորովին...

Պանդոկից 100 քայլ հեռաւորութեան վրայ՝ լսում էինք քըրքիջի, զւարթ կանչերի և գիւղի իշխանների աղաղակները։ Այդտեղ էին Լեգրանը, Լէտիւմիէն, Կօշարը, Կլօդ Հիւրէն, Գօտիէ Կուրդուա և վարպետ Ժանը. մեծ սեղանի շուրջը ժողովւած՝ գոռգոռում էին։ Սեղանի վրայ փայլում էին շշեր, ափսէներ, պատառաքաղ ու գդալ. ամեն ինչ մաքուր-մաքուր լւացած էր ու սրբած։

—Ա՛, ահա և իմ հին ընկեր Ժան-Պիէրը. գոչեց վարպետ Ժանը մեզ դիմաւորելով։

Հագել էր զարբնի բաճկոն՝ խոշոր կոճակներ վրան կարած. գլխին կեղծամ՝ ծոծրակի վրայ խոշոր գանգուրով. լայն վարդիկ, բրդէ գուլպաներ և արծաթեայ զարդերով կիսակօշիկ։ Կարմիր հաստ այտերը ցնցւում էին ուրախ ու սրտանց քրքիջներից։

—Ա՛խ, Ժան Պիէր, իմ խեղճ ընկեր, որքա՜ն ուրախ եմ քեզ տեսնելով. ասաց նա հօրս ուսերին դնելով երկու ձեռքերը—երբ վրադ եմ նայում, իսկոյն յիշում եմ մեր երիտասարդութիւնն ու անցկացրած լաւ օրերը։

—Այո՛, այո՛, պնդեց հայրս արտասուքն աչքերում—յիշո՞ւմ ես թէ ինչպէս ծառայում էինք միասին, Ժա՛ն... յաճախ մտաբերում եմ... լաւ ժամանակներ էին, էլ ետ չեն դառնալու։

Իսկ Լէտիւմիէն՝ եռանկիւնին ծուռ դրած, տօնական սրճագոյն հագուստով, որ կարծես տոպրակ լինէր, վրան հնչուն պողպատէ կոճակներ կարած, կարմիր բաճկոնովը—ընդհատեց նրան ու գոչեց.

—Հ՛է, Ժան-Պիէ՛ր, այդ ժամանակներն արդէն վերադառնում են... անցեալ օրը ամենքս, բոլոր ծերունիներս վիճակ քաշեցինք, այո՛... կեցցէ՛ ուրախութիւնը...

Ու գլխարկը նետեց մինչև առաստաղը... Միւսները ծիծաղեցին ու սիրալիր կերպով աչքերը տնկեցին սեղանի վրայ շարւած շիշերին, ջանալով գուշակել թէ որքա՜ն խմելիք կար այնտեղ։

Սրահի խորքում եղած դուռը բաց էր և երևում էր խոհանոցն իր օջախով. ոչխարի երկու ազդրեր հանդարտ պտտում էին կրակի վրայ և ճարպը ճենճերալով կաթում էր տակի ամանում։ Մօրքուր Կատարինը մեծ սպիտակ գլխազարդով, թևերը վեր քաշած, ետ ու առաջ էր գնում քաղցր կարկանդանով լի մեծ ափսէն ձեռքին. Նիկօլը երբեմն մեծ պատառաքաղով շուռ էր տալիս

կաթսայի մէջ տապակւող կովի մսի կտորները, երբեմն էլ սալաթ շինում: Անուշ հոտը լցրել էր ամբողջ պանդոկը: Մարդու հաւատալը չէր գալ, եթէ լսէին, որ վարպետ Ժանը հիւրասիրում է գիւղացիներին այդպէս: Բայց այդ խնայող ու աշխատասէր մարդը կանգ առնել չը գիտէր արտաքոյ կարգի հանգամանքներում: Իսկ այստեղ նա մի հարւածով երկու նպատակ էր որսում. նախ՝ լաւ խնջոյքով շնորհակալ էր լինում իր բարեկամ Շօվէլին պատգամաւոր ընտրողներից և երկրորդ՝ յարգանք էր ձեռք բերում ամբողջ շրջանում: Մեր ժամանակներում ամեն հասկացող բուրժուա այդպէս էր վարւում. դա ամենալաւ միջոցն էր վարկ վաստակելու: Խելք ունէին և կարողանում էին ժողովրդի գլուխն անցնել. իսկ երբ որդիները ժլատութիւնից, հպարտութիւնից և տխմարութիւնից դրդւած՝ կամենում էին զատւել ժողովրդից և ջանալ ազնւականութեան հովեր ստանալ—քթով էին մնում:

Լուսամուտի մօտ ժողոված ծերունիները խօսակցում էին ընտրութիւնների, ժողովների մասին. և ամեն անգամ երբ նոր հիւր էր ներս մտնում՝ կանչում էին.

—Ա, Պլէչ... Ա՛, Րիգօ... այստե՛ղ, այստե՛ղ եկէք... Ապա՛, քէֆներդ ինչպէ՞ս է...

Վալէնտինը հեռու կանգնել, ժպտում էր ու աչքով անում ինձ: Սակայն սկսւող խնջոյքը, ըստ երևոյթին, նրա քէֆին էլ էր գալիս և յաճախ քիթը դէպի խոհանոցն էր դարձնում:

Ճիշտ ժամը 12-ին, Նիկօլը խնդրեց ինձ, որ Շօվէլին կանչելու գնամ: Ուզում էի գնալ, երբ ինքը—Շօվէլը յայտնւեց շեմքի վրայ և հանդարտ՝ սրահ մտաւ Մարգարիտի հետ:

Ամենքն իսկոյն կանչեցին.

—Ահա և նա... վերջապէ՛ս...

Ինչպէս միշտ, Շօվէլը իր բրդեայ բաճկոնով ու գորշ շալվարով էր: Ժպտալով սեղմեց ամենքի ձեռքը: Այնուամենայնիւ այլևս առաջւան Շօվէլը չէր. այլ ես ոստիկանապետի օգնականը չէր համարձակւիլ նրա օձիքից բռնել: Մեց գնացող 15 պատգամաւորներից մէկն էր և դա կարծես դրոշմւած լինէր դէմքի վրայ: Մանր սև աչքերը աւելի էին փայլում, իսկ շապկի սպիտակ մաքուր օձիքը հասնում էր գրեթէ մինչև ականջները:

Երբ երկարահասակ Լէտիւմիէն, որ սիրում էր ձևականութիւններ, ուզեց ճառի պէս մի բան արտասանել, Շօվէլը ծիծաղելով ընդհատեց նրան.

—Թո՛ղ, Լէտիւմիէ. նայի՛ր, սուպը բերին. ի՞նչ էլ անուշ բուրում է...

Եւ իսկապէս, մօրքուր Կատերինը ներս բերեց մեծ ամանով

սուպը և հանդիսաւորապէս դրեց սեղանի վրայ:

—Նստէք, բարեկամնե՛ր, նստէք, դէս ու դէն ընկաւ վարպետ Ժանը—Լէտիւմիէ, քաղցրեղէնի ժամանակ ճառ կը խօսես... Քաղցած փորը առակ չի սիրում—այդ լաւ գիտես: Այստեղ, Կօշա՛ր, ահա՛ այստեղ նստիր. իսկ դո՛ւ, Շօվէ՛լ, այնտեղ, նախագահի տեղում... Վալէնտին, Հիւբէ, Ժան-Պիէր, համեցէք...

Երբ ամենքի տեղը յայտնւեց—նստեցին: Հայրս, Վալէնտինն ու ես դէմ առ դէմ էինք նստել վարպետ Ժանին, որ սուպը լցնել սկսեց: Բարձրացրեց խուփը և սենեակի մէջ տարածւեց անուշ հոտ. իսկ շոգին, ամպի նման բարձրացաւ դէպի առաստաղ: Ամենքն սկսեցին իրենց ափսէն ներկայացնել:

Կեանքումս չէի ճաշել այդպէս. կատարելապէս հիացած էի. հայրս աւելի:

—Ամենքի մօտ մի շիշ գինի կայ. ասաց վարպետ Ժանը—ինքներդ լցրէք:

Իհարկէ, այդպիսի լաւ սուպից յետոյ, շիշերը բացւեցին ու բաժակները լցւեցին: Մէկը կամեցաւ խմել շրջանային պատգամաւորների կենացը, բայց որովհետև գինին Ալզասեան թոյլ խմիչք էր, վարպետ Ժանը բողոքեց.

—Ո՛չ, ո՛չ, սպասեցէք, գոչեց նա—մեր կենացը պիտի լաւ գինիով խմել և ո՛չ թէ Ալզասեան հասարակ խմիչքով:

Ամենքը համաձայնւեցին: Իսկոյն մէջ տեղ եկաւ խաշած միս, վրան գարօս (մաղդանոս) ցանած. ամենքը վերցրին խոշոր կտորներ:

Լէտիւմիէն յայտարարեց, որ ամեն բանւոր—լինի հողագործ կամ արհեստաւոր—պիտի ճաշելու ունենայ կէս գրւանքայ այդպիսի միս և մի բաժակ էլ գինի: Փայտահատ Կօշարը պնդեց նրա ասածը: Յետոյ խօսակցութիւնը ուզում էր քաղաքականութեան վրայ դառնալ, բայց տաք-տաք երշիկը թթու կաղամբով մէջ տեղ եկաւ և բոլորի միտքը ուրիշ ուղղութիւն բռնեց:

Մարգարիտը և Նիկօլը ոտքի վրայ, սեղանի շուրջը, վերցնում էին դատարկ շիշերը, դնում լիքը. իսկ մօրքուր Կատէրինը կերակուր էր մատուցանում: Ժամը մէկին սեղան բերին ոչխարի միս և հին—Րիբօպիէրի գինի: Քէֆը սկսեց աւելի ու աւելի մեծ կերպարանք ստանալ... Ամենքը բաւականութեամբ միմեանց էին նայում. Կօշարը ասում էր.

—Չէ՞ որ մենք էլ մարդ ենք, մենք էլ պիտի մարդկային իրաւունքների տէր լինենք. թող փորձի մէկն այժմ ինձ ասել, թէ ճիշտ չէ այդ և, տեսէք ես ի՞նչ կը դնեմ գլխին...

Իսկ ծեր թնդանօթաձիգ Գօտիէ Կուրդուան կանչում էր.

—Եթէ մինչև այժմ մարդիկ չենք եղել, պատճառն այն է, որ

ոչ թէ լաւ գինին և լաւ կերակուրը մերն է եղել, այլ ուրիշներինը։ Զանազանութիւնը ահա թէ ինչումն է։ Է՜հ, կռւից առաջ միշտ լա՜ւ շողոքորթում էին մեզ. ինչե՜ր, ինչե՜ր չէին խոստանում—ոսկեայ սարե՜ր... Իսկ հէնց որ գործը վերջանում էր, նորից մէջտեղ էին գալիս միայն կարգապահութիւն և սրի հարւածներ... Խայտառակութիւն է ծեծել զինուորին, այո. նոյնպէս և խայտառակութիւն է սպայի աստիճանի չը հասցնել նրան, ով քաջութեան հրաշքներ է գործում...

Լէտիւմիէն սկսում էր ամեն ինչ վարդագոյն տեսնել։

—Այսուհետև վերջ մեր բոլոր տանջանքներին... աղաղակում էր նա—մեր պահանջների ցանկը պատրաստ է. այժմ բոլորը կտեսնեն թէ ի՞նչ է մեր ուզածը. մեր ողորմած թագաւորն էլ կը հասկանայ և կասի.—այս մարդիկ իրաւացի են, հազար անգամ իրաւացի. նրանք պահանջում են հարկերի, օրէնքի առաջ հաւասարութիւն. իսկ չէ՞ որ արդար է այդ։ Մի՞թէ մենք բոլորս էլ ֆրանսիացիներ չենք. իսկ եթէ դա այդպէս է, ուրեմն բոլորս էլ հաւասար իրաւունքների տէր ենք, հաւասար հարկ վճարող... Գրողը տանի, չէ՞ որ սա պարզ է ցերեկւայ նման։

Խօսում էր նա շատ լաւ և բերանը մինչև ականջները բաց, խորամանկութեամբ՝ աչքերը կիսախուփ, գլուխը ետ և երկար ձեռքերը բարձրացրած՝ զգացմունքի առատութիւնից։ Ամենքը հաւանութեամբ լսում էին նրան. մինչև անգամ հայրս մի քանի անգամ գլխովը համաձայնութեան նշաններ արաւ և կամաց՝ ասաց.

—Խելացի է խօսածը. ճշմարիտ է դա. բայց աւելի լաւ է լռել, Միշէլ. ոչ ոք անսխալական չէ։

Եւ նա ամեն րոպէ դուռն էր նայում, կարծես սպասելով թէ ահա հիմա ներս կմտնեն շրջիկ ոստիկանների պաշտօնեաները։

Մինչ այդ, վարպետ Ժանը բաժակները հին գինիով լցրեց և դարձաւ ներկայ եղողներին այսպիսի խօսքերով.

—Խմենք, բարեկամներ, Շովէլի կենացը, որ կարողացաւ բոլորից աւելի լաւ պաշտպանել մեր իրաւունքները շրջանական ժողովում։ Թո՛ղ ապրի նա երկար տարիներ. թող լինի միշտ երրորդ դասակարգի իրաւունքների պաշտպանը. ցանկանք որ միշտ այնպէս խօսի, ինչպէս մինչև այժմ խօսել է։ Նրա կենացը...

Բոլորը ուրախ-ուրախ, սեղանի վրայով բաժակները պարզեցին Շովէլին՝ ծիծաղելով և աղաղակելով.

—Մեր պատգամաւորների, վարպետ Ժանի և Շովէլի կենացը...

Մինչև անգամ մեծ սրահի պատուհանի ապակիները դղրդացին նրանց աղաղակներից։ Անցորդները կանգ էին առնում և ե-

րեսները ապակիին կպցնելով, նայում էին ներս ու անշուշտ մտածում.

—Ահա՛ թէ ով է ուրախանում, իսկապէս ուրախանում։

Երբ բոլորը նստեցին, տանտէրը էլի լցրեց բաժակները, մօրքուր Կատերինը Նիկօլի հետ սեղան բերին սերով լցրած մեծ գաթաներ, իսկ Մարգարիտը հաւաքում էր մսի երշիկի և սալաթի մնացորդները։

Բոլորի հայեացքը Շովէլին դարձաւ. ամենքն սպասում էին նրա խօսելուն։ Իսկ նա հանգիստ իր տեղումը նստած՝ միայն այտերն էին գունատւել և շրթունքները պինդ սեղմել։ Կարծես մի աչքն էլ ծուռ էր նայում։ Մտախոհ՝ բաժակը բռնել էր ձեռքը։ Անտարակոյս, Բիբօպիէրի գինին մի քիչ գլխին էր խփել, որովհետև, փոխանակ բաժակը բարձրացնելու ու փոխադարձ կենաց առաջարկելու, յանկարծ սկսեց խօսել։ Նրա ամեն մի խօսքը պարզ հնչում էր դահլիճում։

—Այո, առաջի քայլը արուած է—ասաց նա—բայց յաղթութիւն տօնելու համար դեռ վաղ է. դեռ շա՜տ ու շատ բան ունենք անելու, մինչև մեր իրաւունքներն ստանալը։

«Պիտի ոչնչացնել արտօնութիւնները, անձնական տուրքը, կողմնակի տուրքերը (aides), աղահարկը, ճանապարհի մաքսը»...

«Այս ամենը քի՛չ է միթէ։ Մի՛ կարծէք թէ մեր թշնամիները հեշտութեամբ բաց կը թողնեն ձեռքներիցն այն, ինչ որ մի անգամ խլել են. ո՛չ. նրանք կը կռուեն, արդարութեան դէմ կը պաշտպանուեն։ Հարկաւոր կը լինի ստիպել նրանց զիջանելու. նրանց, որ ապրում են ռոճիկով և այս կամ այն կերպ ճգնում են ազնուականութեան հասնել։ Բայց այդ էլ, բարեկամներս, կլինի դեռ առաջին քայլը, մեր գործի կէս մասը։ Ե՛ս անձամբ, մտածում եմ, որ երրորդ դասակարգը կը տանի յաղթութիւնը՝ այս առաջին կռւում. ժողովուրդը, որ իր ուսերի վրայ է տանում ամեն ծանրութիւն, պիտի կարողանայ թիկունք լինել իր պատգամաւորներին...

—Այո, այո, մենք թիկունք կը լինենք նրանց։ Մեր կեանքը չենք խնայիլ նրանց համար. բացականչեցին բռունցքները սեղմելով երկարահասակ Լէտիւմիէն, Կօշարը, Հիւրէն և վարպետ Ժանը.—մենք կը տանենք յաղթութիւնը. մենք ուզում ենք յաղթել...

Շովէլը մինչև անգամ չը շարժւեց։ Երբ աղմուկը դադարեց, դարձեալ շարունակեց խօսել. կարծես ոչ ոք նրան չէր էլ ընդհատել.—

—Ասենք թէ մենք յաղթող լինենք, ոչնչացնենք ժողովրդի վրայ ծանրացած ամեն անարդարութիւն, որովհետև դրանք չափազանց զայրացուցիչ և ակներև են։ Բայց ի՞նչ կտայ մեզ այդ ամենը, եթէ յետոյ, Երեսփոխանական ժողովի ցրւելուց յետոյ,

երբ գտնուի միջոց պարտքերը փակելու—ազնուականները նորից ջանան վերստանալ իրենց իրաւունքներն ու արտօնութիւնները: Ձէ՞ որ այդպէս պատահել է արդէն: Երեսփոխանական ժողովը առաջին անգամ չէ, որ գումարւում է: Բայց ո՞ւր է այն ամենը, ինչ որ նա ժողովրդի օգտին վճռել է: Վաղուց է որ գոյութիւն չունի: Ոչ, մինչև չունենանք այն ոյժը, որի վրայ յենւելով մենք կարող ենք մի անգամ ոչնչացրած արտօնութիւնները վերականգնեցնելուն դէմ դնել—մենք ոչնչի չենք հասնի: Իսկ այդ ոյժը—ժողովուրդն է, մեր զօրքը. բաւական չէ ցանկանալ մի օր, մի ամիս, մի տարի. պէտք է ցանկանալ միշտ, պէտք է խանգարել զանազան սրիկաների և խաբեբաների, որ կամաց ու ծածուկ, ծուռ ճանապարհով չը վերականգնեն այն, ինչ որ երրորդ դասակարգը ժողովրդի օգնութեամբ ոչնչացրել է: Պէտք է զօրքն էլ մեր կողմը լինի: Իսկ դրա համար, հարկաւոր է որ ամենավերջին զինուորը, ինչպէս և ամեն մի զինուորական՝ կարողանայ միմիայն իր խելքի և քաջութեան շնորհիւ հասնել մարաջախտի և հրամանատարի աստիճանին և այլն: Հասկանալի՞ է այս...

—Տօվէլի կենա՜ցը, աղաղակեց Գոտիէ Կուրդուան: Բայց Տօվէլը ձեռքը պարզեց, որ չը թողնի միւսներին էլ միանալու նրան և շարունակեց.

—Յաջողութեան համար ամենից առաջ անհրաժեշտ է ուսում. մեզ պէտք է ուսանիլ. մենք դեռ ոչինչ չը գիտենք. մեզ դժուար չէ շեղել ուղիղ ճանապարհից... Ահա թէ ինչու վախում են մեզ ուսում տալուց և անաստուածներ են կոչում բոլոր նրանց, ով պընդում է ժողովրդին լուսաւորել—կրթելու անհրաժեշտութեան վրայ: Ահա թէ ինչո՛ւ նրանք, որոնք հոգում և աշխատում են մեր լուսաւորութեան համար, ստիպուած են փախչել մեր հայրենիքից և ապաստանել Զւիցէրիա, Հոլանդիա, Անգլիա... Քանի՜սները մեռան, քանի՜սները կորուեցան... Բայց ո՛չ, ինչ եմ ասում ես. այդպիսի մարդիկ չե՛ն մեռնում, նրանք միշտ ժողովրդեան մէջն են, միշտ պատրաստ՝ նրան նեցուկ դառնալու. պէտք է միայն կարդա՛լ նրանց ու հասկանալ... Ահա նրա՛նց կենացն է, որ առաջարկում եմ խմելու այժմ...

Տօվէլը պարզեց դէպի մեզ իր բաժակը և մենք բոլորս միաձայն գոռացինք.

—Ազնի՜ւ մարդկանց կենացը...

Շատերը չըմբռնեցին թէ իսկապէս այդ ինչ տեսակ մարդկանց մասին էր խօսքը, սակայն գոռացին և այնպէս լաւ գոռացին, որ մօրքուր Կատերինը վազեց մեզ խնդրելու՝ քիչ կամաց կանչել, որովհետև գիւղի կէսը թափուել էր լուսամուտների առաջ

և շատերը, ո՜վ գիտէ, կը կարծէին թէ այստեղ ապստամբութիւն են սարքում Թագաւորի դէմ:

Վալէնտինը թռաւ տեղից և դուրս գնաց. իսկ հայրս այնպիսի անհանգիստ հայեացքներ էր ուղղում դէպի ինձ, որ կարծես հարցնում էր թէ՝ «ժամանակ չէ՞ արդեօք դուրս գնալու այստեղից»:

—Լա՛ւ, լա՛ւ, Կատերին. ձայնեց վարպետ Ժանը—ինչ որ ուզում էինք, բոլորը ասացինք. իսկ հիմա պըծանք, էլ չենք խօսի:

Ամենքը լռեցին: Կաղինի և խնձորի զամբիւղը ձեռքից ձեռք էր անցնում:

Այդ միջոցին փողոցից լսեց վինի (երաժշտական գործիք) խուլ ձայն:

—Է՛ Է. ասաց Լէտիւմիէն—մեր Մաթուսաղան կը լինի:

—Հիանալի. բացականչեց վարպետ Ժանը—կանչենք, շա՜տ լաւ ժամանակ եկաւ:

Մարգարիտն իսկոյն վազեց և մի րոպէից յետոյ ներս բերեց ծեր Մաթուսաղային: Ո՞վ չէր ճանաչում նրան մեր կողմերում. իսկական անունը Դօմինիկ Սէն-Ֆօվէր էր: Բոլոր մինչև այժմ ապրողները ձեզ կասեն, որ նրանից ծեր մարդ երբէք չի եղել: Անշուշտ 100 տարեկան կը լինէր. դէմքը դեղին, շա՜տ դեղին և կաշուի նման կնճռած. արդէն հազիւ նշմարւում էր դէմքի վրայ քիթը, ծնօտը. իսկ փոքրիկ աչքերը բոլորովին ծածկուել էին խոր, կախ ընկած յօնքերի տակ: Գլխին ունէր մեծ, մոխրագոյն գլխարկ աքաղաղի փետրով զարդարուած և առջևի շուրթը բոլորովին բարձրացրած. Նրա քաթանէ լայն վերնազգեստի թևերը և վարդիկը բոլորովին բզիկ-բզիկ՝ կապկապած էին միմեանց այնպէս, որ նմանում էր երեխայի բարուրի: Ծերունին հնամեայ երգեր էր նւագում. հին Շւէդական արշաւանքների ժամանակւայ երգեր: Նւագածները բոլորն էլ այնպէս տխուր էին, որ լսելիս՝ մարդու լացն էր գալիս:

—Ա՛, Մաթուսաղա՛... բարևեց նրան վարպետ Ժանը—բա՛րի եկար, բարի եկար...

Ու պարզեց նրան մի մեծ բաժակ գինի: Ծերունին վերցրեց, գլուխ տուաւ ամենքին և աչքերը փակելով՝ սկսեց կում առ կում խմել: Մօրքուր Կատերինը, Նիկօլը և Մարգարիտը կանգնել էին հեռու, իսկ մեր բոլորիս աչքը ծերունու վրայ էր:

Վարպետ Ժանը բաժակը ետ վերցնելով՝ խնդրեց նրան մի բան երգելու, բայց ծերունին գլուխը ցնցեց. վաղո՜ւց, շատ վաղո՜ւց էր, որ չէր երգում, միայն նւագել կարող էր: Եւ նա սկսեց մի այնպիսի հին ու տխուր մեղեդի, որ մեզնից ոչ ոք չիմացաւ

Թէ ինչ եղանակ էր այն։ Միմեանց էինք նայում, երբ յանկարծ հայրս աղաղակեց.

—Ա՛խ, բայց դա «Գիւղացիներ» երգն է...

Ամենքն իսկոյն կանչեցին.

—Այո, այո, «Գիւղացիներ» երգն է դա։ Ժան-Պիէր, երգիր մէկ։

Ինձ համար նորութիւն էր, որ հայրս երգում էր. երբէք չէի լսել նրան։

—Բոլորը մոռացել եմ. ասաց նա—չը գիտեմ սկիզբն անգամ...

Բայց նրան խնդրեցին, ստիպեցին. խնդրեց Շօվէլն էլ. իսկ վարպետ Ժանը պնդում էր, որ անցեալներում իր Ժան-Պիէր բարեկամի նման երգիչ անգամ չը կար։ Վերջ ի վերջոյ հայրս կարմրելով և աչքերը խոնարհած՝ զիջաւ, կամացուկ հազաց ու ասաց.

—Է՛հ, քանի որ ուզում էք... կը փորձեմ... գուցէ և մի բան յիշեմ...

Ու սկսեց երգել։

Այնքան տխուր ու ճնշող էր այդ մելամաղձոտ եղանակը, որ կարծես աչքի առջև էին գալիս մեր հայրերն ու պապերը, որոնք հերկում էին հողը արօրով և եզների տեղ իրենց թշւառ կանանցը լծում... Աչքի առջև էին գալիս անցեալ տխո՛ւր պատկերները—կողոպտիչ զինւորները խլում են գիւղացիների հունձը, այրում դէզերը, կանանց և աղջկանց առևանգում... մի առ մի պատկերանում էին սովը, հիւանդութիւններն ու անվե՛րջ, անվե՛րջ կախաղաններ ու թշւառութիւններ... Ու միմեանց ետևից, շարան-շարան ձգւում է այդ բոլորը անվե՛րջ, անծա՛յր ու սոսկա՛լի։

Երրորդ անից յետոյ, չը նայելով գինու արբեցուցիչ ազդեցութեանը, գլուխս դրի սեղանին և սկսեցի լալ, լա՜լ հեկեկալով։ Լէտիւմիէն, Հիւրէն, Կօշարը, վարպետ Ժանը ու մի քանի ուրիշները ընկերակցեցին երգին այնպէս, որ կարծես մօտիկ հանգուցեալի վրայ ողբում էին, սգում...

Մարգարիտն էլ երգում էր։ Նրա ձայնը հնչում էր այնպիսի կնոջ ողբի նման, որին լծել են գութանի և կամ առևանգել—տանում են։ Սոսկալի, մազերը փշաքաղեցնող, աղեխարշ երգ էր այդ, որ ամենքին յուզեց—կարկամեցրեց։

Ու պէտք էր տեսնել թէ ո՛րպէս գունատւել էին ամենքը։ Շօվէլը, որ նստել էր լուսամուտի առաջ, սեղանի ծայրին, ատամներն էր կրճտեցնում և գայլի հայեացք էր ստացել։

Վերջապէս լռեց հայրս, բայց երաժշտական գործիքը դեռ հնչում էր խուլ ձայնով։

—Օ՛, լա՜ւ, լա՜ւ երգեցիք, Ժա՛ն-Պիէր. ասաց Շօվէլը, այնպէս

երգեցիք, ինչպէս կերգէին մեր թշւառ հայրերն ու պապերը. որովհետև ինքներդ էլ կրել էք ու ձեր կաշւի վրայ փորձել նրանց կրած անհուն տանջանքները... Օ՛հ, որքա՛ն, որքան հարիւրաւոր տարիներ մեր նախնիքները, կին, մանուկ ու տղամարդ՝ ճնշւել ու մաշւել են սոսկումների մէջ...

Եւ որովհետև ամենքը տխուր՝ լռում էին—աղաղակեց յանկարծ.

—Իսկ այժմ, վե՛րջ այդ բոլոր հին երգերին, այժմ մեզ ուրի՛շ երգ է հարկաւոր, սկսւում է ուրի՛շ կեանք...

Ամենքս, առաջինը ես, ոտնեցինք տեղներիցս ու բացականչեցինք միաձայն.

—Այո, այո, պիտի ուրիշ կեանք սկսել... չափազանց երկար ու շա՜տ եղան մեր տանջանքները...

Վարպետ Ժանը իսկոյն իր բամբ ձայնո՛վ սկսեց դարբինների երգը։ Վալէնտինը, որ նոր էլի ներս էր մտել, նաև ես՝ ընկերացանք և այս երգը փոքր ինչ զւարթացրեց ամենքին, թէև դա էլ տխուր էր. բայց գոնէ մէջը ոյժ, ըմբոստացում կար...

Անշուշտ, շատ բան կար երգի խօսքերի այլաբանութեան մէջ և ամենքի դէմքը փայլեց ժպիտով...

Շատ ուրիշ երգեր էլ դեռ երգւեցան այդ օրը և լա՜ւ երգեր, սակայն հօրս երգածը երբէք չեմ մոռանալ և այժմ իսկ, երբ ամեն անգամ յիշում եմ, մտածում եմ իսկոյն.

—Օ՛, մե՛ծ, սո՛ւրբ յեղափոխութիւն, այն գիւղացին, որ սիրտ կունենայ մերժել քո օգուտները, թող սովորի երգել իր հայրերի ահաւոր տանջանքների երգը և եթէ այդ երգն էլ չի օգնիլ, թող ինքը, որդին ու թոռները երգեն ճորտութեան մէջ... Այն ժամանակ գուցէ կըմբռնեն թէ ինչ մեծ բարօրութիւն բերաւ նրանց յեղափոխութիւնը...

Այդ օրը շատ ուշ տուն վերադարձանք, իսկ միւս օրը 1789 թւի ապրիլի 10-ին, Շօվէլը Մէց գնաց։ Շատ չէր մնում բոլոր գաւառակարգերի ընդհանուր մեծ ժողովի նիստերին։

XV

Շօվէլի մեկնելուց յետոյ, մի քանի օր շարունակ խօսակցութիւնը գիւղում միմիայն Մէցի շրջանական ժողովի, այլ և մասնաւորապէս Երեսփոխանական ընդհանուր ժողովի վրայ էր դառնում։ Եւ այնպի՛սի վէճեր էին ծագում, որ կեանքումս չէի տեսել։

Որովհետև Թագաւորի հրամանը տրամադրում էր, որ երրորդ

դասակարգի պատգամաւորները կրկնապատիկ լինեն, այսինքն այնքան ներկայացուցիչ պիտի ունենայինք Երեսփոխանական ժողովում, որքան որ երկու միւս դասակարգերը միասին պիտի տային—ուստի և խնդիր էինք բարձրացրել ձայնատուութիւնը կատարել ոչ թէ ըստ դասակարգերի, այլ ընդհանուր ձեւով. այն ժամանակ մենք անշուշտ կարող էինք առանձնաշնորհութիւնները վերացնելու յաջողել՝ որքան և դիմադրէին ազնւականութիւնն ու կղերը։ Բայց վերջին երկու դասակարգը, որ անշուշտ ցանկանում էին պահել իրենց նախկին իրաւունքները, ուզում էին ձայնատւութիւնը ժողովի մէջ կատարել տալ ըստ դասակարգերի։ Այդպիսով, համոզւած էին, որ ձայներ հաւաքելու ժամանակ, միացած մեր դէմը դուրս կը գային և առաւելութեամբ երկու ձայն ընդդէմ մէկի՝ կը խեղդէին մեր ձայները։

Պէտք էր տեսնել թէ ինչպէ՜ս էին տաքանում վարպետ Ժանը, Լէտիւմիէն, Կօշարը և գիւղի միւս երևելիները, որ երեկոյեանները հաւաքւում էին պանդոկի բագը, հին մեծ կաղնու տակ։

Մի քանի օր էր, շոգեր էին սկսել այնպէս, որ չը նայելով Ապրիլ ամիսը լինելուն, երեկոյեանները նստարաններն ու սեղանները բաց էին դուրս տանում՝ թարմ օդ ծծելու համար։

Միայն ժամը 8-ին, լուսնի դուրս գալու հետ, կարելի էր զով օդ ունենալ և ի հարկէ ամենքը շտապում էին վայելել գիշերային թարմութիւնը՝ նստած մի շիշ գինու կամ խնձորի օշարակի (սիդր) առաջ։

Փողոցի երկարութեամբ, դռների առաջ, կանայք ու աղջիկներ նստած՝ մանում էին և զւարթութեամբ խօսակցում։ Ամեն կողմ, մօտ թէ հեռու, լսւում էին ծիծաղի, խօսակցութեան, երգի և շների ձայներ. դրացիներն էլ իրենց կարգին՝ ականջ էին դնում մեր վէճերին. բայց ո՞վ էր նրանց ուշադրութիւն դարձնողը. թող լսէին. այլևս չէինք վախենում։

Մարգարիտն էլ գալիս էր երբեմն և մենք երկուսս նստում էինք մի ծառի տակ ու խօսակցութեան աղմուկի մէջ, միասին կատակներ անում ու ծիծաղում։ Երկարահասակ Լէտիւմիէն խճ... միշտ տաքացած ժամանակ բռունցքով հարւածներ էր տեղում սեղանի վրայ և գոռում.

—Վերջացա՛ւ... այլ ևս անկարելի՛ է այսպէս... ժամանա՛կ է յայտարարել որ ամենքս, ամենքս բողոքում ենք...

Մօրքուր Կատերինը կանչում էր նրան մէկ մէկ.

—Աստծոյ սիրուն, Լէտիւմիէ, սեղանը չը ջարդէք. խօ նա մեղաւոր չէ՞, որ ուզում են ձայնատւութիւնը ըստ դասակարգի անել...

Այդպէս էին գնում գործերը։ Յիշում եմ, երբէք այդքան եր-

ջանիկ օրեր չեմ եղել։ Մարգարիտի հետ նստած, չը համարձակւելով սէրս խոստովանել նրան, անհունապէս բաղդաւոր էի զգում ինձ։

Մի օր երեկոյեան ժամը 8-ին, ըստ սովորականին նորէն բագումն էինք նստել։ Լուսինն արդէն ծագել էր և լոյսովը ողողում էր ծառերը, Լէտիւմիէն գոռում էր, իսկ Կօշարը, քիթը իր մեծ մօրուքի մէջ կոխած և բուի հայեացքը բևեռած խօսողի վրայ՝ ծխամորճն էր ծծում յենւած սեղանին։ Ամենքի քէֆը տեղն էր. ոչ ոք չէր սպասում փոթորկի, իսկ Կօշարը ամենից պակաս, չը նայելով որ այդ օր նա մի ինչ որ կասկածելի գործի մէջ էր կոխել քիթը։

Փայտահատութիւնը նրան շատ եկամուտ չէր բերում. դրա համար էլ, ինչ արած, երբեմն գաղտնի անցնում էր մաքսատան սահմանը, Գրաւֆտալում մեծ բեռներով ծխախոտ առնում և լաւ գնով բերում ծախում մեր կողմերը։

Այդպէս, վէճերը սպառնում էին, ինչպէս միշտ, տևել մինչև ժամը 10-ը, երբ յանկարծ փողոցի դուռը բացւեց, մի ինչ որ մարդ—հագուստից դատելով բուրժուա—ներս մտաւ բագը հետը շրջիկ ոստիկանութեան երկու պահապաններ ունենալով։ Կանգ առան ու սկսեցին մէկ-մէկ զննել ամենքիս։ Գերմանական սահմանի վրայ եղած մաքսատան պաշտօնեան էր, Մատիւրիէն Պուլէ. մի հաստ, եռանկիւնաձև գլխարկով մարդ՝ քիթը վեր ցցած, կրկնակի ծնօտով, կովի աչքերով և հաստ փորով. յայտնի շատակեր ու աղտոտ մարդ, որ մի կոպէկի համար պատրաստ էր Աստծուն էլ մատնել եթէ հնարք ունենար։ Սրբութիւն չը կար նրա համար. խորամանկ էր և լաւ գիտէր ետևից ընկնել ու գտնել մաքսանենգների։ Գիշեր ու ցերեկ միմիայն զբաղւած էր մատնութիւններով. այնպէս, ինչպէս ուրիշները գործով ապրելու համար։

Պուլէի ետևից քայլում էին, ինչպէս ասացի, շրջիկ ժանդարմներից երկու հոգի, իրենց սպիտակ նշանազգեստներով ու սրերով. երկու չեչոտ հսկաներ։

Սեղանից չորս քայլ հեռու, Պուլէն կանգ առաւ և տեսնելով Կօշարին, ինքնագոհ դէմքով ասաց.

—Ա՛, ահա և նա, իմ լա՛ւ պարոնս... այժմ այլևս ձեռքիցս պրծնել չես կարող...

Բոլորս քարացանք. գիտէինք շատ լաւ, որ Պուլէն իբր կաշառք, ձրի ծխախոտ էր վերցնում նոյն իսկ Կօշարից։ Բայց այդ դատարկ բան էր նրա համար։ Ուստի և իսկոյն դարձաւ ժանդարմներին և ասաց.

—Բռնեցէք դրան. հէնց նա ինքն է։

Ժանդարմները յարձակւեցին Կօշարի վրայ։ Խեղճ մարդը

սաստիկ վախեցած՝ գետին ձգեց չիբուխը և սկսեց գոռալ.

—Ի՞նչ էք ուզում ինձնից, ես ի՞նչ եմ արել։

Զգում էինք փոթորկի գալը և վախեցած՝ միմեանց էինք նայում։ Բանը քանի գնում՝ վատանում էր։

—Մե՞նք, ասաց ծիծաղելով Պուլէն—եկել ենք վերցնելու ծըխախոտի այն երկու փախցրած տոպրակները, որ երէկ Գրաուֆտալից բերիր և այժմ գտնւում են քո ամբարում, դռնի աջ կողմը, խողովակի մօտ... Հասկացա՞ր այժմ։

Պարզ էր, որ մատնել էին Կօշարին. ամենքիս սիրտը ճնշւեց. Թիապարտութեան հոտ էր բուրում գործից։

Ոչ ոք շարժւել իսկ չը յանդգնեց։ Դիմադրել այդ ժամանակներում իշխանութեանը՝ աւելի վտանգաւոր էր քան այժմ. այն ժամանակ դիմադրողների ո՛չ միայն հողն էին խլում, փողն ու տունը, այլ և իրեն էլ Թիապարտութեան տանում և անհետ կորցնում։ Այդպիսի դէպքեր շատ էին եղել լեռներում. նոյն իսկ մեր գիւղում. պառաւ Ժընէւիէվ Պուկոտի որդուն այդպէս էին արել։ Հէնց նոյն ինքն այդ Պուլէի մատնութեամբ ամբաստանած իբր մաքսանենգ աղ ծախող, այդ օրւանից անհետ կորցրել էին։ Ասում էին որ տարել էին նրան հեռու՝ Հնդկական գաղութները։ Ժնէւիէվի էլ ամբողջ ունեցածը գրաւել էին դատական ծախսերի փոխարէն, իսկ ինքը—պառաւը հալ ու մաշ, կիսախելագար, մուրալով շրջում էր...

Երևակայեցէք ուրեմն թէ որքա՜ն մեծ պիտի լինէր մեր սոսկումը։

—Ապա՛, կանչեց Պուլէն ժանդարմներին—ի՞նչ էք կանգնել, տարէք դրան։

Բայց Կօշարը պինդ բռնեց սեղանից ու խեղդւած ձայնով կանչեց.

—Ո՛չ, չեմ գնալ, չե՛մ գնալ...

Երկարահասակ Լէտիւմիէն լիովին կորցրեց խօսելու ախորժակը. քարացած ու պապանձւած կանգնել էր մի կողմ։

Այդպէս է միշտ. բաւական է որ այդ կանչողները ժանդարմների կամ ոստիկանների սւերը տեսնեն—իսկոյն կքւում ու ծռւում են, մկան պէս կուչ գալիս։ Իսկ ընդհակառակն, նրանք, որոնց մասին և ոչ ոք չէր կարող կասկածել, մէկէն համարձակութիւն ու քաջութիւն են արտայայտում։

Վերջապէս, բաւական ջանքերից ու մի լաւ ծեծից յետոյ, որով ժանդարմները առատութեամբ հիւրասիրեցին Կօշարին, նրանց յաջողւեց փայտահատին սեղանից պոկ տալ։ Պուլէն մինչ այդ՝ ասում էր.

—Ապա՛, ապա մէկ էլ քաշէք... այդպէ՛ս, ահա այդպէս։

Բայց այդ միջոցին, յանկարծ, ընդհանուր լռութեան մէջ հնչեց մի ձայն—Մարգարիտի ձայնը.

—Պարո՛ն Պուլէ, զգուշացէք. դուք իրաւունք չունի՛ք այդ մարդուն ձերբակալել տալու...

Ամենքը, թէ սեղանի մօտից և թէ փողոցից, վարպետ Ժան Լերուն, Լէտիւմիէն, Նիկօլը՝ սոսկումով դարձան և վախից գունատ, խղճալով՝ Մարգարիտին նայեցին։ Նրա ձայնը ամենքը ճանաչեցին և ոչ ոքի հաւատալը չէր գալիս, որ յիրաւի այդ աստիճանի յանդգնութեան կարող էր հասնել նա։ Ամենքը դողացին։ Հաստ Պուլէն քիթը ցցելով, ուրիշների նման զարմացած՝ նայեց խօսողին. երբէք այդպէս արգելքի չէր պատահել նա։

—Այդ ո՞վ է խօսողը, գոչեց—այդ ո՞վ է համարձակւում բողոքել իշխանութեան դէմ։

—Ես եմ, պարո՛ն Պուլէ, ասաց Մարգարիտը անվրդով՝ իր տեղից—Շօվէլի, Մէցի ընդհանուր ժողովում երրորդ դասակարգից նշանակւած պատգամաւոր Շօվէլի աղջիկը։ Ձեր արածը խայտառակ բան է. ձերբակալել մի յարգելի մարդու առանց ոստիկանապետի յատուկ հրամանագրի։ Կատակներ մի՛ անէք օրէնքի հետ, պ. մաքսախոյզ...

Եւ նա կանգնեց ու աւելի մօտեցաւ պաշտօնեային և երկու ժանդարմներին, որոնք դարձան և ծուռ-ծուռ նայում էին աղջկան՝ առանց բաց թողնելու Կօշարին։

—Մի՞թէ դուք չը գիտէք Թագաւորի հրամանը—շարունակեց Մարգարիտը. դուք մարդկանց բռնում էք, իբր թէ ձեր պարտաւորութիւն է այդ, և այն էլ երեկոյեան ժամը 6-ից յետոյ, քանի որ բարձրագոյն հրամանով արգելւած է դա. դուք ստիպում էք որ գիշերով բաց անելու մասնաւոր տան դռները. մտածեցէք. չէ՞ որ աւազակներն էլ նոյնը կարող են անել՝ յայտնելով որ «ոստիկաններ ենք, ներս թողէք մեզ»... Չէ՞ որ եթէ Թագաւորի հրամանը չարգելէր հէնց այն, ինչ որ դուք այժմ անում էք—կարող էիք համարձակ կողոպտել մի ամբողջ գիւղ։ Դրա համար էլ հրամանը տրամադրում էր ձեզ խուզարկութեան գալ միմիայն ցերեկով և այն էլ ընկերակցութեամբ քաղաքի երկու աւագների...

Խօսում էր նա որոշ, համոզւած և ուժեղ՝ ինչպէս Շօվէլը։ Պուլէն ըստ երևոյթին շատ շփոթւեց, որ համարձակւեցին դէմ առ դէմ խօսել իր երեսին ճշմարտութիւններ։ Այտերը բառի բուն նշանակութեամբ կատաղութիւնից սստսստում էին։ Ամենքն իսկոյն սկսեցին քիչ սրտոտւել և փողոցից, մինչ Մարգարիտը խօսում էր, լսւեց խուլ աղմուկ. իսկ երբ վերջացրեց, յանկարծ

հնչեց պառաւ Ժընէւիէվի ողեխարշ ու կծու ձայնը, որ կանչում էր·

—Ա՛խ աւազակ, ա՛խ դու գզւելի, Ճ՛լի եկար... Ճ՛լի քեզ պէտք են մեր որդիներն ու հայրերը...

Դժբաղդ պառաւը ցանկորմի վրայից ներս պարզած իր ցուպը, սպառնում էր նրանով մաքսախոյզին և կանչում հեկեկանքի նմանող ճիչով.

—Դո՛ւ, դո՛ւ խլեցիր ինձնից իմ որդուն... իմ խեղճ Ֆրանսուայիս... Դու նրա գլուխը կերար, աւազա՛կ... Բայց սպասի՛ր, Աստուած կը գտնի քեզ, կը տեսնես, քեզ վաղո՛ւց հետևում է նա... Քո հախիցը կը գայ... Այո՛, դժբաղդները ամենքն այնտեղ կը լինեն...

Նրա ճիչը մարդու սարսռեցնում էր ու ամենքին գունատ դարձրեց։ Պօլէն նայեց նրա վրայ և ականջ դրաւ փողոցից լսող աղմուկին։ Ժանդարմները նոյնպէս դարձան։

—Պարո՛ն մաքսախոյզ, յանկարծ խօսեց վարպետ Ժանը ոտքի ելնելով—լսեցէք մէկ այդ դժբաղդ պառաւին... սոսկալի է, չէ՞... անշուշտ ձեզնից ոչ ոք չէր կամենալ իր խղճի վրայ մի այդպիսի մեղք ծանրաբեռնել... Նրան լսելիս մարդու սիրտն է կտրտւում...

Ժընէւիէվ Պակոտը այլևս չէր ճչում, այլ հեկեկում էր. լըսւում էր թէ ինչպէս ցուպը գետնին բաղխելով՝ քայլում էր նա փողոցն ի վեր։

—Այո՛, շարունակեց վարպետ Ժանը—սոսկալի է դա... Մտածեցէք լաւ թէ ինչ է ձեր արածը... ծանր ժամանակներ են, գըլխաւորապէս ձեզ, հսկող ոստիկաններիդ համար ծանր... բաժակն արդէն լցւած է, զգուշացէք, որ չը թափի եզերքներից... Այս տարի արդէն հինգերորդ անգամն է, որ գիշերով խուզարկութեան էք գալիս. անցեալ ձմեռ էլ մի քանի անգամ Լիւցէլբուրգ այցելեցիք կէս գիշերից յետոյ, իբր թէ մաքսից փախցրած ապրանք որոնելու... Իսկ ինչ կանէիք, եթէ յանկարծ այդ բոլորը զզւեցնէր ժողովրդին և նա սկսէր դիմադրել. այն ժամանակ ինչ պիտի անենք մենք—խաղաղ բուրժուաներս... թագաւորական հրամանի դէ՞մ գնալ, թէ՞ օգնել ձեզ... որի՞ կողմը բռնել... Մտածեցէք մէկ, ի սէր Աստծոյ, պ. Պօլէ, խնդրեմ մտածեցէք...

Այս ասելով, նա նորից նստեց իր տեղը։ Մինչ այդ՝ փողոցում աղմուկը մեծանում էր. մարդիկ ցանկորմից ներս էին նայում, որ լաւ տեսնեն ու լսեն. իսկ Կօշարը կանչում էր.

—Ձեմ գնա՜լ... Թող նո՛յն իսկ սպանեն ինձ... Օրէնքն իմ կողմն է։

Պօլէն նկատեց, որ երկու ժանդարմներն էլ սկսում էին վա-

րանել և շուրջը նայել, չը համարձակւելով կատարելու նրա հրամանները։ Բայց յանկարծ յիշեց Մարգարիտին և կատաղի՝ դարձաւ դէպի նա ու գոչեց.

—Այդ բոլորը քո գործն է, կալւինիստ... առանց քեզ, անիծեալ աղջիկ, բանը լաւ կերթար։

Ու քայլեց դէպի նա կարմրած, ուռած՝ ինչպէս բարկացող հնդկահաւ, որ կամենում է մանուկների վրայ նետւել։

Անշուշտ կամենում էր զարնել, բայց մէկէն կանգ առաւ, ոռվհետև ետևում, ստւերի մէջ տեսաւ ինձ կանգնած։ Յիշում եմ թէ ինչպէս ինձ նետեցի այնտեղ ու նայում էի պաշտօնեայի վրայ, կատաղի, բռունցքներս սեղմած։

—Համարձակւի՛ր մէկ ձեռքդ պարզել, Թշւառակա՛ն, մտածում էի ես—և կը տեսնես հալդ...

Ինձ թւում էր որ մի ոստիւնով պիտի կառչէի հաստ վզին ու այլ ևս կենդանի չը պիտի դուրս գար ձեռքերիցս։ Ըստ երևոյթին պաշտօնեան նկատեց այդ տրամադրութիւնս. դրա համար էլ յանկարծ գունատւեց, ետ քաշւեց ու կմկմաց.

—Լա՛ւ, լա՛ւ, թող մնայ դեռ... բայց վաղն այլ ևս չէք ազատւիլ ձեռքիցս...

Երկու ժանդարմներն արդէն վաղուց վախեցած՝ նայում էին ցանկորմի վրայից երեցող ու մթան մէջ փայլող աչքերին. զգում էին իրենց շատ վատ և ուրախ կը լինէին եթէ ողջ առողջ դուրս պրծնէին այդտեղից։ Նրանք բաց թողին Կօշարին։ Սա իսկոյն ոտքի ելաւ ու սկսեց վրան գլուխը շտկել ու քրտնաթոր դէմքը սրբել։

Տեղիցս չը շարժւեցի դեռ։ Մարգարիտը ետ դարձաւ ու տեսաւ ինձ։ Շատերն էլ նայում էին։ Վատս եկաւ, որ մաքսախոյզն ու ժանդարմները դուրս պրծան ձեռքիցս. ձեռներս քոր էին գալիս։

Վերջապէս պաշտօնեան ու ոստիկանները գնացին և Մարգարիտը ծիծաղելով՝ ասաց ինձ.

—Գնում են արդէն, Միշէլ...

—Խելօք բան են անում. ասացի ես։

Հազիւ բագից դուրս էին ելել խուզարկուները, որ փողոցի մի ծայրից մինչև միւսը հնչեցին սուլոցներ, քրքիջ ու բացականչութիւններ նրանց ետևից։ Կօշարը վրան—գլուխը կարգի բերեց և մի ումպով դատարկեց բաժակը։

—Ժամանակ մի կորցնէք, կանչեց նրան Մարգարիտը—շուտ տուն վազէք ու մաքսանենգ ապրանքը տարէք անտառ թագցրէք...

Համոզւած եմ, որ Կօշարը շատ կուզենար շնորհակալութիւն

յայտնել Շօվէլի աչքկան, բայց վախից այնպէս շփոթւել էր, որ ա-ռանց բարևելու իսկ՝ դուրս նետւեց։

Ամենքն սկսեցին ցնծալ, աղաղակել ու երգել տարած յաղ-թանակի համար։ Պուլէն և երկու ոստիկանները, որոնք արտերին էին հասել, անշուշտ լսում էին մեզ հեռուից—նոյն իսկ գերեզմա-նատան մօտից և, ո՞վ գիտէ որքա՜ն քթները կախել էին, որ ձեռք-ներից փախցրել էին որսը։ Անպիտաննե՜րը։

Վարպետ Ժանը բերել տւեց խնձորի օշարակ ու երկար դեռ խօսեցին անցած—դարձածի վրայ։ Ամեն մարդ ուզում էր մի բան ասել. մինչև այդ լուռ մնացածներն անգամ։ Բոլորը գովում էին Մարգարիտի քաջութիւնն ու խելքը։

—Հօրը հոգին ունի, ասում էր վարպետ Ժանը—որքա՜ն պի-տի ուրախանայ Շօվէլը, երբ լսի թէ աղջիկը վռնդեց մաքսախոյ-զին, և Կօշարին ազատեց... քէֆը պիտի գայ։

Լուռ, Մարգարիտի կողքին միշտ կանգնած՝ լսում էի այդ բոլորը և ինձ երկրի ամենաբախտաւոր մարդն էի համարում։

Ժամը 10-ից անց, երբ բոլորը մեկնում էին և երբ վարպետ Ժանը դուռը փակելով ամենքին բարի գիշեր էր մաղթում ու ժո-ղովուրդը խումբ-խումբ ցրւում էր աջ ու ձախ—ես ու Մարգարիտը դուրս գնացինք բաղից և հանդարտ քայլերով փողոցն ի վեր ելանք։

Լուսընկայ գեղեցիկ գիշեր էր։ Փողոցի երկարութեամբ ձըգ-ւող ծառերի տակից անցնելով մտախոհ՝ դիտում էինք վերևում պսպղող անհամար աստղերը։ Սկսում էր խորին լռութիւն գի-ջում. և ոչ մի տերև չէր շարժւում. մի քանի պառաւներ այս—այն կողմում՝ իրար բարիգիշեր էին մաղթում և Շօվէլի տան ա-ռաջ, փոքրիկ պարտէզի ցանկապատի տակ հոսող աղբիւրը, բըղ-խելով փոքրիկ խողովակներից, շշնջում էր մեղմիկ ու թափւում գետնի երեսին հաւասարւող աւազանի մէջ։

—Որքա՜ն խաղաղ է գիշերը, ասաց Մարգարիտը և կանգ ա-ռաւ ու շուրջը նայեց։ Յետոյ կռացաւ, իր փոքրիկ ձեռքը դրաւ խողովակի վրայ, բերանը կոխեց տակը և շքեղ սև մազերը թո-ղեց որ փուլին այտերի ու սիրուն վզի վրայ։ Մինչ խմում էր, հիացմունքով դիտում էի նրան։ Յանկարծ ելաւ, գոգնոցովը բը-նոտը սրբեց ու ասաց ինձ.

—Քեզ մի բան ասե՞մ, Միշէլ, գիւղի տղաներից ամենաքաջն ես դու... ես քեզ լա՛ւ տեսայ եռեւումս կանգնած... սոսկալի դէմք ունէիր, այո... Պուլէն շտապեց ետ քաշել՝ հէնց որ դէմքդ տեսաւ։

Ու սկսեց ծիծաղել, մինչ ես հրճւում էի, լսելով նրան փողո-ցի լռութեան մէջ։

—Բայց, ասա խնդրեմ, աւելացրեց նա—ինչ էիր մտածում, որ այնպէս դէմք ստացար։

—Մտածում էի, պատասխանեցի ես—որ եթէ մաքսախոյզը դժբախտութիւն ունենար քեզ կպչելու և կամ ո և է վատ խօսք ա-սելու, ողջ չէր պրծնելու ձեռքիցս։

Նայեց ինձ և յանկարծ կարմրեց։

—Բայց չէ՞ որ թիարան կը տանէին քեզ խեղճին։

—Ի՞նչ հոգ, առաջ խօ կը սպանէի նրան...

Ինչպէ՜ս լաւ միտքս է բոլորը, այսքան տարի անցնելուց յե-տոյ։ Մարգարիտի ձայնը ականջումս է. յիշում եմ նրա իւրաքան-չիւր խօսքը, այլ և նոյն իսկ աղբիւրի այն փոքրիկ շշուկը, կար-կաչը... Ա՜հ, որքա՜ն լաւ բան է սիրելը... Մարգարիտն այն ժա-մանակ 16 տարեկան էր և մինչև այժմ էլ դեռ նա չէ ծերացել ինձ համար։

Մի քանի րոպէ էլ երազուն մնացինք մենք կանգնած, յետոյ Մարգարիտն իրենց դռան կողմը գնաց լուռ։

Եւ երբ բաց արաւ, ոտքն արդէն շէմքին, յանկարծ դարձաւ, պարզեց հեռւից իր փոքրիկ ձեռքը և ասաց փայլուն աչքերով.

—Դէհ, բարի գիշեր, Միշէլ, լա՛ւ քնիր և շնորհակալութիւն։

Զգացի որ սեղմում էր ձեռքս։ Սիրտս սկսեց ուժգնութեամբ բաբախել։

Եւ երբ դուռը փակւեց, մնացի կանգնած այդ տեղ ու լսեցի Մարգարիտի ոտնաձայնը բաղում, յետոյ սանդուխքի վրայ և հուսկ ուրեմն, ճրագի վառւելը տեսայ փեղկի ճեղքերից։

—Քնում է. մտածեցի ես ու հեռացայ ասելով իւրովի.

—Այժմ նա գիտէ որ սիրում եմ իրեն...

Երբէք այնքան չէի շփոթւել ու միանգամայն ոգևորել, որ-քան այդ երեկոյ։

XVI

վճռւած էր։ Մարգարիտը կինս էր լինելու. ամեն բան գըլ-խումս արդէն սարքւած էր ու ինքն-իրենս մտածում էի.

—Դեռ շատ փոքր է. սակայն 15 ամսից յետոյ երբ լինի 18 տարեկան, այն ժամանակ կը յայտնեմ, որ սիրում եմ իրեն. Հա-մաձայնութիւնը կը կարանայ, բայց կռիւը կսկսի, որովհետև մայ-րըս անշուշտ պիտի աղաղակէ, չուզենայ կալւինիստ հարս ունե-նալ։ Քահանան, ամբողջ գիւղացիք էլ նրա կողմը պիտի բռնեն։ Բայց այդ փոյթ չէ. հայրս միշտ իմ կողմը կը լինի, որովհետև

ես կը համոզեմ նրան, որ երջանկութիւնս այդ ամուսնութիւնից պիտի կախում ունենար և որ առանց Մարգարիտի ապրել չէի կարող։ Այն ժամանակ անշուշտ հայրս քաջութիւն պիտի ունենար պնդելու և գործը լաւ կերթար։ Յետոյ մենք կըվարձէինք մի փոքրիկ դարբնոց, լինէր նոյն իսկ Զորս-Բամիների, Լարուլէտի կամ Միտտէլբրոնի ճանապարհի վրայ—ու կսկսէինք գործել մեզ համար։ Սայլապան, կառապան՝ մեզ մօտ կը գային. կարող էինք նոյն իսկ վարպետ Ժանի նման մի փոքրիկ պանդոկ ունենալ ու երջանիկ կապրէինք... Եւ եթէ բարեբաղդութիւն լինէր, մի որդի ես ունենայինք, մի ամսից յետոյ կառնէի նրան բազուկներիս վրայ, կը գնայի Բարաքները և կասէի մօրս.—«Ահա... կարող ես, անիծիր այս զաւակին»... Եւ նա անշուշտ լաց կը լինէր, կը մեղմանար ու վերջ ի վերջոյ կը գար ապրելու մեզ հետ»...

Ահա թէ ինչ պատկերներ էի գծում ես՝ երջանկութիւնից դողալով։ Մտածում էի նոյնպէս, որ Շօվէլը գոհ կը լինէր ինձ իրեն փեսայ ունենալով. մի՞թէ ինձնից լաւը կը գտնէր.—ճարպիկ գործաւոր, ջանասէր, խնայող, ընդունակ իր վաստակովը ապրելու և պարզ ու մաքուր մարդ։ Գրեթէ ապահով էի, որ համաձայնութիւն կը տար։ Ոչինչ չէր շփոթեցնում ինձ. ամեն ինչ լաւ և առողջ մտածուած ու կշռադատուած էի կարծում. ինքս իսկ հրճւում էի այդ յաջող գաղափարով։

Դժբաղդաբար մարդ կեանքում յաճախ իր չսպասած դէպքերի է դէմ առ դէմ գալիս։

Մի առաւօտ, մաքսախոյզների այցելութիւնից 5—6 օր յետոյ, երբ մենք դարբնոցի առաջ պայտում էինք ծեր հրէա Շմուլի գորշ ձին—տեսանք որ դէպի մեզ էր գալիս Վերին Բարաքցի մօրքուր Ստէֆէնը։ Քաղաքից էր վերադառնում, ուր գնացել էր ձու և բանջարեղէն ծախելու։

Մօտեցաւ վարպետ Ժանին ու ասաց.

—Ձեզ մի բան եմ բերել. ահա.

Նամակ էր Մէցից։ Տեսնելուն պէս՝ վարպետ Ժանը բացականչեց.

—Գրազ կը գամ, որ Շօվէլից է. մէկ կարդա տեսնենք, Միշէլ, ժամանակ չը կայ գնալ ակնոցներս փնտռելու։

Նամակը բաց արի. բայց հազիւ կարդացել էի առաջին տողերը, որ ծնկներս թուլացան և ամբողջ մարմինս սառեց կարծես։ Շօվէլը յայտնում էր վարպետ Ժանին, որ ընտրւել էր երրորդ դասակարգի կողմից պատգամաւոր Երեսփոխանական ընդհանուր ժողովին և խնդրում էր կնքահօրս՝ իսկոյն Մարգարիտին ուղարկել Մէց, Վիէյլ—Բուշըրի փողոց՝ «Կապարեայ ափսէ» պանդոկը, որովհետև միասին պիտի Փարիզ գնային։

Ահա ինչ որ յիշում եմ այդ երկար նամակից։ Այնուհետև կարդում էի առանց հասկանալու և վերջ ի վերջոյ սայլի վրայ նստեցի ջարդուած մարդու պէս։ Մինչ այդ՝ վարպետ Ժանը դուրս էր նետւում, վազում էր դէպի պանդոկը և աղաղակում.

—Կատերին, էյ Կատերին, Շօվէլը ընտրուած է երրորդ դասակարգի պատգամաւոր Երեսփոխանական ժողովին։

Վալէնտինը ձեռքերն իրար միացրած՝ մռմռում էր.

—Շօվէլն արքունիքում, ազնուականների և եպիսկոպոսների շարքում... Օ՛, Աստուած իմ...

Եւ ծեր հրէան պատասխանում էր նրան.

—Ինչո՞ւ ոչ. խելօք, իսկական ձեռներէց մարդ է նա և ուրիշներից ո՛չ պակաս արժանաւոր այդ պաշտօնին։

Իսկ ես, աչքերս մթագնած, մտածում էի յուսահատաբար.

—Վերջացաւ, այժմ ամեն ինչ կորուած է... Մարգարիտը գնում է և ես մնալու եմ մենակ։

Քիչ էր մնում լայի. ամօթը միայն զսպեց ինձ։ Ու խորհում էի.

—Եթէ գիտենային, որ սիրում ես նրան, ամենքը կը ծիծաղէին վրադ... ինչ արժէ մի դարբնոցի բանւոր՝ երրորդ դասակարգի ներկայացուցչի աղջկայ առաջ... Ոչինչ... Մարգարիտը երկինքում, իսկ դու գետնի վրայ...

Եւ սիրտս կտրտւում էր։

Փողոցն արդէն լցւում էր գիւղացիներով. մօրքուր Կատերինը, Նիկօլը, վարպետ Ժանը, դրացիներն ու դրացուհիները աղաղակում էին.

—Շօվէլը պատգամաւոր է ընտրւել երրորդ դասակարգի կողմից Երեսփոխանական ընդհանուր ժողովին գնալու...

Մի մեծ դէպք էր այդ գիւղի համար։ Վարպետ Ժանը սակայն, նորից դարբնոց մտաւ և ասաց ինձ.

—Միշէլ, գլուխներս կորցրել ենք և չենք մտածում կարևորը. վազի՛ր իսկոյն Մարգարիտին իմաց տուր հօր գրածը։

Ոտքի ելայ. սոսկում էի. վախենում էի թէ Մարգարիտին տեսնելուս պէս՝ լաց կը լինեմ և յակամայից ցոյց կը տամ, որ սիրում եմ նրան։ Նոյն իսկ նրանց փողոցը հասնելիս, կանգ առայ, որ քիչ սրտապնդուեմ։

Մարգարիտը սենեակում սպիտակեղէն էր արդուկում։

—Վա՜յ, Միշէլն է, ասաց նա բոլորովին զարմացած, որ շապ-

կանգ էր տեսնում ինձ։ Մոռացել էի անգամ բաճկոնս հագնել ու ձեռքերս լւալ։

—Այո... ես եմ... ասացի—մի լաւ լուր եմ բերում քեզ։

—Ի՞նչ կայ։

—Հայրդ ընտրւած է երրորդ դասակարգի պատգամաւոր Երեսփոխանական ժողովին։

Եւ մինչ խօսում էի, Մարգարիտը յանկարծ սաստիկ գունատւեց։

—Ի՞նչ ունես, Մարգարիտ, աղաղակեցի ես։

Պատասխանել չը կարողացաւ։ Զգացած ուրախութիւնն ու հպարտութիւնն էր պատճառը։ Յանկարծ սկսեց լալ ու նետւելով թևերիս մէջ՝ բացականչեց.

—Օ՛, Միշէլ, ո՜րպիսի պատիւ հօրս համար։

Բռնած ունէի նրան գրկիս մէջ. բազուկները փաթաթել էր վզիս. զգում էի ամբողջ մարմնի ցնցումը. արցունքները հոսում էին այտերի վրայ... Ա՛հ, ինչպէ՜ս սիրում էի նրան. ինչքա՜ն կը ցանկայի պահել ինձ մօտ, սրտիս վրայ... Իւրովի կարծես կանչում էի. «Թող գան, փորձեն խլելու ինձնից»... Եւ սակայն պէտք էր թողնել մեկնելու. հայրն էր տէրը։

Երկար լաց եղաւ Մարգարիտը, յետոյ թողեց ինձ, վազեց, երեսսրբիչով ցամաքացրեց դէմքը և ծիծաղելով ասաց.

—Ի՛նչ խենթն եմ, չէ՞, Միշէլ. սկի լա՞ց կը լինեն այդպէս բաների համար։

Չէի խօսում և նայում էի նրան այնպէս սիրով, որ երևակայել չէ կարելի։ Ուշադրութիւն անգամ չէր դարձնում։

—Գնա՛նք. ասաց թևս բռնելով—քայլե՛նք։

Եւ դուրս եկանք։

«Երեք աղաւնի» պանդոկի մեծ սրահը լիքն էր։ Միտք չունիմ նկարագրելու թէ ինչպէ՜ս գրկեցին ու համբուրեցին Մարգարիտին՝ վարպետ Ժանը, մօրքուր Կատերինը, Նիկոլը. ոչ էլ՝ թէ ինչպէս երկար Լէտումիէն, ձեր Րիգօն, Հիւրէն սկսեցին շնորհաւորութիւններ անել։ Այդ օրն ամբողջ՝ Բարքացիները մինչև երեկոյեան ժամը 9-ը մնացին պանդոկում. կին, տղայ, տղամարդ ու ծեր՝ մտնում էին ելնում, գլխարկները վեր նետում ու այնպէս աղմուկ բարձրացնում, որ ձայները Սէն-Ժանի մօտից իսկ լսւում էր։ Բաժակները, շշերն ու թասերը զրնգում էին, վարպետ Ժանի խոշոր ձայնը որոշւում էր աղաղակների միջից՝ իր անվերջ քրքիջների հետ։ Մի արտասովոր քէֆ էր այդ։

Տեսնելով այդ բոլորը՝ մտածում էի.

—Ինչպէ՞ս անպիտանն ես դու, Միշէլ. ամբողջ գիւղը հրճը-

ւում է Մարգարիտի և Շովէլի երջանկութեան վրայ, ամեն մարդ գոհ է, իսկ դու մահու չափ տխուր... Զզւելի՜ է այդ։

Յիրաւի, ես ու Վալէնտինն էինք միակ տխուրը այդ բոլորի մէջ։ Խեղճ տղան նստել էր կողքիս ու ասում էր ինձ.

—Ամեն ինչ տակն ու վրայ է լինում... ցնցոտիները արքունիք են մտնում... ազնւականների հետ խառնւում են բոկոտներ էլ... այլ ևս ոչ մի յարգանք չը մնաց... Կալւինիստի են ընդունում՝ փոխանակ քրիստոնէի... Աշխարհի վերջն է... այո...

Եւ իմ խորին տխրութիւնից, իրաւացի էի գտնում ասածները։ Քաջութիւնս կորցնում էի։ Մարգարիտն էլ քաշւել էր մինչև խոհանոց և այնտեղ էր, որ գիւղի իշխանները գնում էին նրան շնորհաւորելու։ Գլխարկս վերցրի և դուրս թռայ։ Չը գիտէի իսկ ուր գնալս. քայլում էի մեծ փողոցով կարծեմ. մտել էի դաշտերը։

Տասնհինգ օրից ի վեր լաւ եղանակներ էին անում. վարսակը սկսում էր ծիլեր արձակել, ցորենն աճում էր. ցանկորմների երկարութեամբ շիկահաւերը ճուողում էին, իսկ վերևում արտոյտները օրօրւելով՝ հնչեցնում էին իրենց մշտապէս ուրախ երգերը։ Արևն ու լուսինը իմ տխրութիւնից կանգ չէին առել, ոչ. սոսկալի էր միայն իմ դրութիւնը։

Նստեցի չորս հինգ անգամ ճանապարհի կողքին, ցանկորմների հովանու տակ. գլուխս ձեռքերիս մէջ էի առնում և որքան երազում էի, այնքան տխրութիւնս աւելանում էր։ Այլևս ոչինչ չէի տեսնում շուրջս, ծովի անհուն տարածութեան մէջ կորուածի նման, որ միմիայն մի աղաղակ ունի.

—Վերջացա՜ւ... այժմ պէտք է մեռնել!...

Իմ մտածածն էլ այդ էր։ Այլ ևս ոչինչ գոյութիւն չունէր ինձ համար։

Վերջապէս երբ մութը կոխեց, անգիտակցաբար գիւղ վերադարձայ և հասայ մեր խրճիթի առաջ. հեռուից լսւում էին դեռ երգերի ու աղմուկների ձայնը։ Ականջ էի դնում ու մտածում.

—Աղմկեցէք, երգէք... իրաւո՛ւնք ունիք... կեանքը թշւառութիւն է միայն...

Ու ներս մտայ։ Հայրս ու մայրս նստած հիւսում էին և մանում։ Բարի երեկոյ մաղթեցի և հայրս նայելով ինձ՝ բացականչեց.

—Ինչպէ՜ս գունատ ես, Միշէլ. հիւանդ խո չե՞ս.

Չը գիտէի ինչ պատասխանել, սակայն մայրս ասաց ժպտելով.

—Է՛հ բայց չե՞ս տեսնում որ կոնծել է միւսների հետ... Շովէլի պատւի համար՝ քիչ ոյժ է տւել...

Դառնացած հոգով ասացի.

—Իրաւունք ունիս, մայր, հիւանդ եմ… չափազանց խմեցի… իրաւունք ունիս… Պէտք էր առիթիցն օգտուել…

Իսկ հայրս քաղցրութեամբ նկատեց.

—Լաւ ուրեմն, զաւակս, գնա քնիր և կանցնի… Բարի գիշեր, Միշէլ…

Բարձրացայ տեղս, թիթեղեայ փոքրիկ լամպը ձեռքիս։ Այնտեղ գետնի վրայ դրի ճրագը և մի քանի րոպէ դիտեցի փոքրիկ եղբօրս Էտիէնին, որ մուշ-մուշ քնել էր, գանգրահեր գլուխը կուշտ բարձի վրայ դրած, փոքրիկ բերանը բաց… Նայում էի ու մտածում.

—Ինչպէս նման է հօրս… լաւ ուրեմն, այո—ասում էի խուլովի և լաց լինելով — այսուհետև քեզ համար կը գործեմ։ Քանի որ կորսւում է ամեն ինչ ինձ համար և այլ ես ոչինչ չի մնում— քեզ, միայն քեզ մտածելով կաշխատեմ և գուցէ դու աւելի երջանիկ լինես. որին որ սիրես՝ չը հեռանայ մօտիցդ…

Յետոյ հանուեցի և պառկեցի կողքին։ Ամբողջ գիշեր միմիայն դժբաղդութեանս վրայ էր միտքս, չը նայելով որ անընդհատ ոյժ էի տալիս զսպելու ինձ, սրտապինդ լինելու։ Մտածում էի երբէք ցոյց չը տալ ուրիշի՝ դէպի Մարգարիտն ունեցած սէրս։

Միւս օրը վաղ առաւօտ արդէն հանգստացած՝ դարբնոց գնացի, վճռելով ամրապինդ, անվրդով մնալ։ Եւ դա ինձ սփոփում էր։

Մարգարիտն այդ երեկոյեան մեկնելու էր Փարիզի սուրհանդակով։ Վարպետ Ժանը իր ճանապարհի պարկը փոխ տուաւ նրան։ Ժամը 5-ի մօտերը, յոգնած զգալով ինձ, Վալէնտինին խնդրեցի, որ վարպետ Ժանի յանձնարարած պարկը, բարի լինի, տանի Շօվէլի տունը։ Կատարեց խնդիրս, դրեց ուսի վրայ և գնաց։ Թուլացել էի, սիրտ չունէի գնալու. զգում էի որ ինձ զսպել չէի կարող։ Բաճկոնս հագայ և պանդոկ մտայ։ Ոչ ոք չը կար. փառք Աստծոյ։ Վարպետ Ժանը կարմրած թշերով ու փայլուն աչքերով խօսում էր դեռ, հռչակում «Երեք աղաւնի» պանդոկի փառքը, պնդում, որ ո՛չ մի պանդոկ այդպիսի պատիւ չէր վայելել. մօրքուր Կատերինն էլ համաձայնւում էր հետը։

Նիկօլը սեղանն էր պատրաստում։

Ինձ տեսնելով, վարպետ Ժանը յայտնեց, որ Մարգարիտը արդէն ընթրել, զբաղուած էր իրեղէնները դարսելով. հօր համար էլ գրքեր էր տանում։ Յետոյ հարցրեց թէ ի՞նչ արի պարկը. իմացրի որ Վալէնտինն էր տարել։ Քիչ յետոյ Վալէնտինն էլ եկաւ և նստեցինք ընթրելու։

Մտածում էի ժամը 8-ից առաջ տուն գնալ, առանց ոչ ոքի

բան ասելու. ինչացո՞ւ էր մնալս, մնաս բարևներ և այլն անել, քանի որ ամեն ինչ կորսուած էր և այլ ես օգուտ չունէր ոչինչ։

Ընթրիքը վերջացնելուն պէս՝ ոտքի ելայ և դուրս եկայ։ Գիշեր էր։ Շօվէլի վերևի սենեակում ճրագ էր վառւում։ Մի րոպէ կանգ առի նայելու և յետոյ յանկարծ, տեսնելով որ Մարգարիտը լուսամուտին էր մօտենում, վազելով հեռացայ։ Բայց իսկոյն, անկիւնը շուռ տալու միջոցին, լսեցի որ կանչում էր ինձ.

—Միշէլ, Միշէլ.

Կանգ առի. կարծես երթիկը փլեց գլխիս։

—Ի՞նչ ես ուզում, Մարգարիտ. ասացի ես, զգալով որ սիրտըս սաստիկ բաբախում էր։

—Բարձրացի՛ր մէկ. ասաց նա—ուզում էի արդէն գալ տեսւիցդ. քեզ ասելիք ունիմ։

Տուն մտայ բոլորովին գունատ և տեսայ, որ պահարանը բաց՝ պարկն էր լեցնում։

Երբ տեսաւ ինձ, ժպտաց ու ասաց.

—Տեսնո՞ւմ ես ինչպէս շտապում եմ… գրքեր, շորեր… էլ ոչինչ չը կայ… Որոնում եմ…

Եւ երբ սաստիկ յուզուած ոչինչ չէի պատասխանում՝

—Լսի՛ր, ասաց նա—այժմ պէտք է տունը մի լաւ ցոյց տամ քեզ, որովհետև դու պիտի պահպանես նրան… Գնա՛նք…

Ձեռքս բռնեց ու մտանք խորքի սենեակը։ Մրգատունն էր. բացի թառերից ու կախաններից՝ ուրիշ ոչինչ չը կար։

—Ահա՛, ասաց նա—այստեղ կը դնես խնձորները և պարտէզի տանձերը։ Շատ չունենք. բայց հէնց դրա համար էլ պիտի պահել բոլորը. հասկանո՞ւմ ես։

—Այո՛, Մարգարիտ։

Յետոյ իջանք սանդուխքով և ինձ ցոյց տուաւ ներքևի սենեակը, ուր հայրն էր պառկում. ցոյց տուաւ նաև մառանն ու խոհանոցի դուռը, որ պարտէզի վրայ էր բացւում։ Յանձնարարեց իր վարդենիները, աւելացնելով որ շատ կը նեղանար, եթէ լաւ չը խնամէի նրանց։ Բայց ես մտածում էի—«Օ, ապահով կաց. սակայն ինչի՞ւ այդ բոլորը, քանի որ գնում ես»։ Սրտիս խորքում ինչ որ մի խուլ յոյս ծագեց, որ կարող էր վերադառնալ էլ։

Երբ ներքևի սենեակն էինք մտնում, ցոյց տուաւ հօր գրքերը, կարգով շարուած դարանի մէջ՝ երկու լուսամուտների արանքում։

—Քանի մենք Փարիզ կը լինենք, անշուշտ պիտի գաս յաճախ այս գրքերը քրքրելու, չէ՞, Միշէլ։ Կրթուիր և ուսիր. առանց կրթութեան մարդս ոչինչ է։

Խօսում էր, բայց չէի պատասխանում, զգածւելով նրանից, որ խորհում էր իմ կրթութեան մասին, ինձ վրայ։ Ու մտածում էի.

—Սիրում է ինձ... այո՛, սիրում է... օ՛հ, ինչպէ՜ս երջանիկ կը լինէինք միասին։

Ճրագը սեղանի վրայ դնելուց յետոյ, իրենց տան բանալին տւաւ ձեռքս և պատւիրեց երբեմն-երբեմն բանալ, որ չը ժանգոտի կողպանքը։

—Երբ վերադառնանք, Միշէլ, ասաց նա իմ դուրս գալու րոպէին—յոյս ունեմ ամեն ինչ կարգին տեսնելու այստեղ։

Լսելով այդ, բացականչեցի.

—Ուրեմն պիտի վերադառնա՞ք, Մարգարիտ. ընդ միշտ չէ՞ք գնում։

Ձայնս դողում էր և ինքս սաստիկ յուզւած էի։

—Ինչպէ՜ս թէ կը վերադառնանք. ասաց նա զարմացած ինձ նայելով։—Այնտեղ մնալով ի՞նչ պիտի անենք, երեխայ... Չը լինի՞ կարծում ես թէ գնում ենք հարստութիւն դիզելու։

Եւ ծիծաղում էր։

—Անշուշտ պիտի վերադառնանք, կրկնեց նա—և գուցէ աւելի աղքատ, քան այժմ. կը տեսնես։ Երբ ժողովրդի իրաւունքները կը վերահաստատւեն, իսկոյն ետ կը գանք ու մեր առաջւայ գործը կը շարունակենք։ Գուցէ այս տարի, շատ շատ՝ եկող տարի այստեղ լինենք։

—Ա՛հ, ասացի ես—կարծում էի թէ այլ ևս չը պիտի վերադառնաս...

Եւ առանց ինձ այլ ևս զսպել կարողանալու, սկսեցի լալ ու հեկեկալ, ինչպէս երեխայ։ Մարգարիտը ոչինչ չէր խօսում. մի քանի րոպէ տւեց այդ, որովհետև հանգստանալ չէի կարողանում։

Յանկարծ զգացի որ ձեռքը ուսիս դրեց։ Ոտքի ելայ. դըժգոյն էր և սիրուն. աչքերը փայլում էին։

—Լա՛ւ աշխատիր, Միշէլ, ասաց նա քաղցրութեամբ և նորից ցոյց տւեց գրադարանը—լա՛ւ աշխատիր և հայրս կը սիրի քեզ...

Յետոյ վերցրեց ճրագը և դուրս եկաւ։ Կապոցը փետուրի նըման ուսիս վրայ վերցրի ու հետևեցի նրան դէպի փողոց։ Ուզում էի խօսել, բայց չը գիտէի ինչ ասել։

Դուրս գալուն պէս, կողպեցի դուռը և գրպանս դրի բանալին։ Լուսինը փայլում էր աստղերով շրջապատւած։

—Ի՜նչ սքանչելի գիշեր է, Մարգարիտ։ Շնորհակալ եմ Աստըծուց, որ այսպիսի գիշեր տւաւ քո ճանապարհի համար։ Ճանապարհորդութիւնդ յաջողակ է լինելու։

Սկսել էի զւարթանալ։ Բայց Մարգարիտը լուրջ՝ ասաց նորից.

—Չը մոռանաս ինչ որ խոստացար։

Մուրհանդակի կառքն անցնելու էր ժամը 10-ին. ճիշտ ժամանակն էր քաղաք գնալու։ Բոլորը համբուրեցին Մարգարիտին, իսկ ես և վարպետ Ժանը հետը պիտի գնայինք մինչև քաղաք։ Մի քիչ յետոյ ճանապարհը ընկանք լուսընկայով։ Մօրքուր Կատերինըն ու Նիկօլը դռան շէմքից կանչում էին.

—Բարի ճանապարհ, Մարգարիտ, շո՛ւտ վերադարձիր...

—Այո՛... կանչեց նրանց Մարգարիտը—Աստւած տայ որ միմեանց առողջ տեսնենք...

Վերցրել էի կապոցը և քայլում էինք դէպի ամրութիւնները տանող ծառուղիով։ Մարգարիտը կողքիցս էր գնում և մի քանի անգամ հարցրեց.

—Կապոցը ծանր է, չէ՞, Միշէլ.

—Բայց ո՛չ, ոչինչ բան է...

Պէտք էր շտապել։ Արագացրինք քայլերս և երբ ամրութիւնների տակն էինք հասել, վարպետ Ժանը ասաց.

—Շուտով տեղը կը հասնենք։

Ժամը 9½ հնչեց և մի քանի րոպէից յետոյ Ֆրանսիական դռնից քաղաք մտանք ու քայլեցինք դէպի կառքը, որ փողոցի ծայրումը պիտի կանգ առած լինէր։ Գրեթէ վազում էինք. արդէն լսւում էր կառքի անիւների թաւալման ձայնը։

—Ճիշտ ժամանակին ենք հասնում. խօսեց վարպետ Ժանը։

Երբ Ֆուքէ փողոցի անկիւնն ելանք, կառքի լապտերներն երևացին և այնտեղ տեսանք ծեր հրէայ Շմուլին, որ նոյնպէս Մեց էր գնում։

Նոյն րոպէին հանրակառքը կանգ առաւ. մի քանի դատարկ տեղեր կային։ Վարպետ Ժանը համբուրեց Մարգարիտին, իսկ ես, կապոցը ներս դրած, չէի համարձակւում մօտ գնալ։

—Մօ՛տ արի. ասաց Մարգարիտը և քաշեց դէպի իրեն։

Եւ երբ համբուրում էի, ասաց ականջիս.

—Լա՛ւ աշխատիր, Միշէլ, աշխատի՛ր։

Շմուլն արդէն տեղ էր բռնել կառքում։ Վարպետ Ժանը բարձրացրեց ու նստեցրեց Մարգարիտին և դարձաւ հրէային.

—Հո՛գ տարէք աղջկան, Շմուլ, ձե՛զ եմ յանձնում։

—Հանգիստ եղէք, ասաց ծեր հրէան—մեր պատգամաւորի աղջիկը անխնամ չի մնալ. ինձ թողէք նրա հոգսը։

Գոհ էի որ Մարգարիտը մի ծեր ծանօթի հետ էր գընում։ Կռացել էր լուսամուտից դուրս և ձեռքն ինձ տւել։ Կա-

ռավարը նստաւ քիչ յետոյ և կանչեց.

—Բշէք...

Ու ձիերը շարժուեցին, մինչ մենք գոռում էինք.

—Երթաս բարև, Մարգարիտ, բարի ճանապարհ.

Եւ երբ կառքը սլանում-անցնում էր, վարպետ Ժանն ասաց.

—Վաղը ժամը 8-ին Մէց կը հասնեն, Շօվէլը կը դիմաւորի նրան, իսկ 5—6 օրից յետոյ Փարիզ կը գնան։

Եւ ես լուռ ու տխուր՝ գնացի մինչև գիւղ և ուղղակի տուն մտայ քնելու։

XVII

Մարգարիտի մեկնելուց յետոյ, մի քանի օր շարունակ ամեն ինչ խաղաղ էր։ Եղանակը սկսել էր անձրևային դառնալ։ Մենք շատ աշխատում էինք, իսկ երեկոները, օգտուելով վերջին ժամերից, Շօվէլի գրադարանն էի գնում և ինքնակրթութեամբ պարապում։ Լաւ գրքեր շատ կային այնտեղ. — Մօնտեսքէօ, Վօլտէր, Բիւֆֆօն, Ժան-Ժակ-Ռիւսսօ... Մի խօսքով այն բոլոր մեծ գրողները, որոնց մասին վերջին 10 տարին շատ էի լսում—իրենց գործերն ունէին այդ փոքրիկ գրադարանում։ Մեծ հատորները դարսուած էին յատակի վրայ, իսկ փոքրերը վերև-դարաններում։

Որքա՜ն ուրախանում էի, երբ աչքիս էր ընկնում իմ գաղափարներին մօտ տողեր։ Որպիսի մեծ հրճուանք զգացի, երբ առաջին անգամ բաց արի Դ' Ալամբերի և Դիդրոի «Հանրագիտական մեծ բառարանը» և հասկացայ այն այբուբենական կարգը, որով մարդ կարող է հեշտութեամբ գտնել իր ուզածը, իր արւեստի և պարապմունքին վերաբերեալ։

Այս բոլորն ինձ շատ էր զբաղեցնում։ Իսկոյն սկսեցի փնտռել դարբնութեան վերաբերեալ յօդւածը, որտեղ գտայ դարբնութեան ամբողջ պատմութիւնը, սկսած Ս. Գրքի Տուբալքէնից մինչև մեր օրերը, նոյնպէս և տեղեկութիւններ՝ թէ ինչպէս երկաթը պէտք է հանել հողից, հալեցնել, ծեծել, կոփել... իր բոլոր մանրամասնութիւններով։ Զարմանքից չէի կարողանում սթափուել։ Եւ երբ միւս օրը մի քանի խօսքով պատմեցի վարպետ Ժանին, նա էլ զարմացաւ ու հիացաւ. ասաց, որ ներկայ ժամանակներում երիտասարդութիւնը շատ հեշտ կարող էր ամեն ինչ սովորել, մինչդեռ իր օրերում այդպիսի գրքեր գոյութիւն էլ չունէին և կամ շատ թանգ էին։ Մինչև անգամ Վալէնտինն այնուհետև աւելի յարգանքով էր նայում ինձ։

Մայիսի սկիզբներին, կարծեմ 9-ին թէ 10-ին, Շօվէլից մի նամակ ստացանք, որով նա մեզ յայտնում էր, թէ հասել էին Վերսայլ, բնակարան վարձել մի կօշկակարի մօտ Ս. Ֆրանսուա փողոցում, ամսական 15 լիվր վճարով։ Երեսփոխանական ժողովների նիստերը սկսել էին. այնպէս, որ մանրամասն նամակ գրելու ժամանակ չը կար։ Վերջումը աւելացնում էր. «Յուսով եմ, որ Միշէլը առանց քաշուելու, իմ գրքերից կվերցնի տուն կարդալու. թող օգտուի, սակայն թող նաև լաւ պահպանի, որովհետև պէտք է յարգանք ունենալ դէպի բարեկամները. իսկ գրքերը չէ՞ որ մեր բարեկամներն են»։

Շատ կցանկայի նորից կարդալ Շօվէլի այդ ամենաառաջին նամակը, սակայն Աստուած գիտէ թէ որտեղ է նա. վարպետ Ժանը սովորութիւն ունէր նամակները տալ սրան-նրան կարդալու, այնպէս որ, մեծ մասը կորսւում էր։

Շօվէլի գրածիցը յայտնեց, որ Մարգարիտը պատմել էր նրան մեր խօսակցութեան մասին և որ հայրը քաջալերում էր աղջկայ պատուէրը։ Նրա այդ տողերն ինձ ուրախութիւն և քաջութիւն ներշնչեցին։ Այդ օրուանից յետոյ ամեն երեկոյ տուն էի տանում «Հանրագիտակի» ո և է հատորն ու նստում յօդւած առ յօդւած կարդալու մինչև գիշերւայ ժամը 1-ը կամ երկուսը։ Մայրս գանգատւում էր, որ ճրագի իւղ շատ էր գնում, բայց ես լռում էի նրա գոռգոռալու ժամանակ։ Իսկ հայրս, երբ մենակ էինք լինում—ասում էր.

—Ուսի՛ր, որդեակ, ջանա մարդ դառնալու. որովհետև ով ոչինչ չը գիտէ, շատ թշուառ է, միշտ ուրիշի համար է գործում... Ոչի՛նչ, մօրդ խօսքերին շատ էլ ուշադրութիւն մի՛ դարձնիր...

Չէի էլ ուշադրութիւն դարձնում, գիտենալով որ սովորածներիցս օգուտը՝ առաջինը հէնց մայրս կը լինէր։

Այդ միջոցներում Լուցէլբուրգից շատ մարդիկ սկսեցին հիւանդանալ, ի թիւս որոց և Հայր Քրիստոֆը։ Ստէյնբախի ճահիճը չորանալով՝ տենդ էր սփռել ամբողջ հովիտում, չորս կողմը մարդ միայն հիւանդոտ, ատամները կարկափող թշւառներ կարող էր տեսնել։

Վարպետ Ժանը և ես ամեն կիրակի սկսեցինք այցելութեան գնալ քահանային։ Պէտք էր տեսնել թէ այդ առողջակազմ և հսկայ մարդը ինչպէ՜ս ոսկոռ ու կաշի էր կտրել։ Կարծում էինք թէ այլ ևս առողջանալիք չունէր։

Բարեբաղդաբար կանչեցին Դէմէրինգենից ծերունի Ֆրայդենգերին, որ գիտէր ճահճային տենդի կտրուկ դեղը—մաղդանոսի սերմը ջրում խաշած—և նա ոչ միայն գիւղի կէսից աւելին

առողջացրեց, այլ և հայր Քրիստոֆին սկսեց կազդուրել։

Մայիս ամսւայ ընթացքում, յիշում եմ, որ խօսում էին Փարիզը քարուքանդ անող աւազակային խմբերի մասին։ Լեռներից ամբողջ բարաքցիներն արդէն ուզում էին եղան ու գերանդի վերցրած՝ դուրս գալ այդ սրիկաների դէմ, որոնք իբր թէ պիտի արտերն ու դէզերը վառելու էին։ Բայց լուր հասաւ շուտով, որ աւազակներին արդէն կոտորել էին Սէնտ-Անտուան արւարձանում, Րէվէյյօն կոչւած մի պաստառավաճառի մօտ։ Սարսափն սկսեց քիչ վերանալ մի առ ժամանակ։ Յետոյ սակայն աւելի սաստկացաւ և ամեն ոք ճգնում էր ձեռք բերել վառօդ, հրացան՝ պաշտպանւելու համար։

Բնականաբար այս բոլորն ինձ աւելի անհանգստացնում էին, որովհետև երկու ամսից ի վեր, լրագիրների լուրերից բացի, ոչ մի տեղեկութիւն չէի ստանում։

Վերջապէս, փառք Աստծոյ, մի երկրորդ նամակ ստացանք Շօվէլից և այս նամակը պահել եմ արտագրելով, որովհետև բնագիրը այնպէս պտտեց գիւղից գիւղ, որ չը գտնւեց էլ վերջը։

Նամակի հետ Շօվէլն ուղարկել էր նաև մի ծրար հին ու նոր լրագիրներ։ Այդ նոյն օրը, հայր Քրիստոֆը և իր եղբայր Մատէրնը եկան մեզ այցելութեան։

Քահանան ազատւել էր տենդից և գրեթէ կազդուրւել։ Մեզ մօտ ճաշեց իր եղբօր հետ։ Նրանց առաջ էր ահա, որ առաջին անգամ կարդացի Շօվէլի նամակը։ Մօրքուր Կատերինը, Նիկօլը և գիւղի մի քանի իշխաններն էլ ներկայ էին։

Ահա նամակի բովանդակութիւնը, որից կարելի է իմանալ թէ ինչե՛ր էին կատարւում Փարիզում և թէ ինչ կարող էինք մենք յուսալ ազնւականներից ու կղերից, եթէ նրանց մնար երկրի կառավարութեան ղեկը։

«Վարպետ Ժան Լէրուին, դարբին Մայրի անտառի Բարաքներում, Փալցբուրգի մօտ։ 1789 թիւ, յուլիս 1.

«Ստացած կը լինէք իմ վերջին նամակը, որով ձեզ հաղորդում էի մեր Վերսայլ հասնելը։ Յայտնում էի նոյնպէս որ 15 լիվր ամսականով մի յարմար սենեակ ենք գտել Ս. Ֆրանսուա փողոցում։ Միշտ միևնոյն տեղն ենք բնակւում և եթէ ո և է բան ունենաք գրելու, հասցէս պէտք է լաւ գրել։

«Այս քաղաքում մենք ապրում ենք օտարականների նման։ Պաշտօնակիցներիցս երկուսը—ժաք քահանան Մէզօնսէլից և Պիէր Ժէրարը Տուլից՝ միևնոյն տանն են ապրում։ Մարգարիտն է մեզ համար շուկայից բան առնում և կերակուրը պատրաստում։ Վնաս չունի, լաւ ենք ապրում։ Երեկոյեանները հայր Ժաքի մօտ՝ մըտ-

քերի շփումն է տեղի ունենում և այսպիսով սպասում ենք, որ ժամանակն անցնի։

«Մեր անձնական գործերի համար այսքանն էլ հերիք է. անցնենք այժմ ազգային գործերին։

«Իմ պարտքն է միշտ գրել ձեզ այստեղ անցած-դարձածը, բայց գալուցս ի վեր այնքան անհանգիստ էինք և անորոշ դրութեան մէջ, առաջին երկու դասակարգերը—ազնւականութիւնն ու կղերականութիւնը այնքան վատ վարմունք ունեցան, որ չը գիտէինք թէ ի՞նչ պիտի լինէր վերջը։ Ամեն օր գործը այլ ընթացք էր ստանում. երբեմն յոյս ունէինք, երբեմն յոյսներս կտրում։ Բաւական համբերութիւն և սառնարիւնութիւն էր պէտք այդ մարդկանց ստիպելու, որ քիչ բանիմաց դառնան։ Երկու-երեք անգամ խօսք տւին, սակայն մենք այնպէս պինդ կոխեցինք ոտներս, որ երբ տեսան թէ առանց իրենց պիտի Սահմանադրութիւնը հռչակէինք—վերջ ի վերջոյ վճռեցին գալ մասնակցել ժողովներին և մեզ հետ խորհրդակցութեան նստել։

«Հետևապէս մինչև այժմ ոչ մի հաստատ բան հաղորդել ձեզ չէի կարող, բայց այսօր գործը շահել ենք և ձեռնարկում ենք ամեն ինչ սկզբից, աւելի մանրամասօրէն սկսել։

«Այս նամակը կարդացէք մեր գիւղերի իշխաններին, որովհետև ինձ համար չէ որ եկել եմ այստեղ, այլ ձեզ բոլորիդ համար. անպիտան կը համարեմ ինձ, եթէ հաշիւ չը տամ իրենց գործի մասին ինձ այստեղ ուղարկողներին։ Եւ որովհետև օրէցօր գրել եմ եղածները—ոչինչ չեմ մոռանալ պատմելու։

«Ապրիլ 30-ին Վերսայլ հասանք, մեր շրջանի երեք ուրիշ պատգամաւորների հետ, և Մայիս 3-ին էր, որ երրորդ դասակարգի բոլոր պատգամաւորներս ներկայացանք թագաւորին։ Աւելորդ եմ համարում նկարագրել այս չոր ու ցամաք ձևականութիւնները, որովհետև երկար հանդիսաւոր ձևերից յետոյ, տեսանք վերջապէս այդ հաստ, կլոր դէմքով, ճակատը ետ փախած, քիթն ու ծնօտը, ինչպէս և շրթունքները թանձր մարդուն—թագաւորին, որ այսքանն ասաց, թէ «երջանիկ էր մեզ տեսնելով»։

Միւս օրը, Մայիսի 4-ին, առաւօտ վաղ, քաղաքի եկեղեցիների բոլոր զանգերը հնչում էին և դղրդում, իսկ փողոցներից լսւում էին ուրախութեան աղաղակներ ու անվերջ աղմուկ։ Այդ օրն իսկ Երեսփոխանական ժողովի բացման առթիւ, հանդիսաւոր պատարագ էր տեղի ունենում։

«Երեք դասակարգերը հաւաքւել էին Նօտր-Դամ եկեղեցին, ուր երգեցին «Զքեզ Աստւած»*) գոհաբանական աղօթքը։ Այդ

*) Veni Creator.

մաղթանքից յետոյ, որ շատ ախորժալուր էր լաւ երաժշտութեան և սիրուն ձայների շնորհիւ—թափօրով գնացինք Ս. Լուի եկեղեցին։ Մենք առջևից էինք գնում, ազնուականութիւնը մեզնից յետոյ, իսկ նրանց ետևից կղերականութիւնը, որ քայլում էր Ս. Հաղորդութիւնից առաջ։ Փողոցները բոլոր զարդարուած էին գորգերով և ամբոխը աղաղակում էր.

«—Կեցցէ երրորդ դասակարգը...

«Առաջին անգամն էր, որ ժողովուրդը շքեղ հագուստների վրայ ուշք չէր դարձնում, որովհետև մենք ճիշտ ագռաւների էինք նմանում այն սիրամարգների առաջ, որոնք պերճ, փետրազարդ գլխարկներով, կլոր ազդրերով, թևերը սեթևեթ, սուրը կողքերին՝ քայլում էին։ Թագաւորն ու Թագուհին իրենց պալատականներով շրջապատուած՝ փակում էին թափօրը։ Լսեցին մի քանի աղաղակներ—«Կեցցէ Թագաւորը, կեցցէ Օրլէանի դուքսը» և զանգերը միահամուռ հնչեցին։

«Այս ժողովուրդը, հաւատացէք ինձ, խելօք ժողովուրդ է. հազարների մէջ և ոչ իսկ մի ձայն գտնւեց, որ կանչէր—«Կեցցէ Արտուայի կոմսը կամ Թագուհին, կամ կեցցեն եպիսկոպոսները—չը նայելով որ դրանք բաւական շքեղ էին հագնուած։

«Ս. Լուի եկեղեցում պատարագ տեղի ունեցաւ, իսկ յետոյ Նանսիի եպիսկոպոս Դը-Լա-Ֆարը մի երկար քարոզ խօսեց, որով նա հարուածեց արքունիքի շռայլութիւնը։ Սակայն լաւ գիտէք, որ դարերից ի վեր այդ եպիսկոպոսները միմիայն խօսել գիտէին ու մի րոպէ չեն մտածում հէնց իրենց թագերից ու հագուստներից պակասացնել ո և է զարդ։

«Այս արարողութիւնն էլ տևեց մինչև կէսօրւայ ժամը 4-ը։ Ամենքս մտածում էինք, որ արդէն հերիք էր և ժամանակն էր քիչ գնալ ու մեր գործերի մասին խօսել։ Սակայն դեռ չէր վերջացել ձևականութիւնները, որովհետև միւս օրը Մայիսի 5-ին Երեսփոխանական Ժողովի բացումն էլ մի անտանելի արարողութեան կերպարանք ստացաւ։ Այս մարդիկ կարծես ապրում են միայն արարողութիւններով և կամ աւելի ճիշտն ասել—կատակերգութիւններով։

«Հետևեալ օրն ուրեմն, Երեսփոխանական Ժողովը գումարւեց մեր այն սրահում, որ կոչւում էր «Երեք դասակարգի սրահ» (Salle des Trois—Ordres)։ Լուսաւորուած էր նա վերևից մի կլոր բացւածքով և երկու կողմում ունէր սիւներ։ Խորքում կանգնեցրած էր մի գահ՝ շքեղ ամպհովանու տակ, որի վրայ ոսկեթելով ասեղնագործած էին շուշանի ծաղիկներ։

«Մարքիզ Բրէզէն և նրա թիկնապահ արարողապետները

դասաւորեցին պատգամաւորներին *)։ Սկսեցին տեղաւորել ժամը 9-ից և հազիւ $12\frac{1}{2}$-ին վերջացրին։ Կանչում էին, առաջնորդում, նստեցնում... Մինչ այդ, պետական խորհրդի անդամները, նախարարներն ու նահանգապետները տեղ էին բռնում նոյնպէս։ Գահից ցած դրուած և կանաչ մահուդով ծածկւած մի երկար սեղան՝ սահմանւած էր պետական քարտուղարների. մի ծայրում նստել էր Նէկկերը, իսկ միւսում պ. Դը Սէն-Պրիէստը։

«Բայց եթէ այսպէս մանրամասն լինեմ—վերջը չի գալ։

«Կղերը բռնել էր գահոյքի աջ կողմը, ազնուականութիւնը՝ ձախ, իսկ մենք՝ դէմ առ դէմ։ Կղերը 291 ներկայացուցիչ ունէր, ազնուականութիւնը 270, իսկ մենք 578։ Մեզնից դեռ պակասում էին մի քանիսը, որովհետև Փարիզի ընտրութիւնները վերջացել էին միայն 19-ին։ Բայց այդ նկատելի չէր շատ։

«Վերջապէս ժամը 1-ին գնացին իմաց տալու Թագաւորին և Թագուհուն, որոնք իսկոյն երևացին, ետևից և առջևից ունենալով իշխաններ, իշխանուհիներ և պալատականների մի ամբոխ։ Թագաւորը գահ բարձրացաւ. Թագուհին նստեց նրա կողքին, ամպհովանուց դուրս մի բազկաթոռի վրայ, իսկ արքայական ընտանիքը ժողովւեց գահի շուրջը. իշխանները, նախարարներն ու պետական խոշոր ազնուականները մի քիչ ցած և, աւելացրէք դրանց վրայ Թագաւորի հետևորդները, որոնք տեղ բռնեցին ամբիոնի աստիճանների վրայ։ Պալատական կանայք շքեղ հագնուած՝ բարձրացան սրահի վերնատունը՝ գահոյքի կողքին, իսկ պարզ հանդիսականները խռնւեցին սիւների ետևում գտնւող վերնատան մէջ։

«Ինձ աւելի հետաքրքիր էր այն րոպէն, երբ մեծ արարողապետը նշան արաւ ուշադիր լինելու, որովհետև Թագաւորը պիտի խօսէր։

«Ո՛չ թէ խօսեց, այլ կարդաց նա իր ճառը, որից միայն այսքանն է միտքս մնացել, որ գոհ էր մեզ տեսնելով, որ հրաւիրում էր մեզ արդարացնելու իր յոյսերը և առանց նորութիւններ մտցնելու՝ համաձայնութեան գալ պետական պարտքերը ծածկելու միջոցները գտնելու համար։ Նա հէնց այդ յոյսով էլ գումարել էր, մեզ. մեր առջևը կը դնէին պարտքերի հաշիւը և նա ապահով էր որ մենք լաւ միջոց կը գտնէինք ու կը բարձրացնէինք պետութեան ընկած վարկը։

---

*) Ֆրանսերէն Deputé (Ռուսերէն народный представитель) բառի փոխարէն գործածել ենք երեք բառ անխտիր երեսփոխան, պատգամաւոր, ներկայացուցիչ։ Սակայն Երեսփոխանական Ժողովին յատկապէս եկած ներկայացուցիչների համար ամենայարմար է երեսփոխան բառը. Commissaire թարգմանել ենք պատուիրակ։ Ծան. Թարգմ.

«Երբ կարդաց-վերջացրեց, նստեց ասելով՝ որ իր կնքապահը այժմ կը յայտնէր մեզ՝ իրեն—Թագաւորի մտադրութիւնները: Ամբողջ սրահը իսկոյն թնդաց.

«—Կեցցէ Թագաւորը...

«Յետոյ կնքապահ պ. Դը Բարանդէնը բարձրացաւ և ասաց, որ Նորին Վեհափառութեան գլխաւոր հոգսը նախ և առաջ ժողովրդական բարեգործութիւնն էր: Թագաւորների առաքինութիւնը ամենաապահով նեցուկն է ժողովրդին՝ նրա ծանր օրերում: Մեր ինքնակալ պետը վճռել է կատարեալ դարձնել իր ժողովրդի բարօրութիւնը և մեզ կանչել է այստեղ իսկապէս նրա համար, որ օգնենք նրան՝ այդ մտածութիւնը գործադրելու: Մեր թագաւորների երրորդ ցեղը առանձնապէս իրաւունք ունի ամեն լաւ ֆրանսիացու երախտագիտութիւնը վայելելու, որովհետև նա ամրապնդել է գահակալութեան յաջորդականութիւնը և արմատախիլ արել «յաղթողների հպարտ սերունդի և յաղթուողների ընկճուած յաջորդների» մինչև այժմ եղած ատելացուցիչ խտրութիւնը: Այնուամենայնիւ նա—Թագաւորը, մտադիր է չը դիպչել ազնուականութեան իրաւունքներին, որովհետև դասակարգային զանազանութիւնը անհրաժեշտ է՝ պահպանելու համար պետութեան մէջ կարգ ու կանոն. և դրա համար էլ, նա պէտք է գոյութիւն ունենայ: Վերջապէս Թագաւորի կամքն է, որ հետևեալ օրը ժողովուելով զբաղուենք իր ցոյց տուած կարևոր գործով... այն է փողի հարցով...

«Դրանից յետոյ կնքապահը նստեց և պ. Նեկկերը կարդաց մեզ մի շատ երկար ճառ՝ պարտքերին վերաբերեալ. պարտք, որ հասնում է 1600 միլիոնի և ամեն տարի տալիս է 56,150,000 լիվր դէֆիցիտ (բաց): Նա հրաւիրում էր մեզ՝ վճարելու այս բացը. բայց ոչ մի բառով չակնարկեց սահմանադրութեան մասին, որ մեզ ընտրողները յանձնարարել էին մշակելու Երեսփոխանական ժողովում:

«Նոյն երեկոյ տուն գնալիս՝ զարմացանք, երբ իմացանք որ երկու նոր վաշտեր էին հասել Փարիզ, մի վաշտ զվիցերականների հետ և որ ուրիշ գունդեր էլ ճանապարհ էին ընկել գալու: Այս լուրերը շատ մտածել էին տալիս. մանաւանդ որ Թագուհին, Պօլինյաքի դուքսը, իշխան Կօնդէն, կոմս դ'Արդուան, Էնգիէնի դուքս և Կոնդի իշխանը համաձայն չէին Երեսփոխանական ժողովի գումարմանը և կասկածում էին, թէ մենք չէինք համաձայնուիլ պետական պարտքը վճարելու, եթէ մեզ քիչ չօգնէին ուրիշներին էլ:

«Եթէ իշխաններ չը լինէին, այդպիսի վարմունքն անշուշտ պիտի անուանէր դաւաճանութիւն: Բայց նայելով թէ ով է

գործ դնողը, ըստ այնմ նրա արածը անուն է ստանում: Իշխանների կողմից ուրեմն՝ դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ «պետական մի փոփոխութեան ձեռնարկութիւն» (coup d'Etat): Բարեբախտաբար արդէն ծանօթացել էի Փարիզցոց հետ և գիտէի, որ այդ շնորհալի մարդիկ մեզ մենակ չը պիտի թողնէին վտանգի մէջ:

«Այնու ամենայնիւ, նոյն երեկոյեան ես և երկու պաշտօնակիցներս համաձայնութեան եկանք, որ յոյներս աւելի լաւ էր մեզ վրայ դնել, քան ուրիշների և որ զօրքերի այդքան կուտակումը Փարիզում, ոչ մի լաւ բան չէր խոստանում երրորդ դասակարգի համար:

«Մայիս 6-ին էր միայն, որ գործերն սկսեցին կերպարանաւորուել: Այդ օրը ժամը 9-ին Ժէրարը, հայր Ժաքը և ես գնացինք Երեսփոխանական ժողովի սրահը: Գահոյքի գորգերն ու ամպհովանիի զարդարանքը վերցրել էին արդէն. սրահը գրեթէ դատարկ էր, սակայն երրորդ դասակարգի պատգամաւորները գալիս էին ու նստարանները բռնում: Աջ ու ձախ՝ խօսակցում էին, միմեանց հետ ծանօթանում, իրար հետ լուրջ գործեր ունեցող մարդկանց նման: Քսան րոպէից յետոյ, երրորդ դասակարգի բոլոր պատգամաւորները ամբողջացել էին: Սպասում էինք ազնուականներին ու կրօնաւորներին, որոնցից ոչ մէկը դեռ չէր երևում:

«Յանկարծ մեր պատգամաւորներից մէկը ներս մտաւ և յայտարարեց, թէ երկու միւս դասակարգերը, իւրաքանչիւրը իր սրահը ժողովուած՝ խորհրդակցութեան էին սկսել: Բնականաբար այդ լուրը զարմացրեց և միանգամայն զայրացրեց մեզ: Անմիջապէս վճռւեց, որ երրորդ դասակարգը ընտրի իր նախագահը և գործի սկսի: Ընտրեցաւ մէջներիցս ամենածերը—մի տաղ մարդ, որ կոչւում էր Լէրու: Նա էլ ընդունեց և ընտրեց վեց ուրիշ անդամներ իբր օգնական:

«Ժամը $2^{1}/_{2}$-ին Դօֆինէի մի պատգամաւոր լուր բերեց մեզ, որ միւս երկու դասակարգերը (ազնուականներն ու կրօնաւորները) վճռել էին իրենց անդամների լիազօրութիւնը ստուգել առանձնակի դասակարգային ժողովներում: Բարձրացաւ մի սոսկալի աղմուկ ու խառնուրդ: Նիստը փակելով՝ յետաձգւեց մինչև միւս օրը: Վճռւեց ժողովուել դարձեալ ժամը 9-ին:

«Այժմ արդէն ամեն ինչ պարզ էր: Թագաւորը, Թագուհին, իշխանները, ազնուականներն ու եպիսկոպոսները գտնում էին, որ իրենց պարտքը վճարելու համար մենք պիտանի մարդիկ էինք, սակայն սահմանադրութեան մասին,—որ կարող էր ժողովրդին իրաւունքներ, այլ և պետական վարչութեան մէջ ձայն տալ—չը պէտք է անգամ մտածէինք, որովհետև մտադիր իսկ չէին լսել այդ

մասին: Անհամեմատ աւելի լաւ էին համարում, որ իրենք ուղած-
նին չափ միշտ պարտք անեն առանց դիմադրութեան, առանց հաշ-
ւի. իսկ մենք, 200 տարին մի անգամ ժողովւելով յանուն ժողո-
վրդեան, մեզ վրայ առնենք պարտքը, այլ և ծանրաբեռնւենք յա-
ւիտենական տուրքերով:

«Կարող էք ուրեմն երևակայել, թէ այս բոլոր խարդախու-
թիւնները բացւելուց յետոյ, ի՞նչ կարող էինք մտածել և որքա՜ն
զայրանալ:

«Մինչև կէս գիշեր նստած՝ գոռում էինք և զայրանում արքու-
նիքի այդ եսամոլութեան ու զզւելի անարդարութեան վրայ: Ըն-
կերներիս յորդորեցի սակայն, որ հասարակութեան մէջ հարկաւոր
էր սառնարիւնութիւն պահպանել և ջանալ օրէնքից դուրս չը գա-
լու. իսկ առ այժմ պէտք էր վարւել համոզմամբ, լուրջ. ժողո-
վրդին էլ ժամանակ պէտք էր տալ եղածի վրայ մտածելու:

«Այդպէս էլ վճռեցինք և միւս օրը, երբ ժողովի սրահը մը-
տանք, տեսանք, որ միւս բոլոր երեսփոխաններն էլ անշուշտ նոյն
վճիռն էին արել, ինչ որ մենք. որովհետև փոխանակ երէկւայ մեծ
աղմուկի, ամենքը լուրջ էին և ծանրակշիռ:

«Նախագահը իր տեղն եկաւ օգնականներով, սկսեցին գրել,
եկած նամակները ստանալ և դարսել միմեանց վրայ:

«Արձանագրութեան ձևով քիչ յետոյ մեզ բերին ազնուակա-
նութեան և կղերականութեան առանձնակի գումարումների մէջ
արտասանւած ճառերն ու վիճաբանութիւնները:

«Կղերականութիւնը 133 ձայնով ընդդէմ 114-ի, իսկ ազնուակա-
նութիւնը 88 ձայնով ընդդէմ 47-ի, վճռել էին երեսփոխանների
լիազօրութիւնը ստուգել մեզնից առանձին կայացող դասակարգա-
յին նիստերի մէջ:

«Իզուր բողոքել էին այդպիսի անարդար վճիռների դէմ դեր-
կոմս Կաստէլլեանը, դուքս Լիակուրը, Մարքիզ Լաֆայէտը, այլ և
Դոֆինէի, Էկսի ու Պրօվանսի երեսփոխանները, որոնք թէև ազ-
նուականութեան կուսակցութեան էին պատկանում, բայց լաւ և
խելօք մարդիկ էին:

«Երկու դասակարգերն արդէն նշանակել էին 12 յանձնաժողովներ՝
լիազօրութիւնները ստուգելու իրենց իսկ շրջանում միայն:

«Այդ օրը Մալուէն նորից հարց ծագեցրեց մի պատւիրա-
կութիւն ուղարկել արտօնւած դասակարգերին (ազնուականութեան
և կղերին) ու հրաւիրել նրանց միանալու մեզ-ժողովրդեան ներ-
կայացուցիչներիս հետ:

«Այստեղ կոմս Միրաբօն ոտքի ելաւ խօսելու:

«Այս մարդու մասին դեռ շատ բան պիտի ունենամ ձեզ պատ-

մելու: Թէև ազնուական է նա, բայց երրորդ դասակարգի ներկա-
յացուցիչ է, որովհետև իր երկրի ազնուականութիւնը մերժել է
նրան իր մէջ ընդունել, առարկելով որ Միրաբօն կալուածներ չու-
նէր: Դրա համար էլ նա դարձել էր վաճառական և Էքս քաղաքի
կողմից ընտրուել ներկայացուցիչ: Պրօվանսցի լայնալանջ, խոշոր,
ճակատը ոսկրուտ, մեծ աչքերով, դեղնած, տգեղ և չէչոտ դէմքով
մի մարդ է նա: Ձայնը ճչացող է և խօսելիս էլ միշտ սկսում է
նախ կակազել. բայց հէնց որ քիչ շարունակում է — ամեն ինչ
փոխւում է նրա մէջ, ամեն ինչ պարզ ու գրաւիչ դառնում: Լսողը
կարծում է թէ տեսնում է, մտածում է միմիայն նրա ասածները:
Երբեմն ճչացող շեշտն իսկ անհետանում է. իսկ երբ նա ասում է
ո և է մեծ կամ ուժգին բան՝ ձայնը նման հեռաւոր մռնչիւնի՝
դառնում է իսկական որոտումի հարւած: Դժւար է ձեզ գաղափար
տալ թէ ինչպէս փոխւում է նրա դէմքը, աչքերը, շարժւածքնե-
րը՝ իր խօսածների համեմատ: Մարդ ինքն իրեն մոռանում է նը-
րան լսելիս. այնպէս գրաւում է ձեզ, որ այլ ևս ազատւել անկա-
րելի է հրապոյրից: Երբ Միրաբօն խօսում է—ամենքը գունատ,
շունչերնին պահած՝ արձանանում են:

«Քանի նա մեր մէջն է, ամեն բան լաւ կերթայ. բայց պի-
տի զգոյշ էլ լինել. որովհետև նախ և առաջ՝ ազնուական է և
երկրորդ որ՝ անփող մարդ է, պարտքերի մէջ խեղդւած ու մեծ
ախորժակի տէր: Մարդ երբ տեսնում է նրա մսալից մեծ քիթը,
խոշոր ծնօտներն ու ծոպազարդ մեծ փորը, մտածում է,—«Սա-
մոքսիդ համար ամբողջ Ալզաս-Լօրէնն էլ քիչ է, Ֆրանշ-Քոնթէի
և շրջակայքի հետ»:

«Սակայն օրհնում եմ ազնուականութեան, որ վռնտեց նրան իր
միջից. պէտք ունէինք մենք Միրաբօի օգնութեանը սկզբներում
և նա շատ օգտակար եղաւ մեզ:

«Այդ օրը, մայիսի 7-ին, Միրաբօն մի մեծ բան չասաց. մի-
այն առարկեց, որ երկու բարձր դասակարգերին պատւիրակու-
թիւն ուղարկելու համար՝ անհրաժեշտ էր, որ մենք ըստ օրինաց՝
հաստատւէինք նախ մեր իրաւունքների մէջ: Արդ, քանի դեռ չէինք
հաստատւել և չէինք էլ կամենում հաստատել ինքներս մեզ՝ առանց
միւսների մասնակցութեանը—ուրեմն աւելի լաւ էր դեռ սպասել:

«Իրաւարան Մունիէն առարկեց, թէ գոնէ հարկաւոր էր թոյլ
տալ, որ երրորդ դասակարգից մի քանի պատգամաւորներ իբր
մասնաւոր մարդիկ վերցնէին իրենց վրայ այդ պարտաւորութիւ-
նը և գնային մասնաւոր կերպով, առանց ո և է պատւիրակու-
թեան, հրաւիրելու ազնուականութեանը ու կղերին՝ միանալու մեզ,
ըստ ցանկութեան Թագաւորի:

«Եւ որովհետեւ այդ առաջարկը ոչ ոքի պատուին չէր դիպչիլ, ընդունուեցաւ։ Երեսփոխաններից 12 հոգի գնացին տեղեկութիւն բերելու և վերադարձան ու յայտնեցին, թէ ազնուականութեան սրահում գտել էին պարոնների լիազօրութիւնն ստուգող յանձնաժողովները միայն զբաղուած, իսկ կղերի սրահում նախագահը նրանց պատասխանել էր, որ պիտի խորհրդակցէին մեր առաջարկի վրայ։

«Մի ժամ յետոյ Մօնպէլիէի և Օրանժի եպիսկոպոսները, չորս ուրիշ կրօնաւորների հետ մտան մեր սրահը։ Նրանք յայտնեցին, որ իրենց դասակարգը վճռել էր ընտրել մի յանձնաժողով, միւսների հետ գումարուելու և քննելու թէ արդեօք պէ՞տք էր լիազօրութիւնները ստուգել երեք դասակարգերի համագումարով։

«Այս ձեւականութեան և յանձնաժողովների վճռի մասին, հարկ եղաւ նիստերը յետաձգել մայիսի 7-ից մինչև 12-ը։

«Մայիսի 12-ին, ժամը 9-ին մեր տեղումն էինք արդէն։

«Այդտեղ իմացանք, որ մեր պատուիրակները դեռ համաձայնութիւն չէին կայացրել ազնուականութեան և կղերականութեան նշանակածների հետ։ Հասկացանք, որ ուզում էին մեզ ժամանակ կորցնել տալ։ Այդ պատճառով էլ ահա, այդ օրւայ նիստում միջոցներ ձեռք առինք գործը առաջ տանելու համար։

«Նախագահին և օգնականներին յանձնուեց կազմելու երեսփոխանների ցանկը և որոշուեցաւ, որ ամեն շաբաթ ընտրուի մի մասնախումբ՝ բաղկացած իւրաքանչիւր նահանգի մի-մի երեսփոխանից, որպէս զի նրանք նիստերի ժամանակ կարգ ու կանոնը պահպանեն, ձայները ժողովեն և հաշուեն, իմանան իւրաքանչիւր հարցի վերաբերեալ մեծամասնութեան կարծիքը և այլն։

«Հետեւեալ օրը ազնուականութեան կողմից յայտնուեցաւ մեզ մօտ մի պատուիրակութիւն և յայտարարեց, որ նրանց ժողովն արդէն ստացել է պաշտօնական մարմնի իրաւասութիւն, ընտրել են նախագահ, քարտուղարներ, կազմել է արձանագրութիւն և ի թիւս այլոց վճռել է ներկայացուցիչների լիազօրութիւնը վերաստուգել իրենց իսկ նիստերի մէջ։ Վճռել էին մեզ այլ ևս բանի տեղ չը դնել։

«Նոյն օրը, կղերականութիւնը յայտարարեց նոյնպէս, թէ նա ընտրել է պատուիրակների յանձնախումբ, որ կը խորհրդակցի ազնուականութեան և երրորդ դասակարգի պատուիրակների հետ՝ ներկայացուցիչների լիազօրութեան ստուգութիւնը ընդհանուր դասակարգային խառն ժողովով կատարելու համար։

«Տեղի ունեցաւ բուռն վիճաբանութիւն։ Մի քանիսները առաջարկում էին ընտրել յանձնաժողով. ուրիշները պահանջում էին յայտարարել, որ մենք Երեսփոխանական ժողովի օրինաւոր անդամ կարող ենք ճանաչել նրանց, որոնց լիազօրութիւնը կըս-

տուգվի ընդհանուր ժողովում միայն. որ հրաւիրում ենք եկեղեցու և ազնուականութեան ներկայացուցիչներին՝ գալ երրորդ դասակարգի սրահը, ուր մենք 8 օրից ի վեր սպասում ենք նրանց։

«Եւ որովհետեւ վիճաբանութիւնը քանի գնում—տաքանում էր և շատ երեսփոխաններ խօսելու ցանկութիւն յայտնեցին, այդ պատճառով էլ ժողովի շարունակութիւնը թողուեցաւ միւս օրւան։

«Ռաբօ-դը Սէնտ-Էտիէն՝ բողոքական քարոզիչ, Վիզիէ-երեսփոխան Թուլուզի, Թուրէ-փաստաբան, Ռուէնի պարլամէնտից, Բարնավ—Դօֆինէի երեսփոխան, Բուասի դ'Անգլա-Լանգէտօքի պատգամաւոր — բոլոր այս տաղանդաւոր մարդիկ ու սքանչելի հռետորները, մանաւանդ Բարնավը, պնդում էին, որ պէտք էր առաջ գնալ, ուրիշները՝ որ հարկաւոր էր դեռ սպասել և ազնուականութեան ու կղերին ժամանակ տալ խորհելու։

«Վերջապէս Ռաբօ դը Սէնտ-Էտէնը յաղթանակեց և ընտրեցին 16 անդամներ, որոնք խորհրդակցելու պիտի գնային ազնուականների և կղերի պատուիրակների հետ։

«Մայիս 23-ի մեր նստերի մէջ առաջարկուեցաւ խմբագրական մի յանձնաժողով ընտրել, որ արձանագրէր Երեսփոխանական ժողովի բացման օրից մինչև այժմ կատարուածները։ Սակայն այդ առաջարկը մերժուեց, որովհետև արձանագրութիւնը կարող էր հրատարակուել և յուզումներ առաջացնել երկրում, ցոյց տալով ժողովրդին ազնուականութեան և կղերի խարդաւանքը՝ ջլատելու համար երրորդ դասակարգի գործունէութիւնը։

«22-ին և 23-ին լուր տարածուեց, որ Նորին Վեհափառութիւնը արդէն ուզում էր ներկայացնել մեզ փոխառութեան մի ծրագիր։ Իբր թէ այդ փոխառութիւնը անելուց յետոյ, կարելի էր առանց մեզ էլ եօլա գնալ, քանի որ դէֆիցիտը կը ծածկուէր։ Շատ նրանց պէտքն էր, որ մեր որդիներն ու թոռները պիտի յաւիտեան վճարելու ստիպուէին փոխառութեան տոկոսները։

«Միևնոյն ժամանակ զօրագունդներ էին, որ խումբ առ խումբ լցւում էին Փարիզի և Վէրսայլի շուրջը։

«Մայիսի 26-ին կազմուեց ներքին կանոնագրութիւնը և նրա լրացուցիչ մասը կարգապահութեան մասին, այլ և մեր պատուիրակներն եկան յայտնելու, որ ազնուականութեան հետ ոչ մի համաձայնութիւն կայացնել չէին կարողացել։

«Հետեւեալ օրը, 27-ին, Միրաբօն ամփոփեց մինչև այդ օր տեղի ունեցածները՝ ասելով.

«—Ազնուականութիւնը չէ կամենում միանալ մեզ հետ, միասին խորհրդակցելու։ Իսկ մենք ուզում ենք միահամուռ ժողովով ստուգել մեր լիազօրութիւնը։ Կղերը յամառութեամբ կամենում է

մեզ հաշտեցնել։ Առաջարկում եմ ուղարկել այդ կրօնաւորների մօտ մի շատ բազմամարդ և շատ հանդիսաւոր պատուիրակութիւն, երդւեցնել նրանց յանուն Աստծոյ և առաջարկել անցնելու բանիմացութեան, արդարութեան ու ճշմարտութեան կողմը՝ միանալով մեզ հետ, այստեղ—ընդհանուր սրահի մէջ։

«Այս բոլորը կատարւում էր ժողովրդի մէջ տեղ, որովհետև անհագին ամբոխ շրջապատում էր մեզ պատերի նման և ծափահարում էր, երբ հաւանում էր ո և է խօսք կամ ճառ։

«Միւս օրը, 28-ին, նախ հրաման եկաւ ցանկորմով բաժանելու ժողովատեղին՝ հասարակութիւնից. յետոյ, Միրաբօի առաջարկի համեմատ, մի պատուիրակութիւն ուղարկւեց կղերականութեան։

«Այդ նոյն օրը Թագաւորից ստացանք մի այսպիսի նամակ.

—«Նորին Վեհափառութեանը լաւ հասաւ, որ լիազօրութեան վերաբերմամբ տարաձայնութիւնը դեռ շարունակւում է երեք դասակարգի միջև։ Նորին Վեհափառութիւնը ցաւելով, նոյն իսկ անհանգստութեամբ տեսնում է, որ իր հրաւիրած ժողովը փոխանակ զբաղւելու պետական կազմի բարեփոխութեամբ, շարունակում է կործանիչ անգործութեան մէջ ժամանակ կորցնել։ Այդպիսի հանգամանքում, Թագաւորը առաջարկում է երեք դասակարգի պատուիրակներին՝ միասին խորհրդակցելու ժողովել պետութեան կնքապահի, այլ և Նորին Վեհափառութեան կողմից նշանակւած պատուիրակների ներկայութեամբ, որպէս զի կարելի լինի իսկոյն համաձայնութեան գալ»։

«Դուրս էր գալիս, որ ժողովրդի ներկայացուցիչներս—մենք երրորդ դասակարգի երեսփոխաններս էինք անգործութեան և անհամաձայնութեան բուն պատճառը. մենք էինք, որ ուզում էինք առանձին խումբ կազմել՝ հակառակ ժողովրդեան իրաւունքների...

«Նորին Վեհափառութիւնը ըստ երևոյթին երեխաների տեղ էր դնում մեզ։ Նրա նամակը վիճաբանութեան առիթ դարձաւ։

«Մի քանի երեսփոխաններ դէմ խօսեցին, յայտարարելով, որ նոր խորհրդակցութիւններ աւելորդ էին, ազնւականութիւնը խօսք չէր ուզում հասկանալ, որ ժողովրդի ներկայացուցիչները պետական կնքապահի հսկողութիւնը ընդունել չէին կարող, քանի որ նա էլ ազնւականութեան կողմը պիտի բռնէր անշուշտ, որ մեր պատուիրակները Թագաւորի առաջ՝ նախապէս դատապարտւած յանցաւորների դերը պիտի ստանային և որ, վերջապէս, 1589-ի խաղն էին ուզում խաղալ նորից ժողովրդի պատգամաւորների գլխին։ Այդ թւին, այն ժամանակւայ Թագաւորը առաջարկել էր «յուզւած մտքերը հանգստացնել» և յիրաւի հանգստացրել էր... դատապարտելով երրորդ դասակարգին պետական խորհրդի մի վճռով։

«Երեսփոխաններից շատերը նոյնպէս դէմ էին Թագաւորի առաջարկին, իսկ նրա նամակը համարում էին որպէս թակարդ։

«Սակայն, չը նայելով դրան, միւս օրը, 29-ին, «սպառելու համար հաշտութեան վերջին միջոցը», Թագաւորին ուղղւեցաւ մի շատ-խոնարհ խնդիր, շնորհակալ լինելով նրա բարութեան համար և աւելու, որ երրորդ դասակարգի պատուիրակները պատրաստ են վերսկսել իրենց նիստերը կրօնաւորութեան և ազնւականութեան պատուիրակների հետ։

«Սակայն հետևեալ երկուշաբթի, յունիսի 1-ին, մեր պատուիրակներից Րաբօ դը Սէնտ-Էտիէնը եկաւ մեզ յայտնելու, թէ Նեկկեր նախարարը առաջարկում էր լիազօրների ստուգութեան դասակարգային ձևը ընդունել (ամեն դասակարգ՝ առանձնապէս ժողովելով). իսկ կասկածելի դէպքերում՝ դիմել պետական խորհրդին։

«Այժմ պարզ էր։ Թագաւորն ինքը հակառակ էր լիազօրութեան ստուգման ընդանուր ձևին և ուզում էր ունենալ երեք առանձին խորհուրդներ՝ փոխանակ մէկի։ Նա ազնւականութեան և կղերականութեան կողմն էր և երրորդ դասակարգին հակառակ։ Մնում էր ուրեմն միմիայն մեզ վրայ դնել մեր յոյսը և ուրիշ ոչ ոքի. ոչ իսկ Թագաւորի։

«Այս բոլոր խաղերն ու սեթևեթութիւնները սկսում էին այն աստիճան աչք ծակել, որ յետին գիւղացին անգամ հասկանում էր, թէ կամենում էին խափել ժողովրդին, թող փչել նրա աչքին և դարձեալ լծել ու տանջել առաջւայ նման։ Այդ բոլորը կարելի էր բացատրել պարզ, շատ պարզ ձևով, առանց ճարտարախօսութեան՝ այսպէս.

«—Դուք այս ինչ բանն էք ուզում.—Իսկ ես այս միւսը.—Դուք մեզ սպառնում էք զինւորներով.—Փարիզցիները մեր կողմն են.—Դուք ունիք վառօդ, հրացան, թնդանօթ, զինւորական զունդ և այլն—Իսկ մենք միմիայն մեր լիազօրութիւնն ունինք, սակայն յոգնել ենք կողոպտւելուց, ծեծւելուց և թալանւելուց.—Կարծում էք թէ մեզնից զօրեղ էք—տեսնենք...

«Ահա ամբողջի իմաստը։ Ամեն ճարտարախօսութիւն ու շատախօսութիւն աւելորդ է, երբ իրաւունքն ու արդարութիւնը պարզ յայտնի են։—Մեզ խաղացնում են, իւղ քսում մեր գլխին... Պէտք է իսկոյն գործի անցնել... Վճարում ենք — ուզում ենք իմանալ թէ ինչ է լինում մեր փողը. իսկ ամենից առաջ—ուզում ենք վճարել հնար եղածին չափ քիչ։ Մեր որդիքը զինւոր են լինում—ուզում ենք իմանալ, թէ ով է նրանց հրամայողը, ինչու են հրամայում և ինչ շահ մեզ դրանից... Դուք ազնւականութիւն ու երրորդ դասակարգ ունիք—ինչացու են այդ տարբերութիւնները. ինչու պիտի ազնւականների որդիները ժողովրդի որ-

դիններից գերադասուեն։ Արդեօք ո և է մի այլ ցեղի են պատկանում նրանք. Աստծուց են սերուած. իսկ մեր որդիները անասուններից.
—Ահա դրանք են, որ պիտի այլ ևս պարզուեն այժմ...

«Այսպէս ուրեմն, ազնուականութիւնը, յոյսը դրած զօրքերի վրայ՝ ուզում էր ուժով յաղթանակել և դրա համար էլ մերժեց բոլոր մեր առաջարկները։

«Յունիսի 10-ի ժողովում, ազնուականութեան հետ ունեցած մեր պատուիրակների բանակցութեանց տեղեկագիրը կարդացւելուց յետոյ, Միրաբօն բացականչեց, որ ժողովրդի ներկայացուցիչներն այլ ևս սպասել չեն կարող, որ մենք պարտաւորութիւններ ունէինք կատարելու և որ ժամանակ էր գործի անցնելու։ Յետոյ յայտարարեց, որ Փարիզի պատգամաւորութեան մի անդամը մտադիր է մի շատ կարևոր առաջարկ անել և խնդրում է ժողովի խորին ուշադրութիւնը։

«Այս անդամը Աբբայ Սիէյէս էր, հարաւային ֆրանսացի, 40—45 տարեկան մի մարդ, որ խօսում է վատ և թոյլ ձայնով, բայց խելօք և գործնական։

«Ահա թէ ինչ ասաց նա, երբ տիրեց խորին լռութիւն.

«—Երեսփոխանական ժողովի բացման օրից սկսած՝ ժողովրդի ներկայացուցիչները ունեցել են խաղաղ և ճշգրիտ վարմունք։ Նրանք ցոյց են տուել ամեն յարգանք դէպի կրօնաւորութիւնն ու ազնուականութիւնը, մինչ դրա փոխարէն ստացել են երկու դասակարգերի կողմից միմիայն կեղծաւորութիւն և խուսափանք (subterfuges)։ Ժողովը այլ ևս չէ կարող մնալ անգործութեան մէջ, առանց դաւաճանած լինելու իր պարտաւորութիւնները և իրենց ընտրողների շահերը։ Ժամանակ է ուրեմն նախ ստուգել նրանց լիազօրութիւնները։ Ազնուականութիւնը մերժում է մասնակցելու մեր ժողովներին. բայց եթէ դասակարգերից մէկը չէ ուզում շարժուել, պէտք է որ միւսներն էլ անշարժ մնան։ Ո՛չ։ Ուրեմն ժողովին մընում է միայն մի վերջին անգամ ևս հրաւիրել երկու դասակարգերին՝ միանալու ընդհանուր ժողովին, գալ մասնակցելու խորհրդակցութեան, ստուգելու լիազօրութիւնները և գործի անցնելու։ Իսկ եթէ մերժեն նրանք այդ—առանց նրանց ձեռնարկել գործի»։

«Միրաբօն դրանից յետոյ աւելացրեց, որ հարկաւոր էր զգոյշ լինել կրօնաւորութեան և ազնուականութեան խաղերից։

«Մի երկրորդ նիստ ևս տեղի ունեցաւ նոյն օրը ժամը 5-ից մինչև 8-ը։ Աբբայ Սիէյէսի առաջարկն ընդունուեց և որոշուեցաւ միանգամայն մի ուղերձ գրել Թագաւորին, պարզելու երրորդ դասակարգի այդ վճռի պատճառները։

«Ուրբաթ, յունիսի 12-ին, պէտք եղաւ երկու միւս դասա-

կարգերին հաղորդել մեր որոշումը և գրել Թագաւորին ուղերձ։

«Մալուէն առաջադրեց ուղերձի մի ձև, որ թէև գրուած էր ուժեղ, ճարտարախօս, բայց և լի էր շողոքորթութիւններով։ Երբ վերջացրեց կարդալը, Վօլնէյը, որ ասում էին թէ շրջել է Եգիպտոսն ու Պաղեստինը, կանչեց.

«—Զգուշանանք այն տեսակ գովեստներից, որ ներշնչում է մեզ շողոքորթութիւնն ու գծուծութիւնը և որի ետևում թագնուած կայ շահադիտական նպատակը։ Այստեղ մենք չափից աւելի արդէն շրջապատուած ենք խորամանկ ցանցերով ու խաղերով, մեր ծծած օդն իսկ վարակուած է. և աւա՜ղ, ըստ երևոյթին ժողովրդի ներկայացուցիչներն իսկ չեն ազատել վարակումից»...

«Եւ նա երկար շարունակեց այդպէս։ Մալուէն ոչինչ չըկաբողացաւ առարկել և լուռ մնաց։

«Վերջիվերջոյ, երկար կռիւներից ու վէճերից յետոյ, որոշուեցաւ Թագաւորին ուղարկել մի պատգամաւորութիւն, որ պիտի տանէր Բարնավի խմբագրած ուղերձը, գրուած պարզ և միմիայն փաստերը թւած՝ ժողովի բացման օրից մինչև այժմ։

«Սակայն մեր պատգամաւորները ետ դարձան առանց Թագաւորին տեսնել կարողանալու, որովհետև նա որսի էր գնացել։ Ազնուականութեան կողմից էլ եկաւ մի պատուիրակութիւն և յայտնեց, որ իրենց դասակարգի ժողովը պիտի խորհրդակցէր մեր առաջարկի վրայ։

«Բայլի, երրորդ դասակարգի Փարիզի պատգամաւորը, ասաց նրանց.

«—Բայց պարոններ, ժողովդեան ներկայացուցիչները վաղուց է որ սպասում են պարոն ազնուականներին»։

«Եւ առանց թողնելու որ այս նոր ձևականութիւնով գործը երկարաձգուէր ինչպէս նախկինները — այն էլ միմիայն օրէցօր և շաբաթից շաբաթ քաշքշելու համար — սկսեցին ստուգել ներկայ եղող պատգամաւորների թիւը՝ ըստ նահանգների։ Դրա համար ընտրեցաւ ժամանակաւոր նախագահ Բայլին և երկու քարտուղարներ ևս, որոնք պիտի կազմէին արձանագրութիւն, մի առ մի կանչէին ու ստուգէին պատգամաւորներին և վարէին ժողովի միւս գործառնութիւնները։

«Ստուգելու գործը սկսեց ժամը 7-ին և վերջացաւ 10-ին։

Եւ այնուհետև մենք կազմեցինք ոչ թէ «երրորդ դասակարգի ժողով» ինչպէս միւս դասակարգն էր ուզում արած լինել—այլ Երեսփոխանական ընդհանուր ժողով. աւելի ճիշտը, արտօնեալ դասակարգային ժողովները յայտարարելով որպէս մասնաւոր, ժողովրդի ներկայացուցիչների ժողովը անուանեցաւ Ազգային Ժողով։

«Հինգ ամբողջ շաբաթներ էինք կորցրել ազնուականութեան և եպիսկոպոսների խաղերի շնորհիւ. ժամանակն էր կարճ կտրելու նրանց արածները:

«Վերջապէս յունիս 12-ին, երկար վիճաբանութիւնից յետոյ, Երեսփոխանական ժողովը, Աբբայ Սիէսի առաջարկութիւնով, փոխեց իր անունը և վերակոչուեց Ազգային Ժողով:

«Ամենից լաւն այն էր, որ սկսած նոյն իսկ այդ օրից, ամեն օր մի քանի քահանաներ՝ բաժանւում էին եպիսկոպոսների ժողովից և գալիս էին ստուգել տալու իրենց լիազօրութիւնը մեզ մօտ ու միանում մեզ: 13-ին Պուատուի 3 պատգամաւոր քահանաները եկան, 14-ին—վեց ուրիշները, 15-ին—2, 16-ին—6 և այսպէս շարունակաբար: Երևակայեցէք այլ ևս մեր խնդութիւնը, մեր ոգևորութեան աղաղակներն ու համբուրուելը այդ նոր պատգամաւորների հետ: Մեր Նախագահը, նիստերի կէսը անց էր կացնում գովասանելով այդ երէցներին՝ յուզմունքից արտասուալից աչքերով: Առաջին եկողների թւումն էր Ամբեր-Մէնիլի այն երէցը, որին ես շատ անգամ եմ ծախել իմ գրքերից: Երբ նրա գալը տեսայ, վազեցի նրան գրկելու և ասացի ականջին.

«—Բարի եկաք. ուրախ եմ, որ Քրիստոսի օրինակին հետևելով՝ չէք գնում իշխանների և քահանայապետների, այլ ժողովրդեան մօտ»:

«Ու պատկերացնում էի ինձ կողքի սրահում նստած եպիսկոպոսների կախուած քթերը... Որպիսի խայտառակութիւն նրանց համար:

«Իսկապէս, բաւական յիմար պիտի լինէին այդ քահանաները, որ մնային խորհրդակցելու դարերով իրենց ճնշող ու ստորացնող անձերի հետ: Ժողովրդի սիրտը և զգացմունքը նոյնն է, լինի նա վերարկուի կամ գիւղական բաճկոնի տակ:

«Յունիսի 17-ին վերջապէս, շրջապատող հինգ վեց հազար հանդիսատեսների մէջ տեղ, ժողովը յայտարարեց և հռչակեց իրեն որպէս ազգային հաստատութիւն և իւրաքանչիւր անդամ երդուեց այսպէս.

«—Երդւում ենք ու խոստանում ամենայն նախանձախնդրութեամբ և հաւատարմութեամբ կատարել մեզ վրայ դրուած պարտականութիւնները»:

«Բայլիին հաստատեցին որպէս նախագահ Ազգային Ժողովի և անմիջապէս, միաձայն քուէարկութեամբ, յայտարարեցին հետևեալը.

«—Ժողովը, յանուն ամբողջ ազգի, առժամապէս համաձայն է գոյութիւն ունեցող հարկերի վճարմանը, թէև ապօրինի է նշանակուած և ապօրինի ձևով է ժողովւում. սակայն նրանց գոյութիւնը ընդունում է միայն մինչև ժողովի առաջին փակումը—ինչ պատճառով որ նա փակուելիս էլ լինի: Ժողովը լուծուելուն պէս, ամբողջ պետութեան նահանգների մէջ հարկերի հաւաքումը պիտի դադարի»:

«Խորհեցէք այդ մասին, վարպետ Ժան, և հասկացրէք երկրի մեծերին: Մեր դարևոր թշուառութիւնը յառաջացել է միմիայն նրանից, որ մենք լինելով ողորմելի և ստրուկ, վճարել ենք ամեն հարկ ու տուրք, առանց ժողովրդեան ներկայացուցիչների համաձայնութեան:

«Դրամը պատերազմի ջիղն է և մենք միշտ մեր դրամը տուել ենք մեր վզերին չուան ձգողների ձեռքը: Սակայն այժմ, ով որ Ազգային Ժողովի լուծումից յետոյ կը վճարի ո և է հարկ—կը համարուի ամենախայտառակ արարած և դաւաճան հօրը, մօրը, կնոջը, որդիներին, ինքն իրեն իսկ և դաւաճան հայրենիքի. իսկ նա, ով կը յանդգնի հարկ հաւաքել, չը պիտի համարուի ֆրանսացի, այլ միմիայն աւազակ: 1789 թւի Ազգային Ժողովի յայտարարած ամենաառաջին սկզբունքն է դա:

«Նիստը փակուեց ժամը 5-ին և որոշեց վերսկսել նոյն երեկոյ:

«Կարող էք պատկերացնել ձեզ, թէ ինչպէս Թագաւորի, Թագուհու և իշխանների բերանները բաց մնացին, երբ իմացան երրորդ դասակարգի այդ յայտարարութիւնը:

«Նիստի ընթացքում եկել էին խնդրելու Բայլիին (Նախագահին) որ գնար պետական խորհրդարանը և այնտեղ անձամբ ընդունէր Թագաւորի գրած մի նամակը. սակայն ժողովը թոյլ չը տուեց նրան սրահից դուրս գնալ և բացակայել:

«Նոյն երեկոյեան նիստին, Բայլին կարդաց Թագաւորի նամակը, որով նա յայտնում էր, թէ անտեղի է գործածել «արտօնեալ դասակարգ» բառերը մի քանի պատգամաւորների կողմից՝ ուղղուած ազնուականների ու կղերականութեան հասցէին:

«Բառը նրա քէֆին չէր եկել: Դա հակառակ է—ասում էր նա—այն համերաշխութեան, որ պիտի տիրէր մեր և նրանց միջև:

«Զարմանալի՛ բան. խօսքը քէֆին դիպել էր, իսկ բուն երևոյթը քէֆին գալիս էր և պիտի մնար՝ ինչպէս կար:

«Անարդարութիւնը գոյութիւն չունի արքունիքում՝ երբ նրան արդարութիւն են անւանում. ո՛չ էլ գծուծութիւնը՝ երբ նրան մեծութիւն են կոչում: Ի՞նչ պատասխանել դրան: Եւ ամենքն ի հարկէ լուռ մնացին:

«Ուրբաթ, 19-ին, կազմեցան յանձնաժողովներ—թւով չորս: Առաջինը՝ ստուգելու համար պատգամաւորների լիազօրութիւնը.

երկրորդը՝ ժողովի պէտքերը հոգալու համար, երրորդը՝ Թղթակցութիւնների և արձանագրութեանց տպագրութեան և չորրորդը—ժողովի որոշումները կարգի դնելու համար։ Ամեն բան կարգին էր և մենք պիտի սկսէինք արագօրէն առաջ գնալ, սակայն արքունիքի քէֆին չէր գալիս այդ բոլորը, մանաւանդ որ երեկոյեան ժամը 6-ին յայտնեց, թէ կղերական դասակարգից 149 պատգամաւոր համաձայնութիւն էին յայտնել լիազօրութեան ստուգումը կատարել ընդհանուր կերպով, մեր ժողովում։

«Ամէն բանի դիմացել էինք՝ մեզ յանձնուած պաշտօնը կատարելու համար. եղել էինք խաղաղ, լռել նախատինքի, կեղծաւոր խաղերի, անամօթութեան առաջ... Եւ երբ տեսան որ մեր ոյժը ջլատելու ամեն տեսակ խաղ ապարդիւն անցաւ, վճռեցին դիմել աւելի կոշտ և ստորացուցիչ միջոցների։

«Եւ ահա թէ յունիսի 20-ին ինչե՛ր կատարեցին։

«Այդ օրը առաւօտ շուտով կարելի էր լսել թէ ինչպէս փողոցներում Թագաւորի մունետիկները յայտարարում էին հետևեալը.

—«Նորին Վեհափառութիւն Թագաւորը, որոշած լինելով ներկայ լինել Երեսփոխանական ժողովի նիստերին երկուշաբթի, 22-ին—ժողովի երեք սրահներում ձեռնարկուած է պէտք եղած ձևովը ընդունելութեան պատրաստութիւն։ Դրա համար էլ, այդ սրահները փակ կը մնան մինչև որոշուած օրը։ Նորին Վեհափառութիւնը կը բարեհաճի առանձնապէս մի նոր հրաւէրով յայտնել երկուշաբթի օրւայ ժողովի բացման ժամը»։

«Միևնոյն ժամանակ տեղեկութիւն եկաւ, որ ֆրանսական պահակների մի գունդ տիրել է և շրջապատել մեր ժողովների սրահը և բանակել այնտեղ։

«Ամէն ոք իսկոյն հասկացաւ, որ հասել էր վտանգաւոր րոպէն։ Երկու պաշտօնակիցներս—Ժէրարն ու հայր Ժաքը եկան ինձ մօտ ժամը 7-ին։ Ժողովի բացումը նշանակուած էր ժամը 8-ին։ Նախաճաշելուց յետոյ, վճռեցինք հաստատուն կենալ նախագահի շուրջը, որ մեր միութեան ներկայացուցիչն էր և հետևապէս մեր ոյժը։ Ճիշտն ասելով, գործին արգելք լինողներին մենք համարում էինք որպէս անփորձ, անընդունակ, անքաղաքավարի սրիկաներ, որոնք միշտ ուրիշի աշխատանքովն են ապրել միայն օգտուելով ժողովրդի տգիտութիւնից և տխմարութիւնից։ Ժողովրդի, որ թոյլ է տալիս իր քթից բռնելու՝ ամեն սպասաւորի ու անազնիւ մարդու, առանց մտածելու թէ բոլոր այդ ոսկեթել բանւածքները, փետրազարդ գլխարկները, կառքերն ու ձիերը իր քրտինքի դառն արդիւնքից է հանած և զանազան սրիկաների ձեռքը նետած։

«Իսկ սրահի դռները մեր առջև փակելն այնքան տափակ ու անհամ կատակ էր թւում, որ ուսերնիս էինք միայն թոթւում։

«Բնականաբար մեր բարի Թագաւորը չը գիտէր այդ բաները. նրա խաղաղ ու հանդիստ հոգին չէր իջնիլ մինչև այդ աստիճան ողորմելի միջոցների դիմելու և մենք օրհնում էինք նրա բարութիւնն ու պարզութիւնը, առանց նրան վերագրելու պալատականների յիմարութիւնն ու լրբութիւնները։

«Ժամը 8-ի մօտերը տնից դուրս եկանք։ Սրահին հասնելիս, տեսանք հարիւրի չափ երրորդ դասակարգի պատգամաւորներ, որոնք ժողովւել էին բացաստանի (esplanade) վրայ և նրանց մէջ տեղն էր նախագահ Բայլին։ 50—55 տարեկան մի մարդ է այդ պատուական անձը՝ երկար, ազնիւ և վճռական դէմքով։ Ոչնչի մէջ չէ շտապում. լսում է և երկար նայում՝ մի բան անելուց առաջ. իսկ երբ վճռել է—երբէք ետ չի քաշւում։

«Հետզհետէ, զանազան ծառուղիներով, հասնում էին միւս պատգամաւորներն էլ։ Երբ ժամը 9-ը խփեց, Բայլին և իր երկու քարտուղարները մեր գլուխն անցած, քայլեցինք դէպի սրահը։ Մի քանի ֆրանսիացի պահակներ դռան առաջ ճեմում էին։ Հէնց որ տեսան մեր մօտենալը, մի հրամանատար սպայ երևաց և առաջ եկաւ։ Բայլին նրա հետ մի խիստ վէճ ունեցաւ։ Մօտ չէի, լսելու համար նրանց խօսակցութիւնը, բայց իսկոյն յայտարարւեց, որ դռները փակուած էին մեր առաջ։ Սպան, մի շատ քաղաքավարի մարդ, ներողութիւն էր խնդրում, որ ստիպուած էր կատարելու իրենց տրուած հրամանը։ Զայրոյթը համակում էր մեզ։ Քսան րոպէից յետոյ ժողովի բոլոր անդամները ամբողջապէս հասան։ Եւ որովհետև սպան, չը նայելով իր քաղաքավարութեանը, չէր կամենում մեզ ներս թողնել,—մի քանի պատգամաւորներ սկսեցին ուժգնութեամբ բողոքել և մեծ աղմուկի մէջ մի քանիսներն էլ բարձրացան մինչև շէնքի վանդակորմը։ Շատերը աղաղակում էին որ հարկաւոր էր Մարլի գնալ և ուղղակի Թագաւորի դղեակի լուսամուտների տակ ժողով անել. ուրիշներն էլ ասում էին, որ Թագաւորի միտքն է ազգին մղել քաղաքական—ներքին կռւի մէջ, սովամահ անել երկիրը և որ այդպիսի վարմունք չէ տեսնուած նոյն իսկ բռնաւորներից ամենամեծների—Լուի XI-ի, Րիշիլիէօի և Մազարինի օրերով։

«Վէրսայլի ժողովրդեան կէսից աւելին հաւաքուել մեր շուրջը, զայրոյթ էր արտայայտում մեզ նման։ Ամբոխը—կին, տղամարդ, շրջապատած՝ լսում էր։ Բայլին ժամը 10-ին հեռացաւ. չը գիտէին ուր գնաց նա, երբ երեք պատգամաւորներ եկան մեզ իմացնելու, որ իրենց ընկերակցող սպաների օգնութեամբ յաջողւելով մեր ժո-

ղովների թղթերն ու արձանագրութիւնները հանել սրահից—ժողովի նիստերը տեղափոխւում էին մի ուրիշ սրահ, ուր սովորաբար գնդակ էին խաղում: Գնդախաղի այդ սրահը գտնւում էր Ս. Ֆրանսուա փողոցում և կարող էր բաւականանալ մեզ:

«Անմիջապէս, շրջապատւած խուռն ամբոխով գնացինք այդ սրահը: Ամէն ինչ ցոյց էր տալիս, որ ազնւականութիւնն ու կղերը զգւած մեզ խնայելուց, սկսել էին կոպիտ միջոցների դիմել: Հետևապէս պէտք էր սպասէինք աւելի վատ բաների:

«Գնդախաղի սրահը մի քառակուսի շէնք է, մօտ 35 ոտնաչափ բարձրութեամբ, առանց սիւների, սալայատակած. լոյսը ներս էր թափանցում գետնից շատ բարձր մի քանի լուսամուտներից. այդպիսով սրահը մռայլ կերպարանք է ստանում: Ոչինչ չը կար այնտեղ—ոչ նստարան, ոչ աթոռ, ոչ էլ սեղան. պէտք եղաւ դըրացի տներից բերել մի քանի հատ: Սրահի տէրը, ըստ երևոյթին, շատ գոհ մնաց իր շէնքին արւած այդ պատւից և գտաւ մի սեղան ու մի քանի աթոռներ: Ամբոխը տեղ բռնեց պատերի տակ գըտնւող նեղ վերնատների մէջ:

«Բայլին, բարձրանալով մի աթոռի վրայ, բարձրաձայն յիշատակեց եղածները, յետոյ կարդաց մեծ արարողապետ Բրէզէ մարքիզի երկու նամակները, որոնցով այդ աղան հաղորդում էր մեզ թագաւորի հրամանը՝ նիստերը յետաձգելու մինչ թագաւորի նշանակած օրը:

«Երկու նամակների նիւթը միևնոյնն էր, սակայն երկրորդը աւելացնում էր, որ հրամանը վճռական է: Այնուհետև Բայլին առաջարկեց քւէարկել թէ ինչ պէտք էր անել:

«Անօգուտ է պատմել մեր յուզմունքը: Երբ մարդ մի մեծ ժողովրդեան ներկայացուցիչ է, տեսնում է որ այդ ժողովրդին նախատինք են պատճառում, երբ մարդ յիշում է, որ իր հայրերը դարերով տանջւել են այս աղաների ձեռքում, ստրկութեան մէջ և երբ ժողովրդի ներկայացուցիչներին այդքան լրբութեամբ արհամարհում ու վիրաւորում են, կամենալով մեր նախնիքների հետ ունեցած բռնաւորական վարմունքը շարունակել—մարդ պատրաստ է ամէն ինչ զոհել՝ պահպանելու համար իր իրաւունքները և ջարդ ու փշուր անելու այն յանդգնութիւնը, որ կամենում է ժողովրդին պահել միշտ ստորացուցիչ դրութեան մէջ:

«Մունիէ, զայրոյթով լի, բայց սառնարիւնութեամբ՝ մէջ տեղ եկաւ ու սկսեց խօսել:

«Մեր աչքի առաջ դրեց նա այն հանգամանքը, որ այլանդակ բան էր տեսնել Երեսփոխանական ժողովի սրահը զինւորներով լցւած, իսկ Ազգային Ժողովը դռան վրայ սպասելիս, են-

թարկւած վիրաւորիչ ծաղրի ազնւականութեան և սպասաւորների կողմից: Ստիպւած եղանք—աւելացրեց նա, տեղ որոնել գնդախաղի սրահում, մեր աշխատութիւնը շարունակելու համար: Մեզ մեր պաշտօնի և լիազօրութեան մէջ վիրաւորելու մտադրութիւնը այնքան պարզ է այժմ, որ անմիջապէս տեսնւում է թէ ինչպէս յաջողւել են աղէտալի միջոցների դրդել մեր բարի թագաւորին՝ զանազան խարդախ ու խայտառակ մարդիկ:

Ժամանակ է ուրեմն, որ մենք, ժողովրդի ներկայացուցիչներս, սեղմենք մեր շարքը և հանդիսաւոր երդումով միանանք միմեանց՝ յանուն ազգային ընդհանուր շահերի և հայրենիքի բարօրութեան»:

«Այս առաջարկը մի արտասովոր ոգևորութիւն յառաջացրեց: Ամէն ոք զգում էր, որ պատւական մարդկանց միութիւնը՝ սրիկաների համար սարսափ կարող էր լինել: Եւ անմիջապէս հետևեալ որոշումը տրւեց հանդիսաւորապէս:

«Նկատելով որ Ազգային ժողովը հրաւիրւած է պետական սահմանադրութիւն հիմնելու, ընդհանրական բարեփոխութիւններ մշակելու և պետութեան իսկական սկզբունքները պահպանելու—ոչինչ արգելք չէ կարող լինել որ նա շարունակի իր խորհրդակցութիւնները ուր որ էլ ստիպւի ժողովւելու. ամէն տեղ, ուր իր անդամները հաւաքւեն, այնտեղ է Ազգային ժողովը:

«Որոշում է նաև, որ ժողովի բոլոր անդամները իսկոյն պիտի հանդիսաւոր երդում տան երբէք չը բաժանւելու միմեանցից և ուր որ հանգամանքը ների, հաւաքւեն այնտեղ՝ մինչև որ պետական սահմանադրութիւնը հաստատւի և ամուր հիմքերի վրայ դրւի: Երդումը տալուց յետոյ, իւրաքանչիւր անդամ յատկապէս կը հաստատի այս անդրդւելի վճիռը իր ստորագրութիւնով»:

Ինչպէ՜ս երջանիկ կը լինէիք, վարպետ Ժան, եթէ տեսնէիք այդ միջոցին այդ մութ սրահը, մենք մէջ տեղում, ժողովրդով շրջապատւած, լսէիք այն մեծ շշուկն ու մռմռոցը, գոհութեան ու ոգևորութեան բացականչութիւնները: Եւ մանաւանդ տեսնէիք թէ ինչպէ՜ս նախագահ Բայլին, բարձրացած մի աթոռի վրայ՝ կարդաց երդումի ձևը խորին, կրօնական լռութեան մէջ և յանկարծ հարիւրաւոր ձայներ միաձայն ու որոտալից թնդացին հին շէնքի մէջ.

—Երդւում ենք... երդւում...

«Ա՜հ, մեր նախնիքները, որ այնքան տանջւեցին, անշուշտ շարժւեցին իրենց գերեզմանների մէջ: Գիտէք որ ես շատ փափկասիրտ մարդ չեմ, սակայն այդ միջոցին մի կաթիլ արիւն չը մնաց երակներիս մէջ: Երբէք չէի կարող երևակայել այդքան մեծ երջանկութիւն: Կողքիս կանգնած հայր Ժաքը արտասւում էր, ժէ-

բարը գունատ էր յուզմունքից և վերջ ի վերջոյ ամենքս սկսեցինք ուրախութիւնից գրկել միմեանց։

«Դրսում, հին քաղաքի մէջ, մի անհուն աղաղակ էր բարձրացել. մի խոշոր, ոգեւորութեան ծայրայեղութեան հասնող «Կեցցէ», որ թնդում էր փողոցներում։ Յիշեցի Աւետարանի խօսքերը, երբ Քրիստոսի հոգին երկինք բարձրացաւ. «Եւ երկիրը դողաց, տաճարի վարագոյրը պատռեց»...

«Երբ խաղաղութիւն տիրեց, ամեն պատգամաւոր հերթով մօտ գնաց սեղանին, կրկնեց երդումը և ստորագրեց երդմնագրի տակ։ Երբէք անունս այդքան հաճոյքով չէի ստորագրել։ Գրելիս ծիծաղում էի և լաց լինում... Օ՜հ, ինչ հրաշալի օր էր այդ...

«Միայն մի հատ, մի պատգամաւոր, Կաստելնօդարիից Մարտէն դ'Օխը գրեց՝ «Դէմ եմ»։ Վալէնտինը կարող է գոհ լինել, որ իր տեսակի նման մարդ կայ Ֆրանսիայում և որ կայ մի հատ եւս ժողովրդի մարդ, որ սիրում է ազնուականներին։ Նրանով երկու հոգի կը դառնան։ Մարտէն դ'Օխի դէմ լինելը արձանագրեցին։

«Յետոյ մի քանիսները առաջարկեցին պատուիրակութիւն ուղարկել Թագաւորին, յայտնելու համար մեր խորին ցաւը և այլն, և այլն։ Իսկ ժողովը, այդ, այլ և յետագայ նիստը յետաձգեց մինչև երկուշաբթի 22-ին, սովորական ժամին, որոշելով բացի դրանից, որ եթէ Թագաւորական նիստը տեղի ունենար Երեսփոխանական ժողովի սրահում—երրորդ դասակարգի բոլոր անդամները ներկայ լինելուց յետոյ, մնային—զբաղւէին իրենց գործերով։

«Ժամը 6-ին նիստը փակւեց։

«Իմանալով անցած—դարձածը, Արտուայի կոմսը զարմացաւ, որ կարելի էր ժողով կազմել գնդախաղի սրահում. և շտապեց 22-ի օրւայ համար վարձել սրահը, որ գնդախաղով զւարճանար և արգելք լինէր մեզ այնտեղ ժողովւելու։ Այս անգամ արդէն ապահով էր, խե՜ղճ իշխանը, որ մենք այլևս տեղ չը պիտի գտնէինք ժողովի համար։

«Հետևեալ օրը Թագաւորը ուղարկեց իմաց տալու, որ նիստ չը պէտք է լինէր 22-ին, այլ 23-ին։ Ուզում էր խանգարած լինել մեզ։ Բայց, աւա՜ղ, այդ երևելի հանճարները երբէք չէին մտածել, որ Վերսայլում ուրիշ տեղեր էլ կարող էին լինել ժողովի համար, բացի Երեսփոխանական ժողովի և գնդախաղի սրահներից։ Այնպէս որ, 22-ին գտնելով երկու սրահներն էլ փակւած, Ազգային ժողովը փառաւոր կերպով գնաց նախ Րէքօլլէյի տաճարը, բայց գտնելով որ նա փոքր էր—մտաւ Ս. Լուիի եկեղեցին և այնտեղ հանգիստ տեղաւորւելով՝ սկսեց շարունակել իր գործը։

«Այդպիսով կոմս դ' Արտուայի, Կոնտի և Կոնտէի իշխաններ

հիանալի ծրագիրը մարդավարի կերպով ջուրն ընկաւ։

«Սկի կարելի՞ բան էր—մտածում էին նրանք—որ Ազգային ժողովը երթար մտնէր մի եկեղեցի, տեղաւորւէր նրա նստարանների վրայ և կղերականութիւնն էլ գնար միանալու նրան։

«Տեսնո՞ւմ էք ինչպիսի տխմարներ են այդ իշխանները, որոնք դարերով մեզ ստորացրած դրութեան մէջ են պահել։ Այժմ պարզ է, որ տգիտութիւնն է եղել միշտ մեր դրութեան պատճառը։

«Կէսօրւայ մօտերը Բայլին մեզ յայտնեց, որ իմաց էր տրւած, թէ կղերականութեան մեծ մասը ժողով էր գալու և ստուգել տալուց յետոյ իրենց իրաւասութիւնը, միանալու էր մեզ։ Ամսի 19-ից ի վեր արքունիքը գիտէր այդ և արգիլելու համար էր, որ փակել էին սրահները և Թագաւորական նիստ էին պատրաստում։

«Կղերականութիւնն առաջ դեռ հաւաքեց եկեղեցու երգեցիկներին վերնատունը, յետոյ միացաւ մեզ ներքևում և տեղի ունեցաւ այդտեղ մի սրտաշարժ տեսարան։ Երէցները քաշ էին տւել իրենց եպիսկոպոսներին, և եպիսկոպոսները, ամենքն էլ գրեթէ խելքի էին եկել։ Միայն մի եպիսկոպոս, Վնէսէն կոմսութեան առաջնորդը, մի կօշկակարի որդի, իրեն վիրաւորւած էր զգում, որ խառնւեց երրորդ դասակարգի պատգամաւորներին։ Այլանդա՜կ բաներ կան աշխարհիս վրայ.

«Երբ միութիւնը տեղի ունեցաւ, արտասանւեցին մի քանի ճառեր իբր շնորհաւորութիւն, որից յետոյ նիստը փակւեց՝ շարունակւելու համար միւս օրը ժամը 9-ին՝ Երեսփոխանական ժողովի դահլիճում.

«Այդպէս, 23-ին, բոլոր պատգամաւորները պիտի գնային Թագաւորական նիստին։

«Առաւօտեան, լուսամուտս բանալով, տեսայ որ զզւելի եղանակ էր դրսում։ Ճշմարիտ է, դեռ անձրևը չէր սկսել, բայց երկինքն ամբողջովին ծածկւած էր ամպով։ Այդ սակայն չէր խանգարել ու փողոցները լիքն էին ամբոխով։ Քիչ յետոյ Ժէրարը, յետոյ էլ հայր Ժաքը, եկան նախաճաշելու։ Հանդիսաւոր օրւայ հագուստները հագանք, ժողովների ճիշտ առաջին օրւայ պէս։ Ի՞նչ էր նշանակում Թագաւորի ներկայ լինելու ցանկութիւնը այդ նիստին. ի՞նչ ունէր ասելու մեզ։ Գիտէինք երէկւանից իվեր, որ զւիցերական զինւորները *) և ֆրանսիական պահակները զէնքի էին կանչւած։ Ասում էին որ վեց վաշտ զօրք էլ գալիս էր Վէրսայլի վրայ։

---

*) Կօզակների նման։

«Նախաճաշելիս, տեսնում էինք թէ ինչպէս պահակագունդը գնում-գալիս էր Ս. Ֆրանսուա փողոցով։ Ժէրարը կարծում էր, որ պիտի մեզ ծեծէին քիչ, գուցէ պետական մի սուր ու յանկարծակի փոփոխութիւն (coup d'Etat) անէին, ստիպելու որ քւէարկենք դէֆիցիտը և կորսւինք գնանք։

«Հայր Ժաքը առարկում էր, որ դա շատ կը նմանէր աւազակային վարմունքի—մէկի կոկորդիցը բռնել և ասել «կամ կեանքըդ կամ քսակդ»։

«—Թագաւորը—աւելացնում էր նա—ընդունակ չէ այդ բանին, չը նայելով որ շատ է լսում Թագուհուն և կոմս դ'Արտուային։

«Ես էլ նոյնն էի մտածում. իսկ թէ ինչու Թագաւորը ժողովի էր գալիս, ինչքան մտածում էի, չէի հասկանում։ Ինձ թւում էր որ ուզում էին վախեցնել մեզ։

«Ինչ որ էր, շուտով պիտի իմանայինք։ Ժամը 9-ին դուրս եկանք։ Դէպի սրահը տանող փողոցներն արդէն էլ ասեղ ձգելու տեղ չը կար. պահակները գնում—գալիս էին. ամեն տեսակ մարդիկ — բուրժուաներ, գործաւորներ ու զինւորներ՝ անհանգիստ դէմք ունէին. ամեն ոք մի ծանր բանի էր սպասում։

«Այն րոպէին, երբ սրահին էինք հասել, անձրևն սկսեց. հեղեղը անշուշտ պիտի հետևէր դրան։ Շտապեցի։ Հարիւրի չափ պատգամաւորներ արդէն հաւաքւել—կանգնել էին սրահի դռան առաջ, մեծ փողոցի վրայ։ Արգիլում էին ներս մտնելու, մինչ ազնւականներն ու կրօնաւորները առանց դիտողութեան՝ ներս էին գնում։

«Երբ հասել էինք, սպասաւորի նման մի մարդ դուրս եկաւ ու յայտնեց, որ երրորդ դասակարգը պիտի ներս մտնի Շանտիէ փողոցի դռնից, որպէս զի խառնաշփոթութիւն և խռնումն չը յառաջանայ։

«Մարքիզ Դը-Բրէզէի կարգադրութիւնն էր այդ։ Առաջին ժողովում դժւարանալով ամենքին ըստ իրենց դասակարգի տեղաւորել, այժմ իր իսկ ձեռնարկութեամբ՝ այդ միջոցն էր մտածել։

«Սաստիկ բարկացանք. անձրևը սաստկանում էր։ Այնուամենայնիւ գնացինք դէպի ցոյց տւած դուռը, կարծելով որ գոնէ նա բաց էր։ Բայց պարոն մարքիզը ներսում դեռ չէր տեղաւորել առաջին երկու դասակարգին, ուստի և այդ դուռն էլ հրամայել էր փակած պահել։

«Պէտք եղաւ անձրևից պաշտպանել ձախ կողմում գտնւող մի չորդախի տակ, մինչ ազնւականներն ու եպիսկոպոսները ուղղակի և վեհափառօրէն՝ մեծ փողոցով ու մեծ դռնովը ներս էին մտնում։

«Մեծ արարողապետի սկի հոգը չէր մեր դրութիւնը. ով էինք մենք նրա համար. ձևի համար հաւաքած անասուններ միայն։

«Անշուշտ այդպէս էր մտածում պ. Մարքիզը։ Եւ եթէ ինձ նման մի գիւղացի դժւարութեամբ կարողանում էր կուլ տալ ամենօրեայ այդ տեսակ նախատինքները—էլ երևակայէք թէ ինչ դրութեան մէջ կը լինէր Միրաբօի պէս մի ազնւական։

«Եւ անձրևը հեղեղի էր փոխւում։

«Երկու անգամ մեր նախագահը գնաց դէպի դուռը և երկու անգամ էլ ետ ուղարկւեց, որովհետև պ. Մարքիզը զբաղւած էր դեռ «մեծ անձերի տեղաւորելով»։

«Միրաբօն, տեսնելով այդ, սոսկալի ձայնով դարձաւ դէպի Բայլին և ցոյց տալով երրորդ դասակարգի պատգամաւորներին՝ աղաղակեց.

«—Պարոն նախագահ, առաջնորդեցէք ազգին Թագաւորի առաջ...

«Վերջապէս, երբ երրորդ անգամ Բայլին մօտեցաւ դռանն ու բաղխեց, պ. Մարքիզը բարեհաճեց բանալ, իր ազնիւ զբաղմունքն անշուշտ վերջացնելուց յետոյ։ Նախագահը յայտնեց նրան, որ եթէ դուռը չը բացւէր, երրորդ դասակարգն իսկոյն պիտի հեռանար։

«Եւ դուռը բաց արին։ Տեսանք սրահը առաջին օրւայ պէս զարդարած; ազնւականութեան ու կղերականութեան նստարանները բռնւած այդ երկու դասակարգերի պերճ ու շքեղ ներկայացուցիչներով, իսկ մենք ներս մտանք անձրևից լաւ թրջւած։ Պարոն ազնւականներն ու կրօնաւորները բարեհաճեցին ծիծաղել մեզ վրայ՝ երբ նստում էինք. քէֆները գալիս էր մեզ այդպէս ստորացրած տեսնելով։

«Բայց թանգ արժեց նրանց արածները։

«Երբ նստեցինք, Թագաւորը, շրջապատւած արքայազուններով, դքսերով ու իշխաններով, պահակներով ու սպաներով ներս մտաւ սրահի վերին ծայրից։

«Եւ ոչ իսկ մի ձայն լսւեց մեր կողմից որ աղաղակէր՝ «Կեցցէ Թագաւորը»։ Լուռ ու լուրջ էին ամենքը։

«Երբ նստել էին, Թագաւորը ասաց, որ կարծում էր թէ իր ժողովրդի բարիքի համար արել էր ամեն բան և մենք պիտի շարունակէինք իր ձեռնարկութիւնը։ Բայց երկու ամսից ի վեր դեռ վիճում էինք նախնական գործողութիւնների վրայ և այժմ ինքը ստիպւած էր դադարեցնել տալ չարաբաղդ տարաձայնութիւնները։ Հետևապէս նա ինքը պիտի յայտարարէր մեզ իր ուզածները։

«Այս ճառից յետոյ, Թագաւորը նստեց և պետական քարտուղարներից մէկը կարդաց նրա կամքը՝ այսպէս.—

«1) Թագաւորը ցանկանում է, որ պետութեան մէջ հնուց ի վեր գոյութիւն ունեցող երեք դասակարգերի տարբերութիւնները մնան անփոփոխ ամբողջապէս: Նա յայտարարում է ոչնչացրած՝ ամսի 17-ին, երրորդ դասակարգի տուած վճիռները:

«2) Նորին Վեհափառութիւնը յայտարարում է, որ լիազօրութիւնները վաւերացրած են համարւում—ստուգւած կամ ոչ—իւրաքանչիւր դասակարգին՝ իր խորհրդի մէջ և հրամայում է որ այդ հարցը փակւի:

«3) Թագաւորը բեկանում է և ոչնչացնում պատգամաւորների լիազօրութեան վերաբերեալ սահմանաւորումները:

«Այնպէս որ մեզնից իւրաքանչիւրը իր ուզածը կարող էր անել—Թոշակներ տալ, հարկեր քւէարկել, ազգի իրաւունքները սահմանափակել և այլն և այլն, երբէք էլ բանի տեղ չը դնելով մեզ ընտրողների ցանկութիւնները:

«4) և 5) Եթէ պատգամաւորները յանդգնութիւն են ունեցել երդում տալ հաւատարիմ մնալու ունեցած լիազօրութեանը—Թագաւորը Թոյլ է տալիս նրանց յայտնելու իրենց ընտրող շրջաններին, որ Նորին Վեհափառութիւնը ջնջում է այդ լիազօրութիւնը: Այդպիսիները սակայն կարող են դեռ իրենց գործի գլուխը մնալ, աւելի ծանրակշիռ դարձնելու համար Երեսփոխանական ժողովի որոշումները:

«6) Նորին Վեհափառութիւնը յայտարարում է, որ այսուհետև երեք դասակարգերի ժողովներում երբէք Թոյլ չի տալ, որ ընտրողները ընտրեալներին պարտաւորեցնէին ո և է հարցի մասին որոշ ուղղութեամբ քւէ տալ (mandats imperatifs):

«Անշուշտ նրա համար, որպէս զի պարտաճանաչ ազնիւ մարդկանց մէջ՝ լաւ երևան գան իրենց ձայներովը առևտուր անողները:

«Յետոյ Նորին Վեհափառութիւնը բացատրեց մեզ Թէ ինչպէս է հասկանում ինքը մեր պարտաւորութիւններն և անելիքները:

«Ամենից առաջ նա արգելում էր մեզ այսուհետև շօշափելու այն խնդիրները, որոնք ո և է կերպով վերաբերում են երեք դասակարգերի հին իրաւունքներին: Արգելում էր հարց բարձրացնել սահմանադրութեան մասին, ո և է խօսք անել կալւածատիրական և աւատական տիրապետութիւնների, ազնուականների և կրօնաւորութեան առանձնաշնորհութիւնների և իրաւունքների մասին: Յայտարարում է նոյնպէս, որ կղերի, նրանց կարգ ու կանոնի, եկեղեցական օրէնքների կամ ո և է կրօնական այլ խնդրի վերաբերեալ հարցերի համար, անհրաժեշտ էր ունենալ կրօնաւորութեան դասակարգի յատուկ համաձայնութիւնը...

«Մի խօսքով, տեսնո՞ւմ էք, վարպետ Ժան, մեզ կանչել էին

միմիայն դէֆիցիտը ծածկելու համար—այսինքն ժողովրդին նոր հարկերով ծանրաբեռնելու: Իսկ մնացածը մեր գործը չէր, որովհետև ամեն ինչ լաւ էր գնում, մինչև անգամ շատ լաւ. հետևաբար ամեն ինչ պիտի մնար առաջւայ նման, միայն Թէ մենք փող տայինք...

«Այս բոլորը կարդալուց յետոյ, Թագաւորը ելաւ մեզ ասելու, որ ո՛չ մի Թագաւոր երբէք այնքան բարիք չէր արել ժողովրդի համար, որքան ինքը. և նա, ով համարձակւի արգելք դառնալու իր հայրական մտադրութիւններին—արժանի չէ ֆրանսիացի անւանը:

«Յետոյ նստեց և մեզ կարդացին նրա մտադրութիւնը՝ հարկերի, փոխառութիւնների և ելևմտական այլ գործերի մասին:

«Նորին Վեհափառութիւնը բարեհաճել էր փոխել տուրքերի անունները... լսո՞ւմ էք, վարպետ Ժան... անուննե՛րը միայն...

«Այսպէս, օրինակ, անձնական տուրքը, միացրած քսաներդի (vingtième) հետ և կամ ուրիշ ո և է տուրքի—աւելի հեշտ կը լինէր վճարել... փոխանակ վճարելու մի լիվր—կը վճարէք քսան սու, փոխանակ վճարելու հարկահաւաքին (collecteur), կը վճարէք հարկաժողովին (percepteur)—և ահա ժողովուրդը մխիթարւած կզգայ իրեն...

«Այնպէս չէ՞. «ոչ մի Թագաւոր այդքան լաւութիւն չէ արել ժողովրդին»...

«Նորին Վեհափառութիւնը կամենում էր ոչնչացնել ձերբակալութեան ծածուկ հրամանագրերը (lettres de cachet), բայց պէտք էր պահել այդ-երբ հարկաւոր լինէր ընտանեկան պատիւը խնայել... Պարզ է, չէ՞:

«Ուզում էր նոյնպէս մամուլի ազատութիւն, միայն մտադիր էր լաւ ուշադրութիւն դարձնել արգիլել հրատարակելու վնասակար ուղղութեամբ լրագիրներ և «վտանգաւոր» գրքեր...

«Երեսփոխանական ժողովի համաձայնութիւնը պէտք էր նրան փոխառութիւնների համար, միայն Թէ, պատերազմի դէպքում, իրեն էր վերապահում 100 միլիոնի փոխառութեան իրաւունք ունենալ՝ սկսելու համար:—«Որովհետև Թագաւորը հաստատապէս մտադիր է չը Թողնել, որ իր պետութեան ճակատագիրը իրենից բացի ո և է մէկից կախումն ունենայ»...

«Նա կամենում էր, այո՛, խորհրդակցել մեզ հետ նաև այն պաշտօնների և տեղերի մասին, որ մտադիր էր պահել՝ ապագայում տալու համար անձնական կամ ժառանգական ազնուականներին:

«Մի խօսքով, մեզ կարդացին մի երկար խառնիխուռն գըրւածք ամեն տեսակ բաների վերաբերեալ, որոնց մասին ուզում էին մեզ էլ խորհուրդ հարցնել: Բայց Թագաւորը, այնուամենայ-

նիւ՝ իրեն էր վերապահում իր ուզածն անելու: Մեր գործը—միմիայն վճարելն էր. մեր այդ իրաւունքներին դիպչող չէր լինի:

«Նորին Վեհափառութիւնն այնուհետև սկսեց էլի խօսել և ասաց մեզ.

«—Աչքի առաջ ունեցէք, պարոններ, որ ձեր ծրագիրներից, ձեր որոշումներից ոչ մէկը օրէնքի ոյժ չեն ստանալ՝ առանց իմ յատուկ արտօնութեան: Ես եմ ձեր իրաւունքների բնական հըսկողը և ամեն օրէնքի աղբիւրը: Ես միայն իրաւունք ունիմ հոգալու ժողովրդեան երջանկութեան մասին և գուցէ, այո, հազիւ պատահի որ ո և է թագաւոր, որ իր հպատակներին շնորհած ողորմածութեան մասին՝ նրանց համաձայնութեանը պէտք ունենայ:—Հրամայում եմ ուրեմն ձեզ, պարոններ, որ իսկոյն ցրուէք և վաղը իւրաքանչիւր դասակարգ առանձին ձեր սրահը հաւաքուելով, շարունակէք ձեր նիստերը:...

«Վերջապէս ուղղակի ցոյց էին տալիս մեզ մեր տեղը... Կանչել էին միմիայն վճարելու—և ահա բոլորը: Եթէ պարլամէնտը չը յայտարարէր թէ մինչև այժմ հաւաքւող հարկերը ապօրինի են եղել—երբէք էլ մեր բարի թագաւորը չէր մտածիլ Երեսփոխանական ժողով գումարելու մասին: Իսկ այժմ տեսնում էր, որ այդ նոյն ժողովը շատ աւելի անհանգիստ բան էր, քան պարլամէնտը. դրա համար էլ, ծառաներին տրւող խիստ հրամանի նման՝ հրամայում էր—«Հրամայում եմ ցրուել իսկոյն»...

«Եպիսկոպոսների, մարքիզների, կոմսերի ու բարոնների քէֆերն էր գալիս՝ տեսնելով մեր շփոթութիւնը. նայում էին մեզ հպարտութեամբ: Սակայն, հաւատացէք ինձ, վարպետ Ժան, մեզնից ոչ ոք ակնարկ չը խոնարհեցրեց, և ամենքս էլ մի տեսակ սարսափելի զայրոյթի դողով բռնւեցինք:

«Թագաւորն այնուհետև այլևս առանց մի բառ արտասանելու՝ ելաւ և դուրս գնաց եկածի նման: Գրեթէ բոլոր եպիսկոպոսները, մի քանի քահանաներ և ազնուականութեան պատգամաւորների մեծամասնութիւնը դուրս գնացին մեծ դանից:

«Իսկ մենք, որ պարտաւոր էինք նոյն դանից դուրս գնալ, տեղներիցս չը շարժւեցինք: Ամեն ոք խորհում էր, ոյժ էր կուտակում իր մէջ և զայրոյթ:

«Եւ դա մի ամբողջ քառորդ ժամ տևեց:

«Յանկարծ Միրաբօն ոտքի ելաւ, խոշոր գլուխը ցնցեց ու աչքերը կայծեր արձակեցին: Լռութիւնը գերեզմանային էր: Ամեն ոք նրան էր նայում:

«Ու մէկէն, իր պարզ, որոշ ձայնովը գոչեց.

«—Պարոններ, խոստովանում եմ, որ ինչ այժմ լսեցինք՝ կա-

րող էր հայրենիքի փրկութեան համար օգտակար լինել, եթէ միայն բռնակալութեան ընծաները միշտ վտանգաւոր չը լինէին: Ի՞նչ էր այս վիրաւորիչ իշխանապետութիւնը (dictature): Ձեր դէմ են հանում զէնքի ոյժ. պղծում են ազգային տաճարը, որպէս զի հրամայեն ձեզ երջանի՛կ լինելու!..

«Բոլորը ցնցւեցին: Ամենքը հասկացան որ Միրաբօն գլուխը վտանգի տակ էր դնում: Նա ինքը մեզնից լաւ գիտէր այդ, սակայն զայրոյթը իշխում էր նրա մէջ և դէմքը լիովին փոխել էր:

«Այնպէս գեղեցիկ էր նա այդ րոպէին, վարպետ Ժան, շատ գեղեցիկ: Այո, ով իր կեանքը վտանգի մէջ է դնում և յարձակւում է անարդարութեան վրայ, նա գեղեցիկ է, նա նոյն իսկ աշխարհիս ամենագեղեցիկ մարդն է...

«Ու շարունակեց.

«—Եւ ո՞վ է որ հրամաններ է տալիս այդպէս—Մեր լիազօրը: Ո՞վ է դա, որ տալիս է ձեզ այնքան իշխանասաստ օրէնքներ—Ձեր լիազօրը: Նա, որ պարտաւոր է, պարոններ, այդ օրէնքները մեզնից միայն ստանալ, որովհետև մենք միայն օժտւած ենք քաղաքական անբռնաբարելի կոչումով. մենք, որոնցից միայն 25 միլիօն ժողովուրդ սպասում է իր երջանկութիւնը. երջանկութիւն հիմնական ու հաստատուն, որ և պէտք է ամենքի համաձայնութեամբ որոշւի, կատարւի և ընդունւի...

«Ու նրա իւրաքանչիւր բառը ռումբի պէս գնում էր տապալելու բացարձակ միապետութեան (absolutisme) խարխլող գահը:

«—Բայց ձեր խորհրդակցութիւնների ազատութիւնը շղթայում են—գոչեց նա այնպիսի՛ շարժումով, որ ամենքս սասռացինք—ձեզ շրջապատել են զինուորական ոյժով: Ո՞ւր են սակայն հայրենիքի թշնամիները: Կատիլինա՞ն է արդեօք քաղաքի պատերի տակ: Այս հարցերն եմ տալիս, որովհետև օժտւած էք դուք պատգամաւորական և օրէնսդրական իշխանութեամբ և պիտի ամենայն սրբութեամբ կատարէք ձեր երդումը: Իրաւունք չունիք դուք ցրուելու, մինչև որ չը յայտարարէք սահմանադրութիւն...

«Այս ճառի ժամանակ, արարողապետը, որ հետևել էր արքային—այժմ ներս էր եկել նորից ու փետրազարդ գլխարկը ձեռքին՝ յառաջանում էր ազնուականութեան դատարկ նստարանների մօտով:

«Հազիւ Միրաբօն վերջացրել էր, նա մի քանի խօսք արտասանեց:

«Եւ որովհետև չէր լսւում, մի քանիսները սրտնեղած՝ կանչեցին.

«—Բարձր, աւելի՛ բարձր...

«Եւ նա ձայնը բարձրացնելով լռութեան մէջ, ասաց.

«—Պարոններ, լսեցէք կարծեմ Թագաւորի հրամանը։

«Միրաբօն ոտքի վրայ էր դեռ։ Տեսնում էի նրա գայրոյթը և խոշոր ծնօտների արհամարհոտ սեղմումը։

«—Այո՛, պարո՛ն, ասաց նա ծանրութեամբ, նման մեծ մարդու, որ սովոր էր բարձրից խօսել—լսեցինք այն մտադրութիւնները, որոնք ներշնչուած են Թագաւորին։ Ձեր գործը չէ սակայն յիշեցնել մեզ այդ մասին, դառնալով միջնորդ Թագաւորի և Երեսփոխանական ժողովի միջև։ Դուք ո՛չ տեղ ունիք այստեղ և ո՛չ էլ իրաւունք՝ խօսելու...

«Յետոյ ցցելով իր հասակն ու ոտքից գլուխ չափելով արարողապետին՝ գոչեց.

«—Սակայն, վերացնելու համար ամէն թիւրիմացութիւն և պատրւակ—յայտարարում եմ, որ եթէ ձեզ պատուիրած է մեզ դուրս հանել այստեղից, գնացէք իսկոյն հրաման ստացէք՝ զէնքի ուժով կատարելու այդ։ Մենք մեր տեղը կը թողնենք միմիայն սւինների ուժով...

«Ամբողջ ժողովականները մի մարդու նման ոտքի կանգնեցին և գոռացին.

«—Այո՛, այո՛...

«Մի արտասովոր աղմուկ էր, որ սկսեց։

«Մի քանի րոպէից յետոյ, երբ խաղաղութիւնը տիրեց, նախագահը դարձաւ արարողապետին։

«—Ազգային ժողովը—ասաց նա—երեկ վճռել է որ այսօր, Թագաւորի մեկնելուց յետոյ, իր նիստը շարունակի։ Ես ժողովը փակել չեմ կարող, մինչև որ իրենք ժողովականները չը որոշեն այդ։ Եւ այն՝ որոշեն ազատօրէն, առանց ճնշման։

«—Կարո՞ղ եմ, պարո՛ն, ձեր այդ պատասխանը հաղորդել Թագաւորին. հարցրեց Մարքիզը։

«—Անշուշտ, պարո՛ն. պատասխանեց նախագահը։

«Արարողապետը իսկոյն դուրս գնաց և ժողովը շարունակեց։

«Ճիշտն ասել, մենք սպասում էինք աւելի կտրուկ և խիստ միջոցների այնուհետև։ Սակայն ժամը 2-ին, փոխանակ սւինների, ներս մտան մի խումբ հիւսներ, որոնց ուղարկել էին, որ քանդեն գահոյքն ու ամբիոնը։ Կոմս դ'Արտուայի մտածածն էր այդ։ Զը համարձակուելով ուժ գործ դնելու, աղմուկով էին ուզում խանգարել մեզ։ Այդքա՛ն ողորմելի բան տեսնուած չէր երբէք։

«Անշուշտ այս նոր նախատինքը չարգելեց մեզ կատարելու մեր պարտքը։ Վիճաբանութիւնը շարունակեց մուրճի աղմկալից հարուածների մէջ։ Գործաւորները զարմացած մեր անվրդով վարմունքից, վերջ ի վերջոյ ցած դրին գործիքները, իջան ամբիոնի

աստիճանների վրայ և կանգ առնելով գործելուց, սկսեցին ականջ դնել խօսողներին։ Եթէ կոմս դ'Արտուան մտածէր ներս գալ այդ միջոցին, պիտի ապշէր, տեսնելով որ իր ուղարկած գործաւորները աւելի ուշադիր ու լուռ էին կանգնել ժողովում, քան կը լինեն եկեղեցու մէջ։ Կը տեսնէր, որ նրանք իսկ ամէն անգամ, երբ ճառախօսը ո և է խիստ ու սուր խօսք էր ասում, եռանդագին ծափահարում էին։ Ահա այդ ժամանակ կոմսը կը հասկանար, որ ժողովուրդն իր կարծածի չափ յիմար չէ։

«Խօսում էին Բարնավը, Կամուսը և Սիէսը։ Վերջինս, նախագահական ամբիոնից իջնելու ժամանակ՝ ասաց.

«—Դուք նո՛յնն էք այսօր, ինչ որ էիք երէկ...

Այնուհետև Ազգային ժողովը բաց քուէարկութեամբ միաձայն վճռեց յայտարարել, որ նա պնդում է և հաստատում իր նախընթաց բոլոր որոշումները։

«Վերջ ի վերջոյ Միրաբօն, որի բարկութիւնը քիչ իջել էր և այժմ պարզ տեսնում էր իր գլխին գալիք փորձանքը, ասաց.

«—Պարոններ, այսօրէ որ ես օրհնում եմ ազատութեանը, որ հասցնում է այսպիսի լաւ պտուղներ Ազգային ժողովի մէջ։ Ապահովենք մեր գործը. անբռնաբարելի յայտարարենք Երեսփոխանական ժողովի բոլոր պատգամաւոր անդամների անձը։ Դա չէ նշանակում վախ, այլ խոհեմութիւն։ Դա մի սանձ կը լինի գահի շուրջը պաշարած վատ խորհուրդների գործադրութեան համար։

«Ամէնքը հասկացան նրբութիւնը և առաջարկն ընդունեց 493 ձայնով՝ ընդդէմ 34-ի։

«Ժողովը փակեց ժամի 6-ին, հետևեալ որոշումը կայացնելուց յետոյ.—

«Ազգային ժողովը յայտարարում է իր իւրաքանչիւր պատգամաւոր անդամի անձը անբռնաբարելի։ Յայտարարում է, որ այն ամէն անձ, մարմին, դատարան, պաշտօնատեղի կամ պալատ, որ կը համարձակուի թէ նիստերի ժամանակ և թէ յետոյ, հետևել, փնտռել, ձերբակալել կամ ձերբակալել տալ, բանտարկել կամ բանտարկել տալ ո և է պատգամաւորի, լինի այդ նրա ո և է առաջարկի, կարծիքի կամ ճառի համար Երեսփոխանական ժողովում.—նոյնպէս և ամէն անձ, որ կ' օգնի այդ ձերբակալութեան, ո՛ւմ կողմից էլ որ հրամայուած լինի—այդպիսին կը համարուի ստոր դաւաճան ազգի և արժանի մահուան պատժի։ Ազգային ժողովը որոշում է ամէն միջոց ձեռք առնել որոնելու, հետևելու և պատժելու այդպիսիներին,—կատարողներին և դրդիչներին»։

«Միրաբօն այլևս վախենալու տեղիք չունէր։ Նոյնպէս և մենք։

«Եթէ թագաւորները նուիրական են համարում, պատճառն այն է, որ անց են կացրել այդ՝ օրէնքի շարքը, ինչպէս և մենք արինք մեր վերաբերութեամբ։ Եթէ համարձակւեն այժմ մեր ո և է մազին անգամ դիպչել—ամբողջ Ֆրանսիան կաղաղակէ և սոսկալի կերպով կը զայրանայ։ Մենք սկզբից պէտք է այդպիսի որոշում կայացրած լինէինք. սակայն լաւ մտքերը բոլորը միասին չեն ծագում մարդու գլխի մէջ։

«Ասենք, ինձ թւում է, որ պալատն էլ լաւ արաւ շատ հեռու չը գնալով. որովհետև այդ օրը, նիստի ընթացքում, ժողովուրդը անհագին բազմութեամբ խռնւած՝ սպասում էր փողոցներում և 15 րոպէն մի անգամ, ներս ու դուրս անողներից լուր էր ունենում ներսում կատարւածների մասին։ Եթէ զէնքի դիմէին մեր դէմ, անշուշտ եմ որ ժողովուրդը մեր կողմը կը լինէր։

«Միևնոյն ժամանակ լուր էր տարածւել, թէ Նեկկերին հրաժարեցրել են ու տեղը նշանակել կոմս դ'Արտուային։ Այդտեղ արդէն ժողովուրդը ցոյց տւաւ իր ույժը։ Հէնց որ մեր նիստը փակւեց, անհագին բազմութիւն դիմեց դէպի պալատ։ Ֆրանսիական պահակները հրաման էին ստացել զարնելու, սակայն նրանցից ոչ մէկը զէնք չը բարձրացրեց և ժողովուրդը ազատ ներս մտաւ, հասաւ Նեկկերի բնակարանը, այնտեղ իրեն—նախարարի բերնից իմացաւ լուրի սուտ լինելը և ամենայն հանդարտութեամբ էլ ցրւեց։

«Փարիզում զայրոյթը մեծ չափեր էր ընդունում։ Այնտեղ լուր էին տարել, որ թագաւորը ամեն ինչ ջարդ ու փշուր էր արել։ Եւ ահա քաղաքը եռացման մէջ, մի նշանի էր սպասում, որ պայթի ու ներքին—քաղաքական պատերազմ յառաջացնի ամբողջ Ֆրանսիայում։

«Պէտք է որ այդ այդպէս լինէր, որովհետև թագաւորը յանկարծ շուռ տւաւ իր դէմքը։—Չը նայելով իշխանների խորհուրդին, չը նայելով գերմանացի և զւիցերացի վարձկան վաշտերին, որ երկրի ամեն կողմերից բերել էին տւել, չը նայելով թնդանօթներին, որ դրել էին թագուհու ախոռների մէջ և բերանները ուղիղ դէպի Երեսփոխանական ժողովի սրահը դարձրել, վերջապէս չը նայելով այդ բոլոր սպառնական ցոյցերին—նա գրեց ազնւականների պատգամաւորներին, որ իսկոյն գնան և միանան երրորդ դասակարգին՝ ընդհանուր սրահում։

«Եւ ահա երէկ, Յունիսի 30-ին, տեսանք թէ ինչպէս «յաղթականների հպարտ սերունդը» եկաւ ու նստեց «յաղթւածների խոնարհ յաջորդների» կողքին։ 23-ի առաւօտեան նման, երբ նրանք տեսել էին մեզ անձրևից թրջած ներս մտնելիս—այժմ այլ ևս չեն ծիծաղում։

«—Ահա, վարպետ Ժան, գործերի դրութիւնը այժմ այսպէս է։ Առաջին մասը շահել ենք. այժմ զբաղւած ենք սահմանադրութիւնը մշակելով։ Ժամանակ է հարկաւոր. մեր պահանջների ցուցակները կան և նրանք մեզ լաւ կառաջնորդեն այդ խնդրում։

«Ժողովրդի ամեն գանգատ, ամեն ցանկութիւն պիտի մտնի այդ սահմանադրութեան մէջ։—Աւատական իրաւունքների ոչնչացումն, կօռի, բեգեառի, տասանորդների, ներքին մաքսատների տուրքերի վերացումն. օրէնքի առաջ, այլ և հարկերի՝ հաւասարութիւն. անձի ապահովութիւն, բոլոր քաղաքացիների անխտիր ընտրութիւն քաղաքական և զինւորական պաշտօնների համար. պետական պաշտօնեաների պատասխանատւութիւն, ժառանգութեան հաւասար բաժանումն որդիների մէջ, վաճառականութիւն, արդիւնագործութիւն և աշխատանքի ազատութիւն.—մի խօսքով ամեն, ամեն բան։ Պէտք է որ ամեն ինչ լինի պարզ, շատ պարզ և ամենն էլ գլուխ առ գլուխ շարադասւած՝ որպէս զի ամեն ոք հասկանայ, յետին գիւղացին անգամ կարողանայ իմանալ իր պարտքն ու իրաւունքները։

«Հանգիստ եղէք, բարեկամներ, մարդիկ դեռ երկար կը խօսեն 1789 թւականի մասին։

«Ահա բոլորը, ինչ որ կար առ այժմ ձեզ պատմելու։ Ջանացէք հնար եղածին չափ շուտով ձեր կողմերից լուրեր հաղորդել ինձ։ Ուզում ենք իմանալ թէ գաւառներում ինչ է կատարւում։ Պաշտօնակիցներս աւելի լաւ տեղեկութիւն ունին, քան ես։ Ասացէք Միշէլին, որ օրական գոնէ մի ժամ նւիրի ինձ՝ գործից յետոյ և օրէցօր գրի Բարաքների ու շրջակայքի մասին նորութիւններ և ամեն ամսի վերջը ուղարկի։ Այսպիսով միմեանց հետ կը խօսակցենք միշտ, ինչպէս անում էինք առաջ։

«Համբուրում եմ ամենքիդ։ Մարգարիտը խնդրում է գրել, որ իրեն չը մոռանաք, ինչպէս ինքը ձեզ չի մոռանում»։

Ձեր բարեկամը՝ ՇՕՎԷԼ։

Մինչ ես նամակն էի կարդում, վարպետ Ժանը, մեծահասակ Մատէրնը և հայր Քրիստոֆը լռութեամբ միմեանց էին նայում։

Մի քանի ամիս առաջ եթէ մէկը համարձակւէր այդպէս լեզւով խօսել թագաւորի, թագուհու, պալատի կամ եպիսկոպոսների մա-

սին—անշուշտ իսկոյն յաւիտենական թիապարտութեան կը տարւէր։ Բայց իրերը արագ են փոխւում. երբ գալիս է ժամանակը, ինչ որ համարւում էր աններելի, այժմ դառնում է բնական։

Երբ վերջացրի, մի քանի րոպէ ամենքը լուռ մնացին, որից յետոյ վարպետ Ժանը բացականչեց.

—Ապա՛, Քրիստոֆ, ի՛նչ կասես... Շովէլը այլևս չի նեղւում մյ...

—Ո՛չ, ասաց քահանան—այլևս ոչինչ չի նեղում նրան... Շովէլի պէս մի շատ զգուշաւոր և խոհեմ մարդ եթէ գրում է այդքանը, ուրեմն երրորդ դասակարգը մեծ ույժի տէր է դարձել։ Ի՞նչ վերաբերում է «փոքր կղերի» (ինչպէս մեզ եպիսկոպոսներ կոչում են) մասին ասածները—դա ճիշտ է։ Մենք ժողովրդեան կողմն ենք և նրա կողմն էլ կը մնանք։ Քրիստոս, մեր երկնային տէրը, ուզեց ծնել փարախի մէջ, ապրեց խեղճերի համար և չքաւորների շրջանում մեռաւ էլ նրանց համար... Ահա մեր օրինակը։ Մենք էլ մեր պահանջների ցուցակի մէջ երրորդ դասակարգի պահանջների նման պահանջներ ենք դրել—Սահմանադրութիւն, օրէնսդրութեան իրաւունքը ժողովրդի ներկայացուցիչներին, օրէնքի առաջ հաւասարութիւն, այլ և ազատութիւն ամեն բանի մէջ։ Պահանջ ենք դրել, որ պետութեան, ինչպէս նաև եկեղեցոյ զեղծումները խստօրէն պատժւեն, նախնական ուսուցումը լինի ընդհանուր և ձրի, օրէնքը մէկ լինի ամենքի համար... Ազնուականութիւնը միմիայն ձևականութիւնների արտօնութիւններ է ուզում. օրինակ, որ իրենց կանայք, գեղջուկ կանանցից ջոկւելու համար, իրաւունք ունենան ժապաւէն միմիայն իրենք գործածելու. ո՛չ մի խօսք ժողովրդեան մասին։ Նրանք մտածել անգամ չեն ուզում, որ հասարակ ժողովուրդն էլ պիտի իրաւունքների տէր լինի,.. Մեր եպիսկոպոսները, որոնք գրեթէ ամենքը ազնուականներ են—հակւում են ազնուականութեան կողմը. իսկ մենք, լինելով ժողովրդեան որդիք, ժողովրդի հետ ենք միշտ...

Այժմ հետևապէս, միայն երկու կուսակցութիւն կայ—արտօնեալ և ո՛չ—արտօնեալ. այսինքն՝ ազնուականութիւն և ժողովուրդ։

Շովէլը իրաւունք ունի, սակայն շատ է սանձարձակ խօսում թագաւորի, թագուհու, իշխանների և պալատականների մասին։ Թագաւորութիւնը (միապետութիւն—royauté) մի սկզբունք է։ Իսկոյն հին կալւինիստի հոտ է փչում այդ նամակից. կալւինիստի, որ կարծում է, թէ պատիւն է սեղմել իր նախնիքներին մարտիրոսացնողների յաջորդներին։ Չը կարծէք թէ Շարլ IX, Լուի XIV և նոյն ինքն Լուի XV թագաւորները հալածում էին կալւինիստնե-

րի՝ կրօնական պատճառներով։ Ո՛չ. նրանք այդպէս են ցոյց տւել, որովհետև ժողովուրդը կրօնով և հայրենիքով—մի խօսքով՝ զգացմունքի խնդիրներով է հետաքրքրւել միայն։ Թագաւորները շահագործել են այդ զգացմունքները՝ իրենց շահերի համար։ Կալւինիստներն իսկապէս, ուզում են հասարակապետութիւն հիմնել։ Լա-Րօշէլ քաղաքում բուն դրած, իրենց մտքերը հաւասարութեան և ազատութեան մասին՝ սաստիկ տարածում էին երկրում։ Թագաւորները ժողովրդեան զինեցին նրանց դէմ։ Ժողովուրդն ենթադրում էր թէ կռւում է հեթանոսների, սակայն իսկապէս նա կռւեց հասարակապետութեան և ազատութեան դէմ, յօգուտ բռնակալութեան։

Հասկանալի՞ է այժմ։ Հարկաւոր էր ցանուցրիւ տալ կալւինիստներին և նրանց բունը. ապա՞ թէ ոչ՝ հասարակապետութիւնը անխուսափելի էր Ֆրանսիայի համար։ Շովէլը այդ շատ լաւ գիտէ։ Ապահով եմ, որ սրտի խորքերում մտածում է նա իր նախնիքների նման անել։ Եւ ահա այդտեղ է, որ ես նրա հետ համաձայն չեմ։

—Այնուամենայնիւ, ասաց վարպետ Ժանը—իշխանների և ազնուականների վերաբերմունքը դէպի երրորդ դասակարգի պատգամաւորները՝ խայտառակ բան է։

—Է՛հ, արեց քահանան—ի՛նչ էք ուզում որ լինէր։ Գոռոզութիւնը սատանային գլորեց անդունդը։ Գոռոզութիւնը երբ տիրում է մարդու, առաջ կուրացնում է նրան և մղում դէպի անարդարութեան և անմտութեան։ Այստեղ է ահա, որ կարելի է ասել, թէ «յետինները եղան առաջին և առաջինները՝ յետին»... Աստւած գիտէ թէ այդ ամենը ինչով պիտի վերջանայ... Ինչ վերաբերում է մեզ, բարեկամներ, կատարենք մեր պարտաւորութիւնները և ամենալաւ բանը դա կը լինի...

Լուռ՝ լսում էինք։

Քիչ յետոյ հայր Քրիստոֆը և եղբայրը մտախոհ՝ տուն վերադարձան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՈՐ ԿԱՆՈՆԱԴՐԵԼ Է 1789 ԹՒԻ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Ֆրանսացի ժողովրդեան ներկայացուցիչները, որոնցից կազմուած է Ազգային ժողովը, ի նկատի ունենալով որ ժողովրդի թշուառութեան, այլև կառավարչական զեղծումների պատճառը մարդկային իրաւունքների անգիտութիւնը, մոռացութիւնն ու արհամարհանքն է—հանդիսաւոր այս յայտարարութիւնով՝ վճռեցին որոշել մարդկային բնական, անեղծանելի և նուիրական իրաւունքները, որպէս զի այդ որոշումները ի տես գրուած լինին միշտ ամենքի առաջ և անընդհատ յիշեցնեն ամենքի պարտքն ու իրաւունքները. որպէս զի օրէնսդիր և գործադրող վարչութիւնների գործողութիւնները—ամեն րոպէ համեմատուելով քաղաքական հաստատութիւնների նպատակների հետ — այդ որոշումներով ղեկավարուեն. որպէս զի քաղաքացիների պահանջները այսուհետև հիմնուին աւելի պարզ ու անվիճելի սկզբունքների վրայ և ձգտեն անխախտ պահելու Սահմանադրութիւնը՝ ամենքի երջանկութեան համար:

1) Մարդիկ ծնւում են և մնում ազատ, այլև հաւասար իրաւունքներով: Ընկերական խտրութեանն իբր հիմք՝ միմիայն հասարակաց օգուտը պիտի լինի:

2) Ամեն հասարակութեան նպատակն է պահպանել մարդկային բնական ու աննախագիր (imprescriptible) *իրաւունքները: Այդ իրաւունքներն են — ազատութիւն, սեփհականութիւն, ապահովութիւն կեանքի և դիմադրութիւն ամեն ճնշման:*

3) Գերիշխանութեան ամեն սկզբունք էապէս գտնւում է իրեն—ժողովրդեան մէջ: Ո՛չ մի մարմին կամ անհատ՝ չէ կարող իշխանութիւն բանեցնել, եթէ նա այդ չէ ստացել՝ յատկապէս ժողովրդից:

4) Իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի վայելել իր ազատութիւնը՝ ընկերի ազատութիւնը չը սահմանաւորելու պայմանով: Հետևաբար, ամեն անձ իր ունեցած իրաւունքներովը չը պիտի խանգարի ուրիշի էլ՝ նոյն իրաւունքները վայելելու: Սահմանները միայն օրէնքը պիտի գծի:

5) Օրէնքը արգելել կարող է միայն վնասակար գործողութիւններ: Ինչ որ օրէնքով արգելուած չէ—թոյլատրելի է: Ոչ ոքի չէ կարելի բռնադատել գործելու օրէնքի դէմ:

6) Օրէնքը ընդհանուրի կամքի արտայայտութիւնն է: Ամեն քաղաքացի անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցաւ կարող է մասնակցել օրէնսդրութեան: Օրէնքը պիտի մէկ լինի ամենքի համար.—թէ օրէնքով գործողի և թէ օրէնքով պատժւողի: Ամեն քաղաքացի հաւասար համարւելով օրէնքի առաջ, կարող է ընտրելի դառնալ հասարակական ամեն գործի կամ պաշտօնի համար՝ իր ընդունակութեան, առաքինութեան կամ տաղանդի համեմատ:

7) Չէ կարելի դատապարտել ոչ ոքի, առանց հիմնուելու օրէնքի և նրա նախագծած ձևերի վրայ: Քմահաճ հրամաններ տուողներն ու կատարողները կը պատժւին: Սակայն, ըստ օրինաց դատի կանչւողները կամ ձերբակալւողները անմիջապէս պարտաւոր են հնազանդւել. դիմադրողը պիտի նկատւի յանցաւոր:

8) Կատարելապէս ակներև յանցանքների համար միայն օրէնքը կարող է մահւան դատապարտել: Այդպէս կամ այլ պատիժ կարելի է գործադրել միմիայն նախապէս հրատարակւած և օրինաւորապէս հաստատւած պատժական օրէնքների համեմատ:

9) Ի նկատի ունենալով որ ամեն ոք անպարտ է, եթէ նա յանցաւոր չէ եղել ըստ օրինի, ձերբակալութեան դէպքում՝ օրէնքից անպայման դուրս պիտի ձգել ո և է խստութիւն, որ կարող է պէտք լինել նրա փախուստն արգիլելու համար:

10) Ո՛չ ոքի չը պիտի անհանգստացնել՝ նրա այս կամ այն կարծիքի կամ կրօնական հաւատալիքի համար, եթէ միայն կարծիքների արտայայտութիւնը չէ խանգարում հասարակական կարգը:

11) Մտքերի և կարծիքների ազատ հաղորդակցութիւնը մարդկային իրաւունքների ամենաթանգագինը լինելով—ամեն քաղաքացի իրաւունք ունի խօսելու, գրելու, ազատօրէն տպագրելու

ցանկացածը. Նա ինքը պատասխանատու կը լինի օրէնքի առաջ յանցանքի դէպքում։

12) Մարդկային և քաղաքացիական իրաւունքների ապահովութեան համար պէտք է ունենալ հասարակական ոյժ։ Այդ ոյժը կազմւում է ամենքի օգտի համար և երբէք յօգուտ այն անձերի, որոնց յանձնուած է այդ ոյժի գործադրութիւնը։

13) Հասարակական ոյժ ունենալու, այլ և վարչական ծախսերի համար՝ անհրաժեշտ է ամենքի մասնակցութիւնը։ Հետևապէս ամէն քաղաքացի պիտի ըստ իր կարողութեանը՝ օգնի այդ ծախսերը լրացնելուն։

14) Ամէն քաղաքացի իրաւունք ունի ինքն անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցաւ՝ ստուգելու տուրքերի անհրաժեշտութիւնը. ստուգելու ազատ, հետևելու նրանց գործադրութեանը, քանակին, բաշխմանը և այլն։

15) Հասարակութիւնն իր վարչութեան իւրաքանչիւր պաշտօնեայից իրաւունք ունի հաշիւ պահանջելու, նրա գործողութիւնների համար։

16) Ամէն հասարակութիւն, ուր ապահովւած չեն իրաւունքները և որոշւած չեն վարչական իրաւասութիւնները—նա դեռ Սահմանադրութիւն չունի։

17) Սեփհականութիւնը նկատւում է որպէս նուիրական և անբռնաբարելի իրաւունք. ոչ ոքի նրանից զրկել չէ կարելի, եթէ ոչ միայն այն ժամանակ, երբ հասարակական պէտքը, ըստ օրէնի սահմանւած՝ պահանջի այդ։ Այդպիսի դէպքում սեփհականատիրոջ նախապէս պիտի վճարւի վերցրածի ճիշտ արժէքը։

Ազգային ժողովը կամենալով Ֆրանսական Սահմանադրութիւնը հիմնել իր այս յայտարարած և ճանաչած սկզբունքների վրայ—անդառնալի կերպով ոչնչացնում է այնպիսի հաստատութիւններ, որոնք վիրաւորական են ազատութեան և իրաւունքների անհրաժեշտութեան համար։

Չը կայ այլևս ոչ ազնւականութիւն, ոչ ժառանգական խըտրութիւն կամ գերադասութիւն, ոչ աւատական սիստեմ, ոչ տիտ-

ղոս՝ որի հետ կապւած լինի ո և է արտօնութիւն. ոչ ընկերակցութիւն (corporation) կամ դասակարգ (distinction d' ordre) և կոչումն, որի ստանալու համար պահանջւէր ազնւականութիւն. ոչ ծննդեան խտրութիւն և գերադասութիւն՝ բացի հասարակաց ծառայութեան մէջ գտնւող պաշտօնի ժամանակ։

Չը կայ այլևս ո և է հասարակական պաշտօն, որ գնւի կամ ժառանգւի։

Ազգի մէջ ո և է անձի կամ կուսակցութեան համար չը կայ առանձնաշնորհութիւն կամ իրաւասութիւնների բացառութիւն։

Չը կայ ոչ համքարութիւն, ոչ էլ արւեստների և արհեստների ընկերակցութիւն։

Օրէնքն այլևս չէ ճանաչում ոչ կրօնական ուխտ կամ ո և է այլ խոստում, որ դէմ լինէր բնական իրաւունքների և Սահմանադրութեանը։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳԻ ՄԷՋ

I

Պատմեցի ձեզ 1789 թուականի ժողովրդեան թշւառութիւնների մասին. պատմեցի նաև, որ մեր պատգամաւորները գրաւորապէս լիազօրութիւն էին ստացել ոչնչացնելու երկրի մէջ գըտնւող և վաճառականութեան ծաղկելուն արգելք եղող կարգերը, ոչնչացնել համքարութիւններն ու վարպետները, որոնք ճնշում էին արդիւնագործութիւնը, տասանորդներն ու իրաւունքները, որոնք արգելք էին դառնում երկրագործութեանը։ Իրաւունք էին ստացել վերջ դնելու նաև պաշտօնների և պետական այլ ծառայութիւնների վաճառումը, որ հակասում էր արդարութեան. ոչնչացնելու տանջանքն ու այլ բարբարոսութիւնները, որոնք հակառակ էին մարդասիրական ոգուն և վերացնելու կուսակրօնութիւնը, որ դէմ է ընտանեկան, բարոյական սկզբունքներին և բանականութեան։

Ահա թէ ինչ պահանջներ կային արձանագրւած ժողովրդեան ներկայացրած ցուցակների (cahiers) մէջ։

Բայց թագաւորը երրորդ դասակարգի պատգամաւորներին հրաւիրել էր միայն նրա համար, որ նրանք ժողովրդեան վզին դնեն պալատի, իշխանների և ազնւերի արած ծախսերը, վճարեն դեֆիցիտը (բացը), ամեն ինչ բառնան բուրժուաների, գիւղացու և գործաւորի մէջքին։

Ահա դրա համար էլ, երբ ազնւականութիւնն ու կղերը տեսան որ մեր պատգամաւորները նախ և առաջ ուզում են արտօնութիւնները ոչնչացնել—մերժեցին միանալու նրանց, այլ և նախատինքներ արին այնքան, որ երրորդ դասակարգի պատգամաւորները ըմբոստացան և երդւեցին չը ցրւել, մինչև որ Սահմանադրութիւնը չը կազմեն։ Երեսփոխանական ժողովն էլ դարձրին Ազգային Ժողով։

Երբ այս լուրերը մեզ հասան, սովը դեռ այնքան մեծ էր, որ չքաւորներն ուղղակի մի քիչ աղաջրի մէջ խաշած բանջարով էին կերակրւում: Բարեբախտաբար վառելիք կար, որովհետև կարդինալ եպիսկոպոսի անտառապահները չէին համարձակւում տներից դուրս գալ՝ վախենալով սպանւելուց:

Մօտ էր փոթորիկը և սոսկալի ժամանակներ էր ամենքի, մանաւանդ պետական պաշտօնեաների, ռոճկաւոր հսկողների, ոստիկանների և դատաւորների համար:

Վերսայլից եկող լուրերը թափանցում էին մինչև ամենախուլ գիւղերը: Ամենքն ինչ որ բանի էին սպասում. բայց թէ ի՞նչ—ոչ ոք չը գիտէր: Լուրեր էին հասնում, որ մեր պատգամաւորները Վերսայլում՝ շրջապատւած են զօրքով, որ նրանց վախեցնել կամ գուցէ իսկ կոտորել էին սպառնում: «Երեք աղաւնի» պանդոկից անցնողները միմիայն դրա մասին էին խօսում: Իզուր վարպետ Ժանը փորձում էր հանգստացնել ամենքին:

—Ինչէ՛ր էք մտածում—աղաղակում էր նա—մի՞թէ մեր բարի թագաւորը ընդունակ է այդպիսի ցածութիւն գործելու. չէ՞ որ նա ինքն է հրաւիրել ժողովրդի ներկայացուցիչներին՝ իմանալու մեր պէտքերն ու ամենքիս երջանկացնելու համար: Հանէք, դէն շպրտէք ձեր գլխից յիմար մտքերը...

Հարբերգի և Դագսբուրգի գիւղացիք լուռ լսում էին՝ բըռունցքնին սեղանի վրայ դրած. յետոյ ելնում ու մտախոհ՝ դուրս էին գնում:

—Աստւած տայ որ յիրաւի, թագուհին ու կոմս դ՛ Արտուան մի խաղ չը փորձեն սարքելու. ասում էր վարպետ Ժանը նրանց մեկնելուց յետոյ—որովհետև կորցնելու ոչինչ չունեցողը՝ շահելու բան կունենայ: Վա՜յ է, եթէ կռիւն սկսեց. էլ վերջ չի ունենալ...

Կատարեալ իրաւունք ունէր. այն ժամանակ ապրողներից ոչ մէկը, յիրաւի, ոչ բուրժուա և ոչ էլ գիւղացի՝ չապրեց մինչև յեղափոխութեան վերջը:

Գործերն այդ դրութեան մէջ էին մի քանի շաբաթ շարունակ: Աշնանացանը հնձում էին. սովը սկսեց պակասել, բոլորս քիչ-քիչ հանգստանում էինք, երբ յանկարծ, յուլիսի 18-ին լուր տարածւեց, որ Փարիզը կրակի մէջ էր, որ կամեցել էին Երեսփոխանական ժողովը շրջապատել զօրքով, ցրւել: Փարիզի հասարակութիւնը ապստամբւել էր թագաւորի դէմ, զինել բուրժուազիան և ժողովուրդը, փողոցներում կռիւ էր սկսել օտարական-վարձկան գունդերի դէմ, իսկ ֆրանսիական վաշտերը անցել էին ժողովրդեան կողմը:

Նիկօլայի նամակն իսկոյն մտաբերեցինք և դա մեզ բնական թւեց:

Երևակայեցէք ուրեմն ամենքի զարմանքը: Անսովոր յեղափոխութեան, չէին շատ մտածում լինելիքների մասին: Սարսափ միայն ազդեց ամէն կողմ:

Այդ օրը, սակայն, ոչ մի շարժում տեղի չունեցաւ. լուրերը կանգ էին առել: Հետևեալ օրը կայծակի նման վրայ հասաւ Բաստիլլի առման, ժողովրդի տիրապետութեան, նրա՝ զէնքի, վառօդի, հրացանի, թնդանօթի տէր դառնալու համբաւները: Այդ լուրերն այնպէս ազդեցութիւն գործեցին, որ լեռնցիք անմիջապէս զինւած կացինով, եղաններով ու գերանդիներով՝ իջան Ալզասի և Լօրէնի հարթավայրերը:

Խումբ առ խումբ անցնում էին նրանք ու աղաղակում.

—Դէպի Մարմուտիէ...

—Դէպի Սավէրն...

—Դէպի Նօվիյէ...

—Դէպի Լիքսհէյմ...

Ու սփռւում էին մրջիւնների նման, ոչնչացնում էին՝ սկսած պետական ամէն շէնքից մինչև իշխան-եպիսկոպոսի անտառապահների խրճիթները:

Լէտիւմիէն, Հիւրէն, Կօշարը և ուրիշ գիւղացիներ եկան վարպետ Ժանին էլ քաշ տալու իրենց հետ՝ որ ետ չը մնան Միտէլբրօննի, Լիւցէլբուրգի և Քատրվանի գիւղացիներից: Բայց վարպետ Ժանը բարկացած կանչում էր.

—Գնացէք, ես ոչինչի մէջ չեմ խառնւում...

Բայց որովհետև Ալզասի գրեթէ բոլոր գիւղացիները վառել—
ոչնչացրել էին իրենց վանքերի և կալւածատէրերի հողատիրական
թղթերը և Բարաքցիներն էլ Լէկսհէյմում գտնւող Տիէֆբըլէն վան-
քի մէջ պահւող իրենց հողերի թղթերն էին ուզում ոչնչացնել—
անմիջապէս շրերը հագաւ, որ գոնէ յաջողւի մեր գիւղի վաւե-
րագրերը ազատել: Միասին—ես, Կօշարը, Լէտիւմիէն, Հիւրէն,
գրեթէ ամբողջ գիւղը—ճանապարհ ընկանք դէպի վանքը:
Պէտք էր մէկ լսել թէ ինչպէ՜ս գոռում—գոչում էին լեռնցիք
դաշտերում: Փայտահատներ, հանքի բանւորներ, ածխագործներ՝
պատառոտուն հագուստով, զինւած կացիններով, բահերով ու գե-
րանդիներով՝ դաշտն ամբողջ ծածկել էին: Նրանց անհամար քա-
նակութեամբ գերանդիները պսպղում էին հեռուից. կանայք անգամ
կային՝ թափթփուն մազերով, բահերը ձեռքներին...

Միտտէլբրօննում այլ ևս քար—քարի վրայ չէր մնացել: Բոլոր թղթերը վառել էին: Ցօրբէնի տունը, տանիքից մինչև մառանը

հիմնայատակ էին արել։ Լիկոնէյմում փողոցները ծածկւած էին աղւամազով ու յարդով՝ դուրս տւած լուսամուտներից նետւող անկողիններից. հրէաների տները դատարկում էին, կահկարասիքը տապարներով ջարդոտում...

Այդպէս է. երբ ժողովրդեան կրքերը զարթնում են, նա այլեւս իրեն զսպել չէ կարող։ Յանկարծ է զարթնում ամեն ինչ նրա մէջ ու իրար խառնւում.— կրօնական ատելութիւն, արծաթսիրութիւն, վրէժխնդրութիւն. մի խօսքով ամէն բան...

Տիէրսըլէնի վանքը հին—Լիկոնէյմումն էր։ Այնտեղ միայն հինգ վարդապետներ էին ապրում և պահպանում էին Բրուվիյլէրի, Հերանժի, Ֆլէյգհէյմի, Պիկէհօլձի, Բարաքների և նոյն իսկ Ֆայլցբուրգի հողային վաւերագրերը։

Ամէն կողմից հազարաւոր ամբոխ հաւաքւած՝ բռնել էր քաղաքի հին փողոցները քաղաքատան շուրջն ու պահանջում թղթերը դուրս բերել։

Վարպետ Ժանը յետոյ պատմեց մեզ, թէ ինչ էր կատարւել վանքի ներսում։ Խեղճ ծերուկ վարդապետները դողալիս էին եղել նապաստակի նման. նրանց մեծաւորը, որ կոչւում էր հայր Մարսէլ, գտում է եղել, որ թղթերը իր պահպանութեանն է յանձնւած և չէր կարող ձեռքից դուրս տալ. և որ անելու համար՝ պէտք էր իր դիակի վրայով անցնել։

Այն ժամանակ վարպետ Ժանը տարել էր նրան լուսամուտներից մէկի մօտ և ցոյց տւել գերանդիների անտառը, որ սպառնալից բռնել էր ամբողջ դաշտը՝ մինչև հօրիզօնը։ Վանահայրը ուրիշ ճար չը գտած, բաց էր արել երկաթեայ վանդակներով շըրջապատւած սնդուկը և թողել եկողներին՝ մինչև առաստաղը լեցւած վկայագիրների կոյտը։

Հարկ էր եղել ընտրել, կարգի դնել ամեն թուղթ։ Բայց որովհետև ժամեր էր տևում այդ, դրսում գիւղացիք անհանգիստ, կարծելով որ մտնողները բռնւել էին—սկսեցին սպառնալից աղաղակներ հանել ու յարձակւել վանքի դռների վրայ։

Վարպետ Ժանը շտապեց պատշգամբ ելնել և այնտեղից ցոյց տալ ձեռքին բռնած թղթերը։ Այդքան բաւականը եղաւ հանգստացնելու ամբոխին և իսկոյն, Լիկոնէյմի մի ծայրից դէպի միւսը հնչեցին ուրախ աղաղակներ.

—Թղթերը մեր ձեռքին են...

Շուտով վարպետ Ժանն ու միւսները դուրս եկան, քարշ տալով իրենց հետ մի սայլակ լի վկայաթղթեր։ Իւրաքանչիւր գիւղ ստացաւ իր թղթերը. մի քանիսներն անմիջապէս, ուրախութիւնից շշմած, վառեցին նրանց հրապարակի վրայ, սակայն

վարպետ Ժան Լէրուն մերինները իր գրպանն էր դրել և այդպէս էր, որ մեր գիւղը մինչև այժմ պահպանել է իր ամբողջ հողերը։

Կարելի է ասել, որ այս 13 օրւայ մէջ Ֆրանսիան հիմքից ի վեր փոփոխութիւն կրեց։ Վանքերի և դղեակների բոլոր կալւածական թղթերը կրակի մատնեցին։ Գիշեր ու ցերէկ ահազանգը (tocsin) հնչում էր ամեն կողմից, երկինքը կարմրել էր ծայրից ծայր՝ վառւող հրդեհներից. հին ամրութիւններն ու որջերը մոմի պէս այրւում էին։

Այդ տևեց մինչև օգոստոս 4-ը. մինչև այն օրը, երբ եպիսկոպոսներս ու ազնւականները հրաժարւեցին իրենց աւատական և առանձնաշնորհւած արտօնութիւններից։

Ահա թէ վերջապէս ժողովուրդն ինչպէս թօթափեց իր վըրայից «յաղթականների ազնիւ ցեղի» լուծը։ Բռնութեամբ լծել էին ժողովրդին և բռնութեամբ էլ նա փշրտեց այդ ծանր բեռն ու ազատւեց։

Ազգային ժողովն այդ օրւանից կարողացաւ ձեռնարկել Սահմանադրութեան գործին։ Նոյն իսկ թագաւորն անձամբ եկաւ և ասաց այնտեղ.

—Իզո՛ւր ինձ չէք հաւատում, պարոններ։ Բերել տւածս վաշտերը—այդ 10000 զինւորները, որ Մարսի դաշտումն են, այլ և այս շէնքը շրջապատող բոլոր թնդանօթները, միմիայն ձեր պաշտպանութեան համար են։ Բայց եթէ պէտք չունիք նրանց—ցրւել կը տամ։

Երեսփոխանները ցոյց տւին, որ հաւատում են ասածները։ Սակայն եթէ Բաստիլը չառնւէր, ազգը ոտքի չը կանգնէր և եթէ օտար գունդերը յաղթած լինէին ու ֆրանսիական պահակները ժողովուրդի կողմը բռնած չը լինէին—ինչ պիտի լինէր մեր վիճակը։ Առանձին խորագիտութիւն հարկաւոր չէ հասկանալու համար, որ բոլորովին ուրիշ տեսակ պիտի խօսէր թագաւորը և երրորդ դասակարգի պատգամաւորների գլխին խաղեր պիտի սարքւէին։

Բարեբախտաբար դիպւածները մեր օգտին դարձան։

Փարիզի համայնքն արդէն ազգային պահակագունդ էր կազմել իր համար։ Ֆրանսիայի բոլոր միւս համայնքներն էլ հետևեցին նրա օրինակին, զինւեցին ճնշել կամեցողների դէմ։ Հէնց որ Ազգային ժողովը մի բան էր վճռում և յայտարարում, գիւղացիք իսկոյն հրացան ու գերանդի վերցրած՝ կանչում էին.

—Ապա, եղբա՛յրներ, եկէք իսկո՛յն գործադրենք. աւելի արագ կը լինի այդպէս. նեղութիւններից էլ կազատենք մեր աղաներին։

Ու նոր վճիռ ամբողջապէս գործադրում էին։

Հաճոյքով յիշում եմ մեր կամաւորների գնդի (միլիցիա) կազմակերպութիւնը 1789 թուի օգոստոսին։ Այդպիսի գնդեր առաջ կոչւում էին ազգային պահակներ (gardes nationales)։

Ոգևորութիւնը գրեթէ նոյնքան մեծ էր, որքան երրորդ դասակարգի պատգամաւորների ընտրութեան օրերը։

Վարպետ Ժանը ընտրւեց տեղակալ (lieutenant) Բարաքների գնդի. Լէտիւմմիէն փոխ—տեղակալ, Գոտիէ-Կուրդուան համարակալ (sergent major)։ Հրամանատար չունէինք, որովհետև Բարաքցիների գունդը ամբողջութիւն չէր կազմում։

Որպիսի՜ ուրախութիւն էր այն օրը, երբ մի կողմից «կեցցէ ազգն» էին աղաղակում, իսկ միւս կողմից գինի կոնծում և նոր պաշտօնեաներին շնորհաւորում։

Հրացաններ էլ տուին մեզ զինարանից։ Ճշմարիտ է, հին ու մին տրաքոցներ էին մի կանգունաչափ ուիններով, այնուամենայնիւ կարողանում էինք բանեցնել։ Կիրակի կէսօրներից յետոյ, Լաֆէր գնդի մի քանի սպաներ գալիս էին մեզ վարժեցնելու։

Մի շաբաթից յետոյ, վարպետ Ժանը պատրաստ ունէր իր նշանազգեստը և երկրորդ կիրակի հագած, փորն ուռեցրած, բեխերը ցից, գլխարկը ծոծրակին և խոշոր սուրը կողքին՝ գնում—գալիս էր շարքի առջևից ու կանչում, օրինակ, հէնց Վալէնտինի վրայ.

—Քաղաքացի Վալէնտին, գրողը տանի, ուսերդ ցած...

Բաստիլի առումից յետոյ, մեր ազնուականներն ու եպիսկոպոսներն էլի ցոյց տուին իրենց տխմարութիւնն ու անհեռատեսութիւնը։ Փոխանակ Ազգային Ժողովում մնալու և իրենց իրաւունքները—եթէ ունէին—պաշտպանելու, ունեցածնին կապկպեցին և երկրի սահմանից դուրս ելնելով, թշնամիների մօտ գնացին օգնութիւն խնդրելու մեր դէմ։ Միմեանց ետևից բոլորը չուեցին—ազնուական, եպիսկոպոս, ծառայ, վարդապետ, կապուցին, մեծ տիկիններ։ Լօրէնում ապրողները Տրիր գնացին, Ալզասից՝ Կոբլէնց կամ Բազէլ։ Գնալիս էլ սպառնալից ասում էին.

—Սպասէք մէկ... շուտով ետ կը դառնանք և կը տեսնէք...

Խենթերի էին նմանում. ամենքս ծիծաղում էինք նրանց վրայ։ Այդ գնալն էր ահա, որ կոչւեց պանդխտութիւն (émigration)։ Սկսեցին գաղթել նախ կոմս դ՚Արտուան, իշխան Կոնդէն, Բուրբոնի իշխանը, Պոլինեաքը և մարաջախտ Բրօլին։ Այս վերջինս Փարիզը շրջապատող բանակի հրամանատարն էր և պիտի Ազգային Ժողովը ցրիւ տար։

Այդ բոլոր ազնուականներն էին, որոնք յիմարութիւնների էին դրդել Թագաւորին. այժմ, վտանգը տեսնելով— այդ բարի Թա-

գաւորականները—թողնում էին նրան դժուարութիւնների մէջ՝ իրա գլխին։

Այդ ամենը տեսնելով, վարպետ Ժանն ասում էր.

—Թող գնան, թող գնա՜ն... Բարեբախտութիւն է դա թէ՛ մեզ և թէ Թագաւորի համար... Այժմ նա գոնէ մենակ կը մնայ և այլ ևս ականջին յուշարարութիւն անողներ չի ունենայ։

Ամենքն ուրախանում էին։ Եթէ բոլոր ազնուականները կորչէին գնային—հիանալի բան կը լինէր. սրտանց, ուրախութեամբ նրանց ամենքին գերմանացոց և ռուսներին ընծայ կը տայինք։

Դժբախտաբար շատերը սակայն, մեր վաշտերի հրամանատարներն էին և մնացել այդ պաշտօնների մէջ ու ճգնում էին զինւորներին ապստամբեցնել ազգի դէմ։ Զզւելի բան էր։

Հետզհետէ պիտի պատմեմ ու պիտի տեսնէք, թէ այդ խայտառակ մարդիկ ինչե՜ր չը փորձեցին իրանց հայրենիքի դէմ։

Փարիզցիներն այդ միջոցին դեռ այնքան սիրում էին Թագաւորին, որ ուզում էին նրան իրենց մէջն ունենալ։ Կանանց Վէրսայլ ուղարկեցին Թագուհու մօտ, որպէս զի խնդրեն նրան՝ որդու և ամբողջ արքայական ընտանիքի հետ Փարիզ գալու։

Թագաւորն էլ, ի՞նչ կարող էր անել, ընդունեց։ Խեղճ ժողովուրդը, հէնց որ արքայական ընտանիքը քաղաք մտաւ, ասում էր.

—Այլ ևս չենք քաղցիլ... ահա հացագործը, հացագործուհին և հացագործի փոքրիկ աշակերտը (mitron)...

Լաֆայէտը անւանւեցաւ ազգային պահակների հրամանատար, Բայլին՝ Փարիզի քաղաքապետ։ Սրանից պարզ երևում է, թէ ինչպէս թշւառ ժողովուրդը ոխ պահել չը գիտէ իր դէմ գործած չարութիւնների համար։

Շօվէլն էր մեզ նամակներով նկարագրում այդ սրտաշարժ տեսարանները։ Գրում էր նոյնպէս, թէ ինչպէ՞ս Ազգային Ժողովը հետևել էր Թագաւորին Փարիզ և նիստերն այժմ կայանում էր Տիւյլրիի ղեակի ետևում եղած ձիավարժոցի մէջ (manège)։

Հինգ-վեց շաբաթը մի անգամ թէ նամակ էինք ստանում Շօվէլից և թէ ծրարներով լրագիրներ, որոնց մէջ կային շատ ուժեղ յօդւածներ, մանաւանդ Լուստալօի և Կամիլ Դէմուլէնի գրածները։

Մեզ ուղարկւած այդ լրագիրների մէջ Ֆրանսիայում եղած ու կատարւած ամեն ինչ գրւում էր. այն էլ այնպէս պարզ, որ իւրաքանչիւր գիւղացի կարող էր երկրի մէջ տեղի ունեցող գործերի մասին լաւ գաղափար կազմել։

Այդ բոլորը կարդում էինք Ֆայլցբուրգի վաճառանոցում,

ուր, Փարիզի Ժաքօբէնների և Կորդըլիէրների*) ակումբանոցի նըման, մենք էլ ակումբ էինք հիմնել։

Երեկոյեանները, հաւաքւած հրդեհաշէջ մեքենաների և մասագործների հին խանութի մէջ տեղում գտնւող հրապարակի վրայ, Լէտխիմիէն խոշոր և հնչեղ ձայնով ժողովականներին էր կարդում բոլոր նորութիւնները։ Շրջակայքից շատ մարդիկ էին գալիս լսելու, իսկ յետոյ շրջանի երեւելիները ճառեր էին խօսում։

Այդ ճառերի մէջ շօշափւում էին ամեն տեսակի հարցեր. խօսւում էին մարդկային իրաւունքների, «Վէտօ»-ի, Ֆրանսիան՝ գաւառների վերածելու մասին, այլ և հարց էին բարձրացնում գործօն ու անգործ (actif et passif) քաղաքացիների, հրէաների և բողոքականների՝ հասարակական պաշտօնների մէջ ընդունելու, երդւեալ դատաւորութեան հիմնելու, վանքերի և կրօնական այլ կարգերի ոչնչացման, կղերականների կալւածների՝ յօգուտ ազգի գըրաւելու և այլն և այլն հազար ու մի այնպիսի հարցերի վերաբերութեամբ, որոնք Փարիզում ենթարկւում էին Սահմանադիր ժողովի (Assemblée constituante) խորհրդակցութեանը։

Որպիսի կեանք և որպիսի փոփոխութիւն։

Անցեալներում, դեռ շատ քիչ առաջ, հէնց ազնւականներն ու եպիսկոպոսներն էին վճռում ամեն հարց, գործադրում առանց մեզ իսկ հարցնելու։ Նրանք շարունակում էին ամենայն հանգստութեամբ ոչխարի նման խուզել ժողովդին, իսկ նրանց օգնական—հարկահաւաքները, ոստիկանները և այլն, գալիս էին առանց այլ և այլութեան, գործադրելու իրենց կամքը, որ և օրէնք էր դառնում։ Իսկ թագաւորը, քաղցր խօսքերով բերանը լի՝ պարահանդէսներ, տօնախմբութիւններ էր տալիս, որսեր սարքում ու մինչ պալատի այդ քէֆերի նկարագրութիւններով լցւում էին թերթերը—ժողովուրդն այս կողմում կոտորւում էր ցրտից ու սովից...

Ա՜հ, այո, մեծ բարեբախտութիւն էր լսել, թէ ինչպէս ժողովուրդն ինքն էր խօսում ազատօրէն իր ցաւերի մասին և ձայն ունէր իրեն վերաբերեալ գործերի մէջ։

---

*) Ֆրանսիայում Ժաքօբէններ և Կորդըլիէրները վանական կարգեր էին։ Նրանց միաբանները, յեղափոխութեան ժամանակ փախան երկրից, իսկ քաղաքական կուսակցութիւնները սկսեցին իրենց նիստերը կայացնել դատարկ մնացած վանքերում և նրա համար էլ այդ ակումբներն ստացան «Ժակօբէնների և Կորդըլիէրների ակումբ» անունը։ Ակումբների ղեկավարներն էին Դանտօնը և Դէմուլէնը։ Համագումար ատեանի (convention) ժամանակ 1792-ին, կազմեցին լեռնականների կուսակցութիւնը, սակայն 1794 թւին ոչնչացան և Ռօբէսպիէրը գլխատել տւաւ նրանց ղեկավարներին։ Ծ. Թարգմ.

Պէտք էր տեսնել թէ ինչպէս ծափահարում էին մեր շահերի մասին խօսողներին ու որպէս բարկանում հակառակութիւնների դէմ։

Ո՛չ, ով չի տեսել այդպիսի փոփոխութիւն ժողովրդի կեանքի մէջ, նա չէ էլ կարող պատկերացնել թշւառների երջանկութեան չափը, երբ նրանք կարողանում են ազատ խօսել, բողոքել և բարօրութեան հասցնող օրէնքներին՝ իրենք անձամբ մասնակցել ու ձայն տալ։

Սակայն երկրի այս մեծ յեղաշրջումների, լեռնցիների՝ դաշտն իջնելու, ամրոցների, դղեակների և վանքերի հրդեհելու ժամանակ, թշւառ հայրս էր, որ ամենածանր դրութեան մէջ էր ընկել։ Այլ ևս նրա ոչ սակառներն էին ծախւում, ոչ էլ աւելները։

Եւ մայրս անդադար ասում էր.

—Աշխարհի վերջն է եկել արդէն... կորած ենք այլ ևս... գոնէ հոգիներս ազատենք...

Մի օր էլ յանկարծ, Կլօդ եղբայրս տուն եկաւ փայտը ձեռքին և յուսահատաբար հաղորդեց, որ Տիերսըլէնի վարդապետները իրեն դուրս էին հանել գործից։

—Այսուհետև ի՞նչ պիտի անեմ, ասում էր նա—այլ ևս արածելու տաւար էլ չը կայ...

Սակայն ես, որ քսան տարեկան էի այդ ժամանակ և երիտասարդական ամբողջ ոյժս տեղն էր—ծնողներիս երկիւղի վրայ բարկանում էի։

—Ի՞նչ կայ վախենալու, ասում էի ինքնավստահութեամբ, —այնքան նեղութիւններ տեսած լինելուց յետոյ, դիմացել ենք կոռ ու բէգեարի, զանազան տուրքերի, ճորտութեան, կերակրել ենք աղաների ու կրօնաւորների մեր աշխատանքով, իսկ այժմ, որ այդ բոլորից ազատւած՝ կարող ենք մեր վաստակածը մեզ պահել—էլ ինչո՞ւ տրտնջանք...

Երեկոյեան ժամը 8-ը լինելուն պէս, գրեթէ ամեն օր տնից դուրս էի գնում և վազում դէպի քաղաք—ակումբանոց (club), վիճաբանելու մեր հին համքարութեան աւագների և գլխաւորների հետ, որոնց նոյնպէս ազնւական էինք կոչում։ Ձայնս ամենքից բարձր էր լսւում։ Ձմեռւայ վերջերումն արդէն այնքան առաջ էի գնացել, որ առաջարկում էի ժողովին՝ գոռալու, օրինակ, այսպիսի խօսքեր.—«Կեցցե՛ն Սահմանադրութեան բարեկամները» և կամ «Անկցի՛ն կեղծ հայրենասէրները»...

Բարաքներում այդ իմ ընթացքովը վարկս բարձրանում էր ու յարգանք էի սկսում վայելել։ Եւ երբ ժամը 10-ից յետոյ տուն

վերադառնալիս «Ça ira *)» էինք երգում լուսընկային, ձայնս կլկլում էր պարզ օդի մէջ ու վարպետ Ժանը ձեռքն ուսիս դրած՝ ասում էր ծիծաղելով.

—Միշէլը իսկական յեղափոխական է. մենք միշտ համամիտ կը լինենք:

Ահա թէ որտեղ էր հասնում երիտասարդական ոգևորութիւնը: Մարգարիտի և Շօվէլի վրայ մտածելիս՝ հայրենասիրութիւնս շատ աւելի մեծանում էր և սիրտս բաբախում ջերմ սիրով:

Այդ տարին շուտ անցաւ. ձմեռը մեղմ էր և ձիւնը ընկնելուն պէս՝ հալւում էր: Փետրուարի վերջերին այլ ևս ոչ մի տեղ ձիւն չը կար դաշտերում:

1790-ի մարտ, ապրիլ և մայիս ամիսներում, քաղաքացի պահակներն սկսեցին միմեանց հետ յարաբերութեան մէջ մտնել ու դաշնակցել: Գիւղերից հաւաքւում էին քաղաքը և, փոխանակ առաջւան պէս միմեանց դէմ կռւելու քարերով ու փայտերով, այժմ եղբայրանում էին. հները ճառեր էին արտասանում և ամենքը միմեանց համբուրելով՝ գոչում էին.

—Ազատութիւն կամ մահ...

Կանայք և աղջիկներ էլ էին գալիս այդպիսի տօներին, սակայն չէին մասնակցում, որովհետև մօդայի և շնորհքը ցոյց տալու օրերը չէին եկել դեռ:

Մի բան, որ աւելի հաճոյք պատճառեց գիւղացոց—դա կղերականութեան կալւածների աճուրդի հանելն էր:

Հասկանալի է, որ այդպիսի յեղափոխութեան ժամանակ, երբ ոչնչացրել էին բոլոր հին տուրքերը—անշուշտ պետական դէֆիցիտը պիտի մեծանար: Ազգային Ժողովը, որ ամբողջ ֆրանսական ազգն էր ներկայացնում, չէր կարող մեր հին Թագաւորների օրինակին հետևելով՝ առ ոչինչ համարել սնանկութիւնը և անպատւել ազգը: Սակայն ինչպէ՞ս վճարել հին, Թագաւորութեան մեծ պարտքը. որտեղից փող գտնել:

Բարեբախտաբար, Օտէօնի եպիսկոպոս Տալլէյրան Պերիգորը յիշեցրեց Ազգային Ժողովին, որ եկեղեցին 4 միլիարդի չափ կալւածներ ունի մօտ 200,000 ամեն տեսակ կրօնաւորների ձեռքը՝ իբր աւանդ յանձնւած:

Ազգը կարող էր Թոշակ նշանակել այդ կրօնաւորներին, վերցնել նրանց ձեռքից կալւածները և աւելի լաւ մշակելով՝ Թէ Թոշակները վճարել և Թէ մի բան էլ աւելի ունենալ:

*) Յեղափոխական մի շատ պարզ և խիստ երգ:

Հիանալի միտք էր այդ, որ, չը նայելով ուրիշ եպիսկոպոսների առարկութիւններին, Ազգային Ժողովը իսկոյն քւէի դրաւ, ընդունեց և անմիջապէս յայտարարեց:

Երկիրն այդպիսով ազատւեց սնանկութիւն յայտնելու խայտառակութիւնից, և 1790 թւին, մօտ 100 միլիոնի կալւածք ծախու հանւեց:

Ահա այդ իսկ ժամանակ, հին մարդկանցից շատերը, որոնք դէմ էին առաջ յեղափոխութեան—այժմ ամենաջերմ պաշտպաններ դարձան: Աչքները փայլեցին ագահաբար. իսկոյն ծածուկ անկիւններից հանեցին տարիներով կուտակած իրենց կոպէկները և քաղաքատուն շտապեցին ծախու հանւած հողերը գնելու: Այնտեղ էին աճուրդի հանել կալւածները՝ հողաբաժիններ վերածած: Իւրաքանչիւր քաղաքային վարչութիւն (municipalité) ծախում էր իր շրջանի հողերը և փողը ուղարկում պետական գանձարան, որտեղից և վճարւում էր ազնւականների և կղերի արած դէֆիցիտը:

Եթէ փող ունենայի, որպէս էժան և լաւ հողերի տէր կը դառնայի: Լիքսհէյմի մեծ լիճն ու շրջապատող արօտատեղիները, որոնք Տիրըլէնի վանքինն էին, վաղուց աչքիս էին խփել, բայց որ ոչ մի կոպէկ կամ վարկ իսկ չունէի...

Քանի քանի անգամ, աճուրդի ժամանակ, ականջիս դիպաւ որ ծախում են հրաշալի դաշտեր, անտառներ և արօտատեղիներ: Սիրտս տրաքւում էր, որ ոչ մի լիարդ իսկ չունէի, մինչ այն կողմում զանազան գիւղացիներ տէր էին դառնում բոլորին:

—Գոնէ այսուհետև փող խնայիր, Միշէլ, մտածում էի ես— ծերութեանդ օրերում գուցէ յաջողւի քեզ մի կտոր հողի տէր լինել:

Պէտք չկայ կարծեմ նկարագրելու վարդապետների և վանականների դէմքերը, երբ նրանց հողերն աճուրդի էին դնում: Աղաղակում էին, հայհոյում և անիծում ամենքին. սակայն լաւ հողաբաժիններ գնող գիւղացիք յանձն էին առնում քաւարան գնալ, քան թէ աճուրդին մասնակցելուց ետ կանգնել:

Վարպետ Ժանն իսկ չը քաշւեց և մի լաւ կտոր էլ ինքը գնեց: Ճշմարիտ է, 12000 լիվր տւաւ, սակայն այնպէս կտոր էր առածը, որ գոհունակութիւնից փայլում էին դէմքն ու աչքերը: Մօրքուր Կատերինը փորձեց քիչ մրթմրթալ, եկեղեցական կալւածներ գնելը համարեց մեղք, սակայն կնքահայրս, որ ծիծաղելով ճեմում էր սրահում, ձեռքերը մէջքին դրաւ ու ասաց.

—Փա՛հ... վ՛նաս չունի, մի քանի հատ մոմ կը վառենք ի պատիւ Ս. Կոյսի... Միամիտ եղիր, Կա՛տերին, իմ հաշւովս կը

վառեմ այդ մոմերը և հոգիներիս փրկութիւնը դրանով կատարեալ ապահով կը լինի…

Վարպետ Ժանի դէմ սակայն, սոսկալի կերպով զայրացել էր հայր Բենեդիկտը, որ ման էր գալիս գիւղերում և անիծում եկեղեցական կալւածներ գնողներին։ Այդ մարդը անամօթաբար համարձակւում էր յեղափոխութեանն էլ անիծել այլ և ոչինչ չէր ուզում առնել մօրքուր Կատերինից՝ ասելով.

—Ո՛չ, ո՛չ, գողացւած կալւածներից է…

Պանդոկի առջևից անցնելիս՝ «հրաժարիմք ի սատանայէ» էր արտասանում, երեսին խաչակնքելով։

Վարպետ Ժանը կուշտ ծիծաղում էր տխմարի վրա։

Պէտք է ասել նոյնպէս, որ Վալէնտինն էլ շատ դառնացել էր վարպետ Ժանի դէմ. մտածում էր դարբնոցն իսկ թողնել. Ես էի որ համոզեցի նրան մնալու, երբ ժամերով լսել էի նրա գանգատները։

Այդպէս, կղերականութեան բոլոր կալւածները ծախւեցին, և մէկէն գիւղացիները աւելի հարստացան, քան քաղաքի գործաւորները։ Մանաւանդ, որ ճորտութիւնն էլ վերջացաւ ու ամեն մարդ իր հողի արդիւնքի միակ տէրը մնաց։

Երկրագործութիւնն անմիջապէս ծաղկել սկսեց, հողերը, որ վանականների ձեռքի տակ անտառով, ջրերով ու արօտով էր ծածկւած, դաշտերի կէսը որ խոպան էր մնացել, այժմ սկսեցին մշակել։

Սակայն, պիտի ցաւ ի սիրտ ասել, որ ոչինչ լաւ բան առանց դիմադրութեան չէ յաջողւում մի անգամով. բթամիտ ամբոխը ամեն յառաջադիմութեան միշտ խոչնդոտ է դառնում։

Այս 1790 թւին էր, Ֆրանսիայի հարաւակողմի բնակիչները ապստամբւեցին նոր դրւած օրէնքի դէմ։ Վարդապետներին այնտեղ սրբերի տեղ էին դնում և թշւառ ժողովուրդը մտադրել էր մնալ նախկին չքաւորութեան ու ճնշումների մէջ։ Մանթօբան, Նիմ, Մօնպէլիէ, Տուլուզ՝ կրօնաւորութիւնը քարոզում էր թէ «քահանաները չը պէտք է աւազակներից ռոճիկ ստանան»։ Միւս կողմից բողոքականներին էլ կոտորում էին։

Որպիսի դժբախտութիւն, յիրաւի։ Մինչ գաղթող ազնւականներն ամբողջ Եւրոպային ճգնում էին գրգռել մեր դէմ, մենք փոխանակ միաբան մնալու, միմեանց միսը կրծել սկսեցինք։

Ամենքն ըմբռնում էին, որ կրօնաւորները, յանուն կրօնի ժողովրդին գրգռելով, ազնւականութեան տալիս էին այն ոյժը, որ չունէին նրանք ներքին պատերազմ յարուցանելու համար։

Մանաւանդ, որ մեր զինւորներին հրամայող սպաներն էլ ազնւականներից էին։

Յաճախ վարպետ Ժանը, երեկոյեանները, երբ կարդում էր Շօվէլի ուղարկած թերթերը, ասում էր.

—Էլ ինչացո՞ւ են ուրեմն այդ բոլոր գեղեցիկ օրէնքները. ինչո՞ւ Փարիզից զօրագնդերը ետ ուղարկել, քանի որ միևնոյն է, նրանք ոչ—շատ հեռու, քան, երեսուն կամ քառասուն մղոնի վրայ՝ շրջապատում են մեզ զանազան մարքիզների, կոմսերի, դքսերի և բոլոր մեր դէմ գործողների հրամանատարութեան ներքոյ։ Միթէ դրանք չեն կարող մի օր էլ յանկարծ միաբանել և քայլել ու ցրիւ տալ Ազգային Ժողովը, լուծել նրան, փախստականներին ետ կանչել, մեր գնած կալւածները խլել և չւանը նորից մեր վզին նետել…

Չը նայելով այդ բոլորին, յեղափոխութիւնը մեծ չափեր էր ընդունում։ Ժողովուրդը հաւատք ունէր դէպի նա։ Արքայական, իշխանական և վանական առանձնաշնորհութիւնների ջնջումը ուրախացրեց ամենքին։ Մարդու քէֆն էր գալիս, երբ կիրակի օրերը գիւղացիք ազատօրէն արտերի և անտառների մէջ որսի էին ելնում. աջից ու ձախից հրացանի ձայներ էիք լսում և կամ տեսնում էիք թէ ինչպէս մի չքաւոր գիւղացի, նապաստակ է խորովում շամփուրի վրայ և անտառապահին ծաղրելով՝ ասում իր մանուկներին.

—Մեր հաշւոյն ապրող աւազակներին ենք ուտում… Այժմ միայն մենք ենք մեր տէրը։

Ի հարկէ պահակագնդի սպաներն այլ ևս Տիվօլ չէին գալիս քէֆի. պարերի և խաղերի ժամանակն անցել էր արդէն։ Մեր բագում, ահագին կաղնու տակ, կարելի էր տեսնել ռամիկներ իրենց մաշւած շորերով ու լայն թաղեայ գլխարկներով, որ գինու բաժակներ առաջնին՝ խօսում էին ինչ որ հաշիւների մասին։

Բայց թէ ինչ հաշիւներ էր—չէինք հասկանում։ Բաւական էր սակայն մի հայեացք ձգել դէմքերին, երբ սեղանի վրայով դէպի միմեանց կռացած փսփսում էին—որ մարդ իսկոյն հասկանար թէ խորհածնին պիտի որ ծանրակշիռ բան լինէր։

Գործերն այս դրութեան մէջ մնացին մինչև Օգոստոս։ Ամեն օր նկարագրում էի մեր կողմերում կատարւածները և ամսւայ վերջին ստացւում էր վեց ամբողջ երեսներով մի նամակ, որ անմիջապէս ուղարկում էի Փարիզ, Շօվէլին։

Նա էլ կանոնաւորապէս պատասխանում էր մեզ, ուղարկելով նաև լրագիրներ։ Մարգարիտը նոյնպէս նամակի վերջում շարունակ աւելացնում էր իր բարևը Միշէլին։ Ինձ անսահման ուրա-

խացնում էր դա և հաճոյք պատճառում։ Երեկոյեանները, Շօվէլի գրադարանում երբ երկար նստում էի, ժամերով երբեմն այդ վերջին տողերն էի կարդում նորից ու նորից և ամեն անգամ մի նոր բան գտնում մէջը։

Ինձ համար երջանկութիւն էր նրան լուրեր հասցնել իր փոքրիկ պարտիզի մասին. պարտէզ, ուր ծաղիկները բուսել էին մինչև ճանապարհը, մինչև փողոցը և ծառերը կռացել էին բալերի ծանրութեան տակ։ Որքա՜ն կը ցանկայի կարողանալ հասցնելու նրան այդ հասուն պտուղներից մի զամբիւղ լի և կամ գոնէ ցօղաթաթախ այն շքեղ ծաղիկներից մի մեծ փունջ։ Որքա՜ն պիտի հրճուէր։

Այդպէս մտածելով շա՜տ էի տխրում, որ այժմ մենակ էի մնացել այդ թարմութեամբ ու բուրմունքով լի փոքրիկ անկիւնում, ծառերի և հին խրճիթի սուերների տակ։

Մինչ այդ, վտանգն ակներև կերպով մեծանում էր, շուրջս ամեն ինչ շարժւում, եռում։

Մի օր էլ յանկարծ լուր տարածւեց, որ Աւստրիացիք Սաէնէյի կողմից մտել էին Ֆրանսիա և որ զօրապետ Բուլիէն դիտաւորութեամբ ետ էր քաշել զօրքերի հետ Շաուլվիլից, որպէս զի թշնամուն ճանապարհ տար ներս գալու։

Սոսկալի բաներ սկսեցին այնուհետև։

Երեսուն հազարից աւելի ազգային պահակներ անմիջապէս զէնք առին. լեռնային կողմերի այն կամաւորների գնդերը, որոնք զէնք չունէին դեռ, մեզ մօտ էին բերում իրենց հին գերանդիները՝ նրանցից նիզակ շինել տալու համար։ Թմբուկը հնչում էր ամեն կողմից, «ի զէն» աղաղակներ լսւում...

Մենք էլ պատրաստւում էինք Ֆալցբուրգի պահակների հետ ճանապարհ ընկնելու, երբ լուր հասաւ թէ թագաւորն էր թոյլատրել աւստրիացիներին՝ Ֆրանսիայից անցնելու, որ գնան և Բելգիայի յեղափոխութիւնը խեղդեն։

Այդպիսի թոյլտուութեան համար, իսկապէս հարկաւոր էր Ազգային Ժողովի հրամանը։ Ի հարկէ, անմիջապէս հասկացանք ամենքը թէ ինչ պիտի լինէր մեր հալը, եթէ միահամուռ ոտքի չելնէինք։

Նոյն իսկ վարպետ Ժանի սէրն առ թագաւորը՝ դադարեց այլևս։ Թէ նրան և թէ ամենքին կասկածելի թւաց, որ մեր հողերից թոյլ են տալիս օտար բանակ անցնի և գնայ ճնշելու մեր յեղափոխութեան ծնունդ եղող շարժումները Բելգիայում։

Նախարարները պնդեցին, որ քաղաքագիտական գաղտնի մի դաշնագրութեան տրամադրութիւնն էր այդ։ Ազգային Ժողովն էլ չուզեց հարցաքննութեան ենթարկելով՝ պարզել խնդիրը. վախե-

ցաւ որ տակիցը շատ ուրիշ բաներ չը դուրս գային,

1790 թւի օգոստոսի սկզբներին էր այդ։ Ազնուականների դըրութիւնը քանի գնում — վատանում էր, որովհետև Ֆրանսիայում չը տեսնուած խայտառակութիւն էր, որ զինւորներն իրենց սպաներին գողութեան մէջ ամբաստանելով՝ ձերբակալէին։ Պուատուի, Ֆօրէզի, Բօսսի, Նորմանդիայի և ուրիշ շատ տեղերի զօրագնդերը պահակներ էին դնում իրենց սպաների տների առաջ և նրանցից հաշիւ պահանջում։

Որպիսի՜ աղտ ու խայտառակութիւն... Անտուն-անտէր զինւորների կողոպտել. և այն էլ ո՞վ — այն հպարտ, ամեն պատւի, թոշակի և արտօնութեան տէր ազնուական սպաները... Կարո՞ղ էք այդ աստիճանի ստորութիւն երևակայել։

Եւ սակայն ճիշտ էր այդ. զօրագնդերը պահանջում էին իրենցից կողոպտած խոշո՜ր գումարներ։ Բօսսի գնդի սպաները զօրքերի փողերից կերել էին 240,727 լիվր. Նորմանդիայի և Բրէստի նաւային գնդերը պահանջում էին ետ տալ մինչև երկո՜ւ միլիոնի գողացւած գումար և զինորական վարչութիւնը ստիպւեց հաշիւ ներկայացնել...

Բացի դրանից, Ստրազբուրգում եօթը գնդեր ապստամբւեցին, Բիգում զինւորները վռնտեցին իրենց սպաներին։

Այդ բոլորը տեսնելով, Ազգային Ժողովը խնդրեց թագաւորին՝ «նշանակել յատուկ քննիչներ սպաներից ընտրելով, որպէս զի նրանք քննեն զօրքի գանգատները և գոհացում տան պահանջներին»։

Եւ ահա, քննութիւնից երևաց հէնց, որ զինւորական վարչութիւնները (états mojors շտաբ) պիտի վճարէին զինւորների սուպից և բանջարեղէնից գողացած երկու և երբեմն 300.000 լիվր դըրամ։ Այդ մերկացումը զզւանք յառաջացրեց ու ամենքն սկսեցին աղաղակել։

—Ժամանակ է յեղափոխութիւնը սկսելու։

Թէ ինչպէ՛ս կատաղել էին աստիճանաւորներն իրենց զինւորների գանգատից—անհնար է նկարագրել։ Զինւորական վարչութեան շատ սպաներ փախան երկրից, թողին մեր բանակն ու անցան աւստրիացոց կողմը։ Բոլորն ի հարկէ չը գնացին. կային և ազնիւ մարդիկ, որոնք զայրացան իրենց ընկերների աղտոտ ընթացքը տեսնելով։

Երկրից հեռացող, գողութեան ու աւազակութեան մէջ բըռնւած այդ զինւորական բարձր պաշտօնեաները, փոխանակ զղջալու իրենց կեղտոտութիւնների վրայ և թողութիւն խնդրելու-անցան թշնամու կողմը և մտածում էին վրէժ առնել հայրենիքից։

Օգոստոսի 15-ի մօտերը սայլով Լինեվիլից Բարաքներն եկաւ քեռի Սուղէօրը. մի մարդ, որ կաւէ ամաններ էր տալիս և փոխարէնը հին շորեր, կոտրած ապակի և մոխիր առնում։ Վարպետ Ժանի մօտ կանգ առաւ, տեսնելու համար թէ մօրքուր Կատերինը փոխելու բան չէ՞ր ունենալ. այլ և մի շիշ գինի տնկելու՝ ըստ իւր սովորութեան։

Ծեր, շա՜տ ծեր, բոլորովին սպիտակած և չեչոտ մարդ էր Սուղէօրը. շատ էր սիրում լսած լուրերը տարածել ամեն անցած տեղերում՝ շրջիկ մանրավաճառների նման։ Նրան կոչում էին «զորտ ծեծող», որովհետև իր գիւղումը՝ գիւղացիները ստիպւած էին ամեն գիշեր իրենց Լէնդր լճի գորտերին ծեծել, որպէս զի կռկռոցներով գիւղատէր աղաների քունը չը խանգարւէր։

Վարպետ Ժանը խօսեցրեց նրան։ Ծերունին հէնց հարցի էր սպասում, որ պատմէր։

Եւ ահա նա էր պատմողը, թէ Նանսիի շրջակայքում մեծ խռովութիւն էր բարձրացրել. երեք վաշտ զինւորներ ընդվզել էին իրենց սպաների դէմ։ Սպաներն էլ սաստիկ կատաղած էին, որովհետև ստիպւած էին վերադարձնել իրենց գողացած 150,000 լիվր գումարը. մի ուրիշ վաշտի սպաներից պահանջում էին 47 962 լիվր. մի երրորդի էլ զինւորները զինւորական վարչութիւնից ուզում էին 229,208 լիվր գողացւած գումար։

Պատմեց նաև, որ սպաները զինւորների կողմից բողոքելու ուղարկած պատգամաւորներին մտրակելով ծեծել էին տւել։ Այդ խայտառակ վարմունքը այնպէս գրգռել էր ժողովրդին, որ ազգային պահակներն անցել էին զինւորների կողմը։ Միւս կողմում սպաներից ուղարկւած բանակային զանազան մանր սպաներ՝ մենամարտի էին գրգռում ժողովրդի մարդկանց ու սպանում...

Այդ բոլորը շատ վատ հետևանքներ պիտի ունենար...

Պատմելիս՝ ծերունին ծիծաղում էր. սակայն մենք երբ լսում էինք, հետզհետէ երկիւղը պատում էր մեզ։ Սահմանագլխից հազիւ 10-ը մղոն հեռու էին մեր գիւղերը և ներկայ կարգ ու կանոնի ժամանակ, այսինքն ի նկատի ունենալով որ զինւորներից մեծ մասին արձակում էին՝ կամենալով ազատւել նրանց բողոքներից, հայրենասէր զինւորներին անպէտք փամփուշտներ էին ցրւում—մենք գտնւում էինք անմիջական վտանգի տակ և կարող էինք սպասել, որ այսօր չէ վաղը՝ թշնամին պիտի յայտնւէր մեզ մօտ։ Մանաւանդ որ Պրուսական Ֆրիդրիխ-Վիլհէլմ թագաւորը դաշն էր կապել աւստրիական Լէօպոլդ կայսեր հետ և երկուսն էլ Ֆրանսիական յեղափոխականներին յայտարարել էին որպէս իրենց թշնամի։

Դրանից քիչ յետոյ, աւելի ծանրակշիռ տեղեկութիւններ ըստացանք Շօվէլի գրած նամակներից և այդ լուրերը սարսափ ազդեցին, որովհետև ո՛չ միայն Լուի XVI թագաւորը և փախստական ազնւականները, եպիսկոպոսները, սպաներն ու վանականները միաբան էին ազգին դաւաճանելու, այլ և նո՛յն իսկ Ազգային Ժողովի շատ պատգամաւորներ էլ միացել էին նրանց և կամենում էին յեղափոխութեանը վերջ տալ ու մեզ նորից ստրկութեան մէջ ձգել։

Շօվէլի այդ նամակից իմացանք, որ Միրաբօն և երրորդ դասակարգի մի քանի պատգամաւորներ կաշառւել պալատից, այժմ յայտարարում էին թէ յեղափոխութիւնը շատ էր առաջ գնացել։ Վախեցել էին, տեսնելով, որ ամենքին գրաւել էր ազատութեան բուռն ոգևորութիւնը։

Պատգամաւորներից մէկին գրաւել էր նախարարութեան պաշտօնը, միւսները դղեակ, կառքեր, անտառ ու ճորտեր ունենալը շա՜տ աւելի լաւ էին համարել... Մինչև իսկ Լաֆայէտն ու Բայլին էլ սկսում էին երեսները դարձնել մեզնից։

Յիշում եմ, որ Շօվէլն այդ նամակում խօսում էր նոր այնպիսի մարդկանց մասին, որոնք օրէցօր աչքի էին ընկնում զանազան ժողովներում և հռչակ ստանում։ Դրանք էին օրինակ՝ Դանտօն, Րօբէսպիէր, Մարա, Պէտիօն, Բրիսսօն, Լուստալօ, Դէմուլէն։ Այս բոլորը մարդիկ, որոնք իրենք իրենց նւիրեցին ազգին, յետոյ աչքից ընկան և միմեանց ետևից մեռան գիլեօտինի*) վրայ, մինչդեռ ազնւականութեան ու կրօնաւորութեան շահերին ծառայողները ապրեցին յարգանքով և մեռան իրենց անկողինների մէջ հանգիստ, դեռ գործած մեղքերի համար էլ թողութիւն ստանալով։

Եթէ Աստւած գոյութիւն չունենար, այդպիսի օրինակները կը յուսահատեցնէին, և ժողովրդի շահերին ծառայողները, որոնք նոյն իսկ ժողովրդից հալածւում են և ցեխի մէջ շպրտւում, պիտի համարւէին աններելի տխմարներ։

Շօվէլի նամակները ապշեցրին մեզ։ Վարպետ Ժանն ըստ երևոյթին դժգոհ էր նրանից և ասում էր, որ չը պէտք էր միանգամով չափազանց պահանջկոտ լինել։ Իսկ ես ուրիշ կերպ էի մտածում և չէի գտնում, որ Շօվէլը պահանջկոտ էր։ Շատ լա՛ւ ըմբռնում էի որ վարպետ Ժանը և առ հասարակ ամեն բուրժուա, ստանալով իրենց ուզած կտորները, ուզում էին քիչ շունչ առնել։ Բայց չէ՞ որ բո՛ւն ժողովուրդը դեռ ոչինչ չէր ստացել, չէ՞ որ նա՛ էլ իրաւունք ունէր իր բաժինը պահանջելու յեղափոխութիւնից։

*) Գլխատելու մեքենայ.

Այսպէս վէճի էինք բռնուած վարպետ Ժանի հետ, երբ մի օր էլ, օգոստոս 29-ի երեկոյեան ժամը 7-ից յետոյ, վաճառատան պատերին կպցրած տեսանք երեք խոշոր յայտարարութիւններ:

Իսկոյն ժողովուրդը հաւաքուեց նրանց շուրջը: Երկար Լէտիւմիէն բարձրացաւ մի տեղ, մի քանիսները լապտերներ բերին և նա իր խոշոր ձայնով սկսեց կարդալ հետևեալը.

Պ. դը Լաֆայէտի նամակը, ուղղուած Լա Մ'էօրթի և Լա Մ'օզէլլի ազգային պահակազնդերին.

Փարիզ. 17 օգոստոսի 1790.

«Պարոններ,

«Ազգային Ժողովը տեղեկանալով Նանսիի զօրագնդի յանցաւոր ընթացքը և նախազգալով այդպիսի խռովութիւնների հետևանքը, նրանց ճնշելու համար ձեռք առաւ այն միջոցները, որոնք նշանակուած են ձեզ ուղարկուած որոշումների մէջ, որպէս զի դուք էլ ծանօթանաք և պատրաստ լինէք կատարելու այն կարգադրութիւնները, որոնք կարող են ձեզ ուղարկուել գործադրելու շատ շուտով»:

«Թոյլ տուէք ձեր պաշտօնակից եղբօրը—որին դուք յանձնարարել էք արտայայտելու այստեղ ձեր անձնանուիրութիւնը Սահմանադրութեան և հասարակաց կարգին—ձեր ուշադրութիւնը հրաւիրել տալու այս խնդրի վրայ, որպէս մի ամենակարևոր ձեռնարկի: Հարկաւոր պիտի լինի ձեր ամբողջ ոյժն ու աչալրջութիւնը գործադրել, եթէ կամենում էք որ հասարակաց կարգը պահպանելով և օրէնքը յարգելով՝ հաստատուն հիմունքների վրայ կանգնի ազատութիւնը»:—ԼԱՖԱՅԷՏ:

Սարսափելի էր լսել այդ բոլորը: Եթէ մի քանի օր առաջ լինէր այդ հրաւէրը, անշուշտ մենք առանց մտածելու, Նանսիի վրայ կը քայլէինք: Սակայն Շօվէլի նամակը մեզ նկարագրել էր Լաֆայէտին իբր մի թոյլ և սաստիկ փառասէր մարդի և այժմ նրա այդ հրաւէրը՝ գնալ-կռուելու հայրենասէր զինուորների դէմ—լցնում էր մեր սիրտը զայրոյթով:

Բարաքցիներն ամբողջ սկսեցին կանչել.

—Զզուելի է այդ. զինուորները իրաւունք ունեն որ ետ են պահանջում իրենց բերնից կտրած ու գողացուած փողերը. զինուորները մեր եղբայրները, բարեկամներն են. մենք նրանց կողմն ենք և ոչ թէ այն սպաների, որոնք կամենում են կողոպտել նրանց:

Եւ այդ բողոքը համակեց ամենքին: Աղմուկը մեծացաւ-

ազնիւ մարդիկը գոռում էին, որ «ստոր բան է բողոքներին այդ ձևով—զինու ոյժով պատասխանել»: Իսկ Լէտիւմիէն այդ աղմուկի մէջ կանգնած՝ ցնցում էր գլխարկը ամբոխից վեր ու կանչում.

—Բայց լսեցէք մնացածը... լռութիւն... լսեցէք Ազգային Ժողովի որոշումը...

Չը նայելով գրգռուած մեծ զայրոյթին, ամբոխը լռեց սակայն, երբ սկսեցին որոշումը կարդալ.

—«Ազգային Ժողովը հրամայում է զինուորական ոյժ կազմակերպել ազգային պահակներից. Մէօրթի և շրջակայ միւս գաւառների պահակազնդերը ժողովել և դնել Նորին Վեհափառութեան նշանակած ընդհանուր հրամանատարի տրամադրութեան տակ, որպէս զի այդ ոյժովը ճնշէ ապստամբութիւնը և ոչնչացնէ նրա հեղինակները»:

Իսկ Մէօրթի հրամանատարութիւնը Նանսիում յայտարարում էր հետևեալը.

—«Ի նկատի ունենալով երէկուայ թւով Մէօրթի հրամանատարութեան ուղարկած պահանջը՝ գլխաւոր զօրապետ Բուլիէյի ստորագրութեամբ, որ պաշտօն ունի 'ի կատար ածելու Նորին Վեհափառութիւն Թագաւորի հրամանը և Ազգային Ժողովի մասին 16-ի վճիռը—Մէօրթի շրջանի բոլոր վարչութիւններին պատւիրւում է հոգ տանել, որ ամեն տեղ եղած ազգային պահակազնդի պետերը հաւաքեն հնար եղածին չափ շատ կամաւորներ, կազմեն ցանկ և իսկոյն ներկայացնեն քաղաքային վարչութեան պաշտօնեաներին (officiers municipaux):

«Այդ ցանկերի համեմատ, քաղաքային վարչութիւնները պարտաւոր են վճարել կամաւորների գնդերի հրամանատարներին այնքան գումար, որքան կը բաւականանայ մի շաբաթւայ պաշարի համար, հաշւելով իւրաքանչիւր անձին օրական 24 սու (մօտ 50 կ): Իւրաքանչիւր զինուոր պիտի ունենայ ամենապակասը 20 փամփուշտ. ով չէ կարող այդքանը գտնել, կարող է գնել Նանսիում: Ամբողջ շրջանը կունենայ միայն մի դրօշակ: Ազգային պահակների այդ գնդերը, նշանակուած տեղը հասնելու համար, ճանապարհին կը գիշերեն կանոնաւոր զօրքի ձևով. ոչ մի քաղաքացի իրաւունք չունի մերժելու նրանց բնակարան: Զօրքը առաջ կը խաղայ ամենաարագ կերպով, և այլն և այլն»...

Ամբոխը լուռ՝ լսում էր այդ բոլորը:

Հազիւ Լէտիւմիէն վերջացրել էր կարդալու վերոյիշեալ յայտարարութիւնը, որ բարձրադիր նստարանի վրայ ելաւ շրջանի վարչութեան անդամներից Մատէյս Սարըբուրգցին և սկսեց քաղաքացոց հայրենասիրութեանը կոչ անել:

Բառացի կերպով կրկնեց նա Լաֆայէտի ասածները. Լաֆայէտի, որին նա անւանում էր «Վաշինգտոնի բարեկամը և ազատութեան փրկիչը»:

Մի քանիսն արդէն սկսել էին կանչել—«Կեցցէ Թագաւորը, կեցցէ Լաֆայէտը»—և հաստլիկ Մատէյսի քէֆը գալիս էր, երբ յանկարծ վաճառանոցի մէջ տեղից Էլօֆ Կօլլէնը կանչեց.

—Ազգային պահակները չեն եղել զինւորների ջարդելու համար, այլ ընդհակառակն, նեցուկ լինելու նրանց՝ թշնամու դէմ... Մեսար-դը-Կանի և Շատօ-Վիէօի զօրագնդերը ջարդելու փոխարէն, աւելի լաւ կանեն եթէ վճարեն նրանց արդարացի պահանջած դրամները: Այդպիսով միայն կարելի է վերջ տալ ապստամբութեան և ամեն ինչ կարգի ձգել... Բայց, ըստ երևոյթին, ուզում են կռիւ ձգել քաղաքացիների և բանակի միջև, միմեանց դէմ հանել նրանց, որպէս զի աւելի լաւ տիրեն մեզ... Հրաւիրում եմ ամեն մի բանիմաց ֆրանսացու՝ չը խառնւել այդպիսի գործի մէջ. Թող ազնւական սպաներն իրենք մաքրեն իրենց աղտոտութիւնները՝ ինչպէս կարող են. ազգը գործ չունի նրանց հետ...

Կօլլէնի այդ խօսքերը սարսափելի աղմուկ և թեր ու դէմ վէճեր առաջ բերաւ: Ազգային կալւածներ ձեռք բերողները—այսինքն Ֆալլցբուրգի և շրջակայ բոլոր բուրժուաները Լաֆայէտի կողմը բռնեցին: Յաղթութիւնը մնաց նրանց, որովհետև թիկունք ունէին իրենց ձեռքի տակը գործող և իրենցից շահ ունեցող գործաւորների և վարձկալների մի ահագին բազմութիւն:

Նրանց խորհուրդն արդէն վճռել էր, որ քաղաքը կամաւորներին պիտի տար 1000 ֆրանկ: Այդ վճիռը նրանք կայացրել-վերջացրել էին առաւօտեան և այժմ էլ ոյժ անելով՝ յաջողեցին քւէարկել տալ, որ միւս օրն իսկ ճանապարհ ընկնէր այս ինչ գիւղից այսքան, այնինչից՝ այնքան... Բարաքները 15 կամաւորներ ունին: Ժան Լէրուն, Լէտիւմիէն և ես պարտաւոր էինք դրանց թւումը լինել, որպէս լաւագոյն հայրենասէրները:

Վարպետ Ժանը գտնում էր, որ այդպէս էլ հարկաւոր էր: Ինձ թւում է որ մի քիչ քէֆին գալիս էր «զինւորախաղը»—ցոյց տալ իր սիրուն նշանազգեստը Նանսիում: Ջը նայելով խելքին ու լաւ սրտին՝ բաւական սնափառ էր նա:

Լէտիւմիէն, Ժան Ռան և ես, ժողովից յետոյ շարունակեցինք վիճաբանութիւնը, մինչև գիւղ հասնելը:

Որոշւեցաւ որ միւս օրը լուսաբացին պիտի հաւաքւէինք «Երեք աղաւնի» պանդոկն ու այնտեղից ճանապարհ ընկնէինք:

II

Առաւօտեան ժամը 6-ին Զինւորական հրապարակի վրայ ժողովւեցինք մօտ 150 կամաւորներ, որոնք եկել էին թէ քաղաքից և թէ շրջակայ գիւղերից:

Նախ մի-մի բաժակ գինի էինք կոնծել վարպետ Ժանի մօտ, մի-մի լաւ կտոր հաց կերել և ճանապարհի պարկն էլ լցրել: Ուրիշ գիւղից եկածներն էլ նախաճաշել էին և այժմ թմբկահարութիւնը ուշ մնացողներին էր հրաւիրում հասնելու:

Երբ պակասած 5—6 հոգին էլ եկան, հրամանատարը բաժանեց իւրաքանչիւրիս 25-ական փամփուշտ, զննեց բոլորիս և հրամայեց չունեցողներին փամփշտակալներ տալ:

Այնուհետև քաղաքային պահակների հրամանատար Ժէրարը ձի հեծաւ և այնտեղից խօսեց մեզ մեր պարտականութեան մասին: Յետոյ սուրը բարձրացրեց, նշան տւաւ և թմբուկները հնչեցին:

Ֆրանսական դռնից սկսեցինք դուրս գնալ: Բոլոր լուսամուտներից լսում էին—«Կեցցէ Թագաւորը, կեցցէ ազգը» աղաղակներ:

Շատ մանուկներ վազեցին մեր ետևից մինչև Միտտելբրօն և նոյն իսկ Պտի-Սէն-Ժան. այնուհետև սակայն մնացինք մենակ և շարունակեցինք մեր ճանապարհը փոշիների միջով:

Օգոստոսի այդ 30-ի և 31-ի օրերը սոսկալի տաք օրեր էին: Ջը նայելով դրան, ժամը 11-ին արդէն Սարաբուրգ էինք: Քաղաքում դեռ ոչ մէկը տեղից չէր շարժւել. ոչ մի պահակ. զարմացան երբ մեզ տեսան:

Կանգ առնել ուժն զովացնելու համար, յետոյ կրկնապատկելով որոշւած հանգրւանները մինչև Բլամօն, այնտեղ հասանք երեկոյեան ժամը 7-ին քրտնաթոր, փոշոտ և դադար առինք գիշերելու:

Միւս օրն առաւօտեան պէտք եղաւ ցնցելու ինձ, որ զարթնեմ. այնքան յոգնած էի: Ժան Ռան արդէն զօրակոչ էր թմբկահարում՝ փողոցի մէջ տեղում կանգնած: Ժամը 3-ն էր. 4-ին պիտի ճանապարհ ընկնէինք. և դա բարեբախտութիւն էր, որովհետև երբ երկար քայլելուց յետոյ արևը ծագեց—տեսնում էր թէ որպիսի շոգ օր էինք ունենալու՝ մինչև Լիւնէվիլ հասնելիս:

Ժամը 9-ին Լիւնէվիլ էինք: Պէտք եղաւ շարք կազմել քաղաք մտնելու համար: Երբ մեզ տեսան քաղաքացիք, սկսեցին գոռալ.

—Կեցցէ ազգը…

Մանուկները խմբովին վազում էին մեր ետևից, կանայք ժպտում՝ նայում էին լուսամուտներից։ Լիւնէվիլցիք միշտ լաւ հայրենասէրներ են եղել։

Յիշում եմ, որ երբ դադար առինք մի քառակուսի փոքրիկ հրապարակի վրայ խիտ ծառերի տակ և հրացաննիս միմեանց կըցած թողինք, վարպետ Ժանը, Լէտիւմիէն և ես մտանք մի սիրուն պանդոկ և նստանք զովանալու։ Մի ժամ միջոց ունէինք հանգստութեան։

—Առաջ ենք գնում, հը՞… գոչեց վարպետ Ժանը։

—Այո, ասաց Լէտիւմիէն—բայց դեռ բաւական ոյժ է պէտք մինչև Նանսի հասնելու համար։

—Փա՜հ… արեց վարպետ Ժանը—դժւարն անցել ենք. մի քանի քայլ—և տեղ կը հասնենք։

Հրապարակն ու փողոցները լիքն էին ամբոխով. բուրժուաներ, զինւորներ, կին ու տղամարդ՝ գնում էին գալիս. շատերը կանգ էին առնում մեզ նայելու։ Այդպիսի խռնումն երբէք չէի տեսել։ Պանդոկն էլ լիքն էր. կարմիր հագած հրացանակիրներ ծխում էին՝ երկար ոտքերնին սեղանների տակ պարզած. ամեն կողմից ծիծաղ, խօսակցութիւն…

Եւ ահա այդտեղ էր, լսեցինք որ իբր թէ խաղաղութիւն էր կնքւել արդէն, որ ապստամբւող զօրագնդերը զիջել էին և ամեն բան կարգի պիտի ընկնէր շուտով։

Ըստ երևոյթին լաւ համբաւներ էին եկել, որովհետև փողոցներում էլ սկսել էին գոռալ—«կեցցէ թագաւորը»։ Հրացանակիրները—Ալզասեան այդ հսկաները՝ գարեջուր էին խմում, ծիծաղում ու սուլում.

—Խելօք բան են արել որ հաշտւել են։

Հետևեալ օրը առոյգ ու զւարթ՝ ճանապարհ ընկանք, մտածելով որ աւելի տեսակցութեան էինք գնում, քան կռւի։

Ժամը 4-ին հօրիզոնում երևցող երկու գորշ աշտարակները կարծել տւին թէ Նանսին էր այդ, բայց դեռ Սէն-Նիկօլան էր միայն։

Սկսում էինք մոտ գնալ փոշու միջով դէպի այդ աշտարակները, երբ յանկարծ ականջներիս հասան հեռուից եկող երկու զօրեղ թնդիւններ—այնտեղ, մեր աջ կողմի դաշտավայրից։

Սառած կանգ առինք, ականջնիս սրեցինք ու նայեցինք։ Խոր լռութիւն յաջորդեց մի քանի րոպէ. ապա, էլի մի ուրիշ թնդիւն, յետոյ չորրորդը և մեր հրամանատարը, որ ասպանդակների մէջ ցցւած նայում էր, կանչեց.

—Թնդանօթ է.. Կռիւ է այնտեղ… Յառա՜ջ…

Ու չը նայելով յոգնածութեան, այլ և տխրելուն՝ որ Լիւնէվիլում մեր լսածները հաշտութեան մասին սուտ էին դուրս գալիս—փութացրինք քայլերնիս։

Քանի մօտենում էինք, այնքան մեզնից շատերը ետ էին մընում հետզհետէ։ Երեք քառորդն արդէն կանգ էր առել և երբ Սէն-Նիկօլայի առաջին տներին հասանք, պէտք եղաւ բաւակա՛ն սպասել, որ ետ մնացողները գան—հասնեն։

Վերջապէս, երբ թմրկահարներն եկան, յաջողւեցինք մի կերպ քաղաք մտնել։

Փողոցները լիքն էին. մայր եկեղեցու հրապարակում հրացաննիս ցած դրինք վախեցած գիւղացիների և գործաւորների, այլ և ազգային ա՛յն պահակների մէջ տեղ, որոնք Նանսիից այդտեղ էին եկել յուզմունքները սկսելուն պէս, որովհետև ամբոխը անցել էր ապստամբող զօրագնդերի կողմը։

Այնպէս աղմուկ ու շփոթ էր տիրում քաղաքում, որ անհնար է պատմել։ Բոլորը զայրացած պատմում էին, որ հազիւ թէ իրենք քաղաքի մի դռնիցն ելել էին և կարծել թէ ամեն ինչ վերջացել էր—ահա միւս, Նոր Դռնից, գերմանացիներ ներս էին յարձակւել։

Ազգային այդ պատմող պահակների գնդապետներից մէկն էր, որ մօտեցաւ մեր հրամանատարին, բռնեց նրա ձիու սանձից ու ասաց.

—Նանսի՞ էք գնում, հրամանատա՛ր… Մի՛ գնաք. զինւորական և քաղաքային վարչութիններն այլ ևս հաւատ չեն ընծայում մեզ և ձեզ—քաղաքային պահակներիդ… Շնե՛ր են այդ վարչութիւնները. մի՛ գնաք, ծուղակի մէջ կընկնէք։

Դրեթէ կատաղութիւնից փրփրած էր խօսում ծեր գնդապետը։

—Գնդապե՛տ. պատասխանեց նրան մեր հրամանատարը—իմ զինւորներն ու ես միայն մի բան գիտենք—այն է մեր պարտքը։

—Լաւ ուրեմն. ասաց ծերունին—Նախազգուշացրի ձեզ, այժմ գնացէք և արէք ինչ կուզէք։

Եւ որովհետև մեզնից շատերը դեռ չէին հասել, հրաման ստացանք, քիչ աւելի երկար հանգստանալու։ Շատ հետաքրքիրներ բարձրացել էին զանգակատան գլխին, դիտակներով նայում էին կռւի կողմը, յետոյ ցած իջնում, վազում մեր կողքովը ու գոչում.

—Սէն-Պիէր արւարձանումն է կռիւը… Ստէնսիլեան դռների ետևից ծուխ է երևում…

Եւ կամ դրա նման այլ նոր տեղեկութիւններ։

Կէս ժամից յետոյ հասան մերոնք և ճանապարհ ընկանք դէպի Նանսի։ Շուտով սկսեցինք հրացանաձգութեան ձայներ լսել։

Ժամը 6-ի մօտերը սարսափելի դարձաւ այդ, թէև թնդանօթաձգութիւնը դադարեց։

Արդէն որոշ տեսնում էինք քաղաքը, երբ մեր կողքով անցաւ քաղաքից խուսափող մարդկանց առաջին խումբը։ Որպիսի՜ խումբ...

Մերկ, գրեթէ առանց շապկի, անգլխարկ, բոբիկ և բզիկ—բզիկ շորերով մի ամբոխ, որ սոսկումը կրծքներին՝ վազում—ցրւում էին դաշտերի մէջ՝ առանց ետ նայելու։

Քիչ աւելի հեռու, ճանապարհի վրայ ընկած տեսանք 3—4 վիրաւորներ՝ արիւնոտ կրծքով, ջարդւած ոտներով։ Նայում էին մեզ առանց խօսք ասելու։ Կամ չէին տեսնում և կամ թշնամիների տեղ դնում։

Այդ րոպէից սկսած, հրացանաձգութիւնը, որ միայն աջ կողմից էր, սկսեց լսել ամբողջ քաղաքից։ Յետոյ իմացանք, որ այդ իսկ րոպէին Շատօ-Վիէօի զօրքն ու ժողովուրդը սկսել էին փախչել և նրանց անխնայ կոտորել էին։

Մտնելով մի երկար փողոց, որ եզերւած էր այժմ բոլորովին փակ և խուլ բարձր տներով, տեսանք թէ ինչպէս մի խումբ մարդիկ փախչում էին դէպի մեր կողմը, իսկ նրանց ետևից ընկած հունգարացի ձիաւորներ (hussards) աջ ու ձախ կոտորում—սպանում էին առանց խնայելու... Ձիերը ծառանում էին, սրերը ելնում և իջնում, սոսկալի ճիչ ու աղաղակ յաջորդում միմեանց... այնպիսի՜ ճիչեր, որ մարդ փշաքաղւում էր, սարսափում...

Եւ սակայն այդ կոտորողները չէ՞ որ կարող էին դառնալ, ընկնել իրենց հալածող աւազակների վրայ, բռնել հէնց նրանց ոտներից, ցած նետել, տրորել մկների նման...

Բայց ո՜հ, կոտորւում էին առանց իսկ դիմադրելու։ Վախը որքա՜ն տխմարացնում է մարդու...

Հրամանատարը գունատ՝ հրամայեց մեզ դէպի ձախ ծռւել, թոյլ տալ փախչողներին անցնելու, յետոյ, վարպետ Ժանն ու Լէտիւմիէն սրերը դուրս քաշեցին ու գոռացին մեզ.

—Պատրաստ...

Ամենքս մի մի փամփուշտ դրինք հրացաններիս մէջ և սպասեցինք։

Ամբոխը դարձեալ փախչում էր դէպի մեր կողմը և հօտի նման տակն ու վրայ, իրար կոխոտելով՝ անցնում մեր առջևից, կարծես հալածւած մի խումբ գայլերից։

Հուսարները հեռուից տեսնելով մեր ուժերը, արագութեամբ ձիերի գլուխը շուռ տւին։ Ըստ երևոյթին զգացին, որ դիմադրութեան էին հանդիպելու. վախեցան, որ կը կրակենք։ Դարձան, ծռւեցին դէպի առաջին նեղ փողոցն ու անհետացան։

Մի րոպէից յետոյ ընդարձակ փողոցն ամայացաւ։ Փախըստականները թագնւեցին. գետնի վրայ փռւած մնացին մի քանիսը՝ դիակ դարձած։ Եւ քաղաքն ամբողջ թնդում էր հրացանաձգութեան, մանաւանդ ահազանգերի (Tocsin, Набатъ) ձայնից, որ հընչում էր կոտորածի մէջ։

Աստուա՜ծ իմ, Աստուած, որպիսի՜ տխուր մտածութիւններ են գալիս, երբ յիշում եմ այդ սոսկումները. որքա՜ն մարդ ցաւում է այն թշւառ արարածների վրայ, որոնց կոտորում էին միմիայն նրա համար, որ համարձակւել էին արդարադատութիւն խնդրել...

Հէնց որ փողոցը դատարկւեց, մեր հրամանատարը պատւիրեց առաջ գնալ։

Հեռւում, երկնքի վրայ մեր առաջն սկսեց գծւել հետզհետէ Ս. Նիկոլա դռան մեծ գորշ նաւակուսին, երբ յանկարծ լսեց մեր դիմացից՝ գերմաներէն լեզւով.

—Ver da?

Գերմանացիք տէր էին դարձել Նանսիում։

Ակներև էր, որ Բուլիյէ զօրապետը գերմանացիներ էր ներս բերել հետը։ Ֆրանսիացիք կարող էին չըհնազանդւել և չը կամենալ կոտորել ժողովրդին, մինչ նա կամենում էր այնպէս մի դաս տալ ապստամբներին, որ յաւիտեան չը մոռանային։

Մեր հրամանատարի սպիտակ բեխերը բարկութիւնից ցըցւեցին։ Նա ինքը մենակ առաջ գնաց և գերմանական կոչին ֆրանսերէնով պատասխանեց.

—Ֆրանսիա... Ֆալցբուրգի քաղաքային պահակներ...

Մի քանի րոպէից յետոյ, կապոյտ հագուստով մի զինւոր առաջ եկաւ իրենց սպաներից մէկի հետ, տեղեկութիւն առնելու համար։ Ակներև էր, հաւատ չէին ընծայում մեզ, որովհետև պէտք եղաւ երկար սպասել, մինչև որ կարգադրութիւն եկաւ։ Սաստիկ յոգնած էինք։ Ժամը 9-ին վերջապէս երևաց մի տեղակալ սպայ և յայտնեց որ կարող էինք ներս գնալ և անցնել գերմանացի պահակների տեղը։

Տասնեհինգ հոգի էին այդ սրիկաները։ Շատ ուրախացան, որ կարող էին իրենց գործը մեզ յանձնել ու քաղաք մտնել՝ կողոպտող ընկերներին միանալու։

Այդտեղ, Ս. Նիկոլայի դռների մօտ գիշերեցինք, պայուսակներս գլխի տակ դրած և մերկ գետնի վրայ փռւած։ Վեր ընկանք միմեանց կողքի։ Դուռը պատնէշւած էր մեծ սայլերով և երկու թնդանօթներով. մայթն իսկ քանդած հանած էր։ Ժամ առ ժամ փոխւող պահակ—հերթապահները շրջում էին քաղաքում և ար-

ւարձանում: Այդքանն եմ միայն յիշում, որովհետև ոյժից ընկած բոլորովին, քնեցի: Իմ հերթը պահակութեան, բարեբախտաբար լուսաբացին սկսեց:

Ասենք գիշերը մի քանի անգամ վեր թռայ քնից, լսելով ինչ որ աղաղակներ և կռւի ձայն: Պահակներն էին, որ ձերբակալւածների էին բերում և ներս կոխում պահակատուն, ուր շունչ առնելու տեղ չը կար: Այնտեղից էր որ աղաղակում էին թշւառները...

Վատ երազի, մղձաւանջի պէս յիշում եմ այդ ամենը: Ի՞նչ արած, երբ քունը յաղթահարում է, մարդ այլևս ոչ տեսնում է, ոչ էլ լսում: Գիտեմ միայն, որ այդ գիշեր հարիւրաւոր դժբախտներ կոտորւեցին և որ ազնուականների վայրենութիւնը իր կատաղութեան ամբողջ թոյնը թափեց ժողովրդի գլխին: Մանրամասնութիւնները սակայն պատմել չեմ կարող. ինքս անձամբ չեմ տեսել:

Միայն հետևեալ, 1790 թիւ սեպտեմբերի 1-ի օրւայ մասին ամեն ինչ կարող եմ պատմել:

Առաւօտ շուտով ոտքի վրայ էի և ինչ որ տեսայ, չը նայելով այսքան տարի է անցել, այսօրւայ նման յիշում եմ ու աչքիս առջևն է:

Ժամը 4-ին թմրկահարութիւնը մեզ զարթեցրեց: Արմունկիս վրայ ելած, դեռ կիսաքուն, վաղորդեան մեղմ լոյսի մէջ, ինձնից տասը քայլ հեռու կամարի տակ, նկատեցի մի գերմանացի սպայի՝ հրամանատար Ժէրարի հետ խօսելիս: Նրանց ետևում կանգնած կար քաղաքային կամաւորների մի սպայ, պաշտօնական գօտին մէջքին և ձեռքերը ճերմակ բաճկոնի գրպանում: Նրանք դարձել էին դէպի մութ դռան խորքը, ուր մենք մի առ մի ելնում էինք, թօթափում մեր վրայի փոշին, վերցնում հրացանը և կոճկում պայուսակներս:

Թմրկահարութիւնից յետոյ, զինուորակոչը հնչեց: Մեր ընկերներից մի քանիսը գիշերն էին հասել, այնպէս որ այժմ 125—130 հոգի էինք եղել, առանց հաշւելու պահակութիւն անողներին:

Զինուորակոչը երբ վերջացաւ, հրամանատարը ասաց մեզ.

—Ընկերներ, դուք այժմ ձերբակալւածներ պիտի տանէք դէպի քաղաքային բանտը:

Նոյն միջոցին երեք սայլ մօտ եկաւ, մէջը խոտ լցրած: Մի առ մի պահականոցից դուրս քաշ տւին երէկ երեկոյ այնտեղ խծկած թշւառներին: Որքա՜ն շատ էին... անհաւատալի բան էր. կին, զինւոր, ժողովրդեան մարդիկ, բուրժուաներ... և այնքան,

որ փողոցը լցւեց: Եւ դժգոյն, գզգզւած հագուստով ու մազերով. այնպէս, որ սրտներս էր կտրտւում:

Շատերը արիւնոտ էին ու քայլել չէին կարողանում. հարկ եղաւ թևերից բռնել ու տանել: Օդի մէջ ելնելով, խեղճերը առաջ էին նետւում, խեղդւելու մօտ մարդու նման բերանները բաց անում, ջուր խնդրում...

Բոլորին լցրին սայլերի մէջ և մօտ քսան րոպէից յետոյ, վիրաւորների սայլը առաջից, շրջապատւած մեր գունդով՝ շարժւեցինք:

Լուռ և տխուր՝ քայլում էինք խուլ և ամայի փողոցներից: Տները բոլորը փակւած էին բանտերի նման. տեղ-տեղ կողոպտւած, դռներն ու լուսամուտները ջարդւած՝ կախ ընկած...

Վարպետ Ժանն էր մեզ առաջնորդող սպան: Երբ տեսնում էր այդ աւերածութիւնները, մէկ-մէկ ինձ էր նայում և լաւ նկատում էի, թէ ինչպիսի սարսափ կար նկարւած աչքերի մէջ... Սակայն Բույիլէն էր հրամանատարը. հարկ էր հնազանդւել:

Մեր տարած թշւառներից ոմանք առանց վերարկուի, ուրիշները անշապիկ, թևն ու գլուխը փաթթած, աչքերը մոլորուն, պղտոր՝ նայում էին առաջները և յաճախ լսւում էին նրանց սրտապատառ հառաչները: Ով գիտէ ինչպիսի՜ զոհեր էին թողել ուինների առաջ—կին, մայր, որդի... Ու հառաչում էին ընդհատ, աղեխարշ կերպով...

Եւ այդ բոլորի մէջ երևակայեցէք իմ սարսափը, երբ ականջիս դիպաւ, որ եղբայրս Նիկոլան էլ Նանսիումն էր...

Յիշեցի իսկոյն նրա նամակը և մտածեցի որ թշւառականը անշուշտ նոյնպէս աջ ու ահեակ կոտորածներ արած պիտի լինէր յանուն կարգապահութեան. այնպէս, ինչպէս Փարիզում արել էր:

Երանի՜ չը հանդիպէի նրան: Սակայն համբերել չը կարողացայ և երբ բանդարկեալներին տեղաւորել էինք, մօտ գնացի առաջին հանդիպած սպային և հարցրի նրան թէ արդեօք ճանաչո՞ւմ էր Նիկոլա Բաստիանին, որ ձիաւոր զինուոր էր գերմանական-թագաւորական 3-րդ զօրագնդի մէջ:

Սպան ինձ նայեց և երբ իմացաւ որ եղբայրս էր նա, ասաց որ շատ լաւ ճանաչում էր, որ եթէ տեսնել էի ուզում, պիտի մինչև Նոր Դուռը գնայի և զօրագնդի իջած տեղը հարցնէի:

Վարպետ Ժանը դժգոհ եղաւ իմանալով, որ ուզում էի գնալ Նիկոլային տեսնելու:

—Որպիսի՜ դժբախտութիւն է մեզ համար, որ եկել ենք միանալու այսպիսի աւազակների հետ, ասաց նա—այժմ պիտի մտածեն որ քաղաքացի պահակները նեցուկ են դարձել գերմանա-

ցիներին՝ հայրենասէրների դէմ... ու պիտի տեսնես թէ ինչպէս պիտի հայհոյեն մեզ լրագիրներում... Ա՜հ, որպիսի՜ դժբախտութիւն է այս...

Սակայն չարգելեց ինձ տեսակցելու եղբօրս հետ, միայն ազդարարեց որ չ՚ուշանամ, որովհետև երկար չը պիտի մնայինք Նանսի և որ այսքան մնալն էլ դեռ շատ աւելորդ էր մեզ։

Իսկոյն հրացանն ուսս առի և մեկնեցի դէպի Նոր դուռը։

Իսկ այժմ, երբ պատմեմ ձեզ այս թաղի մէջ տեղի ունեցած կոտորածի սարսափների մասին—գուցէ չը հաւատաք...

Ո՛չ, անշուշտ կոտորողները մարդիկ չէին եղել, այլ վայրենի գազաններ... Միմիայն բորենին ու զզւելի գիշատիչները կարող էին այդպիսի անգթութիւններ ու աւերածութիւն գործել...

Անշուշտ ժողովուրդն ու զւիցերացիք էլ պաշտպանւած պէտի լինէին շատ լաւ իրենց դիրքերում, որովհետև ամեն ինչ այդ թաղում կոտրուած էր, քարուքանդ արած ու գզգզւած. դուռ, լուսամուտ, ջրի խողովակ...

Փողոցը լի էր աղիւսի և կղմինդրի դէզերով՝ ինչպէս հրդեհից յետոյ լինում է. յարդեայ ներքնակներ, որոնք նետել էին փողոց վիրաւորների համար, ճմլւած էին ու ծծւած արիւնով. ձիերի դիակներ դեռ փռւած գետին՝ ցնցւում էին մահամերձ։ Երկու թէ երեք անգամ, անցնելով կիսաւեր տների մօտով, լսեցի սրտապատառ աղաղակներ.... Անբախտ զւեցերացիք էին, որոնք փողոցային կռւից յետոյ ապաստանել էին այդ տեղերում և այժմ գտել—խողխողում էին նրանց անգթօրէն, որովհետև Բուլէն հրամայել էր գերմանացիներին՝ կոտորելու Շոտօ-Վիօի զօրքերից մինչև յետինը։

Օ՛հ, անիծւի՛ք դուք, չարագործ սրիկաներ, որ ընդունակ եղաք այդպիսի ցածութիւնների. անիծեա՜լ լինիք. Թող Աստւած վրէժխնդիր լինի դժբախտ զոհերի համար...

Քայլում էի և զգում, որ զայրոյթը համակում էր ինձ, գրաւում ամբողջովին։

Յանկարծ, մի ինչ որ աւելի լայն փողոցում դէմ առ դէմ եկայ մայթի քարերից կազմած ամբողջ բլուրի, որի ետևումն էր Նոր-Դուռը, ծակծկւած գնդակներով. այնտեղ սայլակների մի մեծ շարք տեսայ, որոնք լիքն էին սպանւածների դիակներով՝ բերնէբերան...

Կանայք, տղամարդիկ և... ինչ արած, պէտք է ասել, որովհետև իսկապէս այդպէս էլ էր—մանուկներ, փոքրիկ թշւառ մանուկներ՝ դիակ դարձած, միմեանց վրայ լցրած, կուտած...

Ժողովուրդը կոտրւած իրերն ու քարերը դէն էր անում

ճանապարհից, որպէս զի այդ բոլոր դիակները կարելի լինէր տանել թաղելու։ Հուսարներ հսկում էին գործի վրայ և կանայք շրջապատած, անվերջ կերպով ճչում էին, աղաղակում, ուզում էին վերջին անգամ տեսնել իրենց սիրելիների դիակները... բայց շուտ էր և անհնար երկար թողնել դիակները անթաղ...

Փողոցի երկարութեամբ, բուրժուաների տներում բնակեցրած Թագաւորական—Գերմանական զինւորները դիտում էին լուսամուտներից. մի քանիսը սայլերի մօտ էին, հուսարներին օգնելու, եթէ ժողովուրդը խռնւում էր։

Իսկ մի պառաւ, որին դրացիները զոռով հեռացնել էին ուզում այդտեղից—աղաղակում էր.

—Թող ինձ սպանեն...թող այդ աւազակները ինձ էլ սպանեն, քանի որ որդուս սպանեցին... Թողէք... Աւազակներ էք ամենքըդ!..

Սիրտս կտրւում էր. զղջացի որ եկել էի։ Այնուամենայնիւ ուժերս ժողովեցի և առաջին հանդիպածին հարցրի Բաստիանի բնակարանը։ Ինձ իսկոյն ցոյց տւին դիմացի պանդոկի լուսամուտները, ուր, չը նայելով նշանազգեստին, ճանաչեցի Նիկօլային, որ ծխամորճը բերնին ու անվրդով կանգնած, դիտում էր տեսարանը։

Անցայ փողոցը, հասայ պանդոկի լուսամուտի առաջ և ցածից կանչեցի.

--Նիկօլա...

Կռացաւ նայեց և արագութեամբ ցած իջաւ աղաղակելով.

—Ա՜հ, այդ դո՞ւ ես... Ուրեմն դո՞ւք էլ էք եկել Ֆալցբուրգից... Հիանալի է... ուրախ եմ...

Եւ գրկեց ինձ հաճոյքով, յետոյ թև—թևի տւած վեր ելանք ու մտանք մի մեծ սրահ, ուր իր վաշտի ընկերներից 5—6 զինւոր նստած մի սեղանի շուրջ՝ խմում էին և մի քանիսներն էլ լուսամուտից նայում։

—Հէ, հէ, աղաղակեց նրանց Նիկօլան—այստեղ, այս կըտրիճին նայէք մէկ. եղբայրս է... տեսնո՞ւմ էք կուրծքի լայնութիւնը, թիկունքը...

Փորձեց երկու ձեռքովը ցնցել ինձ ու շարժել տեղիցս. միւսները ծիծաղում էին։ Բնականաբար լաւ զգացի ինձ. բոլոր այտեղ եղածները լաւ տղայք էին երևում։ Տւին ինձ խմելու բան, մինչ Նիկօլան անդադար կրկնում էր.

—Ա՛հ, եթէ երէկ եկած լինէիր... Երէկ էր պիտի գալ ձեզ, ժամը 5-ին, որ տեսնէի՜ր եղածը... Ա՜յ թէ սուր շարժեցինք հա՜... թևերնիս յոգնեց կտրտելով...

Ապա կռացաւ ականջիս ու յայտնեց, որ իրենց գնդի ենթասպան սպանուել է և որ գնդապետ Մէնդէլը ուզում է իրեն նրա տեղը նշանակել, որովհետև գոհ է նրա վարմունքներից։

Եւ երբ ընկերները գնացին, նոր միայն յիշեց ծնողներին։

—Ծերունիները առո՞ղջ են միշտ. հարցրեց նա։

Պատասխանեցի, որ ողջ առողջ էին բոլորը, որ այժմ ես աշխատում էի ամսական մօտ 30 լիվր և ծնողներիս չէի թողնում նեղութիւն քաշելու։

Ուրախացաւ լսելով այդ. ձեռքս սեղմեց ու ասաց.

—Դու պատուական տղայ ես, Միշէլ... այո՛, չը պէտք է նեղութեան մէջ թողնել խեղճ ծերունիներին... վաղուց ուզո՛ւմ էի մէկ տեսութեան գալ նրանց, բայց երբ մտաբերում եմ լօբին, ոսպը, այլ և այն մութ որջը, ուր մենք այնքան տանջուել ենք—ետ կացայ մտքիցս ամեն անգամ։ Ո՛չ, գերմանական գնդի զինուորը իր պատիւը պիտի պահպանի.. Դու, ճշմարիտ է, ինձնից աւելի ես փող աշխատում, սակայն ա՛յլ բան է ունենալ սուր կողքին և ծառայել Թագաւորին... Մարդ իր պատիւը պիտի ճանաչի... Իսկ այդպիսի ծերունիներ, իրենց կորուած ծնկներո՛վ... Հասկանում ես, չէ՞, Միշէլ, մե՛ր ձիաւոր զինուորի սազական բան չէ այդ...

—Այո՛, այո՛. ասացի ես—հասկանում եմ... բայց այժմ նրանք սկի էլ կորուած ու ցնցոտի չե՛ն... Ռօբէնի պարտքը վճարել եմ, հայրիկն այլևս ձրի աշխատելու պէտք չունի, մայրիկը երկու այծի տէր է, որ կաթ ու կարագ են տալիս. ունինք հաւեր, շատ հաւկիթ... Մատիլդին օրականով բանում է վարպետ Ժանի մօտ, աշխատածիցը քիչ ետ է ձգում, փոքրիկ Էտիէնը գիտէ արդէն կարդալ-գրել. ես եմ սովորեցրել երեկոյեանները... Գիւղը այժմ շա՛տ լաւացել է. մեր խրճիթն էլ նորոգել եմ տուել, նոր սանդուխք շինել, վերի յարկի տախտակամածը նոր խփել, երկու մահճակալ առել, անկողին, բարձեր...

—Ա՛հ, գոչեց Նիկօլան—քանի որ այժմ այդպէս է և ուտելու բան էլ կայ տան մէջ—կը գամ ուրեմն... կը գամ տեսնելու խեղճ ծերունիներիս... Ութ օրւայ արձակուրդ կը վերցնեմ և կը գամ. յայտնիր այդ նրանց, Միշէլ, ասա որ կը գամ...

Լաւ սիրտ ունէր, բայց ծտի չափ խելք չը կար գլխում. խելքը-միտքը իր ուսադիրներին էր, սրի հարուածների և թնդանօթների կողմը։

Այժմ այլևս դժւար է Ֆրանսիայում գտնել այդպիսի ողորմելի ուղեղներ. կրթութիւնը և ուսումը ամեն սահմանափակութիւն ոչնչացրել է։ Իսկ այն ժամանակ, դժբախտաբար շատ կային, ո-

րովհետև շնորհիւ ազնուականների և կղերի ջանքերի, ժողովուրդը գրաստի պէս աշխատելով միայն, ո՛չ թէ կրթւում էր, այլ կըթւում և մնում խորին տգիտութեան մէջ։

Եւ երբ քիչ յետոյ սկսեցի խօսել եղած կոտորածի մասին, ծխամորճը բերնին, արմունկները սեղանին՝ լսեց ինձ, յետոյ մէկէն, թանձր ծուխ դուրս ժայթքելով բերնից՝ աղաղակեց.

—Փա՛հ, փա՛հ... պօլիտիկա է... ձեր ի՞նչ բանն է հասկանալ պօլիտիկան. մանաւանդ դո՛ւք—Բարաքցիներդ...

—Պօլիտիկա՜... ասացի ես—բայց չէ՞ որ այդ թշւառ զւիցերացիները իրենց փողերն են միայն պահանջում և ուրիշ ոչինչ։

—Իրենց փո՞ղը. ասաց նա ուսերը շարժելով—բա՛ն չունիս... Մէսար դը Կան գունդը չը ստացա՞ւ իր առնելիքը... Համայնք չէ՞ր որ Թագաւորական վաշտի իւրաքանչիւր անձին 3 ոսկի տւաւ, որպէսզի զինւորանոց մտնեն կուից առաջ... Այդ զւիցարացիք սրիկաներ էին. հայրենասէրների հետ էին միաբանել... Կոտորեցինք նրանց, որովհետև Բաստիլի առման ժամանակ, փոխանակ ժողովուրդի վրայ կրակելու, հրացանները օդի մէջ պարպեցին... Հասկանո՞ւմ ես, Միշէլ։

Եւ երբ ես բոլորովին ապշած նրա խօսքերից՝ լուռ մնացել էի, պահ մի շունչ առնելուց յետոյ՝ շարունակեց.

—Դեռ սա միայն սկիզբն է, այո՛... Պէտք է Թագաւորը իր իրաւունքները նորից ձեռք բերի... Պէտք է մի լաւ դաս տալ այդ շատախօս Ազգային Ժողովին... Այո՛, մի լաւ դաս... Բէֆիդ կաց, զօրապետ Բուլիէն իր ծրագիրն ունի... Այսօր—վաղը Փարիզի վրայ կը քայլենք և այդ ժամանակ... Թող ականջները լա՛ւ սրեն... Ապա ի՞նչ էիր կարծում...

Ծիծաղում էր նա այդ ասելիս, ցոյց տալով բեխերի տակից փայլուն ատամները։ Զաղ կտորի վրայ յարձակւող և որսը ապահովապէս ճանկերի մէջն ունեցող անասունի ուրախութիւնն էր գծւած դէմքի վրայ։

Զզւանքս էր գալիս։ Ու ինքն իրենս մտածում էի.

—Աստուած իմ, այս անասունը իմ եղբայրն է...

Մի րոպէ մտքովս անցաւ խօսել, հասկացնել նրան, բայց զգացի որ իզուր, բոլորովին իզուր էր. ոչինչ չէր հասկանալ և մինչև իսկ դեռ մի լաւ էլ կը բարկանար վրաս։ Դրա համար էլ մտածեցի գնալ այլևս։

—Դէհ Նիկօլա, ես ասացի ոտքի ելնելով—շատ կուզէի էլի խօսել հետդ, բայց ժամը $8^{1}/_{2}$-ին մեր գունդը Ֆայլցբուրգ պիտի վերադառնայ։

—Գնո՞ւմ ես ուրեմն։

—Այո՛, Նիկօլա, շատ բարև...

—Բայց ես կարծում էի թէ ինձ հետ կը ճաշես, ընկերներ կը գան այժմ... փող ունիմ... զօրապետ Բուլէն հրամայեց իւրաքանչիւրիս 12 ոսկի ընծայ տալ։

Ու գրպանն էր ծեծում աջ ձեռքովը։

—Չեմ կարող, Նիկօլա, զինուորակոչը կը հնչի և չը գնալը լաւ չի... ամենից առաջ՝ ծառայութեան գործը...

—Դէ լաւ ուրեմն, Միշէլ, ասաց նա—երթաս բարև և բարի ճանապարհ։

Յետոյ ջերմութեամբ համբուրուեցինք։

—Չը մոռանաս ծերունիներին յայտնել, որ այս օրերս սպայի պաշտօն կը ստանամ։

—Չեմ մոռանայ։

—Եւ որ կը գամ իրենց տեսնելու իմ ուսադիրներովս։

—Լաւ... կասեմ ամեն ինչ։

Ու դուրս ելայ՝ մտովին ասելով.

—Թշուառականը վատ սիրտ չունի, միայն յանուն կարգապահութեան (դիսցիպլին) չի խնայի քեզ կոտորելու։

Ս. Նիկօլայի դուռը հասնելիս, զինուորակոչը հնչեց։

—Ապա՛, հարցրեց ինձ վարպետ Ժանը—տեսա՞ր եղբօրդ։

—Այո՛, վարպետ Ժան։

Դէմքս զննելով, հասկացաւ մտածածս և այնուհետև այլևս ո՛չ մի խօսք չը խօսեցինք Նիկօլայի մասին։

Հազիւ ժամանակ ունեցայ մտնել դիմացի հացագործի մօտ և առնել քիչ հաց և պանիր ճանապարհի համար։ Քիչ յետոյ դուրս եկանք քաղաքից դէպի Ցայլցբուրգ։

Ճանապարհին մեր տխրութիւնն և վատ տրամադրութիւնը անցաւ, որովհետև ականատես համոզուեցինք, թէ որքա՜ն անազնիւ մարդիկ կան աշխարհումս ամեն տեղ. դրանք միշտ պատրաստ են ուժեղի կողմն անցնել, հրճուանքով յաղթութիւն գոռալ, ճառել անմտութիւններ, խօսել կարգ ու կանոնի, արդարութեան մասին, կառավարութեան թև ու թիկունք դառնալ ճնշելու թշուառ ժողովրդին, յանուն իբր թէ օրինապահութեան և այլն և այլն...Ուրիշ խօսքով, նրանց սկզբունքը այս է—«Ձեզ կողմնակից ենք, որովհետև ամենաուժեղը դուք էք. իսկ եթէ ամենաթոյլը դառնաք, ամենից առաջ մենք կը ճզմենք ձեզ»...

Ամբողջ ճանապարհին այդ տեսակ մարդկանց միայն հանդիպեցինք։ Այդ քծնողներն իրենց կարճ ոտներով ու հաստ փորերով, իրենց պետական նշանազգեստներով և լիրբ դէմքերով, երբ տեսնում էին մեզ՝ կանչում էին.

—Կեցցէ զօրապետ Բուլիէ, կեցցէ Գեյման—թագաւորական գունդը...

Եւ օռնում էին խռպոտելու չափ։

Մի գիւղում իսկ, հանդիպեցին մեզ բարեգալուստի ճառով. իրենց շահապը ցցեց հասակն ու սկսեց, սակայն մեր հրամանատար Ժէրարը դեռ հեռուից իսկ գոռաց մօտեցող պատգամաւորներին.

—Ճանապարհ տուէք, սատանան տանի, հեռու կորէք...

Ու անցանք, մինչ խոնարհաբար բարևում էին մեզ և մենք զզուանքով նայում էինք քծնողներին...

Նոյն օրը երեկոյեան Բլամօն իջանք և հետևեալ օրը մեր գիւղը հասանք։

Վատ լուրերը մեզնից աւելի շուտ էին հասել։

Ամբողջ երկիրը յուզման մէջ էր. ամեն ոք մտածում էր, որ շուտով Աւստրիացիները Լօրէն պիտի մտնէին ու տիրէին։ Վատն այն է, որ ոչ ոք չէր համարձակւում բարձր ասել այդ։ Մեր բարի Թագաւորն էլ, այլ և Ազգային Ժողովի կաշառուած անդամները, վատաբար շնորհակալութեան քուէ շահել տուին զօրապետ Բուիյլէի համար։

Սակայն փառք Աստուծոյ, դեռ Արտուայի կոմսն ու իր բարեկամները չէին հասել իրենց նպատակին. դեռ շա՜տ ժամանակ պէտք էր, որ կարողանային նրանք նորից Փարիզի երեսը տեսնել իրենց բոլոր օրէնքներովն ու տխմարութիւններովը։

Յեղափոխութիւնը սկսում էր այժմ ուրիշ, աւելի զօրեղ արմատներ ձգել Ֆրանսիայի հողի մէջ. արմատներ, որոնց աշխարհիս ազնուականներն ու կապուցինները միասին առած՝ չը պիտի կարողանային այլևս խլել կամ կտրտել և որոնք յաւիտենական ոյժի և պատուի տէր պիտ դարձնէր մեր երկրին։

III

Բարաքները վերադառնալուց յետոյ, օրէցօր յուզումն ու անհանգստութիւնը մեծանում էր։ Վարպետ Ժանը, Լէտումիէն, Կըլօդ Հիւրէն և կրօնաւորների կալուածները աճուրդից գնողներն ամենքը, սկսեցին վախ զգալ թէ իրենց հետ էլ այնպէս պիտի վարուէին, ինչպէս արին Շատօ-Վիէօի զօրքերի հետ. այսինքն կը խլէին կալուածներն ու փողերն էլ չէին տալ։

Մինչև այժմ խոհեմ մնացող այդ մարդիկ, դարձան յեղափոխութեան ամենաթունդ պաշտպանները։

Նրանց անւանում էին գործօն (actif) քաղաքացիներ, որովհետև վճարում էին կալւածական, շարժական և անուղղակի տուրքեր, այլ և երեքօրեայ ձրի աշխատութեան փոխարէն հարկ։

Ամենքը գրեթէ ընտանիքի տէր մարդիկ էին. նրանք միայն իրաւունք ունէին պատգամաւորների, քաղաքային վարչութեան անդամների, դատաւորների, երէցների և նոյն իսկ եպիսկոպոսների ընտրութեանը մասնակցել։

Իսկ մենք—միւսներս, որ միմիայն մեր բազուկն ու արիւնն ունէինք նւիրելու հայրենիքի ծառայութեան համար—կոչւում էինք կրաւորական (passif) քաղաքացիներ և ձայնի ոչ մի իրաւունք չունէինք ո և է ընտրութեան մէջ։

Ազգային ժողովը փոխանակ քաղաքացիներին արդարութեամբ հաւասար իրաւունքների տէր դարձնելու, հին թագաւորների նման դասակարգի էր բաժանել ժողովրդին ու մէկ մէկու դիմաց կանգնեցրել, որպէս զի ամենքին էլ կարող լինէր լուծի տակ պահած ունենալ։

Մեր ամբողջ 60 տարւայ դժբախտութիւնները հէնց այդ խըտրութիւններից առաջ եկան. սակայն դեռ սկզբներում մարդիկ չէին զգում մի այդպիսի որոշման չարիքը և մենք բոլորս—հարուստ կամ աղքատ՝ կողմնակից էինք յեղափոխութեան, որովհետև իրաւազուրկները յոյս ունէին մի օր իրաւունքների տէր դառնալու՝ քաջութեամբ, աշխատանքով ու խնայողութիւնով։

Այդ ժամանակներում պէտք էր տեսնել, թէ ինչպէս գործօն կոչւած քաղաքացիները լաւ էին վարւում կրաւորական քաղաքացիների հետ։ Վարպետ Ժանն օրինակ հէնց, ուսս էր ծեծում և «ազատութեան լուրջ պաշտպան» անւանում ինձ։ Իսկ կղերի կալւածներ ձեռք բերողները սիրալիր բարևում էին խեղճ գիւղացիներին, սեղմում նրանց ձեռքն ու ասում.

—Մենք բոլորս համամիտ ենք և միմեանց պիտի թև ու թիկունք դառնանք... Այդ սրիկայ ազնւականներն ու եպիսկոպոսները մեզ կողոպտել, նախկին իրաւունքներնին դարձեալ ձեռք բերել են ուզում... բայց թող զգոյշ կենան. քաղաքացիք—ամենքը միահամուռ պատրաստ են մեռնել հայրենիքի համար...

Եւ այսպէս ինչե՜ր ու ինչե՜ր, որպիսի՜ քաղցր-մեղցր խօսքեր...

Ամեն երեկոյ պանդոկում միմիայն այդպիսի խօսակցութիւններ էին տեղի ունենում։ Վարպետ Ժանը մտերմանում էր ամենքի հետ, պարտքով խմիչք էր տալիս արբեցողներին ու քարետախտակի վրայ 5—6 շիշ էր նշանակում, լաւ գիտենալով որ կոպէկ էլ չի ստանալ նրանցից։

Ահա տեսնում էք թէ ինչպէս ո և է վատ օրէնք, կարող է

ցած և քծնող միջոցների դիմելու ստիպել մարդկանց՝ կողմնակիցներ շահելու համար։ Որքա՜ն պատերազմներ շահւել են շնորհիւ զինւորների միայն, չը նայելով հրամանատարների սխալներին. որպիսի՜ բանիմացութիւն է հարկաւոր ամբոխին, որ նա կարողանայ ուղղել օրէնքի մեծ սխալները...

Եւ երբ վարպետ Ժանը խօսում էր իրենց—բուրժուաներին պաշտպանելու մասին, շատ մարդ սկի՛ էլ չէր քաշւում այսպէս ասելու նրան.

—Լա՛ւ, վարպետ Ժա՛ն, լա՛ւ. մենք պահպանելու ոչինչ չունենք, մենք ոչինչ ենք, ձայնի իրաւունք, նոյն իսկ մեզ վերաբերեալ խնդիրներում ձայն չունինք... բուրժուաները անում են ինչ ուզում են. ամեն ինչ իրենց համար միայն վերցրին... Թող ուրեմն ամեն ոք իր ունեցածն ինքը միայն պաշտպանի, եթէ կարող է...

Բայց ուրիշներն իսկոյն վարպետ Ժանի կողմն էին անցնում և կանչում.

—Ո՛չ, վարպետը իրաւունք ունի, մենք ամենքս եղբայրներ ենք, պիտի պաշտպանենք ձեռք բերած իրաւունքները... Ապա՛, մօրքուր Կատերին, մի շիշ էլ գինի... լաւ հայրենասէրների կենացը!...

Ու չէին համարձակւում մերժելու. այնպիսի ժամանակ էր, որ ամենքը վախենում էին, որովհետև Լաֆայէտը շնորհակալութիւն էր քւէարկել տւել իր ազգական Բույիյէի համար. շնորհակալութիւն՝ որ նա կոտորած առաջացրեց Նանսիում։ Գահի բարեկամներն էլ յայտարարում էին, թէ Նորին Վեհափառութիւն Լուի XVI պտոյտի էր ելնելու պետութեան մէջ, գաւառներում կարգ ու կանոնը վերահաստատելու համար։

Բնականաբար վանականներն ու կապուցինները այդպիսի ժամանակ գլուխները բարձրացնում էին, վազվզում այս—այն կողմ, քարոզում, բանադրում, անիծում։ Ամեն խրճիթի առաջ կարելի էր տեսնել նրանցից՝ կանանց համոզելիս, որ դիմադրեն իրենց ամուսիններին, Աստծուն պաշտպան կանգնեն, և որ բարի Աստւածը միմիայն վանքերի, աբբայարանների, նրանց պատկանող լճերի, անտառների կողմնակիցն է... Եւ այդպիսով ճգնում էին երկպառակութիւն սերմանել նոյն իսկ մարդ ու կնոջ, ընտանիքի անդամների մէջ։

Տանը չէի յայտնել ես, որ Նիկօլային տեսնելու էի գնացել։ Պէտք պիտի լինէր մանրամասնօրէն պատմելու նրա վերաբերմունքը կոտորածի մէջ, նրա գաղափարները ազնւականութեան, կարգապահութեան և այլ այդպիսի բաների մասին։ Հայրս պիտի

տխրէր, մինչդեռ գիտէի որ մայրս Նիկոլային պիտի պաշտպանէր:

Թշւառ պառաւը հէնց որ ինձ տեսնում էր, միշտ գոռում էր.

—Ոսկոռներդ ես փոխեցնելու վարպետ Ժանի համար. հարուածները դու պիտի ստանաս, իսկ գողացած կալուածները նրան է մնալու, եթէ միայն քեզ ու Շօվէլին միասին չը կախեն. հաւատքիդ դէմ ես գործում և պիտի անիծւես աւազակների շնորհիւ:

Իսկոյն երևում էր որ հայր Բենեդիկտի տւած դասերը լաւ էր սերտել:

Այդ դեռ ոչինչ: Դարբնոցումն անգամ հանգստութիւն չէի ունենում: Վալէնտինը, որ չէր համարձակւում վարպետ Ժանի առաջ ցոյց տալ իր ուրախութիւնը եղածների համար—չէր դադարում կրկնելուց.

—Ազնուականները Բաստիլլի ոխը հանեցին վերջապէս. վաղ թէ ուշ՝ այդպէս էր լինելու, որովհետև արդարութիւնը այդպէս էր պահանջում. ազնուականը չը պիտի խառնւի մեզ նման թշւառականների հետ, այո: Պիտի տեսնես, Միշէլ, որ այդ Ազգային Ժողովը լուծւելու է, վռնտւելու: Ն. Վեհափառութիւնը ամեն ինչ կը ոչնչացնի և ամեն ոք կը պատժւի իր յանցանքների համեմատ: Իսկ ինչ վերաբերում է վարպետ Ժանին—թող պարապ տայ նա այս ու այն արբեցողին. երբ Նորին Վեհափառութեան բանակները կը գան, ամեն ինչ կը մաքրւի, կալւածները կը վերադարձւեն սուրբ եկեղեցուն և վնասները կը տուժեն չարագործները իրենց անձովը և ունեցածովը: Աստւած տայ միայն, որ թողնեն մեզ մեր արհեստը շարունակելու. շատ են մեր մեղքերը, չափազանց արդէն անարդար եղանք. Աստւած տայ ներողամիտ լինեն անցեալի մասին, որովհետև իսկապէս արժանի ենք մենք կախաղանի՝ մեր քէներովն ու ընտրութիւններովը...

Այսպէս էր տրամաբանում այդ անասունը: Եթէ տխմար չը լինէր այդքան, գուցէ յաճախ ծեծկւէինք: Բայց նրան լսում էի այնպիսի ծիծաղով, ինչպէս մարդ լսում է իշի զռոցը:

Բանն այն է, որ ամեն գիւղում, իւրաքանչիւր տան մէջ, կրկնւում էին այդպիսի տեսարաններ: Մտածում եմ, որ եթէ Բույլէն իր հարւածը Փարիզումն անէր, գուցէ յեղափոխութիւնը մարէր. այնքան արդէն մարդիկ վախեցել էին և կրօնաւորները շարժման մէջ էին մտել:

Բայց պիտի պատմեմ ձեզ, որ թէև յուսահատութիւն էր մտել մեր մէջ, սակայն այնտեղ ցածում, հայրենասէրներն այնքան էլ հեշտութեամբ չէին զիջում և քաջութիւն ունէին ոչ միայն դիմադրելու արքունիքին, այլ նոյն իսկ շանթահարում էին Ազգային Ժողովի կաշառւած անդամներին:

Վարպետ Ժանը պատւիրել էր ինձ՝ Շօվէլին գրելու Նանսիում մեր տեսածները: Եւ երեկոները, գործից յետոյ գնում էի Մարգարիտի ինձ ցոյց տւած գրադարանը, նստում մենակ այնտեղ, մի փոքրիկ լամպի լոյսի տակ ու սկսում մի առ մի ամեն ինչ գրել: Երբեմն էլ, եթէ ժամանակ էր մնում, մի երկու ժամ կարդում էի:

Մի առանձին հաճոյքով էի կարդում միշտ «Հանրագիտակ բառարանը». ոչինչ բան չէի թողնում, որովհետև ամեն ինչ ինձ հիացնում էր. Դիդրոյի յօդւածները շատ աւելի: Անցեալի նման կոյր մնալու փոխարէն, այժմ ամեն ինչ ուշադրութիւնս էր գրաւում—սկսած ամենափոքր խոտի շիւղից մինչև աստղերը: Կուզենայի հաշւել էլ գիտենալ, սակայն սովորելու միջոց չը կար. ուսուցիչ, սկզբունքները ուսուցանելու՝ վարժապետ չունէի:

Ու նստած այդպէս, գրադարանում, մտածում էի յաճախ Մարգարիտի, ապա հօրս վրայ. երբեմն տխրութեամբ, երբեմն գոհութեամբ: Խորհում էի նոյնպէս այն մեծ կռիւների մասին, որոնք մղում էին ազգի ճշմարիտ ներկայացուցիչները՝ ժողովրդեան իրաւունքների օգտին: Հոգիս ազնւացնում էր այդ ամենը և յաճախ շատ ուշ, մինչև կէս գիշերից անց իսկ, նստում էի առանց մի րոպէ անգամ ձանձրանալու:

Ահա այդ էր իմ կեանքը: Կիրակի օրերը, փոխանակ երեկոյեան սկսելու ընթերցումը—առաւօտ ժամը 7-ին արդէն Շօվէլի գրադարանումն էի: Ու այդպէս, կեանքը շատ աւելի գեղեցիկ էր թւում ինձ, մանաւանդ երբ մտաբերում էի մանկութեան ժամանակ կրած վշտերը և սովորելու այնքան մեծ ցանկութիւնը, չը նայելով որ ոչ մի րոպէ իսկ չէի գտնում կրթւելու համար, քանի որ ամբողջ ժամանակս ծախւած էր վարպետին:

Այժմ անհունապէս երջանիկ էի զգում ինձ:

Երբ վարպետ Ժանը պատւիրեց գրել Նանսիի դժբախտութիւնները, սեպտեմբերի առաջին օրերում արդէն նամակս վերջանում էր և այդ տխուր պատմութեան վերջին էջերն էի գրում:

Երբ մի գիշեր էլ վերջացրի բոլորովին, գիշերւայ ժամը 11-ն էր արդէն, բացի մի լուսամուտն ու սկսեցի երազել: Գիշերը լուսընկայ էր և մեղմ: Նայելով լուսնաթաթախ փոքրիկ պարտէզին, տեսայ որ խոշոր խնձորներն արդէն հասել էին. ու մտածում էի թէ որքա՜ն հաճոյք կարող էր պատճառել Մարգարիտին և հօրը, եթէ տեսնէին և ճաշակէին այդ հիւթալի սիրուն պտուղները: Ու ասացի ինքն իրենս.

—Ինչո՞ւ չուղարկել նրանց. քաղեմ լաւագոյնները, տերևների մէջ դրած՝ դարսեմ մի լաւ զամբիւղում, միմեանց վրայ, շերտ առ

շէրտ և ուղարկեմ Փարիզ. ճշմարիտ է, 15 օր ճանապարհին կը մնար, բայց լաւ դարսելով՝ կարող էր 15 օրից աւելի էլ դիմանալ։

Այս գաղափարն այնքան հաճոյալից դարձաւ ինձ համար, որ պառկած տեղումս, մեր խրճիթումն անգամ, մտածում էի նրա վրայ։ Միւս օրն էլ նամակը վարպետ Ժանին կարդալիս, յայտնեցի մտադրութիւնս։

—Այո՛, Միշէլ, լա՛ւ ես մտածել. ասաց նա—պանդխտութեան մէջ մարդ երբ տնից մի բան է ստանում, ամենամեծ հաճոյք է զգում... վաղն ուրեմն, կիրակի, քաղիր ամենալաւերը, բայց ծառի վրայ ելիր և հատ-հատ պոկիր, որ պտուղները չընկնեն ու չը ջարդուեն. այդպէս նրանք երկար կը դիմանան։ Յետոյ մի լաւ մեծ զամբիւղ ուզիր հօրիցդ. պտուղներից բացի, մէջը կը դնենք մի կտոր էլ խոզի լաւ ապուխտ, որ ամենահամեղ պատառը լինի. մի քանի հատ երշիկ, երկու շիշ Ալզասի լաւ գինի և իմ մառանից էլ Լօրէնի ամենաընտիր կարմիրներից երկու շիշ... Միայն խոշոր և ամուր զամբիւղ է պէտք։

Ու հրճւում էր վարպետը հետզհետէ այդ մտքով և կանչում.

—Այո՛, ամենալաւ հաճոյքը կը պատճառի նրանց այդ զամբիւղը։

Ես ինքս գոհ էի մտածածովս։

Չեմ յիշում այդ կիրակի օրւանից աւելի լաւ օր, երբ վաղ առաւօտեան, մի խոշոր և ամուր զամբիւղ ընտրելուց յետոյ՝ ուսիս վրայ առի և պանդոկ տարայ։ Յետոյ ճիւղերի վրայ ելայ, քաղեցի ամենալաւ խնձորներն ու տոպրակի մէջ դրի... Որքա՜ն էլ սիրուն էին. երևակայում էի Մարգարիտի ուրախութիւնը, երբ նա իր փոքրիկ ատամներով պիտի կրծոտէր նրանց։

Երբ այդ էլ եղաւ, պանդոկի ետևի մեծ ընկուզենուց թափ տւի բաւական խոշորները. թափելիս մտածում էի.

—Շօվէլը գոհ պիտի լինի. պիտի ուտի հա՜...

Ինձ թւում էր թէ կրծում է արդէն և ասում գոհունակութեամբ.

—Ի՞նչ լաւ տղայ է այդ Միշէլը։

Ու այդ միտքը այն աստիճան գրաւել էր ինձ, որ մտովին պատասխանում էի.

—Այո, պ. Շօվէլ, այո՛, լաւ տղայ է Միշէլը և ձեզ էլ շատ է սիրում. հաւատացէք, նա իր կեանքը կը տայ ձեզ համար... Մարգարիտը նրանցից աւելի իրեն սիրող և բախտաւոր դարձնող չի գտնի, ո՛չ։

Պէտք չը կայ անշուշտ ասելու, թէ ինչպէ՛ս խնամքով լցրինք զամբիւղը, փակեցինք, վրան Շօվէլի հասցէն գրեցինք։ Շատերը

կամեցան մասնակցել Շօվէլին ուղարկւելիք բաների մէջ, բայց չը թողինք և զամբիւղը ճանապարհ ընկաւ դէպի Փարիզ։

Այդ օրւանից սկսած՝ ամեն օր լուրերի էինք սպասում Փարիզից. սակայն միայն սեպտեմբերի վերջերին ստացանք։ Իսկ այդ ժամանակամիջոցում քանի-քանի անգամ վէճեր տեղի ունեցան «Երեք աղաւնի» պանդոկում։

Այդ այն միջոցներումն էր, երբ Ազգային Ժողովի հրամանով տպւած «Կարմիր գիրքը» առաջին անգամ մեր գիւղերը մտաւ։ Ծերունի Րիգօն, որ Տուլ էր գնացել մի փոքրիկ ժառանգութիւն ստանալու, այնտեղից մեզ բերեց այդ գիրքը և ամեն երեկոյ կարդալով նրա մէջ նորանոր փաստեր, վիճում, աղաղակում և զայրանում էինք։

Այդ գրքի շնորհիւ մենք իմացանք ահա, որ ո՛չ միայն ազնւական սպաներն էին իրենց զինւորներին կողոպտում, այլ և մեզ էլ վաղուց ի վեր թալանում էին զանազան պալատական մեծամեծներ, կողոպտում առանց խղճահարութեան, ամբողջ ձեռքերովը և ամենաանազնիւ ձևերով։

Եւ ահա թէ ինչպէս էին կատարւում այդ պարբերական գողութիւնները։

Ամեն անգամ երբ դէֆիցիտը ստիպում էր թագաւորի նախարարներին՝ դիմելու մի նոր փոխառութեան—նրանց բարեկամները, թագուհու, կոմս Արտուայի և իշխանների արբանեակները, նոյն իսկ սպասաւորները համարւում էին իբր գանձին փոխատուներ։ Նրանք բոլորն էլ որոշ գումարների ստացական էին առնում (կտրոններ) և ամեն ոք իր ցածութեան չափ գումարի համար, առանց մի կոպէկ իսկ փող տւած լինելու գանձին։ Մենք—թշւառներս, ստիպւած էինք նոր տուրքերով վճարել այդ աւազակների իբր թէ փոխ տւած գումարների տոկոսները. գումարներ, որոնք սկի էլ չէին տրւած ազգին։ Էլ կարող էք երևակայել թէ որպիսի գումարներ էին գողացւել այդպիսի միջոցներով։ Անհաշիւ քանակութեամբ։

Կամիլ Դէմուլէնը իր լրագրի մէջ ասում էր, որ այդ պալատականներին արժէր 24 միլիօն անգամ կախել, որովհետև 24 միլիօն էին գողացել թշւառների գրպաններից։ Եւ գողացել էին անամօթաբար, որովհետև համարւել էին ազնւականներ. մարդիկ հաւատացել էին նրանց, այլ և ձերբակալւելու, բռնւելու վախ էլ չէին ունեցել։

Այդ իսկ 1790 թիւ սեպտեմբեր ամսին էր, որ Լուի XVI Նեկկերին հրաժարեցրեց։ Բուիլէյի յաղթութիւնից յետոյ, թագաւորը մտածում էր, որ այլևս պէտք չունի Նեկկերին։ Ոմանք նրան

համարում էին խաբերայ, որովհետև թոշակներ էր կապել իր բարեկամներին և երկար ժամանակ չէր կամեցել հրատարակել «Կարմիր գիրքը»։ Ուրիշները, ինչպէս օրինակ, վարպետ Ժանը, գտնում էին, որ հարկաւոր է համեմատութեան դնել նրա գործերի վատն ու լաւը, որ Նիկկերն ինքը չէր հարստացել կարդինալ Բրէների պէս և որ եթէ 1778-ի Նիկկերեան հաշւետւութիւնը չը լինէր, յեղափոխութիւնը չէր սկսւիլ։

Կարծեմ իրաւունք ունէր վարպետ Ժանը։ Ցամենայն դէպս, Նիկկերի հեռանալուց յետոյ, Լուի XVI այլևս միայն յեղափոխութեան թշնամիներին էր ականջ կախում։ Այդ թշնամիներն էլ նրան այնքան արագ գլորեցին դէպի անդունդը, որ երկու տարուց յետոյ հասել էր նա յատակին։

Վերջապէս ամսի վերջերին, մի խոշոր կապոց լրագիրների հետ, ստացայ նաև Մարգարիտի պատասխանը։ Ահա թէ ինչ էր գրում նա։

«Իմ բարի Միշէլ.

«Ստացանք թէ նամակդ և թէ լաւ պտուղներով, համեղ երշիկով և ազնիւ գինիով լի զամբիւղը։ Մեծ հաճոյք պատճառեց մեզ այդ, չը նայելով նկարագրածդ տխուր դէպքերին։ Սակայն, չը պէտք է յուսահատւել. ընդհակառակն, քանի ազնւականները այդպէս անեն, այնքան աւելի շուտ կազատւենք նրանցից։ Ազգը օրէցօր աչքաբաց է դառնում և երբ կամենայ, վերջ կը տայ իր թշւառութիւններին։

«Հայրս այնքան զբաղւած է Ազգային Ժողովում և Ժաքօբէնների ակումբանոցում, որ ինձ պատւիրեց շնորհակալ լինել քեզնից, վարպետ Ժանից, մօրքուր Կատէրինից և բոլոր նրանցից, որոնք պատրաստել են զամբիւղը։

«Մեր դրութիւնը վատ չէ. ապրում ենք մի կերպ այս թանգ ու կրակ քաղաքում։ Խնդիր չէ սակայն այդ։ Գլխաւորն այն է, որ յեղափոխութիւնն ու ազգային միւս գործերը հետզհետէ առաջ են գնում և դա զբաղեցնում է մեզ ամբողջովին, մոռանալ տալով մեր անձը։

«Ժողովուրդն անշուշտ շուտով տէր կը դառնայ իր իրաւունքներին, չը նայելով որ Ազգային Ժողովից շատ պատգամաւորներ կաշառւել են պալատի կողմից։ Բայց եթէ ազգի իսկական ներկայացուցիչները այդ կաշառւածների ձեռքը թողնէին մեր գործերը—անշուշտ վաղուց արդէն լուծը նորից կը դնէին մեր վզին և պէտք պիտի լինէր դարձեալ տանջւել ու համբերել այնպէս, ինչպէս տանջւում էինք Երեսփոխանական Ժողովի հրաւէրից առաջ։

«Բարեբախտաբար ակումբները խոչընդոտ են դառնում նրանց դաւաճան մտածութիւններին։ Ամենից առաջ Բրըտօնի ակումբը, որ իր ժողովները գումարում է մեզնից ոչ-շատ հեռու գտնւող Ժաքօբէնների վանքում։ Հայրս ամեն երեկոյ գնում է այնտեղ։

«Ժողովւում են լաւագոյն հայրենասէրները, նստում մի հին դատարկ գրադարանում, քանի որ վանքը դատարկ է և վարդապետները փախել հեռացել են երկրից։

«Փարիզում եղած ակումբներից լաւագոյններն են այս, այլև Կորդէլիէրի, որ իր նիստերը կայացնում է վաճառատան մէջ, գետի միւս կողմում։

«Սկզբում երեսփոխաններ էին միայն յաճախորդներն ու անդամները. սակայն, մի ամսից յետոյ, դրսից էլ հայրենասէրներ միացան և օրէցօր անդամների թիւը շատանում է։ Դանտօն, Լըժանր, Ֆրէղօն, Պետիօն, Բրիսսօ, Կամիլլ Դէմուլէն՝ ընտանի են դարձել այդտեղ։

«Հետաքրքիր է պատմել քեզ, թէ երբ Ազգային Ժողովի ազնւականներն սկսում են աղմկել ու միմեանց ձայն տալ այսպէս.

«—Է՛յ, դերկոմս այս ինչ, դուքս գնանք. չը ձանձրացա՞ք այս ափեղցփեղութիւնը լսելով։

«Եւ կամ.

«—Կը լսէ՞ք վերջապէս, չաչանակներ, սրերի հարւածներով պիտի վռնտել ձեզ...

«Այն ժամանակ միւս օրն իսկ Ժաքօբէնների և Կորդէլիէրների ակումբները նիստ են կազմում ու մէկ էլ տեսար ամեն կողմից հնչեց ահազանգը, յետոյ, հայրենասէրները—կին, տղայ՝ միասին ժողոված, գնում են Ազգային Ժողով, ձեռքերնին կաթսայ, պղնձէ ափսէներ և ամեն աղմկող բան։ Քայլում են խմբովին, ներս ընկնում, սկսում ամանները ծեծել ու օռնալ.

«—Լապտերներից կախել, կախել այդ ազնւականներին...

«Սրանք ի հարկէ դողում են և շտապում են թագնւել։

«Վարպետ Ժանն ու Լէտիւմիէն պիտի ներկայ լինէին այդպիսի փախուստների ժամանակ, որ մի կուշտ ծիծաղէին։

«Այս տեսակ աղմուկին «ցոյց» են կոչում։ Ազնւականները «ապստամբութիւն» անունն են դրել։ Լաֆայէտն էլ այդպէս ժամանակ իսկոյն հեծնում է իր սպիտակ ձին, հաւաքում ազգային պահակներին, ճառեր արտասանում և քաղաքապետ Բայլիի հետ դէս ու դէն են վազվզում։

«Միւս օրն ի հարկէ ամենքը սկսում են ծիծաղել և ասել.

«—Ա՛յ թէ ազնւականները վախեցան հա՜... գոնէ մինչև տա-

մնահինգ օր այլևս խելօք կը մնան: Եթէ էլի սկսեն—մենք էլ կըսկսենք...

«Լաֆայէտը, սանք, անտանելի կերպով քիթը կոխում է ամեն բանի մէջ:—Թմբուկ է խփել տալիս, երբ թագաւորն ու թագուհին են անցնում, բարև է բռնում, յետոյ էլ ճառեր խօսում ժողովրդեան. երբեմն էլ փորձում է ձերբակալել հայրենասէրների: Եւ եթէ կանայք չը լինէին, որոնք քաջաբար անցել են յեղափոխութեան կողմը և արգիլում են իրենց ամուսիններին՝ հնազանդւելու Լաֆայէտի հրամաններին—վաղուց այդ մարդը փորձանք կը բերէր մեր գլխին:

«Այս բոլորը, իմ բարի Միշէլ, գրում եմ քեզ, որովհետև այդտեղ գիւղում, հեռւից կարող են փաստերը ուրիշ կերպ թւել ձեզ: Դուք առայժմ միայն կամաւոր զօրքի և տուրքերի մասին գիտէք հաստատ բաներ. բայց եթէ փարիզցիք իրենց ճիրանները ցոյց չը տան այս կոմսիկներին, մարքիզուկներին և եպիսկոպոսներին, յեղափոխութիւնը շատուց կանգ կառնէր ու Ֆրանսիան դարձեալ կը մնար այնպիսի ազնւականների ձեռքը, որոնք ի հարկէ, հին ձևով, կսկսէին հուպ տալ ժողովրդին:

«Ժողովրդի բարեկամ Մարան ամենից աւելի լաւ կարողանում է այդ պարոնների խաղերը մերկացնել: Ո՛չ մի բանի առաջ կանգ չի առնում այդ մարդը: Եթէ թագաւորն է մեղաւորը—ուղղակի մեղադրում է նրան հրապարակով. եթէ թագուհին—խօսում է նրա դէմ. հոգևորականութիւնը—հայհոյում է նրանց: Ո՛չ ոքի չի խնայում և ոչ էլ ո և է բան ծածկում: Մերկացնում է ազնւականութեան, նախկին պարլամէնտների, քաղաքային վարչութիւնների, դատաւորների, շրջանային կառավարութիւնների... արարքները: Ու այսպէս, բոլոր պետական գիշատիչների և տզրուկների, հասարակաց բարօրութեան թշնամի բոլոր բանակի դիմակը պատռում դէն է ձգում և գործերը իրենց ամենայն իսկութեամբ հրապարակի վրայ դնում:

«Սանք երբեմն չափազանցում է, շատ է գունաւորում եղածները: Հայրս այդպիսի դէպքերում ասում է, որ Մարան ծայրայեղութեան է գնում: Պէտք չէ այդպէս անել. պէտք չէ մոռանալ, որ մեր թշնամիների մէջ էլ կարող են ազնիւ մարդիկ լինել և կան. չը պէտք է յարձակւել այնպիսիների վրայ, որոնց համոզմունքը նրանց սխալ դաստիարակութեան արդիւնքն է:

«—Նրանց սխալները հասկանալի են դառնում—ասում է նա —եթէ մտաբերենք որ մանկութիւնից սկսած նրանց գլխում խըծկել են այն հասկացողութիւնը, որ իբր թէ նրանք աւելի բարձր են բոլոր ուրիշ մարդկանցից և մի առանձին ցեղի են պատկա-

նում: Մարմին և արիւն է դարձել այդ. անզգալօրէն յիմարացած, համոզւել են թէ յիրաւի այդպէս էլ է, անբնական ոչինչ չը կայ այդպէս լինելու մէջ:

«Մի՞թէ, յիրաւի, մեր մէջ էլ չըկան այդպէս փառամոլ կեղծ հայրենասէրներ, որոնք շատ կը ցանկային դառնալ աղա, ունենալ իրենց ծնունդը, նշաններով կուրծքը զարդարել, թոշակ ունենալ, եղբօրը՝ սպասաւորի պէս բանեցնել, ստորացնել և պատիւն ու համոզմունքը ծախել առաջին հանդիպածին:

«Իզո՜ւր են շողոքորթում ժողովրդին, հաւատացնելով նրան, որ ամեն առաքինութիւն միայն նրա մէջն է, որ կայ: Ճիշտ չէ այդ. ժողովրդի և բուրժուաների մէջ մանաւանդ, պակաս չեն աւազակները: Ապագայում, երբ ժողովուրդը յաղթական ելնէ, ամենայն հաւանականութեամբ զանազան թշւառական բոկոտներ պիտի հին ազնւականների չափ հպարտ ու յանդուգն դառնան. և գուցէ շատ աւելի վատ, որովհետև այդ անճոռնիները պիտի լինեն նաև կծծի, ագէտ ու կոպիտ, առանց կարողանալ ծածկելու, որ իրենց մայրը անասնապահ է եղել կամ հայրը ախոռապան:

«Ա՜խ, երանի, Միշէլ, չը վիճակւէր մեզ ապրելու այդպիսի զզւելի հասարակութեան մէջ. հասարակութիւն, որ արատ ու անպատւութիւն պիտի լինի մարդկային ցեղի համար:

«Հայրս հիմա յաճախ է բարկանում. դիւրագրգիռ է դարձել: Զանազան Մօրիների *) օրինակը կատաղեցնում է նրան: Սանք շուտով էլ հանդարտում է և զայրոյթը վերջացնում է՝ ասելով.

«—Սրանք բոլո՛րը դատարկ բաներ են. գլխաւորն այն է, որ հաստատւեն լաւ օրէնքներ և արգելք դառնան աւազակների սխրագործութիւններին, լինեն աւազակները ժողովրդից, բուրժուաներից կամ ազնւականներից: Օրէնքները արգելք պիտի դառնան, որ այդպիսիները չը տիրապետեն ազնիւ մարդկանց, և չը չոգեն նրանց կոկորդին և կողոպտեն անխնայ: Գլխաւորն այն է այսօր, որ Դանտօնի, Րօբէսպիէրի, Գրէգուարի և Դէմուլէնի նման մարդիկ ունենանք, որ լուսաւորեն ազգը և հասկացնեն նրան, թէ համերաշխութեան մէջ է մեր փրկութիւնը: Այդպիսի մարդիկ կազատեն Ֆրանսիան, նրանք դէն կը շպրտեն բոլոր կաշառւածներին հէնց նոյն իսկ յառաջիկայ ընտրութիւնների ժամանակ: Շատերը

*) Ժան Սիֆֆրէն Մօրի, ֆրանսիացի ճառախօս, Լիօնի պատգամաւոր 1789-ի երեսփոխանական ժողովում, ջերմ պաշտպան միապետական—աւատական իշխանութեան և հակառակորդ Միրաբօյի: 1791 թւին հեռացաւ գործից և գնաց Հռոմ: Հոգևորական էր. Նապօլէօնի ժամանակ Փարիզի արքեպիսկոպոսը դարձաւ: Ունի նաև գրւածքներ: Ծ. Թարգմ.

անշուշտ պիտի զլպարտեն, հայհոյեն նրանց, սակայն ճշմարտութիւնը միշտ յաղթող է հանդիսանալու։ Երբ մի ժողովուրդ տանջւում է—սովորում է նա հասկանալ իր սխալները և ոչնչացնել սրիկաներին...

«Բայց ահա, իմ բարի Միշէլ, Թուղթս պրծնում է։ Չէի կամենալ սակայն չը գրել նաև մի դէպք, որ անշուշտ ուրախութիւն կը պատճառի քեզ և Բարաքների բոլոր հայրենասէրներին։

«Քո վերջին նամակը երբ մեզ հասաւ, այստեղ խօսում էին արդէն Նանսիի գործերի մասին և մարդ չէր իմանում թէ ո՞րքան կարելի էր հաւատ ընծայել Լաֆայէտի գովեստներին՝ իր ազգական Բույիլէի վերաբերութեամբ։

«Ազգային ժողովը այդ զօրավարին մինչև երկինք էր հանում և Թագաւորը պահանջ էր դրել քաղաքային պահակներին՝ շնորհակալութիւն քւէարկել։

«Հայրս երբ նամակը կարդաց, սաստիկ ուրախացաւ.

«—Ահա թէ ո՞րն է ճշմարտութիւնը. գոչեց նա—Միշէլը պատւական տղայ է, որ պարզ կերպով պատմում է իր տեսածը։ Սա խաղ չէ, ոչ. այստեղ առողջ դատողութիւնն է խօսում... Միշէլը առաջադիմում է օրէցօր. Դիդրօ է կարդում, օգտւում է... Ա՛հ, շա՜տ աւելի լաւ...

«Էլ երևակայիր իմ ուրախութիւնը՝ այդ խօսքերը լսելիս։

«Յետոյ հայրս ծալեց նամակը, գրպանը դրաւ և ասաց.

«—Լիւնէվիլի երեսփոխան Րէյնօլը երէկ ակմբանոցում գանգատ յայտնեց, որ Մէօրթի ազգային պահակներին շնորհակալութիւն չեն յայտնում, նրանց անձնւէր ծառայութեան համար. և որ այդ չանելուց բացի, դեռ վիրաւորական հարցափորձ էլ են ուզում անել... լա՛ւ ուրեմն, ես պիտի յայտնեմ նրանց այդ բոլորը, պիտի կարդամ այնտեղ այս նամակը և տեսնենք ի՞նչ կը պատասխանի Րէյնօլը։

«Մի քանի անգամ ակըմբանոց գնացել էի և շատ հաճոյք չէի առացել։ Բայց երբ հայրս ասաց, որ նամակդ պիտի կարդար հայրենասէրներին, իսկոյն խնդրեցի որ ես էլ գնամ հետը։

«—Լա՛ւ, ասաց նա—շտապիր ուրեմն հագնուել, որովհետև ժամանակն է գնալու։

«Ընթրել էինք արդէն. հագիւ միջոց ունեցայ ամանները լւանալու և շորերս հագնելու։ Հայրս անդադար կանչում էր.

«Վերջապէս թևը մտայ և ժամը 7 1/2-ին ակմբանոց հասանք։

«Բոլոր նստարաններն արդէն լիքն էին։ Րօբէսպիէրը—դժգոյն դէմքով, նիհար մի երիտասարդ, երկնագոյն ֆրակ հագին, բաճկոնն

ու վզկապը սպիտակ, նախագահում էր և այժմ զանգահարելով, յայտարարեց ժողովը բացւած։

«Իսկոյն կամարների տակ գտնւող վերին նրբանցքն ելայ, ուր կանայք էին նստում և այնտեղից տեսայ Գրիօրին և Դանտօնին, որոնք հօրս ձեռքն էին սեղմում և միասին նստում։ Ծերունի քարտուղար Լաֆօնտէնը, նախընթաց ժողովի արձանագրութիւնը կարդաց։ Երբ վերջացրել էր, հայրս ոտքի ելաւ և ասաց.

«—Ես ասելիքներ ունիմ Լիւնէվիլի Րէյնօլդ երեսփոխանի գանգատների մասին։ Նա պահանջում է, որ իր հրամանով քայլող Մէօրթի ազգային պահակներին շնորհակալութեան քւէ տրւի։ Խնդրում եմ թոյլ տալ կարդալու իմ շրջանի պահակներից մէկի նամակը։ Կատարելապէս երաշխաւորում եմ այդ պահակի ազնւութեան և ճշմարտախօսութեան մասին, մանաւանդ որ ինքն էլ գործի մէջն է եղել։

«—Խօսքը ձե՛րն է. ասաց նախագահը։

«Եւ հայրս այնուհետև սկսեց կարդալ քո նամակը, խորին լռութեան մէջ։ Պէտք չունիմ ասելու թէ որքա՜ն սաստիկ էր բաբախում սիրտս։ Սկսեց այնտեղից կարդալ, երբ նկարագրում ես թնդանօթների առաջին հարւածները լսելիդ ճանապարհի վրայ, Ս. Նիկօլայի մօտ. և հասաւ մինչև այնտեղ, երբ գծում ես հուսարների արած սոսկալի կոտորածի պատկերը։

«Ձայնը պարզ, խօսքերը որո՛շ, լսւում էին ամեն անկիւններից։

«Երբէք չես կարող երևակայել ա՛յն զայրոյթը, երբ իմացւեց, որ ազգային հայրենասէր պահակներին ետ էին ուղարկել յարձակումից առաջ, որպէս զի գերմանացիներին թոյլ տան կողոպտելու և կոտորելու իրենց ուզածին չափ։

«Ո՛չ, պատկերացնել դժւար է նամակիդ պատճառած մեծ յուզումը։

«Ամէն կողմից, մէկ անգամով ոտնեցին նստարանների և ամբիոնի վրայից. աղմուկն ու խառնաշփոթութիւնը սկսեց. նախագահն ամբողջ ոյժով զանգահարում էր և տասը րոպէ խաղաղութիւնը վերականգնել անհնար եղաւ։

«Վերջապէս մարդիկ նորից նստեցին և հայրս շարունակեց կարդալ նամակը։ Բայց, վերջացնել չը կարողացաւ, որովհետև այն տեղերում, երբ դու պատմում ես Նոր-Դուան մօտ տեսածդ սոսկալի բաները, զայրոյթը նորից այնքան մեծ եղաւ, որ ստիպւեց հէնց ինքը դադարեցնել և մահու չափ դժգոյն՝ աղաղակեց.

«—Պէ՛տք է արդեօք շարունակել։ Ձեզ այժմ յայտնի եղան Նանսիի գործերը. այժմ գիտէք դուք թէ Լօրէնի ազգային պա-

հակները պահանջում են արդեօք մասնակից համարելու Բուիլլէյի փառքին: Գիտէք նոյնպէս, թէ մեր հայրենասէրները ձգտում են արդեօք ձեռքները թաթախած լինել եղբայրական արեան մէջ… Գիտէի, ապահով էի, որ այնտեղ—մեզանում, դառնապէս վշտացել են այդ անիծեալ գործից… Մենք չենք ուզում խմած լինել այդ դառն բաժակը. Թող Բույիլլէի գերմանացիներին միայն նա ամբողջովին… Մեր սիրտն է խառնում այդպիսի խմելիքը…

«Եւ ազմուկների որոտի մէջ՝ Նստեց։Միայն Դանտօնի խոշոր ձայնն էր, որ լսւում էր: Շնորհակալութիւն էր յայտնում նա հօրըս, որ յաջողւեց ակումբի առաջ պարզել այդ զարհուրելի կոտորածի պատկերը:

«—Գաւառների հայրենասէրները, աւելացրեց նա, ընդունակ չեն օգնելու օտար աւազակների. Նրանք մաքուր են այդպիսի մեղադրանքներից:

«Եւ դու պիտի գիտենաս, Միշէլ, որ չը նայելով կաշառւածներից խաբւած Ազգային Ժողովի համաձայնութիւնը, չը նայելով Բայլիի և Լաֆայէտի պնդումներին ու խաղերին, միապետական թերթերի կոչերին—քաղաքացի պահակներից 28 վաշտ մերժեցին Թագաւորի առաջարկած շնորհակալութեան քէն տալ Բույիլէին: Վալդը-Գրասի վաշտը բողոքել է և ասել մինչև անգամ այսպիսի խօսքեր.

«—Բույիլլէն ոչ միայն հայրենասիրական ոգով տոգորւած հերոս չէ, այլև արիւնածարաւ և կոտորածի սիրահար մի գազան, որին, անկողմնակալ քննութիւնը արժանի կը դարձնի տանջանքներով պատժի, կախաղանի՝ քան թէ փառքի և պսակների…

«Գոհ կը լինիք բոլորդ անշուշտ, լսելով այս լուրերը: Ո՛չ, արդարութեան և ազատութեան կողմնակիցները մենք չենք միայն: Քաջ փարիզեցիք մեզ հետ են և կարելի է ասել, որ բոլոր ազնիւ մարդիկ ձեռք-ձեռքի տւած են գործում յօգուտ հայրենիքի:

«Թուղթը պրծնում է, Միշէլ, չը նայելով որ ասելիքներ դեռ շա՜տ ունիմ… Սակայն, ճարն ի՞նչ, վերջացնեմ այս անգամ:

«Ցուտով, գուցէ հէնց եկող տարի, անձամբ կըխօսենք և կը պատմեմ ամեն բան, հանգիստ տեղաւորւած վարպետ Ժանի վառարանի կողքին:

«Սպասելով մեր տեսնւելուն, խնդրեմ, Միշէլ, հո՛գ տար մեր պարտէզին: Երբ մտածում եմ այն իմ բարձր սենեակի մասին, այնտեղից երևցող սիրուն տեսքը մեր գեղեցիկ երկրի… իմ միակ մխիթարութիւնն այն է, որ երազում եմ թէ ամեն երեկոյ գնում ես այնտեղ փոքրիկ եղբօրդ Էտիէնի հետ և նստում վայելում էք պտուղները… Անուշ լինի, սրտանց ուրախ եմ:

«Դէհ, նամակս վերջացրի: Ցտեսութիւն, բոլորիդ ցտեսութիւն… Համբուրում եմ ամենքիդ: Ասա Բարաքների մեր լաւ բարեկամներին, որ անհունապէս շնորհակալ ենք ուղարկած զամբիւղի համար: Նորից ցտեսութիւն, վարպե՛տ Ժան, մօրքո՛ւր Կատերին, Նիկօլ… քեզ էլ, Միշէլ»:

Մարգարիտ Շօվէլ.

Փարիզ. 24 սեպտ. 1790:

VI

Մարգարիտի նամակը բաւական օգտակար եղաւ մեզ: Յիշում եմ, որ հարիւր անգամից աւելի պէտք եղաւ կարդալ, որովհետև ոչ միայն Բարաքներից, այլև անցորդ սայլապաններն ու առևտրականները, մի խօսքով բոլոր օտարականները, որ մտնում էին պանդոկ—բարևելուց և գինի խնդրելուց յետոյ, հարցնում էին.

—Ի՞նչ է, վարպե՛տ Ժան. ասում են որ նոր լուրեր էք ստացել Փարիզից. չի՞ լինիլ որ մենք էլ իմանանք թէ ինչե՛ր են կատարւում այնտեղ:

Անմիջապէս վարպետ Ժանը դառնում էր ինձ.

—Միշէլ, բե՛ր նամակը:

Վերցնում էի պահարանից ու ծայրէծայր սկսում կարդալ լսելու հաւաքւած մի խումբ մարդկանց մէջ, որոնցից ոմանք կանգնել էին իրենց արկղները մէջքերին, ոմանք էլ մտրակնին թևից կախած:

Զարմանում էին, խնդրում էին բացատրել դժւար ըմբռնելի կտորները: Վարպետ Ժանը երկար ու բարակ խօսում էր ամեն կէտի վրայ—ակումբների, վաճառանոցների և թատրոնների մասին էր ճառում, որոնց երբէք չէր տեսել, բայց բնական խելքով երևակայում էր:

Վերջ ի վերջոյ, բաւական զարմանալուց յետոյ, ամեն ոք իր գործին էր գնում՝ ասելով.

—Ոչինչ, միայն թէ Փարիզի հայրենասէրները չը թուլանան և միշտ յաղթող մնան. գլխաւորը դա է:

Գործերի դրութիւնն էլ այնպէս էր, որ պէտք էր սիրտ տալ ժողովրդին:

Ազնւականները, կղերն ու հին դատաւորներն այլ ևս չը կարողանալով Ազգային ժողովին իրենց մտադրութիւնները ներշնչել, որովհետև երրորդ դասակարգը ապացուցանում էր նրանց, թէ անարդարութիւն է ուրիշների քրտինքով ապրելու ձգտումը—մտա-

ծեցին նորից տիրապետել մեզ, այս անգամ բռնի ուժով։

Բայց անձամբ կռուել չէին կարող. չափազանց վտանգաւոր կը լինէր այդ։ Ձեռնարկեցին ուրեմն մեզ մէկ-մէկու դէմ հանել. և եթէ այդ էլ չը բաւականանար, գերմանացիներին կանչել իրենց օգնութեան։

Ազնուականներն արդէն առաջին հարուածը տւին Նանսիում, ոտքի հանելով ազգային պահակներին՝ կանոնաւոր զօրքի դէմ։ Այժմ եպիսկոպոսներն սկսեցին երկրորդ, աւելի վտանգաւոր քայլը, գրգռելով կրօնասէր և յաւիտենական կեանքի սիրահարներին՝ հայրենասէրների դէմ։

Նրանք աչքի առաջ ունէին, որ ճշմարիտ կաթոլիկները հայրենասէրներից կը խլեն հողերն ու կալուածները և կը վերադարձնեն կղերականութեան, փոխարէնը ստանալով օրհնութիւն։

Ահա ստուգը. ինքներդ էլ այդ կը տեսնէք այս րոպէիս։

1790 թուի նոյեմբերի վերջերին, ձիւն գալուց մի քանի օր առաջ, մեր կողմերում զարմանալով տեսանք այնպիսի մարդկանց, որոնց կարծում էինք թէ փախստական էին Ֆրանսիայից։ Օրինակ. պ. Գասպարը՝ Ֆալցբուրգից, ածաբանութեան ուսուցիչ Րօօս և ուրիշ շատերը, որոնց մասին ասում էին, որ 6 ամսից ի վեր Տրիր էին գնացել։

Դրանց հետ միասին երևան եկան եպիսկոպոսների և ազնուականների կողմից նշանակուած երէցներ, որոնք գնում-գալիս էին ամեն ճանապարհներով, ժողովներ էին կազմում Նէօվիլերում, Հանրիդորֆում, Սավէրնում և այլն։

Ի՞նչ էր նշանակում այդ բոլորը։

Անշուշտ մի բան էր դաւադրւում։ Բայց թէ ի՞նչ—ոչ ոք չը գիտէր։ Հայրենասէրները, մանաւանդ եկեղեցական կալուածներ ձեռք բերողները, սկսեցին սաստիկ վրդովուել։ Բերնէ բերան խօսւում էր.

—Այդ մարդիկ փախուստից վերադարձել են. դա վատ նշան է։

Յանկարծ, նոյն ժամանակ, լրագիրները հաղորդեցին, թէ Ազգային Ժողովի մեր երեսփոխանները, տաք վիճաբանութիւնից յետոյ, որոշել էին որ «քահանաներն էլ պարտաւոր են երդուել սահմանադրութեան, նրան հաւատարիմ մնալու համար»։

Ահա թէ ինչպէս էր եղել այդ։

Այն եպիսկոպոսները, որոնք չէին համարձակւել ցոյցեր անելու եկեղեցական կալուածների գրաւման դէմ, վախենալով որ կը կասկածեն թէ ձգտում են աշխարհային հարստութեան—վճռեցին կռուի ձևը փոխել և ուրիշ կողմից յարձակում գործել։

Ու պահանջ դրին, որ Ազգային Ժողովը Ֆրանսիայում միակ

ընդունելի կրօն յայտարարի հռովմէական կաթոլիկական կրօնը։ Ուրիշ խօսքերով, նրանք ուզում էին մեզ վրայ երկու թագաւոր նշանակել—Փարիզի մէջ նստող թագաւորը մեր մարմնի և կայքերի վրայ, իսկ հոգիների թագաւորը—Հռովմայ պապին։

Բայց Ազգային Ժողովը մերժեց, առարկելով որ միայն մի թագաւոր են ճանաչում—այն է Աստուած, որ տեսնում է, գիտէ ամեն ինչ և պէտք չունի պաշտօնեաների կամ փոխանորդների՝ իր որդիների հոգիները կառավարելու համար։

Այն ժամանակ թշուառականները սկսեցին այնպէս յանդուգն դառնալ, որ նրանց խելքի բերելու և զսպելու համար, մեր երեսփոխանները վճռեցին օրէնք դնել, որ ապագայում բոլոր եպիսկոպոսներն ու երէցները ընտրուեն միայն ազգի կողմից. նման ճիշտ առաքեալների ժամանակւայ ձևերի։

Բնականաբար, եպիսկոպոսներն աւելի զայրացան։ Կարդինալ Րօհանը, Տրիրի արքեպիսկոպոսը և եկեղեցու ուրիշ շատ իշխանաւորներ՝ բողոքեցին այդ որոշման դէմ, շարունակելով իրենք նշանակել երէցներին։

Եւ ահա այդ ժամանակ էր, որ Ֆալցբուրգի գործակալ քահանայ Գասպարը, Մօլսհէյմի հայր Ժանվիէն, Հագընօի հայր Բարնաբէ և այլ հարիւրաւոր վարդապետներ Տրիրից, Գօբլէնցից և Կոնստանցից Ֆրանսիա վերադարձան, այլև գրքոյկների մի սոսկալի աղտոտ հեղեղ, աշնան տերևների պէս սկսեց ողողել երկիրը։

Այդ բոլոր վատ փոքրիկ տետրակների քարոզն էր.—«Ժողովուրդը թող մերժի հարկ վճարել. մեզ կառավարում են հրէաներ ու բողոքականներ. աւելի լաւ է ծառայել մի թագաւորի, քան 1200 աւազակների (երեսփոխանների մասին է խօսքը). «մարդկային իրաւունք» ասուած բանը մի անմիտ կատակ է. թղթադրամը պիտի կտրուի և այլն և այլն այնպիսի բաներ, ինչով կարելի էր յուսահատեցնել և մոլորեցնել ժողովրդին։

Միևնոյն ժամանակ էլ կոտորածներ սկսեցին երկրի հարաւային կողմերում։

Ազգային Ժողովը տեսնելով որ Ֆրանսիան պիտի իրար անցնի, եթէ նոր միջոցներ ձեռք չառնէին—որոշեց և յայտարարեց, թէ բոլոր քահանաներն ու եպիսկոպոսները անխտիր՝ պարտաւոր են երդուելու Սահմանադրութեան և նրա օրէնքներին հնազանդութիւն։

Մտածում էին այդ ձևով ստիպել նրանց օրէնքներին ենթարկուելու և երկրի մէջ ներքին կռիւներ ծագեցնելուց հեռու կենալու։

Բայց պէտք էր տեսնել թէ ինչպէս աղմկել սկսեցին կանայք: Պէտք էր այդտեղ տեսնել թէ որքա՜ն ետ էին մնացել ու տգիտութեան խաւարի մէջ հոտել մեր գիւղացիք:

Դեռ աչքիս առջևն է հայր Բենեդիկտը, որ մի առաւօտ Բարաքներն եկաւ իր էշի հետ, սկսեց հեծեծալ, կանչել ու գոռալ.

—Ա՜հ, ձայնում էր նա—որպիսի՜ անդունդի մէջ ենք թաւալւում ամենքս... խլեցի՜ն մեզնից ամե՛ն բան, կողոպտեցի՜ն մեզ. կորզեցի՜ն դարերից ի վեր մեզ մօտ իբր աւանդ դրուած աղքատների կայքը... Դիմացանք մենք, լռեցինք. այժմ մեր հոգիներին են ուզում դիպչել, հոգիների՜ն...

Ու հեկեկում էր՝ կրկնելով.

—Այո՛, հոգիների՜ն...

Մօրքուր Կատէրինը, Լէտիւմիէի կինը և բոլոր դրացի կանայք ժողովեցան նրա շուրջը, բարձրացրին ձեռքերն ու սկսեցին հեկեկալ՝ կրօնաւորին մխիթարելու համար:

Այդ օրն իսկ, մեծ աստուածաբան հայր Ժանվիէն և ուրիշ կապուցիններ անցան Բարաքներից և նոյն կատակերգութիւնը խաղացին: Վալէնտինը բոլորովին կատաղի՝ աղաղակում էր, որ թագաւորը չէր կարող հաստատել այդպիսի երդման հրամանը և թէ անշուշտ երկնքից մի վաշտ հրեշտակներ պիտի իջնէին՝ արգելելու վատ քահանաներին որ չերդուեն:

Շրջակայ բոլո՛ր գիւղերը—Միտտէլբրօնն, Զորս-Քամինները, Բիտելբերգը, մտածում էին Վալինտինի պէս, առանց հասկանալու: Կապուցիններն այդպէս էին ասել և հաւատում էին տխմարները:

Վարպետ Ժանն ինքը սկսեց ընկճուել ու տխրել. խոշոր այտերը կախուել էին և երբ ճաշից յետոյ մօրքուր Կատերինը, գոգնոցի ծայրը աչքերին դուրս էր գնում, կնքահայրս բոլորովին գունատ ինձ նայեց ու հարցրեց.

—Իսկ դո՞ւ, Միշէլ, ի՞նչ ես մտածում այդ բոլորի մասին:

—Է՜հ, վարպե՛տ Ժան—ասացի ես—այդ բոլորը նրա համար է, որ վախեցնեն կղերականների կալուածները գնողներին: Դրանք խօ քահանաներ չե՜ն... Մինչ մեր գիւղական խեղճ տէրտէրները կրօնի պատուիրած բոլոր խրատները կատարում են, ամառ-ձմեռ լեռնից-լեռ, գիւղից-գիւղ են գնում թշուառների, տնանկների և աղաներից կողոպտուածների մխիթարելու, մինչդեռ այդ խեղճ անձնազոհ պաշտօնեաները բաւականանում են ցորենի չնչին պտղով, որը, մեր վարսակ միայն բուսնող կողմերում, գրեթէ անօթի է թողնում նրանց—միւս կողմում այս դատարկապորտ վանականները լաւ ապրում, ուտում-խմում են, խայտառակ կեանք վարում,

հարբում ու ողջ կեանքերնին ծուլութիւնով և վատ քէֆերով անցկացնում առանց ո և է զրկանքի, առանց նեղութեան... Եւ այժմ, երբ կալուածները խլեցան, երէցները ունին գոնէ 700—1200 լիվր տարեկան եկամուտ. միթէ յիմար կը լինեն, որ իրենց օգտի հակառակ գործեն. և այն՝ ո՞ւմ համար. այդ վանականների, որոնք միշտ գիւղական երէցների վրայ ծուռ-ծուռ են նայել. այդ եպիսկոպոսների, որ արհամարհել են նրանց, անդադար «քահանայիկներ» կոչելով: Իսկ եթէ ո և քահանայի յաջողուել է երբ և իցէ եպիսկոպոս դառնալ, ազնուական եպիսկոպոսները նրա մասին խօսելիս՝ ասել են «ա՜հ, այդ սպասաւոր-եպիսկոպո՞սը»...

«Ես հաւատացած եմ, որ խելքը գլխին երէցը կերդուի Սահմանադրութեանը: Եթէ լինեն մի քանի չերդուողներ, նրանք էլ վախից չեն երդուիլ. կը վախենան այդ գոռոզ եպիսկոպոսներից, որոնք ընդունակ են ամեն վատ բանի: Այո՛, եթէ չերդուեն, ո՛չ թէ համոզմամբ կը լինի, այլ վախից. որովհետև նրանք լա՛ւ գիտեն թէ ազգի՛ն աւելի են պարտական, քան այդ եսամոլ կղերին:

Վարպետ Ժանը, որ մեծ գոհութեամբ լսում էր ինձ, ձեռքն ուսիս դրաւ և գոչեց.

—Ասածներդ բոլո՛րը ճիշտ են, Միշէլ: Դժբախտաբար ժողովուրդը, մանաւանդ կանայք, բոլորովին տգէտ են: Մեզ մնում է միայն միանալ հայրենասէրների հետ, սպասել որ այդ վանականները յարձակուեն Սահմանադրութեան վրայ և այն ժամանակ մի լաւ հարուածով փշրել նրանց ոյժը:

Այդ միջոցին մօրքուր Կատէրինը ներս մտաւ: Կնքահայրս իսկոյն նրան դարձաւ և ասաց.

—Լսի՛ր, Կատէրի՛ն, եթէ դու կը շարունակես զզուեցնել ինձ քո այդ թթուած դէմքովդ, իմացիր որ ես կը տամ վանքին նրա կալուածները, որոնց համար վճարել եմ մեր բոլոր ունեցածը: Այնուհետև կը մնանք լիովին աղքատ և հայր Բենեդիկտն ու նրա նման սրիկաները մի լաւ կը ծաղրեն մեզ: Տեսնենք, վանականները ետ կը տա՞ն մեր փողը, որ վճարուեցաւ ի հաշիւ հէնց նրանց պարտքերի: Չէ՞ որ սրիկաները առանց մեր համաձայնութեան էին այդ պարտքը դիզել մեր վզին:

Այնպէս բարկացած էր խօսում նա, որ մօրքուր Կատերինը շտապեց խոհանոց փախչել, չը կարողանալով և ոչ իսկ բառ արտասանել:

«Երեք աղաւնի» պանդոկում եղածների նմանը՝ իւրաքանչիւր տան մէջ էլ տեղի էր ունենում. ամեն տեղ տակն ու վրայ էր եղել. նոյն իսկ ես, երեկոյեանները տուն գնալուց առաջ, լաւ գի-

տէի որ մայրս պիտի սկսէր երդման մասին խօսել. կարծես թէ ինձ վերաբերեալ գործ լինէր դա։

Ու չէի սխալւում։ Նա էլ անցել էր մեզ թշւառացնողների կողմը։ Այդ նոյն երեկոյ ինձ յաւիտենական անէծքի դատապարտեց, որովհետև չէի կամենում համոզւել, որ Ազգային Ժողովը կազմւած էր մի խումբ հրէաներից և հերետիկոսներից, որոնք միաբանել էին՝ Տիրոջ կրօնը հալածելու։

Նախատինքներ տեղաց վրաս, որ ասել անհնար է։ Բայց ես լուռ մնացի։ Վաղուց վարժւել էի լսելու, երբ մայրս այդպէս բարկանում էր անարդար կերպով։ Հայրս իսկ այլևս չէր համարձակւում ձայնը բարձրացնել։ Խեղճս էր գալիս ծերունին։

Գործերը այս ձևով շարունակւեցին երեք չորս օր ևս։

Ազգային Ժողովի յայտարարութիւնը և հրամանագիրը երդման մասին՝ հետևեալն էր.

«Արքեպիսկոպոսները, եպիսկոպոսներն ու երէցները պարտաւոր են հաւատարմութիւն երդւել ազգին, օրէնքին ու թագաւորին, այլև հսկել, որ իրենց շրջանում ամենքն ամբողջ ոյժով պաշտպանեն Սահմանադրութեան օրէնքները։

«Այդ երդումը պիտի տեղի ունենայ որոշումը յայտարարելուց յետոյ, ութն օրւայ ընթացքում, մի կիրակի օր, պատարագից վերջը։ Արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, փոխանորդներն ու մեծաւորները, հոգևոր դպրոցների տեսուչները—բոլորն էլ մայր եկեղեցում, իսկ երէցներն ու միւս կրօնաւորները իրենց ծխական եկեղեցիներում, ի ներկայութեան ժողովրդեան պիտի երդւեն։

«Շրջանական վարչութիւնների մէջ, երդման օրից երկու օր առաջ, ամեն կրօնաւոր պիտի յայտնի իր երդւելու համաձայնութիւնը։ Մինչև որոշւած օրը երդում չը տւողները կը համարւեն զրկւած իրենց կոչումից, կարգից և պաշտօններից և նրանց տեղը կը բռնեն նոր ընտրւածներ, ըստ յունիս 12-ին Նոր Սահմանադրութեան»։

Բոլորը կիրակի օրւան էին սպասում՝ հանդիսատես լինելու թէ քահանաներից որոնք պիտի երդւէին։

Վանականները սակայն շարունակում էին դաւադրութիւններով զբաղւել։ Նորից լոյս աշխարհ էին ելնում բոլոր ոչնչացած կարգերն ու միաբանութիւնները, և խառնակութիւնները գնալով մեծանում էր։

Միևնոյն ժամանակ սակայն, լաւ հասկանալով որ եպիսկոպոսներն ու ազնւականները իրենց ամենազօրեղ միջոցներն էին գործ դնում, և եթէ շահէին, պիտի վերստանային նախկին արտօնութիւններն ու կալւածները—բուրժուաները, գործաւորները,

զինւորներն ու գիւղացիք միաբանւում էին, շարքերը սեղմում։

Դրանք այնպիսի մարդիկ էին, որոնք փառք ու երջանկութիւն էին համարում հնազանդել երկրի օրէնքներին և որոնք Ֆրանսիան, արդարութիւնն ու ազատութիւնը՝ գերադասում էին ամեն բանից աւելի։

Վարպետ Ժանը խնդրել էր ինձ, միասին Լիւցէլբուրգ գնալ, տեսնելու իր բարեկամ Քրիստոֆին, որ մինչև այժմ մեզ հետ գաղափարակից էր պորտաբոյծ վանականների վերաբերութեամբ։

Որովհետև լուր էր տարածւած, որ մեր կողմերի քահանաները չը պիտի երդւէին—մեզ հետաքրքիր էր իմանալ, թէ հայր Քրիստոֆն ինչպէս պիտի վարւէր։

Բայց երևաց, որ մարդը իսկապէս խելօք էր և բարեսիրտ. դրա համար էլ, գործերի վրայ պարզ հայեցակէտ ունենալով, գիտէր իր պարտքը կատարել։

Հինգշաբթի երեկոյեան, 1791 յունւարի 3-ին, մինչ դարբնում էինք և դրսում ձիւն էր գալիս—յանկարծ հայր Քրիստոֆը իր մեծ անձրևանոցով, եռականջ գլխարկը գլխին և ծալմաշ եղած վերարկուն հագին՝ կռացաւ անցաւ մեր փոքրիկ դռնիցն ու գոչեց դէպի ներս.

—Հէ, բարև, Ժան... Ինչպէ՞ս ձիւն է գալիս, հը՞... Եթէ այսպէս շարունակւի, վաղը երկու ոտնաչափ խորութեան կը հասնի։

—Էհէ, Քրիստոֆն է. ասաց վարպետ Ժանն ու ցած դրեց մուրճը—պանդոկ մտիր, ո՞ւր ես այստեղ գալիս։

—Ո՛չ, արդէն գիշեր է։ Քաղաքից եմ գալիս. գնացել էի յայտարարելու երդւելու ցանկութիւնս։ Չէի ուզում անցնել առանց քեզ ասելու, որ կիրակի, պատարագից յետոյ, պիտի երդւեմ։ Եթէ կարող ես, Միշէլի հետ արի. հաճոյք կը պատճառես ինձ։

—Ուրեմն երդւո՞ւմ ես։

—Այո, առաջիկայ կիրակի օրը... Դէհ, ցտեսութիւն. կը խօսենք դեռ այդ մասին։

Վարպետ Ժանը ընկերացաւ նրան ու միասին դուրս գնացին։ Դարձայ Վալէնտինին նայելու։ Անասունը յանկարծ այնպէս երկարացրել էր դէմքը, աչքերը խոշորցրել ու բերանը, ապուշի նման բաց պահել՝ որ քիչ մնաց քրքջայի։

Քիչ յետոյ վարպետ Ժանը վերադարձաւ դարբնոց՝ բոլորովին զւարթ դէմքով։

—Այդ ո՞ր յիմարն է լուր տարածել, որ իբր թէ քահանաները կը մերժեն երդւելու. գոչեց նա—Ես հաւատացած էի որ խելքը գլխին մարդիկ, որոնցից բաւական կայ մեր երկրում, մեզ հետ

միաբան կը լինեն և ոչ թէ այն յամառ տխմարների հետ, որոնք դեռ չեն դադարել կրկնելու իրենց հին վանական, աբբայական, ազնուական իրաւունքների, ազնուականների տիրապետութեան և ժողովրդի հլութեան քարոզները. կարծես թէ բոլորս էլ Ադամի սերունդները չենք և կամ բոլորս էլ հէնց ազնուականներ...

Վարպետ Ժանը երբ զուարթ էր լինում, բերնին չափ դնել չը գիտէր: Ա՛յն աստիճան առաջ էր գնում, որ իր հետ համաձայն չեղողներին անւանում էր սրիկաներ ու խաբեբաներ:

Խեղճս էր գալիս Վալենտինը, որ ստիպւած էր լսել մի քիչ էլ իր հասցէին ուղղւած այդպիսի հայհոյանքները և լսել ու ամբողջ օրը մնալ մռայլ: Զգում էի, որ երկար չէր կարող տևել այդ և որ տղան կարող էր մի օր էլ համբերութիւնը կորցնել ու մի լաւ պատասխան տալ:

Բարեբախտաբար այդ օր Նիկօլը շուտ եկաւ մեզ ընթրիքի հրաւիրելու: Ամենքս հագանք վերարկուներս և ըստ սովորականին, թողինք դարբնոցը, առանց ո և է արկածի:

Միւս օրը իմացւեց, որ ոչ Ֆայլցբուրգի Օտտ երէցն էր երդւելու և ոչ էլ Հիմմէլ փոխանորդ, սակայն Դըլաֆէր գունդի քահանան յայտարարել էր իր համաձայնութիւնը:

Երբ եկաւ կիրակի օրը, վարպետ Ժանը, ես, Լէտումէն և Կոշարը, այլև բաւական թւով հայրենասէրներ՝ Բարաքներից ու քաղաքից՝ գնացինք Լիւցէլբուրգ:

Եկեղեցին լեփ-լեցուն էր. շրջակայ գիւղերից այնքան շատ էին եկել, որ մինչև սեղանի ծայրն անգամ շարժւելու տեղ չէր մնացել: Ամեն տեղ սիրւած էր հայր Քրիստոֆը և բոլորը եկել էին տեսնելու իրենց յարգելի երէցի երդւելու արարողութիւնը:

Երբ պատարագը վերջացրեց հայր Քրիստոֆը, դարձաւ, քայլեց մինչև սեղանի տակը և ամեն անկիւնում լսւող հնչիւն ձայնով, ձեռքը բարձրացրած՝ արտասանեց.

—Երդւում եմ հսկելու ինձ յանձնւած հօտը հաւատարմութեամբ: Երդւում եմ հաւատարիմ լինելու ազգին, օրէնքին և թագաւորին: Երդւում եմ իմ ամբողջ ույժով նեցուկ լինելու ֆրանսիական սահմանադրութեան և յատկապէս կղերականութեան վերաբերեալ քաղաքական սահմանադրութեան:

Մի քանի րոպէից յետոյ ամբոխը դուրս եկաւ եկեղեցուց: Հայր Քրիստոֆը դեռ խորանումն էր: Ես, վարպետ Ժանը, երէցի եղբայրն ու միւս ազգականները սպասեցինք նրան եկեղեցում:

Դրսում ամեն ինչ խաղաղ էր. ժողովուրդը ցրւում էր:

Վերջապէս հայր Քրիստոֆն էլ եկաւ և ամենքս դիմեցինք դէպի երէցատուն: Ճանապարհին վարպետ Ժանը ասաց ծիծաղելով.

—Տեսա՞ք, ամեն ինչ խաղաղ գնաց. կապուցինների աղմուկները ոչինչ անցան:

Հայր Քրիստոֆը պատասխանեց մտախոհ.

—Գուցէ վտանգը յետոյ երևայ. սակայն կատարենք մեր պարտքը, մնացածը մեզ վերաբերեալ չէ:

Երբ իր փոքրիկ սենեակը հասանք, այնտեղ ճաշ էր պատրաստւած: Իսկոյն սեղան նստանք: Երէցի մայրը, աչքերը կարմրած, լուռ, ծառայում էր: Մեզ տխրեցնում էր նրա տեսքը:

Ճաշի կէսին պառաւը դուրս գնաց և հայր Քրիստոֆն ասաց.

—Տեսէ՞ք, ահա՛ սկսւող խառնակութիւնը, ահա ձեզ և յուսաբեկութիւնը... ամե՛ն տան մէջ այդպէս է... խեղճ կինը լա՛ց է լինում... Կապուցինները նրա վրայ աւելի՛ ազդեցութիւն ունին՝ քան ինձ վրայ... Կարծում է թէ արդէն անիծւած եմ... Ի՞նչ ասել, ի՞նչ անել:

—Փա՜հ... գոչեց վարպետ Ժանը—կինս էլ յուսահատւած է, բայց ո՞վ է բանի տեղ դնողը... սրիկաները կը վռնդւեն և բանիմացութիւնը կը տիրապետի:

Եւ այդ ժամանակ էր, որ հայր Քրիստոֆը այնպիսի խօսքեր արտասանեց, որոնք երբէք չեմ մոռանայ:

—Այդպէս հեշտ էլ չէ, ինչպէս կարծում ես, Ժա՛ն,—ասաց նա—որովհետև մեր ազնուական եպիսկոպոս մեծաւորները ամեն ինչ պատրաստ են զոհելու, միայն թէ ձեռքից բաց չը թողնեն իրենց կալւածներն ու արտօնութիւնները: Դրա համար է, որ արգելում են մեզ երդւելու Սահմանադրութեանը. Սահմանադրութիւնը խլում է նրանց ձեռքից ա՛յն աշխարհային բարիքները, որոնք աւելի արժէք ունին նրանց աչքում՝ քան ինքը—կրօնը: Բայց մի՞թէ Սահմանադրութիւնը հակառակ է Աւետարանի ոգուն: Ո՛չ. նրանք այդ շատ լաւ գիտեն: Նա կատարելապէս մեր կրօնի համաձայն օրէնսդրութիւն է: 1700 տարի առաջ իսկ, մեր Տէր Յիսուս փրկիչը խօսել է մարդկային իրաւունքների հաւասարութեան մասին:—«Սիրեք միմեանց, որովհետև եղբայրնե՛ր էք դուք», ասել է նա: «Ծախէք ձեր ունեցածն ամբողջ և իմ ետևից եկէք. տւէք ձեր դրամը չքաւորներին»... Իսկ սոքա, ո՛չ միայն չեն ծախել իրենց ստացւածքը, այլ աւելի շատացրել են ու կուտակել. սոքա ո՛չ միայն դէմ են եղել հաւասարութեան, այլ երազել են աւելի և աւելի պատիւ ձեռք բերել, նոր արտօնութիւնների տէր դառնալ և անդունդ գոյացնել մարդկանց մէջ, խտրութիւններ դնելով: Սոքա ո՛չ միայն չեն կամեցել որ «Աստծոյ կամքը կատարւի երկրիս վրայ, ինչպէս և երկնքում»—այլ և հրճւում են իրենց գոռոզութեամբ և իրենց նմաններին ստորացնելով:

«Ո՛չ, Սահմանադրութիւնը անպայման համաձայն է Աւետարանի ոգուն և դա է, որ նրանց կատաղեցնում է։ Ինչպէ՞ս կարող են հանդուրժել, որ ժողովուրդը ընտրի իր երէցն ու եպիսկոպոսը. ժողովուրդը, որ ազնուական—բան չի ճանաչիլ և ամենախոնարհին կը բարձրացնի բոլորից վեր. այնպէս, ինչպէս լինում էր սուրբ մարտիրոսների օրերով։ Նրանք կուզէին նշանակել ո՛չ թէ ժողովրդից, այլ օրինակ Պօմպադուրներից, Դիւբարիներից *) և դրանց նման ուրիշ պոռնիկ կանանց կողմից, որոնք միմիայն սիրուն շարժուածքներ, շնորհալի բարևներ, խոնարհութիւններ, մեծ անուն և ախորժելի բառեր են որոնում կրօնաւորների մէջ. պահանջներ, որոնցից ո՛չ մէկը չէ կարող գործադրել գիւղական ո և է քահանայ։

«Զէ՞ որ այդ աղտոտ աղբիւրից են դուրս նետել մեր Րօհան, Դուբուա և միւս բոլոր կարդինալները, որոնք նախատինք են կրօնի համար։ Ժողովուրդը կընտրէ՞ր այդպիսիների։ Բայց ո՛չ, հազա՛ր անգամ ոչ. նա նրանց որպէս աղբ դուրս կը նետէր, որովհետև քիչ ու շատ պարկեշտ մարդ նրանց տեսնելիս, անշուշտ դէմքը քողով պիտի ծածկի ամաչելուց...

«Լաւ ուրեմն, երբ Սահմանադրութիւնը յայտարարում է թէ այդպիսի անամօթներ ապագայում ո՛չ մի արժանիքի չը պիտի սպասեն, որ թշուառ ժողովուրդը ինքը պիտի ընտրի իր կրօնի պաշտօնեաները—նրանք զգում են, որ եկել է իրենց թագաւորութեան վերջը և նոր օրէնքը ջնջում է ամեն խայտառակութեան աղբիւր...

«Ու կատաղում են, գրգռում ժողովրդին, խառնակութիւն սերմանում ընտանիքների մէջ, ներքին կռիւ յառաջացնում... Չը յաջողելիս, պիտի տեսնէք, հրաւիրելու են Կոբլենցից, Վօրմսից և այլ կողմերից Աւստրիացիներին և Ռուսներին, որպէս զի նրանք նորից լծեն մեզ ու տան անամօթներին իրենց նախկին արտօնութիւնները...

«Բայց ես, որ միմիայն Աւետարանը գիտեմ որպէս օրինագիրք և Աստուած՝ որպէս տէր, ես պօլիտակա չեմ ճանաչում, ինչպէս մեր Տէր Յիսուսն ինքը չը գիտէր։ Գիւղական մի խեղճ երէց՝ միմիայն Տիրոջ խօսքերը պիտի լսեմ, նրա՛ն որպէս օրինակ պիտի վերցնեմ և ո՛չ թէ այդ գոռոզ եպիսկոպոսներին, որոնք ապրում են ինչպէս հեթանոսներ...

---

*) Լուի XV-ի և XVI-ի սիրուհիները, որոնց ձեռքն էր պետութեան ամբողջ ղեկը։ Իսկապէս նրանք անբարոյական յայտնի կանայք էին։

Ծ. Թ.

Այո՛, ես հնազանդւելու եմ միմիա՛յն Աւետարանին և երբէք չեմ դաշնակցի օտար թշնամիների հետ»...

Ասաց երէցը և բոլորովին գունատ՝ լռեց։

Եղբայրը և Լա Հուպը պարզեցին նրան իրենց ձեռքը. վերջինս ասաց.

—Լա՛ւ արիր, Քրիստոֆ. մենք ամենքս միմիայն Յիսուս-Քրիստոսի կողմը կը լինենք և կարդինալ Րօհանի դէմ... Տեսե՛լ եմ նրան, տեսել կանանց, ուրիշների կանանց հետ... Զզւելի՛ է այդ բոլորը...

Բոլոր լեռնականները խաչակնքեցին, մինչ ես սարսռում էի և վարպետ Ժանը դողում էր.

—Այո՛, տեսել ենք այդպիսի շա՛տ խայտառակութիւններ... Եւ եթէ ժողովուրդը դեռ կրօնասէր է մնացել, այդ անամօթները չեն, որ պիտի պարծենան... Բան է, եթէ կարծում են որ իրենց հրամաննե՛րն էլ Աւետարանի խօսքերի տե՛ղ ենք ընդունում—չարաչա՛ր սխալւում են...

—Անշուշտ, ասաց հայր Քրիստոֆը—նրանք արդէն կորցրել են իրենց յարգանքը. սակայն, ասում եմ ձեզ, պիտի տեսնէք որ նոքա շուտո՛վ երդում տւող երէցներին պիտի ամբաստանեն և դասալիք անունով կոչեն։ Շա՛տ նեղութիւններ պիտի տեսնենք մենք, սակայն նոյն իսկ եթէ ամենքն ինձնից հեռանան—հայր, մայր, եղբայր, քոյր ու բարեկամներ—նոյն իսկ ամենքը, ես կը գնամ իմ Աստծոյ հետ. թող խիղճս հանգիստ լինի և մնացածը փոյթս չէ... Իմ ամբողջ ցանկութիւնն այն է միայն, որ այդ խայտառակների պօլիտական պատճառ չը դառնայ մեր թագաւորի, դժբախտ թագուհու և շրջապատողների կորստեան, յառաջ բերելով ներքին աղետաբեր կռիւներ... Եթէ ժողովուրդի սանձը կըտրւի մի անգամ, նա չերևակայած սարսափներ կարող է կատարել։ Ու եթէ արիւն շա՛տ հոսի—մեղքը նրանցն է. որովհետև արգելելով երէցներին երդւելու, նրանց կասկածելի են շինում ազգի առաջ, խորթացնում իրենց հօտից, սովորեցնում ազնիւ մարդկանց՝ մտածելու, որ կրօնը թշնամի է ու վա՛տ թշնամի ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան... Աստուած գիտէ թէ որպիսի՜ խառնակութիւններ կարող են յառաջանալ այդ բոլորից...

Այդպէս խօսեց այդ պատւական մարդը։ Եւ, երկու տարի յետոյ, 93-ին, երբ տեսնում էի գլխատման տեղը հանելիս սայլերով լի կանայք, ծերունիներ, քահանաներ, բուրժուաներ, գործաւորներ ու գիւղացիներ—քանիցս ասում էի ինքն իրենս.

—Ահա եպիսկոպոսների և ազնուականների պօլիտական, որ մարդկանց տանում է դէպի պատժարան...

Կարդինալ Ռօհանը, Կոմս դ'Արտուան և իր բարեկամները այն ժամանակ Ռէն գետի միւս ափումն էին և հեռուից դիտում ու երբէք չէին մտնում Վանդէ կամ հարաւային Ֆրանսիա, ուր անհնազանդ երէցները քաջաբար քայլում էին ապստամբ գիւղացիների գլուխն անցած։

Անշուշտ մտածում էին նրանք, թէ որքան յիմար են այդ մարդիկ, որ կռուում են՝ իրենց նման սրիկաների համար։ Եւ այդ ճիշտ էր։ Արևմտեան գաւառների գիւղացիք համարձակ կարող էին իրենց դրօշի վրայ գրել «Ստրկութիւն, տգիտութիւն և չքաւորութիւն» բառերը, որովհետև այդ իսկ սկզբունքները պաշտպանելու համար էր, որ կռւի էին ելել։

Երկու-երեք անգամ Կոմս դ'Արտուան յայտնել տւաւ, որ պիտի գար Վանդէեան ապստամբների գլուխն անցնելու. մինչև իսկ մի անգլիական նաւով ափին մօտեցաւ. սակայն երբ գիւղացիք ոտքի ելան ու ամեն ինչ հրդեհում էին, երբ հասարակապետական թնդանօթները որոտացին—այդ քաջ մարդը իսկոյն ետ գնաց և թողեց որ թշւառ գիւղացիք մենակ կռւէին իր երկնաւոր իրաւունքների համար։

Այս բոլորը պիտի պատմեմ ձեզ յետոյ և պիտի տեսնէք, որ այդ անամօթի նման ցածահոգի արարած դեռ չէ ծնել աշխարհումս։

Այդ օրւայ մասին, երբ հայր Քրիստոֆը երդւեց, մնում է ասել, որ երկար նստած՝ խօսեցինք ազգային գործերի վրայ, յետոյ ցրւեցինք։ Սոսկալի ցուրտ էր անում, սակայն վարպետ Ժանը ուրախ-զւարթ քայլում էր կողքիցս ու ասում.

—Բանը լաւ գնաց. կապուցինների քիթը լաւ տրորւեց. այժմ արդէն Պիքէհօլցի իմ հողերն աւելի թանգացան...

Իսկ ես խորհում էի հայր Քրիստոֆի խօսքերի վրայ և ուրախութեամբ նախազգում, որ ապագան մռայլ ու արիւնալից էր լինելու։

V

Երբ միևնոյն մեծ փոփոխութիւններ տեղի ունեցան մեր դարբնոցում և ինձ անհրաժեշտ է մանրամասն պատմել նրանց մասին։

Վալենտինը, որ յեղափոխութիւնից առաջ այնքան ուրախ և զւարթ բնաւոր ու ընկեր էր մեզ, Երեսփոխանական ժողովներից ի վեր քանի գնում՝ մռայլւում էր և թթւում։ Ամեն անգամ, երբ

երեկոները միասին նստած իր բնակարանում, մեր դըրացի Ռիգօի տանը, խօսակցում էինք—նա անդադար գանգատւում էր վարպետ Ժանի «անմտութեան» և գոռոզութեան վրայ և ձեռքերը բարձրացնելով՝ կանչում.

—Այդ մարդը քանի գնում՝ այնքան յիմարութիւններ է խօսում. երազածը միմիայն կօշկակար—հրամանատարներ են, փայտահատ իշխաններ, այլև երեսփոխան—վարպետ Ժաներ։ Իրա նըման հայրենասիրի համար ոչինչ մեծութիւն չը կայ. կարծում է թէ արդէն տէր է դարձել Նորին Սրբութիւն Կարդինալ-եպիսկոպոսի անտառներին։ Ո՛չ բանադրանքն է նրան անհանգիստ անում, ո՛չ թագաւորի անհամար զօրքը և ո՛չ էլ ամբողջ քրիստոնէութեան օգնութիւնը...

Դարբնոցումն իսկ, փոխանակ առաջւայ նման լուռ մնալու, սկսել էր դառնութեամբ ծիծաղել և երբեմն նոյն իսկ սուր և կըծու խօսքեր նետել Ազգային Ժողովի, քաղաքացի պահակների և ազգի հետ համերաշխ գործողների հասցէին։

Վարպետ Ժանը շատ նեղանում էր, երբ լսում էր այդ խօսքերը և չէր կարողանում ազատօրէն աղաղակել ընդդէմ ազնւականների և եպիսկոպոսների։ Հնար եղածին չափ զսպում էր իրեն, բայց նոր լուրեր ստացած օրերը, լաւ ուռեցնելուց յետոյ թշերը, էլի աղաղակում էր.

—Ա՜հ սրիկաները... ա՜հ խաբեբաները...

Եւ ոչ ոքի անունը չէր տալիս։

Վալէնտինն ի հարկէ լաւ էր հասկանում, որ այդ հայհոյանքները ուղղւած էին եպիսկոպոսներին կամ ազնւականներին, դրա համար ինքն էլ նոյն կերպ, առանց անունը տալու ասում էր.

—Իրաւունք ունիք, վարպետ, ամեն տեսակ սրիկաներ ու խաբեբաներ պակաս չեն աշխարհումս։

Վարպետ Ժանը խէթ-խէթ նրան էր նայում ու գոչում.

—Ո՛չ էլ անասուններ։

Եւ Վալէնտինը պատասխանում էր.

—Անշուշտ. մանաւանդ այնպիսիները, որոնք իրենք-իրենց խելօք են կարծում. նրանք աւելի անպիտան են։

Եւ այսպէս շարունակւում էր երկար։ Տեսնում էի որ վարպետ Ժանը բարկութիւնից կաս-կարմիր էր կտրում, իսկ Վալէնտինը գունատւում։

—Անշուշտ պիտի իրար կոկորդից բռնեն այժմ. մտածում էի ես։

Սակայն մինչև հայր Քրիստոֆի երդման օրը, այդ բոլոր վէճերը վերջանում էին առանց արկածի։

1791 թիւ յունուարին, ամեն օր նորանոր լուրեր էին հասնում մեզ։ Երբեմն իմանում էինք, որ այսինչ գիւղի երէցն էր երդուել, երբեմն միւս։ Յետոյ իմացանք, որ Միտտելըրօնի հայր Դիւսաբլը անցել է Ֆայլցբուրգի չերդուող հայր Օտտի տեղը, իսկ Ազգային Ժողովի բոլոր քահանաները, Գրէգուար վարդապետի առաջնորդութեամբ, նորոգել էին երդումը և այլն և այլն։

Վարպետ Ժանը երբ լսում էր այդ բոլորը, ոգևորւում էր, քէֆը գալիս և հնչեղ ձայնով երգում «Ça ira... Ça ira...», մինչ Վալենտինն աւելի մռայլւում էր։

Կարծում էի թէ վախենում էր վարպետից, դրա համար էլ չէր համարձակւում բարկութիւնը արտայայտել։

Սակայն մի առաւօտ յանկարծ լուր ստացանք, որ չը նայելով Պապի արգելքին, Օտէօնի եպիսկոպոս Տալլէյրան-Պերիգօրը, նոր, երդւած եպիսկոպոսներ էր ձեռնադրելու երկրի համար։

Վարպետ Ժանը այնպէս ուրախացաւ, որ սկսեց աղաղակել.

—Բայց այդ Տալլէյրանը Քրիստոսի իսկական առաքեա՛լ է. նա՛ էր դարձեալ, որ առաջարկեց ծախելու կղերականութեան կալւածները. նա էր որ պատարագ արաւ Մարսի դաշտում, Հայրենիքի սեղանի վրայ, դաշնակցութեան օրը... և ահա այժմ թող փառաւորւի նա մինչև երկինք, որ մտածել է ձեռնադրել նոր եպիսկոպոսներ՝ երդւող ազգայիններից։ Այդ մարդը արժանի է մե՜ծ յարգանքի. երդումից խուսափող բոլոր եպիսկոպոսներն էշե՜ր են նրա դիմաց...

Յանկարծ Վալենտինը, որ մինչև այդ՝ լսում էր հանդարտութեամբ և միւս կողմից դարբնում—մի ոստիւն գործեց դէպի վարպետ Ժանը, դէմքը մօտեցրեց նրա դէմքին ու աղաղակեց կատաղի ձայնով.

—Ինձ համա՞ր էք ասում այդ բոլորը, յատկապէս ինձ նախատելու համար, չէ՞... Լաւ ուրեմն, լսեցէք. ձեր այդ Տալէյրան Պերիգորը ամենաստոր Յուդա է. լսո՞ւմ էք, Յո՛ւդա։ Եւ նրանք, որ փառաբանում են նրան, նո՛յնպէս Յուդաներ են...

Եւ երբ վարպետ Ժանը զարմացած՝ մի քայլ ետ էր քաշւել—աւելացրեց նո՛յնպէս կատաղի.

—Ա՛հ, էշե՜ր... մեր եպիսկոպոսները էշե՜ր են... Էշը դո՛ւք էք, այո՛... սնապա՛րծ, լի գոռոզո՛ւթեամբ և յիմարո՛ւթեամբ...

Լսելով այդ խօսքերը, վարպետ Ժանը երկու ձեռքը պարզեց նրան խեղդելու մտքով, բայց Վալենտինը ձեռքում բռնած կռանը բարձրացրեց ու գոռաց.

—Չը կպչէ՛ք ինձ...

Սոսկալի էր դէմքը. և, եթէ ամենայն արագութեամբ երկու-

սի մէջ տեղը չը մտնէի, մեծ դժբախտութիւն պիտի յառաջանար։

—Յանուն Աստծոյ, վարպե՛տ Ժան, Վալե՛նտին. ասացի նըրանց—մտածեցէք թէ ի՛նչ էք ուզում անել...

Երկուսն էլ դժգունեցան։ Վարպետ Ժանը ուզեց խօսել, բայց չէր կարողանում... բարկութիւնը խեղդել էր ձայնը։ Իսկ Վալենտինը շպրտեց կռանը մի անկիւն և ասաց.

—Վերջացա՛ւ այլևս... Երկու տարուց ի վեր բաւակա՛ն դիմացայ... Փնտռէ՛ք ձեզ ուրիշ ընկեր։

—Այո՛. խօսեց վերջապէս վարպետը բարկութիւնից դողդոջուն—այո՛, հերի՛ք է այլևս ձեզ նման ազնւականի հետ ապրելը...

Բայց Վալենտինն իսկոյն վրայ տւաւ.

—Իմ հաշիւս վերջացրէ՛ք. տւէ՛ք նոյնպէս 15 տարի ձեզ մօտ աշխատած լինելուս վկայական... լսո՞ւմ էք... վատ կամ լաւ, տւէք այդ վկայականը և տեսնենք ձեզ նման հայրենասէրը ի՛նչ կարող է ասել ինձ նման մի ազնւականի դէմ։

Եւ իսկոյն դուրս գնաց՝ տանելով վերարկուն, որի թևերը հագաւ փողոցում և մտաւ իր բնակարանը։

Վարպետ Ժանը մնաց բարկութիւնից դողալով։

—Վա՜տ սրիկայ... մռմռաց նա։

Ու մի քանի րոպէից յետոյ, հարցրեց ինձ.

—Այսպիսի անասունին ի՞նչ կասես, հը՞, Միշէլ։

—Անշուշտ, խենթ է. ասացի նրան—բայց լաւ մարդ է, պատւական ընկեր և վարպետ գործաւոր։ Յանցաւոր էք, որ այդքան երկար բարկացնում էիք նրան, վարպե՛տ Ժան։

—Ինչպէ՜ս, յանցաւո՞ր եմ. աղաղակեց նա։

—Անշուշտ. կորցրիք այժմ մի լաւ ընկերոջ. մի մարդ, որ սիրում էր ձեզ։ Կորցրիք ձե՛ր իսկ սխալո՛վը. չը պէտք էր այդքան ծայրահեղութեան հասցնել...

Բոլորովին զարմացած ինձ նայեց պահ մի, յետոյ ասաց.

—Բայց ես եմ այստեղ տէրը... Եւ եթէ այսպէս, ինձ նման տէր չունենար՝ կը տեսնէր իր վիճակը... Ինչ որ է, դու մտածել ես խօսում անկեղծօրէն, Միշէլ, և դա լաւ է... Ցաւում եմ եղածի վրայ... սակայն եղածը եղաւ... Կարո՞ղ էի արդեօք մտածել, որ այդպէս յիմար գոյութիւն կունենայ աշխարհումս...

Տեսնելով որ զղջում էր, առանց այլևս ոչինչ ասելու, վերարկուս հագայ և վազեցի Րիգօի մօտ, որ աշխատեմ մի կերպ գործը քաղցր տեղը կապել, որովհետև սիրում էի Վալենտինին և ինձ թւում էր թէ առանց մէկ-մէկու ապրել չէինք կարող։

Վարպետ Ժանը հասկացաւ մտադրութիւնս։ Թոյլ տւաւ ինձ գնալու և ինքը պանդոկ մտաւ։

Ռիգօի տան դուռը բանալիս՝ տեսայ որ Վալէնտինն այնտեղ էր և երկու ծերունիներին պատմում էր եղածը. նրանք էլ շփոթւած ու տխուր՝ լսում էին։

Միջահատեցի պատմութիւնը ու ձայնեցի.

—Ո՛չ, Վալինտի՛ն, չը պիտի հեռանաք մեզնից, անկարելի՛ է. պէտք է մոռանալ եղածը... վարպետ Ժանն էլ արդէն զղջում է։ Մի՛ կարծէք որ բարկացել է ձեզ վրայ. ընդհակառակն, նա ձեզ սիրում է, գնահատում. ապահո՛վ եմ այդ մասին։

—Ի՞նչ օգուտ դրանից. պատասխանեց Վալէնտինը—Երեսփոխանական ժողովից առաջ ես էլ սիրում էի այդ մարդուն։ Բայց, այն օրւանից ի վեր, երբ նա, օգտւելով ժամանակի վատութիւնից, եկեղեցական կալւած գնեց—իմ աչքումս աւազակ դարձաւ... Եւ յետոյ—աւելացրեց բռունցքով սեղանը հարւածելով —ինձ զայրացնում է նրա այն գոռոզութիւնը, որ կարծում է թէ մարդիկ հաւասա՛ր են... Յիշեցէ՛ք խօսքերս. ագահութիւնը նրան կործանելու է. սենք արժանի՛ էլ է դրան։ Քեզ, Միշէլ, ես չեմ մեղադրում. չար բախտը քեզ ձգեց Շօվէլի և Ժանի նման մարդկանց շրջանում. քո մեղքը չէ՛ այդ... Եթէ ամեն ինչ առաջւայ նման գնար. նախկին լաւ ժամանակները մնացած լինէին. 4—5 տարուց յետոյ կը գնէի քեզ համար մի դարբնոց—կօգնէի քեզ գնելու, որովհետև Պֆալցբուրգում, նոտար Բուալօի մօտ պահ տւած ունիմ 1500 լիվր փող... Այո՛, յետոյ մի քրիստոնէուհու վրայ կամուսնանայիր և միասին կսկսէինք աշխատել... Քո ընտանիքում և քո որդիների մէջ ծեր դարբինը հանգիստ ու սէր կը գտնիր...

Վերջին խօսքերն ասելու ժամանակ նա յուզւեց և ես նորից սկսեցի համոզել նրան.

—Ո՛չ, Վալէնտի՛ն, դուք չէք հեռանալ, անկարելի՛ է։

Բայց նա ձեռքերովը տրորեց աչքերն ու ասաց հաստատուն ձայնով.

—Այսօր հինգշաբթի է. ուրեմն վաղը չէ միւս օրը—շաբաթ, լուսաբացին ես կը մեկնեմ, կը հեռանամ այստեղից։ Մարդ պիտի իր խղճի թելադրածն անի. մեղք և մինչև իսկ յանցանք է ապրել մի մառանում, ուր ամեն րոպէ կարող ես հոգիդ կորցնել... Արդէն շա՛տ վնասներ եմ կրել. վաղո՛ւց պէտք էր մեկնել, բայց սովորութեան թուլութիւնը բռնում էր ինձ... Այժմ ամեն ինչ վերջացաւ և ես գոհ եմ։ Կասես վարպետ Ժան լէրուին, որ ամեն ինչ թող պատրաստ լինի մինչև վաղը երեկոյ—հաշիւս և վկայականս. լսո՞ւմ ես. ինքս այլև խօսել չեմ ուզում նրա հետ. պիտի կարծի թէ կարող է դեռ համոզել ինձ, կարող է դարձի բերել...

Ասաց և անցաւ իր սենեակը։ Գլխիկոր դուրս գնացի և շատ տխուր դէմքով պանդոկ վերադարձայ, ուր ճաշն արդէն պատրաստ էր մեծ սրահում։ Մօրքուր Կատերինն օգնում էր աղախնին, բայց շատ մտախոհ էր. ըստ երևոյթին վարպետ Ժանն եղածը պատմել էր նրան և այժմ մեծ քայլերով ճեմում էր վեր ու վար, ձեռքերը մէջքին, գլուխը կոր։

—Հը՞. արեց նա։

—Ոչինչ, վարպե՛տ Ժան. շաբաթ օր մեկնելու է առաւօտ շուտով. խնդրեց ինձ յայտնելու ձեզ, որ իր հաշիւները մաքրէք մինչև վաղը։

—Լաւ. իր մի ամսականն ունի ստանալու—60 լիվր. պատրաստ է. վկայականն էլ կը գրւի, քանի որ ուզում է գնալ։ Բայց գնա և ասա նրան, որ ոչինչ չունիմ իր դէմ և հրաւիրում եմ ճաշի գալու. չենք խօսիլ ո՛չ աղաների, ո՛չ կապուցինների և ո՛չ էլ հայրենասէրների մասին... գնա՛ յայտնիր նրան այս իմ կողմից։ Ասա, հասկացո՞ւր, որ մեզ նման երկու ծեր ընկերներ կարող են բաժանւելուց առաջ միմեանց ձեռքը սեղմել, մի լաւ շիշ գինի էլ միասին կոնծել, առանց նոյն իսկ համամիտ լինելու քաղաքականութեան մէջ։

Տեսնում էի որ կնքահայրս վատ էր զգում իրեն. չը համարձակւեցի յայտնել թէ իր ընկերը խօսել իսկ չէր ուզում նրա հետ։

Այդ իսկ րոպէին հէնց, Վալէնտինը մեր լուսամուտների առջևից էր անցնում, մի փայտ ձեռքին, դէպի քաղաք։ Գնում էր երևի իր փողն առնելու նոտարից։

Վարպետ Ժանը բաց արաւ մի լուսամուտ և կանչեց նրան.

—Վալէնտին... էյ, Վալէնտի՛ն...

Բայց նա գլուխն իսկ չը դարձրեց և շարունակեց ճանապարհը։ Վարպետ Ժանը բարկացաւ։

—Ա՛հ, անպիտանը լսել անգամ չի ուզում. ասաց նա լուսամուտը փակելով—ախմախ մարդ է... Սխալւած էի... Զղջում էի որ շատ տաքացայ, բայց այժմ գոհ եմ... Ա՛հ, վա՛տ ազնւական, ինձ լսել անգամ չես ուզում, հա՞...

Յետոյ մատով ցոյց տւաւ անկիւնի գրասեղանը և ասաց.

—Նստիր այնտեղ, Միշէլ, թելադրեմ քեզ նրա վկայականը։

Կարծում էի թէ պիտի վատ վկայական տար ձեռքը և թոյլ տւի ինձ առարկելու, որ թողնէր ճաշից յետոյ, հանգիստ ժամանակ։

—Ո՛չ, ո՛չ. արեց նա խստութեամբ—թող իսկո՛յն վերջանայ, որ այլևս այդ մասին մտածելու երբէք պէտք չունենանք։

Ստիպուած՝ նստեցի։ Վարպետ Ժանը, չը նայելով բարկութեան, թելադրեց գրելու նմանը չը տեսնուած գովասանական վըկայական, ուր ասւում էր, թէ Վալէնտինը շատ լաւ գործաւոր էր, լաւ մարդ, հաւատարիմ, մաքուր և անձնանւէր. որ ցաւում էր շատ՝ նրանից բաժանւելով, բայց մասնաւոր գործերը ստիպել էին զրկւել այդ ընկերից. որ յանձնարարում էր նրան բոլոր վարպետ դարբիններին՝ որպէս մի տիպար գործաւոր։

Երբ գրել էի, խնդրեց որ կարդամ։

—Լաւ է. ասաց նա ստորագրելով—այս երեկոյ կը տանես իրեն և կամ վաղը։ Փողն էլ հետդ առ և թող հաշւի ու մի ստացական տայ։ Եթէ բան է, խնդրի քեզ ճանապարհ դնելու իրեն, ինչպէս դա սովորութիւն է ընկերների մէջ—ամբողջ շաբաթ օրը ազատ եմ թողնում քեզ։ Նստենք այժմ ճաշելու։

Ամբողջ օրն այնուհետև անցաւ առանց նորութիւնների։ Վալէնտինը չերևաց գիւղում։ Միւս օրը միայն գնացի տեսնելու նրան իր բնակարանում։ Կարգի էր դնում իր թռչունների վանդակները։ Տւի վկայականը, որ կարդաց ու առանց խօսելու՝ գըրպանը դրաւ, յետոյ հաշւեց փողը և ստացական տւաւ։

—Այժմ ամեն ինչ կարգին է. ասաց նա։ Քեզ և փոքրիկ եղբօրդ—Էտիէնին եմ ընծայում բոլոր իմ թռչունները, վանդակները ու թռչունների համար կիտած հատիկները։ Արէք ինչ կուզէք։

Շնորհակալ եղայ արտասւալից աչքերով թէ իմ և թէ Էտիէնի կողմից։

—Ինձ ճանապարհ դիր վաղն առաւօտ ժամը 8-ին, մինչև Սավէրն. ասաց նա—Այնտեղ մենք կը բաժանւենք. վարպետ Ժանը չի կարող մերժել քեզ այդ։

—Ո՛չ, ասացի ես—ամբողջ օրը ազատ է թողել ինձ հէնց դրա համար։

—Ընկերների մէջ սովորութիւն է այդ. խօսեց նա—Այսպէս ուրեմն, վաղը ժամը ճիշտ 8-ին ճանապարհ կընկնենք։

Եւ յիրաւի միւս առաւօտ շուտով, միասին դուրս գնացինք գիւղից։ Ճանապարհորդական պարկը ես էի տանում, իսկ նա իմ հետքերի վրայովն էր քայլում ծանր, կռթնած իր փայտի վրայ։ Խեղճը, թէև բազուկներով ուժեղ էր, բայց սրունքները շուտ էին յոգնում։

Չեմ մոռանալ այդ օրը. ո՛չ թէ որովհետև արտասովոր թանձրութեամբ ձնի միջից էինք գնում և կամ տեսանք լեռնակողից Ալզասը մինչև Րէն գետը իր գիւղերով և անտառներով—այլ որովհետև Վալէնտինը տարօրինակ բաներ ասաց ինձ, երբ հասել

էինք «Կանաչ-ծառ» կոչւած տեղին և նստում էինք քիչ շունչ առնելու։

Այդտեղ կար շինած մի փոքրիկ ճաշարան, ուր սովորաբար հանգստանալու էին կանգնում սայլապանները. սակայն, յունվարի այդ ցրտերին, ոչ ոք չէր յանդգնիլ անցնել այդ ճանապարհով։

Փոքրիկ խրճիթը մայրի ծառերի տակ, զառիվայրի ծայրում, գրէթէ կիսովին թաղւած էր ձիւնի մէջ։ Միայն նեղ շաւիղն էր տեսնւում, որի վրայով հազիւ երկու—երեք հոգի էին անցել երէկւանից ի վեր. յետոյ՝ փոքրիկ լուսամուտներ, վրայի ապակիները աւելով քիչ մաքրած։ Եթէ տանիքից ելնող ծուխը չը տեսնէինք, մարդ չէր կարծիլ թէ այդտեղ կեանք կարող էր լինել։

Երբ ներս մտանք, օջախի մօտ քնած գտանք մի պառաւի, ոտքը ճախարակին կռթնեցրած։ Պէտք եղաւ զարթեցնել։ Միայն գերմաներէն էր խօսում. ամուսինը Սավէրն էր գնացել պաշարեղէն բերելու։ Մեզ գինի, մի կտոր հաց և քիչ էլ պանիր բերեց։

Վալէնտինը պարկը դրաւ նստարանի վրայ և նստեց կողքին, փայտն էլ ոտների մէջ առած։ Տեղ բռնեցի նրա դիմացը, իսկ պառաւը նստեց ճախարակի մօտ, մի երկու պտոյտ տւաւ ու նորից քնեց։

—Այստեղ կը բաժանւենք, ասաց Վալէնտինը — կենացդ, Միշէլ։

—Ձեր կենացը. պատասխանեցի տխրութեամբ։

—Այո. արեց նա ծանրադէմ, երբ խմել էր—այժմ ես գոհ եմ և խիղճս հանգիստ. հեռանում եմ այս անպատիւ երկրից. առել եմ գաւազանս և հետևում հոգուս փրկութեան ճանապարհին։ Վաղո՛ւց պիտի անէի այս բոլորը։ Մեղաւոր եմ որ այսքան երկար մնացի բաբելոնական կապերի մէջ. մեղաւո՛ր եմ, խոստովանում եմ... Մեղա՛յ, մեղա՛յ և մեղա՛յ... Սովորութեան թուլութիւնն էր պատճառը...

Ու մի քանի րոպէ այսպէս շարունակեց նա։ Կարծում էի թէ մայրս էր դիմացս, որ երբ վերադառնում էր անհնազանդ երէցների պատարագից լեռներում, նոյն ձևով էր խօսում։ Կապուցին Էլէօնօրն էր խօսում դրանց բերանովը։

Վերջ ի վերջոյ բարձրացրեց նա իր ձեռքերն ու աղաղակեց.

—Ողորմութեան ժամը հասել է... Ներիր յանցաւորիս... ճշմարիտ է, ուշ եմ գալիս դէպի քեզ, Աստւած իմ, բայց չափազանց ուշ չէ... Մեծ է ողորմութիւնդ, ամենագո՛ւթ Աստւած...

—Ո՞րտեղ էք գնալու այժմ, Վալէնտին. հարցրի ես։

—Քեզ... սկսեց նա և զննողաբար նայեց, կարծես համոզւել կամենալով որ կարելի էր հաւատալ ինձ—քեզ ես կարող եմ ասել

թէ ուր եմ գնում... Քո սիրտը մեզ հետ է, թէև ինքդ այդ չես խոստովանում. ուրիշներն են մոլորեցրել քեզ... Ոչ ոքի պէտք չէ ասել սա... նոյն իսկ եթէ ասես էլ, փոյթս չէ։ Ինչ որ գրուած է՝ գրուած է. Բաբելոնի աւերման օրը հասել է. առաջ քան այս ձիւնը հալի—իւրաքանչիւր ոք ըստ իւր գործոց պիտի վարձատրուի... Քեզ քո կեանքը կը շնորհեն. այո՛, դու ազատ կը մնաս... բայց, այդ ծառերը—նայիր այդ ծառերին, Միշէլ—ծուելով գետնին պիտի կպչեն իրենց վրայից կախուած հայրենասէրների դիակներից. ճիւղերը պիտի կոտրուեն ծանրութիւնից...

Վալէնտինի այդ հին, հարիւր անգամ կրկնուած յիմարութիւնները ձանձրոյթ պատճառեցին ինձ։

—Անշուշտ, Վալէնտին, ասացի ես—հաւատում եմ քեզ, հաւանական է. բայց առ այժմ դուք գնո՞ւմ էք ո և է տեղ։

—Մայեանս եմ գնում. ասաց նա, նայելով քնող պառաւին—գնում եմ միանալու մեր բարի իշխաններին և ամենից առաջ Աստծոյ սիրելի կոմս դ՚Արտուային։ Նրա վրայ են դրուած մեր բոլոր յոյսերը։ Մայեանսից մենք կը քայլենք Լիօնի վրայ և նա կը դառնայ պետութեան մայրաքաղաքը, որովհետև միւսը—Փարիզը պղծուել է և նրա քարը քարի վրայ չի մնալու... Զօրապետ Բանդէրը արդէն խելքի է բերել Բելգիայի և Հոլանդիայի հայրենասէրներին. այժմ հերթը եկել է պղծուած Ֆրանսիայի հայրենասէրներին և դու պիտի տեսնես, Միշէլ, թէ ինչպէ՛ս ձիաւոր գունդը, հետևակները, թնդանօթներն ու հուսարները յառաջ կը խաղան միասին և երկիր կը մտնեն Սավօյայի կողմից, Լիէժի կողմից, Զւեցերիայից և Սպանիայից... Մեր իշխանները մեր առջևից կերթան, ազատելու համար այն խեղճ մարտիրոսին (Թագաւորին) որ տանջւում է մեր մեղքերի համար... Այն ժամանակ խաղաղութիւն հնազանդներին, խաղաղութի՜ւն խոնարհներին և հպատակներին, սակայն պատերա՜զմ այն գոռոզների դէմ, որոնք համարձակւում են գլուխը բարձր պահել... կռի՜ւ հակաքրիստոսների (antechrists), գողացուած կալուածները գնողների դէմ... Ո՛չ մի շնորհ Ժան Լէրուներին, Լէտիւմիէներին և Ժլօֆ Կօլլէններին... Նրանց կախելու չուանն արդէն պատրաստ է... Դու վախենալու ոչինչ չունիս, Միշէլ. դու մի լա՛ւ որդի ես, որ խնամում ես ծնողներիդ. շատ լաւ է այդ... ոչինչ, բանիմացութիւնը շուտով կը գայ և կը տեսնես որ սխալուած ես... Միայն թէ, երբ մեր իշխանները Մէցի կողմից Ալզաս մտնեն, պէտք չէ միւսների հետ նրանց դէմը կռուելու ելնել։ Ապստամբներին չի խնայուիլ. ո՛չ մէկին, ասողը ես եմ։ Նորին Պայծառափայլութիւն Կոմս դ՚Արտուան ամեն ինչ արդէն կարգի է գրել.., Տեղիցդ չը շարժուես. թող որ

Լէտիւմիէն, Կոշարը, վարպետ Ժանը գնան... Զինուորները դէպի նրանց պիտի դարձնեն իրենց սրերը, որովհետև բոլորն էլ մեր իշխաններին կողմնակից են... Ամենից առաջ կերթանք անարդարութեան Բաբելոնը (Փարիզը) ոչնչացնելու, ջնջելու այդ անառակ սրիկաներին...

Մինչ խօսում էր այդպէս, նայում էի նրա հաստ գլխին և մտածում.

—Որպիսի՜ դժբախտութիւն... խեղճ բարեկամս, թռցրել ես խելքդ...

Եւ անվրդով՝ պատասխանեցի.

—Մայեանս էք գնում ուրեմն. լաւ, բայց ի՞նչ ունիք այնտեղ. դուք խօ զինուոր չէ՞ք... Եւ յետոյ, այդ տարիքո՞վ...

—Ա՛հ, գոչեց նա—գործ չի պակսիլ. տեղս արդէն նախօրօք որոշուած է. ձիաւոր գնդի մէջ դարբին պիտի լինեմ և հոգւոյս փրկութեան համար գործեմ։

Այլևս ոչինչ չասացի և որովհետև շիշը դատարկուել էր, սեղանը բախեցի՝ մի ուրիշը պահանջելու համար։ Բայց Վալէնտինը չը կամեցաւ։

—Ո՛չ, Միշէլ, ասաց նա—բաւական է. մի բաժակ գինին լաւ է, բայց երկու բաժակը վնասակար։

Յետոյ պարկը կոճկեց, վճարեց գինու համար և դուրս գնացինք։

Դրսում Վալէնտինը տարածեց իր երկար բազուկները և մենք գրկեցինք։ Դրանից յետոյ խեղճը Սէն-Ժան-Դէ-Շուի կողմն իջաւ՝ Վիսսեմբուրգ գնալու համար։ Մի քանի րոպէ նայեցի ետևից. մտնում էր ձիւնի մէջ և աշխատում էր երիտասարդական քայլեր անել։

Մտախոհ՝ գիւղ վերադարձայ։ Վալէնտինի ասածներն անշուշտ խենթութիւններ էին։ Չը գիտէի այդ ժամանակ, որ Եւրոպայի ազնուականներն ու թագաւորները մի տեսակ ծածուկ դաշնակցութիւն էին կազմել, որոնց անդամները ո՛չ ֆրանսացի, ո՛չ գերմանացի և ո՛չ էլ ռուսներ էին կոչւում իրենք-իրենց, այլ ազնուականներ, որոնք պիտի ձեռք տային միմեանց՝ ժողովրդին միշտ լուծի տակ պահելու նպատակով։

Այդ գաղափարն ինձ հրէշաւոր էր թւում և չէի կարողանում հաւատալ։

Կէսօր էր, երբ պանդոկ հասայ։

—Ա՛հ, եկա՞ր. ասաց կնքահայրս — լաւ է, հասար ճաշի։ Գնա՞ց...

—Այո՛, վարպետ Ժան։

—Ո՞ր կողմը։

Շփոթւեցի. չը գիտէի ինչ պատասխանել։ Բայց նա պէտք չունեցաւ պատասխանիս։

—Լաւ, արեց նա աչքը թարթելով—գիտենք. գնաց Կոբլենց, փախստականներին միանալու... Առաջուց գիտէի այդ։

Եւ նստելով՝ աւելացրեց.

—Ուտենք և այլևս չը մտածենք այդ յիմարի վրայ։

Ճաշի ընթացքում նա զւարթացաւ։

—Ահա այժմ մենակ մնացինք, Միշէլ, ասաց նա—այսուհետև մեր ուզածին չափ կարող ենք երգել և խօսել ամեն ինչ։ Բայց ամենից առաջ հարկաւոր է նոր միջոցներ ձեռք առնել։ Գոհ եմ քեզնից, դու միշտ օգտակար ես եղել ինձ։ Ի հարկէ, որպէս գործաւոր, Վալէնտինի արժանիքը չունիս, որովհետև, պէտք է արդար լինել, շատ լաւ վարպետ էր նա։ Բայց խելքի և առողջ դատողութեան կողմից, դու հազար անգամ աւելի արժես քան նա... Մենք միշտ համերաշխ կը մնանք։

Եւ երբ ճաշը վերջացած՝ ուզում էի ելնել, ձեռքն ուսիս դրաւ ու ասաց.

—Նստիր դեռ, խօսելիքներ ունենք։ Կատերին, մի շիշ գինի բեր. այսօր պիտի ամեն ինչ որոշւի և վերջանայ։

Մօրքուր Կատերինը դուրս գնաց։ Զարմացել էի վարպետ Ժանի այդ աստիճան լաւ տրամադրութեան վրայ։ Զգում էի որ ախորժելի բաներ էր ասելու ինձ։

Երբ գինին բերեց մօրքուր Կատերինը, խոհանոց մտաւ Նիկօլին օգնելու և մենք մենակ մնացինք մեծ սրահում։

—Մեզ խանգարող չի՛ լինիլ. ասաց կնքահայրս՝ լցնելով բաժակները—այսպէս ձիւնոտ եղանակին էլ պանդոկ եկող դժւար գտնւի։

Յետոյ, երբ խմել էր, մտախոհ դէմքով աւելացրեց.

—Պիտի գիտենաս, Միշէլ, որ Պիկհօլցի իմ հողերը Լիկտհէյմի շրջանի ամենալաւ հողերն են։ Ամեն կողմից տեսայ նրան, երբ վերջերս գնացել էի այնտեղ։ Ուժեղ հող է. կաւախառն աւազոտ. պէտք է որ շատ էլ բեղմնաւոր լինի, սակայն վանքի դատարկապորտները ամեն ինչ թողել են փչանալու. գետը հեղեղել է, մարգագետինները ճահիճ են կտրել, ջրային առւակներ և փշոտ խոտերի թուփեր ծածկել են ամեն կողմ և անասուն իսկ արածել չէ կարող։ Դժւար չէր, ի հարկէ, ջրի առաջը մաքրել տերևներից ու տարիներով կուտւած աղբից. սակայն այդ պորտաբոյծ վարդապետները ուշադրութիւն անգամ չեն դարձրել։ Ինչներին էր պէտք. մուրացկանութեան տոպրակնին էին լցնում ման գալով,

երեկոյեան վանք մտնում ու տրաքւելու չափ ուտում, վեր ընկնում...

«Բարձր տեղերում, հողի վրայ, ամեն ինչ մնացել է խոպան, ամեն ինչ չորացել է. հին ընկուզիներն ու տանձենիները ամեն կողմ ճիւղ են տարածել և ամեն ինչ իրենց ստւերի տակ ծածկել։ Գութանն ու տապարը լաւ գործ ունեն տեսնելու այդտեղ։ Այնքան փայտ կտրտեմ, որ չորս տարի մեզ բաւականանայ։ Հեշտ գործ չէ ուրեմն 150 օրավար հողը լաւ դրութեան վերածել, աղպել, մշակել և սերմանել։ Հարիւրաւոր տարիներ հողը մի բուռ իսկ աղբի երես չէ տեսել։ Ինձ պիտի տարեկան 2400 լիւր եկամուտ բերէր, սակայն հազիւ այս տարի 600 լիւր ունեցայ։ Ահա թէ ինչեր են անում ծոյլ սրիկաները։ Երկիրն են քարուքանդ անում. պէտք է փոխել այդ բոլորը։

«Արդէն, հողի վրայ եղած խրճիթին տանիք եմ շինել տւել. քարուքանդ էր լինում. ամբարը նորոգել տւի, գոմը՝ սալայատակել. այժմ փոքր ինչ գրէթէ լաւացել է, բայց դեռ պէտք պիտի լինի շատ աղբել և աղբի համար՝ հարկաւոր է տաւար։ Կունենամ այդ. Կատէրինի կալւածքը չի դատարկում լաւ եկամուտ տալուց. պանդոկն էլ արդիւնք ունի. ծայր-ծայրի կը հասցնենք, միայն թէ ինձ հարկաւոր է անձամբ լինել այնտեղ, հսկել տաւարի, մշակութեան վրայ...

«Ամբողջ գարունն ու աշունը մտադիր եմ այնտեղ ապրել. շաբաթը մէկ կամ երկու անգամ գիւղ կը գամ։ Կատէրինը ինձ պէտք չունի պանդոկը կառավարելու համար, բայց պէտք է մի մարդ, որ դարբնոցը բանացնի և ահա այդ կարող ես անել դու։

«Դու իմ փոխարէն կը լինես դարբնոցապետ. կը գտնես մի աշխատաւոր ընկեր, սակայն պատասխանատւութիւնը ամբողջապէս քեզ եմ թողնում։ Այսօրւանից քեզ նշանակում եմ ամսական 50 լիվր ռոճիկ՝ 30-ի փոխարէն։ Եւ դեռ այդ չէ բոլորը. եթէ աշխատես և լաւ վարք ունենաս՝ աւելի առաջ կերթաս։ Քեզ ես սիրում եմ, պատւական տղայ ես. այսպէս ասած՝ ես եմ մեծացրել քեզ, քո կնքահայրն եմ, ես որդի չունիմ... հասկանո՞ւմ ես...

Ու յուզւում էր այդ ասելիս։ Այնքան երջանիկ զգացի ինձ, որ ասացի դողդոջուն.

—Օ՜հ, վարպետ Ժան, դուք ինձ մարդ էք դարձնում. զգում եմ որ արժանի եմ դրան, որովհետև իմ բարեկամութիւնն անհուն է դէպի ձեզ։ Բարեկամութեամբս արժանի եմ դրան։

—Եւ լաւ վարքովդ. ասաց նա ձեռքս սեղմելով—ջանասիրութեամբդ և դէպի ընտանիքդ ունեցած ջերմ սիրովդ... Եթէ որդի ունենայի, կուզենայի որ քեզ պէս լինէր։ Մի խօսքով, իմ որ-

շուտս այդ է։ Մինչև գարուն դեռ միասին կը գործենք. կը սովորեցնեմ ինչ որ պակասում է քեզ արհեստից և այնուհետև մի ընկեր կը որոնես ու կսկսես այնպէս, ինչպէս այժմ ասացի։

Ու ձեռքը պարզեց ինձ. իսկ ես իսկոյն, մտածելով հօրս զգալիք ուրախութիւնը՝ երբ լսէր եղածը—թոյլտուութիւն խնդրեցի վարպետ Ժանից՝ տուն վազելու։

—Գնա՛, ասաց նա—երջանիկ եղէք ամէնքդ։

Մի քանի րոպէ պէտք եղաւ մինչև տուն հասնելս։ Հայրս, Էտիէնն ու Մատիւրինը զամբիւղ էին գործում և շատ զարմացան, որ աշխատանքի այդ ժամին երևացի։ Մայրս օջախի մօտ՝ տան գործով էր զբաղուած։ Դարձաւ նայեց և շարունակեց գործը։

—Ի՞նչ է եղել, Միշէլ, հարցրեց հայրս։

Ուրախ՝ աղաղակեցի.

—Վարպետ Ժանը ինձ 50 լիվր նշանակեց ամսական։ Վալէնտինը գնաց և այժմ ես կը լինեմ նրա տեղը։ Վարպետ Ժանը ասաց, որ ձմեռւայ վերջերին ինքը Պիկհօլց կը գնայ հողերը մշակելու և այն ժամանակ ես կը լինեմ գործնոցապետ, ամէն բանի գլուխ կը կանգնեմ և ինձ ընկեր էլ պիտի որոնեմ։

Հայրս ձեռքերը բարձրացրեց ու ասաց յուզուած.

—Ա՛հ, Աստուած իմ, կարելի՞ բան է դա… Այժմ արդէն, զաւակս, կարելի է ասել, որ լաւ վարքիդ համար վարձատրուեցիր դու։

Ոտքի էր ելել։ Վազեցի նրա գիրկը, սեղմեցի կուրծքիս ու ասացի.

—Այո՛, դա շատ լաւ եղաւ նաև Էտիէնի համար։ Վաղուց մտածում էի ուղարկել նրան ուսանելու հայր Քրիստոֆի մօտ, որպէս զի վարժապետ դառնայ. փողն էր միայն պակասում…

Մայրս, որ լուռ էր մինչև այդ, յանկարծ ընդհատեց ինձ ու ասաց.

—Էտիէնը ոչ մի տեղ չի գնալ… Չեմ ուզում որ նա էլ հեթանոս դառնայ…

Ու կատարեց մի այնպիսի անսովոր բան այնուհետև, որ ապշած մնացի։

Հայրս յանկարծ դարձաւ, բոլորովին դժգոյն՝ նայեց մօրս և կատաղի ձայնով գոռաց.

—Իսկ ես ասում եմ որ կը գնայ… Ո՞վ է այստեղ մեծը… Դու չես ուզում, հա՞… Շատ լաւ. իսկ ես ուզում եմ, լսո՞ւմ ես… Ա՛հ, երբ քո ամենալաւ որդին ուզում է իր թշուառ եղբօրն ազատել ապագայ չքաւոր կեանքից, ա՛յդ է քո շնորհակալութիւնը… բայց ոչ, միւսները—այդ Նիկոլաներն ու Լիզբէտներն են քո սի-

րելիները, այնպէս չէ՞… Արարածներ՝ որոնք մեզ մոռանում են, մեզ թողնում անօթութիւնից կոտորուելու, մեռնելու. թողնում են քեզ, ինձ, մանուկներին, ամենքին… Դու նրանց ես սիրում, չէ՞…

Ասում եմ, նրա բարկութիւնը այնքան անակընկալ և սարսափելի էր, որ ամենքս դողալ սկսեցինք։ Մայրս կծկւեց օջախի մօտ և զարմացած նայում էր նրան, առանց կարողանալ պատասխանելու։

Երբ այդ բոլորն ասել էր հայրս, երկու քայլ առաւ դէպի մայրս, նայեց նրան բարձրից ցած և ասաց խուլ ձայնով ու կատաղութեամբ.

—Վատասիրտ, շնորհակալութեան, քաջալերութեան ոչ մի խօսք չունի՞ս այն որդուդ համար, որ ամեն օր կերակրում է քեզ…

Մայրս յուզուած ոտքի ելաւ, գրկեց ինձ ու ասաց.

—Օ՛, այո՛, լա՛ւ, պատուակա՛ն տղայ է Միշէլը…

Զգացի որ այնուամենայնիւ սիրում էր ինձ խեղճ կինը և շատ յուզուած էր։ Եղբայրներս ու քոյրերս էլ լալիս էին, իսկ հայրս դեռ դժգոյն, մնացել էր կանգնած ու մեզ նայելով։ Յետոյ բռնեց ձեռքս ու ասաց.

—Արի՛, արի էլի գրկեմ քեզ. լա՛ւ է ունենալ քեզ նման որդի. այո՛, մեծ երջանկութիւն է այդ։

Ու հեկեկում էր բարձր. մայրս էլ լալիս էր. այնպէս, որ մեր ուրախութիւնը շատ նման էր սուգի։

Յամենայն դէպս կամաց-կամաց ամենքը հանգստացան։ Հայրս սրբեց աչքերը, հագաւ վերարկուն, տօնական գլխարկն առաւ և թևս մտնելով՝ ասաց.

—Այսօր այլևս չեմ աշխատելու։ Դուրս գնանք քիչ, Միշէլ, պէտք է գնալ իմ բարեկամ և մեր բարերար Ժանին շնորհակալութիւն յայտնելու… Ինչ երջանիկ րոպէ էր այն, երբ մտածեցի նրան քո կնքահայրը շինել։ Երկինքը ներշնչեց ինձ այդ։

Երկու վարկեան յետոյ փողոց ելանք։ Սաստիկ ձիւն էր գալիս։ Հայրս կռթնած թևիս, ուրախութիւնից փայլող աչքերով քայլում էր և բացատրում, որ մկրտութեանս անունը Ժան-Միշէլ է եղել։

Իսկ երբ պանդոկ հասանք, աղաղակեց վարպետ Ժանին.

—Ժա՛ն, գալիս եմ քեզ շնորհակալ լինելու։

Կնքահայրս շատ գոհ եղաւ նրան տեսնելով։ Նստեցին վառարանի մօտ մինչև երեկոյ՝ զուարթութեամբ խօսելու և ծրագիրներ կազմելու իմ վերաբերութեամբ, մինչև որ ընթրիքի ժամանակն եկաւ։

Ընթրեցինք այդտեղ էլ ու բաւական ուշ էր, որ տուն վերադարձանք։

Ամենքն արդէն քնել էին։

VI

Այդպէս սկսեց 1791 թւականը։

Լիւցէլբուրգում գիշերօթիկ տուի եղբօրս—Էտիէնին, ամսական 12 ֆրանկ վարձով։ Կարողացաւ այդպիսով յաճախել նա հայր Քրիստոֆի դպրոցը և այնուհետև միշտ գոհացրեց մեզ իր յառաջդիմութեամբ։

Վարպետ Ժանը, յունւար ամսւայ ընթացքում, բացատրեց ինձ ինչ որ պէտք էր։ Ո՛չ միայն դարբնոցին պիտի հսկէի, այլև հաշւեգրքի մէջ պիտի առնէի պանդոկի ամբողջ առևտուրը, որովհետև կինը գրել չը գիտէր։ Ինձ վրայ ընկաւ նրա հաշիւները պահել առ հասարակ, որպէս զի ագարակից ամեն գալիս, տետրակի տակը նայելով՝ կարողանար հասկանալ գործերի դրութիւնը։

Մայրս բաւական զարմացած՝ որ մեր տան մէջ իրեն կարողացան դիմադրել և հակառակել—աւելի լռակեաց ու խոհուն դարձաւ։ Հայրս մէկ-մէկ բացականչում էր.

—Ա՛հ, վերջապէս գոհ եմ այժմ... Ամեն բան լաւ է գնում։ Մատիւրինին էլ կարողանայինք տեղաւորել, այլևս ոչինչ չեմ ուզում։

Մտածում էի այդ մասին, բայց այդպէս խառն ժամանակներում հարուստները չէին սիրում շատ ծառայ ունենալ. բացի դրանից, ես ինձ հպարտ զգալով, վատս էր գալիս որ քոյրս պիտի աղախնութիւն անէր քաղաքացիների մօտ։ Բնական էր այս, չէ՞։

Եւ այդպէս ուրեմն, ապրում էինք բաւական երջանիկ։

Դժբախտաբար սակայն, փոթորիկն օրէցօր մեծանում էր։ Յունւար և փետրւար ամիսներում շատ աւելի փախստականներ դուրս գնացին երկրից։ «Կարմիր-գիրքն» էլ սաստիկ տարածւում էր Ֆրանսիայում և մարդիկ շնորհիւ նրա, տեսնում էին թէ ինչպէ՜ս անարժանաբար ու խայտառակ ձևերով թոշակներ էին նշանակւած եղել ազնւական ընտանիքների և թէ ինչպէ՜ս թոշակների գումարը հասնում էր մինչև տարեկան 50 միլիոնի, մինչ այն կողմը թշւառներ, ահագին թւով անօթիներ, ճնշւած հարկերի տակ, մեռնում էին քաղցածութիւնից։

Ազգի կողմից ստացած արհամարհանքն ստիպում էր ազնւականներին՝ հեռանալու խմբովին. բոլոր ճանապարհները բռնւած

էին նրանց կառքերով. բաւականաչափ ձիեր չէին գտնւում կայարաններում և օրերով սպասում էին։ Ամեն կողմից լսւում էր կառապանների մտրակների շառաչ ու աղմուկ։ Այն աստիճան բազմամարդ էր այդ գաղթականութիւնը և այնքան աղմկալից, որ հայրենասէրներն սկսում էին անհանգիստ լինել։

Ազգային Ժողովը վիճաբանութեան էր ենթարկել անցագիրների օրէնքը։ Միրաբօն աղաղակում էր, որ զզւելի բան էր արգիլել գնալ-գալը։ Սակայն քաղաքային պահակներն իրենց ծառայութիւնը շատ խիստ էին կատարում.—հարցաքննում էին փախստականներին, տեղեկանում թէ ի՞նչու գնում էին նրանք Կօբլէնց, Կոնստանս կամ Տուրին։

Միւս կողմից՝ սահմանադրութեան երդում տալու հարցը մեծացնում էր խառնակութիւնը. 1200—1500 ապստամբներ Ալզասում, կազմել էին «կաթոլիկ քաղաքացիներ» անունով մի ընկերութիւն և աւելացրել էին անւան վրայ մինչև իսկ «հռովմէական ու առաքելական» բառերը, որպէս զի ընդիմադրեն երդման գործադրութեանը։ Ժողովներ էին կազմում նրանք ամեն տեղ ու կանչում համարձակ.

—Կեցցէ Արտուայի կոմսը։

Ազգային Ժողովը մարդիկ ուղարկեց իմանալու, թէ ի՞նչ էին ուզում դրանք։ Բայց ապստամբներն աւելի յանդգնութիւն ստացան և սկսեցին աղաղակել.

—Կախե՛լ պատւիրակներին...

Մնում էր մի միջոց, որովհետև Սէն-Լուի ասպետները և նոյն իսկ պարլամէնտի հետ խորհրդականներն՝ անցել էին ապստամբների գլուխը։

Եւ այդ միջոցը գործադրեցին Կոլմարի ու Ստրազբուրգի հայրենասէրները։ Անմիջապէս լաւ ցուպերով զինւեցին ու մի լաւ ծեծ տալով՝ ցրւեցին «կաթոլիկ քաղաքացիներին»։

Լրագիրները յայտարարում էին, որ սահմաններից օտար զունտեր են ներս արշաւում։ Ֆալցբուրգում, Սաքսօնիայի հուսարները երբ քաղաքի միջով անցնում էին Սարրգեմին գնալու—որովհետև կասկածում էին որ նրանք թշնամու կողմն են անցնում—Լաֆէր վաշտի զինւորները մի քանիսների ձիերի սանձերից բռնեցին և պահանջեցին որ նրանք «կեցցէ ազգը» աղաղակեն։

Հուսարները սրերը քաշեցին, կոտորեցին մեր զինւորներին և խմբովին դուրս եկան քաղաքից։ Հիւանդանոցը լցւեց վիրաւոր զինւորներով։ Գծուծութիւն և ստորութիւն էր այդ, որի նմանը չէր տեսնւած. մանաւանդ որ Լաֆէր վաշտի զինւորներն անզէն էին հուսարների հետ խօսելիս։

Չը նայելով այդ ստորութեան, Լուի XVI բարեհաճեց գովասանել հուսարներին և նախատինք կարդաց Լաֆէր վաշտին, նըրանց փոխարէն ուղարկելով մեզ մի ուրիշ—Լիէժի թագաւորական գունդը, որ վեց ամիս առաջ իր ինչ լինելն էր ցոյց տւել Բուիլլէ զօրավարի հրամանատարութեան տակ:

Երևակայեցէք այլևս թէ որքա՜ն զայրացան հայրենասէրները *):

Այսպիսի խառնակութիւնների ժամանակ էր, լուր հասաւ որ Թագաւորի հօրաքոյրերը փախել էին Ֆրանսիայից, տանելով իրենց հետ կառքերով 12 միլիոն ոսկի և թողնելով, առանց ամաչելու, 3 միլիօն պարտքերնին էլ մեր վզին: Հասնելով Բուրգոյնի Առնայլը-Դիւք տեղում՝ ձերբակալւել էին և այնտեղից, սարսափահար, Ազգային Ժողովին էին գրել այսպիսի խօսքեր.

—«Մենք ուզում ենք միմիայն լինել քաղաքացուհիներ և ըստ օրէնի էլ այդպէս ենք... պատիւ ունենք լինելու ձեր ամենախոնարհ և ամենահպատակ աղախինները»:

Այս նամակը, որ ծիծաղ էր շարժում, արտայայտում էր նաև գրողների ուշիմութիւնը, որովհետև ճշմարտութիւնն էին ասում: Ազգային Ժողովն էլ դրա համար, թոյլ տւաւ նրանց գնալու՝ ուր կուզեն:

Խռովութիւններն աւելի մեծ էին Փարիզում: Շօվէլի մեզ ուղարկած լրագիրներից իմանում էինք այդ: Ժողովուրդը լի կասկածներով, եպիսկոպոսների և ազնւականութեան կողմից ինչ որ դաւաճանութիւն էր սպասում: Կամիլլ Դէմուլէնը, Բրիսօն, Ֆրէրօն և բոլոր այդ համարձակ ու նրբամիտ մարդիկ գոռում էին անդադար.

—Զգո՜յշ եղէք, անակընկալի չը բերեն ձեզ... Ազգային Ժողովի պատգամաւորներից շատերը կաշառւած են... Լէօպոլդ և Գուլիօմ թագաւորները միացել են մեր երկիրը գրաւելու... Ուշադրութեամբ հսկեցէք, պատրաստ եղէք, մի՛ քնէք...

Սէնտ-Անտուան արւարձանի յեղափոխականները կամեցել էին քարուքանդ անել Վէնսէնի դղեակը, ինչպէս արել էին Բաստիլը, սակայն Լաֆայէտը մեծ նեղութիւններով յաջողւել էր նըրանց ետ կանգնեցնել այդ մտքից:

Այդ օրն իսկ, հինգ հարիւր ազնւականներ, զինւած դաշոյններով՝ ներս էին սպրդել Թագաւորի պալատը ետևի դռնով: Երբ

---

*) Մի անգամ ընդ միշտ պիտի գիտենայ հայ ընթերցողը, որ այն ժամանակ «հայրենասէր» (patriote) էին կոչում յեղափոխութեան ջերմ կուսակից անձերը: Ծ. Թարգմ.

երևան հանւեցին,—յայտնեցին որ եկել էին Թագաւորին պահպանելու, քանի որ իրենց էր վերաբերում նրան պահպանելը:

Նրանց դուրս քշեցին հրացանների կոթերով, իսկ Լուի XVI յայտարարեց, որ միմիայն ազգային պահակների պահպանութեանը պէտք ունի և ուրիշ ոչ ոքի:

Չը նայելով դրան, ժողովուրդը մատը կծեց և աւելի աչալրջութեամբ սկսեց հսկել Թագաւորին:

Լուրեր էին տարածւել նոյնպէս, որ արքան իբր թէ հիւանդ էր և բժիշկը պատւիրել էր նրան՝ պտոյտի գնալ Սէն-Կլուի կողմերը: Սակայն վաճառանոցի կանայք խմբովին խնդրեցին Թագաւորին՝ մնալու: Նրանց այդ միամիտ խնդիրքը ապացուցեց նաև նրանց տգիտութիւնը: Կարծում էին, որ եթէ Թագաւորը գնար, մի մեծ կորուստ պիտի լինէր Ֆրանսիայի համար: Որպէս թէ ժողովուրդների համար դժւար է թագաւորներ գտնել, քան թագաւորների համար՝ ժողովուրդ: Ի՞նչ արած, բանիմացութիւնը մի անգամով չէ մտնում ամբոխի մէջ:

Մարտի վերջերում վարպետ Ժանը ագարակ գնաց, հողերի մշակութեանը հսկելու և ես իմ նոր ընկեր Սիմօն Բէնըրոտի հետ մնացի գարբնոցում մենակ: Հուժկու, կոշտ մօրուքով և խոշոր կազմւածքով երիտասարդ էր այդ նոր գործաւորը:

Այդ միջոցումն էր, որ Լիէժի թագաւորական գունդը հրաման ստացաւ Մէց գնալու: Ասում էին թէ զօրապետ Բույիլլէն ուզում էր իր ձեռքի տակը ժողովել Լուի XVI-ին հաւատարիմ եղած բոլոր զօրագնդերը:

Այդպէս մենք ազատւեցինք վատ զօրքերից և նրանց տեղը բռնեցին Օվէրնի հայրենասէրների վաշտերը, որոնք յայտնի էին Ամերիկական ազատութեան կռւի մէջ և չէին կամեցել Նանսիի վրայ քայլել:

Բայց, Օվէրնի այդ վաշտը հին հաշիւներ ունէր մաքրելու: Իր ազնւական սպաները դեռ շարունակում էին զինւորներին ծեծել, տանջել: Եւ ահա մեզ մօտ տեղի ունեցաւ մի այնպիսի տարօրինակ բան, որ ընդունակ էր խորհրդածութեան հրաւիրելու բոլոր ազնւականներին:

Այդ օր, ապրիլի սկզբներում, զբաղւած էի ես երկու գործաւորների օգնութեամբ՝ վանդակորմ դնելով եկեղեցու շուրջը, երբ յանկարծ, ժամը 1-ի մօտերը, քաղաքատան կողմից լսւեց թմբկահարութեան ձայն:

Իսկոյն գործս թողի և վազեցի տեսնելու թէ ինչ էր եղել: Հասել էի հրապարակի ծայրին, տեսնեմ ամբողջ Օվէրնի վաշտը, իրենց ենթասպաների առաջնորդութեամբ և թմբկահարութիւնով

եկաւ քառակուսի շարքեր կազմելու հին կնձենիների տակ։ Ազնուական սպաները—հրամանատար, տեղակալ և այլն, ամենքը—հաւաքուել Ռէժանս սրճատանը, թուղթ խաղալով ու խմելով էին զբաղուած։

Յանկարծակիի գալով՝ նրանք թողին իրենց սեղանները և խառնիխուռն դուրս նետուեցին տեսնելու, թէ ինչո՞ւ էր այդ թըմբկահարութիւնը։ Մինչև անգամ ներսն էին մոռացել գլխարկները։

Հրամանատար մարքիզ Կուրբոնը, երբ տեսաւ զինւորներին, մօտ վազեց և կատաղութեամբ հարցրեց, թէ ի՞նչ էր նշանակում այդ։ Սակայն թմբուկները շարունակեցին և ոչ ոք նեղութիւն չը տուաւ իրեն՝ նրան պատասխանելու։

Քիչ յետոյ երեք ծերունի ենթասպաներ, հրացանները ուսերին, միմեանց մօտ եկան և քառակուսիի մէջ միացան. ապա յանկարծ թմբկահարութիւնը դադարեց և այդ ծերունիներից մէկը հանելով գրպանից մի թուղթ, աղաղակեց.

—Տեղակա՛լ Բավէտ, դո՛ւրս եկէք շարքից։

Կանչուածը, հրացանն ուսին՝ մէջ տեղ եկաւ։

—Տեղակա՛լ Բավէտ, կանչեց ծեր ենթասպան—Օվէրնի վաշտը ընտրել և ճանաչել է ձեզ իր հրամանատարը. անցէք ձեր պաշտօնի գլուխը…

Անմիջապէս նոր հրամանատարը հրացանը կոթնեցրեց մի ծառի և քաշեց սուրը, մինչ թմբուկները նորից դղնչացին, դրօշները ծուեցան և ամբողջ վաշտը բարևի կանգնեց։

Սրանից աւելի սարսափելի բան չէի տեսել։ Երևակայում էք անշուշտ թէ ինչպիսի՜ դէմքեր էին ստացել ազնուական սպաները, կանգնած հեռու։ Օ՛, սոսկալի բան կը լինէր, եթէ նոյն իսկ ձեռքների փայտերը համարձակուէին բարձրացնել։ Անշուշտ զինուորներն իսկոյն վրայ կը տային և բոլորին կը կոտորէին։

Բարեբախտաբար նրանք իսկոյն ըմբռնեցին դրութեան ծանրակշռութիւնը և բոլորն էլ ետ քաշուեցան դէպի սրճատուն։

Հրամանատարից յետոյ, վաշտը ընտրեց տեղապահ, ուրիշ սպաներ, փոխեց շատ ենթասպաների և նոր տասնապետներ նշանակեց։ Ժամը 3-ին ամեն ինչ վերջացրել էր. քառակուսին քանդւում էր և զօրքը մտնում էր քաշուելու, երբ մէկէն, ազնուական նախկին սպաները միասին դուրս նետուեցին սրճատնից՝ բողոքելու։

Սակայն նոր հրամանատարը մօտ գնաց նրանց և խիստ ու չոր ձայնով ասաց.

—Պարոններ, վեց ժամ միայն ժամանակ է տրւում ձեզ՝ քաղաքից հեռանալու համար…

Ապա մէջքը նրանց դարձրեց և կանչեց զինուորներին.

—Հառ-հառ դէպի ձա՛խ, ձա՛խ… Յառա՛ջ, արագ քայլերո՛վ… Մա՛րշ!..

Ու զինուորները կանոնաւոր քայլերով զինւորանոց դիմեցին։

Միւս օրն այլևս հին, ազնուական սպաներից ոչ մէկը չէր մնացել քաղաքում։

Երեք շաբաթ յետոյ, Ապրիլի 24-ին, Ազգային ժողովը պատերազմական նախարարից ստացաւ մի նամակ, որ յայտարարում էր Օվէրնի վաշտի ապստամբութիւնը, «որը վռնտեց իր սպաներին, առանձին ընկերութիւն կազմեց և իր իսկ իշխանութիւնից դուրս՝ չէ ճանաչում ոչ մի իշխանութիւն»…

Կարդացի այդ, լրագիրների ուրիշ շատ սուտերի հետ։ Ճշմարտութիւնն այն էր, որ Օվէրնի զինուորները ազգի կողմնակից լինելով, յոգնել էին իրենց ազնուական սպաներից և ուզում էին այնպիսի հրամանատարներ, որ կուի դաշտում ընդունակ չը լինէին անցնելու թշնամու կողմը։

Ասենք, չը նայելով պատերազմական նախարարի բողոքին, ուրիշ վաշտեր էլ նոյնը արին։ Նրանի բոլորն էլ այդպէս վարուէին. այն ժամանակ գոնէ չէինք տեսնիլ թէ ինչպէ՛ս ընդհանուր հրամանատարները փորձում էին զօրքին դրդել Ազգային ժողովի դէմ, չէինք տեսնիլ զինուորական ամբողջ վարչութիւնների անցնելը թշնամու կողմը։

Մի քանի օրից յետոյ, մի կիրակի, վարպետ Ժանը գիւղ եկաւ։ Ամեն բան կարգի լինելով՝ շատ գոհ մնաց։ Հետը Լիկսհէյմից բերել էր լրագիրներ և նրանցից մենք իմացանք, որ Միրաբօն մեռել էր։

Նոյն լրագիրները պատմում էին, որ Լուի XVI անպատճառ ուզում էր «օղափոխութեան գնալ» իր Սէն-Կլու դղեակը, բայց քաղաքային պահակները և ժողովուրդը դիմադրում էր։ Թագաւորը բողոքել էր Ազգային ժողովին, որ իրեն հաւատ չէին ընծայում։

Հաւատ չընծայելու առիթ էլ կար։ Պալատն ամբողջ դեռ լիքըն էր ազնուականներով, եպիսկոպոսներով ու երդում չը տուած քահանաներով։ Ազգային ժողովին ընդդիմադրելը մեծանում էր վատ գրքոյկներով ու լրագիրներով, որոնց վրայ նոյն իսկ Դէմուլէնի, Մարայի և այլ հայրենասէրների անունները դնել էին յանդգնում…

Այս խաբէութիւնները, բանբասանքներն ու ստորութիւնները այլևս հաւատք չէին թողնում մարդու մէջ։ Չէ՞ որ միւս կողմից էլ Վալէնտինի, կապուցինների և կաթոլիկ-հռովմէական-ա-

ուքելական քաղաքացիների քարոզներն ու գրգռումները Թափանցում էին ագէտ ամբոխի մէջ և գուշակել տալիս, որ պատրաստւում են գծուծ դաւադրութիւններ ազգի դէմ։

Ո՞րի մեղքն էր ուրեմն, որ Թագաւորին այլևս ոչ ոք չէր հաւատում. մե՞րը, թէ՞ իրենը։

Ժողովրդի վստահութիւնը ձեռք բերելու համար, պիտի մաքուր և ուղղամիտ վարմունք ունենալ. չը պէտք է ներկայացուցիչներ ընտրել սրիկաների և խաբեբաների, որովհետև հէնց որ ստութիւն երևան եկաւ ո և է գործի մէջ, նրան յաջորդում է զզւանք ժողովրդի կողմից և երբէք վստահութիւն։

Վարպետ Ժանը հազիւ վերադարձել էր իր ագարակը, որ ահա մէջ տեղ նետւեց Պիոս VI պապի բանադրանքը՝ երդւող կրօնաւորների դէմ։

Սա ի հարկէ, երդւող քահանաների ծիծաղը շարժեց, սակայն աւելի լրբացրեց չերդւողներին և նրանք ապստամբեցրին Կորսիկա կղզին, յարձակւեցին Աւինիօնի հայրենասէրների վրայ, Փարիզում ջարդոտեցին ակումբանոցների ապակիները։

Նրանց իբր պատասխան՝ Պալէ-Ռուայալում այրեցին պապի կոնդակը հանդիսաւորապէս, Վօլտէրի աճիւնը փոխադրեցին Սէն-Ժընըւիէվ *), զանգակներից դրամ ձուլեցին, արգելքի հրաման արձակեցին Կոնդէ իշխանի դէմ՝ երկիր մտնելու համար, բոլոր իրաւունքները կորցնելու սպառնալիքով և այլն և այլն։

Բայց, փոխանակ խաղաղւելու, կաթոլիկ-հռոմէական-առաքելական քաղաքացիք կրկնապատկեցին իրենց խայտառակութիւնները։ Բրի-Կոնտ-Ռօբերում, նրանց հուսարները նոյն իսկ անկողնից քաշում դուրս էին հանում հայրենասէրների, մինչև անգամ կանանց, կապկպում էին և անլուր նախատինքների ենթարկում, անամօթաբար բռնաբարելով կանանց, աղջիկների... Կատաղութիւնը սաստկանում էր։ Ամենքին պարզ էր այլևս, որ ներքին կռիւը անխուսափելի էր. մարդ զայրանում էր մանաւանդ աւելի նրա համար, որ տարին առատ բերք էր խոստանում։ Մայիսին Բարաքներում արդէն ամեն ինչ ծաղկել էր և ճոխ բուսականութիւնը բռնել էր ամեն կողմ։

Օ՛հ, որպիսի երջանկութիւն կը լինէր, եթէ այժմ խաղաղութիւն տիրէր երկրում։ Բաւական չէ՞ այն, որ չքաւորները ցրտից և սովից տանջւում են. պէ՞տք էր, այսպիսի մի տարի, տեսնել թէ

*) Սէն Ժընըւիէվ եկեղեցին, որ այդ օրւանից նշանակւեց իբր մեծ մարդկանց դամբարանի տեղ։

ինչպէ՞ս աւստրիացիք ու պրուսիացիք պիտի գան ու աւերեն մեր դաշտերը և մե՛ր իսկ երկրի դաւաճանները պիտի միանան նրանց։

Չը նայելով դրան, դաշտային աշխատանքն սկսել էինք, երբ մի գեղեցիկ առաւօտ յանկարծ լուր հասաւ, որ Նորին Վեհափառութիւնը փախել էր։ Շամպայնի և Մէօզէնի ազգային պահակները լցւել էին բոլոր ճանապարհների վրայ, որպէս զի գտնեն ու բռնեն արքային. ահա զանգերը հնչում էին ամեն կողմից, դնչում էին թմբուկները, սուրհանդակ սուրհանդակի ետևից իրար անցած՝ վազվզում էին և Թագաւորին բռնողներին մեծ հարստութիւն խոստանում։

Այդ լուրերը մեզ բերին երեք ալզասցիներ իրենց կանանց հետ, որ Ստրասբուրգից էին գալիս։ Կանայք աղաղակում էին.

—Յիսուս, Աստւած... կորւած ենք...

—Ի՞նչ է եղել. դուրս նետւեցինք ամենքս։

Սանձեր բռնողը գլուխը դարձրեց ու գոռաց.

—Սատանան արձակւել է շղթաներից...

Խմած լինելով, ծիծաղում էր։ Մի կին սակայն, բոլորովին յուսահատ դէմքով՝ ասաց.

—Թագաւորը փախե՛լ է...

Մի քանի րոպէից յետոյ քաղաքից եկողները, որ վազելով գիւղերն էին գնում լուրը տանելու—նոյնը կրկնեցին։ Պանդոկում կանգ առնողները աւելացրին, որ Թագաւորի հետ փախել էին նաև Թագուհին ու Թագաժառանգը։

Ահա այդ ժամանակ էր, որ կատաղութիւնս բռնեց Թագաւորի դէմ, առաջին անգամը լինելով։ Որովհետև մինչև այդ, աչքի առաջ ունենալով նրա բարեպաշտ լինելը, կարծել էի թէ պիտի հաւատարիմ մնար իր երդմանը։ Սիմօն Բէրնըօտը ապշած մնաց՝ տեսնելով իմ զայրոյթը։ Գտակս, կատաղած, նետեցի դէպի պատը և գոռացի.

—Ա՜հ, ցածահոգի մարդը, խաբեց մեզ...

Բայց քիչ յետոյ հանգստացայ և երբ «Երեք-աղաւնի» պանդոկի առաջ կանգնած մարդկանց վէճը լսեցի այդ մասին, ասացի նրանց.

—Փախաւ, որպէս զի գնայ միանալու Կոբլէնցում մեր թշնամիներին. գերմանացիներն էլ նրան էին արդէն սպասում, որ գային խլելու մեր երկիրը. Գիյիօմ և Լէօպօլդ Թագաւորները մինչև այժմ չէին համարձակւել Ֆրանսիա մտնելու, իսկ այժմ չեն քաշւիլ. պիտի գան կռւի օրերը...

Եթէ վարպետ Ժանը գիւղում լինէր, անշուշտ պահակները կը գումարէր և մենք էլ կը գնայինք բռնելու փախստականին։

Սակայն ո՛չ նա կար և ոչ Լէոփոլդին կամ մեր գնդի միւս սպաներից. գնացել էին դաշտ: Այն ժամանակ դա ինձ սաստիկ վրդովեցնում էր, սակայն այսօր ծիծաղում եմ, որովհետև հազարաւոր հայրենասէրներ, ինչպէս յետոյ իմացանք, հսկում էին Փարիզից—Ստրազբուրգի ճանապարհի վրայ: Բացի դրանից, Լուի XVI այդ ճանապարհով չէր գնացել, քանի որ կար աւելի կարճը—Բելգիայի կամ Մէցի վրայով:

Ցամենայն դէպս, բոլորը համամիտ էին, որ թագաւորը գնացել էր գերմանացիներին ներս բերելու և շուտով պիտի ստիպւէինք յարձակումներին դէմ դնելու պատրաստուել:

Այնքան այդ միտքը արմատացաւ ազգի մէջ, որ Ազգային Ժողովն էլ նոյնը մտածեց և յունիսի 25-ին բաց թողեց որոշումների մի յայտարարութիւն—հրովարտակ (decret), որոնցից կըպցրին նաև բոլոր եկեղեցիների և քաղաքատան դռներին, նոյն իսկ պանդոկներում, որպէս զի ամեն հայրենասէր պատրաստ լինի մարտակոչի:

Վարպետ Ժանն ինքը եկաւ Պիկհոլցից, նախ մի լաւ գոռգոռաց թագաւորի դէմ, մի լաւ հայհոյեց և ապա ինքն իր ձեռքով կպցրեց պանդոկի պատերին Ազգային Ժողովի յայտարարութիւնը, որ այսպէս էր գրած.—

21 Յունիս 1792.

Ազգային Ժողովը հրամանագրում է.

1) Ամբողջ երկրի ազգային պահակները շարժման մէջ պիտի դրուեն:

2) Հիւսիսային գաւառները, Պա-դէ-Կալէի, Ժիւրայի, վերին և ներքին Ռէյնի և գերմանական սահմանների բոլոր շրջանները պիտի մատակարարեն իրենց դրութիւնը ներածին չափ շատ մարդիկ:

3) Միւս նահանգները պիտի տան 2—3000 կռւող:

4) Հետևապէս, զէնք կրելու ընդունակ ամեն քաղաքացի պիտի գրուի իր քաղաքային վարչութեան մէջ:

5) Ցուցակագրուած ազգային պահակները կը կազմեն վաշտեր, իւրաքանչիւրը տասը գնդից բաղկացած և ամեն գունդ՝ 50 զինուորից:

6) Գնդերը կունենան երկու փոխ-տեղակալներ, մի տեղակալ և մի գնդապետ:

7) Գունդերն իրենք կ'ընտրեն իրենց սպաները, իսկ վաշտերինը՝ իրենց զինուորական վարչութիւնները (etat major. штабъ):

8) Վաշտերը կունենան երկու փոխ-գնդապետներ և մի հրամանատար:

9) Իւրաքանչիւր ազգային պահակ օրական կ'ստանայ 15 սու. թմբկահարը 1½ ռոճիկ, յիսնապետը՝ կրկնակի, ենթատեղակալը—եռակի, տեղակալը՝ չորս անգամ աւելի, գնդապետը՝ հինգ, փոխ-հրամանատարը՝ վեց և հրամանատարը՝ եօթ:

10) Ազգային պահակները, այն րոպէից սկսած, երբ այլևս պէտք չեն լինիլ, ռոճիկ չեն ստանալ և առանց խտրութեան կը վերադառնան իրենց նախկին գնդերի մէջ:

11) Այս զօրքի համար կանոնագրութիւն շուտով կը մշակուի:

Այս հրովարտակը ցոյց է տալիս, թէ ինչ վստահութիւն ունէր Ազգային Ժողովը թագաւորի վրայ, քանի որ թշնամիների դէմ չէր որ ազգը ոտքի էր հանում, այլ Լուի XVI-ի, որ գնում էր միանալու թշնամու հետ: Կարծում էր թէ ահա վերջապէս իր ցանցի մէջ կոխեց ժողովրդին:

Սակայն, փա՛ռք Աստծոյ, գործերը ուրիշ կերպ էին շուռ գալու և այդտեղ էր, որ տեսնուեցաւ թէ Աստուած ժողովրդեան կողմն է և ո՛չ թէ արքունիքի և եպիսկոպոսների:

Չը նայելով զօրապետ Բուլիէի բոլոր խորամանկութիւններին, այլև թշնամու կողմն անցած բազմաթիւ թշուառականների ջանքերին, մի հասարակ փոստային ծառայողի հարուածը փշրեց նրանց բոլոր դաւադրութիւնները:

Վարէննում թագաւորը բռնեցաւ: Քաղաքային խորհուրդը ձերբակալեց նրան սահմանից ինն մղոն մնացած մի փոքրիկ գիւղի մօտ:

Բուիյլէի ուղարկած հուսարները, որոնք գալիս էին թագաւորին տանելու, արգիլեցան ճանապարհին, շնորհիւ մի պարզ, կարասիքներով լեցուն սայլի, որն իսկոյն փոստային ծառայողի որդի Դրուէն և նրա բարեկամները շուռ տուին ճանապարհի վրայ և անցքը փակեցին ճիշտ մի փոքրիկ կամուրջի մէջ տեղում:

Վարպետ Ժանը, որի հետ միասին կարդացինք այս ամենը լրագիրների մէջ, ստիպեց ինձ ելնել պանդոկի մեծ սրահի սեղանի վրայ և այնտեղից, շրջապատող ահագին բազմութեանը կարդալ բարձրաձայն:

Լուսամուտները բաց էին. ամբողջ ծառուղին ու փողոցը լեփ լեցուն էին միմեանց վրայ կռացող գիւղացիներով. սրտատրոփ լսում էին կարդացածս, յետոյ զարմացական բացականչութիւնների հետ գոռում.

—Կեցցէ ազգը:

Եւ այդ աղաղակը թնդում էր ամբողջ գիւղում—մի ծայրից մինչև միւսը:

Ամենից աւելի բոլորիս զայրոյթն էր գրգռում այն նամակը,

որ զօրապետ Բույէլն յանդգնութիւն էր ունեցել ուղարկելու Ազգային ժողովին այն րոպէին, երբ թագաւորը ստիպուած էր վերադառնալ Փարիզ առանց ո և է վնասի։

Ահա թէ ինչ էր գրում ի միջի այլոց այդ անպիտանը.

«Լիւքսեմբուրգ, 26 յունիս 1791.—Թագաւորը ջանք գործ դրեց փշրելու իր շղթաները, սակայն կոյր ճակատագիրը, որին ենթարկուած են պետութիւնները, ուրիշ տեսակ վճռեց... Թագաւորը փորձեց դուրս գալ երկրից իմ խորհուրդների համաձայն, գնալու համար Մօնտմէդի, իրեն հաւատարիմ գերմանացիների մէջ, ուրտեղից նա յայտարարելու էր Ազգային ժողովը լուծուած և իր ցանկութեան համեմատ պիտի վերընտրէր նորը և վերահաստատէր ազնուականութեան արտօնութիւնները։

«Հաւատացէք ինձ, աշխարհիս բոլոր իշխանները գիտակցում են, որ իրենց սպառնում է ձեր յղացած հրէշը. դրա համար էլ նրանք շուտով պիտի յարձակուեն մեր դժբախտ երկրի վրայ։ Գիտեմ մեր ոյժի չափը. ո և է յոյս տածել նրանց դէմ գնելու—յիմարութիւն է. և շուտով ձեր պատիժը յիշատակալից օրինակ պիտի դառնայ ապագայ սերունդին։ Այսպէս է ստիպուած խօսել այն մարդը, որ առաջ խղճում էր ձեզ։ Դուք պատասխանատու էք թագաւորի և թագուհու օրերի համար՝ աշխարհիս բոլոր թագաւորների առաջ։

«Եթէ մի մազ անգամ պակասի արքայի գլխից—քար քարի վրայ չի մնալ Փարիզում։ Գիտեմ ես ճանապարհները և պիտի ներս առաջնորդեմ օտար զունդերին, օտարի բանակը... Այս նամակը միմիայն նախընթացն է եւրոպական թագաւորների յայտարարութեանը։ Իսկական յայտագիրները շուտով կուղարկուեն ձեզ և պիտի տեսնէք, որ պատերազմներ ունիք ձեր դէմ։ Մնաք բարև, պարոններ»։

Պարզ էր, չէ՞։ Մենք պատասխանատու էինք թագաւորի կեանքի համար աշխարհի բոլոր թագաւորների առաջ և ինքը, Բույիլէն ճանաչելով մեր ոյժերը, պիտի ներս առաջնորդէր, իր հայրենիքի վրայ արշաւել տար թշնամու բանակներն ու Փարիզը քար ու քանդ անէր...

Երբ այս նամակը կարդացի հօրս մօտ, երեկոյեան, խեղճ ծերունին գունատ, ձեռքերը երկինք բարձրացրեց ու կանչեց.

—Աստուած իմ, Աստուած... մի՞թէ հնարաւոր է, որ գոյութիւն ունենայ այդպէս մի սրիկայ... Եթէ Նիկօլան, որ ճանաչում է մեր երկիրը, ընդունակ լինէր թշնամուն մեր գիւղը առաջնորդելու—ցաւից ու վշտից կը մեռնէի։

—Այո՛, հայր, այո՛. ասացի ես—բայց դուք ազնուական չէք...

դուք յաղթողների սերնդից չէք... դուք թագաւորից նշանակուած զօրապետ չէք և ոչ էլ խոշոր թոշակի, մեծ պալատների և իշխանութեան տէր... Դուք միայն մի խեղճ գիւղացի էք, որ միշտ տանջուել էք։ Հայրենիքը ոչինչ չէ տուել ձեզ, ո՛չ մի սու... Դուք միայն ձեր կեանքն էք պարտական հայրենիքին և դա բաւական է ձեզ՝ սիրելու նրան. նրան մատնելու գաղափարն անգամ սարսռեցնում է ձեզ... Սակայն այդ ազնուականների համար չը կա՛յ հայրենիք՝ առանց թոշակների և պատուանշանների։ Իսկական հայրենիք նրանց համար այնտեղ է, ուր կան ստրուկներ՝ նրանց ծառայելու և թագաւորներ՝ նրանց հրամայելու և հարստութիւններով ողողելու։ Եթէ մեզ նման ստիպուած լինէին երկիրը բահել, դարբնել, առաւօտից մինչև երեկոյ աշխատել, որպէս զի թագաւորին առատութեան մէջ պահեն—շա՜տ շուտով թագաւորի դէմ ոտքի կելնէին...

Եւ ինչ որ ասում էի ես հօրս, անմիջապէս կատարուեցաւ, հէնց որ Լուի XVI մտաւ Տիւյլրի։ Մտաւ ո՛չ իբր տէր այլևս. ո՛չ կարող էր այնուհետև շնորհքներ բաշխել և ո՛չ էլ թոշակներ։

Ու շատ սպաներ բանակից դուրս եկան, դասալիք եղան։

Լուր հասաւ, որ Տիւնկերք բանակի շատ սպաներ մի գիշեր անցել էին Աւստրիացիների մօտ. Լիլլի սպաները փորձել էին ճանապարհ բանալ թշնամիներին և անշուշտ կը յաջողէին, եթէ զինուորներն ու բնակիչները չը դիմադրէին։

Յիրաւի, յուսահատեցուցիչ բան էր։ Մարդ վախենում էր, որ մի առաւօտ էլ զարթնելիս, երկրի մէջ կը տեսնի Կոնդէ, Լէօպոլդ, Գիւյիօմ և հարիւր ուրիշ սրիկաներ։

Ամբողջ Ֆրանսիան գտնում էր, որ Լուի XVI այլևս անարժան էր թագաւորելու. ամենքն ասում էին, որ նա դաւաճանել է իր երդումը, որ այժմ նա մեր ամենավտանգաւոր թշնամին էր դարձել, քանի որ մեզնից ստացած ոյժը նա գործադրում էր մեզ իսկ թշնամու ձեռքը յանձնելու համար։

Այլևս անհնար էր ապրել այդպիսի մի վէրք կրծքին. ամեն ոք հասկանում էր այդ։

Լրագիրները, որ Փարիզից ստացւում էին, հաղորդում էին թէ փարիզցիք էլ մեզ նման էին մտածում։ Բայց որի՞ն նշանակել տեղը։

Ոմանք առաջարկում էին գահընկէց անել նրան, տեղը նշանակել թագաժառանգը և խնամակալ՝ ըստ սահմանադրութեան։ Ուրիշներն ասում էին, թէ պիտի նշանակել մէկին, որ միայն օրէնքների գործադրութեանը հսկէ. շատերն էլ հասարակապետութիւն էին ցանկանում։

Բայց, ժաքօբէնների ակըմբանոցում, Ռօբէսպիէրը տաքութեամբ դէմ խօսեց հասարակապետութեան գաղափարին, պնդելով որ նոր անունը չի փոխիլ գործերի դրութիւնը և որ կարելի է երջանիկ և ազատ էլ լինել՝ ունենալով թագաւոր, ու անբախտ՝ հասարակապետութեան մէջ անգամ։

Դանտօնը միմիայն Լուի XVI-ի գահընկէցութիւնն էր պահանջում և առաջարկում էր դնել նրա վրայ խնամակալ։

Պետիօնը Ռօբէսպիէրի հետ համամիտ էր, սակայն Բրիսսօն, Կօնդօրսէ և Օրլէանի դուքսը պնդում էին, որ պէտք էր հասարակապետութիւն յայտարարել։

Դուքսը ասել էր նոյն իսկ, որ հասարակապետութեան համար պատրաստ էր ինքնիրեն զոհելու հայրենիքին։ Միայն թէ պէտք էր ցոյց տալ, որ աւելի զօրեղ էր, որովհետև նրա նման զգուշաւոր և խոհեմ մարդը շատ լաւ տեսնում էր և հասկանում, թէ որքա՜ն վտանգաւոր էր Մարայի, Դէմուլէնի, Ֆրէրօնի նման մարդկանց հետ չափւելը…

Բայց… ո՛չ ոք էլ չէր մտածում դուքսին պետութեան գլխաւոր կարգելու մասին։ Ժողովուրդը դեռ փորձած չէր յեղափոխութեան մէջ. կարծում էին ամենքը, թէ թագաւոր դնելը, հասարակապետութեան հիմնելը, Աստուած գիտէ, որքա՜ն դժւար գործ է։

Աւելի ուշ իմացանք միայն, որ հաստատելը շատ աւելի դիւրին է, քան հաստատածը պահպանել։

Մօտ երեք շաբաթ տևեցին այդ բոլոր վէճերը։ Ազգային Ժողովը չէր կարողանում որոշ եզրակացութեան գալ։

Վերջապէս ժողովուրդը կորցրեց համբերութիւնը և թագաւորին գահընկէց անելու պահանջը դրաւ։

Ազգային Ժողովը անուշադիր թողեց այդ պահանջը։

Այն ժամանակ, ժողովուրդը կատաղած, հաւաքւեց Մարսի դաշտում և այնտեղ ստորագրեց շատ աւելի խիստ մի խնդրագիր՝ Հայրենական սեղանի *) վրայ։

Փարիզի քաղաքապետ Բայլին սակայն, խնդրագիրը Ազգային Ժողովին տանող պատգամաւորների ճանապարհը կտրեց և ուշացրեց։ Այնպէս որ, երբ յետոյ ժողով գնացին, այնտեղ արդէն որոշել էին, որ թագաւորը չէր կարող ենթարկել դատաստանի, որովհետև նրա անձը նուիրական էր։

Ուրիշ խօսքերով, թագաւորը կարող էր, առանց ո եւ է

---

*) Մարսի դաշտում շինած սեղան, որ յեղափոխութեան ժամանակ ստացաւ «Հայրենական սեղան» (l' autel de la patrie) անունը։

պատասխանատուութեան եւ ինչքան կամենար, Ֆրանսիա կանչել պրուսացիների եւ աւստրիացիների եւ մեզ տալ թշնամու ձեռքը։

Ժողովուրդը հասկացաւ, որ Ազգային Ժողովը ամբողջովին, բացի հազիւ մի քանի անդամներից, օրինակ, աբբայ Գրէգուար, Ծօվէլ, Ռօբէսպիէր և այլն, անցել է թշնամու կողմը։

Ու կատաղեց։ Ակումբներն սկսեցին որոտալ. Կորդէլիէրների ակմբում Դանտօնը յայտնեց, թէ հարկաւոր էր յաւելած անել յեղափոխութեան, իսկ հայրենասէրները խօսքը մէկ արին՝ հաւաքւելու Մարսի դաշտում և այնտեղ կազմելու մի նոր խնդրագիր (petition) որին պիտի ստորագրէին հազարաւոր ֆրանսացիներ։

Ազգային Ժողովը չը կամեցաւ թոյլ տալ. հասկացաւ որ այդ խնդրագիրը պիտի կապէր նրա ձեռքերը։ Լաֆայէտը և Բայլին հրաման ստացան պատերազմական օրէնքը գործադրել։ Այս սոսկալի օրէնքը թոյլատրում էր գնդակահարել ժողովրդին, երեք անգամ ցրւելու հրաւէրից յետոյ։ Անմիջապէս գունդեր հաւաքեցին և պատրաստւեցին դիմադրելու ժողովրդին։

Միւս օրը առաւօտեան, ժողովուրդը որ սկսել էր ժողովւել դաշտում, Հայրենական Սեղանի տակ թագնւած գտաւ երկու լրտեսների, որոնք եկել էին այնտեղ, կատարւածը տեսնելու և լսելու, որ գնան հաղորդեն արքունիքին։

Անմիջապէս կտրեցին լրտեսների գլուխները, ցիցերի ծայրը անցկացրին և պտտեցրին ամբողջ Փարիզում։

Դրանից յետոյ, ժամը 2-ի մօտերը, Լաֆայէտն ու Բայլին եկան Մարսի դաշտը և սկսեցին գործադրել պատերազմական օրէնքը։

Ոմանք ասում են, թէ մինչև իսկ երեք նախազգուշութիւնները չարին, ոմանք էլ ասում են թէ արին։ Բայց այդ միևնոյն է. փաստն այն է, որ բազմաթիւ անզէն մարդիկ, կանայք, ծերունիներ և մանուկներ կոտորեցին այդտեղ…

Անշուշտ արքունիքը, եպիսկոպոսներն ու ազնւականները բաւականութիւն զգացին այդ կոտորածից։

Առաջին անգամն էր, որ Ազգային Ժողովի հրամանով կրակում էին ժողովրդի վրայ։ Սկսում էր կռիւը ժողովրդեան և բուրժուաների միջև. որպիսի՜ դժբախտութիւն։

Դրանից աւելի էլ ի՞նչ լինէր, քանի որ այդ կռիւը տևում է դեռ մինչև այսօր էլ և նրան ենք մենք պարտական այժմեան բանակալութիւնն ու զինւորումը (militarisme)։

Կամիլլ Դէմուլէնը, Դանտօնը, Ֆրէրօնը, Բայլիի և Լաֆայէ-

տի հրամանով ոտնեւեցան ձերբակալելու, բայց Նրանք ազատւեցին և փախան։

Սակայն և վերադարձան շուտով։ Վերադարձաւ նաև Մարան, վերադարձան սպանւածների ազգականները…

Ա՛հ, Լուի XVI փախուստն էր, որ պատճառ դարձաւ ներքին այդ կռիւներին. կռիւ, որ գրաւեց երկրի մինչև յետին անկիւնը։

Ազգային Ժողովը, որ այնքան մեծ գործեր էր կատարել, որ տւել էր մեզ արդար օրէնքներ, յայտարարել էր մարդկային իրաւունքների հաւասարութիւն և որ պահել էր իր վսեմութիւնը մեծ խառնակութիւնների ժամանակ—վերջացրեց իր գոյութիւնը մի խայտառակ արարքով և խայտառակ որոշումով. այն է՝ թագաւորի անձեռնմխելիութեան, նրա անձի նւիրականութեան օրէնքը հիմնեց, որ դէմ է բանականութեան, արդարութեան և հէնց իրենց իսկ կազմած Սահմանադրութեանը։

Երբ մարդ մտածում է այսպիսի բաների մասին—ստիպւած է խոստովանել մարդկային ոգու ողորմելիութիւնը և մանաւանդ թագաւորական անձնական գանձի մեծութեան վտանգը… *) Ժողովի փչացած անդամները, որ յոգնել էին ու կաշառւել—երկար չը պիտի կեանք ունենային։

Սահմանադրութեան գործը գրեթէ վերջացել էր և նոր ընտրութիւնները մօտենում էին։

VII

Գաւառներում պէտք էր տեսնել հին իրաւաբանների, դատաւորների, ոստիկանական տեղակալների և պաշտօնազուրկ արած աւագների ուրախութիւնը, երբ իմացան Մարսի դաշտի դժբախտութեան լուրը։

Գոհունակութիւնը պարզապէս գծւած էր նրանց դէմքերի վրայ. ծածկել անգամ չէին յաջողւում։ Նրանց այդ ուրախութիւնը ցոյց էր տալիս, որ սոսկալի էր եղել կոտորածը և գործերն աւելի ծանրակշիռ կերպարանք էին ստացել։

Միևնոյն ժամանակ, սկսեցին նախապատրաստական ժողովները, պատգամաւորներ անւանելու Օրէնսդիր Ժողովի համար։ Քաղաքատան պատերի վրայ յայտնեցին «գործօն» (actif) քաղա-

*) Սրամիտ ակնարկ թէ ինչպէ՛ս եթէ թագաւորները շատ դրամ ունենան, կարող են կաշառել նոյն իսկ և իրենց կողմը դարձնել ժողովրդական երեսփոխաններին։ Ծ. Թարգ.

ցիների ցանկեր. և մենք, «կրաւորական» (passif) քաղաքացիներս, որ երեքօրեայ աշխատութեան արժէքը չէինք վճարում ուղղակի տուրքով, մենք իրաւունք չունէինք քւէարկելու՝ ինչպէս 89 թւին էր. չը նայելով որ քսան անգամ աւելի հարկ էինք վճարում անուղղակի ձևով՝ գինու, օղու, գարեջրի, ծխախոտի և այլն և այլն։

Մինչդեռ, իսկապէս աւելի մենք էինք «գործօն» քաղաքացիներ՝ մեր աշխատանքով ու ծախսածներովը, քան այն կծծիները, որոնք փող էին դիզում՝ անշարժ կալւածք գնելու մտադրութեամբ։

Ինչո՞ւ սակայն այդ խտրութիւնը։ Վարպետ Ժանն իսկ ասում էր.

—Վատ է գնում գործը. մեր պատգամաւորները սխալներ են արել… Շատ հայրենասէրներ, և լաւագոյնները, անշուշտ պիտի մէջտեղ ելնեն հաւասարութեան պահանջներով…

Յամենայն դէպս, ընտրութիւնները տեղի ունեցան։ Ընտրւեցին հարուստ այնպիսի մարդիկ, որոնք առ նւազն 150 լիվր «ուղղակի տուրք» էին վճարում։ Փողն իր ույժն էր ցոյց տալիս։ Զարգացում, բանիմացութիւն, քաջութիւն և ազնւութիւնը՝ երկրորդական էր համարւում և նոյն իսկ աւելորդ։

Ընտրութիւններից յետոյ, հնձի ժամանակ, Շովէլը մեզ գրեց, որ Սահմանադրութիւնը մշակւած վերջացել էր, թագաւորը ընդունել և որ ինքն էլ—Շովէլը, շուտով Ֆալցբուրգ պիտի վերադառնար։

Ութն օր յետոյ, վարպետ Ժանն ու ես, սպասում էինք Ֆալցբուրգում առաւօտ շուտով հասնող կառքին, որ պիտի բերէր Շովէլին ու Մարգարիտին։

Ժամը 8-ի մօտերը հանրակառքը բոլորովին սպիտակած փոշուց, մտաւ «Կարմիր-Եզ» կոչւող պանդոկը և մենք ուրախութեան աղաղակներով գրկեցինք Շովէլին ու Մարգարիտին։

Հարկ չը կայ ասելու, թէ որքա՜ն ուրախացանք միմեանց տեսնելով։

Մարգարիտը, Աստւա՜ծ իմ, այնպէս մեծացել էր… Մի գեղեցկուհի էր եղել ո՜ր… թուխ, աշխոյժ և չարաճճի աչքերով տիկնոջ նման… Կատարելապէս Շովէլի աղջիկն էր՝ որ կար։

Երբ կառքից դուրս թռաւ «Միշէլ» կանչելով, հազիւ համարձակւեցի առնել նրան իմ գործաւորական խոշոր ձեռքերի մէջ և համբուրել երկու այտերից… Շփոթւել էի հիացումից։

Շովէլը բոլորովին չէր փոխւել. նոյն փոքրիկ մարդն էր, որ կարծես Ալզաս ու Լօրէն գիրք ծախելու էր գնացել և այժմ վերադառնում էր։ Ծիծաղը դէմքին ասաց.

—Վերջապէս, վարպետ Ժան—ահա և վերադարձանք. ամեն բան յաջող է.—Քեզնից շատ գոհ եմ, Միշէլ, նամակներդ ինձ մեծ հաճոյք էին պատճառում:

Որպիսի ուրախութիւն էր նրանց տեսնելը և որքան երջանիկ էի զգում ինձ, երբ Մարգարիտի սակառը շալկած և կողքիցը քայլելով՝ ճանապարհ ընկանք դէպի մեր գիւղը:

Իսկ այնտեղ, «Երեք աղաւնի» պանդոկում, առանձին հրճուանքով էր, որ բաց արինք ու մի առ մի դուրս հանեցինք մեզ բերած ընծաները Փարիզից:

Մի բան, որ աւելի մանրամասն հարկաւոր է ինձ պատմել—դա Շովէլի խօսած ճառն էր իր գալու միւս երեկոյեան՝ մեր ակումբանոցում:

Թէև սաստիկ յոգնած էր՝ կառքով վեց օրւայ ճանապարհորդութիւնից յետոյ, սակայն կամք յայտնեց գալ այնտեղ և իսկոյն հաշիւ տալ իրեն արւած յանձնարարութեան մասին:

Անհագին բազմութիւն էր հաւաքւել շրջակայ գիւղերից: Շովէլը ոտքի ելաւ և ահա, թէ ինչպէս խօսեց:

Միտս է բոլորը, որովհետև խորը տպաւորութիւն գործեց ամենքիս վրայ:

—Պարոններ, սկսեց նա—Մեզ յանձնարարած Սահմանադրութեան մշակման գործը վերջացաւ: Թագաւորն ընդունեց և երդւեց հաւատարիմ մնալ նրան: Այդ Սահմանադրութիւնն ուրեմն այսուհետև պիտի կառավարէ երկիրը. մեր օրէնսդրութիւնն է նա: Իմ բոլոր ջանքն ի գործ դրի շատերի հետ, որ հիմնւած օրէնքները լինեն լաւ. ամբողջ ոյժովս պաշտպան հանդիսացայ ձեր շահերին և այժմ ուզում եմ հաշիւ տալ ձեզ՝ Ազգային Ժողովում տւած քւէներիս մասին: Պարտքս է այդ, որովհետև երբէք չէի մոռանում, որ պատասխանատու եմ ձեր առաջ, ինձ արւած յանձնարարութիւնների վերաբերութեամբ:

Առանց պատասխանատւութեան՝ ոչ մի արդարամիտ բան տեղի ունենալ չէ կարող: Ով յանձնարարում է մեզ իր գործերը, նա իրաւունք ունի հաշիւ էլ պահանջելու: Հաշիւս եմ տալիս ուրեմն և եթէ գոհ լինէք, կը շնորհէք ինձ ձեր հաճութիւնը, իսկ եթէ ձեզ խաբել եմ ես, միայն ձեր զգւանքը կարող էք արտայայտել:

Այդ ժամանակ յանկարծ մի քանիսներն սկսեցին կանչել.

—Կեցցէ մեր պատգամաւոր Շովէլը, կեցցէ մեր ներկայացուցիչը...

Իսկ Շովէլը դժգոհութիւնից շրթունքները սեղմեց, ճակատը

կնճռեց և ձեռքը տարածեց «բաւական է» ասելու նման: Եւ երբ լռեցին, աղաղակեց.

—Զգուշացէք, բարեկամներս, այդ տեսակ ոգևորութիւններից, առանց խորը մտածելու. դա ձեզ արգելք կը դառնայ զանազանելու ազնիւ մարդը խաբեբայից: Եթէ այդպէս ծափահարէք ամենքին առանց խորհելու, էլ ինչացու կատարեցի ես իմ պարտաւորութիւնը... Դուք կարող էք նոյն տեսակ ոգևորութեամբ ծափահարել նաև առաջին խաբեբային...

Բայց փոխանակ լսելու նրան, ծախահարութիւնները կրկնապատկեցին. և նա, ուսերը թոթւելով, ստիպւեց սպասել:

—Ինչ որ է. ասաց նա, երբ լռութիւն տիրեց — կշտացաք այժմ. հաւանեցիք վարմունքս՝ առանց նախապէս քննելու: Իսկ ի՞նչ կասէք յետոյ, եթէ գոհ չը լինէք:

Ու շարունակեց.

—1789 թիւ ապրիլի 10-ին, երբ ես մեկնեցի այստեղից, Ֆրանսիան բաժանւած էր երեք դասակարգերի—ազնւականութիւն, կղեր և ժողովուրդ: Առաջին երկու դասակարգերը ունէին ամեն ինչ, ամեն արտօնութիւն և ամեն յարգանք. իսկ դուք, վերջին դասակարգը, որ հարիւր անգամ աւելի բազմամարդ էք քան երկու առաջինները միասին առած—դուք էիք կրում ամեն բեռ ու թշւառութիւն:

«Ձեզնից իւրաքանչիւրը յիշում է իր կրած տանջանքներն այդ օրերում.—բազմաթիւ տուրքեր, որոնք ճնշում էին ձեզ, նախատինքներ, որոնց ստիպւած էիք դիմանալ և այն սոսկալի սովերը, որոնք երկու-երեք տարին մի անգամ ամայացնում էին երկիրը: Չքաւորութիւն ու աղտ էր թագաւորում երկրի մէջ, աւերում նրան. գիտէք այդ. աւելորդ է կրկնել:

«Լաւ ուրեմն, տեսնենք այժմ թէ Ազգային Ժողովը ի՞նչ փոխարինեց դրանց:—Առաւելութիւնները քննենք, որ կարողացանք ձեռք բերել. յետոյ պակասութիւնները, որոնց հարկ եղաւ թողնել շարունակւելու, դժբախտաբար, հակառակ մեր կամքի:

«Մանրամասն խօսել այս 28 ամսւայ ընթացքում հիմնւած 2500 յօդւած օրէնքների մասին՝ ես չեմ կարող ի հարկէ, բայց կարող եմ նրանցից գլխաւորները յիշատակել:

«Ամենից առաջ՝ ոչնչացրած են բոլոր դասակարգերը: Սահմանադրութեան առաջին յօդւածն է այդ.—

«Յօդւած I. Մարդիկ իրաւունքներով ծնւում են ազատ և հաւասար: Ազգային Ժողովը կամենալով ֆրանսական Սահմանադրութիւնը հիմնել մարդկային իրաւունքների վրայ, անդառնալի կերպով ոչնչացնում է այնպիսի հաստատութիւններ, որոնք վիրաւո-

րական են իրաւունքների հաւասարութեան սկզբունքին։ Չը կայ ոչ ազնուականութիւն, ոչ դասակարգային խտրութիւններ, ոչ աւատային դրութիւն (régime féodal) ոչ ժառանգական—ստացուածքային արդարադատութիւն (justices patrimoniales *), ոչ ո և է տիտղոս, ոչ աւատական կարգեր, ոչ համքարութիւններ, ոչ պատւանշաններ՝ որոնց համար պէտք լինէր ազնուականութիւն. չը կայ այլևս հասարակաց պաշտօնեաների, իրենց պաշտօնավարութեան սահմանում եղած իշխանութիւնից դուրս՝ ո և է գերիշխանութիւն, պաշտօնների առևտուր և կամ հասարակական պաշտօնէութեան ժառանգականութիւն։ Ոչնչացւում է ամեն արւեստապետութիւն (համքարութեան աւագութիւն), այլև արւեստների, արհեստների և կոչումների համքարութիւն։

«Օրէնքն այլևս չէ ճանաչում կրօնական ո և է ուխտ, ոչ էլ բնական իրաւունքների դէմ ո և է խոստում։ Նա յայտարարում է, որ իւրաքանչիւր քաղաքացի կարող է վարել հասարակական ո և է պաշտօն, միմիայն շնորհիւ իր բարքի և տաղանդների, առանց ո և է այլ արժանաւորութեան։ Օրէնքը հաստատում է, որ բոլոր տուրքերն ու հարկերը հաւասարապէս պիտի բաժանուեն բոլոր քաղաքացիների վրայ, նրանց կարողութեանը համեմատ։ Հաստատում է նոյնպէս, որ նոյն յանցանքը՝ նոյն տեսակ պատիժ կըստանայ, առանց խտրութիւն դնելու յանցաւորի անձնաւորութեան, կամ այս ու այն դասակարգին պատկանելու մէջ։

«Այս բոլորին ես քւէ տւի, որովհետև ինձ համար Արդարութիւն ու հաւասարութիւնը մի և նոյն բաներն են։ Այս առաջին կէտն է։ Եւ տեսնում էք, որ սորա վերաբերութեամբ աւելին ցանկալու տեղիք չը կայ։

«Երկրորդ կէտը՝ ազատութիւնն է։ Բոլոր օրէնքները կապ ունեն միմեանց հետ, բղխում են միմեանցից և հիմնւում իրար վրայ։ Եթէ քաղաքացիք **) ազատութիւն չունենային խօսելու, գրելու, տպելու և տարածելու իրենց գաղափարները—ի՞նչ օգուտ այլևս իրաւունքների տէր դառնալուց, քանի որ ոչ կարող էին գանգատւել, պահանջել և արդարութեան միջոցով, ազգի որոշմամբ, սահ-

*) Ստացուածք ունեցողների կամ հայրական տիտղոսների ու կոչումների արտօնութիւնների ժառանգութիւնը, որ Ֆրանսիայում իր որոշ առանձնաշնորհութիւններն ունէր։

**) Որպէս զի քաղաքացի բառը չը հասկացւի միայն քաղաքի բնակիչ, միանգամ ընդ միշտ հարկաւոր է աչքի առաջ ունենալ, որ առ հասարակ ամեն ոք Ֆրանսիայում (ազնուական, քաղաքի բնակիչ, գիւղացի, կրօնաւոր, գործաւոր և այլն) կոչւեց մի, ընդհանուր քաղաքացի (Citoyen, Гражданинъ) անունով։

Ծ. Թարգմ.

մել յարգելու իրենց իրաւունքները և նոյն իսկ ուղղելու կատարւող սխալներն ու անիրաւութիւնները։

«Եթէ չը լինէր այդ ազատութիւնը, ամեն օրէնք կը մնար մեռած տառ, ամենաուժեղը միշտ իրաւունքի տէր կը լինէր, ձեր բերանը կը փակէր բռնի ուժով և կարող էր կողոպտել ու խեղդել ձեզ ուզածին չափ։

«Դրա համար էլ ահա, Սահմանադրութիւնը իւրաքանչիւրին իրաւունք է տալիս խօսելու, գրելու և տպելու իր մտածութիւններն ու ասելիքները և տարածելու ամեն միջոցներով։

«Դրանից յետոյ գալիս են և ուրիշ տեսակ ազատութիւններ։ Գնալու, գալու, մնալու, մեկնելու՝ առանց ձերբակալութեան, դատապարտութեան կամ արգելքի, բացի օրէնքով որոշւած հանգամանքների դէպքում և նոյն օրէնքի նախապէս սահմանած ձևով։

«Ազատութիւն՝ նաև դաւանելու իր ուզած կրօնը, Սահմանադրական իշխանութիւններին անձնական խնդիրներ տալու, ազգային հարցերի վիճաբանութեան համար ժողովելու. մի խօսքով ազատութիւն անելու այն ամենը, ինչ որ ուրիշին և հասարակաց ապահովութեանը վնասել չէ կարող։

«Առանց բացառութեան, այս բոլորին քւէ տւի ես և համաձայնութիւն։

«Որովհետև, եթէ հաւասարութիւնը ինքը Արդարութիւնն է որ կայ, Ազատութիւնն էլ արդարութեան ապահովութիւնն է։ Մէկը առանց միւսի գոյութիւն ունենալ չէ կարող։

«Երրորդ կէտն է Եղբայրութիւնը։ Սահմանադրութիւնը յայտարարում է, որ կը ձեռնարկւեն և կը կազմակերպւեն հասարակական օգնութեան ընդհանուր հիմնարկութիւններ՝ ի մխիթարութիւն թշուառ անկարողների, այլ և աշխատանքի անընդունակ անձերի։ Այստեղ ողորմութեան հարց չէ կարող լինել։ Մուրացկանութիւնը ստորացնում է մարդու, կորցնել է տալիս անձնասիրութիւնը, գծուծացնում է և ստիպում ծռւելու իր նմանի առաջ։ Նա այլասեռում է, մինչ Սահմանադրութիւնը չէ ուզում որ ազգը անկման գնայ և կորցնի իր մեծութիւնը։ Նա, հետևաբար, յայտարարում է, որ բարեգործութիւնը անհատական առաքինութիւն չէ միայն, այլ ընկերական պարտականութիւն։

«Բայց, բարեգործութեան տեսակէտով և կամ, աւելի լաւ է ասել՝ հասարակութեան համերաշխութեան համար, կայ մի գործ, որ շատ աւելի մեծ է և կարևոր—դա հասարակական կրթութեան գործն է։ Որովհետև, մեզ օրինակ համարւող Քրիստոս ինքը ասել է թէ «Մարդս միայն հացով չէ որ կերակրւում է, այլ և հոգով»։

«Սահմանադրութիւնը ըմբռնում է այս գեղեցիկ առացւածքը և յայտարարում է, որ կը հիմնւեն և կը կազմակերպւեն ընդհանուր, ամենքին մատչելի հասարակական կրթութեան հիմնարկութիւններ, ուր ձրի կը տրւեն ուսուցման կարևոր մասերը—այսինքն կարդալ, գրել և տարրական թւաբանութիւն։ Դպրոցների թիւը համեմատ պէտք է լինի պետութեան ներքին բաժանմունքներին. այսինքն, իւրաքանչիւր գաւառ կունենայ այդպիսի հիմնարկութիւններ։

«Այսպէս, պարոններ. ինչպէս տեսնում էք, Սահմանադրութեան այս առաջին մասը երեք խօսքերով կարելի է ամփոփել—հաւասարութիւն, ազատութիւն, եղբայրութիւն։ Դրանք են մարդկային իրաւունքները։

«Մնում էր այնուհետև լրացնել մեր երկրի մէջ սեփհականութեան վերաբերեալ գոյութիւն ունեցող իրաւունքները։

«Անշուշտ չէք մոռացել, որ 89-ից առաջ, ինչպէս որ կային մարդկային դասակարգերի խտրութիւններ, կային նոյնպէս ստացւածքային, կալւածական իրաւունքների կարգեր. օրինակ՝ պետական—արքունական կալւածներ, մարզպետիններ, մեծ դաստակերտներ (fief), պարզ դաստակերտներ, փոքր-աւատական իշխանների հողեր *) և կամ հասարակաց օգտւելու արօտատեղիներ, տուրքի ենթարկւող հողեր և այլն և այլն։

«Քանի խեղճ ու թշւառ էիք, այնքան աւելի ծանրաբեռնւած էր լինում ձեր մի կտոր հողը տուրքերով. քանի ազդեցութեան տէր մարդ՝ այնքան հողը ազատ էր լինում ո և է պարտաւորութիւնից։

«Սահմանադրութիւնը ոչնչացնում է բոլոր այդ խտրութիւնները։ Հարկերը կը լինին հաւասարապէս բաշխւած և ամեն տեսակ սեփհականութիւնը՝ անձեռնմխելի կը մնայ անխտիր։

«Բացի դրանից, Սահմանադրութիւնը որոշել է, որ այսուհետև բոլոր այն հողաբաժինները, որոնք յատկացւած են հասարակական հիմնարկութիւնների, այսինքն փողոցները, դպրոցական և այլ հանրային շէնքերը, հասարակաց զբօսատեղիները և այլն պատկանում են ոչ թէ թագաւորին, այլ ազգին։

«Նա ազգի տրամադրութեան տակ է դրել ծախելու և պարտքերը տալու համար այն բոլոր կալւածները, որոնք յատկացւած

*) Պետական-արքունական կալւածները, որոնք ընծայ էին տրւում արքայազուններին, մեծ դաստակերտներ, որոնք պատկանում էին աւատական իշխաններին և այն ազատ էին լինում ո և է հողային և կալւածական տուրքից։ Ծ. Թարգմ.

էին եկեղեցիների, աբբայարանների և վանքերի։

«Այսպիսով ուրեմն, այժմ ամեն ինչ կարգի է դրւած։

«Մեր վերջին վճիռներից մէկն էլ տրամադրում է անմիջապէս ձեռնարկել քաղաքացիական օրինագրքի (code civile) մշակութեան, կանոնաւորելու մարդկանց և ստացւածքային յարաբերութիւնները ամբողջ պետութեան մէջ։ Այս օրինագիրքը կը լրացնէ մեր գործը, ջնջելով Հռովմէական և Սովորութեան օրէնքների վերջին նշոյլները, որոնք գաւառից գաւառ տարբերւում են միմեանցից և խառնակութիւնների առիթ տալիս։

«Այսօր ես ձեզ չեմ խօսիլ մեր հանրային իրաւունքների, պետութեան նոր բաժանմունքների, ընտրողական և նախնական ժողովների կազմութեան, ժողովրդեան ներկայացուցիչներից կազմւած նոր Օրէնսդրական ժողովի, միապետութեան, խնամակալութեան և նախարարական իրաւասութիւնների, Օրէնսդիր Ժողովի՝ թագաւորի հետ ունենալիք յարաբերութեան, Գործադիր իշխանութեան իրաւունքների, Ֆրանսիայի արտաքին յարաբերութիւնների և այլն մասին։ Բոլոր այս հարցերը Սահմանադրութիւնը մանրամասնօրէն կանոնաւորել է։

«Սակայն, ինչ որ մեզ առանձնապէս հետաքրքրում է, ինչ որ յատկապէս մեզ է վերաբերում ոչ թէ երկու տարին մի անգամ, այլ մեր կեանքում ամեն մի ժամ—դա փողն է։

«Դրա համար էլ, Ազգային Ժողովի նիստերի ընթացքում միշտ անհանգստութեան մէջ եմ եղել և ջանացել եմ մտածել, թէ ի՞նչ են լինում ձեր ու իմ փողերը, ի՞նչ պիտի լինեն, ո՞վ պիտի ուղի, ո՞վ գանձի, ո՞վ ունենայ իր գանձարանում և ինչպէ՞ս պիտի ծախսւեն։

«Ո՛չ մի յանձնաժողով բաց չը թողի. այնպիսի յանձնաժողովներ, որոնք կազմւում էին այդ հարցերը քննելու համար։ Գիտէք, որ իմ այդքան հետապնդումը ձեզ էլ ախորժելի կը լինի, որովհետև ոչ ոք չի սիրում և չի էլ կարող սիրել գործելու դատարկապորտների համար։ Ո՞ւմը հաճելի կը լինի, որ զանազան պնակալէզներ ուտեն ձեր քրտինքի արդիւնքը. սա ձեզ կը գրգռի և կը զայրացնի, չէ՞...

Եւ ահա, չը նայելով Շօվէլի խնդրելուն, ժողովականները հին վաճառանոցը թնդացրին երկարատև և ուժգին ծափահարութեամբ։ Նա ինքն էլ չը կարողացաւ զսպել իրեն և ծիծաղեց։

Վարպետ Ժանը երանելի կերպով քրքջում էր և ասում.

—Ա՜հ, որքա՛ն իրաւունք ունի և որպէ՛ս լաւ ճանաչում է մեզ ամենքիս։

—Առաջներում—շարունակեց Շօվէլը—մեր ամբողջ երկիրը

գտնւում էր Թագաւորի միահեծան իշխանութեան տակ· Թագաւորի, որ մեր գերագոյն տէրն ու իշխանն էր և պետութեան անպատասխանատու, ինքնակալ պետը: Մեր թէ անձը և թէ հողերը նրա սեփականութիւնն էին: Ինչքան փող կամենար, գանձական ժողովները պիտի հաւաքէին կամայ թէ ակամայ· հարկահաւաքներն ու գանձապետները ուզածնին պէս հարկը ժողովում էին· ծխական խորհուրդը աւագների հետ՝ որոշում էին թէ ո՛վ ինչ պիտի վճարէր... Թշւառ ժողովուրդը վճարում էր և Նորին Վեհափառութիւնը պէտք չունէր մեզ հաշիւ տալու:

«Լաւ ուրեմն, Սահմանադրութիւնն ահա վճռեց, որ հարկերի քանակը և ժողովելու ձևը ամեն տարի կը որոշի միայն Օրէնսդիր Ժողովը և որ այդ որոշումը նշանակութիւն կունենայ միմիայն մինչև յաջորդ նստաշրջանի վերջին օրը: Ինչպէս տեսնում էք, այսուհետև ինքներդ էք որոշելու ձեր հարկերի քանակը, քանի որ դուք էք ձեր բերանը լինող ներկայացուցիչների ընտրողները: Եթէ ձեր ներկայացուցիչը գիւղացի լինի, ապահով կացէք որ նա հեշտութեամբ չի համաձայնւիլ յօգուտ պալատականների՝ լծել իրեն և ձեզ: Այդ արդէն ձեր գործն է· ընտրեցէք ձեր շահերը լաւ պաշտպանող պատգամաւորներ· պէտք է առաջ լաւ ճանաչել ուղարկածին և այնպէս ուղարկել:

«Օրէնսդիր Ժողովը որովհետև պիտի նորոգւի ամեն երկու տարին մի անգամ, հետևապէս տուրքերը այդ որոշ ժամանակից յետոյ կը դադարեն նշանակութիւն ունենալուց և եթէ նոր Օրէնսդիր Ժողովը դարձեալ չը վերականգնէ հարկատւութիւնը—ոչ ոք չէ կարող ձեզնից պահանջել մի լիարդ անգամ:

«Ահա մեր Սահմանադրութեան ոյժը: Այն րոպէից, երբ Օրէնսդիր Ժողովը մերժի տուրքերը—ամեն ինչ կանգ կառնի և Թագաւորը ստիպւած պիտի լինի զիջել, ինչ բանում որ պահանջ դնի ազգը:

«Բացի դրանից, որպէս զի դուք—հարկատուներդ, կարողանաք լաւ ստուգել թէ արդեօք ձեր պատգամաւորները պաշտպանում են միշտ ձեր շահերը և թէ արդեօք նրանք շատ առատաձեռն չե՞ն ձեր փողերը սրան—նրան տալու մէջ—Օրէնսդրական իւրաքանչիւր նստաշրջանի բացման հետ միասին, պիտի տպւեն և հրատարակւեն ելևմուտքի մանրամասն հաշիւները: Նոյն կերպ պիտի հրապարակի վրայ դրւեն հարկահաւաքութեան և հասարակական այլ եկամուտների հաշիւները:

«Այսպիսով իւրաքանչիւր քաղաքացի, որ հետաքրքրւում է իր սեփական գործերով, շատ հեշտութեամբ կարող է գոհացնել հետաքրքրութիւնը: Ամեն բան տեղեկանալու համար—բաւական

կը լինի տարին մի անգամ նայել լրագրի մէջ: Այնտեղ նա կը տեսնի, թէ իր ներկայացուցիչը աչալրջութեամբ է հսկում հասարակութեան շահերին, թէ՞, հէնց այնպէս, աչքերը փակած, կուրօրէն կամ անփութօրէն քւէարկում է: Հետևապէս, ամեն քաղաքացի, եթէ միայն նա տխմար չէ, կը գտնենայ իր անելիքը:

«Ինձ թւում է որ դրանից լաւ վերահսկողութիւն ձևաւորել անհնար էր:

«Այժմ մնում է իմանալ, թէ գոհ պիտի լինէ՞ք դուք արդեօք սահմանւած ծախսերից:

«Սահմանադրութիւնը ազդարարում է, որ ազգային պարտքը հատուցանելու համար՝ պէտք եղած գումարը ոչ մի դէպքում մերժել կամ յետաձգել չէ կարելի:

«Ինչ վերաբերում է ազգային պարտքը հատուցանելուն—այդպիսի որոշումը շատ իրաւացի է և ես քէ ուի—«Այո»: Ֆրանսական ազգի նման մի մեծ ազգ չէ կարող հանդուրժել սնանկ հրատարակւելու. Նրան վճարողները պէտք է իմանան, որ ամենաապահով տեղ են պարտք տալիս: Մեզնից իւրաքանչիւրը պատասխանատու է այդ պարտքին՝ իր վերջին լիարդովն անգամ· և մենք սաստիկ կը զայրանայինք, եթէ մեր ներկայացուցիչները, յօգուտ մեզ, Ֆրանսիան յայտարարեն սնանկացած... Պարզ է այս արևի պէս:

«Այսպէս ուրեմն, վերջապէս ձեռք բերինք մենք այն բոլոր իրաւունքները, որոնց համար մեր հայրերն ու պապերը դարերով ձեռքերը դէպի երկինք պարզած՝ խնդրում էին ու աղաչում: Ունինք մենք հաստատ հիմունքների վրայ դրած իրաւասութիւններ և ոյժ՝ դրանց պաշտպանելու: Այսուհետև փոխանակ դէպի գետին կքւած՝ Թշւառ անասունների նման, դառնում ենք իսկական մարդիկ, մարդկային բոլոր իրաւունքներով օժտւած:

«Եւ այժմ, երբ մենք յաղթել ենք, չը նայելով մեր հաշւոյն ապրող դասակարգերի աղմուկներին, հայհոյանքներին ու մեզ միմեանց դէմ հանելու խորամանկ խաղերին, այժմ, երբ այդ «պատուաւոր» մարդիկ հազարներով հեռանում են երկրից և գնում են Անգլիա, Գերմանիա և Ռուսիա՝ երկինք ու գետին գրգռելու մեր դէմ, մինչ մնացողները Ֆրանսիայում, օգտւելով օրէնքի ապահովացումից և կրօնական ներողամտութիւնից, Սահմանադրութեան դէմ են հանում Հարաւային և Արևմտեան երկրի տգէտ ժողովրդեան, այժմ, երբ այդ լաւ ֆրանսացիք ներքին կռւի և արշաւանքի են պատրաստւում իրենց նախկին առանձնաշնորհութիւնները ամեն միջոցով ձեռք բերելու—այժմ, բարեկամներս, երդւեցնում եմ ձեզ, սեղմենք մեր շարքերը, ամուր կենանք, համերաշխ լինենք· Թող խօսք չը լինի այլ ևս գործօն և կրաւորական քաղաքացի-

ների մասին։ Դա Սահմանադրութեան միակ վատ օրէնքն է, որ մեր թշնամիները յաջողեցին անցկացնել տալ Ազգային Ժողովում. միակ խոշոր պակասութիւնը, որն անշուշտ պիտի ոչնչանայ։ Բուրժուազիան շուտով պիտի ըմբռնի, որ եթէ ինքը մենակ մնայ, անմիջապէս կը ջարդուի ազնուականութեան և կղերի ձեռքով. և որ ընդհանուր յաղթանակի պտուղները վայելելու համար, հարկաւոր է բացարձակապէս միանալ ժողովրդի հետ. թող բուրժուազիան ինքն իր ձեռքով իսկ ջնջէ գործօն և կրաւորական քաղաքացիների այդ անարդար խտրութիւնները։

«Մի վերջին խօսք ևս։

«Մենք շահել ենք. ջանանք ուրեմն պահպանել շահածնիս։ Եւ դրա համար, պարոններ, թող ամեն ոք լաւ ի միտ առնէ, որ ինքն է այժմ գերիշխանը. լսո՞ւմ էք, ժողովուրդն է այժմ երկրի տէրը (souverain)։ Իւրաքանչիւր պաշտօնեայ, ամենաառաջինից մինչև ամենայետինը, թագաւորից մինչև անտառապահը՝ կարգուած են ոչ թէ իրենց անձնական շահերի կամ միապետական ձգտումների, այլ միմիայն մեր շահերի համար. մեր, որ նշանակել ենք նրանց և քրտինք ենք թափում ու վարձատրում... Ո՛ւմ ես վճարում եմ—նա իմ ծառայողն է—ահա թէ ինչ բան պիտի լաւ ըմբռնել և հասկացնել տալ մեր որդիներին ևս. ահա թէ ինչը պիտի կազմէ մեր երկրի ոյժն ու մեծութիւնը։

«Յետոյ, պիտի չը մոռանալ երբէք այն մեծ սկզբունքը թէ՝ «մէկը պիտի ամենքի համար լինի եւ ամենքը մէկի համար»։

«Չը թողնենք երբէք, որ բռնաբարուեն մեր քաղաքացիներից ո և իցէ մէկի իրաւունքները։ Եթէ նա աղաղակէ, բողոքէ, օգնութեան վազենք նրան, հրդեհի օգնութեան հասնելու պէս։ Եւ եթէ ո և է ազնուական պաշտօնեայ կամենայ բռնաբարել մեր իրաւունքը—բողոքենք, պահանջենք, կանչենք օգնութեան մեր բոլոր ընկեր-քաղաքացիներին։

«Համարձակ յայտարարում եմ ձեզ, թէ ով թոյլ տայ որ օրէնքը բռնաբարուի յանձին իւր—նա ցածահոգի է (lâche), ստոր, արժէ ոտնատակ տալու և ստրկութեան տարուելու։ Նա, ով օգնութեան չը հասնի հարստահարուող քաղաքացուն — դաւաճան է ազգի։

«Բաւական տանջուեցինք մենք քմահաճոյքների ձեռքից և այն՝ դարերով։ Ժամանակն է ապահովութեան մասին մտածել, Սահմանադրութիւնը իբր հիմք ընդունել և նրա դէմ գործողներին համարել մեր ամենավտանգաւոր թշնամին։ Այդպէս կարող ենք լինել միայն երջանիկ և նոյն իսկ ամբողջ Եւրոպան եթէ մեր դէմն ելնէ ու սպառնայ—կարող ենք անվրդով դիմադրել։ Երբ մի մեծ

ժողովուրդ պաշտպանելու է ելնում արդարութեան և բանիմացութեան վրայ հիմնած իր իրաւունքները—նա անյաղթելի է և կարող է կուրծք տալ ամբողջ աշխարհին»։

Շօվէլի այս ճառից յետոյ—ճառ, որ յիշում են մեր երկրի բոլոր ծերունիները—աներևակայելի էր ոգևորութեան չափը։ Ակումբի նախագահ Ռաֆայէլը հրապարակով շնորհակալութիւն յայտնեց ճառախօսին, որին և մեծ ցոյցերով ընտրեցին ակումբի անդամ։ Դրանից յետոյ, ժամը 10-ին, ճրագ-հանգցների ժամանակ, գիւղ վերադարձանք։

VIII

Այդ 1791 թւի նոյեմբերին էր, Օրէնսդիր Ժողովի սկզբնաւորութեան օրերում, երբ Շօվէլը ծախեց Լէտիւմիէին Բարաքների իր տունը, Ֆալցբուրգում մի բնակարան վարձեց և նրա ներքնայարկում գրավաճառանոց բաց արաւ։

Մարգարիտը շատ էր օգնում նրան, բանալով եկած ապրանքը և տեղաւորելով դարանների մէջ։ Ունէին նաև երկու շրջիկ գրավաճառներ, որոնք գամբիւղը ուսներին՝ ման էին գալիս ամբողջ Ալզաս և Լօրէն։

Երկրի մէջ նմանը չը տեսնուած մի առևտուր սկսեց այդպիսով։

Շօվէլը ամեն տեսակ գրքեր ծախում էր. լինէր կապուցինների աղտոտ գրքոյկները, փախստականների «Ժողովրդեան բարեկամ» կոչուող թերթի համարները... և այլն և այլն։

Երբ մի օր վարպետ Ժանը նկատողութիւն արաւ նրան այդ մասին, Շօվէլը սրամտաբար ասաց.

—Թող ծախուեն, վարպետ Ժան. մեր իշխանները, ազներն ու եպիսկոպոսները, մեր փոքրիկ վարդապետներն ու կրօնաւորները մեզ մեծ ծառայութիւն են մատուցանում, որ տպագրում և հրապարակ են հանում իրենց մտքերը։ Այդպիսով ժողովուրդն իմանում է նրանց ինչ լինելը, հասկանում է նրանց մտադրութիւնները։

Սակայն ժողովրդին գրեթէ ձրիաբար մատչելի դարձնելու համար նոր լուրերը, իր խանութի կողքին ընթերցարանի նման մի բան բաց արաւ, դրեց այնտեղ նստարաններ ու խոշոր սեղան, որի վրայ ամեն օր երևում էին նոր լրագիրներ և ամեն ոք, տալով միայն մի սու, կարող էր գալ նստել և ուզածին չափ կարդալ։

Որպիսի՜ լաւ մտածութիւն էր այդ։ Վաղուց Փարիզում կար

այդպէս բան, սակայն մեր փոքրիկ քաղաքին և շրջակայքին տալու համար նմանը, հարկաւոր էր Շօվէլի պէս բանիմաց մարդ։

Այդ բոլորը սակայն չէր արգելում նրան՝ առաջնորդելու մեր ակումբը, որովհետև Ռաֆայէլ Մանքի փոխարէն, նա էր նախագահ ընտրուած և շաբաթը երեք անգամ, երեկոյեան ժամը 7-ից յետոյ, հին վաճառատեղին (halle) լցւում էր բազմութիւնով։

Շօվէլը գալուն պէս, ամբիոն էր ելնում, նստում իր բազկաթոռի վրայ, աջ կողմը դնում էր ծխախոտի տուփն ու թաշկինակը և մի լաւ պտղունց քթախոտ քաշելուց յետոյ՝ աղաղակում.

—Պարոններ, ժողովը բացուած է։

Իսկոյն յետոյ նա բաց էր անում «Մօնիթէօր» թերթը և սկսում էր կարդալ մեզ Օրէնսդիր ժողովի, երբեմն էլ ժաքօբէնների ակմբի վիճաբանութիւնները։

Այնուհետև նա սկսում էր մեկնաբանել կտորներ, որոնք շատերի համար անհասկանալի էին մնում. յետոյ, երբ վերջացրել էր, ասում էր.

—Ահա, պարոններ, գործերը ինչ դրութեան մէջ են... խօսել ուզողներ կա՞ն։

Երբեմն մէկը, երբեմն միւսը, ունենում էին ասելու բան։ Ամենքը լսում էին... պատասխանում։

Ո՛չ միայն գործաւորներ, բուրժուաներ, այլ նոյն իսկ քաղաքային վարչութեան պաշտօնեաներ գալիս էին ժողովի։ Մշտական յաճախորդ էր նաև հրամանատար Բազըլէրը, որ Ազգային Ժողովի կողմից ուղարկուած էր Բովէտի տեղը բռնելու, որովհետև սա չէր կարողանում մեծ կրթութիւնները ղեկավարել զինավարժութիւնների ժամանակ։

Ամէն ոք ասում էր իր մտածածը։ Յետոյ, երբ ժամը 10-ը հնչում էր, Շօվէլը ոտքի էր ելնում և բարեմոյն դէմքով կանչում.

—Հասարակական գործերը վերջացան այսօր, պարոններ... ցտեսութիւն մինչև եկող երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ...

Եթէ պատմում եմ ձեզ այս բոլորը, գիտեմ որ հետաքրքիր է։ Սակայն իմ միտքն այդ միջոցներում, բոլորովին ուրիշ բաներով էր զբաղուած։

Սկսել էի սաստիկ մտածել Մարգարիտի մասին և աշխատել նրան դուր գալ։ Կիրակի օրերն օրինակ, չքեղապէս զարդարուած, եռանկիւնի գլխարկը գլխիս, կօշիկներս լաւ մաքրում, կարմիր բաճկոնովս զարդարւում ու գնում էի նրա մօտ։ Նախկին Միշէլը, այն դարբնոցի գործաւորը, որ ենթադրում էր թէ ամիսը մի անգամ մօրուքը շինելն էլ բաւական էր—այժմ չը կար այլևս։

Հէնց որ Մարգարիտը Փարիզից եկաւ, հասկացայ որ չէր

կարելի առաջուան նման լինել այլևս, որ շատ ուրիշներն էլ գտնում էին նրան գեղեցիկ, գտնում էին նրա սիրուն մազերը և հաճոյքով նայում սև աչքերին։

Ո՛չ, մենակ ես չէի որ մտածում էի նրա մասին. ո՛չ միայն գիւղացի, գործաւոր երիտասարդներ էլ հետապնդում էին նրան, այլև զանազան քաղաքացի պճնասէրներ, Օվէրնի գնդի սպաներ, նախկին ազնուականներ՝ իրենց հոտաւէտ իւղ քսած մազերով, որոնք լրագիր գնելու պատրուակով՝ Շօվէլի խանութն էին մտնում, ծիծաղում, կատակներ անում, որ ինչ է Մարգարիտի ժպիտներին արժանանան։

Շատ շուտով նկատեցի այդ, և, Աստուա՜ծ իմ, այնուհետև որպէ՜ս սկսեցի լւացւել ու ածիլել ես։ Պէտք էր տեսնել ինձ մէկ, ամէն կիրակի առաւօտ, մեր վերնատանը պատին կախուած փոքրիկ հայելու առաջ, մօրուքս երկու-երեք անգամ իրար վրայ ածելելիս...

Այտերս նոր շինուած տապարի նման փայլում էին, բայց դեռ ինձ այնքան լաւ չէի հաւանում և տասն անգամ ձեռքս ծնօտիս էի քսում տեսնելու թէ մի փոքրիկ մազ չէ՞ր մնացել։

Իսկ ժամը 9-ից յետոյ, երբ մայրս խոր ձիւնի միջով Հանրիգօրֆ էր գնում պատարագի, հայրս հանգարտ բարձրանում էր սանդուխքով ինձ մօտ և հարցնում մեղմաձայն.

—Միշէլ, մայրդ գնաց արդէն... Կուզե՞ս, գամ մազերդ շինեմ...

Ծերունին միշտ ինքն էր հիւսում մազերս *)։ Հիւսուածքը գլխիս վրայ խիտ և սև, պոչն էլ ձեռքիս հաստութեամբ կար։ Շաբաթւայ ընթացքում ստիպուած էի նրան օձիքիս ետևը պահել, որ չը ցնցւէր ուսերիս վրայ և բանելու խանգարէր։

Ծերունի բարեմիտ հայրս—ինքն ամեն անգամ խնամքով յարդարում, շինում էր։ Մտաբերում եմ ինձ այսօրւայ պէս, հեծած աթոռի վրայ, և հայրս, սիրելի՜ հայրս, շատ գոհ ու հրճուանքով՝ ետևումս կանգնած ու մազերս սանդրելիս։

Պարծենում էր իսկ մազերովս, թիկունքներովս և ասում էր.

—Զը կարծես թէ հայրական պարծենկոտութեամբ է որ ասում եմ, սակայն ճիշտն այն է, որ ամբողջ մեր կողմերում քեզ նման ուժեղ տղամարդ չը կայ։

Սիրտս շարժւում էր, ուզում էի սիրուս մասին պատմել

*) Այն ժամանակ շիկ բան էր համարւում մազերը հիւսել և պոչի նման կախ տալ ետևից. մազ չունեցողը, կեղծ մազ էր գործածում նոյն ձևով։
Ծ. Թարգմ.

Նրան, սակայն չէր համարձակւում. չափազանց յարգում էր հօրս և պատկառում նրանից։ Մայրս սակայն, կասկածում էր և պատրաստւում կռւելու։ Մենք էլ, ես ու հայրս, առանց միմեանց հետ խօսք անգամ անելու, մեր կողմից պատրաստւում էինք նրա դէմ։ Սոսկալի էր լինելու անշուշտ, բայց մտածում էինք, որ մենք կը յաղթէինք։

Ու այդ փոքրիկ վերնատանը, խրճիթի կտրան տակ, երազում էինք լաւ օրերի մասին։

Երբ լաւ ածիլւած, լաւ հագնւած՝ պատրաստ էի, հայրս խոզանակով սրբում էր մէջքս ու ասում.

—Լաւ է... գնա այժմ, կարող ես մեկնել... լաւ զւարճացիր, զաւակս...

Համբուրում էի ծերունուն և գոհ սրտով ճանապարհ ընկնում։ Ետևիցս էր նայում ժպտելով։ Բարաքներում մնացող բոլոր պառաւները նոյնպէս կռանում էին իրենց լուսամուտներից՝ անցնելս դիտելու։ «Երեք-աղաւնի» պանդոկը հասած, ոտքի վրայ ճաշում էի, յետոյ դուրս թռնում ետևի փոքրիկ պարտիզից, վախենալով թէ մէկը կը հանդիպէր և խօսքի բռնելով՝ կուշացնէր գընալս։ Մանաւանդ որ, տարւայ այդ եղանակներին, ջրերի նոր սառելու ժամանակ, կարող էր պատահել որ անցորդ մի սայլապան բռնէր ինձ ու ձիերը պայտել տար։ Ստիպւած պիտի լինէի սիրուն հագուստս հանել և թևերս վեր սոթտել։

Մի քառորդից յետոյ քաղաք էի հասնում, դեղագործ Տրիբոլէնի փողոցի ծայրը։ Հեռւից տեսնելով Շօվէլի խանութը իր կլոր դռնով, փոքրիկ տախտակեայ տանիքով և լուսամուտների առաջ ի ցոյց դրւած գրքերի դարաններով—այլևս ուշք չէի դարձնում ծերունի դեղագործի բարևին և շտապում էի տեղ հասնել։

Մտող-ելնողները գրավաճառանոցում բազմաթիւ էին. բոլորը լրագիր էին առնում. հայրենասէրներ, աստիճանաւորներ... Մարգարիտը սպիտակ գլխազարդով, աշխոյժ, գրաւիչ, կանգնած էր իր կայեանքի ետևը. խօսում էր, տալիս իւրաքանչիւրին իր ուզածը...

—Ահա, պարոն, «Փարիզի յեղափոխութիւններ» գրքոյկը. 6 լիարդ արժէ։ Պարոնը «Քաղաքի և պալատի թերթն» է ուզում... Վերջացել է արդէն. ոչ մի համար չը մնաց։

Ու եռանդով ծախում էր։ Սակայն ինձ տեսնելուն պէս՝ դէմքը փոխւում էր և բոլորովին զւարթ՝ կանչում.

—Մտիր գրատուն, Միշէլ, հայրս այնտեղ է. ես էլ իսկոյն կը գամ։

Ձեռքն էի սեղմում անցնելիս։ Ծիծաղում էր և ասում.

—Գնա՛, գնա՛, խօսելու ժամանակ չունիմ։

Ու մտնում էի գրատուն, ուր Շօվէլը նստած իր գրասեղանի առաջ, գրում էր հաշիւները։ Դառնում էր դէպի ինձ։

—Ա՛հ, ա՛հ, դո՞ւ ես, Միշէլ... լաւ... նստիր... թոյլ տուր վերջացնել այս չորս տողը։

Ու գրելով՝ հարցնում էր ինձ լուրեր վարպետ Ժանի, մօրքուր Կատերինի, դարբնոցի և ամեն բանի մասին մանրամասն։ «Չորս տողը» չէր վերջանում։ Վերջ ի վերջոյ ոտքի էի ելնում ասելով.

—Գնամ տեսնեմ ինչ նորութիւններ կան լրագիրներում։

—Այո՛, գնա՛, գնա՛... Հաշիւներն եմ մաքրում քիչ...

Եւ անցնում էի ձախ՝ մեծ սրահը, ուր յաճախորդները լեցւած՝ կարդում էին առաւօտեան թերթերը։ Մի քանիսներն այդտեղ հէնց իրենց նամակներն էին գրում, իսկ ես նստում էի, կարդալու պէս անում, սակայն ապակեպատ դռնից աչքս Մարգարիտին էր, որ գնում էր գալիս իր խանութի մէջ և ինքն էլ ինձ էր նայում ժպտելով։ Երբեմն իսկ յանկարծ, կրակի պէս ներս էր ընկնում, տալիս ինձ մի թերթ և ականջիս փսփսում.

—Կարդա այս, Միշէլ, քեզ հաճոյք կը պատճառի։

Ամբողջ ժամեր էի անցկացնում այդպէս նստած այդտեղ. իսկ եթէ հարցնէիք թէ կարդացածս ինչ էր—կը շփոթւէի ու չէի կարող ասել, որովհետև մի ամբողջ շաբաթւայ համար կուշտ-կուշտ Մարգարիտին նայելով էի զբաղւած՝ քան կարդալով։

Շօվէլը երբ նկատում էր լաւ ածիլւած լինելս, մազերս հիւսած, հագուստս սերտ նստած—սկսում էր ծիծաղել վրաս չարաճճիութեամբ և ինձ անւանել պճնասէր (ֆրանտ)։ Կարմրում էի մինչև ականջներս։ Յաճախ էլ յանկարծ քթախոտի խոշոր տուփն էր պարզում և գոչում.

—Ապա՛, քաղաքացի Միշէլ, համեցէք...

Բայց քիթս աղտոտել առանց ո և է պատճառի — ի՞նչ կը մտածէր Մարգարիտը։ Ու պատրւակում էի թէ քթախոտը գլուխս էր ցաւեցնում։ Ծիծաղում էր, անւանում ինձ ազնւական, որ չէ կամենում մռութն ապականել...։

Հեզնող, ծաղրող մարդ էր, բայց սրտի խորքում շատ էր սիրում ինձ։ Գիտէր նոյնպէս, որ ամեն կիրակի ժամը 1-ից մինչև երեկոյեան 6-ը կամ 7-ը եթէ նստում էի այդտեղ ու կարդալու նման անում և կամ քաղաքականութեան մասին խօսում—իր համար չէր այդ։

Սրատես և թափանցող ակնարկ ունէր և պարզ տեսնում էր իրողութիւնը։ Եւ եթէ թողնում էր ժպտելու Մարգարիտին,

պատճառն այն էր, որ ինձ համարում էր պատուաւոր տղայ։ Առանց դրան՝ ակն չէր քաշւիլ դռնից դուրս քցելու։

Հետևաբար հաճոյքով էր ինձ ընդունում. գաղափարներով համամիտ էինք նոյնպէս, սակայն, հէնց որ առիթը ներկայանում էր, միշտ պատւիրում էր լաւ գրքեր կարդալ։ Իր գրադարանից ամէն ուզածներս փոխ էր տալիս կարդալու։ Լուրջ գրքեր էին, պէտք է ասել. մտածել տւող և կրթիչ։

Որովհետև այլևս չէի կարող Տօվէլի ծախած տան վերնայարկը ելնել կարդալու, իմ վերնատան մէջ էի նստում և վառելախւղի ծախսը զայրացնում էր մօրս։ Կռւի պատրւակ էր դարձել դա։ Եթէ դուրս գնալիս չը մտածէի գրքերը փակել սնդուկումս, ապահով եմ որ ընդունակ էր մի առ մի վառելու նրանց։

Տարիներից ի վեր կապուցինները քարոզել էին նրան ու գլուխը լցրել, թէ գրքերը մոլորեցնում են մարդու հոգին և կորստեան մատնում. որ նման էին նրանք չարի և բարւոյ գիտութեան ծառին, որտեղից օձը քաղել էր Ադամի համար խնձոր, դրախտից մեզ վռնդել տալու համար... և այսպէս զանազան այլ տխմարութիւններ։

Այդ կրօնաւորների ամենից արգիլած գիրքն էր Աստուածաշունչն ու Աւետարանը։ Ժողովուրդը չը պիտի կարդար։ Եւ իրաւունք ունէին արգիլելու սրիկաները, որովհետև ժողովուրդը եթէ կարդար, անմիջապէս պիտի ըմբռնէր, որ քարոզողները լիովին հակառակն էին գործում Փրկչի պատւէրներին։

Սրանից կարելի էր գաղափար կազմել, թէ որքան խոր տգիտութեան մէջ էին ապրում 1789 թւականի մարդիկ։

Ակմբանոցում Տօվէլը անընդհատ յորդորում էր ամենքին՝ ուսանելու, կարդալու։ Իրաւունք ունէր. որովհետև եթէ թշւառութիւնը մի սարսափելի աղէտ է, տխմարութեան մէջ կուրացած լինելը շատ աւելի մեծն է։

Դեռ ևս մեր Ալզասն ու Լօրէնը Ֆրանսիայի այնքան էլ յետ ընկած գաւառներից չէին։ Յիշում եմ, թէ ինչպէս մեր ամբողջ ակումբը զայրացաւ և յուզւեց, երբ Տօվէլը կարդաց մեզ կրօնական խռովութիւնների մասին քաղաքական պատւիրակ Ժանսօնէի տեղեկագիրը, որ նա կազմել էր Օրէնսդիր ժողովի պատւէրով, Վանդէում և Երկու-Սէվր գաւառներում։

Այն ժամանակ մենք ըմբռնեցինք, թէ այդտեղերում տգիտութիւնը շատ աւելի այլանդակ էր, քան մեզնում և որ այդ աստիճանի խաւարը կարող էր վտանգաւոր իսկ լինել ամբողջ ազգի համար։

Այդ տեղեկագրի մէջ պատւիրակ Ժանսօնէն պատմում էր,

որ գիւղացիք հալածում են սահմանադրական քահանաներին փայտերի հարւածներով ցերեկը և հրացանի գնդակներով՝ գիշերը. որ անսաստ, ըմբոստ քահանաները (չերդւողները սահմանադրութեան) շարունակում էին իրենց պաշտօնը, պատարագ էին անում, խոստովանեցնում էին, օրհնած ջուր էին ցրւում տները։ Պատմում էր, որ հաղորդակցութեան ճանապարհների վատութիւնն ու բացակայութիւնը դժւարացնում էր նոր հօսանքի և Սահմանադրական սկզբունքների մուտքը, որ պարզամիտ գիւղացիք ուղղակի պատկերապաշտներ էին և չէին ըմբռնում մարդկային իրաւունքների մասին եղած ոչ մի միտք։ Մանաւանդ, որ փոխանորդ Բօրըգարի պատւէրով, արգիլւած էր ծխական եկեղեցիներում ծխակատարութիւնը, վախենալով, որ սահմանադրական քահանաները կը միջամտեն և կը բանան ժողովրդի աչքը։ Ու արարողութիւնները կատարւում էին հեռաւոր անկիւններում, ժայռերի տակ, մառանների մէջ՝ շարժական սեղանի վրայ, հասարակ կտորներ իբր շուրջառ գործածելով, անագէ ամաններն՝ իբր սկիհ և այլն։

Եւ այդ բոլորը արւում էր աւելի նրա համար, որ տգէտ ժողովրդի վրայ տպաւորութիւն գործեն, ձևացնելով թէ եկեղեցին այժմ հալածական է քրիստոնէութեան սկզբնական օրերի նման, նահատակւած ու մարտիրոսացած...

Այո, հասկացւում էր անմիջապէս, թէ այդ ամենը որքան վտանգաւոր հետևանքներ կարող էր ունենալ։

Տօվէլը, տեղեկագիրը կարդալուց յետոյ, ասաց.

—Անշուշտ այդ անսաստ քահանաները հրաման են ստացել ներքին կռիւ յարուցանելու Ֆրանսիայում, մինչ փախած ազնւականները փորձում են անցնել գերմանացիների գլուխը և գրաւել մեր երկիրը։ Մեր թշնամիների ծրագիրն է այդ և դրա համար էլ մեզ անհրաժեշտ է աւելի ու աւելի սեղմել մեր շարքերը, համերաշխ լինել և պատրաստւել դիմադրելու։

Ռէն գետի միւս ափից վերադարձող բոլոր ճանապարհորդ առևտրականները պատմում էին մեզ, որ Վորմսում, Մայենսում և Կօբլենցում 15,000-ից աւելի ազնւականներ պատրաստւել էին առաջնորդելու Լէօպօլդի և Ֆրէդէրիկ-Գիլյօմի բանակները, երբ Լօրէն ներս մտնելու րոպէն հասնէր։ Հետևապէս հարկաւոր էր կտրուկ միջոցներ ձեռք առնել։

Ազգային ժողովը 1791 թիւ նոյեմբերի 9-ին հրամանագրեց, որ Ռէն գետի աջ ափին հաւաքւած բոլոր ֆրանսացիները դաւադրութեան մէջ կասկածւում էին և որ եթէ այդպէս ժողովւած մնալ յանդգնէին մինչև յունվարի 1-ը, այնուհետև կը համարւէին նրանք դաւաճաններ. օրէնքը կը հետապնդէր և մահւան պատժի

ենթարկելուց յետոյ այդպիսիներին, նրանց կայքն ու ստացւածքը կը գրաւէր յօգուտ ազգի։

Թագաւորը իր վէտօն դրաւ այս հրամանագրի վրայ։

Իսկոյն յուզումները կրկնապատկեցին Բրըտայն, Պուատու և Ժէւօդան։ Վանականները, որոնք աքսորութեան էին ուղարկւած, խաչելութիւններ էին տնկում բոլոր ճանապարհների ճիւղաւորութեան կէտերում, անցորդներին մեդալիկներ (տէր-ողորմեաներ, chapelet) էին ցրւում, կրօնական մեդալներ և թողութեան կոնդակներ. ապօրէն էին հռչակում սահմանադրական քահանաների արած պսակները և նրանց բոլոր ծիսակատարութիւնները յայտարարում էին սրբապղծութիւն, անբարոյականութիւն. բանադրում էին քաղաքային վարչութեան այն պաշտօնեաներին, որոնք սահմանադրական քահանաներին տեղ էին տալիս ծխական եկեղեցիներում և, իրենց կողմից, հրամայում էին «հաւատարիմներին», ոչ մի յարաբերութիւն չունենալ «անկոչ, ինքնակոչ» քահանաների հետ։

Ու պէտք էր տեսնել թէ քանի՜-քանի կանայք թողին իրենց ամուսինները, որդիք՝ իրենց հօրը և այդ գաւառների գիւղացիներից շատերը մերժեցին ազգային պահակութեան ծառայութիւնը։

Այդ միջոցներումն էր, որ Ժան Շուանը իր աւազակախումբով գործի սկսեց։ Նախ ձեռնարկեցին մի առ մի հրդեհել գոմերն ու ամբարները, բայց յետոյ, աւելի համարձակութիւն ստացած, նշանաւոր դարձան իրենց աւերածութիւններով. մանաւանդ ինքը Ժան-Շուանը, որին ազնւականութիւնն ու կղերը հռչակեցին որպէս զօրեղ նեցուկ գահի և եկեղեցւոյ և որ իր անունը տւաւ Վանդէի բանակներին։

Օրէնսդիր Ժողովը, կամենալով կանգնեցնել այդ արտավիժումները, նոյեմբերի 29-ին հրամանագրեց, որ չերդւող քահանաները կը զրկւեն իրենց ռոճիկներից, որ նրանք իրաւունք չունեն պատարագելու, նոյն իսկ մասնաւոր տեղերում և որ եթէ նրանք յանուն կրօնի շարունակեն յուզումներ առաջ բերել նորից, կաքսորւեն իրենց եղած տեղերից դէպի ուրիշ նահանգներ։

Թագաւորն այս հրամանագրին ևս իր Վէտօն դրաւ։

Հետևաբար նա քաջալերիչ էր հանդիսանում մեզ վնասող, մեզ աւերող ձեռնարկութիւնների և արգելք՝ ժողովրդին ազատող օրէնքների։

Աւելի յետոյ, նոյն իսկ նամակներ գտան իրեն—Թագաւորի

*) Մերժումն և ջնջման հրաման. Ժխտումն։

գրածը՝ Պրուսիայի Թագաւորին, որով նա խնդրում էր շտապել գալու։ Յայտնեցաւ այդպիսով, որ համաձայնութիւն էր կայացրել մեր թշնամու հետ՝ գրաւելու Ֆրանսիան։

Ողորմելի՜ մարդը. միմիայն իրեն և իր առանձնաշնորհութիւնների մասին էր մտածում անդադար։ Եւ եթէ դատապարտւեց նա յետոյ իբր դաւաճան ազգի, մեղադրելի՞ էինք մենք։ Հարկաւո՞ր էր թողնել, որ թալանէր ժողովուրդը այնպիսի անձերից, որոնք դարերից ի վեր թշնամու նման տանջել էին և «հպատակ ցեղ» անւանել մեզ։

Օրէնսդիր Ժողովը համաձայնութեան եկաւ ուրեմն, որ Նորին Վեհափառութիւն Լուի XVI Թագաւորը արժանի չէր վստահութեան և Թագուհի Մարի-Անտուանէտը ևս առաւել։ Ամբողջ ազգը նոյնն էր մտածում։

Անհանգստութիւնը օրէցօր մեծանում էր և 1791—92 թւականների ձմեռը, որ շատ խիստ էր մեր լեռների ստորոտներում, մարդիկ նստած իրենց վառարանների շուրջը, մտախոհ, առում էին միմեանց.

—Ըստ երևոյթին մեր ցանածները հնձել չը պիտի կարողանանք. պատերազմը անշուշտ գարնանը վրայ կը հասնի։ Այս երկար տևել չէ կարող. աւելի լաւ է կտորւել, քան այսպէս կեանք ունենալ. յետոյ գուցէ աւելի բարօր կեանք ծագի...

Երբեմն, երբ վատ լուրերը տարածւում էին կամ վաճառանոցում, կամ մեր շրջակայ զինւորանոցներում և կամ գիւղերում— զգալի էր զայրոյթի համակումն ամեն տեղ։ Հայրենասէրները միմեանց էին նայում և մի րոպէ գունատւում, յետոյ հանգստանում։

Մի աւելորդ կաթիլ էր այդ, տանջանքների անօթի մէջ, որ գալիս էր կուտակւելու միւսների վրայ և որ անշուշտ մի օր պիտի լցնէր անօթը և դուրս թափւէր ափերից։

IX

Պատերազմը անխուսափելի էր դառնում։

Մեր թշնամիների յանդգնութիւնն օր օրի վրայ մեծանում էր։ Ո՛չ միայն անսաստ քահանաները ոտքի էին հանում Վանդէի բնակիչներին, այլև Տրիրի և Մայենսի արքեպիսկոպոսները, նաև մեր, Ստրազբուրգի կարդինալ Ռօհանը, որ այնքան խայտառակութիւնների հեղինակն էր,—սահմանագլխի բոլոր մուրացիկներին զինւոր էին գրում՝ մեզ վրայ յարձակւելու համար։

Զօրահաւաքները, հին մաքսաւորները, ոչնչացրած մենաշնորհի և հարկերի նախկին ծառայողները, փող էին ցրւում մեր երկրի սրիկաներին՝ գրաւելու և զինւոր դարձնելու, յեղափոխութեան դէմ հանելու համար։

Ու այս բոլորը արւում էր յայտնի համարձակ. այնպէս, որ զայրոյթը պայթեց։ Առաջ Շօվէլը, յետոյ Լիքսհէյմի Լալըմանը և Ժաքօբէնների ակմբի ճիւղերի բոլոր գլխաւորները, իսկոյն Ազգային Ժողովին յայտնեցին այդպիսի ազատ առեւտուրի մասին։

Եւ թագաւորի, նախարարի լռութեանը չը նայելով—որոնք աչք էին գոցում փախստականների գործունէութեան վրայ—Կամիլ Դէմուլէնը, Ֆրէրօն և Բրիսսօն այնպէս ուժեղ աղաղակներ հանեցին, որ պէտք եղաւ հրաման հանել արգելք դնելու կատարւող խայտառակութիւններին։

Լիքսհէյմում, զօրահաւաքներից մէկը բնակութիւն էր հաստատել «Մեծ եղջերու» պանդոկի մէջ։ Ամէնքը գիտէին, որ այդ մարդը զանազան նենգութիւններով զօրք էր հաւաքում փախստականների համար, որովհետև ազնւականներն իրենք կռւել չէին ուզում և ոչ էլ հրացան վերցնել. նրանց գիւղացիներ էր հարկաւոր իրենց շահերի համար կռւող. իսկ իրենք ծնւած էին միայն տեղակալներ, գնդապետներ և հրամանատարներ լինելու... յանուն փառացն Աստծոյ։

Եւ երբ մի առաւօտ էլ, այդ զօրահաւաքը տաքութեամբ գործի էր սկսել ու անսաստ քահանաների ուղարկած երիտասարդներին զինւոր էր գրում, յանկարծ ազգային ոստիկանները դուռը ծեծեցին։ Նայում է լուսամուտից, տեսնում է եռանկիւն գլխարկները և ետևի դռնից դուրս սպրդելով՝ մտնում խոտի դէզի մէջ։ Բայց նրան տեսել էին. ոստիկանը ետևից է գնում, հրամայում է դուրս գալ, յետոյ, տեսնելով որ իրեն չեն լսում, մերկ սուրը սկսում է կոխոտել խոտի դէզի մէջ ամեն ուղղութեամբ ու կանչել.

—Ո՞ւր է այդ սրիկան... Այստեղ չէ՞... այստե՞ղ էլ չէ...

Վերջ ի վերջոյ լսւում է մի մեծ ճիչ խոտերի միջից։ Ոստիկանը ետ է քաշում կարմրած սուրը և ասում.

—Ա՛հ, այստեղ է եղել... կարծեմ այդ յարդերի տակը։

Այն ժամանակ սրիկան դուրս է ելնում. միակոնի մի թշւառական, որի փորն արդէն ճեղքել էր ոստիկանի սուրը այնպէս, որ նոյն երեկոյ մեռնում է։

Եւ դա բարեբախտութիւն էր իր համար, որովհետև երբ խուզարկում են սենեակը, գտնում են այնտեղ ազնւականների նամակներ, որոնք պարզում են թէ ինչպէ՞ս փախստականները

փող էին ցրւում այդպիսի սրիկաների և ճգնում ներքին-քաղաքական կռիւ յառաջացնելու Ֆրանսիայում։ Գտան նոյնպէս Ալզասի և Լօրէնի անսաստ քահանաների նամակները. քահանաներ, որոնք ուղարկում էին զօրահաւաքին զինւորացու երիտասարդներ։

Եթէ կենդանի մնար թշւառականը, անկասկած անխնայ կախւելու էր։

Թաղեցին և ամբողջ ամիս բաւական թւով ձերբակալեցին ուրիշ զօրահաւաքների, անսաստ քահանաների և այլազան, ամեն տեսակ թափառող դաւադիրների։

Այնուհետև իմացւեցաւ, որ Րէն գետի ափերում երեք տեղ ժողովւել էին ազնւականները և զօրաբանակներ կազմել։ Միրաբօ-Տօննօինը՝ Վօրմսի մօտ և ամենամեծը Կօբլէնցում, որին գլխավարում էին Կոմս դ՚Արտուան և Կոմս դը Պրօվանսը։

Մի միակ արքայազն իշխան, Օրլէանի դուքսը, որ ինքն իրեն, յեղափոխութեան ժամանակ կոչել էր Ֆիլիպ-Հաւասարութիւն, մնացել էր Ֆրանսիա և նրա որդին, հրամանատար ձիաւորների Շարտրում, ծառայում էր Հիւսիսային բանակի մէջ։

Երևակայել պէտք է ուրեմն երկրի անհանգստութիւնը։ Բոլոր վերոյիշեալ փախստական-ազնւականները կարող էին մի գիշերւայ արագ քայլւածքով՝ հասնել մեզ մօտ։

Չը պէտք է կարծել սակայն, որ վախենում էինք նրանցից միայն։ Ո՛չ, եթէ միայն նրանք լինէին՝ կը ծիծաղէինք վրանին. սակայն Պրուսիայի թագաւորն ու գերմանական կայսրը օգնում էին նրանց. բացի դրանից, վհատեցրել էին մեր գնդերին, թողնելով իրենց դրօշը և անցնելով թշնամու կողմը։

Գոնէ այն լաւ էր, որ որոշակի գիտէինք այժմ նրանց՝ թշնամու կողմը անցնելը և թշնամուն իրենց սեփական հայրենիքն աւերելու առաջնորդելը։ Մարդիկ ըմբռնում էին թէ որքան անմիտ էին եղել, որ դարերից ի վեր տւել էին նրանց իրենց քըրտինքը և սնուցել հայրենիքն աւերող սրիկաներ։

Կրկնում եմ, որ սակայն այդ ամենը ոչինչ չը պիտի կարողանային անել մեզ, եթէ չը լինէին Եւրոպական երկրների միւս թագաւորները, որոնք սարսափած ֆրանսական ժողովրդի ինքնագիտակցութեան գալուցը, սպառնում էին խեղդել յեղափոխութիւնը, որպէս զի նրա օրինակը չը վարակի նաև իրենց սեփական հպատակներին։

Ու ամբողջ երկրում միմիայն պատերազմի մասին էր ամենօրեայ խօսակցութեան նիւթը։

Ժաքօբէնների ակումբում, Րօբէսպիէրի և Բրիսսօնի մէջ ծագել էր մի տաք վիճաբանութիւն։ Բրիսսօն առաջարկում էր ան-

միջապէս կռուի ելնել փախստականների, այլև պրուսական թագաւորի և գերմանական կայսրի դէմ։ Րօբէսպիէրը առաջարկում էր, որ իսկական վտանգն առ այժմ ներսից էր և որ հարկաւոր էր նախ և առաջ ոչնչացնել այն դաւաճաններին, որոնք պատրաստ էին հայրենիքը թշնամուն մատնել՝ իրենց արտօնութիւնները ձեռք բերելու համար։

Այդ հակաճառութիւնները տպած, Շօվէլը նրանցից հազարներով ծախում էր։ Բուրժուա, զինուոր և գիւղացի—ամենքը գընում էին. խանութն ամբողջ օրը լիքն էր. Մարգարիտը հազիւ հասնում էր գոհացնելու պահանջները։

Վէճը ակումբում ստանում էր հետզհետէ սուր կերպարանք և ակումբը բաժանուեց երկու կուսակցութեան։ Դանտօնը, Դէմուլէնը, Մարրա, Բիլօ-դը-Վարէննը բռնում էին Րօբէսպիէրի կողմը։ Նրանք պնդում էին որ թագաւորը,թագուհին, արքունիքը և փախստականներն էին ծագեցրել պատերազմը, անկումից փրկուելու համար. որ նրանք մեզ մղում էին դէպի կռիւ, որովհետև յաղթուած բռնակալութեան վերջին միջոցն այդ էր մնացել։

Բրիսսօն դիմադրում էր։ Նա անդամ էր Օրէնսդիր ժողովի, որը նոյնպէս այդ ժամանակ բաժանուեց երկու կուսակցութեան—Ժիրօնդէնների և Մօնտայնիարների *)։ Մօնտայնիարները ուզում էին առաջ ներսը մաքրել, երկիրը ազատել ներքին դաւաճաններից, իսկ Ժիրօնդէնները պնդում էին սկսել նախ դրսի թշնամիներից։

Լուի XVI հակւում էր դէպի Ժիրօնդէնները, որովհետև այդ կողմից կորցնելու ոչինչ չունէր։ Եթէ մենք լինէինք յաղթողը—նա այժ կստանար դադարեցնելու յեղափոխութեան ընթացքը, որովհետև բանակը միշտ կողմնակից է լինում այն թագաւորին, որ պատերազմներ է շահում և պատուանշաններ ու աստիճաններ բաշխում։ Եթէ յաղթուէինք, Պրուսիայի թագաւորն ու Աւստրիայի կայսրը պիտի ամեն ինչ նախկին ձևին վերածէին մեր երկրում և թագաւորն ու ազնուականութիւնը կունենային այն բոլորը, ինչ որ ունէին Յեղափոխական ժողովից առաջ։

Այդպէս գոնէ մտածում էր Մարի-Անտուանէտ թագուհին։

---

*) Ժիրօնդէններ անունը ծագել է Ժիրօնդ նահանգի անունից. այդ նահանգի պատգամաւորներն էին, որ հիմք դրին կուսակցութեանը։ Համարւում էր նա չափաւոր-պահպանողական կուսակցութիւն։ Մօնտայնիարներ (լեռնցիներ) կատաղի հանրապետականներ էին և առաջիններին հակառակորդ։ Երկու կուսակցութիւնները յետոյ խոշոր,արիւնալի բաղխումներ ունեցան միմեանց հետ։
Ծ. Թարգ.

Թշնամու վրայ էր յոյսը դրել՝ իր նախկին ազդեցութիւնն ու դիրքը վերստանալու համար։

Քանի պատերազմի օրերը մօտենում էին, այնքան գրգռումն ու իրարանցումը մեծանում էր, զարհուրելի կերպարանք ընդունում. այնքան թագաւորը, թագուհին, նախարարներն ու զօրավարները անվստահելի էին դառնում և կասկածելի՝ ժողովրդեան աչքում։

Այլևս պարզ էր, որ այդ մարդկանց շահերը չէին համապատասխանում մեր շահերին։ Իսկ ինչ որ Ժիրօնդէնների կուսակցութեան վարկն էլ կոտրեց—դա այն էր, որ Լուի XVI նրանցից ընտրեց իր նոր նախարարները։

Բայց այդ բոլորը յայտնի են ամենքին։ Ես միմիայն կը պատմեմ ձեզ այն, ինչ որ մեր կողմերին է վերաբերում և ինչ որ ինքս անձամբ եմ տեսել։

Արշաւանքի լուրերը,սկսած 1792 յունուար 1-ից մինչև Մարտ ամիսը, գնալով ստոյգ դարձան։ Ֆալցբուրգն արդէն սկսեցին զինել. պարիսպների վրայ թնդանօթներ հանեցին, որմածակեր շինեցին, մարտկոցներում և զառիվայրերի վրայ՝ պատնէշներ։ Պատերազմական նախարար Նարբօնը այցելում էր սահմանագլխի ամրութիւնները, նրանց պաշտպանողական վիճակի մէջ դնելու համար։ Մի խօսքով, ամեն բանիմաց մարդ տեսնում էր, որ վտանգը մօտ է։

Միևնոյն ժամանակ էլ, մեր ներքին թշնամիները կրկնապատկում էին իրենց յանդգնութիւնը։ Կաթոլիկ—հռովմէական և առաքելական ընկերութիւնը զօրեղացել էր. սկսել էին սպանել սահմանադրական քահանաների՝ ճանապարհների խուլ կողմերում. թալանում էին նրանց տները, աւերում պարտէզները։

Ստրասբուրգի մի պատգամաւոր, Ժակօբէնների ակումբում բարձրաձայն բողոքեց, որ Ներքին-Րէնի վարչութիւնը ոչ մի միջոց ձեռք չէր առնում դադարեցնելու այդ ոճիրները. արդէն յիսունից աւելի հայրենասէր քահանաներ էին սպանուել, իսկ բողոքող քաղաքացիներին ձերբակալում էին նրանք, որոնց պարտքն էր ընդհակառակն, պաշտպանել և ականջ կախել բողոքողներին։ Քաղաքապետ Դիտրիխը ամբաստանւում էր որպէս պարտազանց։

Այդ դեռ բաւական չէր, թղթադրամն էլ, յուզմունքների պատճառով, 100-ին 70 կոտրւում էր։ Ազնուականների ուզածն էլ հէնց այդ էր որ կար։

Երևակայեցէք այլևս ժողովրդի յուսահատութիւնը և դրան հետևող կատաղութիւնը։ Եւ եթէ աւելի ուշ, Ստրասբուրգի արքեպիսկոպոսութեան փոխանորդ Շնէյդէրը, սահմանադրական

սպանուած քահանաների վրէժը հանելու համար, տասնեակներով Գիլյոտինի *) էր ենթարկել տալիս անսաստ և խռովարար դաւաճան քահանաների—չը պէտք է զարմանալ:

Զարհուրելի բան է դահճի պաշտօն կատարելը, սակայն միշտ խօ չը պիտի՞ ոչխարի նման վիզդ պարզես թրի դիմաց: Սպանողները գայլեր են և նրանց հարկաւոր է նոյն կերպով ոչնչացնել անխնայ:

Եւ մինչ ամեն ճանապարհների վրայ սպանում էին հայրենասէրների—օտար լրտեսները վխտում էին երկրում, տարածում վատ, յուզող լուրեր, այլև կեղծ թղթադրամներ, որոնց շինում էին փախած ազնուականները Ֆրանկֆուրտի մէջ: Այլևս ոչ ոք չէր հաւատում ո և է օտարականի. զգուշանում էին նոյն իսկ միմեանց լուրեր հաղորդելուց և նոյն իսկ ակումբում ամեն ոք զգոյշ էր պահում իրեն: Բացի դրանից, այլևս առանց սկզբից գրւելու, ակումբանոց չէին թողնում ամեն մարդու:

Դարբնոցում այնուամենայնիւ աշխատանքը շարունակւում էր: Վարպետ Ժանը միշտ յոյս ունէր վերսկսելու Պիկհօլցի հողերի մշակութեան գործը. երկու ամիս դեռ ժամանակ կար. գարնանացանը մեզնում մարտ ամսին է սկսում:

Սակայն երբ մտածում էր, որ այն ժամանակ հէնց պատերազմը կարող էր ծագել և որ փախստականները իրենց բարեկամ պրուսացիների և աւստրիացիների հետ կարող էին գալ վառելու իր նոր շինած ամբարը և ագարակի տան նոր կառուցած տանիքը, կարող էին աւերել արտերը և նոյն իսկ իրեն էլ կախել ո և է ծառի ճիւղից—այդ միտքը նրան այնքան կատաղեցնում էր, որ ամեն երեկոյ, կաս-կարմիր կտրած, մեծ բռունցքը սեղանի վրայ, անվերջ կերպով անիծում էր ազնուականներին, գոռում էր, որ փոխանակ սպասելու նրանց գալուն՝ շատ աւելի լաւ կը լինէր գնալ դէպի Ռէն գետը, ցրւել նրանց բանակները, հրդեհել նրանց ագարակները, ամբարներն ու հունձը, քան թէ տեսնել այդ վատ աւազակներին մեզ մօտ թալանող, աւերող ու փչացնող...

Նա Ժիրօնդէնների կողմն էր բռնում և ասում էր, որ կամաւոր հայրենասէրներ չէին պակասիլ այդպիսի մի արշաւանքի համար, որ ինքն իսկ կանցնէր իր կողմերի գնդի գլուխը, կիջնէր Սարրի հովիտը և կը սրբէր ինչ որ հանդիպէր:

Ալզասցի և Լօրէնցի գիւղացիներ, որոնք պանդոկից անցնելիս լսում էին նրա այդպիսի խօսքերը, հաճոյք էին զգում, սե-

*) Գլուխ կտրելու մեքենայ:

ղանները ծեծում, շշերով գինի բերել տալիս և խմբովին երգում.

—Ça ira!... Ça ira!... *)

Այսպէս հետզհետէ ամենքը ոգևորւում էին, աւելի և աւելի խիզախ դառնում:

Փետրւար ամսին սկսեց սաստիկ անձրևներ. շատերն ասում էին, որ սերմերը կը փտեն հողի տակ և որ տարին վատ էր լինելու: Արդէն սովի ձայներ էին լսւում. պաշարեղէնը սկսել էր թանգանալ: Իսկ հարաւում, սովի գուշակութիւնը, խառնւելով հակառակորդ քահանաների քարոզներին—ազդարարում էին աշխարհիս վերջը, յուսահատութիւն սերմանում ամեն տեղ և պատրաստում այն զարհուրելի փոթորիկները, որոնց մենք ականատես եղանք յետոյ:

Օրւայ խօսքը մեր ակումբում՝ «Պէտք չէ պատերազմ» բառերն էին: Շօվէլը դէմ էր պատերազմի: Նա պնդում էր, որ դա ամենամեծ դժբախտութիւնը կը լինէր երկրի համար և որ պէտք էր լաւ գաղափարներին ժամանակ տալ արմատ բռնելու, օգտւել ժամանակից՝ արմատախիլ անելու համար լաւ սերմերի հետ բուսած վատ խոտերը:

Նա մեզ անընդհատ քարոզում էր համերաշխութիւն և միութիւն, որովհետև մարդկութեան թշնամիները միաբանած, մեր մէջ կամենում էին երկպառակութիւն ձգել՝ հեշտութեամբ մեզ տիրապետելու համար:

—Ամենալաւ միջոցը դա է. գոչում էր նա—մի՛ մոռանաք այդ: Քանի բոլոր հայրենասէրները, գործաւորները, բուրժուաներն ու գիւղացիք ձեռք ձեռքի տան—այնքան նրանք պակաս երկիւղ կ՚զգան: Հէնց որ բաժանւեցին—կորսւած են. կը վերադառնան հին արտօնութիւնները և ոմանք կեանքի ամեն վայելքների տէր կը դառնան, իսկ ուրիշները՝ ամեն թշւառութեան:

Մեծ ճշմարտութիւններ էր նա ասում մեզ և երևաց յետոյ, որ օգտւեցինք մենք Շօվէլի այն յորդորներից, որոնք ոչ միայն ամբողջ Ֆրանսիային, այլև հանուր մարդկութեան մեծ օգուտներ տւին:

Այլևս չէին խօսում Լաֆայէտի մասին և ոչ էլ Բայլիի:

Լաֆայէտը, Սահմանադրութեան հաստատութիւնից յետոյ, հրաժարական էր տւել ազգային պահակների հրամանատարութեան պաշտօնից, կամեցել էր Փարիզի քաղաքապետը ընտրւել, բայց ընտրողները ձայն էին տւել Պետիօնին և նա էլ քաշւել էր Օվէրն: Լրագիրներն այլևս չէին խօսում նրա մասին:

*) Յեղափոխական, կռւի հրաւիրող երգ:

Այդ միջոցներում էր, որ Ազգային Օրէնսդիր Ժողովը Տրիրի և Մայենսի իշխանապետներին *) հրաւիրեց ցրւելու իրենց մօտ ժողոված փախստականներին։ Կայսրընտիր իշխանները ոչ միայն մերժեցին, այլև պահանջ դրին, որ Ալզասում, նախկին գերմանական տիրապետող իշխանների իրաւունքները վերականգնւեն։

Միւս կողմից Աւստրիական Լէօպօլդ կայսրն էլ յայտարարեց, որ եթէ իր ընտրող իշխանները յարձակւում կրեն, նա պիտի գար նրանց օգնութեան։

Մեր Թագաւորն այն ժամանակ՝ ինքը պատասխան ուղարկեց նրան, որ եթէ մինչև յունւարի 15-ը, փախստականների կուտակումները չը ցրւեն—զէնքի ույժ գործադրելու պիտի ենէ։

Ազգային Ժողովն էլ իր կողմից յանդուգն և դատապարտւած հռչակեց Թագաւորի եղբայրներին, որպէս դաւադիրների։

Այնուհետև ձեռնարկւեցաւ կազմակերպելու երեք բանակ, իւրաքանչիւրը 50,000 զինւորով, Լիւկների, Լաֆայէտի և Րօշամբօի հրամանատարութեան տակ։

Ամենքը կարծում էին, որ ահա սկսելու էր պատերազմը, սակայն մինչև մարտ ամիս ոչ մի շարժում տեղի չունեցաւ. միայն միապետականները կատաղի յարձակումներ սկսեցին Ժաքօբէնների ակումբի դէմ և իրենց լրագիրներով աղաղակեցին, որ այդ ակումբանոցը աւազակների որջ էր։

Սակայն Ժաքօբէնները և ոչ իսկ պատասխանում էին նրանց. չարժէր անգամ։ Ճշմարիտ կռիւը պայթեց աւելի Մօնտայնարների և Ժիրօնդէնների կուսակցութեանց միջև, սկսած 1792 թիւ փետրւարից։

Յայտնի է արդէն, որ այդ կռիւը վերջացաւ թէ մէկի և թէ միւսի անդամների մահով։

Յուզումն ու խրարանցումը մեզնում այնքան մեծ էր, Փարիզի և գաւառների ժողովուրդը այնքան մեծ ցանկութիւն էր ցոյց տալիս նետելու վրայից սովորական կեանքը խանգարող բաները և այնպէս վճռել էր ամուր պահպանել իրաւունքներն ու կայքը, որ անշուշտ խմբովին պիտի վրայ տար գայլերի նման—երբ յանկարծ, Աւստրիայի կայսր Լէօպօլդը, որ 40,000 զինւոր էր ուղարկել Սարրին-Նահանգները և 20,000 էլ Րէնի վրայ—մեռաւ իր շւայտ կեանքի շնորհիւ։ Ոյժերը պահպանելու ձգտումով՝ թոյներ էր գործածել և մեռել էր՝ խոցերով մարմինը լի։

*) Electeurs. կոչում էին հին գերմանական կայսրների ընտրող մեծաւոր—ազնւականներին Գերմանիայում։ Կայսրընտիրներ։ (Գերմաներէն՝ Կուրֆիւրստներ)։
Ծ. Թարգմ.

Այնուհետև շատերը կարծեցին, որ նրա Ֆրանսուա որդին աւելի խելօք գտնւելով՝ սահմանից ետ պիտի կանչէր իր վաշտերը, չը խառնւելով մեր ներքին երկպառակութիւնների մէջ։

Սակայն ընդհակառակն, հէնց որ գահ բարձրացաւ, ներշնչւած իր երկրի ազնւականներից ու կրօնաւորներից, պահանջ դրեց Ազգային Ժողովին, որ նա ոչ միայն գերմանական իշխաններին վերադարձնէ Ալզասի իշխանական ստացւածքները, այլև ամբողջ Ֆրանսիայում վերականգնէ երեք դասակարգերի խտրութիւններն ու արտօնութիւնները և հոգևորականութեանը տայ իրեն նախկին բոլոր կալւածները։

Այդ արդէն չափազանց էր։ Մեզ հետ վարւում էր, ինչպէս ստրուկների հետ, որոնց վրայ բաւական էր գոռալ՝ որ իսկոյն հնազանդէին։ Ո՛չ մի հայրենասէր չը կարողացաւ անվրդով մնալ, երբ լսեց այդ։ Առանց այն էլ, արիւննիս եռ էր գալիս. և ապրիլ 23-ին, չը նայելով Շօվէլի դիմադրութեան, որ մեզ անընդհատ կրկնում էր թէ պատերազմն աւելի օգուտ կը տայ իշխաններին քան ժողովրդեան—ամենքն ուզում էին կռւի ելնել։

Վարպետ Ժանը պատրաստւում էր առաջարկ դնել մեր ակումբանոցում՝ դիմելու Ազգային Ժողովին և պահանջելու պատերազմ։ Շօվէլի հետ իսկ ուզում էր հակաճառել, նախատել նրան որ երկրի պատիւը ստորացնում է և որ այդ պատիւը շատ աւելի պէտք էր բարձր պահել և նրա համար էլ կռւի ելնել անմիջապէս։

Ես ինքս զայրոյթից հակւում էի դէպի վարպետ Ժանը, չը նայելով որ ներքնապէս զգում էի թէ Շօվէլն իրաւացի էր և ոչ թէ մենք։

Այդ ամբողջ օրը, որ երկուշաբթի էր, առաւօտից մինչև երեկոյ անձրևեց։ Զայրոյթը համակել էր ամենքիս և մայլ դարձրել. այլևս գործելու սիրտ չը կար. ամեն րոպէ կանգ էինք առնում ու հայհոյում այն թշւառականներին, որոնք կուտակել էին մեր գլխին վերահաս բոլոր վտանգները։

Ընթրիքից յետոյ վերջապէս, ժամը $7\frac{1}{2}$-ին, ցեխի միջով ճանապարհ ընկանք դէպի ակումբանոց։ Վարպետ Ժանը առջևից, կարմիր մեծ անձրևանոցը գլխին, գլուխը կախ. ետևից գնում էր Լէտիւմիէն, ուսերի վրայ հնամաշ վերարկուն և նրանց ետևից էլ շարան-շարան բոլոր հայրենասէրները։

Երբ Ֆալցբուրգ հասանք, գտանք քաղաքը մեծ շարժման մէջ. մարդիկ տնից-տուն էին վազվզում արտաքոյ կարգի դէպքերի ժամանակւայ նման, տաք-տաք խօսակցում էին մութ ծառուղիներում...

Մտածեցինք, որ ակումբի մէջ առաջարկելիք պահանջն էր պատճառը. սակայն երբ փոքրիկ հրապարակն եկանք, բոլորովին ուրիշ բանի դէմ առ դէմ եկանք։

Շօվէլի խանութի դռները լայն բաց էին, իսկ ներսում այնքան բազմութիւն կար, որ ամբոխը խռնուել էր՝ ինչպէս մեղուներ փեթակների առաջ, դռների մօտ։ Ճիշտ խանութի մէջ, միմեանց վրայ կոացող խռնումի կենտրոնում, կանգնել էր Մարգարիտը մի աթոռի վրայ, լրագիր ձեռքին։

Քանի ապրում եմ, միշտ աչքիս առջև կը լինի Մարգարիտն այնպէս, ինչպէս այդ երեկոյ էր։ Փոքրիկ սև գլուխը լամպի տակ, առաստաղի մօտ, աչքերը բոցափայլ, դէմքը կենդանացած և ոգևորութեամբ կարդալիս։

Մի էջը վերջացել էր, երբ մենք Բարաքցիներս վրայ հասանք՝ վազելով ցեխի մէջ և ջանացինք մեզ էլ տեղ անել՝ հրելով հրմշտկելով։ Շարժում տեղի ունեցաւ մի րոպէ, բայց Մարգարիտը աղաղակեց խիստ և պարզ ձայնով։

—Լռութիւն, լսեցէք այժմ Ազգային Ժողովի որոշումը. Ֆրանսիան է խօսողը…

Ու սկսեց կարդալ.—

«Ազգային Օրէնսդիր Ժողովի որոշումը։

«—Ազգային Ժողովը քննութեան առաւ Թագաւորի պաշտօնական առաջարկը։ Ի նկատի ունենալով որ Վիէննայի արքունիքը, գոյութիւն ունեցող դաշինքների հակառակ՝ չէ դադարում համարձակ պաշտպանութիւն նուիրել ապստամբ ֆրանսացիների. որ նա դաշն է կապել եւրոպական մի քանի թագաւորների հետ՝ ֆրանսական ազգի անկախութեան և ապահովութեան դէմ ելնելու սպառնալով. որ շարունակում է Աւստրիական կայսրը իր թշնամական ցոյցերն ու պատրաստութիւնները. որ ակներև կերպով և պաշտօնական հրաւէրով վիրաւորել է նա Ֆրանսիայի ժողովրդին՝ յայտարարելով թէ մտադիր է պաշտպանել գերման իշխանների սեփականութեան իրաւունքները և պահանջները մեր երկրում, չը նայելով որ ազգը առաջարկել է և այժմ էլ առաջարկում է վերադարձնել այդ իշխաններին՝ իրենց հողերի արժէքը. նկատի ունենալով նաև, որ կայսրը ձգնում է պառակտումն ձգել մեր ազգի մէջ՝ զինելով մի մասը միւսի դէմ և առաջարկելով ապստամբներին միացեալ պետութիւններից օգնութիւն. վերջապէս ի նկատի ունենալով, որ Ֆրանց I կայսրը մերժեց պատասխանելու Ֆրանսիացոց Թագաւորի վերջին նամակներին և ջնջեց այդպիսով խաղաղութեան ու բարեկամական յարաբերութեան ո և է յոյս ու

պատերազմը անխուսափելի դարձրեց—ժողովը որոշեց, որ պատերազմն անհրաժեշտ է»։

Այստեղ յանկարծ մի այնպիսի ոգևորութիւն եկաւ վրաս, որ գլխարկս նետեցի դէպի օդն ու աղաղակեցի.

—Կեցցէ ազգը…

Ետևումս եղողները բոլորն էլ հետևեցին ինձ և փոքրիկ հրապարակը լցւեց նոյն տեսակ կանչով։ Մարգարիտը դարձաւ, տեսաւ ինձ, ուրախ ժպտեց, յետոյ ձեռքը բարձրացնելով՝ ասաց.

—Լսեցէք, դեռ չէ վերջացել…

Եւ երբ լռութիւնը տիրեց նորից—շարունակեց ընթերցումը։—

«Ազգային Ժողովը յայտարարում է, որ ֆրանսական ազգը, Սահմանադրութիւնով սրբագործւած սկզբունքներին հաւատարիմ՝ չէ ձեռնարկում պատերազմի՝ տիրապետութեան ձգտումներով և կամ ուրիշ ազգի ազատութիւնը բռնաբարելու միտումով. եթէ զէնք է վերցնում, լոկ իր ազատութիւնն ու անկախութիւնը պաշտպանելու համար է։ Յայտարարում է ժողովը, թէ այն պատերազմը, որ ֆրանսական ազգը ստիպւած է այժմ մղել, ոչ թէ մի ազգը ազգի դէմ է, այլ ազատ ժողովրդեան իրաւացի պաշտպանութիւն՝ մի Թագաւորի ոտնձգութիւնների դէմ։ Յայտարարում է, որ ֆրանսացիք երբէք պիտի չը շփոթեն իրենց եղբայրները թշնամու հետ, չը պիտի խնայեն ամեն ջանք՝ մեղմացնելու համար պատերազմի աղէտը, խնայելու և պահպանելու համար ամեն սեփականութիւն և ջանալու բոլոր արհաւիրքը շուռ տալ ազատութեան դէմ կռւողների գլխին։ Յայտարարում է նաև, որ ազգը իր մօտ կընդունի բոլոր այն օտարականներին, որոնք կը ցանկան գալ իրենց ոյժերը նուիրելու ազատութեան համար մղւած կռւի յաջողութեան համար։ Նա մինչև իսկ ամեն միջոց ի գործ կը դնի, որ Ֆրանսիա եկած օտարականները հաստատւեն երկրում ապահով և ազատ կերպով»։

«Այդ իսկ պատճառներով, Ազգային Ժողովը քննեց Թագաւորի պաշտօնական առաջարկը և եկաւ այն եզրակացութեան, թէ պատերազմը անխուսափելի է և անհրաժեշտ»։

«Եւ որոշեց յայտարարել պատերազմ ընդդէմ Հունգարիայի և Բոհէմիայի Թագաւոր Ֆրանց I-ի»։

Անմիջապէս հարիւրաւոր ձայներ սկսեցին կանչել որոտագին.

—Կեցցէ ազգը…

Այնպէս մեծ էր այդ աղաղակը և այնքան երկարատև, որ հասաւ մինչև զինւորանոցները, ուր Պուատուի վաշտի զինւորները գլուխնին դուրս պարզեցին լուսամուտներից և գլխարկնին

ցնցեցին ոգևորութեամբ, մոմերը սննակից-սննակ վառեցին. ցածում, պահակները նոյնպէս սուինների ծայրը անցկացրին իրենց սաղաւարտները և օդի մէջ շարժեցին։

Իսկ փողոցում, հրապարակում ամենքը կանգ էին առնում, իրար ձեռք սեղմում և գոչում.

—Վերջացա՜ւ, պատերազմը յայտարարուած է։

Տենդային դրութիւն սկսեց. ամենքն իրար էին անցնում, կանչւռտում հրապարակի վրայ, չը նայելով որ բարակ անձրևը շարունակում էր մաղել և քաղաքի վրայ իջել էր մի խոնաւ մառախուղ։

Մարգարիտը ցած էր իջել աթոռից և ես բազմութիւնը ճեղքելով, մօտեցայ նրան։ Ձեռքն ինձ պարզեց ու ոգևորութեամբ ասաց.

—Կռուելու ենք, չէ՞, Միշէլ։

—Անշուշտ. ասացի ես—Ե՛ս էլ հօրդ պէս էի մտածում, սակայն, քանի որ յարձակւում են մեզ վրայ, հարկաւոր է պաշտպանել մինչև մեր արեան յետին կաթիլը։

Ու ձեռքը սեղմում էի, նայում նրան յափշտակութեամբ, որովհետև նա այդ ժամանակ շատ աւելի գեղեցիկ էր թւում իր թեթևակի կարմրած այտերով ու քաջութեամբ լի մեծ, փայլուն աչքերով։

Այդ միջոցին ներս մտաւ Շօվէլը։ Անձրևից մազերը թրջւել կպել էին ճակատի վրայ։ Նրան հետևում էին հինգ-վեց հայրենասէրներ, որոնց ինքն էր հրաւիրել։

—Ա՛հ, դուք էք այդ, ասաց նա, տեսնելով մեզ խանութում. անձրևն է երևի պահել ձեզ այստեղ... լա՛ւ, գո՛հ եմ... այժմ ժողովի կը նստենք։

—Հէ՜, կանչեց նրան վարպետ Ժանը—Կռուելու ենք, չէ՞. այս անգամ ձեր կամքի հակառակ...

—Այո՛, ասաց Շօվէլը կոշտութեամբ—ես դէմ էի պատերազմի. բայց քանի որ օտարները ուզում են, այժմ պիտի լաւ կըռուենք... Գնա՛նք...

Ու բոլորս մտանք դէմ ու դէմ գտնւող ակումբանոցը։ Արդէն լիքն էր հին շէնքը բազմութիւնով։ Սեղերի մէջ, անկիւններում, խռնւել էին, խօսակցում ու վիճում։

Շօվէլը ամբիոնն ելաւ և առանց նստելու, դողդոջուն, բայց պարզ ձայնով սկսեց խօսել։

Ասաց, որ ինքը խաղաղութիւն էր ցանկացել. խաղաղութիւն, որ ազատութիւնից յետոյ, մարդկութեան ամենամեծ բա-

րիքն է։ Բայց, քանի որ այժմ պատերազմ է յայտարարուած, մեզնից նա, ով յաղթութիւնից բացի ուրիշ բան կը տենչայ, նա, ով չի զոհիլ իր ստացւածքն ու անձը ազգի անկախութեան համար—պիտի նկատւի ստորներից ամենաստորը և վատերից վատը...

Ասաց, որ այդ պատերազմը սովորական պատերազմներից չէր լինելու. ազատութեան և ստրկութեան խնդիր էր լուծւելու նրանով. կռիւը բերելու էր մեզ կամ յաւիտենական անարդարութիւն և կամ անհատական իրաւունքի յաղթանակը. Ֆրանսիայի մեծութիւնը կամ ստորացումը կախում ունէր այդ պատերազմի ելքից։

Ասաց, որ չը պէտք էր կարծել թէ ամեն ինչ շուտ կարող էր վերջանալ. մեր ոյժերը պէտք է ժողովէինք և տարիների համար վճռականութիւն ունենայինք. բռնակալները պիտի մեզ վրայ նետէին իրենց տգիտութեան մէջ կրթւած թշւառ զինւորներին, որոնց հետ փոխանակ համբուրւելու, պիտի զարնւէինք ու արեան հեղեղ պիտի հոսէր...

—Սակայն, աւելացրեց նա—Ով իր իրաւունքներն է պաշտպանում բռնի ոյժով անգամ՝ նա արդար է. ով ուրիշի իրաւունքների վրայ է ուզում հիմնել իր բարձրութիւնը—նա ոճրագործ է։ Արդարութիւնն ուրեմն մեր կողմն է...

Դրանից յետոյ նա էլի խօսեց մեզ այն մասին, որ այս պատերազմը մեր կողմից զինւորականների պատերազմ չէ, այլ քաղաքացիների. թշնամու մօտ չենք գնալ մենք թնդանօթներով ու սւիններով միայն, այլև իրաւունքով, բանիմացութեամբ և լաւ սրտով. մենք նրանց, վատի հետ և լաւը կը տանք, որովհետև որքան և սահմանափակ լինեն, պիտի վերջ ի վերջոյ ըմբռնեն սակայն, որ պաշտպանելու են ելել շղթաներ և լուծեր մեր դէմ. մեր, որ փշրել ենք այդ բոլորը. այն ժամանակ կօրհնեն մեզ և կը միանան մեզ հետ...

Այդ պատերազմին Շօվէլը անւանեց «մտքերի տարածման կռիւ» որին իբր առաջնորդ գունդ՝ քայլում են գրքերը, ազատ խօսքեր, խաղաղութեան առաջարկ, օգտակար դաշինք և մարդկային իրաւունքներ։

Եւ վերջ ի վերջոյ, երբ սկսեց խօսել բոլոր այն թշւառականների մասին, որոնք ձգնում են ետևից զարնել մեզ—գոռաւեց և գոչեց, որ ահա այդտեղ կռիւը զարհուրելի պիտի լինէր, եթէ այդ մարդիկ շարունակէին իրենց վարմունքը. որովհետև հայրենասէրները ստիպւած պիտի լինէին, հայրենիքի ազատութեան համար լինէր, արեան օրէնքը գործադրել նրանց վրայ, մինչև յետինը ջարդել-ոչնչացնել։

Ու այդ ուժեղ մարդը, որ միմիայն լուրջ հիմունքներ էր առաջադրում—սրտաշարժւեց։ Ամբողջ ակումբը դողաց՝ լսելով նրա խեղդուկ ձայնով ասւած հետևեալ խօսքերը.

—Այդպէս են ուզում թշւառականները, այդ է ուզածները... Հարիւր անգամ առաջարկեցինք խաղաղութիւն, բռնեցինք նրանց ձեռքերն ու ասացինք—«Լինենք հաւասար... մոռանանք ձեր անարդարութիւնները... այլևս չը մտածենք այդ մասին, բայց մի՛ կրկնէք անցեալը... եւ կեցէք բնականին դէմ եղող ձեր արտօնութիւններից»... Իսկ նրանք պատասխանում են մեզ—«Ո՛չ, դուք մեր ապստամբւող ստրուկներն էք. Աստւած ձեզ ստեղծել է որ սողա՛ք մեր առաջ և կերակրէք մեզ ձեր քրտինքովը սերնդից սերունդ. մենք չենք կասիլ ոչ ներքին ապստամբութեան, ոչ համարձակ մատնութեան և ոչ էլ այլ միջոցների գործադրութեամբ՝ ձեզ մեր լծի տակը բերելու համար դարձեալ»...

«Լաւ ուրեմն, եթէ մենք էլ ոչինչի առաջ չենք կասում ազատւելու համար, ինչ ունեն մեզ ասելու...

«Վերջացրի ես, քաղաքացիներ, թող իւրաքանչիւր ոք կատարէ իր պարտքը, թող ամէնքը պատրաստ լինեն քայլելու, երբ հայրենիքը կոչէ նրանց։ Մնանք միաբան և թող մեր միութեան աղաղակը լինի՝ «Ազատ ապրել, կամ մեռնել»...

Եւ նորից ոգևորութեան աղաղակները որոտման նման հնչեցին։

Աննկարագրելի էր տեսարանը. միմեանց մօտ կանգնածները գրկւում էին. գործաւոր, բուրժուա, գիւղացի... եղբայրաբար համբուրւում։ Սրտաշարժ և ահաւոր բան էր։

Ուրիշներն էլ դեռ ճառախօսեցին, բայց ոչ մէկի խօսածը այնքան տպաւորութիւն չը գործեց, որքան Շօվէլինը։

Այդ երեկոյ շատ ուշ տուն վերադարձանք։ Անձրևը հոսում էր անընդհատ. և մթնով, գիւղ գնալիս, ամեն ոք լուռ էր ու խոհուն։

Միայն վարպետ Ժանն էր, որ երբեմն ձայնն էր բարձրացնում և ասում, որ ամենակարևորն էր այժմ ունենալ հայրենասէր զօրավարներ, քանի որ դա դժւար էր, որովհետև թագաւորն էր ընտրելու նրանց։

Ոգևորութիւնից յետոյ՝ անվստահութիւն էր գալիս։ Շօվէլը իրաւունք ունէր ասելու, թէ մեր ամենամեծ վտանգը դաւաճանների ձեռքն ընկնելն էր։

Այսպիսի հազար ու մի մտածութիւններ միմեանց ետևից ծագում էին գլխումս։ Տեսնում էի պարզ, որ կեանքիս ձևը շուտով պիտի փոխւէր, որովհետև անշուշտ ես էլ պատերազմի էի

գնալու։ Հայրենիքի սէրը պիտի փոխարինէր այժմ գիւղի, ծնողների և նոյն իսկ Մարգարիտի սիրուն։ Հազարներով նոյնը պիտի անէին։ Երբ հայրենիքը վտանգի մէջ է—ամեն այլ զգացմունք պիտի լռի և միայն նրա փրկութեան միտքն ու տենչանքը պիտի գրաւէ ամեն երիտասարդի սիրտ։

Այսպէս մտածելով էր, որ մտայ իմ վերնատունը։ Լուրջ, շատ լուրջ էին թւում ինձ լինելիքները։ Չը նայելով Շօվէլի պատւէրին, որ համբերութեան պաշար ունենայինք, սակայն ոչ վարպետ Ժանը, ոչ Լէտիւմիէն և ոչ էլ ես կարող էինք մտածել այդ ժամանակ, որ քանիերեք տարւայ պատերազմ ունէինք առաջներս և որ Եւրոպայի բոլոր ազգերը, սկսած գերմանացիներից,—գալու էին իրենց թագաւորներով, իրենց իշխաններով ու աղաներով՝ ջարդելու մեզ, որովհետև կամենում էինք մարդկային իրաւունքը պաշտպանել թէ իրենց և թէ մեր օգտի համար։

Այդպիսի ապշութիւն, այդպիսի զզւելի պատերազմ երևակայել անհնար էր և մարդ դժւար էր հաւատում, նոյն իսկ եթէ աչքովը տեսնէր...

X

Պէտք է գիտենալ, որ մի քանի ամսից ի վեր, որպէս կամաւոր զինւոր, շատ երիտասարդ ազգային պահակներ գնացել էին կռւի։ Նօտարների գործակատարներ էին, փաստաբանների որդիներ. բոլորն էլ քաջարի, կրթւած և ամրակազմ տղաներ։ Նրանք գնացել էին միանալու Ռօշամբօի և Լաֆայէտի բանակներին՝ Մէց և Մոբօժ։

Երևակայեցէք այժմ մեր զարմանքը, երբ ապրիլ 29-ին յանկարծ լուր հասաւ, որ այդ նոյն կամաւորները փախել էին աւստրիացիների առջևից, առանց իսկ ուժերը բաղխելու թշնամու հետ։ Ոչ միայն նրանք, այլ իսկական հին զինւորներ էլ հետևել էին նրանց օրինակին։

Լուրը այնքան հրէշաւոր թւեց, որ ոչ ոք չէր հաւատում և ասում էին թէ ապստամբ քահանաների տարածած խօսքեր էին միայն, ժողովրդին վհատեցնելու համար և որ հարկաւոր էր գնալ լեռները և քիչ ծեծել այդ վատ կրօնաւորներին։

Դժբախտաբար նոյն օրւայ երեկոյեան եկող Փարիզի սուրհանդակը հաստատեց լուրերը։

Ահա թէ ինչպէս էր դէպքը։ Մեր ազգային պահակները, կամաւորներն ու կանոնաւոր զօրքի գնդերը՝ Վալանսիէնից երեք

ճիւղաւորութեամբ քայլել էին առաջ՝ գրաւելու համար Ֆլէօրուսը, Տուրնէյ և Մօնսը, ուր նրանց սպասում էին հայրենասէր բնակիչները։

Սակայն Րօշամբօն, բանակի հրամանատարը, որ թագաւորի կողմից նշանակուել էր մարաջախտ, կնքած նամակով նախազգուշացրել էր աւստրիացի զօրապետ Բօլիէին, որ պիտի յարձակուէր նրա վրայ։

Այնպէս որ, մեր զօրաբաժինները, կատարելապէս վստահաբար յառաջանալով, ճանապարհի դիրքերի վրայ, դէմ առ դէմ են գալիս կրկնապատիկ ոյժի՝ թնդանօթներով, ձիաւորներով և այն ամենով, որ նրանց կարող էր ջախջախել։

Ինքը Րօշամբօն էր յայտնում այդ իր տեղեկագրով՝ գրած թագաւորին։ Եթէ, յիրաւի, աւելի յետոյ Բօնապարտը, Հօշը, Մասէնան, Կլեբերը և ուրիշ զօրապետներ մտածէին թշնամուն նախազգուշացնել իրենց անելիքների մասին, կարծում եմ որ շատ էլ յաղթութիւններ չէին շահի։

Նոյն թերթերը հաղորդում էին մեզ, որ ազգային պահակ կամաւորները կռուելով՝ աղաղակել էին.

—Դաւաճանեցին, մատնեցին մեզ…

Շատերը պնդում էին, որ նրանք իրաւունք ունէին այդպէս գոռալու և որ բանակի մէջ գտնուող ազնուական սպաներն էին պատրաստել այդ զզուելի մատնութիւնը։

Ամենքն սկսեցին նոյնը կրկնել։ Միայն մենք չէինք, որ կատաղել էինք։ Ահա թէ ինչ է պատմում 1792, մայիսի 3-ի «Մօնիտէօր» թերթը։

«Կորդէլիէրների ակումբից մի պատգամաւորութիւն մտեցաւ Ազգային Ժողովատեղիի վանդակորմին և դրանցից մէկը խօսեց այսպէս.—

«—Մեր եղբայրներից 300 հոգի ընկան պատերազմի դաշտի վրայ. Սպարտացիների վիճակն ունեցան Թերմօպիլեան կիրճում։ Հասարակաց ձայնը ենթադրում է որ նրանք դաւաճանութեան զոհեր եղան»…

«Հարիւրաւոր ձայներ միջահատեցին աղաղակելով.

«—Վռնտեցէք այդ անամօթներին, Վռնտեցէք…

«Աղաղակները մեծացան և պատգամաւորները ստիպուեցան հեռանալ։ Մի քանի Մօնտայնարներ խօսք խնդրեցին։ Ազգային Ժողովը անցաւ օրակարգին»։

Իսկ դաւաճանութիւնը մինչ այդ, վարակեց նաև Վանդէ, Բրըտայն, Հարաւային Ֆրանսիա, նոյն իսկ կենտրոնը, սահմանագլխի երկարութեամբ և մուտք գործեց Ազգային Օրէնսդիր Ժողովի մէջ։

Սակայն մեծագոյն աղէտն այն էր, որ այդ նոյն երկու շաբաթուայ ընթացքում, երբ Րօշամբօն ջարդւում էր, երբ միւս կողմից անսաստ քահանաները երկնքի պատուհասի գալն էին յայտարարում հայրենասէրների գլխին, երբ փախստականները ազգային պահակ կամաւորներին ծաղրելով կօշկակարներ էին կոչում—այդ մայիս 10-ին (շատ լաւ յիշում եմ միշտ) լուր ստացանք թէ նախնթաց օրը, Սաքսօնական կոչւող հուսարների գունդը, այդ քաջ զինուորները, որոնք քաջալերութիւն ստացան թագաւորից՝ Լաֆէյէթի հայրենասէր զինուորներին կոտորելու համար—այդ տմարդ ֆրանսացիները, խմբովին անցել էին թշնամու կողմը։ Նըրանցից իւրաքանչիւրը ստացել էր վեց լիվր փող նոյն իսկ դաւաճանութեան օրը։

Այդ նոյն օրը, մայիսի 9-ին, առաւօտեան ժամը 5-ին, Թագաւորական-գերմանական կոչւող վաշտն էլ, զինուորական մի պտոյտի պատրւակով դուրս էր եկել Սէն-Աւօլդից, անցել Սարբըրուկի կամուրջը ձիերով, զէնքերով ու պաշարով… և միացել թշնամուն…

Ահա ուրեմն թէ որն էր եղել ազնուականների, այդ «ազնիւ» մարդկանց ծրագիրը—հարաւից՝ զօրապետների դաւաճանութիւն, արևելքից՝ խմբովին դասալքութիւն, մեր ետևից՝ նահանգների ապստամբութիւններ…

Վաղուց, շատ վաղուց նախազգում էի այդպիսի բաներ։ Այո, այն օրւանից, երբ եղբօրս—Նիկօլային հանդիպեցի Նանսիի կոտորածի մէջ—այն օրւանից մտածել էի թէ՝ մի տգէտ սրիկայ, որի բերնում անդադար «իմ հրամանատար, իմ գնդապետ, իմ թագուհի, իմ թագաւոր» բառերն են պտտում այնպէս, ինչպէս սպասաւորը ասում է «Տէրս» բառը—ընդունակ կարող էր լինել իր սուրը՝ իրեն կերակրող հայրենիքի դէմ դարձնելու…

Հօրս չէի պատմել ոչինչ։ Իսկ այժմ, ինչպէս հասցնել նրան այդ սոսկալի լուրը։ Արդէն դասալքութեան մասին գիւղում ամենքը գիտէին, աղաղակում էին և զայրանում. րոպէ առ րոպէ կարող էր ո և է դրացի մտնել մեր խրճիթը և ամեն ինչ պատմել ծերունիներին չարամտաբար։

Հէնց այնպէս, առանց բաճկոնս հագնելու, շապկանց տնից վազեցի, մտածելով որ աւելի լաւ էր ինքս իմաց տայի դժբախտութիւնը կամաց-կամաց, մեղմութեամբ, խնայողաբար…։

Սակայն երբ հեռուից տեսայ ժպտուն հօրս, որ կանգնել նայում էր ինձ, յուզումս այնքան սաստկացաւ, որ այլևս չը գիտէի թէ ինչ էի անում. բոլոր մտածածներս դուրս թռան գլխիցս և

ես առանց այլայլութեան, երբ հայրս փոքրիկ չարդախի տակ էր հասել, գոռացի.

—Օ՛հ, որպիսի՜ դժբախտութիւն, որպիսի՜ դժբախտութիւն... Նիկօլան անցել է թշնամու կողմը...

Հազիւ ասել էի, որ իսկոյն զղջացի յիմարութեանս վրայ: Քանի կենդանի եմ, չեմ մոռանայ թշւառ ծերունու սոսկալի աղաղակը: Գլխին խոշոր հարւած ստացող մարդու նման՝ երեսի վրայ փռւեց գետին. կարծեցի թէ մեռել էր. ոտներս կքւեցին, կռթնեցի պատին և եթէ վրայ հասնող դրացիները չը լինէին, ես էլ կընկնէի անբախտ հօրս կողքին:

Մայրս նոյն րոպէին դուրս թռաւ խրճիթից և աղաղակեց.

—Ի՞նչ է այն... ինչ է եղել:

Երկարահասակ փայտահատ Բուժըրօն, որ վրայ էր հասել և հօրս իր բազուկների վրայ առած ներս էր տանում, ասաց նրան.

—Ձեր քաջ Նիկօլայի գործն է այս... դասալիք է եղել...

Մայրս առանց ետ նայելու՝ փախաւ, մինչ Բուժըրօն հօրս դնում էր անկողնի վրայ: Նստեցի կողքին, գլուխս ծնկներիս վրայ. քրտինքը սառը ջրի նման հոսում էր ամբողջ մարմնովս. աղաղակել, կանչել էի ուզում և չէի կարողանում...

Այդպիսի դժբախտութեան րոպէներին, որքան էլ մեծ լինի վիշտը, մարդ միշտ մխիթարութիւն է զգում տեսնելով, որ ձեր սիրած ու յարգած մարդը սիրւած ու յարգւած է նաև ուրիշներից. այնպիսիներից, որոնց մեր խրճիթի կողմը գալն անգամ տարօրինակ էր: Երբէք չէի կարող հաւատալ որ հայրս այդքան բարեկամներ ունենար:

Ամբողջ գիւղը—տղամարդ, կին, մանուկ, արտասւալից աչքերով գալիս էին այցելելու բարի հայր Բաստիանին: Խրճիթն ամբողջ լիք-լեցուն էր այցելուներով, որոնք զգոյշ քայլերով մօտենում էին հօրս անկողնին, կռանում նայում էին վարագոյրներից ներս ու ասում.

—Օ՛հ, խեղճ հայր Բաստիան... որպիսի՜ դժբախտութիւն: Այդ որիկայ Նիկօլան սպանեց նրան:

Տեսնելով այդ բոլորը, հասկանում էի որ ուրիշներն աւելի խելացի կը լինէին քան ես: Զայրանում էի արածիս վրայ, հայհոյում ինձ: Իսկ երբ լսեցի թէ ինչպէս վարպետ Ժանը կանչում էր.

—Օ՛ իմ խեղճ ծերունի բարեկամ... Օ՛հ, թշւառ պատւական մարդ...

Այլևս զսպել չը կարողացայ և սկսեցի բարձրաձայն լալ, մե-

ղադրելով և համարելով ինձ հօրս մահւան պատճառը:

Եթէ այս բոլորը պատմում եմ ես մանրամասն, պատճառն այն է, որ իսկապէս երջանիկ էի զգում ինձ՝ լինելով մի պատւական մարդու որդի. մարդ, որին ամենքը յարգում էին, չը նայելով նրա բացարձակ չքաւորութեանը:

Բարեբախտաբար հայրս չը մեռաւ այս անգամ: Բժիշկ Ստէյնբրէնները, որին Մարգարիտն էր ուղարկել հէնց որ լսել էր—լաւ խնամեց ծերունուն և նա կազդուրւեց, ոտքի ելաւ, սակայն կողքի մի կծու ցաւով, որ երբեմն կարծես խեղդում էր նրան: Ամենքը միշտ գալիս էին այցելութեան ու ժպտելով ասում.

—Այդ ոչինչ, այդ ցաւն էլ կանցնի...

Մայրս չէր կարող այցելուներին վռնտել, բայց տեսնում էի դէմքից, որ շատ նեղանում էր, որովհետև ամենքն անիծում էին Նիկօլային, որին խեղճ կինը սաստիկ սիրում էր:

Մի բան, որ նրան սաստիկ վշտացրեց, այն էր, որ մեր դրացի Ժան Միրալը պատմեց թէ Նիկօլան այլևս չը պիտի կարողանար երբէք Ֆրանսիա վերադառնալ. եթէ գար էլ, իսկոյն կը ձերբակալւէր, պատերազմական ատեանով կը դատապարտւէր և հրացանի կը բռնւէր: Միրալը զինւորական էր եղել և գիտէր օրէնքները: Չը նայելով դրան, մայրս դեռ չէր հաւատում, մինչև որ մի օր վարպետ Ժանը հաստատեց Միրալի ասածը: Այն ժամանակ մայրս գոգնոցովը ծածկեց աչքերը և դաշտ դուրս եկաւ լալու համար:

Հայրս սկսում էր ապաքինել և կամաց-կամաց մոռանալ Նիկօլային, մանաւանդ երբ ամեն կիրակի Ետիէնը տուն էր գալիս և ցոյց տալիս թէ որքա՜ն յառաջդիմում է և ինչ լաւ տղայ է դառնալու:

Իսկ ես, երբ քաղաք էի գնում, Մարգարիտից լրագրներ էի բերում միշտ և ամեն երեկոյ հօրս կողքին նստած՝ կարդում էի նրա համար: Ծերունին մեծ հաճոյք էր զգում Վէրնիօի և միւս Ժիրօնդէնների ճառերից. հետզհետէ սկսում էր ըմբռնել թէ յիրաւի, ժողովուրդը պիտի գերիշխան լինէր իր երկրում և ոչ թէ այս կամ այն դասակարգ ու ազնւական:

Այդ նոր գաղափարները այնքան էլ հեշտութեամբ չէր ըմբռնում խեղճ ծերունին, որ տարիներից ի վեր ստրուկի նման կքւած էր կեանք վարել ազնւականների և կրօնաւորների տառապեցուցիչ լուծի տակ: Միշտ հին ժամանակներն էր յիշում և չէր կարողանում հաւատալ, որ մարդիկ հաւասար են և որ միակ գա-

նազանութիւնը նրանց միջև՝ տաղանդը կարող է լինել և առաքինութիւնը։

Հոգեկան հին վարժութիւնները դժուար է շուտով արմատախիլ անել։ Այնուամենայնիւ, ծերունին բանիմաց մարդ լինելով, այլև արդարասէր—սկսում էր ըմբռնել եղածը և հաւանել, հաճոյք զգալ։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ Սաքսօնական հուսարների և գերման-թագաւորական գնդի դաւաճանութիւնից յետոյ, մարաջախտ Րօշամբօն, որի դէմ էին խօսում բոլոր հայրենասէրները, այլևս չէր կարող իր պաշտօնի գլուխը մնալ։ Հրաժարական տուաւ և սահմանագլխի վրայ եղած մեր երեք բանակները վերածուեցին երկուսի, հրամանատարութեամբ Լաֆայէտի և ծերունի զօրապետ Լիւկների։

Աւտրիացիք, փոխանակ յառաջանալու, երկար սպասեցին պրուսական թագաւոր Ֆրէդէրիկ-Վիլհէլմին, որ չէր շտապում գալու, չը նայելով փախստականների աղաղակներին։

Այդ յապաղումը մեծ բարեբախտութիւն էր մեզ համար, որովհետև վտանգը ակներև էր։ Մանաւանդ որ զէնքի սաստիկ պակասութիւն էինք զգում գրեթէ ամեն տեղ։ Եթէ մեր այդ թուլութիւնից օգտուելով յանկարծակի ներս լցուէին—այլևս ազատուելիք չունէինք։

Բոլորը «զէնք, զէնք» էին աղաղակում, սակայն զինարանները դատարկ էին։ Պէտք եղաւ կամաւորներին զինել Լուի XVI-ի ժամանակուայ հին ծանր տրաքոցներով, որոնց ոտերն անգամ չէին գործում։ Թնդանօթներն իսկ կանաչ ժանգ բռնել՝ ընկել էին խոնաւ անկիւններում. հանեցին, սակայն ոչ մէկը բանի պէտք չեկաւ. գնդակները կամ փոքր էին կամ մեծ։ Վառօդը միայն լաւն էր ու չոր, որովհետև Ֆալցբուրգի վառօդարանը, որ շինուած էր ժայռերի մէջ, Ֆրանսիայի լաւագոյն գործարանն էր։

Զէնքերի այդքան պակասութիւնը արտադրեց լեռներում՝ նիզակներ ունենալու և նրանցով զինուելու միտքը։ Այս 1792 թիւ մայիսուայ ամբողջ ամիսը մեզ համար արտաքոյ կարգի շատ գործ բացուեց։ Նիզակի ձևը Փարիզից ստացուեց։ Կոթը շինւում էր սպիտակ նշդարենուց (charme, букъ) 7½ ոտնաչափ երկարութեամբ, իսկ երկաթը 15 բթաչափ, երկսայրի յոտոցի ձևով։

Քանի՜-քանի անգամ, դարբնելով այդ ծայրերը, ասում էի ինքն իրենս.

—Ա՜խ, երանի այս երկաթը ձիուց ցած նետէր այն սրիկային, որ լացացնում է հօրս... երանի վզի մէջ խրուէր ու գետին տապալէր...

Ու պատկերացնում էի այդպիսի տեսարանը... մինչ մուրճս տոստոսում էր սալի վրայ... դարբնում էի կատաղութեամբ, տենդային խանդով բռնուած։

Եղբօր մասին այդպիսի մտածութիւններ... Ահա թէ ինչեր են անում ներքին կռիւները. այն սոսկալի կռիւները, որոնք ոչ միայն նոյն հայրենիքի որդիներին են միմեանց դէմ հանում, այլև որդիները մօր և հօր դէմ։

Երկու ամսուայ ընթացքում աւելի քան 1000—1500 նիզակներ շինեցինք. ստիպուած էի երկու նոր բանուորներ էլ վարձել և վարպետ Ժանն իսկ, ինձ օգնելու համար, շաբաթը միայն մի անգամ էր հեռանում գիւղից և իր հողերը գնում։

Պէտք էր տեսնել մեզ, թևերնիս սոթտած, կուրծքերնիս բաց... Ու կայծերը ցայտում էին մինչև փողոցը։ Վարպետ Ժանը մանաւանդ, որ մի խոշոր կարմիր գլխարկ գլխին, քրտնաթոր ու կատաղի, գրեթէ առանց շունչ առնելու դարբնում էր ու կանչում սոսկալի ձայնով.

—Յառա՜ջ... ձե՛զ տեսնեմ, տղա՛յք, յառա՜ջ...

Ու մուրճերը, կռանները այնպիսի հարուածներ էին տեղում, որ կարծես կառքեր լինէին միմեանց ետևից գլորուելիս։

Այո՛, լաւ գործեցինք այդ ժամանակներում...

Շոգերն արդէն սկսել էին. կանաչ էր պատել ամբողջ գիւղը. հիանալի եղանակ էր, սակայն երեկոյեանները ես ու վարպետ Ժանը այնքան յոգնած էինք լինում, որ աւելի լաւ էինք համարում ընթրիքից յետոյ անմիջապէս պառկել։

Մինչ այդպէս էինք անցկացնում մեր օրերը գիւղում, ուրիշ տեղեր յուզումները շարունակւում էին մեծ չափերով։ Ֆէօյլեանները *) հայրենասէրներին անւանում էին խռովարարներ. Ժիրօնդէնները Մօնտայնարներին կոչում էին անիշխանականներ. վերջիններս առաջիններին մեղադրում էին, որ սկսեցին այդպէս վատ սկզբնաւորութիւն ունեցող պատերազմ, որ փառաւորում են Մարսի դաշտի կոտորածն անող Լաֆայէտին, Ազգային Ժողովում Բույիլլէին գովեստներ անող այդ զօրապետին։ Ու ասում էին նրանց.—«Վռնտեցէք Լաֆայէտին, քանի որ նախարարները ձերոնցից են։ Լաֆայէտը, ըստ Սահմանադրութեան օրէնքի իսկ, իրաւունք չունի պաշտօն վարելու, երբ Ազգային Ժողովի անդամ։ **)

---

*) Ֆէօյլեան կրօնաւորական կարգի անունով կոչւող չափաւոր—թագաւորականների կուսակցութիւնը, որի նիստերը կայանում էր ֆէօյլեանների վանքում։ Ծ. Թարգմ.

**) Ազգային Ժողովի անդամներից ոչ մէկը իրաւունք չունէր մինչև

Փոխեցէք ուրեմն նրան, ձեր պատուքն է այդ»։

Մարան յորդորում էր, որ զինուորները հրացանազարկ սպանեն իրենց դաւաճան զօրապետներին. Բուայիուն իր «Գազէտ» թերթի մէջ գոռում էր, որ յեղափոխութեան վերջին ժամը հնչելու մօտ էր։ Վանդէում, մի ոմն մարքիզ Բուարի հարկեր էր դընում և զինանոցներ կազմակերպում ու զինամթերք՝ յանուն թագաւորի. այն ազնուականները, որոնք ուզում էին թշնամու կողմն անցնել, կեղծ անուններով և ծպտած՝ կամաւոր էին գրւում որ անցնեն Զւիցէրիա կամ Սառրին-Նահանգները։

Սակայն ամենավատը միշտ անսաստ կրօնաւորների քարոզներն էին. հայրենասէրներին անւանում էին աւազակներ, թագաւորին ներկայացնում էին որպէս մարտիրոս, գրգռում էին երիտասարդների՝ անդամ գրւելու կաթոլիկ-առաքելական—հռովմէական ընկերութեան, ցրւում էին նրանց Յիսուսի սիրտը՝ զարդարուած ու շրջապատուած ազնուական տիկինների պատկերներով, այլ և սպիտակ ժապաւէններ՝ վրան ասացուածքներ գրած, գլխարկի շուրջը դնելու համար։

Այս մարդկանց կատաղութիւնն այլևս սահման չէր ճանաչում, մանաւանդ ծաղկազարդից սկսած։

Յեղափոխութիւնից առաջ, բոլոր գիւղացիները, կին և տղամարդ, եղևնու ճիւղերով քաղաք էին իջնում՝ ծաղկազարդի այդ տօնին, օրհնել տալու։ Փողոցներով թափօրներ էր լինում և բնակիչները—կաթոլիկ, բողոքական կամ հրէա, ստիպւած էին իրենց տները զարդարել գորգերով, ճիւղերով ու ծաղիկներով։ Հազիւ թոյլատրում էին լիւտերականներին և հրէյաներին՝ որ իրենց լուսամուտները փակեն, երբ թափօրը փողոցի մէջ տեղ կանգ էր առնում և աղօթքներ կարդում։

Բայց, շատ հայրենասէրներ, Շօվէլը առաջինը, գանգատել էին այդ ծեսակատարութեան համար և քաղաքային վարչութիւնը, հասարակական դատախազի պահանջի հիման վրայ, դադարեցրել էր թափօրի ման գալն ու խստութիւնները, ըստ սահմանադրութեան օրինաց, որ իւրաքանչիւր անձ ազատ է իր կրօնի համեմատ վարւել. հետևապէս այլևս ոչ ոք ստիպւած չէր բանի կերպով զարդարելու իր տունը, ազգային պահակազունդը կարող էր ո և է այլ կրօնական ծէսերի ժամանակ էլ ներկայ լինել և քաղաքացիք ստիպւած չէին այլևս իրենց խանութները փակել թափօրներն անցնելու միջոցին։

տարի (ժողովի նստաշրջանի փակւելուց հաշւած) ո և է պաշտօն վարել՝ թագաւորի կողմից նշանակւած։ Ծ. Թարգմ.

Արդ, ծաղկազարդի օրն այդ տարի, կրօնաւորութիւնը, հաւատարիմ... բիւրաւոր մոլեռանդների հետ, ուզեցին օրէնքի դէմ ապստամբել։ Ազգային պահակազունդը ստիպւած եղաւ մէջ տեղ ընկնել, հրամանատարը յայտարարեց որ հրացանազարկ կանէ ապստամբողներին՝ եթէ չը ցրւեն… և կրօնաւորութիւնը հարկադրւեց ետ քաշւել ու թափօրը եկեղեցու մէջ կատարել։ Ինքնըստինքեան հասկանալի է, թէ որքան կատաղեցին նրանք այդ բանից։

Դժբախտաբար, ամեն տեղ էլ այդպէս հեշտութեամբ չէր անցել այդ օրւայ կրօնաւորութեան ցոյցերը։ Հարաւում և Արևմտեան գաւառներում, ինչպէս լրագիրները հաղորդեցին, նոյն իսկ Փարիզումն էլ, խաղաղ քաղաքացիք յարձակումն ու ծեծ էին կերել, որովհետև թափօրի անցնելու ժամանակ գլխարկ չէին հանել։ Մինչև իսկ քարշ էին տւել նրանց ցեխի մէջ։

Նոյն տեսակ ցոյցեր տեղի էին ունեցել շատ տեղ. միաժամանակ էլ սահմանադրական քահանաների վրայ էին յարձակւում, նրանց տները վառում, պարտէզները փչացնում և կամ իրենց իսկ սպանում։

Այդպիսի աւազակային խմբեր մեր շրջակայքին մօտենալ չէին համարձակւում. վախենում էին ազգային ոստիկաններից և քաղաքացի պահակներից։ Բայց, քանի խռովութիւնները մեծանում էին, նրանք աւելի և աւելի յանդգնութիւն էին ստանում։

Անշուշտ Վանդէում և հարաւային կողմերում շատ աւելի վատ դրութեան մէջ էին գործերը, որովհետև մի քանի օր յետոյ հետևեալ յայտարարութիւնը տեսանք կպցրած եկեղեցիների, գիւղական խորհրդարանի և դպրոցի դռների վրայ։

«Ազգային ժողովը, իր յանձնաժողովի զեկուցումը լսելուց յետոյ, ի նկատի ունենալով որ պետութեան մէջ, չերդւող եկեղեցականների գրգռած յուզումները պահանջում են անյապաղ միջոցներ ձեռք առնելու նրանց դէմ,—գտաւ որ դրութիւնը յիրաւի վտանգաւոր է»։

«Ազգային ժողովն ի նկատի ունենալով որ Սահմանադրութիւնը տապալելու համար չերդւող եկեղեցականների անընդհատ ջանքերը անհնար են դարձնում ենթադրելու՝ թէ նրանք մասնակից են ընկերական հաստատուած դաշինքին, այլև հասարակաց ապահովութեան համար, ընկերութիւնը խարխլող այդպիսի մարդկանց իբր անդամ ունենալը համարելով վտանգաւոր.—ի նկատի ունենալով նաև, որ պատժական օրէնքները անզօր են հանդիսանում այդ մարդկանց դէմ, որոնք խղճերի վրայ են ազդում՝ մոլորեցնելու համար, թագցնում են իրենց յանցաւոր խաղերը զլոպող և պատժող վարչութիւնների առաջ—դրութիւնը վտանգաւոր

յայտարարելուց յետոյ, ժողովը հրամանագրում է հետևեալը.

Յօդ. 1. Հասարակաց անդորրութեան օգտի համար, աքսորել երկրից բոլոր չերդւող կրօնաւորներին, հետևեալ դէպքերի ժամանակ և այս ձևերով»:

Այնուհետև, տասը յօդւածներով, պարզւած կային այն հանգամանքները, որոնց շնորհիւ չերդւող քահանաները պիտի ենթարկւէին աքսորի:

Այդ յօդւածների ամենակարևորը հետևեալն էր.

«Միևնոյն գաւառի քսան գործօն քաղաքացիներ եթէ միանան և պահանջեն ո և է կրօնաւորի աքսորումը—նահանգական վարչութիւնը պիտի վճռի աքսորը, եթէ շրջանական վարչութեան համաձայնութիւնն էլ կայ»:

Սոսկալի հրաման էր այդ, սակայն դրութիւնն այնպէս էր, որ կամ պէտք էր պաշտպանւել և կամ կորսւել:

Զգուշացրին մարդկանց, խնդրեցին, աղաչեցին որ բանիմաց դառնան, արդար լինեն. հարիւր անգամ խաղաղութիւն առաջարկեցին նրանց և նրանք ոչ միայն մերժեցին, այլև օրէցօր աւելի կատաղաբար շարունակեցին յարձակւել մեզ վրայ: Գրգռեցին ներքին—քաղաքական պատերազմը, օտարներին իրենց օգնութեան կանչեցին... Էլ ինչ միջոց կար, էլ ինչ անել...

Մի միակ հնարք կար ազատւելու նրանցից և ահա հարկաւոր եղաւ ապացուցանելու, որ կարող ենք ստիպել նրանց և որ նոքա ոչ միայն խաղաղ քաղաքացիներ չէին, այլ և հայրենիքի թշնամի մարդիկ:

Եթէ ազգը յաղթւէր, ենթադրենք, ինչ պիտի լինէր հայրենասէրների դրութիւնը:

Հետևապէս, Ազգային Ժողովի այդ հրամանագիրն ու որոշումը տեղին էր ու անհրաժեշտ:

Եւ... Լուի XVI Թագաւորը, իր վէտօն դրաւ այդ որոշմանը: Դէմ էր նրան:

Լուրեր էր պտտում նաև, որ փախստականները հազարներով վերադառնում էին Փարիզ, գաղտնի գումարումներ անում և որ շուտով մեծ դժբախտութիւններ էին տեղի ունենալու:

Ազգային Ժողովը, կամենալով արգիլել այդ մարդկանց գործունէութիւնը, հրամանագրեց 20,000 հոգուց բաղկացած մի բանակ կազմել Փարիզի շուրջը: Սակայն Թագաւորը դրան էլ իր վէտօն դրաւ:

Վէտօն դնելով հանդերձ, Լուի XVI լուր ուղարկեց պրուսիացիներին Մալլէ-Դիւպան, ասելու համար՝ որ շտապեն, յայտնելու, որ դան մեզ գրաւելու, որ ինքը ազգին պէտք չունի, այլ

խռովարարների և որ թող գան Ֆրանսիայում «օրինաւոր» իշխանութիւն հաստատելու, ոչնչացնելով «անիշխանականներին»...

Ահա և ձեզ մեր բարի Թագաւորը, որ դաշնակցում էր թշնամու հետ, ընդդէմ իր ժողովրդեան... Քէֆներդ չէ՞ գալիս... Մարդը ուզում էր նորից չւան ձգել մեր վիզը:

Մտածեցէք, եթէ յաջողւէր... Չէ՞ որ բոլորս նորից պիտի սկսէինք գործել միմիայն վանքերի, աբբայարանների և ազնւականների համար, տուրքերը պիտի ճզմէին մեզ, մեր որդիները ոչ մի աստիճանի չէին հասնիլ բանակների մէջ, ոչ էլ ո և է պաշտօնի, բացի սպասաւորութիւնից, ախոռապանութիւնից կամ ծառայութիւնից—մինչ դրանիկներ, դատարկապորտներ, վանականներ ու պնակալէզներ պիտի ուռճանային և Նորին Վեհափառութեանը գովեստներ երգէին, փառաբանէին...

Դժբախտ մարդ... ինչ արած, բախտ էր, չը յաջողւեց. հայրենասէրները յաղթեցին Եւրոպայի Թագաւորներին և արդարութիւնը, որ մուտք էր գործել մեր մէջ, աւելի ամրապնդւեց... Որպիսի՜ դժբախտութիւն, չէ՞... խղճալու բան է... մանաւանդ Թագուհին—այդ բարի տիկին Մարի-Անտուանէտը, որ ամեն օր պարծենում էր, թէ իր ազգական աւստրիական կայսրը և բոլոր միւսները միացած՝ գալու էին իրեն ազատելու՝ անցնելով 200,000 ֆրանսացիների դիակների վրայով:

Ժիրոնդէնները, խոստովանելով վերջապէս որ արքունիքը նրանց գլխին խաղ էր սարքել, վճռեցին ստիպել Թագաւորին՝ բացատրութիւն տալու: Նախարար Րօլանը—ինքը գրեց նրան մի նամակ, առաջարկեց որ գոնէ քաջութիւն ունենար ինքզինքը յայտարարելու կամ դէմ ազգին և կամ միաբան նրա հետ. որ եթէ Նա (Թագաւորը) ազգի կողմն է, պէտք է ուրեմն հաստատէ Ազգային Ժողովի երկու որոշումները. իսկ եթէ դէմ է ազգին, պէտք է գոնէ ամուր կենայ իր վէտօ-ով և ազգը կը գիտենայ, որ Լուի XVI Ֆրանսիայի թշնամիների հետ է գործում:

Ազնիւ վարմունք էր:

«Ձերդ Վեհափառութիւնը—գրում էր Րօլանը Թագաւորին—մեծ արտօնութիւններ էր վայելում և կարծում էր թէ դրանք Թագաւորին պատկանող նւիրագործւած յատկութիւններն են: Փոքրութիւնից վարժւելով այն մտքին, որ այդ արտօնութիւնները անբռնաբարելի կերպով ձերն են, դուք, ի հարկէ, գոհ չէք որ խլեցին նրանց: Վերստանալու ցանկութիւնը նոյնքան բնական էր ձեր կողմից, որքան և կորցնելու ցաւը: Ահա այդ իսկ զգացմունքներն են, որ հաշւի են առել յեղափոխութեան թշնամիները. համոզւել են որ դուք գաղտնապէս հակւում էք դէպի նրանց, մինչև

որ հանգամանքները թոյլ տային ձեզ ազատ և բացարձակ կերպով յայտարարելու այդ հակումը։

«Սակայն ձեր այդ տրամադրութիւնը, յեղափոխութեան թշնամիների գործողութիւնները՝ ծածուկ չէին կարող մնալ ազգից և ահա անվստահութիւն ներշնչեցիք դուք նրան։ Ձերդ Վեհափառութիւնը փոփոխակի գտնւել է միշտ վարանման մէջ՝ կատարելու արդեօք Ձեր ցանկութիւնները, թէ՞ ու զիջել անհրաժեշտ պահանջներին. ուրիշ խօսքով՝ քաջալերե՞լ խռովարար—ապստամբներին, որ անհանգստացնում են ազգը, թէ՞ շտապել հանգստացնելու ազգը, միանալով նրա հետ։

«Ամեն բան, Ձերդ Վեհափառութիւն, ունի վերջ։ Հասել է նաև անորոշութեան, վարանման վերջը։

«Իրաւունքների հրատարակութիւնը դարձել է արդէն մի քաղաքական աւետարան, իսկ ֆրանսական Սահմանադրութիւնը, որպէս կրօն, որի համար ժողովուրդը պատրաստ է մեռնել... Զգացմունքներն ամբողջ՝ կրքերի շեշտ են ստացել. մտքերի խմորումը ծայրահեղ է և կարտայայտւի սարսափելի կերպով, եթէ Ձերդ Վեհափառութիւնը չը շտապի վստահելի գործերով նրա դէմն առնել։ Սակայն, կրկնում եմ, վստահելի գործերը չը պիտի լինեն միայն խոստումներ, այլ փաստեր... Ո՛չ ետ քաշւելու և ոչ էլ ուշացնելու ժամանակ կայ. ամենքի մէջ յեղափոխութիւն է տեղի ունեցել. կարող է արիւնով վերջանալ և նրանով ամրապնդւել, եթէ իմաստութիւնն ու խելքը չը կարողանան վերջ տալ թշւառութիւններին, որոնցից դեռ կարելի է խուսափել... Փոքր մի ևս յապաղումն և ժողովուրդը կատաղած՝ պիտի համոզւի թէ իր թագաւորը դաւաճանների բարեկամն է և դաշնակիցը»...

Պատասխանի փոխարէն, թագաւորը իրենց պաշտօններից հրաժարեցրեց ժիրօնդէն նախարարներին։ Սակայն, Ազգային ժողովը որոշեց, որ այդ նախարարները հայրենիքի ցաւակցութիւնն են տանում իրենց հետ և որ Ռօլանի նամակը կուղարկւի ամբողջ 83 գաւառներին որպէս շրջաբերական։

Թագաւորն այնուհետև Դիւմուրիէին անւանեց պատերազմական նախարար։ Այս զօրապետը խորամանկ մարդ էր. երբ տեսաւ որ Լուի XVI իր խորհուրդների հակառակ, չէր կամենում ընդունել երկու որոշումները կրօնաւորութեան դէմ—աւելի լաւ համարեց հրաժարւել պաշտօնից և բանակում հրամանատարութիւն վերցնել։

Այնպէս որ, թագաւորը խելքը գլխին այլևս ոչ ոքի չը գտաւ, որ կամենար մէտօ-ներին կողմնակից լինելու չափ քաջութիւն ունենալ։

Ու սկսեց վհատւել։ Թագուհին էր միայն, որ քաջալերում էր նրան՝ ասելով.

—Պրուսացիները շուտով կը գան... համբերենք քիչ էլ... չը պէտք է զիջանել, կրօնաւորները մեր նեցուկներն են...

Մեզ մօտ ակումբանոցում, ամեն երեկոյ մէկն ու մէկը առաջարկում էր բոլոր դաւաճաններին կոտորել, սակայն Շօվէլը միշտ արգելք էր լինում և կրկնում.

—Հանդարտ, պարոննե՛ր, հանդարտ... բարկութիւնը կը կուրացնի միայն, օգուտ չի տալ... Այդ երկու մէտօ-ները, ճիշտն ասել, մեզ նպաստաւոր են. թշնամին է երևան գալիս և իր ծածուկ անկիւնները թողնում. ուզում է դէմ առ դէմ ելնել մեզ։ Մինչև այժմ մենք դեռ երկմիտ էինք. այժմ այլևս ապահով ենք... կամենում են խառնակութիւն, երկպառակութիւն սերմանել մեր մէջ... Թշնամու ծրագիրն է դա և դրա համար էլ՝ մեզ անհրաժեշտ է սեղմել մեր շարքերը, սառնարիւն դառնալ, չը վրդովւել ու խելքերնիս կորցնել... Թող ամեն ոք պատրաստ լինի քայլելու. չեն ուզում դաշնակցող հայրենակիցների տեսնել Փարիզի շուրջը. լաւ ուրեմն, պատրաստւենք, ամեն ոք իր ունեցած միջոցներով թող զինւի և ուշադիր լինենք... Համբերաշխ մնանք և չաղմկենք...

Այդպէս էր խօսում նա ակումբանոցում. յետոյ կարդում էին ժաքօբէնների, Բազիրի, Ռօբէսպիէրի և ուրիշների ճառերը, որոնցով երևում էր որ այդ մարդիկ այլևս վախ չունէին, ոչնչի առաջ կանգ չէին առնում...

Ժիրօնդէն նախարարների (մինիստր) հրաժարեցումը ամենքը համարում էին հասարակական դժբախտութիւն, որովհետև գոնէ նրանք, ոչ միայն խօսքերը մէկ չէին արել օտարների հետ, այլև, եթէ պատերազմ էին ցանկանում, յեղափոխութիւնն աւելի արագ առաջ տանելու համար էր և ոչ թէ մեզ թշնամու ձեռքը յանձնելու։

Բայց այդ ժամանակ Լաֆայէտը, որին միշտ համարում էին լաւ հայրենասէր, որին վարպետ Ժանն այնքան սիրում էր և ժիրօնդէնները պաշտպանել էին Մօնտայնարների յարձակումների դէմ—այդ նոյն Լաֆայէտը, յանկարծ իր ինչ լինելը ցոյց տւաւ և մարդիկ իմացան, որ նրա բոլոր թնդանօթները ուղղւած էին մեր դէմ, արքունիքի հետ համամիտ էր դարձել նա և ծիծաղում էր ժողովրդեան վրայ։

Մինչև այդ օր, նրա արածները սնապարծութիւնից էին դրդւած եղել. այժմ էլ իր հին կաշւի մէջ էր մտնում... Մարքի՛զ էր մարդը, այն էլ որպիսի՜ վտանգաւոր մարքիզ, որովհետև

բանակը ձեռքումն էր և կարող էր նրանով վրայ տալ Ազգային Ժողովին։

Առաջին անգամն էր, որ կռահեցին այդպիսի վտանգը. ուրիշ զօրապետներ էլ ունեցել էին այդպիսի մտադրութիւն, սակայն Լաֆայէտից սպասուած վտանգը զարհուրեցրեց ամենքին։ Բարեբախտաբար նա շատ մեծ յաղթութիւններ էլ չէր ունեցել։ Մօբէօժի առաջ ունեցած աւստրիացոց դէմ մի փոքրիկ կռւից յետոյ, ասում էր.

—Բանակս ինձ կը հետևի...

Սակայն շատ էլ ապահով չէր ասածի վրայ և բաւականացաւ նրանով, որ Ազգային Ժողովին գրեց մի շատ յանդուգն նամակ, որով յայտարարում էր, թէ խառնակութիւնների պատճառը Ժաքոբէններն էին, Ժիրոնդէնները խառնակիչներ... և որով մի տեսակ իբր հրաման, պահանջ էր դնում լուծելու բոլոր ակումբները, ետ վերցնելու անսաստ կրօնաւորների և Փարիզի շուրջը բանակ ունենալու մասին եղած երկու որոշումները։

Գնացէք և հաւատ ընծայէք այլևս Վաշինգտոնի մարքիզ բարեկամներին...

Եւ այդպէս էր ահա, որ այդ ժամանակւանից՝ Լաֆայէտը—երբեմն Վաշինգտոնի բարեկամ, երբեմն արքունիքի պաշտպան—ճանաչւեց ազգից, որպէս հայրենիքին վտանգաւոր մարդ։

Թագաւորը չէր ուզում նրան. չափազանց հասարակապետական էր իբր թէ։ Մենք էլ չէինք ուզում—չափազանց «մարքիզ» էր մեզ համար։

Այդպիսի դրութեան մէջ են ընկնում վերջ ի վերջոյ այն մարդիկ, որոնք երկու-երեսանի են լինում և երևակայում են թէ ամենքից խելօք մարդիկ իրենք են, որ կան։

Լաֆայէտը երբ Փարիզից մեկնեց, ազգային պահակազունդը միացաւ ժողովրդեան հետ նորից։ Բուրժուաներն ու գործաւորները համերաշխ էին գործում 89 թւականի նման։ Պետիօն քաղաքապետը, խելօք մարդ լինելով, նրանց հաշտեցրել էր։ Երբ տեսան մարքիզի յանդգնութիւնը, անմիջապէս ամենքը միաբանւեցին՝ տօնելու համար Գնդախաղի սրահի երդման օրը *), որ յունիսի 20-ին էր։

Ծօվէլն արդէն ութ օր առաջ խօսում էր մեզ այդ մասին, իր խանութի ետևումը։

—Ազգային ամենամեծ տօնն է դա, ասում էր նա—Գնդա-

*) Երդում՝ չը ցրւելու, մինչև Սահմանադրութեան հաստատելը, որ կատարւեց գնդախաղի սրահում (Le serment du jeu de paume). Ծ. Թ.

խաղի սրահի այդ երդումը հաւասարաչափ արժանի է տօնախմբութեան, որչափ Բաստիլի առումը։ Այդ երկու մեծ տօները պիտի արձանագրել օրացոյցի մէջ, հրէաների Կարմիր-ծովից անցնելու և Սինայի լեռը հանելու տօների նման։

Լաֆայէթի նամակը մեզ հասնելուց առաջ իսկ Ծօվէլը ասել էր.

—Գնդախաղի սրահի երդման տօնը կատարել Ֆալցբուրգում մենք չենք կարող. բերդաքաղաք է և արտօնութիւն է հարկաւոր վերցնել նախարարից։ Զուլեցի դիմել։ Սակայն ոչինչ, մեր մէջ կը կատարենք։ Հրաւիրում եմ ձեզ վաղը ճաշից յետոյ լինել մեզ մօտ և մի քանի բաժակ գինի խմել ի պատիւ այդ օրւան։ Կարծեմ Ֆրանսիայում մենակ մենք չենք լինիլ այդպէս անողները։

Ու հասկացանք, որ միւս օրը մի բան էր լինելու, որը նա գիտէր և խոհեմաբար թաքցնում էր մեզնից։

Ամենքը գիտեն, որ 1792 թիւ. յունիս 20-ին Փարիզի ժողովուրդը առաւօտ վաղ ոտքի ելնելով, առաջնորդութեամբ գարեջրի վաճառական Սանտերնի, մսագործ Լըժանրի և ոսկերիչ Րօսինեօլի ու մի քանի այլ լաւ հայրենասէրների, անհամար ամբոխով, կին, տղամարդ ու մանուկ, զինւած հրացաններով ու նիզակներով, եռագոյն դրօշ ձեռքերին, այլ և վարտիկներ ձողերի վրայ կապած—գնացին դէպի Ազգային Ժողովը՝ աղաղակելով.

—Ի բա՜ց վէտօն!... Կեցցեն Ժիրոնդէն նախարարները...

Ու երգում էին «Ça ira» յեղափոխական երգը։

Ազգային Ժողովը իր դռները բաց արաւ նրանց առաջ ու ցուցարարները, մօտ 25--30 հազար անձ, երեք ամբողջ ժամ ներս մտան միմեանց ետևից, յետոյ էլ գնացին այցելելու թագաւորին, թագուհուն և նրանց նախարարներին՝ Տուիլըրի պալատում։

Ազգային պահակազունդը, որի հրամանատարն այլևս Լաֆայէտը չէր, փոխանակ զսպելու ժողովրդին, ընդհակառակն եղբայրական ձեռք պարզեց նրան և ամենքը միասին, խառն ի խուռն մտան դղեակը։

Այս թշւառ մարդիկ, որոնք միմիայն չքաւորութիւն էին տեսել—շլացան երբ տեսան թագաւորի դղեակը՝ լիքը ոսկեզօծումներով. երաժշտական գործիքներ, նկարներ, արւեստի թանգագին իրեր, պահարաններ՝ լիքը ազնիւ ամանեղէնով և յախճապակիով...

Թագաւորին էլ տեսան, որ շրջապատւած իր ծառաներով կանգնել էր մի լուսամուտի խորքում։

Մսագործ Լըժանրը համարձակ առաջ անցաւ ու թագաւորին յայտնեց, որ անհրաժեշտ էր իսկոյն ընդունել և հաստատել Ազգային Ժողովի որոշումները, որ ժողովուրդն այլևս յոգնել էր յե-

մարմնալուց և տխմար համարելուց, քանի որ ամեն բան լաւ տեսնում էր ու այլևս չէր թոյլ տալ որ խաբեն իրեն։

Պարզ, սրտաբաց մարդու առաջարկ էր այդ։

Թագաւորը խոստացաւ հաւատարիմ մնալ Սահմանադրութեան։ Յետոյ բարձրացաւ սեղանի վրայ, գլխին դրեց կարմիր գլխարկ և մի բաժակ գինի խմեց Ազգի կենացը։

Սակայն աղմուկը քանի գնում՝ մեծանում էր այդ սրահում։ Բարեբախտաբար վրայ հասաւ քաղաքապետ Պետիօնը, որ դարձաւ դէպի պալատը զննելու և քրքրելու տրամադիր ժողովրդեան —ու ասաց.

—Եթէ, քաղաքացի՛ք, այսքան մնալը բաւական չը համարէք և անմիջապէս չը դուրս գնաք պալատից, հասարակաց բարօրութեան թշնամիները կը թիւնաւորեն ձեր միտումները... Դուք վարւեցէք ինչպէս ազատ մարդիկ, թագաւորը անդորրութեան մէջ պիտի խորհէ անշուշտ իր անելիքը...

Ժողովուրդը ըմբռնեց որ քաղաքապետը իրաւացի էր, և մինչև երեկոյ դատարկեցին պալատը, միմեանց ետևից դուրս գալով ու քաղաքավարութեամբ բարևելով նստած թագաւորին, թագուհուն ու փոքրիկ թագաժառանգին։

Ահա այս ցոյցն էր, որ շատ մարդիկ դատապարտեցին և անւանեցին ոճիր թագաւորի դէմ։ Սակայն, որքան մտածում եմ, այնքան գտնում եմ, որ դա մի շատ պարզ և բնական քայլ էր ժողովրդի կողմից։ Ի հարկէ, անախորժ բան է տանդ մէջ տեսնել ահագին ամբոխի լցւելը, սակայն չէ՞ որ թագաւորը իր ժողովրդի հայրն է համարւում։ Լուի XVI հարիւր անգամ ասել էր.

—Իմ հպատակների հայրն եմ ես։

Լաւ ուրեմն, եթէ դա ճիշտ էր և եթէ նա այդպէս էր մտածում, ուրեմն չը պիտի զարմանար և բնական պիտի գտնէր, որ որդիները գնում էին հօրը տեսնելու և նրանից խնդրելու իրենց ուզածը։

Սակայն, ճիշտը եթէ ասեմ, ինձ թւում է որ որդիների այդ տեսակ այցելութիւնը շատ պիտի զարհուրեցրած լինէր «հայրիկին», որովհետև ժողովուրդը բաւական անփոյթ ու անպատկառ էր եղել ներս մտնելիս։ Է՛հ, վալէնտիններ էլ չեն պակասում... և ահա անվերջ ողբ ու կական էր, որ սկսեց։

Միւս կողմից, հայրենասէրները յուսացել էին, որ Լուի XVI տեսնելով այդ ահագին ամբոխը, կը մտածէր և կընդունէր որոշումները։

Շօվէլն էլ այդպէս էր համոզւած։

Սակայն, թագաւորը յամառեց և ետ չը վերցրեց իր վէտօն,

այնպէս որ, ժողովրդեան ցոյցը անօգուտ էր անցել և մեր թշնամիները պիտի դրանից օգտւէին։

Հաշւի պէտք էր առնել այդ։ Ֆէօյլեաններն և իբր թէ սահմանադրականների ամբողջ կուսակցութիւնը, Բարնավ, Մունիէ և այլն, որոնք միշտ քարոզում էին յարգանք դէպի Սահմանադրութիւնը և միւս կողմից արքունիքին խորհուրդ էին տալիս ջնջելու նրան—բոլոր այս մարդիկ, այլև ազգային պահակների կէսը և դատական վարչութիւններից 76-ը ձեռքերը երկինք բարձրացրին ու սկսեցին կանչել, որ ամեն ինչ կորուած էր, որ այլևս չէին պատկառում թագաւորից և որ պէտք էր անշուշտ դատապարտել յունիսի 20-ի ցոյցերի գլխաւորներին, այլև քաղաքապետին, որ Բայլիի նման չէր կոտորել ամբոխին...

Վերջապէս ինքը—Լաֆայէտն էլ, փոխանակ իր տեղը մնալու և զննելու թշնամիների շարժումը—ամեն ինչ թողեց և Փարիզ եկաւ, յանուն բանակի պատիժ պահանջելու յունիս 20-ի ապստամբների համար։

Ազգային ժողովը նրան շատ պատիւ տւաւ, սակայն այդ չը խանգարեց Ժիրոնդէն Գադէին ասելու.

—Երբ իմացայ թէ Լաֆայէտը Փարիզումն է, իսկոյն մտածեցի, որ արտաքին թշնամիներից ազատւել ենք այլևս և Աւստրիացիները անշուշտ յաղթւել են։ Այդ ինքնախաբէութիւնը սակայն երկար չը տևեց. մեր թշնամիները միշտ այնտեղ սպառնում են երկրին, մեր դրութիւնը արտաքին կողմերից աւելի քան վըտանգաւոր է, սակայն Լաֆայէտը Փարիզումն է... Ինչո՞ւ, ինչն է նրան այստեղ բերողը։ Ներքին խռովութիւննե՞րը... Ուրեմն վախենում է որ Ազգային Ժողովը չունի՞ այնքան ոյժ, զսպելու համար խառնակութիւնները... Ինքն իրեն ներկայացնում է նա որպէս ներկայացուցիչ բանակի և ազնիւ մարդկանց... բայց ո՞րտեղ են այդ ազնիւ մարդիկ և ինչպէ՞ս բանակը կարողացաւ խորհրդածութեան դնել այստեղի հարցերը... Ինձ թւում է, որ Լաֆայէտը իր զինւորական վարչութեան ցանկութիւնը՝ համարում է ամբողջ բանակի ցանկութիւնը... Իսկ ես ասում եմ, որ թողնելով նա իր պաշտօնատեղին առանց նախարարի թոյլտւութեան—դէմ է գործել Սահմանադրութեան օրէնքներին...

Պարզ էր և շատ լաւ ասւած կարծեմ։

Լաֆայէտը իբր առաջին օրինակ հանդիսացաւ այն զօրապետների, որոնք թողնում էին իրենց պաշտօնատեղին, երկիրն ազատելու պատրւակով և գալիս էին իշխանութիւն ձեռք բերելու։

Հարկաւոր էր բռնել նրան ու մի լաւ դատել պատերազմական ատեանով։ Եւ եթէ նրան էլ, ինչպէս հասարակ զինւորի, դա-

տապարտէին տասը տարւայ տաժանակիր աշխատանքի, ապագա-
յում այլեւս ոչ մի զօրապետ չէր յանդգնիլ նոյն քայլն անել:

Խնդիրն այն է, որ Լաֆայէտը ժազօբէններին ամբաստա-
նելուց յետոյ Ազգային ժողովում, իսկոյն յետ գնաց Նորին Վե-
հափառութիւնների մօտ և առաջարկեց տանել նրանց Կոմպիէն,
ուր Թագաւորը կարող պիտի լինէր իբր թէ հրամայել վերաքն-
նելու Սահմանադրութիւնը, վերահաստատել միապետութիւնը իր
բոլոր արտօնութիւններով և ազնւականութեանը տալ իրենց ա-
ռանձնաշնորհութիւնները: Ինքը Լաֆայէտը յանձն էր առնում կա-
տարել Թագաւորի կամքը. և եթէ Փարիզը դիմադրէր—վարւել
նրա հետ, ինչպէս ապստամբ քաղաքի:

Այս բոլորը բացւեց յետոյ, Կոբլէնցից ուղարկւած նամակ-
ներից: Բայց Թագաւորն ու Թագուհին շատ էլ լաւ չընդունեցին
Լաֆայէտի այդ առաջարկները:

Թագուհին ուզում էր պրուսիացիների ձեռքով ազատւած
լինել և ոչ թէ Լաֆայէտի, որ քարշ էր տւել նրան Վէրսայլից
Փարիզ՝ ցնցոտաւորներով շրջապատած, որոնք աղաղակում էին—
«Ահա հացագործը, հացագործուհին և մանչուկը»...

Նա այդ մոռանալ չէր կարող, ոչ էլ վարժւել ո և է սահմա-
նադրութեան: Սակայն ամենից աւելի, տանել չէր կարող, որ Լա-
ֆայէտը լինի միապետութեան ազատարարը: Պրուսացիների, իր
ազգական Աւստրիական Թագաւորի և գերմանական կայսեր օգ-
նութիւնը շատ աւելի լաւ էր նրա համար:

Լաֆայէտը հասկանալով որ իր սպիտակ նժոյգի ժամանակն
անցել էր *), փորձեց ազգային պահակները ժողովել և նրանցով
ոչնչացնել ժաքօբէնների ակումբը, սակայն քաղաքապետ Պետիօ-
նը արգելեց նրան զօրաժողով անելու... և խեղճ պարոն մարքիզը
յուսահատւած, սուս ու փուս՝ Սեդանի մօտ կանգնած իր բանակը
վերադարձաւ:

Հայրենասէրները սակայն լաւ հասկացան դաւաճանութիւնը
և Ազգային Ժողովի վրայ ամեն կողմից պահանջներ տեղացին
պատժելու դաւաճաններին և մանաւանդ Լաֆայէտին:

Ահա այդ ժամանակ էր, 1792 Յուլիսի այդ շոգ օրերին, որ
հազարաւոր դաշնակցականներ (fédérés), առանց բանի տեղ դնե-
լու վէտօն, ամեն կողմից ճանապարհ ընկան դէպի Փարիզ, 20000
հոգուց բաղկացած բանակը կազմելու համար:

Գնում էին փոքրիկ խմբերով, 5—6 հոգի, պարզ հագուստ-

*) Երբ նա իր սպիտակ ձիու վրայ նստած ամեն տեղ կարողանում էր
ժողովրդի վրայ ազդեցութիւն բանացնել: Ծ. Թ.

ներ հագած, կարմիր գլխարկներով, թաշկինակնին փայտերի ծայ-
րերին և գնալիս՝ աղաղակում.

—Դէպի Փարիզ... դէպի Փարի՜զ...

Փոշուց սպիտակացած գալիս անցնում էին մեր գիւղով: Ար-
իւնս եռ էր գալիս երբ տեսնում էի նրանց գնալը և մանաւանդ
երբ գլխարկներն փայտերի վրայ դրած՝ շարժում էին ու ձայնում.

—Մնաք բարև... Շուտով կը լսէք մեր ձայնը:

Կուզէի հետևել նրանց, սակայն հայրս ու մայրս, Մատիւրի-
նը և Էտիէնը առանց ինձ չը պիտի կարողանային. և դա էր բռ-
նում ինձ: Սիրտս էր ճաքում, բայց էլ ինչ արած:

Թագաւորի նախարար Բէրրիէն հրամանագրեց գաւառական
վարչութիւններին՝ արգելք լինել և ամեն միջոցներով ցրւել այդ
խմբերը, պահանջել ոստիկանութիւնից, ժանդարմներից, բոլոր
այլ իշխանութիւնները միացնել և արգիլել մարդկանց՝ իրենց երկ-
րիցը դուրս ելնելու... Սակայն այդ հրամանագիրը ոչ մի ազդե-
ցութիւն չունեցաւ: Ընդհակառակն, բոլոր ակումբները սկսեցին
դոռալ նախարարի դէմ: Շօվէլը յայտարարեց, որ նախարարի ա-
րածը կատարեալ դաւաճանութիւն էր. որ թոյլ էին տւել պրու-
սիացիներին ու աւստրիացիներին գալու, բաց էին արել ճանա-
պարհ նրանց համար, իսկ այս կողմում խիստ միջոցներով արգելք
էին դառնում քաղաքացիներին՝ իրենց պարտաւորութիւնը կա-
տարելու:

Ամենքին յայտնի էր նաև, որ Թագաւորի սպասաւորները
ծպտած ազգային պահակների հագուստով, ամեն տեղ գնում էին
և դաշնակցականների դէմ գրգռում ժողովրդին, անւանում նրանց
«անվարգիկներ» որպէս թէ չքաւորութիւնը ոճիր է և որպէս թէ
յաճախ չքաւորութիւնը շատ աւելի լաւ սրտի տէր չէ լինում, քան
իրենց նման սրիկաները: Սպասաւոր լինելը կարծես մի շատ
դժւար բան լինէր. ոտ լիզել և քծնել — ահա բոլորը. մինչ այդ
«անվարգիկներ» կոչւողներն էին հէնց, որ իրենց քրտինքով կե-
րակրում էին քծնող մակաբոյծների:

Ամեն ոք մտածում էր արդէն, թէ այլեւս ժամանակ էր խել-
քի բերելու այդ վատ արարածներին: Եւ ահա Ազգային Ժողովը
հրամանագրեց.

«Ազգային քաղաքացի պահակները, որոնք Փարիզ են գալիս
Սահմանադրութեան սիրոյ համար, լինի միանալու Սուասօնի պա-
հեստի բանակին, լինի սահմանագլուխ գնալու, արձանագրել պի-
տի տան իրենց անունները քաղաքային վարչութեան մէջ, ներ-
կայ կը լինեն յուլիս 14-ի դաշնակցական տօներին (fêtes de la
fédération) երեքօրեայ զինւորական տոմսեր կստանան ձրիապէս

բնակարան ունենալու համար, յետոյ, քաղաքային վարչութիւնը կը տայ նրանց անցագիր՝ մինչև իրենց նշանակուած տեղը գնալու, ուր նրանց վաշտերը կը կազմակերպուեն և պատերազմական պատրաստութեան մէջ կը դրուեն։

Ահա այս հրամանագիրն էր, որ յիրաւի, շատ օգտակար եղաւ։ Անմիջապէս ուղարկուեցաւ արտաքոյ կարգի սուրհանդակներով դէպի 83 գաւառները և Թագաւորը, Թագուհին, դրանիկներն ու մինիստրները ստիպուեցան համոզուել, որ վէտօն կորցրել էր իր նշանակութիւնը, որ ազնուականութեան, արքունիքի և եպիսկոպոսների դաւադրութիւններն այլևս ոչ ոքի չէին վախեցնում և որ «մուճակ շինողներն ու մսագործները» — ինչպէս մեզ կոչում էին—անվախ կերպով մտադիր էին փշրելու ենել Ֆրեդերիկի նշանաւոր ձիաւորներին, Աւստրիական հունգարացիներին, այլ և յաղթող սերնդեան հպարտ մնացորդներին...

Բոլորովին այլ բան է, երբ մարդ կռւում է իր անձի պաշտպանութեան համար, իրա օգտին և ոչ թէ ոսկորները ջարդելու է գնում ո և է իշխանի հաճոյքին. իշխան, որ երբ պէտք չունենայ քեզ այլևս, դէն է շպրտում որպէս մի անպէտք փայտ...

Պէտք է որ մտածէին այդ մեր բարի ազնուականները, ինչպէս և Լուի XVI Թագաւորը։ Եւ այդպէս էլ էր։ Յետոյ նամակներ գտնուեցին թշուառ միապետի պահարանում, որոնցում նա իր յուսահատութիւնն ու սրտաբեկութիւնն էր արտայայտում՝ տեսնելով թէ ինչպէ՜ս մուճակարարներն ու փաստաբանները միացել էին բանակ կազմելու, մինչ կը կամենար որ նրանք միմեանց գզգզէին։

Չեմ մոռանայ երբէք դաշնակիցների անցնելը և մանաւանդ Ֆրանսիայի այն ահարկու ճիչը, երբ յուլիսի սկզբներին, հայրենասէրների այդ մեծ իրարանցման ժամանակ, Ժիրոնդէն Վէրնիօի նշանաւոր ճառերը տարածուեցին երկրում ու ամեն ոք համոզուեց, որ Ազգային Ժողովն էլ մեզ նման, Լուի XVI-ին համարում էր դաւաճան։

Շօվէլն ինքն էր, որ մեր ակումբում կարդաց այդ ճառերը։ Բոլոր լսողները գունատւում էին։

Ահա թէ ինչ էր ասում Վէրնիյօն ի միջի այլոց.

—Յանուն Թագաւորի, Թագաւորի մեծութիւնը վիրաւորողներից վրէժ առնելու, Թագաւորին պաշտպանելու, Թագաւորին օգնութեան գալու համար է, որ ֆրանսական իշխանները գրգռեցին մեր հայրենիքի դէմ Եւրոպական Թագաւորներին. դրա համար է, որ կազմւեց Պիլնիցի դաշինքը, աւստրիացիք և պրուսացիք զէնք վեր առան...

«Մեր գլխին կուտակւող չարիքների և աղէտների պատճառը կամ պատրւակը Թագաւորն է միայն»։

Յետոյ, խօսելով Սահմանադրութեան մասին, որ Թագաւորին է միայն յանձնարարում պաշտպանել հայրենիքը — աւելացնում է.

—Ո՛վ Թագաւոր, որ ձևացնում էք ձեզ որպէս օրինասէր, միմիայն ձեր ոյժը պահպանելու և նրանով այդ իսկ օրէնքները ջախջախելու նպատակով. որ ձևացնում էք ձեզ որպէս սիրող Սահմանադրութեան՝ որպէս զի գահազուրկ չը լինէք և այդպիսով յաջողէք ոչնչացնել Սահմանադրութիւնը, ձևացնում էք որպէս սիրող ազգին, որպէս զի ապահովեցնէք ձեր խաբեբայութիւնների յաջողութիւնը, հաւատ ներշնչելու միջոցով... կարծում էք թէ կարո՞ղ էք խաբել մեզ ձեր կեղծաւոր խոստումներով...

Մի՞թէ, օրինակ հէնց, մեզ պաշտպանելու համար էր, որ թշնամու դէմ էք հանել այնքան թոյլ և անկարող ոյժ, որի խորտակուելուն ոչ մի կասկած չը կայ։ Մի՞թէ, յիրաւի, կարծում էիք պաշտպանել մեզ, մերժելով ներքին ամրապնդումների ծրագիրները և կամ դիմադրութեան այնպիսի պատրաստութիւններ տեսնելով, որոնք պատրաստ պիտի լինէին միայն այն ժամանակ, երբ բռնակալների զոհ դառնանք։ Մե՞զ պաշտպանելու համար էր, որ չը վռնտեցիք Սահմանադրութիւնը բռնաբարող մի զօրավարի և շղթայեցիք նրա ծառայողների քաջութիւնը...

Ո՛չ, ո՛չ, դուք Սահմանադրութեանը տուած ձեր ուխտը չը կատարեցիք և ոչ էլ նրա ո և է օրէնքը, որոնց բոլորին երդուել էիք հաւատարիմ մնալու։ Գուցէ և ընկել է Սահմանադրութիւնը, սակայն դուք չէք օգտուելու ձեր երդմնազանցութիւնից։ Դուք չը դիմադրեցիք ոչնչով այն յաղթութիւններին, որոնք յանուն ձեր կատարւում էին, փշրելով ազատութեան ձգտումները. սակայն այդ յաղթանակների պտուղը չը պիտի վայելէք։ Դուք այլևս ոչինչ էք այն սահմանադրութեան համար, որին այնքան անազնւաբար ոտնակոխ արիք. ոչինչ էք նաև այն ժողովրդեան համար, որին դուք այնքան ստորաբար դաւաճանեցիք»...

Որպիսի զայրոյթի և կատաղութեան աղաղակ էր, որ բարձրացաւ հրապարակում...

Բոլորը ճշմարտութիւններ էին, ամեն ոք մտածել էր այդ... Այդպիսի Թագաւորը, որի շահերը դէմ էին ազգի շահերին, մեր կործանման պատճառը կարող էր լինել։

Ամենքն սկսեցին ասել.

—Ցած պէտք է նետել այդ Թագաւորին... պէտք է վերջ

տալ և ժողովուրդն ինքը պիտի մտածէ իր պաշտպանութեան վրայ…

Սակայն ինչ որ աւելի լաւ ապացուցանում է Լուի XVI-ի ստոր դաւաճանութիւնները—դա այն է, որ հետևեալ օրն իսկ իր նախարարները Ազգային Ժողով իջան և յայտարարեցին թէ գանձը, բանակներն ու ծովային գործերը այնպիսի վատ դրութեան մէջ էին, որ ստիպուած էին խմբովին հրաժարական տալ։

Այդ ասելուց յետոյ, «քաջարի» նախարարները դուրս էին փախել սրահից, առանց սպասելու որ և է պատասխանի, նման այն սնանկների, որոնք արդարանալու տեղ չունենալով՝ փախչում են Անգլիա կամ ուրիշ երկիր և թողնում շատ անձերի աղքատացած իրենց շնորհիւ։

Նրանց յայտարարածը պարզ էր ու այսպէս էր մեկնւում.

—Դուք հաւատում էք մեզ, սակայն, աչքի առաջ ունեցէք, որ մենք ոչինչ չենք արել, թշնամիները պատրաստ են և գալիս են… Ազատուեցէք, եթէ կարող էք… օտար յարձակումներից պաշտպանուելու համար։

XI

Հետևեալ օրն իսկոյն, Ազգային Ժողովը յայտարարեց.

—Հայրենիքը վտանգի մէջ է…

Ու ամբողջ Ֆրանսիան ոտքի ելաւ։

«Հայրենիքը վտանգի մէջ է» խօսքերով ահա թէ ինչ էին ուզում ասել.

—Ձեր արտերը, ձեր մարգերը, ձեր տները, ձեր ծնողները, գիւղերը, բոլոր իրաւունքներդ ու ազատութիւնները, որ շահեցիք կռիւ տալով ազնւականների և կրօնաւորութեան դէմ—այժմ վտանգի մէջ են։ Փախստականները գալիս են խմբովին՝ աւստրիացոց և պրուսացոց բանակների հետ, այրելու ձեր ամբարները և ձեր խրճիթները. ձեր վզին են դնելու նորից հարկ, տուրք, տասանորդ և այլն և այլն որդոց որդի… պաշտպանուեցէք, միացէք և կամ պատրաստ եղէք եզների նման գործելու միմիայն ազնարի և վանքերի համար»…

Ահա թէ ինչ նշանակութիւն ունէին բառերը։ Եւ դրա համար էր, որ բոլորս ոտքի ելանք ինչպէս մէկ մարդ. դրա համար էր, որ մեր հարուածները սոսկալի էին… Մեր կայքը, իրաւունքներն ու ազատութիւնն էինք պաշտպանում…

Այդ պաշտօնական հրովարտակը յայտարարուեցաւ Ֆրանսիա-

յի բոլոր համայնքների մէջ։ Ամեն ժամ որոտում էին թնդանօթները, ահազանգը հնչում էր իւրաքանչիւր գիւղում և երբ մարդիկ իմանում էին, որ իրենց արտերը յափշտակութեան զոհ դնալու էին սպառնում՝ հասկանալի է անշուշտ, եթէ ինչպէս գերանդիները ակօսների մէջ էին թողնում և վազում էին հրացանը ձեռք առնելու։ Որովհետև արտերը հետևեալ տարին էլ կարող էին հունձ տալ, տասը, հարիւր տարի էլ—թող ոտնակոխ լինէին նրանք, հրդեհուէին… գլխաւորն այն էր, որ իրենք արտերը մեր ձեռքը միայն և զուրկ չը թողնէին մեր որդիներին ցորենից, վարսակից ու գետնախնձորից…

Մեզ մօտ Ֆալցբուրգում, երբ երկարահասակ Ելօֆ Կօլէնը հրապարակի մէջ ամբիոն ելաւ ու կարդաց յայտարարութիւնը, դարձաւ ամբոխին և, որպէս ժայռի վրայ կանգնած ծեր բազէ՝ աղաղակեց.

—Քաղաքացիք, հայրենիքը վտանգի մէջ է, օգնութեան ելէք հայրենիքին…

Անասելի ոգևորութիւն սկսեց նախ եկեղեցական կալուածքներից ձեռք բերողների որդիների մէջ, որոնք լաւ էին զգում, որ եթէ փախստականները Ֆրանսիա մտնէին, իրենց հօրը պիտի կախէին ամենից առաջ։ Դրա համար էր ահա, որ 5, 6, 10 հոգի շարէշար ամբիոն էին ելնում և գրել տալիս իրենց անունը։

Ես էլ, թէև ոչինչ չունէի դեռ, բայց չէի կամենում գործել ուրիշի համար և, բացի դրանից, համամիտ էի Շօվէլին՝ ազատութեան գաղափարի մէջ և պատրաստ էի կեանքս զոհել նրա համար։

Երկար չսպասեցի. իսկոյն զգացի թէ ինչ էր պէտք անել և երբ յայտարարութիւնը վերջացաւ, ամբիոն ելայ և կամաւորների շարքում գրել տուի ինձ։ Կամաւորների ցանկում երրորդն էի. առաջինն էր Քաէնտրայլ, երկրորդը՝ Լատուր-Ֆուսաք և երրորդը՝ Միշէլ Բաստիան, Մայրի-Աննաաի Բարաքներից։

Եթէ ասեմ որ գրուելուց յետոյ սիրտս չը սեղմուեց—սխալ կը լինի։ Գիտէի որ հայրս ամբողջ երեք տարի պիտի մնար թշուառութեան մէջ և վարպետ Ժանը մենակ՝ դարբնոցում։ Բայց գիտէի նոյնպէս, որ հարկաւոր էր պաշտպանել և ազնւականներին չէին կարող ուղարկել մեր փոխարէն։ Հարկաւոր էր որ ինքներս գործի մէջ մտնէինք և կամ դարձեալ դարերով կրէինք մեր շղթաները։

Եւ երբ գրուելու տոմսը գլխարկիս ժապաւէնի մէջ կոխած ցած էի իջնում ամբիոնից—հայրս դէմ առ դէմ եկաւ և բազուկ-

ները պարզեց ինձ։ Հենց առաջին աստիճանի վրայ գրկեցինք, երկուսս էլ աղաղակելով.

—Կեցցէ ազգը…,

Ծնօտը դողում էր, արտասուքի կաթիլները հոսում էին այտերից ցած. սեղմում էր ինձ կրծքին և ասում.

—Շատ լաւ արիր, զաւակս։ Այժմ գոհ եմ… Նիկօլայի տուած հարուածը բժշկեց… Այլևս ոչ մի ցաւ չունիմ։

Պէտք չը կայ նկարագրելու աղաղակները, ձեռքերի սեղմումներ և երդումներ՝ մեռնելու կամ յաղթելու։ Ամեն ոք գիտէ, որ այնուհետև, յաճախ խաբեցին ժողովրդին, գրգռեցին և ոգևորեցին Ֆրանսիային չը վերաբերող պատերազմներով և շատ վնասներ տուին միամիտ մարդկանց, սակայն այս անգամ լուրջ էր. ժողովուրդն ինքը, ինքնաբերաբար և իր հաշւի համար էր ոգևորւում. գնում էր կռւելու իր իսկ կայքի և ազատութեան համար։

Այդ շատ աւելի լաւ էր, քան գնալ անմտաբար սպանւել ո և է Թագաւորի կամ կայսեր փառքի համար։

Դրա համար էլ, սիրով յիշում եմ այն մարդ ու կին, ծեր ու պառաւ, կքւած, երկտակ եղած գիւղացոց, որոնք գրկում էին իրենց զինւոր գնացող որդոց… Թշւառ, սակայն ազնիւ մարդիկ, որոնք, գիտեմ, պիտի միայն անօթի, ապրում էին խարխուլ խրճիթների մէջ՝ առանց ո և է շահ ունենալու պատերազմից, միմիայն ազատութեան, արդարութեան և հայրենիքի սիրոյ համար՝ ուրախութեամբ զոհ տալով իրենց միակ նեցուկ—որդոցը։

Յիշե՛մ արդեօք ապա՝ հայրենասիրական ընծաները, որոնք տալիս էին կամաւորների ծնողները, վիրաւորների համար և գունտերը զինելու նպաստ. ընծաներ ու նւէրներ՝ ամեն տեսակ չքաւորների, տնանկների կողմից. տնանկներ, որոնք քաղաքական վարչութեան պաշտօնեաներին աղաչում էին աւելացնելու իրենց մի քանի լիարդները՝ միւսների վրայ…

Յիշե՛մ պատանիների ու մանուկների, որոնք լալիս էին, որովհետև թմբկահար և շեփորահար լինելու տարիքն անգամ չունէին…

Բայց ինչ որ շատ աւելի լաւ յիշում եմ և այժմ ինձ նորից գրեթէ երիտասարդացնում է 20 տարով, այդ այն րոպէն է, երբ կէսօրւայ մօտերը, մինչ վարպետ Ժանը, Լէտուվիէն, հայրս և ես ճաշի էինք նստել Շօվէլի մօտ գրադարանում, մինչ Մարգարիտը էլ ու մուտ էր անում խանութը բաց ծախելու և յետոյ ներս մտնում ու ինձ չէր էլ նայում և ես, չը նայելով լաւ գինուն ու ճաշին՝ ուրիշների նման ծիծաղել չէի կարողանում և ոչ էլ շատ

գոհ կռւի դաշտ գնալուց—յանկարծ Շօվէլը ձեռք առաւ մի հին գինու շիշ, բաց արաւ խցանը և աղաղակեց.

—Իսկ այս շիշը, բարեկամներ, պիտի խմենք Միշէլի կենացը… Դատարկեցէք բաժակներդ՝ նոր գինու համար…

Յետոյ շիշը սեղանի վրայ դրաւ, նայեց ինձ ծանրախոհ դէմքով ու ասաց.

—Լսիր, Միշէլ. դու գիտես, որ քեզ ես սիրում եմ վաղուց ի վեր. քո վերջին արարքն աւելացրեց իմ յարգանքը դէպի քեզ… ցոյց տւաւ, որ դու տղամարդ ես։ Պէտք չունեցար սպասելու որ կատարէիր դէպի հայրենիքն ունեցածդ պարտքդ, չը նայելով որ այստեղ շատ Թանգագին, սիրելի բաներ ես Թողնում… Այժմ մեկնելու ես. պիտի գնաս մարդկային իրաւունքները պաշտպանելու. եթէ ուրիշ պարտաւորութիւններ չունենայինք մենք, մենակ չէիր գնալու. միասին կը լինէինք կռւի դաշտում… Սակայն, այս լուրջ ժամին, խօսիր համարձակ, արդեօք ոչինչ չե՞ս Թողնում այստեղ ցաւելով. գոհ սրտով ես գնում արդեօք, ոչինչ չունի՞ս խնդրելու մեզնից… օրինակ, հայրենասիրական այն մեծ նւէրներից, որ մարդ անում է իր յարգած ու սիրած երիտասարդին…

Նայում էր ինձ. զգացի, որ սաստիկ կարմրում էի. աչքերս ակամայից դէպի Մարգարիտի կողմը դարձան։ Մարգարիտն էլ այդ միջոցին գունատ և աչքերը իջեցրած՝ կանգնել էր մի կողմ։

Չը համարձակւեցի խօսել. խորին լռութիւն էր տիրում, երբ յանկարծ Շօվէլը նայեց հօրս ու ասաց.

—Հէ, հայր Բաստիան, կարծեմ այս տղայք իրար սիրում են, հը՞…

—Ա՜հ, անշուշտ այո. պատասխանեց հայրս—և վաղուց…

—Ինչ էք կարծում, շարունակեց Շօվէլը—չը նշանե՞նք սրանց, հը՞, հայր Բաստիան։

—Ա՜հ, պարոն Շօվէլ… երջանկութիւն կը լինէր դա ինձ համար։

Մինչ նրանք այդպէս զւարթ դէմքով խօսակցում էին, ես ոտքի էի ելել, բայց դեռ չէի համարձակւում մօտենալ Մարգարիտին։

Սակայն Շօվէլն իսկոյն աղաղակեց.

—Ապա, զաւակներս, համբուրեցէք էհ… շուտ, ձեզ տեսնեմ… համբուրեցէք…

Հարկ է ասել որ անմիջապէս նետւեցինք իրար գիրկը։ Մարգարիտը դէմքը ծածկեց ուսիս վրայ։

Նա իմն էր այլևս։ Որպիսի՜ երջանկութիւն՝ կարողանալ այդ-

պէս համբուրել սիրածիդ՝ բոլորի առաջ—ծնողների, բարեկամների…

Ա՜հ որպիսի հպարտութիւն և ոյժ էր որ զգացի իմ մէջ։

Վարպետ Ժանը քրքջում էր, իսկ Շօվէլը մեր կողմը դարձած իր աթոռովը, ասաց.

—Ձեզ նշանում եմ միմեանց… Դու գնալու ես, Միշէլ, և երեք տարուց յետոյ, երբ վերադառնաս, աղջիկս կինդ կը լինի… Կսպասես նրան, չէ՞, Մարգարիտ։

—Օ՛հ, մի՜շտ… բացականչեց աղջիկը։

Եւ զգացի թէ ինչպէս սեղմում էր ինձ կրծքին։ Այլևս չը կարողացայ զսպել ինձ և գոչեցի.

—Ես միմիայն քեզ եմ սիրել… ուրիշ ո՛չ ոքի չեմ սիրելու… գոհ եմ որ գնում եմ կռուելու ամենքիդ համար, որովհետև ձեզ բոլորիդ սիրում եմ…

Ու նստեցի։ Մարգարիտն իսկոյն դուրս գնաց։

Շօվէլը լցրեց մեր բաժակներն ու աղաղակեց.

—Ահա մի գեղեցիկ օր… Իմ որդի Միշէլի կենացը։

Հայրս իսկոյն վրայ տուաւ.

—Մարգարիտ աղջկանս կենացը…

Յետոյ բոլորս միասին կանչեցինք.

—Հայրենիքի՛… Ազատութեան համար…

Ֆալցբուրգում այդօր 163 կամաւորներ գրուեցին պատերազմի գնալու։ Ամբողջ երկիրը ոգևորութեան մէջ էր և ուզում էր կուի ելնել՝ պաշտպանելու համար մեր ունեցածները։ Ոչ ոք չէր մնացել դաշտերում։

Դրսում, հրապարակի և փողոցների մէջ լսւում էին աղաղակներ.

—Կեցցէ ազգը… Ça ira… Ça ira…

Յետոյ՝ զանգահարութիւն, ժամ առ ժամ՝ զինւորանոցի թնդանօթն էր որոտում և ցնցում մեր լուսամուտների ապակիները։ Մենք, խանութի խորքը նստած՝ շարունակում էինք զւարթութեամբ խօսակցել և լսում էինք թէ ինչպէս երբեմն ո և է հայրենասէր կանչում էր, գլուխը խանութի դռնից ներս կոխելով։

—Այսքանի է հասել կամաւորների թիւը…

Կանչում էինք ներս և մի բաժակ գինի առաջարկում խմելու ի պատիւ հայրենիքի… Շօվէլը քթախոտի պտղունցներ էր կոխում քիթը, աչքերը թարթում և գոչում.

—Վատ չէ… ամեն բան լաւ է գնում…

Խօսում էր նաև Փարիզում պատրաստւող մեծ հարւածների

մասին։ Բայց թէ ինչ հարւածներ պիտի լինէին դրանք—չէր բացատրում։

Վարպետ Ժանն արդէն իր Պիկէհօլցի ագարակի համար վարձել էր եղբօրս Կլօդին, որ մի միամիտ տղայ էր, առանց չարամտութեան, շատ լաւ երկրագործ և ինչ ասէին՝ կանէր։ Վարպետի ուզածն էլ հէնց այդ էր. սիրում էր միշտ հրամայող մնալ։

Այժմ, այդ օր նա ինձ յայտնեց, որ Մատիւրինն էլ պիտի երթար ագարակ, որովհետև նրանից լաւ, գործունեայ և քիչ էլ կծծի տնտեսուհի գտնել դժւար էր։ Ինքը—վարպետը ուզում էր դարձեալ դարբնոցում մնալ՝ մինչև իմ վերադարձը։

Ուրեմն Մատիւրինն էլ տեղաւորուեց. հայրս էլ դեռ կարողանում էր օրական 8—10 սու աշխատել, պարտք չունէր, ունէինք այծեր և բախտաւոր էր զգում իրեն, մանաւանդ երբ Շօվէլը յայտնեց, որ Էտիէնի համար էլ մի փոքրիկ պաշտօն կարելի էր գտնել քաղաքում։

Ժամը 5-ի մօտերը, քաղաքապետի քարտուղար Ֆրայլիգը եկաւ մեզ ասելու, որ կամաւորները միւս առաւօտ ժամը 8-ին պիտի մեկնէին Վիսէմբուրգի բանակը գնալու։ Այնտեղ պիտի սպասէին միւս գիւղերից էլ եկողներին, որովհետև գումարման կէտը որոշւած էր Վիսեմբուրգ։

Այդ լուրը ամենքիս լռջացրեց, բայց չը տխրեցրեց։ Էլի մի քանի բաժակ խմեցինք և որովհետև մթնում էր արդէն, պէտք եղաւ գիւղ վերադառնալ։

Մարգարիտը, առանց գլխարկի, թևս վերցրեց և եկաւ մինչև Ֆրանսական քաղաքադուռը։ Առաջին անգամն էր, որ միասին դուրս էինք գնում։ Մարդիկ նայում էին մեզ ու աղաղակում.

—Կեցցէ ազգը։

Ժամը 9-ին, լաւ մթնել էր, որ բաժանուեցինք վարպետ Ժանից ու Լէտումիէից՝ պանդոկի առաջ, բարիգիշեր մաղթելով։

Սակայն, փոխանակ կարողանալու հանգիստ քնել, ահա թէ ինչ փորձանքի դէմ առ դէմ եկանք ես ու խեղճ հայրս։

Ճանապարհներս շարունակեցինք դէպի վար, աղբով ու սայլի հետքերով աւրւած մեծ փողոցից։ Լուսընկայ սիրուն գիշեր էր։ Ուրախ սրտով սկսել էինք երգել—աւելի մեզ սրտապնդելու մտքով և սակայն մտածում էինք մօրս մասին, որ անշուշտ շատ գոհ չը պիտի լինէր, երբ իմանար որ գնալու էի իբր կամաւոր և մանաւանդ որ նշանուել էի մի հերետիկոսի վրայ։

Այնուամենայնիւ երգում էինք։ Բայց, հասած մեր խրճիթից հարիւր քայլ հեռու, ձայներնիս կտրեցինք և կանգ առանք, որով-

հետև մօրս տեսանք իր գորշ շրջազգեստով, խոշոր, ատևիցը կապուած գլխարկով, մազերը կախ և չոր բազուկները շապկի թևնոցներից դուրս՝ մինչև արմունկը։

Նստել էր խրճիթի սանդուխքին, ձեռքերով գրկել ծնկները և ծնօտը վրան դրել։ Մեզ էր դիտում հեռուից։

Հասկացանք որ ամեն ինչ գիտէր արդէն։

Երբէք այնքան վատ չէի զգացել ինձ, որքան այդ րոպէին։ Կուզէի վերադառնալ, սակայն հայրս ասաց.

—Առա՛ջ գնանք, Միշէլ։

Ու տեսայ, որ այս անգամ ծերունին սկի՛ վախ չէր ցոյց տալիս։

Առաջ գնացինք։ Հազի՛ւ քսան քայլ էր մնացել, որ յանկարծ մայրս վեր թռաւ, ոստնեց դէպի ինձ այնպէս զարհուրելի աղաղակ բերնին, որ—Աստուած թող ներէ ինձ—կատարեալ վայրենու ճչի էր նման։

Ու երկու ձեռքերը կատաղօրէն մղեց վզիս մէջ. անշուշտ կը խեղդէր, եթէ չշտապէի բազուկները բռնել։ Տեսնելով որ պաշտպանւում եմ, սկսեց սոսկալի ոտքի հարուածներ տեղալ վրաս ու գոռալ միանգամայն.

—Ա՛հ, դու գնում ես սպանելո՞ւ Նիկոլային, եղբօրդ սպանելու... գնա՛, գնա՛, վա՛տ կալւինիստ...

Միևնոյն ժամանակ փորձում էր ինձ կծել։ Ամբողջ գիւղը ոտքի ելաւ, մարդիկ դուրս թռան իրենց տներից, վազեցին մեր կողմը... կատարեալ խայտառակութիւն էր...

Հայրս փորձեց մօրս շրջազգեստից բռնել, քաշեց ատևիցը երկու ձեռքով ու ամենայն ուժով, որ ինձ բաց թողնի։ Մայրս տեսնելով այդ, թողեց ինձ և կատաղաբար նետուեց ծերունու վրայ՝ անւանելով նրան ժաքօբէն...

Անշուշտ խեղճ հայրս կը կուրանար նրա ճանկերից, եթէ վրայ չը հասնէին ածխագործ Հանովրը և մի քանի դրացիներ։

Յաջողեցին դրանք բռնել մօրս ու խրճիթ քարշ տալ։ Կռւում էր, դիմադրում նրանց ձեռքումը և աղաղակում.

—Ա՛հ, տեսէք այդ բարի զաւակին, որ թողնում է իր հօրն ու մօրը, մի կալւինիստ աղջկայ համար... պատարագներ պիտի անել տամ, որ Նիկոլան քեզ սպանի, կտրտի... գնա՛, գնա՛, անիծում եմ քեզ...

Մղել էին նրան խրճիթ, սակայն աղաղակները դեռ շարունակւում էին գիւղ լցնել։

Հայրս ու ես բոլորովին գունատ, մնացինք փողոցումը կանգնած։ Եւ երբ խրճիթի դուռը փակւեց, ծերունին դարձաւ ինձ.

—Խենթ է... Հեռանանք այստեղից, Միշէլ,—ասաց նա—եթէ ներս մտնենք, ընդունակ է ամէն բան անելու... Աստուա՜ծ իմ, Աստուած, որքա՜ն դժբաղդ դարձրիր ինձ...

Ու գնացինք դէպի պանդոկ։ Ճրագ կար այնտեղ։ Վարպետ Ժանը հանգիստ կերպով նստել բազկաթոռի մէջ՝ կնոջն ու Նիկոլին էր պատմում լաւ օրւայ դէպքերը։

Երբ ներս մտանք—ես՝ վիզս արիւնոտ և հայրս՝ բաճկոնը բոլորովին պատռուած, երբ իմացաւ եղածը, աղաղակեց.

—Խեղճ իմ Ժան—Պիէր... Ա՛հ, եթէ կինդ չը լինէր, իսկոյն բանտ դնել կը տայինք... Այդ անիծեալ չերդւող Հանրիդօրֆի քահանան է բոլոր այդպիսի խայտառակութիւնների պատճառը... ժամանակ է ոչնչացնելու այդ մարդկանց... այո՛, ի՛սկ ժամանակն է...

Ասաց նոյնպէս, որ հարկաւոր էր մօրս թողնել մենակ իր խրճիթում և հայրս կարող էր գալ իր տանը բնելու, պանդոկումն էլ կը քնէր։ Սակայն հայրս չը համաձայնեց. իր խրճիթումն էր ուզում ապրել...

Այդ գիշեր մենք պանդոկում քնեցինք և հետևեալ օրը առաւօտ շուտով հայրս մեր տուն գնաց՝ ճանապարհորդական պարկս բերելու։ Ամէն ինչ դրել էր մէջը. բերել էր նոյնպէս հրացանս և ազգային պահակութեան պայուսակս... Մայրս չուզեց տեսնել ինձ, չը նայելով հօրս այնքան յորդորներին։

Ու մեկնեցի ես առանց մօրս տեսնելու, նրա անէծքը և մահս տեսնելու ցանկութիւնը հետս առած։ Արժանի չէի դրանց, սակայն սաստիկ տխրել էի։

XII

Ժամը 10-ի մօտերը, միւս օրը, Գրաուֆթալի ձորակումն էինք արդէն, լեռան միւս կողմը, ժայռերի տակ։

Այդտեղ էր, որ գաւառի ամեն կողմից պիտի գային ու հաւաքւէին բոլոր կամաւորները՝ Բիչ գնալուց առաջ։ Յետոյ պիտի Վիսէմբուրգ գնայինք ու էլ աւելի հեռու։

Առաւօտը վաղ էինք ճանապարհ ընկել՝ շոգին չը մնալու համար։ Մարգարիտը, Շովէլը, վարպետ Ժանը, հայրս և գրեթէ ամբողջ քաղաքը—կին, տղամարդ, մանուկ—հետևել էին մեզ մինչև այդ առաջին հանգրուանը։

Բանակել էինք ուղղոտ դաշտավայրի վրայ, փեկոնների (hetre) ստուերի մէջ, հրացաններս միմեանց միացրած։ Ջուրը ցածում, տարածւում-փռւում էր իր գետով ու ե-աչքի տեսնելու չափ՝

գերքներին օրօրւող ուռիներով։ Ժայռերն ամբողջ ծածկւած էին խիտ անտառով, որ մագլցում-հասնում էր մինչև ամենաբարձր գագաթները։

Մարգարիտը նստած կողքիս, թփերի մէջ, ճանապարհի եզրքին, բաց արաւ փոքրիկ զամբիւղը, հանեց հաց, գինի և միս՝ նախաճաշելու, որովհետև Գրաուֆտալում պանդոկ չը կար դեռ ևս։ Քաղաքի բոլոր կանայք էլ գիտէին այդ և բերել էին պաշարեղէն։

Շօվէլը, հայրս, վարպետ Ժանն ու երեք-չորս քաղաքային վարչութեան պաշտօնեաներ նստել էին աւելի ցած՝ կաղնիների տակ և հեռւից մեզ էին դիտում։ Հասկացել էին, որ խօսելիքներ շատ պիտի ունենայինք երկուսս և գոհ կը լինէինք քիչ մենակ մնալով։

Մարգարիտը խնդրում էր ինձ գրել իրեն ամեն անգամ, երբ միջոց գտնէի. նայում էր սիրագեղ աչքերով. լաց չէր լինում ուրիշների նման, այլ վճռական ու սրտապինդ, զգում էր որ այդպիսի րոպէին չը պէտք էր մեղկացնել և թուլացնել մեկնողներին։

—Երբ հեռու կը լինես դու. ասում էր նա մեղմութեամբ— միշտ քեզ վրայ պիտի մտածեմ... պէտք չունիս անհանգիստ լինելու հօրդ մասին... ես նրան սիրում եմ... անհոգ կաց, ոչ մի պակասութիւն չի զգալ նա...

Եւ ես, կանգնած նրա առաջ, լսում էի զմայլմամբ և աւելի քաջութիւն ստանում։ Վերադառնալու յոյսը երբեք չը կորցրի, նոյն իսկ վտանգների մէջ եղած ժամանակ։ Երբ ուրիշները թուլանում էին ու ընկճւում անձրևից, ցրտից, անօթութիւնից ու յոգնածութիւնից—ես ամուր էի մնում, ճգնում էի մի կերպ դիմանալ. Մարգարիտին տեսնել էի ուզում։ Նրա սէրը նեցուկ դարձաւ ինձ։

Յանկարծ մի մեծ աղաղակ թնդաց ցածում ու արձագանք տւաւ ժայռերի մէջ։ Հայր Քրիստոֆին էին դիմաւորում. նա էր, որ գալիս էր նոր կամաւորների գլուխն անցած. գալիս էր օրհնելու մեր դրօշները։

Բաւական հեռւից տեսայ նրան և ճանաչեցի, երբ ժայռից ժայռ էր իջնում եղբօրս—Էտիէնի հետ, որի ձեռքիցն էր բռնել։

Չէի կարողացել, ժամանակ չէր եղել համբուրելու գնալ փոքրիկին։ Ինքն էր գալիս այժմ, կաղալով, գայթելով՝ ինչպէս կարող էր...

Ու ոգևորւած աղաղակների մէջ՝ իջայ մինչև Ցինսէլի կամուրջը։ Ժամը 11-ն էր, տաքը սաստկացել էր այնպէս և օդը ծանրացել, որ ամբողջ գետակը փայլում էր ջրի մէջ հազարնե-

րով թափւող ճանճերը որսալու դուրս եկած ձկներով։

Կամուրջի վրայ հայր Քրիստոֆը քրտնաթոր, իր խոշոր ձեռքը պարզեց ինձ ու ասաց.

—Գոհ եմ քեզնից, Միշէլ. գիտեմ նշանւիլդ և գիտեմ նաև որ արժանի ես դրան։

Յետոյ Էտիէնն էր, որ գիրկս նետւեց ու միասին եկանք անտառապահի խրճիթը, ուր պիտի ժողովւէին շրջանական ընդհանուր խորհուրդի անդամները։

Էտիէնը վազեց գրկելու Մարգարիտին և հօրս։ Շօվէլն ու վարպետ Ժանը, գիւղապետների հետ, եկան սեղմելու հայր Քրիստոֆի ձեռքը։

Շրջակայքի բոլոր կամաւորները, թւով 5—600, արդէն հասել էին. չը կային դեռ աւելի բարձր լեռներինը և քիչ յետոյ նրանց թմրկահարութեան ձայնն էլ հնչեց.

—Գալիս են... աղաղակեցին ամենքը։

Աւելի հեռւից գալու պատճառով, քիչ ուշացել էին։ Ածխագործներ, քարհատներ, փայտահատներ ու լաստագործներ էին. բոլորն էլ հուժկու, մազոտ տղայք, որ իրենց պետ էին ընտրել կոշկակար Կլօդ Հուլլէնին և գալիս էին շտապով։

Երբ ամենքն եկել էին ու մի տեղ կուտւել, Շօվէլը, որպէս քաղաքային վարչութեան պաշտօնեայ և նախագահ ակումբի, ելաւ մի ժայռի ծայրը, մօտ բերել տւաւ մի դրօշակ, խոշոր եռագոյն դրօշ, որի ծայրին հագցրած կար գիւղական կարմիր գլխարկ —և ձեռքերը պարզելով՝ օրհնեց Սահմանադրութեան ձևով ու ասաց.

—Ֆրանսական գիւղացու հին գլխարկ, որ այնքան երկար ժամանակ ծռւած կայիր դէպի գետին. գլխարկ, որ մեր դժբախտ հայրերը թաթախել են իրենց քրտինքի մէջ, ճորտային գլխարկ, որի վրայ ազան ու եպիսկոպոսները հազարաւոր տարիներ իրենց ոտքն ունէին դրած—ցցւիր և ուղղւիր, գնա դէպի պատերազմի դաշտը... Թող ստրկութեան մէջ քեզ կրողների որդիներն ու թոռները տանեն նրան ու անցկացնեն մեր թշնամիների ուժերի միջով... Թող քեզ բարձր բռնեն նրանք, երբեք չը թողնեն որ ծռւես և թող արհաւիրք հանդիսանաս նրանց, որոնք ուզում են ժողովրդին նորից շղթայել... Թող քո տեսքը դող ազդէ և դարերն իմանան, որ շնորհիւ քո պաշտպանների վճռականութեան, քաջութեան և առաքինութիւնների՝ ամենաստոր դրութիւնից հասար ամենամեծ փառքի...

Դրանից յետոյ, Շօվէլը բոլորովին գունատ, դարձաւ իրեն լսողներին և գոչեց.

—Կամաւորնե՛ր, ժողովրդի՛ զաւակներ, երդւո՞ւմ էք արդեօք պաշտպանելու այս դրօշը մինչև ձեր մահը… Այս դրօշը, որ հայրենիքն ու ազատութիւնն է ներկայացնում, որ յիշեցնում է ձեզ ձեր նախնիքների տանջանքները… Երդւո՞ւմ էք, պատասխանեցէք ինձ…

Ու ամենքս, որոտման ձայնով կանչեցինք.

—Երդւում ենք…

—Շատ լաւ. ասաց նա—Յանուն հայրենիքի՝ ընդունում եմ ձեր երդումը… Հայրենիքը իր յոյսը ձեզ վրայ է դրել և օրհնում է ձեզ ամենքիդ…

Ասաց ուժգնութեամբ, պարզ, և ձայնը լսելի էր բոլորին։

Դրանից յետոյ, իջաւ նա ժայռից և գրեթէ նոյն րոպէին, կամաւորներին մօտ ազգական չեղողներն սկսեցին իրենց գիւղերը վերադառնալ, որովհետև մի խոշոր ամպ էր գալիս, և, նայելով մեծ տաքութեանը, անշուշտ հեղեղի պէս անձրև էր թափւելու։

Շօվէլը զինւորականչ զարնել տւաւ և երբ շուրջն էինք ժողովւել, առաջարկեց առժամանակեայ մի հրամանատար ընտրել, որպէս զի քայլելու ժամանակ, գիշերելու, մեկնելու և այլն դէպքերում՝ կարգն ու կանոնը չը խանգարւէր։

Լեռնցիք Հիւլլէնին էին ընտրել, դրա համար էլ ձայնեցին.

—Հիւլլէն…

Բոլորս էլ նոյն անունը կրկնեցինք և Հիւլլէնը մեր հրամանատարը դարձաւ, մինչև Բիքսհէյմի բանակն հասնելը։

Եկաւ այլևս բաժանման րոպէն։ Գիւղապետները, Շօվէլը, հայր Քրիստոֆն ու հայրս, բոլորն էլ իջան ու եկան ճանապարհի կողքին։

Մարգարիտին էի նայում և ճգնում էի սրտիս մէջ տպաւորել կարծես նրա պատկերը։ Նա էլ նայում էր ինձ թրջւած աչքերով։ Ձեռքն էի բռնել և զգում էի որ ուզում էր չը թողնել ինձ։

—Դէհ, համբուրւենք այժմ։

Բոլորովին գունատ՝ համբուրեց ինձ. կարկամել էր։ Պարկս վերցրի թիերի միջից և կոճկեցի։ Շօվէլը, հայրս, Ժօրինը և վարպետ Ժանը մօտեցել էին։ Համբուրւեցի ամենքի հետ։ Ունեցածս բոլոր փողը հօրս էի տւել, որ Ժօրինի ապրելու տան վարձը տար և երբ վարպետ Ժանին էի համբուրում, զգացի թէ ինչպէս մի բան սահեց բաճկոնիս գրպանը։ Երկու ոսկի էր, որոնք ինձ յետոյ շատ օգտակար եղան։

Ժամանակն էր շարժւելու. ապա թէ ոչ, քիչ էր մնում քաջութիւնս կորցնէի։ Հրացանս առի և ասացի.

—Մնա՛ք բարև… Մնա՛ք բարև ամենքդ…

Բայց նոյն րոպէին Մարգարիտը աղաղակեց.

—Միշէ՛լ…

Այնպէս սրտապատառ էր այդ ճիչը, որ դիմանալ անհնար եղաւ։ Լաց էր լինում. վազեցի դէպի նա.

—Մարգարիտ, ասացի—դէհ, քա՛ջ եղիր, հայրենիքն է պահանջում այս…

Մեր շուրջը ամենքը լալիս էին… Օ՛հ, մանաւանդ այդ կանայք, որ այնքա՜ն թուլամորթ են դարձնում մարդու։

Սակայն Մարգարիտն իսկոյն զսպեց իրեն և գրկին սեղմելով՝ ասաց.

—Լա՛ւ պահպանիր քեզ…

Ու արագ ցած իջայ, առանց միւսներին ոև է խօսք ասելու այլևս։ Նոյն իսկ ետ չը նայեցի։

Բոլոր կամաւորներն էլ գրեթէ ցածումն էին, ճանապարհի վրայ. ետ մնացողներն էլ հասան և երեք առ երեք շարւելով՝ սկըսեցինք քայլել։

Արդէն խոշոր կաթիլներ էին սկսել թափւել. զգում էինք տաք փոշու մէջ ընկնող անձրևի հոտը։ Երբ Փոքր-Քարից ծռւում էինք ու իջնում, հեղեղն սկսեց մի փայլակի հետ։ Փոթորիկը լեռների կողմն էր անցել. անձրևը մեզ մինչև անգամ շատ ախորժելի էր։

Նոյն օրը երեկոյեան ժամը 3-ին Փոքր-Քարն անցանք առանց կանգ առնելու։ Երեք կամ չորս մղոն հեռու միայն, ապակու նախկին մեծ գործարանների առաջ, անտառի մէջտեղումըն էր, որ կանգ առինք։

Ճանապարհի ամբողջ ընթացքում երազել էի. նոյն իսկ ընկերներիս չէի նայել. այնքա՜ն մտազբաղ էի։ Երբ դադար առինք վաճառանոցի նմանող մի աւերակի մէջ ու կրակ վառեցին և երբ միւսները հաց ու գարեջուր էին բերում—Մարկ Դիվէգը, որ կողքիս էր, ձեռքն ուսիս դրեց ու ասաց.

—Դժւար է, չէ՞, Միշէլ, թողնել երկիրը և գնալ կռւի…

Նայեցի նրան. ճանաչեցի, բայց ո՛չ մի խօսք չասացի։ Ոչ ոք ախորժակ չունէր խօսելու և ամենքն էլ մի կտոր հաց ուտելուց ու մի բաժակ գարեջուր խմելուց յետոյ, տարածւեցին աջ ու ձախ, գլուխը պարկի վրայ։

Հետևեալ օրը առաւօտ վաղ՝ Հիւլլէնը կանչեց.

—Ոտքի՛, ընկերնե՛ր, ճանապարհ ընկնենք…

Բոլորս վեր թռանք, պարկերը կապեցինք և շարւեցինք։

Քայլել էինք ուզում, երբ յանկարծ մեր աջ կողմից երևաց

մի մեծ շարք ձիաւորուած կամաւորներ, որոնք Ներքին-Բէնից էին գալիս։ Ազգային ձիաւոր պահակներ էին. կարող գիւղացիների որդիներ.—գարեջրագործներ, մսագործներ, կալուածատէրեր… մի խօսքով մարդիկ, որոնք սեփական ձիերով էին և լաւ զինուած։

Բոլորն էլ զւարթ, առողջ և լաւ տեսք ունէին և քայլում էին վճռական ու սրտապինդ։

Երբ մեզ տեսան, նրանց հրամանատարը սուրը մերկացրեց, յետոյ բոլորը միասին սկսեցին մի երգ երգել, որ մեզնից ոչ ոք չը գիտէր դեռ. մի երգ, որ շուտով ամենքս էլ պիտի կրկնէինք շատ անգամ, պատերազմի դաշտում.—

Գնա՛նք, որդի՛ք հայրենիքի.
Փառաց օրը հասել է *)…

Որպիսի՜ երգ այդպիսի րոպէներում… Գրեթէ խելքներս կորցրինք ոգևորութիւնից… Անվերջ կերպով գոռում էինք—«կեցցէ Ազգը»… Իսկ երգող այդ Ալզասցիները անցնում էին շարքով մեր առջևից։ Խնդրում էինք կանգ առնել, ժողովեցինք մօտները, բռնեցինք ձիերի սանձերից, նրանց ձեռքերիցն ու կանչեցինք.

—Կանգ առէք, եղբայրական բաժակ պարպենք, քաջ Ալզասցիներ… իջէք ձիերից… Կեցցէ Ազգը…

Սակայն նրանց հրամանատարը, վեց ոտնաչափ երկարութեամբ մի տղամարդ, յայտնեց մեզ որ հրաման ունէր նոյն երեկոյ իսկ Սարէբրակ հասնելու։

Յետոյ մեկնեցին՝ նոյն երգը երգելով։

Երբէք չէ կարելի երևակայել մեր ոգևորութիւնը՝ երբ լսում

*) Լա Մարսէյլեզ կոչւող ֆրանսական հռչակաւոր ազգային-յեղափոխական երգի առաջին երկու տողերն են։ Այդ երգը յետոյ դարձաւ հասարակապետութեան ազգային մաղթանքը (гимнъ, himne)։ Խօսքերի հեղինակն է Ռուժէ-դը-Լիլ. գրւեց Ստրասբուրգում, 1792 թիւ Ապրիլ 25—26-ի գիշերը։ Եղանակը վերցրած է Գրիզոնի «Էսթիր» հոգևոր երգի (oratorio) նախաբանից։ Սկզբում երգը կոչւեց «Ռէնի բանակի պատերազմական երգ». յետոյ, երբ մարսէյլցի կամաւորները, Յուլիս 30-ին Փարիզ մտան, նա ստացաւ «Մարսէյլեզ» անունը։ Գաղափար տալու համար երգի բովանդակութեան մասին, առաջ ենք բերում այստեղ նրա առաջին կտորի թարգմանութիւնը՝ բառացի կերպով։

«Գնանք, որդի՛ք հայրենիքի—Փառաց օրը հասել է—Բռնակալութիւնը մեր դէմ—Արիւնոտ դրօշ է պարզել.—Լսո՞ւմ էք գիւղերում—Կատաղի զինւորների ոռնոցը.—Գալիս են նրանք մեր բազուկներում—Խեղդելու մեր որդիներին, կանանց։—Ի զէ՛ն, քաղաքացի՛ք.—Կազմեցէ՛ք ձեր վաշտեր.—Քայլե՛նք, քայլե՛նք, թող պիղծ արիւնով—Ոռոգւեն մեր ակօսները»։ Ֆրանսացի չը կայ գրեթէ, որ չը գիտենայ և չը ոգևորւի այս երգով։ Եղանակն էլ շատ յարմար և նոյնքան ոգևորող է, որքան խօսքերը։ Ծ. Թ.

էինք այդ երգը։ Կարծես վտանգի մէջ ընկած հայրենիքի աղաղակը լինէր նա։

Ու երբ ճանապարհ ընկանք, կարող եմ ասել որ ամենքս սրտապնդուել, նոր ոյժ էինք ստացել։ Ես իսկ ասում էի ինքն իրենս.

—Այժմ ամէն ինչ լաւ կերթայ. Ֆօվէլը որոնում էր մի երգ, որ կարող լինէր Կարմանեօլի *) տեղը բռնել. մի վսեմ, ուժգին երգ, ինչպէս ինքը ժողովուրդն է… ահա երգը, գտնւած է նա…

Ինչ որ այնուհետև յիշում եմ—այն է, որ ճանապարհին, լեռնական խրճիթների ու գիւղերի մէջ մեծ շարժում կար. զանգերը հնչում էին ամեն կողմից, մեր ճանապարհի իւրաքանչիւր ճիւղաւորութեան վրայ գալիս միանում էին մեզ կամաւորների շարքեր։

Ու ամենքն աղաղակում էին.

—Յաղթե՛լ կամ մեռնել…

Մե՛նք էլ նոյնն էինք գոռում և լեռների ամեն կողմերից լսում էին նոյն տեսակ բացականչութիւններ՝ երբեմն մինչև կէս մղոն տարածութեան վրայ։ Ամբողջ երկիրը ոտքի վրայ էր։ Այդպէս է. երբ ժողովրդի իսկական շահերը պաշտպանելու խնդիր կայ մէջ տեղ, ինձ թւում է թէ փոշիներից անգամ մարդիկ, կռւողներ են դուրս ելնում։

Երբ Բիչ անունով փոքրիկ քաղաքին հասանք, փողոցները, հրապարակներն ու պանդոկները այնքան լցւած էին, որ պէտք եղաւ բացօթեայ ճաշել այգիների և մարգագետինների վրայ։ Հիւլէն միայն քաղաք մտաւ՝ իր տեղեկագիրը տալու քաղաքային վարչութեան և ուտելիք խնդրելու։

Մեզ հիւրասիրեցին այդտեղ և մենք ճանապարհ ընկանք դէպի Ռիքշհէյմի բանակը, որ գտնւում էր Լանդաուի և Վիսսեմբուրգի միջև։

Հարկ եղաւ ամբողջ օրը, առանց կանգ առնելու, քայլել արևի տակ, որովհետև անցել էինք անտառները և հեռուից—հեռու միայն կային սարերը՝ բանջարանոցների կողքերին։ Շատ ուրիշ խմբեր էլ, հետևակ կամ ձիաւոր, աջից և ձախից, ետևից ու առջևից՝ գնում էին նոյն ուղղութեամբ։

Ու սայլերի շարքեր էին նոյնպէս, որ տանում էին գինի, պաշարեղէն… Բայց որպիսի՜ փոշի էր. գրեթէ մառախուղի նման պատել էր մեզ. որքա՜ն գոհ կը լինէինք, եթէ անձրևի մի լաւ հեղեղ նորից գար ողողելու մեզ։

*) Նոյնպէս յեղափոխական մի երգ. հեղինակը անյայտ. Մարսէյլեզից յետոյ նա այլևս չէր երգւում։

Երեկոյեան ժամը 9-ին հազիւ Բիքսհէյմ հասանք։ Այնտեղ իմացանք, որ արդէն սկսել էր պատերազմը և առաւօտեան մի խումբ ձիաւորներ խփւել էին գերմանական երէննուսարների և Լուրգովիցի ձիաւորների հետ, առաջնորդութեամբ մեր դաւաճան ազնւական սպաների։ Նրանք կամեցել էին կտրել Լանդաու գնացող պաշարեղէնների առաջը։

Տաք կռիւ էր տեղի ունեցել։

Բիքսհէյմ գիւղում սակայն, մարդիկ սրտաշարժ յուզմամբ պատմում էին մի խեղճ փոքրիկ թմբկահարի մասին, որ կամաւոր էր դարձել Ստրազբուրգի որսորդների վաշտում։

Քաջ մանուկը... Առաջինն ինքն էր տեսել հեռուից, ճանապարհի վրայով եկող երէննուսարներին և սկսել էր մարտակոչ թմբկահարել... Մի գերմանացի ձիաւոր վրայ էր հասել, սրի հարւածով կտրել նրա աջ թևը, սակայն սքանչելի տղան շարունակել էր թմբկահարել ձախով... Ու ոտքի տակ, ձիերի ոտքի տակ առնելով՝ տրորել էին նրան։

Ահա թէ ինչպէս էր պատերազմը մուտք գործում մեր մէջ...

ՎԵՐՋ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ 1793 Թւի

որ վճռաքննութեան դրւեց 1793 Յունիս 11-ին եւ վերջացաւ ու հաստատւեց նոյն ամսի 24-ին

Մարդկային և քաղաքացիական իրաւունքների յայտարարութիւն։

Ֆրանսացի ժողովուրդը, համոզւած լինելով, որ աշխարհիս դժբախտութիւնների միակ պատճառներն են մարդկային բնական իրաւունքների մոռացութիւնն ու արհամարհանքը—վճռեց այդ անբռնաբարելի և նւիրական իրաւունքները արձանագրել մի հանդիսաւոր յայտարարութեան մէջ, որպէս զի բոլոր քաղաքացիք կարող լինեն միշտ կառավարութեան գործողութիւնները համեմատութեան մէջ դնելով համայնական իւրաքանչիւր հաստատութեան հետ, թոյլ չը տալ իրենք իրենց ճնշւելու և բռնաբարւելու բռնակալութեան ձեռքով. որպէս զի ժողովուրդը միշտ աչքերի առաջ ունենայ իր ազատութեան և բարօրութեան հիմունքները, պաշտօնեան՝ իր պարտաւորութեան օրէնքները, օրէնսդիրը՝ իր կոչման առարկան։

Հետևապէս, նա յայտարարում է, ի ներկայութեան Գերագոյն Արարչի, մարդկային և քաղաքացիական իրաւունքների հետևեալ որոշումները։

Յօդ. I. Հասարակութեան նպատակն է ընդհանուր բարօրութիւնը պահել անաղարտ։

Կառավարութիւնը գոյութիւն ունի, որ ապահովէ իւրաքանչիւրին՝ իր բնական իրաւունքներից օգտւելու վայելքը։

2. Այդ իրաւունքներն են—հաւասարութիւն, ազատութիւն, ապահովութիւն և սեփհականութիւն։

3. Մարդիկ հաւասար են բնականից և օրէնքի առաջ։

4. Օրէնքն ընդհանուրի կամքի ազատ և հանդիսաւոր արտայայտութիւնն է. նա մէկ է ամենքի համար—լինի երբ պաշտպանում է, լինի՝ երբ պատժում է. նա գործադրելու հրաման է տալիս միայն այն, ինչ որ արդար է և օգտակար հասարակութեան համար։ Նա չէ կարող պաշտպանել այն, ինչ որ վնասակար է։

5. Ամէն քաղաքացի կարող է ընդունուել հասարակական պաշտօնէութեան համար։ Ազատ ազգերը որպէս առաւելութիւն՝ ճանաչել կարող են միմիայն առաքինութիւններ և տաղանդ։

6. Ազատութիւնը կայանում է նրանում, որ մարդ կարողանայ անել իր ուզածը. պայմանով սակայն, որ դա չը վնասէ ուրիշի։ Որպէս սկզբունք ունի բնութիւնը, որպէս կանոն՝ արդարութիւնը, որպէս նեցուկ՝ օրէնքը։ Նրա բարոյական սահմանը հետևեալ ասացուածքի մէջն է.

«Մի անիլ ուրիշի այն, ինչ որ չես կամենում որ քեզ անեն»։

7. Մտածութիւններ ու կարծիքներ արտայայտելու իրաւունքը, լինի մամուլով, լինի այլ ձևով, ժողովուելու խաղաղութեամբ, կրօնի ազատութիւնը—արգիլել չէ կարելի։

Այս իրաւունքների մերժումը ենթադրում է, որ բռնակալութիւնն է տիրողը և կամ բռնակալութեան մնացորդը։

8. Ապահովութիւնը կայանում է նրանում, որ հասարակութիւնը իր իւրաքանչիւր անդամին հաղորդում է անձը, իրաւունքները ու սեփականութիւնը պահպանելու միջոց։

9. Օրէնքը պարտաւոր է պաշտպանել հասարակութեան և անհատների ազատութիւնը, կառավարողների ճնշման դէմ։

10. Ոչ ոքի չէ կարելի դատապարտել, ձերբակալել կամ բանտարկել՝ առանց օրէնքի նախասահմանած հանգամանքների և ձևերի։ Իւրաքանչիւր քաղաքացի, որ կը ձերբակալւի օրէնքը գործադրողների ձեռքով, պարտաւոր է իսկոյն հնազանդել։ Դիմադրութիւնով՝ նա յանցաւոր կը դառնայ։

11. Օրէնքի սահմանած ձևերից և հանգամանքներից դուրս՝ ո և է անձի դէմ եղած գործողութիւնը քմահաճ է և բռնակալական։ Նա, որի վրայ կամենում են բռնի կերպով գործադրել ապօրինի գործ, իրաւունք ունի պաշտպանւելու զէնքով։

12. Նոքա, որոնք կը ձեռնարկեն, կուղարկեն, կ'ստորագրեն, կը կատարեն կամ կատարել կը տան ո և է քմահաճ գործ—յանցաւոր են և պատժի արժանի։

13. Իւրաքանչիւր մարդ ճանաչւում է անմեղ, քանի դեռ նա չէ մեղադրւած ո և է յանցանքով։ Եւ եթէ ըստ օրինի նրան ձերբակալել է հարկաւոր, պիտի խուսափել ո և է խստութիւնից և բռնի միջոցներից, եթէ դա անհրաժեշտ չէ դատւում ըստ օրինի։

14. Ո՛չ ոքի չէ կարելի դատապարտել և պատժել, առանց լսելու նրան և օրինաւորապէս դատի կանչելու, այլև առանց նախապէս գծւած օրէնքի։ Հակառակ վարմունքը՝ պիտի նկատւի իբր ոճիր։

15. Օրէնքը պիտի միմիայն անհրաժեշտ և խիստ կարևոր դէպքերում, այն էլ կատարելապէս ճշտւած, պատիժներ նշանակէ։ Պատիժները պիտի համապատասխան լինեն գործած յանցանքին, այլև օգտակար օրինակ՝ հասարակութեանը։

16. Սեփհականութեան իրաւունքը կայանում է նրանում, որ իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի տրամադրելու այլ և ուզածին պէս վարւելու իր սեփհականութեան, իր եկամուտների, իր վաստակի և արդիւնագործութեան մնացորդի հետ։

17. Աշխատութեան ոչ մի տեսակ, մշակութեան ոչ մի ձև, առևտրի ոչ մի միջոց չէ կարելի արգիլել քաղաքացիներին՝ գործադրելու։

18. Ամէն մարդ կարող է ծախել իր վաստակը, իր ժամանակը, սակայն իր անձը ոչ կարող է ծախել և ոչ էլ կարող է ծախւել։ Անձը ծախու հանել անհնար է։ Օրէնքը ծառայութիւն չէ ճանաչում, այլ միմիայն համաձայնութեամբ՝ վաստակի փոխանակութիւն։

19. Առանց սեփհականատիրոջ համաձայնութեան, ոչ ոք իրաւունք չունի խլել կամ գրաւել ո և է անձի կայքից մի կտոր անգամ։ Հասարակաց պիտոյքների համար անհրաժեշտ գտնւած դէպքում, անպայման պիտի վճարւի կայքի ճիշտ արժէքը։

20. Ամէն հարկ պիտի հաստատւի միմիայն ընդհանուրի օգտի համար։ Իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի մասնակցելու հարկատւութեան հաստատելուն, հսկելու նրա գործադրութեան վրայ և հաշիւ պահանջելու։

21. Հասարակաց օգնութիւնը մի սուրբ պարտք է։ Հասարակութիւնը պարտաւոր է խնամել դժբախտ քաղաքացիներին, լինի նրանց աշխատանք տալով, լինի ապահովեցնելով նրանց, որոնք այլևս անընդունակ են գործելու։

22. Ուսումը մի անհրաժեշտութիւն է ամենքի համար։ Հասարակութիւնը ամենայն ոյժով պիտի օգնէ ազգի լուսաւորութեան գործին և ուսուցումը բոլոր քաղաքացիների համար մատչելի անէ։

23. Հասարակական ապահովութիւնը կայանում է նրանում, որ ամենքը պիտի երաշխաւորեն միմեանց՝ թէ ազատ կարող են վայելել իրենց իրաւունքները։ Այս ապահովութիւնը հիմնւում է ազգային գերիշխանութեան (souveraineté) վրայ։

24. Ազգային գերիշխանութիւնը կարող է գոյութիւն ունենալ միայն այն ժամանակ, երբ հասարակական պաշտօնների սահմանները պարզորոշ գծւած են ըստ օրինի, այլ և երբ հասարակութեան բոլոր պաշտօնեաների պատասխանատուութեան չափը անպայման որոշւած է։

25. Գերիշխանութիւնը միմիայն ժողովրդեան է պատկանում և նա աննախագիր է, անբաժանելի և անբռնաբարելի։

26. Ժողովրդեան ոչ մի մասը չէ կարող իշխանութիւն բանեցնել ամբողջ ժողովրդի վրայ, սակայն նրա իւրաքանչիւր մասը կարող է ժողովել և իր կամքը ազատօրէն արտայայտել։

27. Ժողովուրդը միշտ իրաւունք ունի վերագննել, վերաքննել ու բարեփոխել իր Սահմանադրութիւնը։ Մի սերունդը իրաւունք չունի իր օրէնսդրութիւնը կապել մի ուրիշ սերնդեան գըլխին և պարտաւորիչ դարձնել։

28. Իւրաքանչիւր անձ, որ կը յանդգնի ժողովրդեան գերիշխանութիւնը խլել, անմիջապէս մահուան պիտի ենթարկւի։

29. Իւրաքանչիւր քաղաքացի հաւասար իրաւունք ունի մասնակցելու օրէնսդրութեան և անուանելու իր յանձնակատարները կամ գործակալները՝ օրէնսդրական ժողովի համար։

30. Հասարակաց պաշտօնները էապէս ժամանակաւոր են և չը պիտի համարուեն նրանք որպէս արժանիք կամ վարձատրութիւն, այլ միմիայն իբր պարտաւորութիւն։

31. Ժողովրդեան յանձնակատարների ոճիրները անպատիժ չը պիտի մնան. ոչ ոք իրաւունք չունի ինքն-իրեն անբռնաբարելի համարել։

32. Ո՛չ մի դէպքում չը պիտի արգելք լինել պահանջներ առաջարկելուն ժողովրդեան կողմից՝ ո և է հասարակական իշխանութեան։ Եւ ներկայացուած ոչ մի խնդիր չը պիտի սահմանափակւի կամ անուշադիր թողւի։

33. Դիմադրութիւնը ճնշումների դէմ՝ մարդկային իրաւունք է։

34. Կայ ճնշում հասարակական մարմնի դէմ, երբ նրա ո և է անդամը ճնշւում է. կայ ճնշում նաև իւրաքանչիւր անդամի դէմ, երբ ճնշւում է հասարակական ո և է մարմին։

35. Եթէ կառավարութիւնը բռնաբարի ժողովրդեան իրաւունքները, հասարակութեան և կամ նրա մի մասի ապստամբութիւնը ոչ միայն անհրաժեշտ պարտք է, այլև նւիրական իրաւունք։

ՀՀ Ազգային գրադարան
NL0301950